

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2018 թ. պետական ավարտական և միասնական քննությունների  
թեստային առաջադրանքների շտեմարան

**ԳԻՐԸ ԵՐՐՈՐԳ**

*Հինգերորդ՝ լրամշակված հրատարակություն*



**ՉԱՆԳԱԿ**

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 2018

## Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

ՀՏԴ 373.1:941(479.25)

ԳՄԴ 74.2+63.3(2Հ)

Հ 282

### Հեղինակային խումբ՝

Աշոտ Մելքոնյան (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս), Արամ Նազարյան (պատմ. գիտ. թեկն.), Էդիկ Գևորգյան (պատմ. գիտ. թեկն.), Հայրապետ Մարգարյան (պատմ. գիտ. դոկտ.), Էդիկ Մինասյան (պատմ. գիտ. դոկտ.), Արման Մալոյան (պատմ. գիտ. թեկն.), Արմինե Սարգսյան (պատմաբան, մանկավարժ), Սուսաննա Սերոբյան (ԵՊՀ ասիստենտ), Կարինե Եղիազարյան (պատմ. գիտ. թեկն.), Մարինե Գևորգյան (պատմ. գիտ. թեկն.), Հակոբ Մուրադյան (պատմ. գիտ. թեկն.), Քրիստինե Յախշյան (ԵՊՀ դասախոս), Էդուարդ Զոհրաբյան (պատմ. գիտ. թեկն.), Վարդան Պարսամյան (մանկ. գիտ. թեկն.), Հայկ Մխոյան (պատմ. գիտ. թեկն.)

### Խմբագրական կազմ՝

Աշոտ Մելքոնյան, Արամ Նազարյան, Էդիկ Գևորգյան, Էդիկ Մինասյան, Վարդան Պարսամյան

Հայոց պատմություն: 2018 թ. պետական ավարտական և միասնական քննությունների թեստային առաջադրանքների շտեմարան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2018: Գիրք երրորդ.— 320 էջ:

Առաջադրանքների շտեմարանը նախատեսված է «Հայոց պատմություն» առարկայի 2018 թ. պետական ավարտական և միասնական քննությունների համար:

ՀՏԴ 373.1:941(479.25)

ԳՄԴ 74.2+63.3(2Հ)

Հինգերորդ՝ լրամշակված հրատարակություն

ISBN 978-9939-68-256-3

© Հեղինակային խումբ, 2018

© «Զանգակ-97» ՍՊԸ, 2018

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հայոց պատմություն» առարկայի պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարանի երրորդ գիրքը կազմվել է 2017 թ. «Հայոց պատմություն. պետական ավարտական և միասնական քննությունների ուղեցույց»-ի պահանջների և մոտեցումների հիման վրա: Այն ընդգրկում է ուղեցույցում տրված «Բովանդակային դասիչ»-ով նախատեսված թեմաները: Առաջադրանքները ներառում են 2014–2016 թթ. լույս տեսած ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 10–12–րդ դասարանների «Հայոց պատմություն» դասագրքերի (Ա. Մելքոնյանի, Ա. Սիմոնյանի և Ա. Նազարյանի խմբագրությամբ) ուսումնական նյութը: Հաշվի է առնվել նաև ուղեցույցում տեղ գտած «Դասագրքերում առկա վրիպակներ» բաժինը, և առաջադրանքները կազմվել են վրիպակների ուղղված տարբերակների հիման վրա:

Շտեմարանի երրորդ գիրքը նույնպես կազմված է չորս մասից՝ *Մաս Ա. Հայկական քաղաքակրթության ծնավորումն ու զարգացումը, Մաս Բ. Հայկական քաղաքակրթությունը Միջին դարերում, Մաս Գ. Հայկական քաղաքակրթությունը Նոր շրջանում և Մաս Դ. Հայկական քաղաքակրթությունը Նորագույն շրջանում:*

Գրքի յուրաքանչյուր մաս ներկայացված է առաջադրանքների 8 տիպերով: Երրորդ գրքում մեծ մասամբ ընդգրկված են կարճ պատասխանով առաջադրանքներ: Դրանք կազմվել են ուղեցույցի պահանջների և սկզբունքների համաձայն:

Միասնական քննության թեստը բաղկացած է լինելու *Ա* և *Բ* մակարդակներից: *Ա* մակարդակը վերաբերում է պետական ավարտական քննությանը և միասնական քննության ավարտական մասին, իսկ *Ա* և *Բ* մակարդակներն ընդգրկող միասնական տարբերակը՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության մրցույթին: Քննական թեստի *Բ* մակարդակում կընդգրկվեն *Ա* մակարդակի համեմատ ավելի խոր իմացություն և պատմական մտածողության ավելի բարձր մակարդակի կարողություններ և հմտություններ պահանջող առաջադրանքներ:

ԳԹԿ-ն հիշեցնում է, որ 2017 թ. լրամշակված շտեմարանի երեք գրքերի առաջադրանքներից են կազմվելու 2018 թ. պետական ավարտական և միասնական քննությունների թեստերը:

*Հաջողություն ձեզ, սիրելի շրջանավարտներ և դիմորդներ:*

**1. ՏԱՐԵԹՎԵՐ**

---

- 1. Կրասուի հրամանատարությամբ հռոմեական բանակը նրբ ժամանեց Ասորիք.**
- 1) Բ. ա. 54 թ. ամռանը  
2) Բ. ա. 54 թ. աշնանը  
3) Բ. ա. 54 թ. գարնանը  
4) Բ. ա. 55 թ. աշնանը
- 2. Նրբ Կրասուն անցավ Եփրատը և արշավեց Պարթևստան.**
- 1) Բ. ա. 53 թ. գարնանը  
2) Բ. ա. 54 թ. գարնանը  
3) Բ. ա. 53 թ. ձմռանը  
4) Բ. ա. 54 թ. ձմռանը
- 3. Անտոնիոսի պարտված բանակը Պարթևստանից նրբ նահանջեց դեպի Հայաստան.**
- 1) Բ. ա. 35 թ. ամռանը  
2) Բ. ա. 35 թ. աշնանը  
3) Բ. ա. 36 թ. ամռանը  
4) Բ. ա. 36 թ. աշնանը
- 4. Որո՞նք են Արտավազդ II-ի գահակալման տարիները.**
- 1) Բ. ա. 55-31 թթ.  
2) Բ. ա. 55-34 թթ.  
3) Բ. ա. 54-31 թթ.  
4) Բ. ա. 54-34 թթ.
- 5. Արտավազդ II-ը նրբ է մահապատժի ենթարկվել.**
- 1) Բ. ա. 34 թ. հոկտեմբերին  
2) Բ. ա. 31 թ. հոկտեմբերին  
3) Բ. ա. 31 թ. սեպտեմբերին  
4) Բ. ա. 32 թ. աշնանը
- 6. Նրբ են գահակալել Տիգրան IV-ը և Էրատոն.**
- 1) Բ. ա. 20-8 թթ.  
2) Բ. ա. 2 - Բ. հ. 1 թթ.  
3) Բ. ա. 8-5 թթ.  
4) Բ. ա. 5-2 թթ.
- 7. Ո՞ր թվականին Օկտավիանոսն իրեն հռչակեց Օգոստոս.**
- 1) Բ. ա. 31 թ.      2) Բ. ա. 30 թ.      3) Բ. ա. 27 թ.      4) Բ. ա. 29 թ.
- 8. Նրբ է ընդհատվել Արտաշեսյան հարստությունը.**
- 1) Բ. հ. 1 թ.      2) 36 թ.      3) 18 թ.      4) 34 թ.
- 9. Հռոմեա-պարթևական տասնամյա պատերազմը տեղի է ունեցել՝**
- 1) 52-62 թթ.      2) 58-68 թթ.      3) 54-64 թթ.      4) 56-66 թթ.
- 10. Նրբ է գահակալել Ներոնը.**
- 1) 55-74 թթ.      2) 55-85 թթ.      3) 54-64 թթ.      4) 54-68 թթ.



**23. Ո՞ր թվականն է համարվում Հայոց փոքր թվականի սկիզբը.**

- 1) 1001 թ.
- 2) 1037 թ.
- 3) 1071 թ.
- 4) 1084 թ.

**24. Երբ է Ասորեստանից ընդօրինակվել Վանի թագավորությունում տարածում ստացած սեպագիր դպրությունը.**

- 1) Ք. ա. VII դ.
- 2) Ք. ա. VIII դ.
- 3) Ք. ա. IX դ.
- 4) Ք. ա. X դ.

**25. Ո՞ր թվականով են թվագրվում մեզ հասած Վանի թագավորության հնագույն արձանագրությունները.**

- 1) Ք. ա. X դ. 30-ական թվականներ
- 2) Ք. ա. IX դ. 30-ական թվականներ
- 3) Ք. ա. VIII դ. 30-ական թվականներ
- 4) Ք. ա. VII դ. 30-ական թվականներ

## 2. ՓԱՍՏԵՐ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

### 1. Որտեղ էր Տիրի պաշտամունքի գլխավոր կենտրոնը.

- 1) Երազամույնում
- 2) Բագառիճ ավանում
- 3) Անի ամրոցում
- 4) Թիլ ավանում

### 2. Հունարենն ու հելլենիստական մշակույթը Հայաստանում տեղ էին գտել գլխավորապես՝

- 1) արքունիքում և գյուղական բնակչության շրջանում
- 2) արքունիքում և ավագանու շրջանում
- 3) քաղաքային և գյուղական բնակչության շրջանում
- 4) ավագանու և գյուղացիության շրջանում

### 3. Ո՞վ էր հայոց դիցարանում արևի, լույսի, կրակի և արդարության աստվածը.

- 1) Վանատուրը
- 2) Վահագնը
- 3) Միհրը
- 4) Տիրը

### 4. Քանի տառից էր կազմված հունական այբուբենը.

- 1) 22
- 2) 24
- 3) 26
- 4) 36

### 5. Ո՞վ է վկայում նախաքրիստոնեական Հայաստանում դպրության աստված Տիրի պաշտամունքի մասին.

- 1) Փիլիստորատոսը
- 2) Ագաթանգեղոսը
- 3) Պլատոնը
- 4) Մար Աբաս Կատինան

### 6. Ո՞ւմ հրամանով է ասորերենը հունարենին զուգահեռ կիրառվել Հայաստանում.

- 1) Խոսրով Կոտակի
- 2) Տրդատ III-ի
- 3) Վուսնապուլի
- 4) Արշակ II-ի

### 7. Ո՞ր գետի ափին էր կառուցվել Բագարան քաղաք-սրբավայրը.

- 1) Մեծամոր
- 2) Ախուրյան
- 3) Արածանի
- 4) Մեղրագետ

### 8. Ո՞վ է հիմնադրել Երվանդաշատը.

- 1) Երվանդ I
- 2) Երվանդ II
- 3) Երվանդ III
- 4) Երվանդ IV

### 9. Որտեղ է կառուցվել Արտաշատ մայրաքաղաքը.

- 1) Արաքս և Մեծամոր գետերի միախառնման վայրում
- 2) Կուր և Արաքս գետերի ջրկիցում
- 3) Հրազդանի ափին
- 4) Արաքս և Եփրատ գետերի ջրկիցում

### 10. Ի՞նչ լեզվով է գրված Գառնիի արձանագրությունը.

- 1) հունարեն
- 2) ասորերեն
- 3) պահլավերեն
- 4) լատիներեն

### 11. Քանի սյուներով է շրջապատված Գառնիի տաճարը.

- 1) 12
- 2) 24
- 3) 28
- 4) 34

### 12. Ո՞ր երկրի թագավորի դեմ պատերազմում Արտաշեսը վերադարձրեց Տմորիքը.

- 1) Մարաստանի
- 2) Պոնտոսի
- 3) Կորդուքի
- 4) Սելևկյան տերության

- 13. Ինչ անունով է հին աշխարհում հայտնի եղել Հայաստանում աճող ծիրանը.**  
 1) արմենիկում      2) արմենիկա      3) արբիկոն      4) արբիկոս
- 14. Ո՞ր երկրի սեպագիր արձանագրություններում է հիշատակվում Հայասա երկիրը.**  
 1) Մարաստան      3) Ասորեստան  
 2) Խեթական թագավորություն      4) Աքքադ
- 15. Ո՞ր թագավորության կարևոր կենտրոններից էր Կումախան.**  
 1) Միտաննի թագավորության      3) Արարատյան թագավորության  
 2) Խեթական թագավորության      4) Հայասա թագավորության
- 16. Խեթական թագավորի և Հայասայի ո՞ր արքայի միջև է կնքվել բարեկամության և փոխօգնության պայմանագիր.**  
 1) Կարանի      2) Արամու      3) Հայա      4) Խուկանա
- 17. Ինչից էր ստացվում հռչակավոր որդան կարմիր ներկը.**  
 1) Արարատյան դաշտում աճող նռան հատիկներից  
 2) Արարատյան դաշտում աճող բույսի կարմիր արմատներից  
 3) Արարատյան դաշտում բազմացող կարմրատորդից  
 4) Արարատյան դաշտում բազմացող բզեզներից
- 18. Քանի աստվածներից և քանի դիցուհիներից է կազմված Վանի թագավորության դիցարանը.**  
 1) 35 աստված, 35 դիցուհի      3) 25 աստված, 25 դիցուհի  
 2) 38 աստված, 38 դիցուհի      4) 45 աստված, 45 դիցուհի
- 19. Ո՞վ էր Վանի թագավորության գլխավոր աստվածը.**  
 1) Հայան      2) Թեյշեբան      3) Շիվինին      4) Խալդին
- 20. Ո՞վ էր Խալդի աստծու կինը.**  
 1) Աստղիկը      2) Անահիտը      3) Նանեն      4) Արուբանին
- 21. Ո՞ր արձանագրությունում են թվարկված Վանի թագավորության աստվածների անունները և նրանց մատուցվող զոհաբերությունները.**  
 1) Խալդի տաճարի      3) Միերի դռան  
 2) Էրեբունի տաճարի      4) Արդինի-Մուսասիրի տաճարի
- 22. Քանի սեպագիր արձանագրություն է պահպանվել Վանի թագավորության շրջանից.**  
 1) ավելի քան 1000      3) ավելի քան 2000  
 2) ավելի քան 1500      4) ավելի քան 2500
- 23. Ո՞ր երկիրն է ասորեստանյան արձանագրություններում անվանվել «ընդարձակ, հպատակություն չճանաչող և անծանոթ երկիր».**  
 1) Հայասան      2) Նաիրին      3) Թոգարման      4) Արատտան

### 3. ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿԶԲՆԱԴՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ

---

**1. Երբ է տեղի ունեցել ստորև նկարագրված ճակատամարտը:**

*«Հայերը, ներսահարելով հռոմեացիներին, շապերին իսկույն սպանեցին, իսկ շապ շապերին էլ վիրավորեցին:*

*...Այնժամ [հռոմեացի զորավարը], քանզի շապերը վիրավորվել էին, և մի մասն էլ մահանում էր, իսկ հաշմվածները հեծեծում էին, և միաժամանակ պարենամթերքը պակասում էր, նահանջեց»:*

- 1) Ք. ա. 69 թ. հոկտեմբերի 6-ին
- 2) Ք. ա. 31 թ. սեպտեմբերի 2-ին
- 3) Ք. ա. 53 թ. մայիսի 6-ին
- 4) Ք. ա. 68 թ. սեպտեմբերի 22-ին

**2. Ո՞ւմ գահակալման հետ կապված է հռոմեական պատմիչը նշել, թե «...Արևելքում իրենց ամենից շատ հոգսեր են պատճառել հայերը»:**

- 1) Տիգրան II-ի
- 2) Տիգրան IV-ի
- 3) Արտավազդ III-ի
- 4) Արտաշես II-ի

## **4. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

---

### **1. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) «Սահմանապահ կուսակալ»-ը Վանի թագավորության արձանագրություններում հիշատակված գործակալությունների անվանումներից է:
- 2) Արարատյան կամ Վանի համահայկական թագավորությունը հինարևելյան տիպի բացարձակ միապետություն էր:
- 3) Արարատյան կամ Վանի համահայկական թագավորությունը պոլիսային տիպի պետություն էր:
- 4) Արարատյան կամ Վանի համահայկական թագավորության մեջ թագավորին կից գործող ավագների խորհրդի անդամները կոչվում էին արքայի ավագանիներ:
- 5) Արարատյան կամ Վանի համահայկական թագավորության մեջ թագավորին կից գործող ավագների խորհրդի անդամները կոչվում էին արքայի խորհրդականներ:
- 6) Արարատյան կամ Վանի համահայկական թագավորության մեջ թագավորին կից գործող ավագների խորհրդի անդամները կոչվում էին արքայի փոխանորդներ:
- 7) Վարչական առումով Վանի թագավորությունը բաժանվում էր նահանգների, որոնք կառավարվում էին արքունի կառավարիչների կողմից:
- 8) Արարատյան կամ Վանի համահայկական թագավորությունը հինարևելյան տիպի դաշնային պետություն էր:

### **2. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Աքեմենյան կայսրության քսան մեծ վարչական միավորներից յուրաքանչյուրը կոչվում էր մարզպանություն:
- 2) Աքեմենյան կայսրության քսան մեծ վարչական միավորներից յուրաքանչյուրը կոչվում էր ստրատեգիա:
- 3) Աքեմենյան կայսրության քսան մեծ վարչական միավորներից յուրաքանչյուրը կոչվում էր սատրապություն:
- 4) Հայկազուն-Երվանդական արքաները Ք. ա. VII-VI դդ. կրում էին «Հայոց թագավոր» տիտղոսը:
- 5) Հայկազուն-Երվանդական արքաները Ք. ա. VII-VI դդ. կրում էին «Թագավորների թագավոր» տիտղոսը:
- 6) Աքեմենյան տիրապետության օրոք Հայաստանի կառավարիչը կոչվում էր փոխարքա:
- 7) Աքեմենյան տիրապետության օրոք Հայաստանի կառավարիչը կոչվում էր սատրապ:
- 8) Աքեմենյան տիրապետության օրոք Հայաստանի կառավարիչը կոչվում էր ստրատեգոս:

### **3. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Հունահռոմեական հեղինակները Արտաշես I-ի ստեղծած վարչամիավորներն անվանում էին ստրատեգիա:
- 2) Հունահռոմեական հեղինակները Արտաշես I-ի ստեղծած վարչամիավորներն անվանում էին կուսակալություն:
- 3) Հունահռոմեական հեղինակները Արտաշես I-ի ստեղծած վարչամիավորներն անվանում էին սատրապություն:
- 4) Զրադաշտական կրոնի սպասավորները կոչվում էին մոգ:
- 5) Զրադաշտական կրոնի սպասավորները կոչվում էին քուրմ:
- 6) Աքեմենյան տիրապետության օրոք Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը կոչվում էր սատրապ:
- 7) Աքեմենյան տիրապետության օրոք Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը կոչվում էր հյուպարքոս:

### **4. Գտնել սխալ պատասխանները: Օտարների կողմից Հայաստանն անվանվել է՝**

- |               |             |
|---------------|-------------|
| 1) Արմինա     | 5) Հայք     |
| 2) Ուրարտու   | 6) Սոմխեթի  |
| 3) Բիայնիլի   | 7) Հայաստան |
| 4) Հարմինույա |             |

### **5. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- 1) Բուզանդը Արտաշես I-ի ստեղծած վարչական միավորներն անվանում է ստրատեգիաներ, իսկ դրանց կառավարիչներին՝ ստրատեգոսներ:
- 2) Դարեհ I-ի ստեղծած վարչական միավորները կոչվում էին սատրապություններ:
- 3) Վանի թագավորությունում հայտնի էին «սահմանապահ կուսակալ», «աշխարհակալ», «գավառակալ» անուններով գործակալություններ:
- 4) Վանի թագավորությունը դաշնային կառուցվածք ունեցող պոլիսային երկիր էր:
- 5) Գավգամելայի ճակատամարտի առնչությամբ Ք. ա. IV դ. առաջին անգամ հիշատակվում են Մեծ և Փոքր Հայքերը՝ որպես միասնական վարչական միավորներ:
- 6) Հայաստանի քրմապետը նաև համարվում էր Մեծ դատավոր:
- 7) Հայաստանում Ք. ա. III դարից սկսված ժամանակաշրջանը հայտնի է «բուն հելլենիստական» անունով:

### **6. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- 1) Աստվածային գերագույն եռյակի պաշտամունքը բնիկ հելլենիստական երևույթ է և հայոց մեջ տարածում է ունեցել այդ շրջանից:
- 2) Անահիտը հայոց դիցարանում մեծարվել է «Ոսկեմայր» տիտղոսով:
- 3) Արամազդը երկրի և երկնքի արարիչ, պտղաբերություն ու արգասավորություն շնորհող աստվածն էր:
- 4) Վահագնը ռազմի, քաջության և ամպրոպի աստվածն էր:
- 5) Հելլենիզմի դարաշրջանում հայոց մեջ տարածված կրոնը միաստվածային էր:
- 6) Զրադաշտականությունն իր բնույթով դուալիստական կրոն է:
- 7) Որոշ ուսումնասիրողների կարծիքով Նանեն եղել է նաև ռազմի դիցուհի:

**7. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- ա. Դեռ Գավգամելայի ճակատամարտից առաջ Հայաստանում գոյություն ունեցող վարչական երկու մեծ միավորներն էին Մեծ Հայքը և Փոքր Հայքը:
- բ. Հայկազուն–Երվանդունիների գահակալության սկզբնական ժամանակաշրջանում երկրի արքան հայտնի էր «Արքայից արքա» տիտղոսով:
- գ. Մակեդոնացու արշավանքներից հետո Արևելքում սկսված ժամանակաշրջանը հայտնի է «հելլենիստական» անունով:
- դ. Ք. ա. IV–II դարերում Հայաստանի թագավորը կրում էր «Տիեզերակալ արքա» տիտղոսը:
- ե. Հին Հայաստանում քրմապետը նաև երկրի Մեծ դատավորն էր:

- 1) ա, գ, դ                      2) բ, գ, ե                      3) գ, ե                      4) բ, դ

**8. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- ա. Աստվածային գերագույն եռյակի պաշտամունքը բնիկ հնդեվրոպական երևույթ է և հայոց մեջ ունի վաղնջական ակունքներ:
- բ. Դարեհ III Կողոմանոսը նախքան պարսկական գահին բարձրանալը եղել է Հայաստանի սատրապ:
- գ. Աստղիկը հայոց դիցարանում մեծարվել է «Ոսկեմայր» տիտղոսով:
- դ. Փարպեցին Արտաշես I–ի ստեղծած վարչական միավորներն անվանում է ստրատեգիաներ, իսկ դրանց կառավարիչներին՝ ստրատեգոսներ:
- ե. Որոշ ուսումնասիրողների կարծիքով Անահիտը եղել է նաև ռազմի դիցուհի:
- զ. Վանի թագավորությունում հայտնի էին «սահմանապահ կուսակալ», «աշխարհակալ», «գավառակալ» անուններով գործակալություններ:
- է. Դարեհ II–ի ստեղծած վարչական միավորները կոչվում էին սատրապություններ:

- 1) ա, դ, ե                      2) բ, գ, զ                      3) ա, բ, զ                      4) ա, դ, է

**9. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- ա. Գավգամելայի ճակատամարտի առնչությամբ Ք. ա. IV դ. առաջին անգամ հիշատակվում են Մեծ և Փոքր Հայքերը՝ որպես միասնական վարչական միավորներ:
- բ. Հայաստանի քրմապետը նաև համարվում էր Մեծ դատավոր:
- գ. Հայաստանում Ք. ա. III դարից սկսված ժամանակաշրջանը հայտնի է «ուշ հելլենիստական» անունով:
- դ. Արամազդը երկրի և երկնքի արարիչ, մարդկանց բարօրություն, լիություն ու արիություն շնորհող աստվածն էր:
- ե. Վահագնը ռազմի, քաջության և ամպրոպի աստվածն էր:
- զ. Հելլենիզմի դարաշրջանում հայոց մեջ տարածված կրոնը միաստվածային էր:
- է. Զրադաշտականությունն իր բնույթով դուալիստական կրոն է:

- 1) բ, դ, ե                      2) ա, գ, զ                      3) բ, ե, զ                      4) ա, գ, է

## **10. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Հայաստանում I դարից սկսված ժամանակաշրջանը հայտնի է «բուն հելլենիստական» անունով:
- 2) Հայ պատմիչների վկայած՝ 22 տառերից բաղկացած հայերեն նշանագրերը հայտնի են «արամեական» անունով:
- 3) Փոքր Ասիայի արևելյան, Միջագետքի հյուսիսային և Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան շրջանները և Հայկական լեռնաշխարհին ընդգրկող տարածքը հայտնի է «հնդեվրոպական նախահայրենիք» անունով:
- 4) Վանի համահայկական պետության մեջ թագավորին կից գործող ավագների խորհրդի անդամները կոչվում էին արքայի «գործակալներ»:
- 5) Մեծ Հայքի 15 խոշոր վարչական միավորներից յուրաքանչյուրը կոչվում էր նահանգ կամ մարզ:
- 6) Արևմտյան քաղաքակրթության հետ շփումների խորացման արդյունքում հայերին երբեմն կոչում էին Ասիայի եվրոպացիներ:

## **11. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Խեթերեն արձանագրություններում հիշատակվող Հայասա անվանումը նշանակում է Հայք, Հայաստան:
- 2) Արտաշեսյանների գահակալության ամբողջ ժամանակաշրջանում Մեծ Հայքի արքայի կրած տիտղոսը կոչվում էր «Արքայից արքա»:
- 3) Որոշ ուսումնասիրողների կարծիքով Աստղիկը եղել է նաև ռազմի դիցուհի:
- 4) Արգիշտի I-ի զորքերը շարունակել են հաղթարշավը դեպի Ալիշտու, այսինքն՝ Ալաշկերտի հովիտ:
- 5) Արարատյան համահայկական թագավորությունը հինարևելյան տիպի դաշնային պետություն էր:
- 6) Արտաշատը Տիգրանակերտին և Անտիոքին կապող ճանապարհը կոչվում էր «Արքունի պողոտա»:

## **12. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- ա. Հայաստանում Բ. ա. III դարից սկսված ժամանակաշրջանը հայտնի է «բուն հելլենիստական» անունով:
- բ. Արգիշտի I-ի զորքերը Զագրոսյան լեռներով հասել են մինչև Պարսուա, որը հետագայում կոչվել է Պարսկահայք:
- գ. Վարչական առումով Վանի թագավորությունը բաժանված էր միավորների, որոնք կոչվում էին մարզեր:
- դ. «Սահմանապահ կուսակալ»-ը Արտաշեսյան թագավորության շրջանի գործակալություններից է:
- ե. Աքեմենյանների օրոք Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը կոչվում էր սատրապ:
- զ. Արարատյան համահայկական թագավորության մեջ թագավորին կից գործող ավագների խորհրդի անդամները կոչվում էին արքայի «խորհրդականներ»:

- է. Հայկազուն-Երվանդունիների գահակալության սկզբնական ժամանակաշրջանում երկրի արքան հայտնի էր «Հայոց թագավոր» տիտղոսով:
- ը. Արարատյան համահայկական թագավորությունը հինարևելյան տիպի բացարձակ միապետություն էր:

- 1) ա, գ, ը                      2) գ, գ, է                      3) գ, դ, է                      4) բ, դ, ե

**13. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- ա. Հայկազուն-Երվանդունիների գահակալության սկզբնական ժամանակաշրջանում Հայոց արքան հայտնի էր «Տիեզերքի թագավոր» տիտղոսով:
- բ. Հելլենիզմի դարաշրջանում Հայաստանում տարածված կրոնը միաստվածային էր:
- գ. Հայրենիքի սահմանների պաշտպանությունը կազմակերպելու համար Արտաշես I-ի ստեղծած չորս միավորները կոչվում էին զորավարություններ:
- դ. Արտաշատը, Տիգրանակերտը և Անտիոքը միմյանց կապող ճանապարհը կոչվում էր «Արքունի պողոտա»:
- ե. Արգիշտի I-ի զորքերը հաղթարշավով հասել են Ալիշտու, այսինքն՝ Աղստևի հովիտ:
- զ. Հույներն ու հռոմեացիները Տրդատ I-ին բնորոշել են որպես «կենցաղավարության մեջ զուսպ, նաև չափավոր ու ողջամիտ, ինչպես լավագույնները՝ հույների և հռոմայեցիների մեջ»:
- է. Սարգսի I-ը իր տերությանն է միացրել Դիաուխի երկիրը, որը հետագայի Տայք գավառն է:

- 1) բ, գ, է                      2) բ, ե, գ                      3) գ, դ, ե                      4) ա, դ, է

**14. Ընտրել պատմական տերմինների ճիշտ բացատրությունները.**

- 1) Հայասա՝ խեթերեն նշանակում է մեծ երկիր:
- 2) Ուրարտուն Արարատ անվան ասորեստանյան տարբերակն է:
- 3) Թեգարամա երկիրն այդպես է կոչվել Արամ նահապետի հոր՝ Թորգոմի անունից:
- 4) Հունական ավանդության համաձայն՝ Հայաստանի Արմենիա անվանումն առաջացել է արգոնավորդ Յասոնի անունից:
- 5) Տուշպա անունը համարժեք է արդի հայերենի Տոսպ անվանը:

## 5. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

### 1. Ինչ հետևանքներ ունեցավ Հայաստանի համար Արտաշատի հայ-հռոմեական պայմանագրի կնքումը.

- 1) Մեծ Հայքը պահպանեց իր սեփական տարածքն ու մնաց ամբողջական:
- 2) Հայաստանը զիջեց իր հյուսիսային նահանգները:
- 3) Հայաստանը վերականգնեց իր ներքին ինքնուրույնությունը:
- 4) Հայաստանը կորցրեց պետական անկախությունը:
- 5) Մեծ Հայքը կորցրեց մինչ այդ նվաճած բոլոր տարածքները:
- 6) Հայոց գահը զավթելու Տիգրան Կրտսերի ծրագիրը ձախողվեց:
- 7) Տիգրան II-ը վերականգնեց «Արքայից արքա» տիտղոսը:

### 2. Թվարկվածներից որո՞նք 298 թ. Մծբինի պայմանագրի հետևանքներ չեն.

- 1) Պարսից թագավոր Վաղարշ I-ը ճանաչեց Մեծ Հայքի անկախությունը:
- 2) Տրդատ III-ը վերջնականապես ճանաչվեց Մեծ Հայքի թագավոր:
- 3) Վերականգնվեց Հայոց աշխարհի ամբողջականությունը:
- 4) Տրդատ III-ը սկսեց զբաղվել երկրի հզորացմամբ և շինարարությամբ:
- 5) Արշակունիները ամրապնդվեցին հայոց գահին:
- 6) Ընդունվեց Միլանի հրովարտակը:
- 7) Հայաստանը թոթափեց Աքեմենյանների գերիշխանությունը:

### 3. Գտնել ճիշտ պատասխանները:

*Ինչ հետևանք ունեցավ Պոնտոսի համար Ք. ա. 94 թ. Արտաշատում Հայաստանի հետ կնքած պայմանագիրը.*

- 1) Պոնտոսը գործողությունների ազատություն ստացավ արևմուտքում:
- 2) Կորդոբի վրա հարձակումից հետո Պոնտոսին անցավ անշարժ գույքը:
- 3) Կապադովկիայի վրա հարձակումից հետո Պոնտոսին անցավ նրա տարածքը:
- 4) Կորդոբի վրա հարձակումից հետո Պոնտոսին անցավ շարժական գույքը:
- 5) Պայմանագիրը դարձավ Միհրդատ Պոնտացու սպանության առիթ:
- 6) Ձեռք բերեց հուսալի դաշնակից:
- 7) Կապադովկիայի վրա հարձակումից հետո Պոնտոսին անցավ շարժական գույքը:

### 4. Թվարկվածներից որո՞նք են Արտաշատի հայ-հռոմեական պայմանագրի հետևանքներ.

- 1) Հօգուտ Հռոմեական Հանրապետության՝ Մեծ Հայքը հրաժարվեց Ասորիքից, Փյունիկիայից, Պաղեստինից, Կիլիկիայից, այսինքն՝ Միջերկրական ծովի առափնյա երկրներից:
- 2) Հռոմեական Հանրապետությունը գրավեց Վիրքը, Աղվանքը, Փյունիկիան, Պաղեստինը, Կիլիկիան:
- 3) Հայկական պետությունը պահպանեց իր նվաճումները Հյուսիսային Միջագետքում:

- 4) Հայկական պետությունը պահպանեց իր նվաճումները Հյուսիսային Կովկասում:
- 5) Հայաստանից անջատվեցին Ծոփքն ու Կորդուքը, որտեղ թագավոր հաստատվեց Տիգրան Կրտսերը:
- 6) Հայաստանը հայտարարվեց «Հռոմեական ժողովրդի բարեկամ և դաշնակից»:
- 7) Պարթևները ստացան Կորդուքն ու Միջագետքը:

**5. Արածանիի ճակատամարտում հռոմեացիների կրած պարտության հետևանքով՝**

- 1) Լուկուլլոսը ստիպված էր թողնել Հայաստանի սահմանները՝ Կորդուքն ու Արցախը:
- 2) Միհրդատ Պոնտացին սկսեց Պոնտոսի ազատագրումը:
- 3) Վերականգնվեց հայոց պետության հեղինակությունը:
- 4) Միհրդատ Պոնտացին ինքնասպանություն գործեց:
- 5) Վերականգնվեց Հռոմի սասանված հեղինակությունը:
- 6) Լուկուլլոսը ստիպված թողեց Հայաստանի սահմանները՝ Կորդուքն ու Հյուսիսային Միջագետքը:
- 7) վերահաստատվեց հայոց պետության գերիշխանությունը Հռոմի նկատմամբ:

**6. Ստորև տրված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որոնք են ճիշտ.**

- 1) Ակցիումի ճակատամարտից հետո հայ-պարթևական միացյալ ուժերը թագաժառանգ Արտաշեսի գլխավորությամբ մտան Հայաստան:
- 2) Արտաշես II-ին ասպարեզից հեռացնելը նրա շեշտված հակապարթևական կեցվածքն էր և դաշինքը հռոմեացիների հետ:
- 3) Տիգրան III-ից հետո Հռոմի համաձայնությամբ գահ բարձրացավ Տիգրան IV-ը, որը թագավորեց որպես անկախ թագավոր:
- 4) Արտաշես II-ին ասպարեզից հեռացնելու պատճառը նրա շեշտված հակահռոմեական կեցվածքն էր և դաշինքը պարթևների հետ:
- 5) Տիգրան III-ից հետո առանց Հռոմի համաձայնության գահ բարձրացավ Տիգրան IV-ը, և այդ պատճառով թագավորեց որպես անկախ միապետ:
- 6) Ակցիումի ճակատամարտից հետո հայ-պարթևական միացյալ ուժերի հաղթության շնորհիվ Եգիպտոսում գտնվող հռոմեական լեգեոնները դուրս շարտվեցին երկրից:
- 7) Տիգրան II-ից հետո Հռոմի համաձայնությամբ և հայերի օժանդակությամբ գահ բարձրացավ Արտավազդ III-ը:

**7. Տրդատ II-ի և կայսր Մակրինոսի միջև հաստատված հայ-հռոմեական դաշինքի արդյունքում՝**

- 1) Կայսրը թագ ուղարկեց Տրդատ II-ին:
- 2) Կայսրը Տրդատ II-ին վերադարձրեց Կապադովկիայում գտնվող այն կալվածքները, որոնք ստացել էր դեռևս Խոսրով II-ը:
- 3) Կայսրը Տրդատ II-ին վերադարձրեց վերջինիս կնոջը և Հայաստանից տարված ավարը:
- 4) Կայսրը Տրդատ II-ին վերադարձրեց Կապադովկիայում գտնվող այն կալվածքները, որոնք ստացել էր դեռևս Խոսրով I-ը:

- 5) Կայսրը Տրդատին վերադարձրեց նրա մորը՝ թագուհուն:
- 6) Կայսրը գումար վճարեց հայկական այրուձիին, որն իրականացնում էր Կովկասի լեռնանցքների պաշտպանությունը:
- 7) Հայաստանում տապալվեց Սասանյանների տիրապետությունը:

**8. Ստորև թվարկված պատմական դեպքերի ու իրադարձությունների հետևանքներից որոնք են սխալ.**

- ա) Կիմերների հարձակման հետևանքով Վանի թագավորությունը հայտնվեց երկու ճակատով հարձակվող թշնամիների օղակում:
- բ) Ք. ա. VIII դ. վերջերին Ասորեստանը վերականգնեց դիրքերը՝ կրկին դառնալով Վանի տերության մրցակիցն Առաջավոր Ասիայում:
- գ) Արտաշես I-ի միավորիչ գործունեության հետևանքով հայկական տարածքների մեծ մասը միավորվեց մեկ ընդհանուր պետության մեջ:
- դ) Վանի թագավորության և սկյութների միջև հաստատված դաշնակցային հարաբերությունների հետևանքը վերջիններիս՝ Փոքր Ասիայի արևելքում հաստատվելն էր:
- ե) Արտաշեսյանների արքայատոհմի անկման հետևանքով հայ բնակչության և իշխանների մի մասը ստիպված հեռացավ հայրենիքից:
- զ) Արտաշես I-ի միավորիչ գործունեության հետևանքով հայկական բոլոր տարածքները, բացառությամբ Փոքր Հայքի, միավորվեցին մեկ միասնական պետության մեջ:
- է) Լուկուլլոսի պարտության հետևանքով վերականգնվեց Հայկական տերության հեղինակությունը:

- 1) ա, ե, է                      2) դ, ե, գ                      3) ա, գ, է                      4) բ, դ, գ

**9. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որոնք են սխալ.**

- 1) Վանի թագավորության և կիմերների միջև Ք. ա. 735 թ. սկսված պատերազմը ավարտվեց քոչվորների պարտությամբ:
- 2) Հայ-մարական համագործակցության արդյունքում կործանվեց Աքեմենյան տերությունը:
- 3) Կյուրոս Մեծի դեմ սկսված ապստամբությունների արդյունքում Աքեմենյան տերությունը բաժանվեց 20 սատրապությունների:
- 4) Երվանդ II-ի՝ Ք. ա. 360-ական թթ. սկսած հակապարսկական ապստամբությունն ավարտվեց պարտությամբ:
- 5) Ալեքսանդր Մակեդոնացու տերության ժառանգման համար պայքարն ավարտվեց տերության տրոհմամբ:
- 6) Արտաշատի հայ-հռոմեական պայմանագրի համաձայն՝ Հայաստանը պահպանեց իր նվաճումները Հյուսիսային Միջագետքում:

- 7) Տիգրանակերտի ճակատամարտում հայկական ուժերի նահանջը նպաստեց Տիգրանակերտի գրավմանը հռոմեացիների կողմից:
- 8) Արաժանիի ճակատամարտում հռոմեացիների պարտությունը նպաստեց հայկական դիրքերի ամրապնդմանը Կորդուքում ու Հյուսիսային Միջագետքում:

**10. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Մագնեսիայի ճակատամարտում Աքեմենյան Պարսկաստանի զորքերի պարտության հետևանքով ձևավորվեց Սելևկյան հսկայածավալ պետությունը:
- 2) Ոսխայի ճակատամարտի արդյունքում պարսից տերությունը տարածքային կորուստներ ունեցավ Փոքր Ասիայում:
- 3) Խառանի ճակատամարտում պարթևական զորքերի պարտությունը նպաստեց Առաջավոր Ասիայի քաղաքական քարտեզի փոփոխմանը:
- 4) Զելայի ճակատամարտում Լուկուլլոսի պարտության հետևանքով վերականգնվեց հայկական գերիշխանությունը Ասորիքում:
- 5) Ակցիումի ճակատամարտից հետո հայ-պոնտական ուժերը մտան Հայաստան և առավել արդյունավետ պայքար մղեցին հռոմեացիների դեմ:
- 6) Ք. ա. 94 թ. Արտաշատում կնքված հայ-պոնտական պայմանագրի համաձայն՝ հայ-պոնտական ուժերը ռազմակալեցին Կապադովկիան, սակայն քիչ անց ստիպված եղան հեռանալ այդտեղից:
- 7) Ք. ա. 87 թ. կնքված հայ-պարթևական պայմանագրի համաձայն՝ պարթևները հայերին զիջեցին «Արքայից արքա» տիտղոսը:

**11. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Արտաշես I-ի հողային բարեփոխման արդյունքում սահմանազատվեցին համայնքային և մասնավոր սեփականատերերի հողերը:
- 2) Արտաշես I-ի ռազմական բարեփոխման արդյունքում երկիրը բաժանվեց 120 գավառների (ստրատեգիաների):
- 3) Արտաշես I-ի արշավանքների արդյունքում երկրի կենտրոնական տարածքները միավորվեցին մեկ միասնական պետության մեջ:
- 4) Արտաշես I-ի կրոնական բարեփոխման արդյունքում երկիրը վերածվեց թեոկրատական պետության՝ աստվածապետության:
- 5) Արտաշես I-ի ռազմական բարեփոխման հետևանքով զորքը բաժանվեց 4 մասի՝ զորավարությունների:
- 6) Արտաշես I-ի հողային բարեփոխումը նպաստեց ավատական հողատիրության զարգացմանը Հայաստանում:
- 7) Արտաշես I-ի արշավանքների արդյունքում Մեծ Հայքի բոլոր տարածքները միավորվեցին մեկ միասնական պետության մեջ՝ բացի Ծոփքից:

**12. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են սխալ.**

- 1) Հռանդեայի ճակատամարտում հռոմեացիների պարտությունը նպաստեց Հայաստանի նկատմամբ Ներոն կայսեր դիրքորոշման փոփոխմանը:
- 2) Հայոց արքա Վաղարշ II-ի որդեգրած ճիշտ քաղաքական դիրքորոշման արդյունքում Հայաստանից հեռացվեցին հռոմեական լեգեոնները:
- 3) Պարսկաստանում Սասանյանների իշխանության գալը թուլացրեց Արշակունիների դիրքերը Հայաստանում:
- 4) Ներոն կայսեր կողմից Տիգրան VI-ին գահ բարձրացնելը դժգոհություն է առաջացնում երկրում:
- 5) Հռոմի կայսր Սեպտիմիոս Սևերոսը, ի նշանավորումն հայ-հռոմեական դաշինքի վերականգնման, Տրդատ II-ին թագ ուղարկեց և վերադարձրեց Կապադովկիայում Հայաստանին պատկանող կալվածքները:
- 6) Օգոստոս կայսեր հեռագնա ծրագիրը նպատակ ուներ միավորելու Հայաստանը Կապադովկիայի հետ և ստեղծելու միացյալ ուժեղ պետություն ընդդեմ Պարթևստանի:
- 7) Ակցիումի ճակատամարտից հետո հայ-պոնտական ուժերը մտան Հայաստան և արդյունավետ պայքար մղեցին հռոմեացիների դեմ:

**13. Ստորև տրված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են սխալ.**

- ա) Հռանդեայի ճակատամարտից հետո ստեղծված նպաստավոր իրավիճակում Տրդատը կարողացավ հաստատվել հայոց գահին:
- բ) Արտաշես II-ին ասպարեզից հեռացնելու պատճառը նրա շեշտված հակապարթևական կեցվածքն էր և դաշինքը հռոմեացիների հետ:
- գ) Տիգրան III-ից հետո Հռոմի համաձայնությամբ գահ բարձրացավ Տիգրան IV-ը, և այդ պատճառով թագավորեց որպես անկախ միապետ:
- դ) Արտաշես II-ին ասպարեզից հեռացնելը նրա շեշտված հակահռոմեական կեցվածքն էր և դաշինքը պարթևների հետ:
- ե) Տիգրան III-ից հետո առանց Հռոմի համաձայնության գահ բարձրացավ Տիգրան IV-ը, և այդ պատճառով թագավորեց որպես անկախ միապետ:
- զ) Ակցիումի ճակատամարտից հետո հայ-պարթևական միացյալ ուժերի հաղթության շնորհիվ Հայաստանում գտնվող հռոմեական լեգեոնները դուրս շարտվեցին երկրից:
- է) Տրդատ I-ի թագավորության վեցերորդ տարում Մեծ Հայքի խաղաղ կյանքն ընդհատվեց սարմատների ներխուժման հետևանքով:

- 1) ա, բ, է                      2) գ, ե, զ                      3) բ, գ, է                      4) ա, դ, զ

**14. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են սխալ.**

- ա) Փոքր Ասիայում բռնկված պատերազմի ավարտից հետո հաշտության պայմանագրում Արտաշես I-ը կարողացավ հատուկ կետ մտցնել, որի շնորհիվ Պոնտոսի հաշվին ընդարձակվեց Փոքր Հայքի տարածքը:

- բ) Ք. ա. 94 թ. հայ-պոնտական բանակցությունների արդյունքն էր ազդեցության ոլորտների բաժանման մասին նրանց միջև պայմանագրի կնքումը:
  - գ) Մերձավոր Արևելքում Հռոմի դիրքերը թուլացնելու նպատակով Արտաշես I-ը աջակցեց Մարաստանի սատրապ Տիմարքոսի ապստամբությանը:
  - դ) Հռոմի Ծերակույտին ուղարկած պաշտոնական գեկուցագրում պարթևական արշավանքի ձախողումն Անտոնիոսը բացատրում էր եղանակային անբարենպաստ պայմաններով և զորքում բռնկված համաճարակով:
  - ե) Փոքր Ասիայում բռնկված պատերազմի ավարտից հետո հաշտության պայմանագրում Արտաշես I-ը կարողացավ հատուկ կետ մտցնել, որի շնորհիվ Պոնտոսի հաշվին ընդարձակվեց Մեծ Հայքի տարածքը:
  - զ) Ք. ա. 92 թ. սկսված հռոմեա-պարթևական բանակցությունների արդյունքում Հայաստանի դեմ ուղղված պայմանագիր կնքվեց:
  - է) Մերձավոր Արևելքում Սելևկյան պետության դիրքերը թուլացնելու նպատակով Արտաշես I-ը աջակցեց Մարաստանի սատրապ Տիմարքոսի ապստամբությանը:
- 1) բ, գ, է                      2) դ, ե, զ                      3) ա, գ, է                      4) գ, դ, ե

**15. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որոնք են սխալ.**

- ա) Արտավազդ II-ի և Կրասոսի ռազմական ուժերի միավորումը թույլ չտալու համար Օրոդես II-ի գլխավորած ուժերը հարձակվեցին Հայաստանի սահմանամերձ տարածքների վրա:
- բ) Քանի որ Արտավազդ II-ը տեղեկացրել էր, որ չի կարող օգնական ուժեր ուղարկել Կրասոսին, ուստի վերջինս որոշեց պարթևներին ջախջախելուց հետո պատժել Արտավազդին:
- գ) Հայաստանը հռոմեացիների ավերածություններից և զոհերից զերծ պահելու նպատակով Արտավազդ II-ը Ք. ա. 52 թ. որոշեց բանակցել Կրասոսի հետ:
- դ) Արտավազդ II-ը գաղտնի դաշնակցային պայմանագիր էր կնքել պարթևների հետ, որի պատճառով Կրասոսը հայտարարեց, թե պարթևներին ջախջախելուց հետո պատժելու է Արտավազդին:
- ե) Հռոմի Ծերակույտին ուղարկած պաշտոնական գեկուցագրում պարթևական արշավանքի ձախողումն Անտոնիոսը բացատրում էր հայոց թագավոր Արտավազդ II-ի դավաճանությամբ:
- զ) Խառանի ճակատամարտից հետո հայ-պարթևական միացյալ ուժերի ջանքերով Հայաստանում գտնվող հռոմեական լեգեոնները դուրս շարտվեցին երկրից:
- է) Հայաստանը հռոմեացիների ավերածություններից զերծ պահելու նպատակով Արտավազդ II-ը պարթևական ձախողված արշավանքից հետո որոշեց բանակցել Անտոնիոսի հետ:

- 1) գ, դ, զ                      2) բ, գ, ե                      3) ա, բ, գ                      4) ա, դ, է

**16. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

- ա) Սարգուրի II-ի կողմից Բաբելոնիայի վերանվաճման հետևանքով հայոց աշխարհակալության հարավային սահմանը կրկին հասավ Պարսից ծոց:
- բ) Մենուայի հաղթարշավների շնորհիվ Հայկական լեռնաշխարհի հիմնական մասը միավորվեց մեկ կենտրոնացված պետության մեջ:
- գ) Մենուայի հաղթարշավների հետևանքով Ասորեստանը թուլացավ և, չկարողանալով այլևս վերականգնել իր դիրքերն Առաջավոր Ասիայում, շուտով նվաճվեց Բաբելոնի կողմից:
- դ) Սարգուրի II-ի կողմից կախյալ թագավորությունները վերացնելու և պետության վարչական միավորներ դարձնելու հետևանքով Վանի թագավորությունը դարձավ կենտրոնացված պետություն:
- ե) Ռուսա II-ի կողմից Բաբելոնիայի վերանվաճման հետևանքով հայոց աշխարհակալության հարավային սահմանները կրկին հասան Միջերկրական ծովի արևելյան ավազանին:
- զ) Մենուայի հաղթարշավների շնորհիվ Հայկական լեռնաշխարհի հյուսիսային շրջանները թեև մտան Վանի տերության կազմը, սակայն հարկատու չդարձան:
- է) Սարգուրի II-ի կողմից կախյալ թագավորությունները վերացնելու և պետության վարչական միավորներ դարձնելու արդյունքում կառավարման ոլորտում անցում կատարվեց դաշնային կառավարման:

- 1) ա, ե, է                      2) ա, բ, դ                      3) ա, գ, է                      4) գ, դ, զ

**17. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

- ա) Վանի արքայատոհմից իշխանության փոխանցումը Հայկազուններին տեղի ունեցավ Ասորեստանի ռազմական միջամտության և երկրի ներսում ծագած խռովությունների ու պալատական հեղաշրջման հետևանքով:
- բ) Երվանդ Սակավակյացը, նպաստելով Ասորեստանի կործանմանը, իր դաշնակից Բաբելոնի և Մարաստանի համաձայնությամբ ընդարձակեց թագավորության սահմանները՝ ներառելով Օսրոյենեն և Միգդոնիան:
- գ) Ք. ա. 336 թ. Երվանդ III-ը գլխավորեց հայերի ապստամբությունը Աքեմենյան պետության դեմ և հաջողության հասնելով՝ հռչակեց Մեծ Հայքի անկախությունը:
- դ) Դեպի Բաբելոն, Պարսից ծոց և Միջերկրական ծով կատարած հաղթարշավների հետևանքով Սարգուրի II-ը չորս կողմից շրջափակման մեջ վերցրեց Ասորեստանը:
- ե) Տիգրան Մեծի և Պոմպեոսի միջև կնքված Արտաշատի պայմանագրով Հայաստանը պահպանեց իր տարածքային ամբողջականությունը և պետական անկախությունը:
- զ) Տիգրանակերտի անկման պատճառն այն էր, որ քաղաքը պաշտպանող օտարազգի վարձկանները, կաշառվելով Լուկոլլոսի կողմից, հռոմեացիների առջև դավաճանաբար բացեցին դարպասները:

է) Տիգրան Կրտսերն ընդվզել էր Պոմպեոսի դեմ և վիրավորել նրա արժանապատվությունը, ուստի Պոմպեոսի կարգադրությամբ ձերբակալվեց ու ընտանիքի հետ գերեվարվեց Հռոմ:

- 1) ա, դ, է                      2) բ, գ, դ                      3) ե, գ, է                      4) բ, ե, գ

**18. Թվարկվածներից որոնք են Մծբինի 298 թ. պայմանագրի հետևանքներ.**

- ա) Բյուզանդիան հաստատվեց Վիրքում և Պոնտոսում:
- բ) Տրդատ III-ը վերջնականապես ճանաչվեց Մեծ Հայքի թագավոր:
- գ) Փոքր Հայքը վերադարձվեց Հայաստանին:
- դ) Տրդատ III-ը սկսեց զբաղվել երկրի հզորացմամբ և շինարարությամբ:
- ե) Ներսեհը ճանաչեց Մեծ Հայքի թագավորության անկախությունը:
- զ) Պարսից արքա Շապուհ II-ը ճանաչեց Մեծ Հայքի անկախությունը:
- է) Հայաստանը թոթափեց Աքեմենյանների գերիշխանությունը:

- 1) ա, բ, է                      2) դ, ե, գ                      3) ա, գ, զ                      4) բ, դ, ե

**19. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որոնք են ճիշտ.**

- ա) Ք. ա. 716 թ. աշնանը հյուսիսից անակնկալ հայտնվեցին քոչվոր կիմերների ցեղերը, որի արդյունքում Ռուսա I-ը անհաջողություններ կրեց, դրանից էլ օգտվելով՝ Սարգոն II-ը հարձակվեց Վանի թագավորության վրա:
- բ) Հայ-մակեդոնական համագործակցության արդյունքում կործանվեց Աքեմենյան տերությունը:
- գ) Ալեքսանդր Մակեդոնացու տերության ժառանգման համար պայքարն ավարտվեց տերության տրոհմամբ:
- դ) Երվանդ I-ի՝ Ք. ա. 360-ական թթ. սկսած հակապարսկական ապստամբությունն ավարտվեց պարտությամբ:
- ե) Արտաշատի հայ-հռոմեական պայմանագրի համաձայն՝ Հայաստանը պահպանեց իր նվաճումները Հարավային Միջագետքում:
- զ) Արաձանիի ճակատամարտում հռոմեացիների պարտությունը նպաստեց հայկական դիրքերի ամրապնդմանը Կորդուքում ու Հյուսիսային Միջագետքում:
- է) Տիգրանակերտի ճակատամարտում պարթևական ուժերի նահանջը նպաստեց Տիգրանակերտի գրավմանը հռոմեացիների կողմից:

- 1) ա, գ, զ                      2) բ, դ, զ                      3) ա, դ, է                      4) բ, դ, ե

**20. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որոնք են սխալ.**

- ա) Աքեմենյան Պարսկաստանին հաղթելու շնորհիվ ձևավորվեց Ալեքսանդր Մակեդոնացու հսկայաձավալ պետությունը:
- բ) Խառանի ճակատամարտի արդյունքում պարսից տերությունը տարածքային կորուստներ ունեցավ Փոքր Ասիայում:
- գ) Գավգամելայի ճակատամարտում պարթևական զորքերի պարտությունը նպաստեց Առաջավոր Ասիայի քաղաքական քարտեզի փոփոխմանը:

- դ) Հայ-պարթևական պայմանագրի համաձայն՝ պարթևները Տիգրան Մեծին զիջեցին «Արքայից արքա» տիտղոսը:
  - ե) Ակցիոնի ճակատամարտից հետո հայ-պարթևական ուժերը մտան Հայաստան և արդյունավետ պայքար մղեցին հռոմեացիների դեմ:
  - զ) Արտաշատում կնքված դաշնակցային պայմանագրի համաձայն՝ հայ-պոնտական ուժերը ռազմակալեցին Կապադովկիան, սակայն քիչ անց ստիպված եղան հեռանալ այդտեղից:
  - է) Զելայի ճակատամարտում Լուկուլլոսի պարտության հետևանքով վերականգնվեց հայկական գերիշխանությունը Եգիպտոսում:
- 1) ա, դ, ե                      2) բ, գ, է                      3) ա, գ, զ                      4) բ, դ, զ

**21. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների հետևանքներից որոնք են սխալ.**

- ա) Արտաշես I-ի արշավանքների արդյունքում Տմորիքը միացվեց հայկական պետությանը:
  - բ) Արտաշես I-ի վարչական բարեփոխման արդյունքում երկիրը բաժանվեց 120 գավառների (ստրատեգիաների):
  - գ) Արտաշես I-ի արշավանքների արդյունքում Մեծ Հայքի բոլոր տարածքները միավորվեցին մեկ միասնական պետության մեջ՝ բացի Ծոփքից:
  - դ) Արտաշես I-ի կրոնական բարեփոխման արդյունքում երկիրը վերածվեց թեոկրատական պետության՝ աստվածապետության:
  - ե) Արտաշես I-ի ռազմական բարեփոխման հետևանքով զորքը բաժանվեց 4 մասի՝ զորավարությունների:
  - զ) Արտաշես I-ի հողային բարեփոխումը նպաստեց ավատական հողատիրության զարգացմանը Հայաստանում:
  - է) Արտաշես I-ի հողային բարեփոխման արդյունքում միավորվեցին համայնքային և պետական հողերը:
- 1) բ, գ, ե                      2) բ, ե, է                      3) դ, գ, է                      4) ա, դ, զ

**22. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որոնք են ճիշտ.**

- ա) Հռանդեայի ճակատամարտում հռոմեացիների պարտությունը նպաստեց Հայաստանի նկատմամբ Ներոն կայսեր դիրքորոշման փոփոխմանը:
- բ) Հայոց արքա Խոսրով I-ի որդեգրած ճիշտ քաղաքական դիրքորոշման արդյունքում Հայաստանից հեռացվեցին հռոմեական լեգեոնները:
- գ) Արաձանիի ճակատամարտից հետո հայ-պարթևական ուժերը մտան Հայաստան և արդյունավետ պայքար մղեցին հռոմեացիների դեմ:
- դ) Խաբեության շնորհիվ Կարակալա կայսրը Ասորիքում ձերբակալում է Հայոց արքա Խոսրով I-ին:

ե) Հռոմի կայսր Մակրինոսը, ի նշանավորումն հայ-հռոմեական դաշինքի վերականգնման, Տրդատ II-ին թագ ուղարկեց և վերադարձրեց Կապադովկիայում Հայաստանին պատկանող կալվածքները:

զ) Օգոստոս կայսեր հեռագնա ծրագիրը նպատակ ուներ միավորելու Հայաստանը Կապադովկիայի հետ և ստեղծելու միացյալ ուժեղ պետություն ընդդեմ Պարթևստանի:

է) Պարսկաստանում Սասանյանների իշխանության գալը թուլացրեց Արտաշեսյանների դիրքերը Հայաստանում:

1) ա, բ, է

2) գ, ե, զ

3) բ, դ, զ

4) ա, դ, ե

## 6. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅՑՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

6-1. Ընտրովի և կարճ (ժամանակագրական դասավորության խախտմամբ) պատասխանով առաջադրանքներ

1. Տրված իրադարձություններից որն է տեղի ունեցել երրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա) Տիգրան Երվանդյանի ու դաշնակից զորքերի կողմից Բաբելոնի գրավումը
- բ) Արտաշես II-ի գահակալման սկիզբը
- գ) Խառանի ճակատամարտը
- դ) Ապամեայի հաշտության պայմանագրի կնքումը
- ե) Արտաշատի պայմանագրի կնքումը

- 1) ե                                      2) գ                                      3) դ                                      4) բ

2. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Ալցիումի ճակատամարտը
- բ. Խառանի ճակատամարտը
- գ. Մարկոս Անտոնիոսի պարթևական արշավանքի սկիզբը
- դ. Մծուրք քաղաքի հիմնադրումը
- ե. Արտաշատի հայ-հռոմեական պայմանագրի կնքումը

- 1) ե, գ, ա, բ, դ                      2) ե, բ, ա, դ, գ                      3) ե, բ, գ, ա, դ                      4) բ, ե, դ, ա, գ

3. Արքաների անունները դասավորել ըստ գահակալության ժամանակագրական հաջորդականության.

- ա. Տիգրան II
- բ. Տիգրան I Երվանդյան
- գ. Արտավազդ I
- դ. Սարգուրի I
- ե. Տիգրան III
- զ. Արտաշես II
- է. Տրդատ I
- ը. Արտավազդ III

- 1) բ, դ, ա, գ, զ, ե, է, ը                      3) դ, բ, գ, զ, ա, ե, ը, է  
2) դ, բ, գ, ա, է, զ, ը, ե                      4) դ, բ, գ, ա, զ, ե, ը, է

4. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա) Արդինի-Մուսասիր երկրի ներառումը Վանի թագավորության կազմում
- բ) «Նաիրի» մեկ միասնական պետական կազմավորման հիշատակումը
- գ) Տուշպա մայրաքաղաքի հիմնադրումը
- դ) Արամ Ուրարտացու դիմակայելը ասորեստանյան արշավանքներին

- 1) դ, բ, ա, գ                      2) բ, դ, գ, ա                      3) դ, բ, գ, ա                      4) բ, գ, դ, ա

**5. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա) Հայ-հռոմեական պատերազմի երկրորդ փուլը
  - բ) Փոքր Հայքի ռազմակալումը Պոնտոսի կողմից
  - գ) Պոմպեոսի ժամանումը Արևելք
  - դ) հռոմեա-պոնտական պատերազմների սկիզբը
  - ե) Տիգրան Մեծի և Գոդերծ II-ի միջև հաշտության պայմանագրի կնքումը
- 1) բ, դ, ե, գ, ա    3) ե, բ, դ, ա, գ  
2) դ, ե, բ, ա, գ    4) բ, դ, ե, ա, գ

**6. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վերջինը.**

- ա) Վանի աշխարհակալության ստեղծումը
  - բ) Թիգլաթպալասար III-ի արշավանքը դեպի Տուշաթ
  - գ) Սևանա լճի ավազանի իշխանությունների միացումը Վանի թագավորությանը
  - դ) Վանի թագավորության տեղական սեպագրի ստեղծումը
  - ե) Էրեբունի ամրոցի հիմնադրումը
  - զ) Արդինի-Մուսասիր երկրի ներառումը Վանի թագավորության կազմում
- 1) ա    2) գ    3) բ    4) զ

**7. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը.**

- ա) Կյուրոս Մեծի ապստամբությունը Մարաստանի դեմ
  - բ) դաշնակից զորքերի արշավանքը Ասորեստանի վերջին հենակետ Կարքեմիշ քաղաքի վրա
  - գ) Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում Հայկազունների տոհմի իշխանության վերականգնումը Սկայորդու գլխավորությամբ
  - դ) Աքեմենյան տերության բաժանվելը 20 սատրապությունների
  - ե) Երվանդ I Սակավակյացի գահակալումը
  - զ) Հայաստանի կողմից Աքեմենյանների գերիշխանության ճանաչումը
- 1) բ    2) ե    3) ա    4) գ

**8. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը.**

- ա) Փոքր Հայքի ռազմակալվելը Պոնտոսի կողմից
  - բ) Արտավազդ I-ի գահակալումը
  - գ) Ապամեայի հաշտության պայմանագրի կնքումը
  - դ) Երվանդ IV-ի գահակալումը
  - ե) Տիմարքոսի գլխավորած ապստամբությունը
- 1) դ    2) ա    3) ե    4) գ

**9. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել առաջինը.**

- ա) Տրդատ III-ի կառավարման մինչքրիստոնեական շրջանի սկիզբը
- բ) պարսից արքա Ներսեսի պատերազմելը Հռոմի դեմ
- գ) Մծուրք քաղաքի հիմնադրումը
- դ) հայոց գահի հանձնումը Բակուր Արշակունուն
- ե) Վաղարշապատ մայրաքաղաքի հիմնադրումը

- 1) ե                                      2) դ                                      3) բ                                      4) գ

**10. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել երկրորդը.**

- ա) Օրոդես II-ի հետ հայ-պարթևական պայմանագրի կնքումը
- բ) Փրասպայի մոտ հռոմեական զորքի պարտությունը
- գ) Պոմպեոսի ժամանելը Արևելք
- դ) Կրասոսի ժամանելը Ասորիք
- ե) Արտաշատի հայ-հռոմեական հաշտության պայմանագրի կնքումը

- 1) ե                                      2) գ                                      3) դ                                      4) բ

**11. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը.**

- ա) Խոսրով I-ի ձերբակալումը Կարակալա կայսեր կողմից
- բ) Ոսխա գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտը
- գ) Կորբուլոնի ներխուժումը Մեծ Հայքի թագավորություն
- դ) Տրդատ II-ի գահակալումը Հայաստանում
- ե) Սոհեմոս-Տիգրանի գահակալումը
- զ) Կիլիկիայում՝ Իսոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Նիգերի սպանվելը

- 1) ե                                      2) գ                                      3) դ                                      4) ա

**12. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը.**

- ա) Տիգրան Երվանդյանի որդի Վահագնի գահակալման սկիզբը
- բ) Հայաստանի՝ Աքեմենյան տերության XIII սատրապություն դառնալը
- գ) Արտաքսերքսես II-ի դեմ նրա եղբոր ապստամբությունը
- դ) Հայաստանի կողմից Աքեմենյանների գերիշխանության ճանաչումը
- ե) Տիգրան Երվանդյանի գլխավորությամբ Բաբելոնի գրավումը
- զ) Կամբիզի գահակալման սկիզբը

- 1) բ                                      2) ա                                      3) դ                                      4) գ

**13. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա) Սելևկյան Սելենե թագուհու գերեվարումը Տիգրան Մեծի կողմից
- բ) Փոքր Հայքի ռազմակալումը Պոնտոսի կողմից

- գ) Մագնեսիայի ճակատամարտը
- դ) Սուլլայի ճնշման ներքո հայկական ուժերի դուրս գալը Կապադովկիայից
- ե) Օրոդես II-ի հետ հայ-պարթևական պայմանագրի կնքումը
- զ) Ապամեայի հաշտության պայմանագրի կնքումը
- է) Պոնտոսի Ջելա քաղաքի մոտ հայ-պոնտական ուժերի հաղթանակը հռոմեացիների նկատմամբ
- ը) Արտաշես I-ի կողմից Վիրքից հայկական Գուգարք նահանգը վերադարձնելը

- 1) գ, գ, ը, բ, դ, ա, է, ե
- 2) գ, գ, բ, ը, ա, դ, ե, է
- 3) գ, գ, ը, դ, բ, ա, է, ե
- 4) գ, ը, գ, ա, ե, բ, դ, է

**14. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա) Հռանդեայում խաղաղության պայմանագրի կնքումը
- բ) Տրդատ II-ին Հռոմի կայսր Մակրինոսի կողմից թագ ուղարկելը
- գ) Խոսրով I-ի ձերբակալությունը Ասորիքում
- դ) Տրդատ III-ի հաստատվելը հայոց գահին
- ե) Արեգ-Միհրի տաճարի կառուցումը Գառնիում
- զ) Գայոս Կրասոսի Հայաստան ուղարկվելը Օգոստոսի կողմից
- է) Վաղարշ II-ի և Սևերոսի միջև հաշտություն կնքելը
- ը) Տրդատ I-ի պայքարը ավանների դեմ

- 1) գ, ա, ը, է, ե, բ, գ, դ
- 2) ա, ը, գ, գ, բ, դ, ե, է
- 3) գ, ա, ը, ե, է, գ, բ, դ
- 4) ը, ա, է, գ, ե, գ, դ, բ

**15. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից հորն է տեղի ունեցել ութերորդը.**

- ա) Արտավազդ III-ի գահակալման սկիզբը
- բ) Արածանիի ճակատամարտը
- գ) Խոսրով I-ի զորքերի արշավանքը Կովկասի լեռնական ցեղերի դեմ
- դ) հույն մատենագիր Հիպոլիտիսի «ժամանակագրության» գրվելը, որում հայերը հիշատակվում են սեփական դպրություն ունեցող ժողովուրդների շարքում
- ե) Տիգրան VI-ին գահընկեց անելը
- զ) հելլենիզմի դարաշրջանի սկիզբը Առաջավոր Ասիայում
- է) Հայաստանում հունարեն այբուբենի կիրառման սկիզբը
- ը) Արտաշես II-ի գահակալումը
- թ) Մեծ Հայքում Հայկազունների Երվանդական ճյուղի վերացումը
- ժ) Հռանդեայի (Եռանդ) ճակատամարտում հռոմեացիների պարտությունը

- 1) դ
- 2) ժ
- 3) գ
- 4) է

**16. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից հորն է տեղի ունեցել վեցերորդը.**

- ա) Տիգրան IV-ի կրկին գահ բարձրանալը քրոջ՝ Էրատոյի հետ միասին
- բ) հայոց արքա Բակուր Արշակունու գահընկեց լինելը

- գ) Սամոսատ մայրաքաղաքի կառուցումը
  - դ) Մծբինի 40-ամյա խաղաղության պայմանագրի կնքումը
  - ե) Տրդատ I-ի բազմելը հայոց գահին
  - զ) հռոմեա-պոնտական պատերազմների սկիզբը
  - է) հայոց գահի զավթումը Որմիզդ-Արտաշիրի կողմից
  - ը) Տրդատ II-ի հաղթական արշավանքը դեպի Տիգրան
  - թ) պարթևների թագավորանիստ Էկրատանի գրավումը Տիգրան Մեծի կողմից
- 1) ե                                      2) ը                                      3) է                                      4) բ

**17. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել յոթերորդը.**

- ա) Վանի արքայատոհմից իշխանության անցումը հաջորդ արքայատոհմին
  - բ) Արտաշեսյան արքայատոհմի վերացումը
  - գ) Տուշպա մայրաքաղաքի հիմնադրումը
  - դ) Ծովքի միացումը Մեծ Հայքին
  - ե) Արտավազդ IV-ի գահակալումը
  - զ) Սևանա լճի ավազանի իշխանությունների միացումը Վանի թագավորությանը
  - է) Հռոմում երկրորդ եռապետության կազմավորումը
  - ը) Վանի թագավորության գրային բարեփոխումը
- 1) է                                      2) բ                                      3) դ                                      4) ա

**18. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը.**

- ա) Ոսխա գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտը
  - բ) Արտաշես II-ի դավադիր սպանությունը
  - գ) հռոմեական լեգեոնների պարտությունն ու նվաստացումը Հռանդեսայում
  - դ) Արևելյան Հայաստանում արքունի գրագրության մեջ պահլավերենի (միջին պարսկերենի) գործածման սկիզբը
  - ե) Սելևկյան տերության առաջացումը
  - զ) Հռոմի դրածո Արտավազդ III-ի վտարումը Հայաստանից
  - է) հայոց գահի զավթումը Որմիզդ-Արտաշիրի կողմից
  - ը) Վահոմիսայի և հայերի ընդհարումը Հյուսիսային Միջագետքում
  - թ) Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում Հայկազունների տոհմի իշխանության վերականգնումը
  - ժ) Մծուրք քաղաքի հիմնադրումը
- 1) գ                                      2) գ                                      3) բ                                      4) ժ

**19. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել ութերորդը.**

- ա) Վանի թագավորության տեղական սեպագրի ստեղծումը
- բ) Տրդատ III-ի հաստատվելը հայոց գահին
- գ) Սամոսատ քաղաքի կառուցումը Կոմմագենետում

- դ) 50-հազարանոց զորքով Կրասուսի ժամանումը Ասորիք
  - ե) Հռադամիզդի վտարումը Հայաստանից
  - զ) Տիգրանակերտ մայրաքաղաքի կառուցումը
  - է) Սարգոն II-ի արշավանքը Վանի թագավորության դեմ
  - ը) Հռոմում կայսերական վարչակարգի հիմնումը
  - թ) Կորդուբի միացումը Մեծ Հայքին
  - ժ) Վանի թագավորության դաշնային աշխարհագրի փոխարինումը արիեստավարժ կանոնավոր բանակով
- 1) դ                                    2) ը                                    3) ե                                    4) գ

**20. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Արտաշես I-ի գահ բարձրանալը
- 2) հռոմեա-պոնտական պատերազմների սկիզբը
- 3) Գողերծ II-ի հետ հաշտության պայմանագրի կնքումը
- 4) Լուկուլլոսի բանակի դուրս գալը Կորդուբից և Հայկական Տավրոսի վրայով անցնելը
- 5) Միհրդատ Եվպատորի բանազնացների ժամանումը Արտաշատ
- 6) հայ-հռոմեական պատերազմի երկրորդ փուլը

**21. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Վանի աշխարհակալության ստեղծումը
- 2) Փոքր Հայքի ռազմակալումը Պոնտոսի կողմից
- 3) Ապամեայի հաշտության պայմանագրի կնքումը
- 4) Տիմարքոսի ապստամբությունը
- 5) Արտավազդ III-ի գահակալումը
- 6) Տիգրան VI-ի գահակալումը

**22. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Պարթևստանում Վաղարշ I Արշակունու գահ բարձրանալը
- 2) Հռանդեայի (Եռանդ) ճակատամարտում հռոմեացիների պարտությունը
- 3) Արեգ-Միհրի տաճարի կառուցումը Գառնիում
- 4) Հայ հայրենասերների դիմադրությունը Կորբուլոնի զորքերին Տարոն գավառում
- 5) հայոց Քակուր Արշակունուն գահընկեց անելը և Հռոմ տանելը
- 6) հույն մատենագիր Հիպպոլիտիսի «Ժամանակագրության» գրվելը

**23. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Սոհեմոս-Տիգրանի գահակալումը
- 2) Նիզերի սպանվելը Կիլիկիայում՝ Իսոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում
- 3) Հայաստանում արքայի հրամանով հունարենին զուգահեռ ասորերենի կիրառումը

- 4) Տրդատ II-ի գահակալումը Հայաստանում
- 5) Տրդատ III-ի հաստատվելը հայոց գահին
- 6) Մծբինի 40-ամյա խաղաղության պայմանագրի կնքումը

**24. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Ծովքի միացումը Մեծ Հայքին
- 2) Կորդուքի միացումը Մեծ Հայքին
- 3) Սուլլայի բանակի մուտքը Կապադովկիա
- 4) Պարթևստանի Գոդերծ II-ի գահ բարձրանալը
- 5) Օրոդես II-ի հետ հայ-պարթևական պայմանագրի կնքումը
- 6) Զելա քաղաքի մոտ հռոմեացիների նկատմամբ հայ-պոնտական ուժերի հաղթանակը
- 7) պոնտական բանագնացների ժամանումը Արտաշատ
- 8) Արտավազդ II-ի գահակալման սկիզբը

**25. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Հայաստանում հունարեն այբուբենի կիրառման սկիզբը
- 2) Մեծ Հայքում Հայկազունների Երվանդական ճյուղի վերացումը
- 3) Մարաստանի սելևկյան սատրապ Տիմարքոսի ապստամբությունը
- 4) Անտիոքոս I Երվանդունու թագադրվելը «Հայկական» թագով
- 5) Կարակալա կայսեր զորքի վտարումը Հայաստանից
- 6) Տրդատ II-ին Հռոմի կայսր Մակրինոսի կողմից թագ ուղարկելը
- 7) Հռոմի ծերակույտի կողմից Սոհեմոսին Հայաստանի թագավոր նշանակելը
- 8) Խոսրով I-ի զորքերի արշավանքը Կովկասի լեռնական ցեղերի դեմ
- 9) Սասանյան արքայատոհմի հիմնումը

**26. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Վանի տիրակալի հիշատակվելը կիմերների հետ Ասորեստանի դեմ թշնամական գործողություններ ծրագրելիս
- 2) Կարքենի թագապետի գրավումը դաշնակից զորքերի կողմից
- 3) Սատրապի կարգավիճակով Հայկազուն-Երվանդականների իշխելու ավարտը Հայաստանում
- 4) Պարույր նահապետի ճանաչվելը Հայաստանի թագավոր
- 5) կարճ ժամանակով Սելևկյանների գերիշխանության հաստատումը հայկական չորս թագավորությունների վրա
- 6) «Ուրարտու»-ի վերջին հիշատակումը ասուրա-բաբելական արձանագրություններում
- 7) Տիգրան VI-ի գահ բարձրացվելը
- 8) Պետոս զորավարի ժամանումը Կապադովկիա

**27. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա) «Նաիրի» երկրանվան առաջին հիշատակումը
- բ) Հայասա երկրի առաջին հիշատակումը խեթական սեպագիր արձանագրություններում
- գ) Վանի թագավորությունում տարածում ստացած սեպագիր դպրության ընդօրինակելը Ասորեստանից
- դ) Հայոց մեծ թվականի սկիզբը
- ե) Հայոց փոքր թվականի սկիզբը
- զ) Արեգ-Միհրի տաճարի կառուցումը Գառնի ամրոցում

1) բ, ա, գ, գ, դ, ե

3) ա, բ, գ, դ, ե, գ

2) բ, գ, ա, գ, դ, ե

4) ա, բ, գ, գ, դ, ե

**28. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա) Սարգուրի III-ի հիշատակումն ասորեստանյան արձանագրություններում
- բ) Հայասա երկրի առաջին հիշատակումը խեթական սեպագիր արձանագրություններում
- գ) Տուշպա մայրաքաղաքի հիմնադրումը
- դ) «Նաիրի» երկրանվան առաջին հիշատակումը

1) բ, գ, դ, ա

3) դ, բ, ա, գ

2) բ, դ, գ, ա

4) գ, դ, ա, բ

**29. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Հայասայի՝ վերջին անգամ հիշատակվելը
- 2) Վանի թագավորության դաշնային աշխարհագրի՝ արիեստավարժ կանոնավոր բանակով փոխարինման սկիզբը
- 3) «Մենուայի ջրանցքի» կառուցումը
- 4) Վանի թագավորությունում տարածում ստացած սեպագիր դպրության ընդօրինակելը Ասորեստանից
- 5) Սարգուրի II-ի գահակալման սկիզբը

**30. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Հայոց մեծ թվականի սկիզբը
- 2) Տուշպայի հիմնադրումը
- 3) Իշպուլինիի գահակալման սկիզբը
- 4) Մենուախինիլի քաղաքի հիմնադրումը
- 5) Էրեբունի ամրոցի հիմնադրումը
- 6) Սարգուրի II-ի գահակալման սկիզբը

## **6-II. Կարճ (վանդակավոր) պատասխանով առաջադրանքներ**

### **1. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Տուշպայի հիմնադրումը
- 2) «Ուրարտու»-ի վերջին հիշատակումը ասուրա-բաբելական արձանագրություններում
- 3) Վանի տիրակալի հիշատակվելը կիմերների հետ Ասորեստանի դեմ թշնամական գործողություններ ծրագրելիս
- 4) համահայկական երրորդ թագավորության ստեղծումը
- 5) Վանա և Ուրմիո լճերի միջև Արամ անունով երկրի առաջին հիշատակումը
- 6) Բուն Հայոց տոմարի սկիզբը

### **2. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Վանի արքայատոհմից իշխանության անցումը հաջորդ արքայատոհմին
- 2) «Նաիրի» միասնական պետական կազմավորման հանդես գալը
- 3) Վանի թագավորության գրային բարեփոխումը
- 4) Արդինի-Մուսասիր երկրի ներառումը Վանի թագավորության կազմում
- 5) Կարանի թագավորի դիմադրելը խեթերի արշավանքներին
- 6) Սարգուրի I-ի գահակալման ավարտը

### **3. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) կիմերների առաջին թշնամական արշավանքը Վանի տերության դեմ
- 2) Խուկանայի և խեթերի թագավորի միջև պայմանագրի կնքումը
- 3) Վանի աշխարհակալության ստեղծումը
- 4) Սարգուրի III-ի հիշատակվելը ասորեստանյան արձանագրություններում
- 5) Նաիրի երկրանվան առաջին հիշատակումը Սալմանասար I-ի կողմից
- 6) Վանի թագավորության առաջին բախումը Սարգոն II-ի հետ

### **4. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Գողերձ II-ի հետ հաշտության պայմանագրի կնքումը Տիգրան Մեծի կողմից
- 2) Միհրդատ Եվպատորի բանագնացների ժամանումը Արտաշատ
- 3) Էրատոյի համատեղ գահակալումը եղբոր հետ
- 4) Արտաշատի ավերումը Կորբուլոնի կողմից
- 5) Տիգրան I-ի որդու պատանդ տրվելը պարթևներին
- 6) հայոց Արշակ I արքայի գահակալումը

### **5. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Փոքր Հայքի ռազմակալումը Պոնտոսի կողմից
- 2) Մծուրքի հիմնադրումը
- 3) Փրասպայի մոտ հռոմեական զորքի պարտությունը
- 4) Արևելյան Հայաստանում արքունի գրագրության մեջ պահլավերենի (միջին պարսկերեն) գործածման սկիզբը

- 5) Արեգ-Միհրի տաճարի կառուցումը Գառնիում
- 6) Հայաստանում հունարեն այբուբենի կիրառման սկիզբը

**6. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Հռանդեայում խաղաղության պայմանագրի կնքումը
- 2) Մեծ Հայքում Հայկազունների Երվանդական ճյուղի վերացումը
- 3) Սուլլայի ճնշման ներքո հայկական ուժերի դուրս գալը Կապադովկիայից
- 4) Տրդատ I-ի պայքարը ավանների դեմ
- 5) հայոց գահի հանձնումը Տիգրան VI-ին
- 6) հայոց Բակուր Արշակունուն գահընկեց անելը և Հռոմ տանելը

**7. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) հայկական ուժերի կողմից Լեգարդա ամրոցի մոտ հռոմեացիներին ուժգին դիմադրություն ցույց տալը
- 2) հռոմեա-պոնտական պատերազմների ավարտը
- 3) Սելևկյան տերության առաջացումը
- 4) Տրդատ II-ի հաղթական արշավանքը դեպի Տիգրան
- 5) Տիգրան IV-ի զոհվելը սարմատական քոչվոր ցեղերի դեմ ճակատամարտում
- 6) հայոց գահի զավթումը Որմիզդ-Արտաշիրի կողմից

**8. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Արտավազդ III-ի գահ բարձրանալը
- 2) Արտաշեսի վճռական հակահարվածը Սելևկյան արքա Անտիոքոս IV-ին
- 3) առաջին անգամ Հայաստանի տարածքում Մեծ և Փոքր Հայքերի հռչակումը որպես անկախ թագավորություններ
- 4) Տրդատ III-ի հաստատվելը հայոց գահին
- 5) Պետոս զորավարի ժամանումը Կապադովկիա
- 6) Կորբուլոնի լեգեոնների ներխուժումը Մեծ Հայք

**9. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Ոսխա գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտը
- 2) Սոհեմոս-Տիգրանի գահակալումը
- 3) Արտաշատի պաշարումը Հրահատ III-ի կողմից
- 4) Տիգրան III-ի գահակալումը
- 5) Մծուրք քաղաքի հիմնադրումը
- 6) հայ-հռոմեական պատերազմի առաջին փուլը

**10. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Վաղարշապատի դառնալը Արշակունյաց թագավորության երկրորդ մայրաքաղաք
- 2) Խոսրով II-ի գահակալումը Հայաստանում
- 3) Տրդատ II-ի գահակալումը Հայաստանում
- 4) Մծբինի 40-ամյա խաղաղության պայմանագրի կնքումը

- 5) Վաղարշ I Արշակունու գահ բարձրանալը Պարթևստանում
- 6) Պոնտոսի Ջելա քաղաքի մոտ հայ-պոնտական ուժերի հաղթանակը հռոմեացիների նկատմամբ

**11. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Տրդատ II-ին Հռոմի կայսր Մակրինոսի կողմից թագ ուղարկելը
- 2) Սամոսատ մայրաքաղաքի կառուցումը
- 3) Հռանդեայի (Եռանդ) ճակատամարտում հռոմեացիների պարտությունը
- 4) Տիգրան IV-ի գահակալումը
- 5) Խոսրով I-ի ձերբակալությունը Ասորիքում
- 6) հռոմեա-պոնտական պատերազմները

**12. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Խոսրով I-ի զորքերի արշավանքը Կովկասի լեռնական ցեղերի դեմ
- 2) Հռոմի դրածո Արտավազդ III-ի վտարումը Հայաստանից
- 3) հելլենիզմի դարաշրջանի սկիզբը Առաջավոր Ասիայում
- 4) հայ-պարթևական միացյալ ուժերի օգնությամբ Տրդատ I-ի բազմելը հայոց գահին
- 5) Արշամաշատի կառուցումը
- 6) Կարակալա կայսեր զորքի վտարումը Հայաստանից

**13. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) հայ Արշակունիների թագավորական իշխանության ժառանգական դառնալը
- 2) մեզ հասած առաջին հայկական արքայական դրամների հատումը
- 3) Տիգրանակերտ մայրաքաղաքի հիմնադրումը
- 4) Արտավազդ III-ի գահակալումը
- 5) Հռոմում կայսերական վարչակարգի հիմնումը
- 6) Տիգրան III-ի գահակալումը

**14. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) արքայի հրամանով հունարենին զուգահեռ ասորերենի կիրառումը Հայաստանում
- 2) պարսից Շապուհ I արքայի զորքերի գրոհը Տրդատ II-ի թագավորության վրա
- 3) հայոց արքայի կողմից Անտիոքոս I Երվանդունուն «Հայկական» թագով թագադրելը
- 4) Արտավազդ II-ի եղերական մահը
- 5) Տիգրան IV-ի և Էրատոյի համատեղ գահակալումը
- 6) Երվանդակերտ դաստակերտի կառուցումը

**15. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Տիգրան VI-ի բարձրանալը հայոց գահին
- 2) Գառնին առաջին անգամ պատմական վավերագրերում հիշատակելը
- 3) Տրդատի հաղթական մենամարտը գոթերի իշխանի նկատմամբ
- 4) Երվանդաշատ մայրաքաղաքի հիմնումը

- 5) պարսից Ներսեհ արքայի բանակի ճամբար դնելը Ոսխա գյուղում
- 6) ի նշանավորումն հայ-հռոմեական դաշինքի վերականգնման՝ Հռոմի կայսեր կողմից Կապադովկիայի կալվածքները Հայաստանին վերադարձնելը

**16. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Սասանյան արքայատոհմի հիմնումը
- 2) Պետոսի ուղարկվելը Արևելք
- 3) Տիգրան Մեծի և Գոդերծ II-ի միջև պայմանագրի կնքումը
- 4) հռոմեա-պոնտական պատերազմների ավարտը
- 5) Մարաստանի սելևկյան սատրապ Տիմարքոսի ապստամբությունը
- 6) Վաղարշ I Արշակունու գահ բարձրանալը Պարթևստանում

**17. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Պարսից արքա Ներսեհի պատերազմելը Հռոմի դեմ
- 2) Արտաշեսյան դինաստիայի անկումը
- 3) Պոմպեոսի ժամանումը Արևելք
- 4) Կորբուլոնի ներխուժումը Մեծ Հայքի թագավորություն
- 5) Պետոս զորավարի ժամանումը Կապադովկիա
- 6) առաջին անգամ պատմական վավերագրերում Գառնիի հիշատակումը

**18. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Լուկուլլոսի բանակի դուրս գալը Կորդուքից և անցնելը Հայկական Տավրոսի վրայով
- 2) պարսից արքա Ներսեհի պատերազմելը Հռոմի դեմ
- 3) Միհրդատ Եվպատորի բանագնացների ժամանումը Արտաշատ
- 4) Տրդատ II-ի գահակալումը
- 5) Նիգեթի սպանվելը Կիլիկիայում՝ Իսոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում
- 6) հռոմեա-հայպարթևական տասնամյա պատերազմը

**19. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Սուլլայի բանակի մուտքը Կապադովկիա
- 2) Արտաշատում հայ-պարթևական պայմանագրի կնքումը
- 3) Պոմպեոսի ժամանումը Արևելք
- 4) Արտավազդ III-ի գահակալումը
- 5) Տիգրան II-ի բանակների մուտքը Ասորիք
- 6) Զելա քաղաքի մոտ հռոմեացիների նկատմամբ հայ-պոնտական ուժերի հաղթանակը

**20. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Դարեհ III Կողմանոսի դառնալը Աքեմենյան տերության տիրակալ
- 2) Մագնեսիայի ճակատամարտը
- 3) Սոհենոս-Տիգրանի գահակալումը
- 4) Արտաշես I-ի կողմից Տմորիքի գրավումը

- 5) Երվանդ II-ի մասին վերջին տեղեկությունների հիշատակումը
- 6) Օրոդես II-ի հետ հայ-պարթևական պայմանագրի կնքումը

**21. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Միհրդատ Եվպատորի բանագնացների ժամանումը Արտաշատ
- 2) Տիմարքոսի ապստամբությունը
- 3) Արշակ I-ի գահակալումը Հայաստանում
- 4) Ծոփքի միացումը Մեծ Հայքին
- 5) Սամոսատ մայրաքաղաքի կառուցումը
- 6) Արտավազդ III-ի գահակալումը

**22. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Մանայի թագավորության կողմից Մենուայի գերիշխանության լիովին ընդունումը
- 2) Խուկանայի ամուսնանալը խեթերի արքայի քրոջ հետ
- 3) Սարդուրի I-ի գահակալման սկիզբը
- 4) հայոց պետականության պատմության մեջ բազմաթիվ իշխանությունների համադաշնությունից անցումը կենտրոնացված պետության
- 5) հայերի առանձնանալը հնդեվրոպական ընդհանրությունից
- 6) Վանի թագավորության տեղական սեպագրի ստեղծումը

**23. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Մծուրք քաղաքի հիմնադրումը
- 2) Տիգրան VI-ին գահընկեց անելը
- 3) Սուլլայի բանակի մուտքը Կապադոկիա
- 4) Հռոմում կայսերական վարչակարգի հիմնումը
- 5) Պետոս զորավարի ժամանումը Կապադոկիա
- 6) Տիգրան IV-ի գահակալումը Հայաստանում

**24. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Պոնտոսի Զելա քաղաքի մոտ հայ-պոնտական ուժերի հաղթանակը հռոմեացիների նկատմամբ
- 2) Տարոն գավառում հայ ազնվականի՝ Կորբուլոնին սպանելու փորձը
- 3) Մեծ Հայքում Հայկազունների Երվանդական ճյուղի իշխանության վերջը
- 4) Արտաշես II-ի գահակալության սկիզբը
- 5) հայ Արշակունիների թագավորական իշխանության ժառանգական դառնալը
- 6) Արտավազդ II-ի մահապատիժը

**25. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Տիգրան VI-ի բազմելը հայոց գահին
- 2) Տրդատ I-ի ռազմերթը ավանների դեմ
- 3) Անտոնիոսի պարտությունը Ակցիումի ճակատամարտում

- 4) հայ-պարթևական միացյալ ուժերով Տրդատի՝ Արտաշատում հայոց գահին նստելը
- 5) Լեգարդա ամրոցի գրավումը Կորբուլոնի զորքի կողմից
- 6) Որմիզդ-Արտաշիրի կողմից Հայաստանի գահի զավթումը

**26. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Հայասա երկրի առաջին հիշատակումը խեթական սեպագիր արձանագրություններում.
- 2) «Ուրարտու»-ի վերջին հիշատակումը ասուրա-բաբելական արձանագրություններում
- 3) Վանի տիրակալի հիշատակվելը կիմերների հետ Ասորեստանի դեմ թշնամական գործողություններ ծրագրելիս
- 4) «Նաիրի» երկրանվան առաջին հիշատակումը
- 5) Վանա և Ուրմիո լճերի միջև Արամ անունով երկրի առաջին հիշատակումը
- 6) հայերենի անջատվելը հնդեվրոպական ընդհանրությունից

**27. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Վանի արքայատոհմից իշխանության անցումը հաջորդ արքայատոհմին
- 2) «Նաիրի» երկրանվան առաջին հիշատակումը
- 3) Վանի թագավորությունում տարածում ստացած սեպագիր դպրության ընդօրինակելը Ասորեստանից
- 4) Մելիտեա թագավորության հարկատու դարձնելը Վանի թագավորությանը
- 5) Թորգոմա տան մասին առաջին հիշատակումը
- 6) Արգիշտի I-ի գահակալման ավարտը

## 7. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ

### 7-1. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

#### 1. Հայկական լեռնաշխարհի գետերը համապատասխանեցնել լեռներին, որոնցից դրանք սկիզբ են առնում.

- |                         |                       |
|-------------------------|-----------------------|
| 1) Խաչափայտի            | ա. Արևելյան Եփրատ     |
| 2) Բյուրակնյան (Սրմանց) | բ. Արևելյան Տիգրիս    |
| 3) Ծաղկանց              | գ. Ճորոխ              |
| 4) Ծաղկավետ             | դ. Արևմտյան Եփրատ     |
|                         | ե. Արաքս              |
| 1) 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ   | 3) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ |
| 2) 1-գ, 2-ե, 3-ա, 4-դ   | 4) 1-ա, 2-ե, 3-բ, 4-դ |

#### 2. Հայկական լեռնաշխարհի լեռնագագաթները համապատասխանեցնել իրենց բարձրություններին.

- |                       |                       |
|-----------------------|-----------------------|
| 1) Արագած             | ա. 4434 մ             |
| 2) Սիս                | բ. 3906 մ             |
| 3) Սիփան              | գ. 2906 մ             |
| 4) Կապուտջուղ         | դ. 4096 մ             |
|                       | ե. 3925 մ             |
| 1) 1-ա, 2-ե, 3-դ, 4-բ | 3) 1-դ, 2-բ, 3-ա, 4-ե |
| 2) 1-դ, 2-ե, 3-ա, 4-բ | 4) 1-ե, 2-գ, 3-ա, 4-դ |

#### 3. Կատարել համապատասխանեցում.

N	Գետը	N	Ակունքը	N	Երկարությունը
1	Արաքս	1	Ծաղկանց և Ծաղկավետ լեռներ	1	500 կմ (Հայաստանի մասում)
2	Տիգրիս	2	Խաչափայտի լեռներ	2	600 կմ (Հայաստանի մասում)
3	Ճորոխ	3	Բյուրակնյան լեռներ	3	345 կմ
4	Եփրատ	4	Հայկական պար և Նազիկ լիճ	4	400 կմ (Հայաստանի մասում)
		5	Հայկական Տավրոս և Ծովք լիճ	5	1000 կմ

1	5	2
2	3	5
3	1	4
4	4	1

1)

1	3	1
2	2	4
3	4	3
4	1	5

2)

1	2	5
2	4	3
3	3	1
4	5	4

3)

1	3	5
2	5	4
3	2	3
4	1	1

4)

**4. Տարբերել համապատասխանեցնել իրադարձություններին.**

- 1) Սարգոն II-ի արշավանքը Վանի թագավորության դեմ և Մուսասիրի նվաճումը
- 2) Արամ Ուրարտացու դիմակայումը ասորեստանյան արշավանքներին
- 3) Արգիշտի I-ի հաղթական պատերազմը Ասորեստանի դեմ
- 4) Հյուսիսից կիմերների քոչվոր ցեղերի անակնկալ հայտնվելը
- 5) Էրեբունի ամրոցի հիմնադրումը

ա. Ք. ա. 859-843 թթ.

դ. Ք. ա. 781-778 թթ.

բ. Ք. ա. 782 թ.

ե. Ք. ա. 716 թ.

գ. Ք. ա. 735 թ.

զ. Ք. ա. 714 թ.

1) 1-ե, 2-ա, 3-բ, 4-գ, 5-դ

3) 1-ա, 2-ե, 3-գ, 4-դ, 5-բ

2) 1-գ, 2-զ, 3-դ, 4-բ, 5-ե

4) 1-զ, 2-ա, 3-դ, 4-ե, 5-բ

**5. Կատարել համապատասխանեցում.**

- 1) Դարեհ I-ի դեմ հպատակ երկրների ապստամբությունը
- 2) Աքեմենյանների դեմ մի քանի սատրապությունների ապստամբությունը Երվանդ II-ի գլխավորությամբ
- 3) Մարաստանի դեմ Կյուրոս Մեծի ապստամբության սկիզբը
- 4) Քսենոփոնի զորքի անցնելը Հայաստանի տարածքով

ա. Ք. ա. 553 թ.

դ. Ք. ա. 360-ական թթ.

բ. Ք. ա. 401 թ.

ե. Ք. ա. 522-521 թթ.

գ. Ք. ա. 521 թ.

1) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ

3) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ

2) 1-ա, 2-ե, 3-դ, 4-բ

4) 1-ե, 2-բ, 3-ա, 4-գ

**6. Քաղաքները կառուցող արքաների անունները համապատասխանեցնել քաղաքների անվանումներին.**

1) Տիգրանակերտ

ա. Սանատրուկ

2) Զարիշատ

բ. Արգիշտի I

3) Մծուրք

գ. Մենուա

4) Էրեբունի

դ. Արտաշես I

5) Մենուախինիլի

ե. Տիգրան Մեծ

6) Տուշպա (Վան)

զ. Շամ

7) Վաղարշապատ

է. Երվանդ IV

8) Բագարան

ը. Տիգրան I

9) Սամոսատ

թ. Վաղարշ I

ժ. Սարգսրի I

- 1) 1-ը, 2-է, 3-դ, 4-բ, 5-գ, 6-ա, 7-ժ, 8-զ, 9-ե
- 2) 1-ե, 2-ա, 3-դ, 4-գ, 5-ժ, 6-բ, 7-թ, 8-ը, 9-զ
- 3) 1-ե, 2-թ, 3-ը, 4-բ, 5-գ, 6-ժ, 7-է, 8-զ, 9-դ
- 4) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ, 5-գ, 6-ժ, 7-թ, 8-է, 9-զ

**7. Վանի թագավորության արքաների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.**

- 1) Նրա օրոք տերության կառավարման ոլորտում համադաշնային կառավարման համակարգից սկսվեց անցում կատարվել կենտրոնացված պետության:
- 2) Նրան հաջողվեց բարեկամական և դաշնակցային հարաբերություններ հաստատել կիմերների հետ:
- 3) Նրա առաջնորդությամբ ստեղծվեց Վանի աշխարհակալությունը:
- 4) Նա է անցկացրել գրային բարեփոխումը Վանի թագավորությունում:
- 5) Նա կառուցեց 72 կմ երկարությամբ ջրանցք, որն օգտագործվում է մինչև օրս:
- 6) Նա Սևանա լճի ավազանում վերակառուցեց ամրոցներ և դրանք վերանվանեց Խալդի և Թեյշեբա աստվածների անուններով:

ա. Մենուա

ե. Ռուսա I

բ. Իշպուինի

զ. Արգիշտի I

գ. Սարգսրի II

է. Ռուսա II

դ. Սարգսրի I

1) 1-գ, 2-է, 3-զ, 4-բ, 5-ա, 6-ե

3) 1-բ, 2-զ, 3-գ, 4-դ, 5-ա, 6-ե

2) 1-գ, 2-է, 3-ա, 4-ե, 5-դ, 6-բ

4) 1-գ, 2-զ, 3-է, 4-ա, 5-բ, 6-ե

**8. Տիգրան Մեծի գահակալման շրջանի իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

- 1) Ծովքի վերամիավորումը Մեծ Հայքին
- 2) Արտաշատի պայմանագրի կնքումը
- 3) Արածանիի ճակատամարտը
- 4) հայ-պոնտական բանակների հաղթանակը Պոնտոսի Ջելա քաղաքի մոտ
- 5) Տիգրանակերտի կառուցումը
- 6) հայկական բանակների մուտքը Ասորիք

ա. Ք. ա. 80-70-ական թթ.

ե. Ք. ա. 68 թ.

բ. Ք. ա. 67 թ.

զ. Ք. ա. 92 թ.

գ. Ք. ա. 66 թ.

է. Ք. ա. 84 թ.

դ. Ք. ա. 94 թ.

1) 1-դ, 2-զ, 3-ե, 4-բ, 5-ա, 6-է

3) 1-բ, 2-զ, 3-ե, 4-դ, 5-ա, 6-է

2) 1-գ, 2-է, 3-ե, 4-ա, 5-դ, 6-բ

4) 1-դ, 2-զ, 3-բ, 4-գ, 5-է, 6-ե

**9. Տարբերվերը համապատասխանեցնել ք. ա. 1 դարում տեղի ունեցած իրադարձություններին.**

- 1) Գայոս Կեսարի ժամանումը Հայաստան
- 2) Արտաշես II-ի սպանությունը
- 3) հայ-պարթևական պայմանագրի կնքումը Արտաշատում
- 4) Պտղոմայիս քաղաքի գրավումը
- 5) հայ-պոնտական դաշինքի կնքումը

ա. ք. ա. 66 թ.

դ. ք. ա. 94 թ.

բ. ք. ա. 71 թ.

ե. ք. ա. 20 թ.

գ. ք. ա. 5 թ.

զ. ք. ա. 54 թ.

1) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ, 5-զ

3) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ, 5-զ

2) 1-զ, 2-ե, 3-զ, 4-բ, 5-դ

4) 1-ա, 2-ե, 3-զ, 4-զ, 5-դ

**10. Տարբերվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

- 1) Արտաշեսյան արքայատոհմի անկումը
- 2) հայ-հռոմեական պատերազմի սկիզբը
- 3) Գնեոս Պոմպեոսի ժամանումը Արևելք
- 4) Տիգրան Մեծի բազմելը Սելևկյանների գահին
- 5) Կրասոսի գլխավորությամբ հռոմեական բանակի ժամանումը Ասորիք
- 6) Մարկոս Անտոնիոսի ժամանումը Արևելք
- 7) Խառանի ճակատամարտը

ա. ք. ա. 66 թ.

ե. ք. ա. 38 թ.

բ. ք. ա. 53 թ.

զ. ք. ա. 69 թ.

գ. ք. ա. 54 թ.

է. ք. ա. 84 թ.

դ. 1 թ.

ը. ք. ա. 36 թ.

1) 1-դ, 2-ա, 3-ը, 4-է, 5-բ, 6-ե, 7-զ

2) 1-ե, 2-զ, 3-ը, 4-զ, 5-ա, 6-է, 7-բ

3) 1-ը, 2-բ, 3-զ, 4-ա, 5-է, 6-ե, 7-դ

4) 1-դ, 2-զ, 3-ա, 4-է, 5-զ, 6-ը, 7-բ

**11. Չորավարների անունները համապատասխանեցնել ճակատամարտերին.**

1) Ալցիոմի

3) Հռանդեայի

2) Արաձանիի

4) Խառանի

ա. Գնեոս Պոմպեոս

դ. Լուկիոս Լուկուլլոս

բ. Պետոս

ե. Մարկոս Անտոնիոս

գ. Մարկոս Կրասոս

1) 1-դ, 2-ա, 3-բ, 4-զ

3) 1-զ, 2-ա, 3-ե, 4-բ

2) 1-ե, 2-դ, 3-բ, 4-զ

4) 1-ե, 2-դ, 3-բ, 4-ա

**12. Արտաշես I-ի ստեղծած չորս զորավարությունների ղեկավարների անունները համապատասխանեցնել զորավարության ուղղությանը.**

- |                       |                           |
|-----------------------|---------------------------|
| 1) արևելք             | ա. Արտաշեսի որդի Զարեհ    |
| 2) հարավ              | բ. Արտաշեսի որդի Վրույր   |
| 3) հյուսիս            | գ. Արտաշեսի որդի Տիրան    |
| 4) արևմուտք           | դ. Արտաշեսի որդի Արտավազդ |
|                       | ե. զորավար Սմբատ          |
| 1) 1-դ, 2-ե, 3-ա, 4-գ | 3) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ե     |
| 2) 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ | 4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-ե     |

**13. Տարեթվերը համապատասխանեցնել Ք. ա. II դարում տեղի ունեցած իրադարձություններին.**

- 1) հողային բարեփոխման վերաբերյալ Արտաշես I արքայի հրամանագիրը
- 2) Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը
- 3) Մարաստանի սելևկյան սատրապ Տիմարքոսի ապստամբությունը
- 4) Մեծ Հայքի, Փոքր Հայքի և Ծոփքի անկախ հռչակումը
- 5) Ապամեայի հաշտության պայմանագրի կնքումը
- 6) Մազնեսիայի ճակատամարտը
- 7) Փոքր Հայքի ռազմակալումը Պոնտոսի թագավորության կողմից

- |                     |                      |
|---------------------|----------------------|
| ա. Ք. ա. 188 թ.     | ե. մոտ Ք. ա. 180 թ.  |
| բ. Ք. ա. 190 թ.     | զ. Ք. ա. 165 թ.      |
| գ. Ք. ա. 112 թ.     | է. Ք. ա. 162-160 թթ. |
| դ. մոտ Ք. ա. 185 թ. | ը. Ք. ա. 189 թ.      |

- 1) 1-գ, 2-բ, 3-է, 4-զ, 5-դ, 6-ե, 7-ա
- 2) 1-բ, 2-զ, 3-ե, 4-ը, 5-ա, 6-է, 7-զ
- 3) 1-զ, 2-բ, 3-դ, 4-ա, 5-է, 6-ե, 7-զ
- 4) 1-ե, 2-դ, 3-է, 4-ը, 5-ա, 6-բ, 7-զ

**14. Կատարել համապատասխանեցում.**

N	Իրադարձությունը	N	Տարեթիվը	N	Գործիչը
1	Հռանդեայի ճակատամարտը	1	Ք. ա. 331 թ.	1	Լուկուլլոս
2	Գավգամելայի ճակատամարտը	2	Ք. ա. 53 թ.	2	Անտոնիոս
3	Արաձանիի ճակատամարտը	3	Ք. ա. 31 թ.	3	Կրասոս
4	Խառանի ճակատամարտը	4	Ք. ա. 68 թ.	4	Պետոս
		5	62 թ.	5	Ալեքսանդր Մակեդոնացի

1	5	2
2	3	1
3	1	3
4	2	4

1)

1	3	4
2	2	1
3	1	2
4	4	3

2)

1	2	3
2	1	5
3	4	4
4	5	3

3)

1	5	4
2	1	5
3	4	1
4	2	3

4)

### 15. Կատարել համապատասխանեցում.

N	Պատմիչը	N	Վկայությունը	N	Իրադարձությունը
1	Դիոն Կասիոս	1	«Հայերը մնացին առանց թագավորի, անտերունչ»:	1	Արտաշատի պայմանագրի կնքումը
2	Տակիտոս	2	«Հայերը, նետահարելով հռոմեացիներին, շատերին իսկույն սպանեցին, իսկ շատ շատերին էլ վիրավորեցին»:	2	Հռանդեայի ճակատամարտը
3	Պլուտարքոս	3	«Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ»:	3	Տիգրան IV-ի ճակատամարտը սարմատական ցեղերի դեմ
4	Ապպիանոս	4	«...գնում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը խառնվում են, և այնտեղ, բլուրը հավանելով, քաղաք է շինում...»:	4	Արածանիի ճակատամարտը
		5	«Հռոմեացիները նրան ողջունեցին արքայավայել»:	5	Տիգրանակերտի կառուցումը

1	4	5
2	5	1
3	1	3
4	3	2

1)

1	2	4
2	1	3
3	5	1
4	3	5

2)

1	2	2
2	3	5
3	1	3
4	5	4

3)

1	3	2
2	5	3
3	2	4
4	4	5

4)

### 16. Կատարել համապատասխանեցում.

- |           |              |
|-----------|--------------|
| 1) Նանե   | 4) Արեգ-Միհր |
| 2) Տիր    | 5) Աստղիկ    |
| 3) Անահիտ | 6) Վահագն    |

- ա. մայրության, պտղաբերության, արգասավորության հովանավոր  
 բ. արևի, լուսի, կրակի և արդարության հովանավոր  
 գ. ռազմի, քաջության և ամպրոպի հովանավոր  
 դ. սիրո, լուսի և գեղեցկության հովանավոր

ե. ընտանիքի հովանավոր

զ. հյուրընկալության հովանավոր

է. գրի և գրականության, արվեստի և գիտության հովանավոր

1) 1-ա, 2-է, 3-զ, 4-ե, 5-դ, 6-զ

3) 1-զ, 2-զ, 3-է, 4-բ, 5-ա, 6-ե

2) 1-ե, 2-զ, 3-ա, 4-զ, 5-դ, 6-բ

4) 1-ե, 2-է, 3-ա, 4-բ, 5-դ, 6-զ

**17. Կատարել համապատասխանեցում.**

N	Իրադարձությունը	N	Տարեթիվը	N	Գործիչը
1	Մագնեսիայի ճակատամարտը	1	Ք. ա. 31 թ.	1	Պոմպեոս
2	Ակցիոմի ճակատամարտը	2	Ք. ա. 53 թ.	2	Անտոնիոս
3	Տիգրանակերտի ճակատամարտը	3	Ք. ա. 190 թ.	3	Լուկոլլոս
4	Արտաշատի պայմանագրի կնքումը	4	Ք. ա. 69 թ.	4	Անտիոքոս III
		5	Ք. ա. 66 թ.	5	Ալեքսանդր Մակեդոնացի

1	5	4
2	3	2
3	1	3
4	2	1

1)

1	3	1
2	2	4
3	5	5
4	4	3

2)

1	2	3
2	1	5
3	4	4
4	5	2

3)

1	3	4
2	1	2
3	4	3
4	5	1

4)

**18. Քաղաքների անունները համապատասխանեցնել դրանց վերաբերող բնութագրումներին.**

1) «այն լի էր գանձերով և աստվածներին նվիրաբերված թանկարժեք ընծաներով»

2) «Հայկական Կարթագեն»

3) «գեղեցիկ և շքեղ հորինվածքով»

4) «Նոր քաղաք»

ա. Երվանդակերտ

դ. Արտաշատ

բ. Վաղարշապատ

ե. Տիգրանակերտ

գ. Բագարան

1) 1-ա, 2-ե, 3-դ, 4-զ

3) 1-դ, 2-բ, 3-զ, 4-ա

2) 1-զ, 2-դ, 3-ե, 4-բ

4) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ

**19. Ժամանակաշրջանը համապատասխանեցնել իրադարձություններին.**

1) «Նաիրի» երկրանվան առաջին հիշատակումը

2) Վանի թագավորությունում տարածում ստացած սեպագիր դպրության ընդօրինակելը Ասորեստանից

3) Հայասա երկրի առաջին հիշատակումը խեթական սեպագիր արձանագրություններում

4) Արամ անունով երկրի հիշատակումը

ա. Ք. ա. XXIII դ.

դ. Ք. ա. XII դ.

բ. Ք. ա. IX դ.

ե. Ք. ա. XV դ.

գ. Ք. ա. XIII դ.

1) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ

3) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա

2) 1-դ, 2-ա, 3-գ, 4-դ

4) 1-գ, 2-բ, 3-ե, 4-ա

## 7-II. Կարճ (վանդակավոր) պատասխանով առաջադրանքներ

### 1. Գահակալման տարիները համապատասխանեցնել վանի թագավորության արքայի անվանը.

ա. Արգիշտի I

1) Ք. ա. մոտ 810–786 թթ.

բ. Սարգուրի II

2) Ք. ա. մոտ 825–810 թթ.

գ. Ռուսա I

3) Ք. ա. 764–735 թթ.

դ. Սարգուրի I

4) Ք. ա. մոտ 685–645 թթ.

ե. Իշպուինի

5) Ք. ա. 735–մոտ 710–ական թթ. վերջ

զ. Մենուա

6) Ք. ա. մոտ 835–825 թթ.

7) Ք. ա. 786–764 թթ.

### 2. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.

ա. Հայաստանի վերածումը Աքեմենյան տերության XIII սատրապության

բ. Քսենոփոնի հրամանատարությամբ հույն վարձկանների բանակի նահանջը Հայաստանով

գ. Մեծ Հայքում Հայկազունիների Երվանդական արքայատոհմի իշխանության ավարտը

դ. Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի կործանումը

ե. Գավգամելայի ճակատամարտը

զ. Դարեհ I-ի գահակալման սկիզբը

1) Ք. ա. 331 թ.

5) Ք. ա. 612 թ.

2) Ք. ա. 522 թ.

6) Ք. ա. 520 թ.

3) Ք. ա. 521 թ.

7) Ք. ա. 401 թ.

4) Ք. ա. 201 թ.

### 3. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.

ա. Ալեքսանդր Մակեդոնացու տերության բաժանումը մի քանի մասերի

բ. Դարեհ I-ի հաստատումը Աքեմենյան տերության գահին

գ. Կյուրոս Մեծի գահակալության ավարտը

դ. Աքեմենյան տերության բաժանումը վարչական 20 շրջանների

ե. Սինաքերիբ արքայի սպանությունը նրա որդիների կողմից և նրանց փախուստը  
Հայաստան

զ. Հայաստանի կողմից Աքեմենյանների գերիշխանության ճանաչումը

1) Ք. ա. 520 թ.

5) Ք. ա. 538 թ.

2) Ք. ա. 681 թ.

6) Ք. ա. 529 թ.

3) Ք. ա. 522 թ.

7) Ք. ա. 301 թ.

4) Ք. ա. 521 թ.

#### 4. Երկիրը համապատասխանեցնել գահակալի անվանը.

ա. Սարգոն II

1) Պոնտոս

բ. Օրոդես II

2) Մեծ Հայք

գ. Կարանի

3) Հռոմեական կայսրություն

դ. Երվանդ III

4) Ասորեստան

ե. Միհրդատ VI Եվպատոր

5) Պարթևստան

զ. Ներոն

6) Կապադովկիա

7) Հայասա

#### 5. Տարեթվերը համապատասխանեցնել պայմանագրերին.

ա. հայ-պարթևական պայմանագիրը

դ. Հռանդեսայի պայմանագիրը

բ. հայ-պոնտական պայմանագիրը

ե. հայ-հռոմեական պայմանագիրը

գ. Ապամեայի պայմանագիրը

զ. Մծբինի պայմանագիրը

1) 298 թ.

5) Ք. ա. 54 թ.

2) 64 թ.

6) 297 թ.

3) Ք. ա. 94 թ.

7) Ք. ա. 188 թ.

4) Ք. ա. 66 թ.

#### 6. Կատարել համապատասխանեցում.

ա. ասորեստանյան աղբյուրներում Ուրարտուի՝ անվանապես հիշատակվող առաջին արքան

բ. Արտաշեսյան արքայատոհմի վերջին արքան

գ. Արտավազդ II արքային և նրա ընտանիքը նենգությամբ ձերբակալած հռոմեական եռապետը

դ. Տիգրան Մեծի հետ դաշինք կնքած Պոնտոսի արքան

ե. Տիգրան Մեծի հետ հաշտության պայմանագիր կնքած հռոմեական զորավարը

զ. Կորբուլոնի դաշնակից վրաց արքան

1) Անտոնիոս

5) Պոմպեոս

2) Տիգրան IV

6) Միհրդատ VI Եվպատոր

3) Փարսման

7) Արտավազդ II

4) Արամ

**7. Կատարել համապատասխանեցում.**

- |                  |                     |
|------------------|---------------------|
| ա. Մարկոս Կրասոս | 1) Պարթևստանի արքա  |
| բ. Տակիտոս       | 2) հույն մատենագիր  |
| գ. Ներոն         | 3) ասորի պատմիչ     |
| դ. Հրահատ III    | 4) հռոմեական կայսր  |
| ե. Միթրատատես    | 5) հռոմեական պատմիչ |
| զ. Ստրաբոն       | 6) Հռոմի եռապետ     |
|                  | 7) Փոքր Հայքի արքա  |

**8. Գահակալման տարիները համապատասխանեցնել արքայի անվանը.**

- |                 |                      |
|-----------------|----------------------|
| ա. Արտավազդ II  | 1) Ք. ա. 115–95 թթ.  |
| բ. Տիգրան III   | 2) Ք. ա. 8–5 թթ.     |
| գ. Արտավազդ III | 3) Ք. ա. 55–34 թթ.   |
| դ. Արտաշես I    | 4) Ք. ա. 95–55 թթ.   |
| ե. Տիգրան I     | 5) Ք. ա. 20–8 թթ.    |
| զ. Տիգրան II    | 6) Ք. ա. 5–2 թթ.     |
|                 | 7) Ք. ա. 189–160 թթ. |

**9. Պատմիչների անունները համապատասխանեցնել հայոց արքաների վերաբերյալ իրենց խոսքերին.**

- ա. «Նա հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները՝ հույների և հռոմայեցիների մեջ»:
- բ. «Արմենիայի մեծագույն մասի տիրակալ»:
- գ. «Հռոմեացիները նրան ողջունեցին արքայավայել»:
- դ. «Հայերը մնացին առանց թագավորի, անտերունչ»:
- ե. «Հայաստանն... աճել է Արտաշեսի ջանքերով... և ուստի այստեղ բոլորը միավեզու են»:
- զ. «Սա մեր թագավորներից ամենահզորը և ամենախոհեմն էր և նրանց բոլորից քաջ»:

- |                    |               |
|--------------------|---------------|
| 1) Մովսես Խորենացի | 5) Պլուտարքոս |
| 2) Ստրաբոն         | 6) Տակիտոս    |
| 3) Պոլիբիոս        | 7) Արիանոս    |
| 4) Հերոդոտոս       |               |

**10. Կատարել համապատասխանեցում.**

- |         |              |
|---------|--------------|
| ա. Հայկ | դ. Արեգ–Միհր |
| բ. Տիր  | ե. Տորք      |
| գ. Արա  | զ. Աստղիկ    |

- 1) Նրա պաշտամունքը կապված է եղել երկրագործության, ցանքի և գարնան աճող բուսականության հետ:
- 2) Նա համարվել է արևի, լույսի, կրակի և արդարության աստվածը:

- 3) Նա համարվել է ռազմի, քաջության և ամպրոպի աստվածը:
- 4) Նրա անունը տոտեմական ծագում ունի և կապված է անգղ թռչունի հետ:
- 5) Նա համարվել է լույսի, սիրո և գեղեցկության դիցուհին:
- 6) Նա համարվել է գրի և գրականության, արվեստի և գիտության հովանավոր աստվածը:
- 7) Նրա անունով է կոչվել Օրիոն համաստեղությունը:

**11. Կատարել համապատասխանեցում.**

- |             |              |
|-------------|--------------|
| ա. Վանատուր | դ. Արեգ-Միհր |
| բ. Աստղիկ   | ե. Արամազդ   |
| գ. Անահիտ   | զ. Տիր       |

- 1) մայրության, պտղաբերության, արգասավորության հովանավոր
- 2) ընտանիքի հովանավոր
- 3) արևի, լույսի, կրակի և արդարության հովանավոր
- 4) երկրի և երկնքի արարիչ
- 5) լույսի, սիրո և գեղեցկության հովանավոր
- 6) գրի և գրականության, արվեստի և գիտության հովանավոր
- 7) հյուրընկալության աստված

**12. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

- ա. Էվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգության բեմականացումը Արտաշատում
- բ. Գառնիի ամրոցի կառուցումը
- գ. Գայոս Կրասոսի Հայաստան ուղարկվելը մեծ բանակով
- դ. Բակուր արքայի գահընկեց լինելը
- ե. Կորբուլոնի գլխավորությամբ հռոմեական լեգեոնների ներխուժումը Մեծ Հայքի թագավորություն
- զ. Տիգրան III-ի գահակալության սկիզբը

- |                |                |
|----------------|----------------|
| 1) 58 թ.       | 5) Բ. ա. 20 թ. |
| 2) Բ. ա. 5 թ.  | 6) Բ. ա. 53 թ. |
| 3) Բ. ա. 18 թ. | 7) 163 թ.      |
| 4) 76 թ.       |                |

**13. Տարեթվերը համապատասխանեցնել I դարում տեղի ունեցած իրադարձություններին.**

- ա. Կորբուլոնի դեմ մահափորձը Տարոն գավառում
- բ. Հռանդեսայի ճակատամարտը
- գ. Կովկասից ալանների ներխուժումը Մեծ Հայքի թագավորություն Տրդատ I-ի օրոք
- դ. թագադրվելու նպատակով Տրդատ I-ի ուղևորությունը Հռոմ
- ե. Վաղարշ I և Տրդատ Արշակունիների մուտքը Հայաստան և Հռոմի դղի վտարումը
- զ. Գառնիի ամրոցի կառուցումը

- |          |          |
|----------|----------|
| 1) 62 թ. | 5) 52 թ. |
| 2) 72 թ. | 6) 59 թ. |
| 3) 76 թ. | 7) 65 թ. |
| 4) 58 թ. |          |

**14. Հայոց արքաների անունները համապատասխանեցնել իրենց կառուցած քաղաքների անվանումներին.**

- |                 |               |
|-----------------|---------------|
| ա. Սամոսատ      | 1) Երվանդ IV  |
| բ. Տուշպա (Վան) | 2) Շամ        |
| գ. Մծուրք       | 3) Արգիշտի I  |
| դ. Էրեբունի     | 4) Վաղարշ I   |
| ե. Ջարիշատ      | 5) Սարգուրի I |
| զ. Բագարան      | 6) Արտաշես I  |
|                 | 7) Սանատրուկ  |

**15. Արտաշեսյան արքայատոհմի արքաների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.**

- ա. Հոր մահապատժից հետո նա կարգադրեց սրի քաշել Հայաստանում գտնվող բոլոր հռոմեացիներին:
- բ. Նա զոհվեց նախակովկասյան տափաստաններից Հայաստան ներխուժած սարմատական քոչվոր ցեղերի դեմ մղված ճակատամարտում:
- գ. Նա թագադրվեց Աղձնիքի նշանավոր սրբավայրերից մեկում, որտեղ հետագայում կառուցեց մայրաքաղաք:
- դ. Պարթևստանի դեմ պայքարում նա պահպանեց Հայաստանի անկախությունը, բայց իր եղբորորդուն ստիպված պատանդ տվեց պարթևներին:
- ե. Բանակցությունների ժամանակ նա դավադրաբար ձերբակալվեց Անտոնիոսի կողմից և շղթայակապ ուղարկվեց Ալեքսանդրիա:
- զ. Երկրի կառավարումը դյուրացնելու նպատակով նա այն բաժանեց 120 գավառների:

- |                |               |
|----------------|---------------|
| 1) Արտաշես I   | 5) Արտաշես II |
| 2) Տիգրան II   | 6) Տիգրան IV  |
| 3) Արտավազդ II | 7) Արտավազդ I |
| 4) Տիգրան III  |               |

**16. Արշակունիների արքայատոհմի արքաների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.**

- ա. Նրա գլխավորությամբ հայերը ջախջախեցին և Հայաստանից դուրս վտարեցին Կարակալայի ուղարկված զորքը:
- բ. Արածանիի ափին՝ Մշո դաշտում, նա հիմնադրեց Մծուրք քաղաքը:
- գ. Հռոմեական կայսեր փոխարեն նա հաղթական մենամարտ մղեց գոթերի իշխանի դեմ:
- դ. Նրա օրոք Արշակունիների թագավորական իշխանությունը դարձավ ժառանգական:

ե. Նա կառուցապատեց Գառնու հինավուրց ամրոցը՝ իր շինություններով և Արեգ-Միհրի տաճարով:

զ. Նրա օրոք Արարատյան դաշտում՝ Շրեշ բլրի վրա տարածվող Վարդգեսավան գյուղաքաղաքը զարգացավ և վերածվեց մայրաքաղաքի:

- |              |              |
|--------------|--------------|
| 1) Վաղարշ I  | 5) Տրդատ II  |
| 2) Վաղարշ II | 6) Տրդատ III |
| 3) Տրդատ I   | 7) Խոսրով I  |
| 4) Սանատրուկ |              |

**17. Կատարել համապատասխանեցում.**

ա. Ներոն կայսեր կողմից թագադրված Արշակունի արքան

բ. Մարկոս Անտոնիոսի կողմից նենգությամբ ձերբակալված հայոց արքան

գ. Խառանի ճակատամարտում սպանված հռոմեական եռապետը

դ. Ալեցիոնի ճակատամարտում լիակատար պարտություն կրած եռապետը

ե. Հռոմում կայսերական վարչակարգին հիմք դրած եռապետը

զ. Մծուրք քաղաքի հիմնադիրը

- |                    |               |
|--------------------|---------------|
| 1) Մարկոս Կրասոս   | 5) Ադրոն      |
| 2) Արտավազդ II     | 6) Սանատրուկ  |
| 3) Մարկոս Անտոնիոս | 7) Օկտավիանոս |
| 4) Տրդատ I         |               |

**18. Կատարել համապատասխանեցում.**

ա. Հյուսիսային Միջագետքի փոխարքա նշանակված Տիգրան Մեծի եղբայրը

բ. Տիգրան Մեծի հետ Արտաշատում պայմանագիր կնքած հռոմեացի զորավարը

գ. Տիգրան Մեծի կողմից մահապատժի ենթարկված Սելևկյան թագուհին

դ. Տիգրան Մեծին հավատարմության երդում տված Մարաստանի թագավորը

ե. Տիգրան Մեծի հետ դաշինք կնքած Պոնտոսի արքան

զ. Անտիոքի փոխարքա-կառավարիչ նշանակված Տիգրան Մեծի զինակիցը

- |                       |            |
|-----------------------|------------|
| 1) Միհրդատ VI Եվպատոր | 5) Միհրդատ |
| 2) Բագարատ            | 6) Գուրաս  |
| 3) Կլեոպատրա          | 7) Պոմպեոս |
| 4) Սելենե             |            |

**19. Հայոց արքաների անունները համապատասխանեցնել գահակալման տարեթվերին.**

ա. 88–110 թթ.

բ. 185–198 թթ.

գ. 117–140 թթ.

դ. 66–88 թթ.

ե. 198–215 թթ.

զ. 161–163 թթ.

1) Բակուր Արշակունի

2) Տրդատ I

3) Վաղարշ II

4) Սանատրուկ

5) Խոսրով I

6) Տրդատ II

7) Վաղարշ I

**20. Իրադարձությունները համապատասխանեցնել աղբյուրներից մեջբերված վկայություններին.**

- ա. «Արևելքում իրենց ամենից շատ հոգսեր են պատճառել հայերը»:  
բ. «Հայաստանն աճել է... և ուստի այստեղ բոլորը միալեզու են»:  
գ. «Տույց են տալիս իրենց ոգու արիությունը»:  
դ. «Հայերը, նետահարելով հռոմեացիներին, շատերին իսկույն սպանեցին, իսկ շատ շատերին էլ վիրավորեցին»:  
ե. «Հայերը մնացին առանց թագավորի, անտերունչ»:  
զ. «Հռոմեացիները նրան ողջունեցին արքայավայել»:
- 1) Տիգրան Մեծի ժամանումը Պոմպեոսի ճամբար
  - 2) Արածանիի ճակատամարտը
  - 3) Արտաշես I-ի միավորիչ գործունեության մասին
  - 4) Տիգրան IV-ի գահակալությունը
  - 5) Արտաշեսյան թագավորության անկումը
  - 6) Խառանի ճակատամարտը
  - 7) Ալեքսանդրիայում կազմակերպված հաղթահանողեսում Արտավազդ II արքայի և նրա ընտանիքի արժանապատիվ պահվածքը

**21. Ք. ա. VII–III դարերում գահակալած արքաների անունները համապատասխանեցնել երկրի անվանմանը.**

- |                        |                         |
|------------------------|-------------------------|
| ա. Մակեդոնիա           | դ. Մեծ Հայք             |
| բ. Մարաստան            | ե. Ասորեստան            |
| գ. Սելևկյան պետություն | զ. Աքեմենյան Պարսկաստան |
| 1) Սինաքերիբ           | 5) Անտիոքոս III         |
| 2) Կամբիզ              | 6) Կիաքսար              |
| 3) Փիլիպոս II          | 7) Երվանդ III           |
| 4) Պողոմեոս IX         |                         |

**22. Գահակալների անունները համապատասխանեցնել երկրի անվանմանը.**

- |                        |                |
|------------------------|----------------|
| ա. Եգիպտոս             | դ. Պարթևստան   |
| բ. Մեծ Հայք            | ե. Մակեդոնիա   |
| գ. Սելևկյան պետություն | զ. Հայաստ      |
| 1) Կարանի              | 5) Անտիոքոս IV |
| 2) Կլեոպատրա           | 6) Փիլիպոս II  |
| 3) Գողերծ II           | 7) Էրատո       |
| 4) Կյուրոս II Մեծ      |                |

**23. Համապատասխանեցնել իրադարձությունը և տարեթիվը.**

- ա. Սենեքերիմ արքայի սպանությունը  
բ. Սասանյանների հաստատումը պարսից գահին  
գ. Կորբուլոնի ներխուժումը Մեծ Հայք

- դ. Կյուրոս Մեծի մահը
- ե. Մծբինի պայմանագրի կնքումը
- զ. Հայաստանի՝ Աքեմենյանների գերիշխանությունը ճանաչելը

- 1) 58 թ.
- 2) Բ. ա. 681 թ.
- 3) Բ. ա. 529 թ.
- 4) 298 թ.
- 5) Բ. ա. 553 թ.
- 6) 226 թ.
- 7) Բ.ա. 521 թ.

**24. Մեծ Հայքի արքաների գահակալման տարեթվերը համապատասխանեցնել անուններին.**

- ա. Սոհեմնո–Տիգրան 1) 198–215 թթ.
- բ. Տրդատ I 2) 117–140 թթ
- գ. Խոսրով I 3) 66–88 թթ.
- դ. Սանատրուկ 4) 185–198 թթ
- ե. Վաղարշ I 5) 164–185 թթ.
- զ. Բակուր Արշակունի 6) 161–163 թթ.
- 7) 88–110 թթ.

**25. Տիգրան Մեծի գահակալման շրջանի իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

- ա. Կորդուքի միավորումը Մեծ Հայքի հետ
  - բ. Պտղոմայիս քաղաքի գրավումը
  - գ. Սուլլայի գլխավորած հռոմեական բանակի մուտքը Կապադովկիա
  - դ. հայկական բանակների մուտքը Անտիոք
  - ե. Տիգրանակերտի ճակատամարտը
  - զ. հայկական բանակի ներխուժումը Մարաստան
- 1) Բ. ա. 87 թ.
  - 2) Բ. ա. 84 թ.
  - 3) Բ. ա. 69 թ.
  - 4) Բ. ա. 94 թ.
  - 5) Բ. ա. 68 թ.
  - 6) Բ. ա. 92 թ.
  - 7) Բ. ա. 71 թ.

**26. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

- ա. Ապամեայի հաշտության պայմանագրի կնքումը
  - բ. Զարեհի և Արտաշեսի հրամանատարությամբ սելևկյան զորքերի արշավանքը Հայաստան
  - գ. Արտաշատի կառուցումը
  - դ. Ալեքսանդր Մակեդոնացու մահը
  - ե. հայ–պոնտական պայմանագրի կնքումը
  - զ. Գավգամելայի ճակատամարտը
- 1) Բ. ա. 188 թ.
  - 2) Բ. ա. 94 թ.
  - 3) Բ. ա. 333 թ.
  - 4) Բ. ա. 330 թ.
  - 5) Բ. ա. 323 թ.
  - 6) Բ. ա. 330 թ.

3) Բ. ա. 331 թ.

7) Բ. ա. 201 թ.

4) Բ. ա. 185 թ.

**27. Արքաների անունները համապատասխանեցնել գահակալման տարեթվերին.**

ա. Բ. ա. 115–95 թթ.

դ. Բ. ա. 189–160 թթ.

բ. Բ. ա. 20–8 թթ.

ե. Բ. ա. 5–2 թթ.

գ. Բ. ա. 30–20 թթ.

զ. Բ. ա. 55–34 թթ.

1) Տիգրան III

5) Արտավազդ III

2) Արտավազդ II

6) Տիգրան I

3) Տիգրան IV

7) Արտաշես I

4) Արտաշես II

**28. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

ա. «Նաիրի» երկրանվան առաջին հիշատակումը

բ. Հայասա երկրի առաջին հիշատակումը խեթական սեպագիր արձանագրություններում

գ. Վանի թագավորությունում տարածում ստացած սեպագիր դպրության ընդօրինակելը Ասորեստանից

դ. Հայոց մեծ թվականի սկիզբը

ե. Հայոց փոքր թվականի սկիզբը

զ. Բուն Հայոց տոմարի սկիզբը

1) 1084 թ.

5) 552 թ.

2) Բ. ա. 2492 թ.

6) Բ. ա. XIII դ.

3) Բ. ա. IX դ.

7) Բ. ա. XV դ.

4) Բ. ա. XIII դ.



- 3) Վանի թագավորության սահմանները Սարգուրի II-ի օրոք հյուսիսում հասնում էին Սև ծով, հյուսիս-արևելքում՝ Կուր գետ, արևելքում՝ Կասպից ծով, արևմուտքում՝ Փոքր Ասիայի կենտրոնական շրջան, հարավում՝ Պարսից ծոց և հարավ-արևմուտքում՝ Միջերկրական ծով:
- 4) Երվանդունյաց թագավորության սահմանները հյուսիս-արևելքում հասնում էին Կուր գետ, հյուսիս-արևմուտքում՝ Սև ծով, արևելքում՝ Մարաստան, իսկ հարավում՝ Հյուսիսային Միջագետք:
- 5) Տիգրան Երվանդյանը, ըստ հայկական ավանդության, վճռական պայքարում սպանել է Մարաստանի արքա Կիաքսարին:
- 6) Տիգրան Մեծի կյանքին է նվիրված եղել Բարդաճանի «Մեծ մարդկանց մասին» վերնագրով աշխատության մի ամբողջ գլուխ:
- 7) Տրդատ I-ի հրամանով Մեծ Հայքում հունարենին զուգահեռ կիրառվել է ասորերենը:

## 6. Ընտրել ճիշտ պնդումները.

- ա. Ք. ա. VII դարի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում վերականգնված Հայկազունների իշխանությունը համապատասխանում է սեպագիր աղբյուրների Արմե-Շուբրիա պետական կազմավորմանը:
- բ. Ք. ա. 609 թ. Վանն արդեն Պարոյր նահապետի իշխանության տակ էր:
- գ. Տիգրան Երվանդյանին հաջորդել է նրա որդի Վրույրը:
- դ. Հայերի ապստամբությունը ճնշելու համար Դարեհ I-ը ուղարկել է պարսիկ զորավար Վեհմիհրապուհին:
- ե. Ըստ Պատմահոր հաղորդման՝ Պարոյր նահապետը միավորել է Սևանա լճից մինչև Տիգրիս ընկած ողջ տարածքը:
- զ. Տիգրան Երվանդյանը մտերիմ հարաբերություններ ուներ պարսից արքա Կյուրոս Կրտսերի հետ:
- է. Ք. ա. 580-570-ական թթ. նշանավոր դարձած Երվանդ I Սակավակյացի անունով նոր արքայատոհմը կոչվել է Երվանդական, Երվանդյան կամ Երվանդունի:
  - 1) ա, բ, է
  - 2) գ, դ, զ
  - 3) ա, գ, է
  - 4) բ, դ, ե

## 7. Տրված պնդումներից որոնք են սխալ.

- 1) Աստվածաշնչի առաջին՝ Ծննդոց գրքի համաձայն՝ Համաշխարհային ջրհեղեղից փրկվեց միայն Նոյ նահապետն՝ իր ընտանիքով, որի տապանը հանգրվանեց Հայկական լեռնաշխարհում՝ «Արարատ լեռների վրա»:
- 2) Հայոց ծագումնաբանության մասին բնիկ հայկական ավանդազրույցում որոշակիորեն առանձնանում է ժամանակագրական երեք շերտ՝ հնագույն, նախաքրիստոնեական և հետքրիստոնեական:
- 3) Ըստ Աստվածաշնչի՝ բոլոր ազգերն առաջացել են Նոյ նահապետի երեք որդիներից՝ Հաբեթից, Սեմից, Քամից:
- 4) Միջնադարում հայկական ուժեղ պետություն է ստեղծվել Միջերկրական ծովի հյուսիս-արևմուտքում ընկած Կիլիկիայում, որն ունեցել է մինչև 50 000 քառ. կմ տարածք:

- 5) Հայկական ավանդության համաձայն՝ Հայկ նահապետի անունով մեր ժողովուրդը կոչվեց հայ, երկիրը՝ Հայք, Հայաստան, իսկ նրա ժառանգներից Արամ նահապետի անունից առաջացան Հայաստանի «Արմենիա» և հայերի «արմեն» անունները:
- 6) Հայկական ավանդության համաձայն՝ Արամանյակի անունով է կոչվել Արագած լեռը:

### **8. Տրված պնդումներից որոնք են ճիշտ.**

- 1) Ք. ա. 830–ական թթ. Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան շրջաններում Դիաուխի շուրջ կազմավորվել էր համադաշնություն:
- 2) Քանի որ «Ուրարտուն» դարձել էր Հայաստանի ընդհանրական անվանում, ուստի խեթական աղբյուրները շարունակում են այդ անունով հիշատակել նաև Նաիրի թագավորությունը:
- 3) Վանի թագավորության հզորացման և տարածաշրջանում նշանակալի տերություն դառնալու գործում կարևոր դեր խաղացին Իշպուհինի և Մենուայի կատարած բարեփոխումները:
- 4) Հայոց դիցարաններից միայն Վանի թագավորության շրջանի դիցարանին է բնորոշ եղել միակենտրոնությունը՝ Արարիչ գերագույն աստծո գլխավորությամբ:
- 5) Մենուայի առաջին քայլերից մեկն էր Եփրատի աջափնյա հատվածում ամրապնդվելը, որի նվաճումից հետո էլ հիմնադրվում է ռազմավարական խոշոր հենակետ Մենուախինիլի քաղաքը:
- 6) Վանի թագավորության սահմանները Սարդուրի II–ի օրոք հարավում հասնում էին Հայկական Տավրոս, հյուսիս–արևմուտքում՝ Կուր գետ, արևելքում՝ Կասպից ծով, արևմուտքում՝ Փոքր Ասիայի կենտրոնական շրջան և հարավ–արևելքում՝ Միջերկրական ծով:
- 7) Ռուսա II–ը զարկ տվեց քաղաքաշինությանը, արհեստներին ու առևտրին, հիմնեց կամ վերակառուցեց բազմաթիվ ամրոցներ, անցկացրեց նոր ջրանցքներ:
- 8) Երվանդ Սակավակյացի օրոք հայոց թագավորության սահմանները հասնում էին հյուսիս–արևելքում՝ Կուր գետ, հյուսիս–արևմուտքում՝ Սև ծով, արևելքում՝ Մարաստան, իսկ հարավում՝ Հյուսիսային Միջագետք:

### **9. Տրված պնդումներից որոնք են սխալ.**

- 1) Արամ Ուրարտացին ասորեստանյան աղբյուրներում անվանապես հիշատակվող առաջին ուրարտական արքան է:
- 2) Ըստ Ղ. Փարպեցու՝ Արամ Ուրարտացին հետ է շարտել ասորեստանյան նվաճողներին և հաղթական արշավանքներով հասել մինչև Սև ու Կասպից ծովերի ափերը:
- 3) Ք. ա. 830–ական թթ. Հայաստանի տարածքում ձևավորվել էին մի քանի համադաշնություններ, որոնցից ամենամեծը Արարատյան դաշտում, Սևանա լճի ավազանում, Սյունիքում և հարակից շրջաններն ընդգրկող Էթիունի երկրի համադաշնությունն էր:

- 4) Վանի թագավորության սահմանները Սարգուրի II-ի օրոք հյուսիսում հասնում էին Սև ծով, հյուսիս-արևելքում՝ Կուր գետ, արևելքում՝ Կասպից ծով, արևմուտքում՝ Փոքր Ասիայի կենտրոնական շրջան, հարավում՝ Պարսից ծոց և հարավ-արևմուտքում՝ Միջերկրական ծով:
- 5) Սարգուրի I-ի օրոք Վանի թագավորությունը հասավ աննախադեպ հաջողությունների՝ վերածվելով Առաջավոր Ասիայի հզորագույն ուժի:
- 6) Ռուսա III-ի իշխանության շրջանից մեզ հասած արձանագրություններ են հայտնաբերվել Արարատյան դաշտի և Վանա լճի արևելյան շրջանների հնավայրերից:

#### **10. Գտնել սխալ փաստարկները.**

- 1) Ըստ V-VII դարերի «Աշխարհացոյցի»՝ Մեծ Հայքը բաժանվել է 15 խոշոր նահանգների, որոնք միասին ունեին 181 գավառ:
- 2) Սարգուրի I-ը Ք. ա. 830-ական թթ. կառուցել է մայրաքաղաք Տուշպան:
- 3) Իշպուհինի գահակալության երկրորդ շրջանում բարեփոխումների հեղինակակից է հանդես եկել նրա որդի Մենուան:
- 4) Իշպուհինի գահակալության երկրորդ շրջանում իրականացված կրոնական բարեփոխման արդյունքում ստեղծվեց թագավորության համար միասնական դիցարան, որն արձանագրվել է «Խալդյան դարպասի» վրա:
- 5) Ռազմական ոլորտի բարեփոխումների շնորհիվ Իշպուհինին Ք. ա. 820-ական թթ. սկզբին ընդլայնեց թագավորության սահմանները Ուրմիա լճի ավազանի հարավում՝ ներառելով Արդինի-Մուսասիր երկիրը:
- 6) Մենուայի առաջին քայլերից մեկն էր Հայկական պար լեռնաշղթայի արևելյան հատվածում ամրապնդվելը:
- 7) Ք. ա. IX դ. վերջերին Ուրմիա լճի ավազանում հայտնի էր Մանա թագավորությունը:
- 8) Վանի թագավորության արքա Արգիշտի I-ի առաջխաղացումը կասեցնելու Ասորեստանի փորձերը Ք. ա. 791 թ. ավարտվել են անհաջողությամբ:

#### **11. Տրված պնդումներից որոնք են ճիշտ.**

- 1) Հայկական լեռնաշխարհի այսօր հայտնի հնագույն պետության՝ Արատտայի հովանավոր աստվածը Արան էր՝ իմաստության և տիեզերական ջրերի աստված Հայկի որդին:
- 2) Արարատ անվանումը Ուրարտու անվան ասորեստանյան տարբերակն է:
- 3) Վանա լիճը ծովի մակերևույթից բարձր է 1720 մ և ունի չորս կղզի՝ Աղթամար, Լիմ, Արտեր, Կտուց:
- 4) Հայոց պետականության պատմության մեջ դարակազմիկ փոփոխությունը՝ անցումը համադաշնությունների համակարգից կենտրոնացված պետության, սկսվել է Սարգուրի I-ի օրոք:
- 5) Սարգուրի II-ի օրոք Վանի թագավորության սահմանները ձգվում էին չորս ծովերի միջև:

## 12. Գտնել ճիշտ պնդումները.

- 1) Համադաշնությունների համակարգը բնորոշ էր Հայկական լեռնաշխարհին՝ սկսած Ք. ա. IV հազարամյակից:
- 2) Վանի թագավորությունն առաջին համահայկական թագավորությունն է:
- 3) Ռուսա I-ի և Արգիշտի II-ի կառավարման շրջանում Վանի թագավորության համար հյուսիսից հայտնվել էր լուրջ թշնամի՝ սկյութների ցեղը:
- 4) Ք. ա. VI դարի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում վերականգնված Հայկազունների իշխանությունը համապատասխանում է սեպագիր աղբյուրների Արմե-Շուբրիա պետական կազմավորմանը:
- 5) Ըստ Պատմահոր հաղորդման՝ Պարոյր նահապետը միավորել էր Վանա լճից մինչև Եփրատ ընկած ողջ տարածքը:
- 6) Ք. ա. 643 թ. Վանն արդեն Պարոյր նահապետի իշխանության տակ էր:
- 7) Տիգրան I Երվանդյանից հետո գահակալել է նրա որդի Վահագնը:

## 13. Ընտրել ճիշտ պնդումները.

- ա. Հայաստանի տարածքում Արմենիա մայր և Արմենիա մինոր վարչական միավորներն առաջին անգամ հիշատակվում են Մագնեսիայի ճակատամարտի առնչությամբ:
- բ. Հայերի ծագումնաբանության մասին վրացական ավանդությունը գրի է առնվել IX-XI դարերի վրաց հեղինակների կողմից:
- գ. Հնդեվրոպական նախահայրենիքն ընդգրկում է Հայկական լեռնաշխարհը, Միջագետքի հյուսիսային, Փոքր Ասիայի արևելյան, Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան շրջանները:
- դ. Հայկազուն-Երվանդականների թագավորությունն առաջին համահայկական թագավորությունն է:
- ե. Սարգոն II-ի Ք. ա. 724 թ. արշավանքի ժամանակ Արդինի-Մուսասիրի տաճարը թալանվել է:
- զ. Միայն Արգիշտի I և Սարգուրի II արքաների օրոք նվաճված երկրներից Վանի թագավորություն են բերվել ավելի քան կես միլիոն ռազմագերի-ստրուկներ:
- է. «Սարգուրյան տարեգրության» համաձայն՝ Վանի թագավորության զինված ուժերի ընդհանուր թիվը շուրջ 250 հազար էր:

- 1) գ, դ, զ                      2) բ, գ, զ                      3) ա, ե, է                      4) բ, դ, է

## 14. Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ.

- 1) Ք. ա. 54 թ. վերջերին Արտաշատում կնքվեց հայ-պարթևական դաշինք:
- 2) Ք. ա. 53 թ. գարնանը հռոմեական 50-հազարանոց բանակը Կրասոսի գլխավորությամբ ժամանեց Ասորիք:
- 3) Ք. ա. 53 թ. մայիսի 6-ին Խառան քաղաքից ոչ հեռու տեղի ունեցած ճակատամարտում պարթև արքայազն Բակուրը ջախջախեց հռոմեական բանակը:
- 4) Եռապետ Անտոնինոսը 60-հազարանոց բանակով Ք. ա. 36 թ. արշավեց Հայաստան և շարժվեց դեպի Արտաշատ:

- 5) Օկտավիանոսը Ք. ա. 27 թ. պաշտոնապես իրեն հայտարարեց Օգոստոս (Սրբազան) և հիմք դրեց կայսերական վարչակարգին Հռոմում:
- 6) Հռոմում ստեղծված Առաջին եռապետության անդամներն էին Գնեոս Պոմպեոսը, Հուլիոս Կեսարը, Մարկոս Անտոնիոսը:
- 7) Ք. ա. 5 թ. Օկտավիանոս Օգոստոսը մեծ բանակով Հայաստան է ուղարկում իր որդեգիր Գայոս Կեսարին, որը Հայաստանի թագավոր է հռչակում Տիգրան IV-ի հորեղբայր Արտավազդ III-ին:
- 8) Ք. ա. 3 թվականին հայոց գահին կրկին բազմեց Տիգրան IV-ը:

### 15. Տրված պնդումներից որոնք են ճիշտ.

- 1) Հնդեվրոպական նախահայրենիքն ընդգրկում է Հայկական լեռնաշխարհը, Միջագետքի արևելյան, Փոքր Ասիայի հյուսիսային, Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան շրջանները:
- 2) Վանի թագավորության միասնական դիցարանի ստեղծումը կատարվել է Իշպուհինի գահակալության երկրորդ շրջանում:
- 3) Թորգոմա տունը եղել է Եփրատի վերին ավազանում և հիշատակվում է դեռևս Ք. ա. XX–XVIII դարերում:
- 4) Վանի տերության բանակի կազմում Արգիշտի I-ի օրոք առանձնացվեց «արքայական գունդը»՝ հեծյալ զորամասերից բաղկացած ուժերը:
- 5) Հայկազուն–Երվանդականների թագավորությունը երկրորդ համահայկական թագավորությունն է:
- 6) Երվանդ Սակավակյացը հատել է սեփական պատկերով ոսկեդրամ, որը հասել է մեզ:
- 7) Բեհիսթունյան արձանագրությունը գրված է պարսկերեն, էլամերեն, արաբերեն:
- 8) Դարեհ III Կողոմանոսը Աքեմենյան տերության տիրակալ է դարձել Ք. ա. 334 թ.:
- 9) Հռոմում ստեղծված Առաջին եռապետության անդամներն էին Գայոս Կեսարը, Մարկոս Կրասոսը, Գնեոս Պոմպեոսը:

### 16. Ընտրել սխալ պնդումները.

- ա. Օգտվելով Աքեմենյան վերջին տիրակալ Դարեհ III-ի՝ Մակեդոնացուց կրած պարտություններից՝ հայերը դեռևս Գավգամելայի ճակատամարտից առաջ հռչակում են Մեծ և Փոքր Հայքերի անկախությունը:
- բ. Պոմպեոսի կողմից Պոնտոսը ռազմակալվելուց հետո Միհրդատ Եվպատորը նահանջեց իր տերության հյուսիսային երկրամասերը, որտեղ էլ Ք. ա. 63 թ. ինքնասպանությամբ վերջ տվեց կյանքին:
- գ. Գահակալության վերջին շրջանում Տիգրան III-ը ձերբազատվեց Հռոմի միջամտություններից և, մերձենալով Պարթևստանին, սկսեց վարել ինքնուրույն քաղաքականություն:
- դ. Օգտագործելով պատեհ առիթը՝ պարթևական զինված ուժերը՝ թագաժառանգ Բակուրի հրամանատարությամբ, և նրան օժանդակող հայկական զորամասերը՝ Վասակ զորավարի գլխավորությամբ, հռոմեացիներին դուրս մղեցին Կիլիկիայից, Ասորիքից, Փյունիկիայից, Պաղեստինից և Հրեաստանից:

ե. Հրահատ IV-ը հիանալի գիտակցում էր, որ Հայաստանից հետո Պարթևստանն է լինելու Հռոմի հաջորդ թիրախը, ուստի փոխեց իր վերաբերմունքը և ռազմական զգալի օգնություն տրամադրեց Հայաստանին:

զ. Արտավազդ II-ը Կրասուսին առաջարկում էր պարթևների դեմ արշավել ոչ թե Հայաստանի հարավով, այլ Ասորիքի անապատներով՝ հուսալով երկիրը գերծ պահել հռոմեացիների ասպատակություններից:

է. Խայտառակ ձևով պարտված Պետոսը սուտ լուր է ուղարկում Հռոմ, թե իբր Արևելքում իրավիճակը չի փոխվել, սակայն Ներոնը տեղեկացել էր, որ պարտված հռոմեական լեգեոնները հեռացել էին Հայաստանից:

ը. Հռոմեական կայսրությունում մղված գահակալական կռիվների ընթացքում չեզոքություն պահպանած հայոց Վաղարշ I թագավորը հաշտություն է կնքում հաղթանակած թեկնածուի և Հռոմի նոր կայսր Սեպտիմիոս Սևերոսի հետ:

- 1) բ, գ, զ                      2) ա, ե, ը                      3) դ, ե, է                      4) ա, գ, ը

**17. Ընտրել սխալ պնդումները.**

ա. Ըստ Քսենոփոնի տեղեկության՝ Երվանդ II-ը ամուսնացած էր Աքեմենյան արքա Արտաքսերքսես II-ի դստեր հետ:

բ. Ք. ա. 522-521 թթ. ընթացքում բռնկված ապստամբության ժամանակ զորավար Վահոմիսան Հյուսիսային Միջագետքում պարտություն կրեց հայերից:

գ. Դարեհ II-ը Աքեմենյան տերության տիրակալ դարձավ Ք. ա. 336 թ.:

դ. Աքեմենյան տերությունում վարչական միավորները կոչվում էին սատրապություններ:

ե. Մինչև Ք. ա. 331 թ. Հայաստանը Աքեմենյան տերության կազմում մնաց որպես սատրապություն:

զ. Դարեհ I-ի դեմ Բաղդադում բարձրացած ապստամբությունը գլխավորում էր Արախան՝ Խալդիսայի որդին:

է. Աքեմենյան արքա Արտաքսերքսես II-ի դեմ ապստամբել էր նրա եղբայր Կյուրոս Կրտսերը:

ը. Ք. ա. 331 թ. Հայաստանի անկախությունը վերականգնեցին Երվանդ (Օրոնտես) II-ը Մեծ Հայքում և Միթրատատեսը Փոքր Հայքում:

- 1) ա, դ, ը                      2) բ, ե, գ                      3) գ, գ, ը                      4) բ, գ, է

**18. Տրված պնդումներից որոնք են սխալ.**

1) Աստվածաշնչի առաջին՝ Ծննդոց գրքի համաձայն՝ Համաշխարհային ջրհեղեղից փրկվեց միայն Նոյ նահապետն՝ իր ընտանիքով, որի տապանը հանգրվանեց Հայկական լեռնաշխարհում՝ «Արարատ լեռների վրա»:

2) Եփրատ գետն ունի 500 կմ երկարություն, սկիզբ է առնում Ծաղկանց լեռներից և, միախառնվելով Տիգրիսին, թափվում Պարսից ծոց:

3) Հնդեվրոպական նախահայրենիքը տարածվում էր Հայկական լեռնաշխարհում, Իրանական սարահարթի հյուսիս-արևմուտքում, Հյուսիսային Միջագետքում և Փոքր Ասիայի արևելյան շրջաններում:

4) Ճորոխ գետը սկիզբ է առնում Սրմանց լեռներից և թափվում է Սև ծով:

- 5) Սարգսուրի II-ի օրոք Վանի թագավորության սահմանները հասնում էին մինչև Սև, Կասպից և Միջերկրական ծովեր և Պարսից ծոց:
- 6) Բեհիսթունյան արձանագրությունը գրված է երեք լեզուներով՝ էլամերեն, բաբելերեն, պարսկերեն:

**19. Ընտրել սխալ պնդումները.**

- 1) Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում Ք. ա. VII դարի առաջին կեսին վերականգնված Հայկազունների իշխանությունը համապատասխանում է սեպագիր արքայուհուհու Արմե-Շուբրիա պետական կազմավորմանը:
- 2) Հայկազունների իշխանությունը վերականգնվել է Պարոյր նահապետի գլխավորությամբ:
- 3) Հայկազունների մի ճյուղը համարվող Երվանդունիների արքայատոհմն այդ անունով է կոչվել Երվանդ I Սակավակյացի անունից:
- 4) Տիգրան Երվանդյանը մտերիմ հարաբերություններ ուներ պարսից արքա Կյուրոս II Մեծի հետ:
- 5) Տիգրան Երվանդյանին հաջորդել է նրա երեք որդիներից Վահագնը:
- 6) Հայերի ապստամբությունը ճնշելու համար Դարեհ I-ը սկզբում ուղարկել էր պարսիկ զորավար Վահումիսային:
- 7) Ըստ Պատմահոր հաղորդման՝ Պարոյր նահապետը միավորել է Վանա լճից մինչև Երասխ ընկած ողջ տարածքը և դաշինք կնքել Մեդիայի հետ:

**20. Ընտրել ճիշտ պնդումները.**

- ա. Համեմատական լեզվաբանության շնորհիվ պարզ դարձավ, որ հայերը, հույներն ու պարսիկները միակ ժողովուրդներն են, որոնց ծագումն ու կազմավորումը տեղի են ունեցել հնդեվրոպական նախահայրենիքի տարածքում, և հետագայում նրանք չեն հեռացել իրենց նախահայրենիքից:
- բ. Տիգրան Երվանդյանը, հայոց արքա լինելուց բացի, դարձավ Կյուրոսի տերության արևմտյան կեսի փոխարքան:
- գ. Աքեմենյանների գերիշխանությունը ճանաչելուց հետո Հայաստանում շարունակեցին իշխել Երվանդականները, որոնք հատում էին սեփական դրամ և վայելում լիակատար ներքին ինքնավարություն:
- դ. Գավգամելայի ճակատամարտի արդյունքում Դարեհ III-ը գերեվարվեց և Ալեքսանդր Մակեդոնացու հրամանով մահապատժի ենթարկվեց:
- ե. «Հայկ և Բել» վիպասքում արտացոլվել է Հայաստանի և Իրանի միջև դարավոր հակամարտությունը:

- 1) ա, գ,                      2) բ, գ                      3) դ, ե                      4) բ, դ

**21. Գտնել սխալ պնդումները.**

- 1) Երբ Մարկոս Կրասոսը ժամանեց Ասորիք, Արտավազդ II-ը եկավ նրա մոտ և առաջարկեց պարթևների դեմ արշավանքը սկսել Հայաստանի հարավային լեռնոտ շրջաններով:

- 2) Արտաշատի հայ-հռոմեական պայմանագրի կնքումից հետո պարթևները հետ ստացան Կորդուքն ու Հյուսիսային Միջագետքը:
- 3) Հռոմեական զորավար Կորբուլոնը գրավեց Արտաշատ մայրաքաղաքը և քանդեց այն:
- 4) Տիգրան III-ը Հռոմի ցանկությամբ հայոց գահը կտակեց իր որդի Տիգրան IV-ին:
- 5) Տիգրան IV-ին գահընկեց անելուց հետո Հայաստանում թագավոր է դարձել Արտավազդ III-ը:
- 6) Սոհեմոս-Տիգրանին Հայաստանից վտարելուց հետո գահը հանձնվել է Խոսրով I-ին:
- 7) Տրդատ II-ին հաջորդած Արտավազդ V-ից հետո հայոց գահն անցել է Խոսրով II-ին:

**22. Ընտրել սխալ պնդումները.**

- ա. Ըստ ավանդության՝ Բելի նկատմամբ Հայկի տարած հաղթանակի տարին (Ք. ա. 2492 թ.) համարվել է Բուն Հայոց թվականի սկիզբը:
  - բ. Հայաստանի չափազանց բարենպաստ պայմաններն ու աշխարհաքաղաքական դիրքը անցյալում և նորագույն շրջանում առաջացրել են տարբեր պետությունների, ժողովուրդների և քոչվոր ցեղերի հետաքրքրությունը:
  - գ. Հայասան առաջին անգամ հիշատակվում է Ք. ա. XVI դ. Խեթական մի արքայի արշավանքների կապակցությամբ, որոնց ժամանակ նրա դեմ դուրս է գալիս այդ երկրի թագավոր Խուկանան:
  - դ. Խեթական աղբյուրների համաձայն՝ Հայասա թագավորությունն ունեցել է արքունիք, բանակ, արքունի դիվան՝ իր դպիրներով, ինչպես նաև դիցարան:
  - ե. «Նաիրի» անվամբ իրենց երկիրը կոչել են նաև Վանի թագավորության տիրակալներն ասուրերենով գրված արձանագրություններում:
  - զ. Հայերի օգտագործած արեգակնային օրացույցի հիմքով տոմարական համակարգերից առավել նշանավոր են Հայոց մեծ թվականը, Հայոց միջին թվականը և Հայոց փոքր թվականը:
  - է. Ըստ Մովսես Խորենացու՝ Տիգրան Մեծը, ի թիվս բազում այլ բարեփոխումների, բարեկարգել ու ճշգրտել է օրացույցը:
  - ը. Ասուրա-բաբելական աղբյուրներում Հայաստանն «Ուրարտու» անվամբ հիշատակվում է մինչև Ք. ա. IV դարի առաջին կեսը:
- 1) ա, գ, ը                    2) դ, ե, ը                    3) գ, գ, է                    4) բ, գ, է

**23. Ընտրել սխալ պնդումները.**

- ա. Վանի աշխարհակալությունը ստեղծվել է Արգիշտի I-ի արքայի առաջնորդությամբ:
- բ. Ք. ա. IX դ. 80-70-ական թթ. Հայկական լեռնաշխարհում հիշատակվող պետական կազմավորումներից նշանավոր էին հարավում՝ Միտանին, իսկ հյուսիսում՝ Հայասան:
- գ. Էթիունի երկրի համադաշնությունը կազմավորվել է Ք. ա. 830-ական թթ. Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան շրջաններում

դ. Միերի դռան արձանագրությունում թվարկված են Վանի թագավորության աստվածների անունները և նրանց մատուցվող զոհաբերությունները:

ե. «Նաիրի» երկրանունը առաջին անգամ հիշատակվում է Ք. ա. XVI դարում:

զ. Բեհիսթունյան արձանագրությունը գրված է էլամերեն, արամեերեն, պարսկերեն լեզուներով:

է. Խեթական թագավորի և Հայասայի Խուկանա արքայի միջև կնքվել է բարեկամության և փոխօգնության պայմանագիր:

1) բ, ե, է

2) գ, ե, զ

3) ա, գ, դ

4) ա, դ, է

## 8-II. Պնդումների փունջ

### 1. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

1) Վանա լիճը ծովի մակերևույթից բարձր է 1720 մ և ունի չորս կղզի՝ Արտեր, Աղթամար, Լիմ, Կտուց:

2) Ճորոխը սկիզբ է առնում Խաչափայտի լեռներից, իսկ Արաքսը՝ Բյուրականի լեռներից:

3) Արևելյան Եփրատը սկզբնավորվում է Ծաղկավետ լեռներից, իսկ Արևմտյան Եփրատը՝ Ծաղկանց լեռներից:

4) Մեծ Հայքի բոլոր 15 աշխարհները միասին ունեցել են 191 գավառ, որից 30-ը Այրարատ նահանգում էր, իսկ 27-ը՝ Վասպուրական:

5) Արևելյան Տիգրիսը սկիզբ է առնում Հայկական Տավրոսից, իսկ Արևմտյան Տիգրիսը՝ Ծովք լճից:

6) ՀՀ տարածքում բարձրությամբ երկրորդ լեռը Կապուտջուղն է՝ 3925 մ:

### 2. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

1) Հայկական լեռնաշխարհի այսօր հայտնի հնագույն պետության՝ Արատտայի հովանավոր աստվածը Հայկն էր՝ իմաստության և տիեզերական ջրերի աստված Հայ(ա) Աստծո որդին:

2) «Նաիրի» երկրանունն առաջին անգամ հիշատակված է Ասորեստանի Սալմանասար II թագավորի կողմից Ք. ա. X դ. առաջին կեսին:

3) Աստվածաշնչի համաձայն՝ բոլոր ազգերն առաջացել են Նոյ նահապետի երեք որդիներից՝ Հաբեթից, Քամից և Սեմից:

4) Ըստ վրացական ավանդության՝ Թարգամոսի ավագ որդի Հայոսից առաջացել են հայերը, Քարթլոսից՝ վրացիները, իսկ մյուս վեց որդիներից՝ կովկասյան մի շարք ժողովուրդներ:

5) Հայոց ծագումնաբանության մասին բնիկ հայկական ավանդազրույցում որոշակիորեն առանձնանում է ժամանակագրական երկու շերտ՝ նախաքրիստոնեական և քրիստոնեական:

6) Թորգոմա տունը եղել է Եփրատի միջին ավազանում և հիշատակվել է դեռևս Ք. ա. XXII-XV դարերում:

### **3. Ստորև տրված անդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Արարատ անվանումը Ուրարտու անվան ասորեստանյան տարբերակն է:
- 2) Ք. ա. IX դ. 80–70–ական թթ. Հայկական լեռնաշխարհում հիշատակվող պետական կազմավորումներից նշանավոր էին Նաիրին արևմուտքում և Հայկազունների Արարատյան թագավորությունը արևելքում:
- 3) Նաիրի թագավորությանը հաջողվել է Ք. ա. 860–ական թվականներից սկսած՝ ամբողջ Հայկական լեռնաշխարհին աստիճանաբար միավորել իր իշխանության ներքո:
- 4) Քանի որ «Ուրարտուն» դարձել էր Հայաստանի ընդհանրական անվանում, ուստի ասորեստանյան աղբյուրները շարունակել են այդ անունով հիշատակել նաև հզորացող Նաիրի թագավորությունը:
- 5) Ասորեստանյան աղբյուրներում անվանապես հիշատակվող առաջին ուրարտական արքան Արամն էր, որը Ք. ա. 849–833 թթ. ընթացքում դիմակայել է Ասորեստանի արշավանքներին:
- 6) Արամը ոչ միայն հետ է շարտել ասորեստանյան նվաճողներին, այլև հաղթական արշավանքներ կատարել դեպի Փոքր Ասիա:

### **4. Ստորև տրված անդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայոց դիցարաններին միշտ բնորոշ է եղել միակենտրոնությունը՝ Արարիչ գերագույն աստծո գլխավորությամբ, սակայն հայոց դիցարանները ղեկավարվում էին աստվածների գերագույն եռյակի կողմից:
- 2) Հայոց դիցարանները, հունական և հռոմեական դիցարանների նման, բաղկացած էին ազգակից աստվածներից, այսինքն՝ ներկայանում էին իբրև աստվածային ընտանիք:
- 3) Միայն Արտաշեսյան թագավորության շրջանի հայոց դիցարանին է բնորոշ եղել երկմիասնականությունը՝ Արարիչ գերագույն աստծո գլխավորությամբ:
- 4) Հայոց դիցարաններում չեն եղել չար կամ չարագործ աստվածներ, իսկ չար ուժերը ոգիների մակարդակից վեր չեն բարձրացվել:
- 5) Որպես բացառություն՝ միայն հելլենիզմի դարաշրջանի հայոց դիցարանում են եղել չար կամ չարագործ աստվածություններ:
- 6) Զրադաշտականությունը դուալիստական կրոն էր, այսինքն՝ դրա հետևորդները հավատում էին, որ կան համագոր երկու գերագույն աստվածներ՝ չար և բարի:

### **5. Ստորև տրված անդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայաստանի տարածքում Ք. ա. 830–ական թթ. ձևավորվել էին մի քանի համադաշնություններ, որոնցից ամենամեծը Նաիրի երկրի համադաշնությունն էր:
- 2) Մենուան Վանի թագավորության հյուսիսարևելյան սահմաններն ամրապնդելու նպատակով արշավել է Դիաուխի երկրի վրա:
- 3) Ռազմական ոլորտի բարեփոխումների շնորհիվ Իշպուինին Ք. ա. 820–ական թթ. ընդլայնեց թագավորության սահմանները Ուրմիա լճի ավազանի հարավում՝ ներառելով Արդինի–Մուսասիր երկիրը:

- 4) Իշխուհիի գահակալության երկրորդ շրջանում իրականացված կրոնական բարեփոխման արդյունքում ստեղծվեց թագավորության համար միասնական դիցարան, որն արձանագրվել է «Խալդյան դարպասի» վրա:
- 5) «Խալդյան դարպասի», որը հետագայում մեր ժողովրդի կողմից կոչվել է «Մենուայի դուռ», արձանագրությունը կատարվել է Իշխուհիի և նրա որդու անունով:
- 6) Սարգուրի II-ն է կառուցել մայրաքաղաք Վանը:

## **6. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայոց պետականության պատմության մեջ դարակազմիկ փոփոխությունը՝ անցումը համադաշնությունների համակարգից կենտրոնացված պետության, սկսվել է Սարգուրի II-ի օրոք:
- 2) Միայն Արգիշտի I և Սարգուրի II արքաների օրոք նվաճված երկրներից բերվել են ավելի քան մեկ միլիոն ռազմագերի-ստրուկներ:
- 3) Հայկազուն-Երվանդականների թագավորությունն առաջին համահայկական թագավորությունն է:
- 4) Սարգոն II-ը Ք. ա. 743 թ. արշավանքի ժամանակ գրավեց Արդինի-Մուսասիրի տաճարը և թալանեց այն:
- 5) Հայոց պետականության պատմության մեջ անցումը համադաշնությունների համակարգից կենտրոնացված պետության ավարտվել է Ռուսա I-ի օրոք:
- 6) Վանի թագավորության զորքի գերագույն հրամանատարը առաջին սպարապետն էր, որին պատերազմի ժամանակ օգնում էր երկրորդ սպարապետը:

## **7. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Աստվածաշնչի առաջին՝ Ծննդոց գրքի համաձայն՝ Համաշխարհային ջրհեղեղից փրկվեց միայն Նոյ նահապետն՝ իր ընտանիքով, որի տապանը հանգրվանեց Հայկական լեռնաշխարհում՝ «Արարատ լեռների վրա»:
- 2) Հայասա երկրի անվան հիմքում հայ ժողովրդի ինքնանվանումն է, խեթերեն Հայասա՝ նշանակում է Հայք, Հայաստան:
- 3) Հնդեվրոպական նախահայրենիքն ընդգրկում է Հայկական լեռնաշխարհը, Միջագետքի արևելյան, Փոքր Ասիայի հյուսիսային, Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան շրջանները:
- 4) Ըստ Աստվածաշնչի՝ բոլոր ազգերն առաջացել են Նոյի երեք որդիներից՝ Հաբեթից, Սեմից, Քամից:
- 5) Հայոց ծագումնաբանության մասին բնիկ հայկական ավանդազրույցում որոշակիորեն առանձնանում է ժամանակագրական երեք շերտ՝ հնագույն, քրիստոնեական և հետքրիստոնեական:
- 6) Հայկական ավանդության համաձայն՝ Արամանյակի անունով է կոչվել Արագած լեռը:

## **8. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Տուշպա մայրաքաղաքը հիմնադրել է Սարգուրի II-ը:
- 2) Հայոց մեծ տիրակալ Արգիշտի I-ի օրոք Բիայնիլի-Ուրարտու-Այրարատ թագավորությունը վերածվեց Առաջավոր Ասիայի հզորագույն ուժի:

- 3) Ռուսա I-ի և Արգիշտի II-ի կառավարման շրջանում Վանի թագավորության համար հյուսիսից հայտնվել էր լուրջ թշնամի՝ կիմերների ցեղը:
- 4) Ք. ա. 743–713 թթ. երեսնամյա պայքարի արդյունքում Ասորեստանը կրկին դարձավ Առաջավոր Ասիայի գերտերություններից մեկը:
- 5) Վանի թագավորությունը հունահռոմեական տիպի բացարձակ միապետություն էր:
- 6) Վանի թագավորության տիրակալին կից գործում էր Ավագների խորհուրդը:

#### **9. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Իր իշխանության հաստատման մասին Դարեհ I արքան թողել է կարևոր սկզբնաղբյուր՝ Բեհիսթունյան եռալեզու արձանագրությունը:
- 2) Բեհիսթունյան արձանագրության պարսկերեն բաժնում Հայաստանը կոչվում է Հարմինույա:
- 3) Բեհիսթունյան արձանագրության էլամերեն բաժնում Հայաստանը կոչվում է Արմինա:
- 4) Ըստ նույն սկզբնաղբյուրի՝ Դարեհի դեմ Բաբելոնում տեղի ունեցած ապստամբությունը ղեկավարել է հայազգի Արախան՝ Խալդիտայի որդին:
- 5) Հայաստանի դեմ արշավանքը Դարեհ I-ը հանձնարարել էր նախ Վահումիսային, ապա՝ Դադարշիշին:
- 6) Միայն հինգերորդ արշավանքից հետո է Հայաստանը ճանաչում Աքեմենյանների գերիշխանությունը:

#### **10. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Աքեմենյանների գերիշխանության օրոք Հայաստանում շարունակում էին իշխել Երվանդականները, որոնք լիակատար ներքին ինքնավարություն ունեին:
- 2) Սատրապական շրջանի Հայաստանի մասին կարևոր տեղեկություններ կան Քսենոփոնի «Մեծ մարդկանց մասին» աշխատության մեջ:
- 3) Հայաստանի սատրապ Երվանդ II-ը ամուսնացած էր Աքեմենյան տիրակալ Արտաքսերքսես II-ի դստեր հետ:
- 4) Աքեմենյան վերջին տիրակալ Դարեհ II-ը մինչ գահին բազմելը եղել է Հայաստանի սատրապը:
- 5) Հայաստանը Աքեմենյանների գերիշխանության ներքո է եղել Ք. ա. 521–334 թվականներին:
- 6) Համահայկական երկրորդ թագավորությունում արքայից հետո երկրի կարևորագույն դեմքը զորավար–սպարապետն էր:

#### **11. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Կյուրոս Մեծի մահվանից անմիջապես հետո Աքեմենյան տերության մեջ սկսվեցին գահակալական կռիվներ, որոնք ավարտվեցին Դարեհ I-ի հաղթանակով:
- 2) Բեհիսթունյան արձանագրությունը գրված է երեք լեզուներով՝ էլամերեն, պարսկերեն, բաբելերեն:
- 3) Բեհիսթունյան արձանագրության էլամերեն բաժնում Հայաստանը կոչվում է Արմինա:
- 4) Հայաստանի դեմ արշավանքը Դարեհ I-ը հանձնարարել էր նախ Դադարշիշին, ապա՝ Վահումիսային:

- 5) Դարեհ I-ի դեմ Բաղդադում տեղի ունեցած ապստամբությունը ղեկավարել է հայազգի Արախան՝ Խալիֆաթի որդին:
- 6) Միայն հինգերորդ արշավանքից հետո՝ Ք. ա. 522 թվականին է Հայաստանը ճանաչել Աքեմենյանների գերիշխանությունը:

**12. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հելլենիստական մշակույթը և հունարենը Հայաստանում տարածում գտան գերագանցապես արքունիքում և ավագանու շրջանում:
- 2) Աստվածային գերագույն եռյակի պաշտամունքը հայերի մեջ առաջին անգամ ստեղծվել է հելլենիզմի շրջանում:
- 3) Հայոց դիցարանում չկան չար աստվածներ, քանի որ չար ուժերը ոգիների մակարդակից վեր չեն բարձրացվել:
- 4) Արևի պաշտամունքի գլխավոր կենտրոնը եղել է Բարձր Հայքի Դարանաղյաց գավառի Բագառիճ ավանը:
- 5) Հայոց դիցարանը բաղկացած էր ազգակից աստվածներից:
- 6) Արամեական այբուբենը կազմված էր 22 տառից և գրվել է ձախից աջ:

**13. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայկազուն Երվանդականների օրոք հիշատակվող արքունի գործակալներից են զորավար-սպարապետները, արքունի հացարարները, մատուկակները, դպիրները:
- 2) Ք. ա. IV դարում գոյություն են ունեցել հայկական չորս պետություններ:
- 3) Ալեքսանդր Մակեդոնացին և Դարեհ III-ը նույն թվականին են սկսել գահակալել իրենց երկրներում:
- 4) Երվանդ Վերջինի օրոք Մեծ Հայքի հոգևոր կենտրոնը Բագավանն էր:
- 5) Գավգամելայի և Մազնեսիայի ճակատամարտերը հայերի համար ունեցել են նույնանման քաղաքական նշանակություն. Մեծ Հայքը և Փոքր Հայքը հռչակվել են անկախ պետություններ:
- 6) Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներով Առաջավոր Ասիայում սկզբնավորվել է հելլենիզմի՝ հռոմեականության դարաշրջանը:

**14. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Լուկուլլոսի բանակը Ք. ա. 68 թ. զարնանը դուրս եկավ Կորդուքից և Արածանի գետի ափերով շարժվեց դեպի Արտաշատ:
- 2) Հայ-հռոմեական պատերազմի առաջին փուլն ավարտվեց Տիգրան Մեծի զորքերի հաղթանակով:
- 3) Լուկուլլոսի փոխարեն Արևելքում հռոմեական զորքի նոր հրամանատար նշանակվեց Կրասոսը:
- 4) Պոմպեոսը պարթևների հետ Ք. ա. 66 թ. ընդդեմ Հայաստանի համաձայնագիր կնքեց:
- 5) Պոմպեոսը Ք. ա. 66 թ. էլ կնքել է հայ-հռոմեական հաշտության պայմանագիր Տիգրան Մեծի հետ:
- 6) Արտաշատի հայ-հռոմեական պայմանագրի շնորհիվ Տիգրան Մեծը վերականգնեց իր «Արքայից արքա» տիտղոսը:

**15. Տիգրան Մեծի և Պոմպեոսի միջև կնքված հայ-հռոմեական պայմանագրին վերաբերող ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայկական պետությունը կորցրեց նվաճումները Հյուսիսային Միջագետքում:
- 2) Հոգուտ Հռոմեական Հանրապետության՝ Մեծ Հայքը հրաժարվեց Կիլիկիայից, Պաղեստինից, Ասորիքից և Փյունիկիայից:
- 3) Հոգուտ Հռոմեական Հանրապետության՝ Մեծ Հայքը հրաժարվեց նաև հպատակեցված Եգիպտոսից:
- 4) Հայաստանը հայտարարվեց «Հռոմեական ժողովրդի բարեկամ և դաշնակից»:
- 5) Հայաստանից անջատվելու էին Կորդուքն ու Ծոփքը, որտեղ թագավոր էր հաստատվելու Տիգրան Կրտսերը՝ պայմանով, որ Տիգրան Մեծի մահից հետո դրանք միավորվելու էին Մեծ Հայքի հետ որպես մեկ պետություն՝ Տիգրան Կրտսերի գահակալությամբ:
- 6) Մեծ Հայքը Հռոմին պետք է վճարեր ռազմատուգանք, այն վճարվելու էր Ծոփքի արքայական գանձարանից:

**16. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հելլենիստական մշակույթը և հունարենը լայն տարածում գտան հայոց արքունիքում, ավագանու շրջանում, ինչպես նաև հասարակ ժողովրդի մեջ և ամբողջությամբ վերափոխեցին մեր ազգային մշակույթը:
- 2) Վերջին տարիների պեղումների բացառիկ հայտնաբերումներից են Արտաշատում բացված Արեգ-Միհրի տաճարը և խճանկարագարդ հասարակական բաղնիքը:
- 3) Մծուրք քաղաքը հիմնադրվել էր Արածանիի ափին՝ Մշո դաշտում, որտեղով անցնում էր Տիգրանակերտից Արտաշատ գնացող առևտրական և ռազմական կարևոր նշանակության ճանապարհը:
- 4) Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո Հայաստանում սահմանափակվել է հայկական մեհենագրության գործածությունը, իսկ արքունի գրագրության, հոգևոր քարոզչության և ուսման ասպարեզներում կիրառվել են հունարենը, ապա՝ նաև արամեերենն ու պարսկերենը:
- 5) Հույն մատենագիր Հիպպոլիտիսը 234–235 թթ. գրած «Ժամանակագրություն» աշխատությունում հայերին հիշատակել է սեփական դպրություն ունեցող ժողովուրդների շարքում:
- 6) Հելլենիզմի դարաշրջանում Հայաստանի մշակութային կյանքը նշանավորվել է երկու տեսակի՝ ժողովրդական և հունալեզու թատրոնների առկայությամբ:

**17. Տիգրան Մեծի և Գողերձ II-ի միջև կնքված հայ-պարթևական հաշտության պայմանագրին վերաբերող ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հռոմի դեմ Պարթևստանի պատերազմելու դեպքում Տիգրան Մեծը օգնելու էր պարթևներին:
- 2) Կողմերը միացյալ ուժերով պետք է գրավեին Կապադովկիան:
- 3) Հոգուտ Հայաստանի՝ պարթևները հրաժարվեցին Հյուսիսային Միջագետքից և Մարաստանից:

- 4) Օսրոյենեն, Ադիաբենեն և Միգդոնիան հետ ստանալու դիմաց Պարթևստանը ճանաչեց Տիգրան Մեծի գերիշխանությունը:
- 5) Պարթևստանը վերադարձրեց Հայաստանից խլած «Յոթանասուն հովիտները»:
- 6) Պարթևների արքան կորցրեց «Արքայից արքա» տիտղոսը, որն այնուհետև կրելու էին Տիգրանն ու նրա հաջորդները:

**18. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Մագնեսիայի ճակատամարտում Սելևկյանները պարտվեցին հույներին, ինչը կտրուկ փոխեց ուժերի հարաբերակցությունը Արևելքում:
- 2) Արտաշես I-ը Մեծ Հայքի թագավոր հռչակվելուց հետո իրեն կոչել է Երվանդական արքայատան շառավիղ:
- 3) Արտաշես Աշխարհակալի օրոք Մեծ Հայքը դարձավ Առաջավոր Ասիայի ազդեցիկ պետություններից մեկը:
- 4) Միջագետքի սելևկյան սատրապ Տիմարքոսի ապստամբությունը զգալիորեն թուլացրեց Սելևկյան տերության հիմքերը:
- 5) Արտաշեսի հանձնարարությամբ Սմբատ Բագրատունի զորավարը Հայաստանին վերադարձրեց վրացիների կողմից գրավված հայկական տարածքները:
- 6) Արտաշատ մայրաքաղաքի անառիկ դիրքը նկատի ունենալով՝ հունահռոմեական պատմիչներն այն անվանել են «Հայկական Կարթագեն»:

**19. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հունահռոմեական աղբյուրները վկայում են, որ Տիգրան II-ը թագադրվել է Ադձնիք նահանգի նշանավոր սրբավայրերից մեկում, որտեղ հետագայում կառուցվել է Տիգրանակերտ քաղաքը:
- 2) Իր գահակալման երկրորդ տարում Տիգրան Մեծը Մեծ Հայքին է միացրել Ծոփքն ու Փոքր Հայքը:
- 3) Հայ-պոնտական դաշնակցային պայմանագիրը կնքվել է Ք. ա. 94 թ. Արմավիրում:
- 4) Ք. ա. 93 թ. հայկական զորքերը գրավեցին Կապադովկիան, սակայն հաջորդ տարի թողեցին այն, որովհետև հռոմեական բանակը եկել էր օգնության տեղի գահընկեց թագավորին:
- 5) Կապադովկիային օգնության եկած հռոմեական բանակի հրամանատարն էր հայտնի զորավար Սուլլան:
- 6) Հպատակեցնելով Վիրքը, Աղվանքը, Կորդուքը և Ծոփքը՝ Տիգրան Մեծը տեղի թագավորներին գահին թողեց իր գերիշխանությունն ընդունելու պայմանով:

**20. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Տիգրան Մեծը թեև Եգիպտոս չմտավ, սակայն գրավեց նրան սահմանակից Պտղոմայիս քաղաքը:
- 2) Սելևկյան ավագանին Տիգրան Մեծին հրավիրեց բազմելու իրենց թագավորության գահին, որովհետև հայոց տիրակալը դաշնակցել էր Պոմպեոսի հետ:
- 3) Իր նվաճողական քաղաքականության արդյունքում Տիգրան Մեծը դարձավ Ասիայի մեծագույն մասի տիրակալը:

- 4) Տիգրան Մեծի տերության տարածքը կազմված էր երեք կարգի հատվածներից՝ բուն հայկական հողեր, հպատակ թագավորություններ և քաղաքական ազդեցության ոլորտում գտնվող երկրներ:
- 5) Տիգրան Մեծի տերության տնտեսապես ամենազարգացած շրջանը Միջագետքն էր:
- 6) Տիգրան Մեծի կառուցած «Արքայական ճանապարհը» միմյանց էր կապում Արտաշատը, Տիգրանակերտը և Անտիոքը:

**21. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հռոմեական կայսրությունը Ք. ա. առաջին դարի սկզբներին հզորացել էր և ծրագրել էր գրավել Փոքր Ասիան:
- 2) Փոքր Ասիայում գերիշխանության էր ձգտում նաև Միհրդատ Պոնտացին:
- 3) Հզոր Հայաստանի գոյությունը Հռոմի առջև փակել էր դեպի Եգիպտոս տանող բոլոր ճանապարհները:
- 4) Հայ-հռոմեական պատերազմի սկսվելու պատճառը Միհրդատ Եվպատորին հանձնելու հռոմեացիների պահանջի մերժումն էր հայոց արքայի կողմից:
- 5) Հայ-հռոմեական պատերազմը սկսվեց Ք. ա. 69 թ. գարնանը և ընթացավ երկու փուլով:
- 6) Պատերազմի առաջին փուլում հայոց բանակը միայն հաղթանակներ տարավ, այդ պատճառով Լուկուլլոսը պաշտոնանկ արվեց:

**22. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Արտաշատում կնքված հայ-պոնտական պայմանագրի համաձայն՝ Մեծ Հայքի թագավորությունն սկսեց ծավալվել արևելյան ուղղությամբ:
- 2) Ք. ա. 92 թ. սկսված հռոմեա-պարթևական բանակցություններն ավարտվել են Հայաստանի դեմ ուղղված պայմանագրի կնքմամբ:
- 3) Նվաճված Մարաստանի Միհրդատ թագավորը հպատակվեց հայոց թագավորին, հետ ստացավ իր թագը, ավելին՝ ամուսնացավ Տիգրան II-ի դստեր հետ:
- 4) Պարթևների արքա Հրահատ III-ի հետ կնքած պայմանագրի համաձայն՝ Տիգրան Մեծը գրավեց Հյուսիսային Միջագետքը:
- 5) Արտաշատում կնքված հայ-հռոմեական հաշտության պայմանագրի համաձայն՝ Տիգրան Մեծը Հռոմին զիջեց Հյուսիսային Միջագետքը:
- 6) Թագաժառանգ Տիգրան Կրտսերը չկարողացավ հասնել իր նպատակին՝ դառնալ Մեծ Հայքի թագավոր:

**23. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Իր գահակալման երրորդ տարում Տիգրան Մեծը Մեծ Հայքին է միացրել Ծոփքը, ապա՝ Կորդուքը:
- 2) Հայ-պոնտական դաշնակցային պայմանագիրը կնքվել է Արտաշատում:
- 3) Հպատակեցնելով Վիրքը, Աղվանքը, Կորդուքը՝ Տիգրան Մեծը տեղի թագավորներին թողեց գահին՝ իր գերիշխանությունն ընդունելու պայմանով:
- 4) Ք. ա. 92 թ. հայկական զորքերը գրավեցին Կապադովկիան, սակայն նույն թվա-

կանին թողեցին այն, որովհետև հռոմեական բանակը եկել էր օգնության տեղի գահընկեց թագավորին:

- 5) Կապադովկիային օգնության եկած հռոմեական բանակի հրամանատարն էր հայտնի զորավար Լուկուլլոսը:
- 6) Հունահռոմեական աղբյուրները վկայում են, որ Տիգրան II-ը թագադրվել է Ծոփքի նշանավոր սրբավայրերից մեկում, որտեղ հետագայում կառուցվել է Տիգրանակերտ քաղաքը:

#### **24. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հռոմեա-պարթևական տասնամյա պատերազմի սկզբնական շրջանում հռոմեական զորքի հրամանատարը Կորբուլոնն էր:
- 2) 62 թ. անցնելով Արածանի գետը՝ հռոմեական զորքը բանակեց Հռանդես (Եռանդ) վայրում:
- 3) Հայ-պարթևական զորքը, ջախջախելով Հայկական Տավրոսի լեռնանցքներում տեղակայված հռոմեական կայազորները, Հռանդեսայում շրջապատեց Կորբուլոնի ճամբարը:
- 4) Կորբուլոնին փոխարինած Պետոսը 64 թ. եկավ Հայաստան և բանակցություններ վարեց Վաղարշի ու Տրդատի հետ:
- 5) Տրդատը Տիբերիոս կայսեր կողմից թագադրվելու համար մեծ շքախմբով՝ իր ընտանիքով և 3000 հեծյալներով, ուղևորվեց Հռոմ:
- 6) Տրդատ I-ի թագավորության վեցերորդ տարում Մեծ Հայքի խաղաղ կյանքն ընդհատվեց Կովկասից ալանների ներխուժման հետևանքով:

#### **25. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Տիգրան Մեծը Կապադովկիայից Հայաստան է տեղափոխել 230 000, իսկ Կիլիկիայից՝ 100 000 մարդ:
- 2) Կարճ ժամանակամիջոցում կառուցված Տիգրանակերտ մայրաքաղաքն ուներ 120 հազար բնակչություն:
- 3) Տիգրան Մեծի կառուցած «Արքունի պողոտան» միմյանց է կապել Արտաշատը, Տիգրանակերտը և Անտիոքը:
- 4) Տիգրան Մեծին ենթակա հպատակ թագավորությունների տարածքը կազմում էր շուրջ 400 հազար քառ. կմ:
- 5) Տիգրան Մեծի տերության տարածքը կազմված էր երեք կարգի հատվածներից՝ բուն հայկական հողեր, հպատակ թագավորություններ և տնտեսական ու մշակութային ազդեցության ոլորտում գտնվող երկրներ:
- 6) Տիգրան Մեծի տերության տնտեսապես ամենազարգացած շրջանը Ասորիքն էր:

#### **26. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հույն պատմիչ Պլուտարքոսը հավաստիացնում է, որ Արտաշատի տեղանքն ընտրել է Կարթագենի հռչակավոր զորավար Հաննիբալը, որն այդ ժամանակ քաղաքական ապաստան էր գտել Հայաստանում:
- 2) Պարթևները ոչ միայն չստացան Պոմպեոսի խոստացած տարածքները՝ Կորդուքն ու Հյուսիսային Միջագետքը, այլև կրկին կորցրին «Արքայից արքա» տիտղոսը:

- 3) Արտավազդ II-ը թեև ռազմական և այլ օգնություն տրամադրեց Կրասուին, սակայն ի վերջո դարձավ նրա դավադրության զոհը:
- 4) Անմնացորդ հայրենանվեր գործունեության շնորհիվ Արտավազդ II-ը պատվավոր տեղ է զբաղեցնում Հայոց պատմության մեջ. դեռևս իր կենդանության օրոք նա հռչակվել է «Աստվածային» պատվանունով:
- 5) Տիգրան III-ի շեշտված հակահռոմեական դիրքորոշման պատճառով Հռոմը նրան գահընկեց արեց և գահ բարձրացրեց նրա եղբորը՝ Արտավազդ III-ին:
- 6) Հայերը Ք. ա. 2 թ. ապստամբեցին և գահընկեց արեցին Արտավազդ III-ին:

**27. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Անտոնինոսի զորքը, ջախջախվելով Էկրատանի պարիսպների տակ, հսկայական զոհեր տալով (ընդհանուր կորուստը կազմում էր 40 հազար զինվոր), նահանջեց դեպի Հայաստան:
- 2) Անտոնինոսը չնայած ցանկանում էր վրեժխնդիր լինել Արտավազդից, սակայն նրա հետ պայմանավորվածություն ձեռք բերեց պարթևների դեմ հաջորդ արշավանքն սկսելու համար:
- 3) Արտավազդի մահից հետո նրա որդի Արտաշեսը, որ դարձել էր Հրահատ IV-ի փեսան, հայ-պարթևական միացյալ ուժերով հռոմեական լեգեոնները դուրս շարտեց Հայաստանից:
- 4) Տիգրան III-ը Հայաստանին միացրեց Ատրպատականի թագավորությունը:
- 5) Հռոմը չհանդուրժեց ինքնուրույն և ուժեղ հայոց թագավոր Արտաշես II-ին և վերջինիս փոխարեն գահ բարձրացրեց նրա կրտսեր եղբորը՝ Տիգրանին:
- 6) Տիգրան III-ը իր կառավարման սկզբից ևեթ ինքնուրույն քաղաքականություն է վարել:

**28. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայերը ցանկանում էին ազատվել Հռադամիզդից ու հռոմեական միջամտությունից, ուստի ընտրեցին Պարթևստանի արքա Վաղարշ I Արշակունու առաջարկությունը՝ Մեծ Հայքի թագավոր ճանաչելու նրա եղբորը:
- 2) Հռոմեա-պարթևական տասնամյա պատերազմի ժամանակ Կորբուլոնին դաշնակցել է վրաց Փարսման թագավորը:
- 3) Տրդատ I-ի գահակալության ընթացքում միջազգային ասպարեզում Հայաստանի վիճակը կայունացավ, վերականգնվեց Վաղարշապատը:
- 4) Տրդատ II-ով սկսվել է Արշակունիների ժառանգական գահակալումը Մեծ Հայքում:
- 5) Մծուրք քաղաքը հիմնադրվել է Արևելյան Եփրատի ափին՝ Մշո դաշտում:
- 6) Հռոմեական կայսրությունում տեղի ունեցած գահակալական կռիվների ընթացքում չեզոքություն պահպանած հայոց Վաղարշ II թագավորը հաշտություն է կնքել հաղթանակած թեկնածուի և Հռոմի նոր կայսր Սեպտիմիոս Սևերոսի հետ:

**29. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Կյուրոս Մեծի ստեղծած Աքեմենյան աշխարհակալության սահմանները Միջերկրական ծովից և Եգիպտոսից հասել են մինչև Հնդկաստան:

- 2) Մինչ Արտաշես I-ի միավորիչ գործունեությունը՝ հայկական մի շարք երկրամասեր նվաճվել էին Վիրքի, Պոնտոսի, Սելևկյան պետության և Պարթևստանի կողմից:
- 3) Արտաշես I-ը արևմուտքում Մեծ Հայքին է միավորել Կարնո երկիրը, Եկեղիք ու Դերջան գավառները և Ծոփքը:
- 4) Հյուսիսում Արտաշես I-ը Մեծ Հայքին է միավորել Գուգարքը:
- 5) Արտաշատ մայրաքաղաքը կառուցվել է Ք. ա. 180 թ. Երասխ և Մեծամոր գետերի ջրկիցում:
- 6) Արտաշես I-ի կողմից անցկացված վարչական բարեփոխման նպատակն էր կարգավորել հողի սեփականության խնդիրները՝ ագարակների սեփականատերերին արգելելով յուրացնել գյուղացի համայնականների հողերը:

### **30. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հռանդեայում խայտառակ ձևով պարտված Կորբուլոնը լուր ուղարկեց Հռոմ, թե իբր Արևելքում իրավիճակը չի փոխվել, սակայն Ներոնը տեղեկացել էր, որ հռոմեական լեգեոնները հեռացել էին Հայաստանից:
- 2) Վաղարշ II-ից հետո Մեծ Հայքի թագավոր դարձավ նրա որդին, որով Հայաստանում հաստատվեց Արշակունիների ժառանգական դինաստիան:
- 3) Տրդատ II-ը, ի պաշտպանություն պարթև Արշակունիների, արշավանքներ ձեռնարկեց Սասանյանների դեմ և նույնիսկ հասավ մինչև Տիգրես:
- 4) Տրդատ II-ի գլխավորած պայքարը Սասանյանների դեմ հաջողությամբ չավարտվեց:
- 5) Սասանյան Շապուհ II արքան հարձակվեց Հայաստանի վրա, և Տրդատ II-ը ստիպված հեռացավ Հռոմեական կայսրության սահմաններ:
- 6) Մծբինում կնքված հռոմեա-պարսկական 40-ամյա խաղաղության պայմանագրով Սասանյան Ներսես արքան ճանաչեց Մեծ Հայքի թագավորության անկախությունը:

### **31. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Սասանյանները 226 թ. տապալեցին պարթև Արշակունիներին և տիրացան գահին:
- 2) Մինչև VIII դարի կեսերը Սասանյանները տարածաշրջանում վարում էին ծավալապաշտական քաղաքականություն:
- 3) III դարի երկրորդ կեսին Հայաստանում ստեղծված խառնաշփոթ վիճակը Մովսես Խորենացին անվանել է «Ժամանակ անիշխանության»:
- 4) Խոսրով II-ի որդի Տրդատը 286 թ. հաղթել էր գոթերի իշխանին՝ նրա դեմ մենամարտելով հռոմեական կայսեր փոխարեն:
- 5) Առաջին անգամ Տրդատ II-ը հայոց գահին հաստատվել է 287 թվականին:
- 6) Սասանյան արքա Ներսեհը միայն Ոսխայի ճակատամարտում կրած պարտությանը հաջորդող տարում կնքված հաշտությամբ ճանաչեց Մեծ Հայքի թագավորության անկախությունը:

**32. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Արևմտյան Տիգրիսը սկիզբ է առնում Հայկական Տավրոսից, իսկ Արևելյան Տիգրիսը՝ Ծովք լճից:
- 2) Ճորոխը սկիզբ է առնում Խաչափայտի լեռներից, իսկ Արաքսը՝ Բյուրակնյան լեռներից:
- 3) Արևմտյան Եփրատը սկզբնավորվում է Ծաղկավետ լեռներից, իսկ Արևելյան Եփրատը՝ Ծաղկանց լեռներից:
- 4) Մեծ Հայքի բոլոր 15 աշխարհները միասին ունեցել են 191 գավառ, որից 30-ը Այրարատ նահանգում էր, իսկ 27-ը՝ Վասպուրական:
- 5) Վանա լիճը ծովի մակերևույթից բարձր է 1820 մ և ունի չորս կղզի՝ Արտեր, Աղթամար, Լիմ, Կտուց:
- 6) ՀՀ տարածքում բարձրությամբ երկրորդ լեռը Կապուտջուղն է, որի բարձրությունը 3906 մետր է:

**33. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) 62 թ. անցնելով Արածանի գետը՝ հոռմեական գորքը բանակեց Հռանդեա (Եռանդ) վայրում:
- 2) Հռանդեայում հայ-պարթևական գորքը, ջախջախելով Հայկական Տավրոսի լեռնանցքներում տեղակայված հոռմեական կայազորները, շրջապատեց Կորբուլունի ճամբարը:
- 3) Կորբուլունի փոխարինած Պետոսը 64 թ. եկավ Հայաստան և բանակցություններ վարեց Վաղարշի ու Տրդատի հետ:
- 4) Հռոմեա-պարթևական տասնամյա պատերազմի ավարտին հոռմեական գորքի հրամանատարը Պետոսն էր, որն էլ կնքեց հաշտության պայմանագիրը:
- 5) Տրդատը Ներոն կայսեր կողմից թագադրվելու համար մեծ ջբախմբով՝ իր ընտանիքով և 3000 հեծյալներով, ուղևորվեց Հռոմ:
- 6) Տրդատ I-ի թագավորության վեցերորդ տարում կառուցվել է Գառնիի հզոր ամրոցը:

**34. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Վանի թագավորության դիցարանը կազմված էր 35 աստվածներից և 35 դիցուհիներից:
- 2) Թեյշեբա և Շիվինի աստվածները Խալդիի հետ միասին կազմում էին աստվածների գերագույն եռյակը:
- 3) Քանի որ «Ուրարտուն» դարձել էր Հայաստանի ընդհանրական անվանում, ուստի ասորեստանյան աղբյուրները շարունակել են այդ անունով հիշատակել նաև Նաիրի թագավորությունը:
- 4) Մենուայի առաջին քայլերից մեկն էր Եփրատի աջափնյա հատվածում ամրապնդվելը, որի նվաճումից հետո էլ հիմնադրվել է ռազմավարական խոշոր հենակետ Մենուախինիլի քաղաքը:
- 5) Վանի թագավորության սահմանները Սարգուրի II-ի օրոք հարավում հասնում էին Հայկական Տավրոս, հյուսիս-արևմուտքում՝ Կուր գետ, արևելքում՝ Կասպից

ծով, արևմուտքում՝ Փոքր Ասիայի կենտրոնական շրջան և հարավ-արևելքում՝ Միջերկրական ծով:

- 6) Ռուսա II-ը զարկ տվեց քաղաքաշինությանը, արհեստներին ու առևտրին, հիմնեց կամ վերակառուցեց բազմաթիվ ամրոցներ, անցկացրեց նոր ջրանցքներ:

**35. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Ըստ ավանդության՝ Բելի նկատմամբ Հայկի տարած հաղթանակի տարին (Ք. ա. 2492 թ.) համարվել է Բուն Հայոց թվականի սկիզբը:
- 2) Վան և Ուրմիա լճերի միջև Արամ անունով երկիր հիշատակվել է դեռևս Ք. ա. XXIII դարում:
- 3) Հայկական լեռնաշխարհից սկիզբ առնող չորս խոշոր գետերն են Եփրատը, Տիգրիսը, Կուրը և Արաքսը:
- 4) Բնիկ հայկական ավանդության համաձայն՝ Հայ(ա) Աստծու անունով մեր ժողովուրդը կոչվել է հայ, իսկ երկիրը՝ Հայք, Հայաստան:
- 5) Հայկական ավանդության համաձայն՝ Արամանյակի անունով է կոչվել Արագած լեռը:
- 6) Հայոց ծագումնաբանության մասին բնիկ հայկական ավանդազրույցում որոշակիորեն առանձնանում է ժամանակագրական երկու շերտ՝ նախաքրիստոնեական և քրիստոնեական:

**36. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Աքեմենյանների գերիշխանության օրոք Հայաստանում շարունակում էին իշխել Երվանդականները, որոնք լիակատար ներքին ինքնավարություն ունեին:
- 2) Սատրապական շրջանի Հայաստանի մասին կարևոր տեղեկություններ կան Քսենոփոնի «Անաբասիս» աշխատության մեջ:
- 3) Հայաստանի սատրապ Երվանդ II-ը ամուսնացած էր Աքեմենյան տիրակալ Արտաքսերքսես II-ի դստեր հետ:
- 4) Աքեմենյան վերջին տիրակալ Դարեհ III-ը մինչ գահին բազմելը եղել է Հայաստանի սատրապը:
- 5) Հայաստանը Աքեմենյանների գերիշխանության ներքո է եղել Ք. ա. 521–331 թվականներին:
- 6) Համահայկական երկրորդ թագավորությունում արքայից հետո երկրի կարևորագույն դեմքը քրմապետն էր:

**37. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Մագնեսիայի ճակատամարտում Սելևկյանները պարտվեցին, ինչը կտրուկ փոխեց ուժերի հարաբերակցությունն Արևելքում հոգուտ Պոնտոսի:
- 2) Արտաշես I-ը Մեծ Հայքի թագավոր հռչակվելուց հետո իրեն կոչել է Արտաշեսյան արքայատան շառավիղ:
- 3) Արտաշես Աշխարհակալի օրոք Մեծ Հայքը դարձավ Առաջավոր Ասիայի ազդեցիկ պետություններից մեկը:

- 4) Մարաստանի սելևկյան սատրապ Տերենտիոսի ապստամբությունը զգալիորեն թուլացրեց Սելևկյան տերության հիմքերը:
- 5) Արտաշեսի հանձնարարությամբ Բագարատ Բագրատունի զորավարը Հայաստանին վերադարձրեց վրացիների կողմից գրավված հայկական տարածքները:
- 6) Արտաշատ մայրաքաղաքի անառիկ դիրքը նկատի ունենալով՝ հունահռոմեական պատմիչներն այն անվանել են «Հայկական Հռոմ»:

### **38. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հռոմեա-պարթևական տասնամյա պատերազմի սկզբնական շրջանում հռոմեական զորքի հրամանատարը Պետոսն էր:
- 2) 62 թ. անցնելով Արաքս գետը՝ հռոմեական զորքը բանակեց Հռանդեա (Եռանդ) վայրում:
- 3) Հայ-պարթևական զորքը, ջախջախելով Հայկական Տավրոսի լեռնանցքներում տեղակայված հռոմեական կայազորները, Հռանդեայում շրջապատեց Կորբուլոնի ճամբարը:
- 4) Կորբուլոնին փոխարինած Պետոսը 64 թ. եկավ Հայաստան և բանակցություններ վարեց Վաղարշի ու Տրդատի հետ:
- 5) Տրդատը Տիբերիոս կայսեր կողմից թագադրվելու համար մեծ շքախմբով՝ իր ընտանիքով և 3000 հեծյալներով, ուղևորվեց Հռոմ:
- 6) Տրդատ I-ի թագավորության վեցերորդ տարում Մեծ Հայքի խաղաղ կյանքն ընդհատվեց Կովկասից հոների ներխուժման հետևանքով:

### **39. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Վանի թագավորության շրջանից հայտնի մեհենագրային համակարգն ունի բնիկ տեղական ծագում, այն բաղկացած էր շուրջ 300 նշաններից:
- 2) Վերջին տարիների պեղումների բացառիկ հայտնաբերումներից են Արմավիրում բացված Արեգ-Միհրի տաճարը և խճանկարագարդ հասարակական բաղնիքը:
- 3) Մծուրք քաղաքը հիմնադրվել էր Արևմտյան Եփրատի ափին՝ Մշո դաշտում, որտեղով անցնում էր Տիգրանակերտից Արտաշատ գնացող առևտրական և ռազմական կարևոր նշանակության ճանապարհը:
- 4) Քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո Հայաստանում սահմանափակվել է հայկական մեհենագրության գործածությունը, իսկ արքունի գրագրության, հոգևոր քարոզչության և ուսման ասպարեզներում կիրառվել են հունարենը, ապա նաև արամեերենն ու պարսկերենը:
- 5) Հույն մատենագիր Հիպոլիտիսը 234-235 թթ. գրած «Ժամանակագրություն» աշխատությունում հայերին հիշատակել է սեփական դպրություն ունեցող ժողովուրդների շարքում:
- 6) Հելլենիստական մշակույթը և հունարենը լայն տարածում գտան հայոց արքունիքում, ավագանու շրջանում, ինչպես նաև հասարակ ժողովրդի մեջ և ամբողջությամբ վերափոխեցին մեր ազգային մշակույթը:

## 1. ՏԱՐԵԹՎԵՐ

---

1. Երբ է Մուշեղ Մամիկոնյանը գերի վերցրել Շապուհ II-ի կանանոցը.  
1) 370 թ.    2) 374 թ.    3) 376 թ.    4) 372 թ.
2. Երբ է Պերոզի եղբայր Վաղարշը գահ բարձրացել Պարսկաստանում.  
1) 482 թ.    2) 483 թ.    3) 481 թ.    4) 484 թ.
3. Երբ է Հերակլ կայսրը խաչափայտը վերադարձրել Երուսաղեմ.  
1) 632 թ.    2) 631 թ.    3) 618 թ.    4) 615 թ.
4. Արաբները որ թվականին լուծեցին Վարդանակերտի պարտության վրեժը.  
1) 703 թ.    2) 705 թ.    3) 708 թ.    4) 725 թ.
5. Երբ է կառավարել Ջհանշահ կարա-կոյունլուն.  
1) 1437-1467 թթ.    3) 1426-1463 թթ.  
2) 1431-1451 թթ.    4) 1453-1467 թթ.
6. Երբ է իրեն թագավոր հռչակել Կարսի կառավարիչ Մուշեղ Բագրատունին.  
1) 953 թ.    2) 961 թ.    3) 963 թ.    4) 972 թ.
7. Երբ է հաշտության պայմանագիր կնքվել Լևոն II-ի և Անտիոքի իշխան Բոհեմունդ III-ի միջև.  
1) 1194 թ.    2) 1192 թ.    3) 1187 թ.    4) 1198 թ.
8. Երբ է Հայաստանում և Վրաստանում ապստամբություն բռնկվել մոնղոլների դեմ.  
1) 1258 թ.    2) 1244 թ.    3) 1243 թ.    4) 1259 թ.
9. Երբ են մոնղոլները պարտության մատնել Ջալալեդդինին.  
1) 1231 թ.    2) 1236 թ.    3) 1242 թ.    4) 1241 թ.
10. Երբ է Կարսի թագավոր Գագիկ Աբասյանը իր թագավորությունը հանձնել Բյուզանդիային.  
1) 1054 թ.    2) 1064 թ.    3) 1065 թ.    4) 1071 թ.
11. Երբ է երկրաշարժի հետևանքով ավերվել Դվինը.  
1) 890 թ.    2) 893 թ.    3) 894 թ.    4) 896 թ.



## 2. ՓԱՍՏԵՐ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

1. Միջին Ասիայում ում դեմ պատերազմում է սպանվել Պերոզ արքան.  
1) քուշանների  
2) հեփթաղների  
3) գարգարացիների  
4) սատաղացիների
2. Քանի խաչքար էին կանգնեցրել հայ խոջաները Հին Ջուղայի գերեզմանատանը.  
1) ավելի քան 1000  
2) ավելի քան 10000  
3) ավելի քան 20000  
4) ավելի քան 15000
3. XIV դ. վերջերից ո՞ր վանքը դարձավ Աղվանից կոչվող եկեղեցու կաթողիկոսանիստը.  
1) Տաթևի  
2) Գանձասարի  
3) Ամարասի  
4) Աղունկի
4. Աշոտ Բագրատունու իշխանության օրոք որտեղ գումարված եկեղեցական ժողովը մերժեց Հայոց եկեղեցին բյուզանդականի հետ միավորելու առաջարկը.  
1) Բագարանում  
2) Կարսում  
3) Շիրակավանում  
4) Անիում
5. Անանիա Մոկացի կաթողիկոսի կողմից Աղթամարից ո՞ր տեղափոխվեց կաթողիկոսական աթոռը.  
1) Կարս  
2) Արգինա  
3) Բագարան  
4) Անի
6. Ո՞ր իշխանության տարածքը Գագիկ I-ը միացրեց իր թագավորությանը.  
1) Վայոց ձորի  
2) Վանանդի  
3) Բագրևանդի  
4) Սյունիքի
7. Հայոց ո՞ր կաթողիկոսին հաջողվեց հնազանդեցնել Սյունյաց և Աղվանից թեմերը.  
1) Գրիգոր Ապիրատին  
2) Զաքարիա Ջազեցուն  
3) Անանիա Մոկացուն  
4) Գևորգ Գառնեցուն
8. Ո՞ր բերդում էր ամրացել և վեց ամիս բյուզանդացիներին դիմադրել Լևոն I իշխանը.  
1) Վահկա  
2) Կոռոմոզոլ  
3) Լամբրոն  
4) Բարձրբերդ
9. Ո՞ր բերդն էր Վահրամյանների իշխանության կենտրոնը.  
1) Գագը  
2) Բջնին  
3) Ամբերդը  
4) Լոռեն (Լոռի)
10. Ո՞ր բերդն էր Ջավախքի Զաքարյան իշխանության կենտրոնը.  
1) Գագ  
2) Բջնի  
3) Ամբերդ  
4) Թմուկ
11. Սմբատ I-ի կալանավորվելուց հետո ո՞ր բերդն էր շարունակում խիզախաբար դիմադրել արաբներին.  
1) Երնջակը  
2) Բջնին  
3) Գառնին  
4) Կապույտը

12. Ո՞ւմ էր Կարսի կառավարիչ նշանակել Աշոտ III-ը.

- 1) Աշոտ Բագրատունուն
- 2) Մուշեղ Բագրատունուն
- 3) Աբաս Բագրատունուն
- 4) Գուրգեն Բագրատունուն

13. Ո՞ր թագավորի օրոք վերելք ապրեց Սյունիքի թագավորությունը.

- 1) Վասակ
- 2) Սմբատ
- 3) Դավիթ
- 4) Աբաս

14. Անհի պարիսպներից դուրս ո՞վ ջարդ տվեց բյուզանդական զորքերին.

- 1) Գագիկ I Բագրատունին
- 2) Սմբատ II Բագրատունին
- 3) Գրիգոր Պահլավունին
- 4) Վահրամ Պահլավունին

15. Բագրատունյաց Հայաստանի բանակում առավել մեծ թիվ էր կազմում՝

- 1) հեծելազորը
- 2) հետևակը
- 3) վարձկան զորքը
- 4) գումակը

16. Բագրատունիների բանակում շատ սահմանափակ թվով վարձկաններ կային՝

- 1) լեզգիներից
- 2) չերքեզներից
- 3) ավաններից
- 4) աբխազներից

17. Ծումբի ճակատամարտը տեղի է ունեցել՝

- 1) Բասենում
- 2) Մանանադիում
- 3) Սասունում
- 4) Ապահունիքում

18. Հայ-մոնղոլական դաշինը կնքվել է՝

- 1) Թավրիզում
- 2) Կարակորումում
- 3) Դելիում
- 4) Սպահանում

19. Ո՞ր ճակատամարտից հետո Բյուզանդիան մեկընդմիշտ հրաժարվեց Կիլիկիայից.

- 1) Երուսաղեմի
- 2) Բերդուսի
- 3) Միրիոկեֆալոնի
- 4) Մառիի

20. Մամլուքները 1360 թ. Կիլիկյան Հայաստանի ո՞ր քաղաքները վերջնականապես գրավեցին.

- 1) Այասը և Կոռիկոսը
- 2) Ադանան և Տարսոնը
- 3) Սիսը և Անավարզան
- 4) Այասը և Մսիսը

21. Գևորգ իշխանը Բեշիրի զորքերին նոր ջարդ տվեց՝

- 1) Դվինում
- 2) Նախճավանում
- 3) Գառնիում
- 4) Դողսում

22. Հայոց ո՞ր կաթողիկոսը 1361 թ. եկեղեցական ժողով հրավիրեց.

- 1) Կոստանդին Կեսարացին
- 2) Ստեփանոս Հոռմկլայեցին
- 3) Մեսրոպ Արտազեցին
- 4) Պողոս Սսեցին

23. Ո՞ր քաղաքում տեղի ունեցած ժողովը որոշեց Զաբելին ամուսնացնել Հերթումի հետ.

- 1) Տարսուն
- 2) Անավարզա
- 3) Սիս
- 4) Ադանա

**24. Ո՞ր լեռների մոտ է տեղի ունեցել Մառիի ճակատամարտը.**

- 1) Տավրոսի                      2) Անտիտավրոսի                      3) Սև                      4) Քարուտ Կիլիկիայի

**25. Հաշտություն կնքելու համար ո՞ր մեկնեց հայոց կաթողիկոս Կոստանդին Լամբրոնացին.**

- 1) Հալեպ                      2) Կահիրե                      3) Դամասկոս                      4) Անտիոք

**26. Հայոց արքունական խորհուրդը ո՞ւմ հետ որոշեց ամուսնացնել Չաբելին.**

- 1) Բոհեմունդ III-ի որդի Ռայմոնդի                      3) Ատան պայլի  
2) Բոհեմունդ IV-ի որդի Ֆիլիպի                      4) Բոհեմունդ III-ի որդի Ռեյնալդի

**27. Ո՞ր գետի հովտում են գտնվում Սանահինի և Հաղպատի վանքերը.**

- 1) Ձորագետի                      2) Աղստևի                      3) Ախուրյանի                      4) Դեբեդի

**28. Զվարթնոցի նմանությամբ Անիում կառուցված տաճարը կոչվում էր՝**

- 1) Աշոտաշեն                      2) Սմբատաշեն                      3) Գագկաշեն                      4) Աբասաշեն

**29. Անին Բագրատունիներին էր անցել՝**

- 1) Գնթունիներից                      3) Սահառունիներից  
2) Կամսարականներից                      4) Գնունիներից

**30. Բյուզանդիայի նվաճողական քաղաքականության պայմաններում Հարավային Հայաստանում իր անկախությունը պահպանել էր՝**

- 1) Տարոնը                      3) Սասունը  
2) Ապահունիքը                      4) Կորդուքը

**31. Գող Վասիլի իշխանության կենտրոնն էր՝**

- 1) Մարաշը                      3) Ծամնդավը  
2) Քեսունը                      4) Սիսը

**32. Կարսի պաշտպանության ժամանակ Տուրքիլ բեկի մերձավորներից մեկին ծանր վիրավորել էր հայ զորականներից՝**

- 1) Լիպարիտը                      3) Թաթուլը  
2) Սմբատը                      4) Խաչիկը

**33. Փիլարտոս Վարաժնունու իշխանության կենտրոնն էր՝**

- 1) Մարաշը                      3) Ծամնդավը  
2) Քեսունը                      4) Պիզուն

**34. Ովքեր են զոհվել Ճարմանայի ճակատամարտում.**

- 1) Վահան Մամիկոնյանը, Վարդ Պատրիկը  
2) Սահակ Բագրատունին, Վասակ Մամիկոնյանը  
3) Ներսեհ Կամսարականը, Վասակ Մամիկոնյանը  
4) Սահակ Բագրատունին, Վահան Մամիկոնյանը

**35. Ո՞ր գավառում էր Բագավանի տաճարը.**

- |             |             |
|-------------|-------------|
| 1) Դարանաղի | 3) Արտազ    |
| 2) Եկեղյաց  | 4) Բագրևանդ |

**36. Ո՞ր գետում է Լուսավորիչը մկրտել հայոց արքունիքին, զորքին ու ժողովրդի հոծ բազմությանը.**

- |             |            |
|-------------|------------|
| 1) Մեղրագետ | 3) Արաքս   |
| 2) Ախուրյան | 4) Արածանի |

**37. Որտե՞ղ է գտնվում Քարքե լեռը.**

- |               |               |
|---------------|---------------|
| 1) Կոզովիտում | 3) Աշտիշատում |
| 2) Տարոնում   | 4) Արտազում   |

**38. Որքա՞ն էր Արշակունյաց Հայաստանի կանոնավոր բանակի թվակազմը.**

- |                  |                  |
|------------------|------------------|
| 1) 60–70 հազար   | 3) 130–150 հազար |
| 2) 100–120 հազար | 4) 160–180 հազար |

**39. Մեծ Հայքի ավատատիրական աստիճանակարգում ի՞նչ սկզբունք էր գործում.**

- 1) Իմ վասալի վասալը իմ թշնամին է:
- 2) Իմ վասալի վասալը իմ վասալը չէ:
- 3) Իմ վասալի վասալը իմ վասալն է:
- 4) Իմ վասալի թշնամին իմ բարեկամն է:

**40. Որտե՞ղ էր ճգնավորի կյանքով ապրել Սուրբ Գրիգորը.**

- 1) Բարձր Հայքի Եկեղյաց գավառի Թիլ ավանում
- 2) Սեպուհ լեռան Մանյա Այրք քարայրում
- 3) Քարքե լեռան մոտակայքում
- 4) Հայոց Արևելից կողմերում

**41. Աշտիշատի առաջին ժողովը ո՞ր եկեղեցում է հրավիրվել.**

- |              |                     |
|--------------|---------------------|
| 1) Ս. Գայանե | 3) Ս. Կարապետ       |
| 2) Մայր      | 4) Ս. Երրորդություն |

**42. Որտե՞ղ են հուղարկավորել Սահակ Պարթևին.**

- |               |                  |
|---------------|------------------|
| 1) Օշականում  | 3) Արտաշատում    |
| 2) Աշտիշատում | 4) Վաղարշապատում |

**43. Հայոց իշխանի պաշտոնում ո՞վ է հաջորդել Ներսես Կամսարականին.**

- |                      |                       |
|----------------------|-----------------------|
| 1) Աշոտ Բագրատունին  | 3) Մանվել Մամիկոնյանը |
| 2) Սմբատ Բագրատունին | 4) Գրիգոր Մամիկոնյանը |

**44. Որտե՞ղ է Աշոտ I Բագրատունին օձվել հայոց թագավոր.**

- |               |               |
|---------------|---------------|
| 1) Դվինում    | 3) Տարսնում   |
| 2) Բագավանում | 4) Բագարանում |

45. Ո՞ր քաղաքի պատճառով սրվեցին հակասությունները Բագրատունիների և Արծրունիների միջև.

- |             |          |
|-------------|----------|
| 1) Բագարան  | 3) Արճեշ |
| 2) Նախնավան | 4) Դվին  |

46. Որքան էր Անիի Բագրատունյաց թագավորության բանակի թիվը պատերազմների ժամանակ.

- |                 |                  |
|-----------------|------------------|
| 1) 60–70 հազար  | 3) 120–130 հազար |
| 2) 90–100 հազար | 4) 70–80 հազար   |

47. Բագրատունի ղր արքայի օրոք է առաջացել Տաշիր–Ձորագետի թագավորությունը.

- |            |             |             |            |
|------------|-------------|-------------|------------|
| 1) Սմբատ I | 2) Աշոտ III | 3) Սմբատ II | 4) Գագիկ I |
|------------|-------------|-------------|------------|

48. Ո՞րն էր Շահ–Արմենների ամիրայության կենտրոնը.

- |            |               |
|------------|---------------|
| 1) Գանձակը | 3) Դվինը      |
| 2) Խլաթը   | 4) Մանազկերտը |

49. Ո՞ր բերդաքաղաքն է նստավայր դարձրել իշխան Կոստանդինը.

- |              |             |
|--------------|-------------|
| 1) Կոռոմոզոլ | 3) Վահկա    |
| 2) Լամբրոն   | 4) Անավարզա |

50. Ո՞ւմ իշխանության տարիներին Վահկան դարձավ Ռուբինյան իշխանության կենտրոն.

- |            |               |
|------------|---------------|
| 1) Ռուբենի | 3) Կոստանդինի |
| 2) Սլեհի   | 4) Թորոսի     |

51. Կիլիկյան ղր գահակալն է լուծել Գագիկ II Բագրատունու սպանության վրեժը.

- |         |             |           |            |
|---------|-------------|-----------|------------|
| 1) Սլեհ | 2) Թորոս II | 3) Լևոն I | 4) Թորոս I |
|---------|-------------|-----------|------------|

52. Մոտավորապես որքան էր գրաբարում ավանդված բառապաշարը.

- |                      |                      |
|----------------------|----------------------|
| 1) 7–8 հազարից ավելի | 3) 60 հազարից ավելի  |
| 2) 100 հազարից ավելի | 4) 160 հազարից ավելի |

### 3. ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ

---

#### 1. Ո՞ր պատմիչի աշխատությունից են մեջբերված խոսքերը.

*«Այժմ, երբ ինձ տեսնում ես կարճահասակ, մեծությանս չափը չես հասկանում, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվես...»:*

- |             |                |
|-------------|----------------|
| 1) Խորենացի | 3) Ագաթանգեղոս |
| 2) Եղիշե    | 4) Բուզանդ     |

#### 2. Ո՞ւմ են պատկանում հետևյալ խոսքերը.

*«Այժմ, երբ տեսնում ես ինձ կարճահասակ, մեծությանս չափը չես հասկանում, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվես...»:*

- |                        |                        |
|------------------------|------------------------|
| 1) Վաչե Մամիկոնյանին   | 3) Մանվել Մամիկոնյանին |
| 2) Մուշեղ Մամիկոնյանին | 4) Վասակ Մամիկոնյանին  |

#### 3. Ո՞ւմ են ուղղվել հայոց թագավորի այս խոսքերը.

*«Հայոց տան տերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ տալիս հայոց երկիրը»:*

- |                         |                       |
|-------------------------|-----------------------|
| 1) Բյուզանդիայի կայսրին | 3) Եգիպտոսի սուլթանին |
| 2) Բաղդադի խալիֆին      | 4) Պարսից շահին       |

## 4. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 1. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- |                 |                 |
|-----------------|-----------------|
| 1) նախահայրենիք | 5) հայրենիք     |
| 2) պարզևականք   | 6) աթաբեկ       |
| 3) գանձագին     | 7) սեպուհ       |
| 4) գունդատարլ   | 8) ամիրսպասալար |

ա. առուվաճառքի ենթակա մասնավոր հողեր

բ. հորից որդուն ժառանգաբար անցնող խոշոր մասնավոր հողեր

գ. նախապատմական ժամանակներում ներկայիս ժողովուրդների կազմած մեծ ընտանիքների զբաղեցրած տարածքներ

դ. բանակի ընդհանուր հրամանատար Կիլիկյան Հայաստանում

ե. պայմանական հողատիրության կալվածք

զ. իշխանական տան կրտսեր ներկայացուցիչ

է. զորքերի գլխավոր հրամանատար վրացական արքունիքում

ը. արքունական հեծելազորի հրամանատար Կիլիկյան Հայաստանում

թ. թագաժառանգի խնամակալ վրացական արքունիքում

- |   |
|---|
| 1) 1-բ, 2-գ, 3-ա, 4-ը, 5-ե, 6-է, 7-զ, 8-դ |
| 2) 1-բ, 2-ե, 3-ա, 4-դ, 5-զ, 6-թ, 7-է, 8-ը |
| 3) 1-զ, 2-բ, 3-ե, 4-դ, 5-ա, 6-թ, 7-զ, 8-է |
| 4) 1-զ, 2-ե, 3-ա, 4-դ, 5-բ, 6-թ, 7-զ, 8-է |

### 2. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- |          |                      |
|----------|----------------------|
| 1) սղնախ | 4) պարոնտեր          |
| 2) նոյոն | 5) մարզպանական գունդ |
| 3) բեկ   | 6) գունդատարլ        |

ա. սեփական կալվածքները կամովին եկեղեցուն հանձնած և հոգևոր կոչում ընդունած հայ կալվածատեր

բ. իշխաններին ենթակա զորամասեր Բագրատունյաց Հայաստանում

գ. բանակի ընդհանուր հրամանատարը Կիլիկյան Հայաստանում

դ. մելիքական տոհմի կրտսեր ներկայացուցիչ

ե. մոնղոլական զորաջոկատի հրամանատար

զ. պաշտպանական հենակետային ամրություններ Արցախում

է. սելջուկ զորահրամանատար

- |                                 |                                 |
|---------------------------------|---------------------------------|
| 1) 1-ե, 2-բ, 3-է, 4-դ, 5-զ, 6-գ | 3) 1-զ, 2-ե, 3-դ, 4-ա, 5-բ, 6-գ |
| 2) 1-ա, 2-զ, 3-բ, 4-զ, 5-ե, 6-է | 4) 1-ա, 2-զ, 3-բ, 4-ե, 5-զ, 6-է |

**3. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

- |              |             |
|--------------|-------------|
| 1) գունդստար | 5) կանցլեր  |
| 2) ունիթոր   | 6) սենեսկալ |
| 3) պայլ      | 7) սպասալար |
| 4) մամլուք   |             |

ա. խնամակալ

բ. սուլթանի անձնական գվարդիայում ծառայող գնված ստրուկ

գ. Հայոց եկեղեցին քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ միավորելու կողմնակից

դ. բանակի ընդհանուր հրամանատար

ե. արքունական հեծելազորի հրամանատար

զ. արքունի քարտուղարության գլխավոր պաշտոնյա

է. արքունի եկամուտները և ծախսերը տնօրինող պաշտոնյա

ը. Հայ եկեղեցին ռուսական եկեղեցուն միավորելու կողմնակից

- |                                      |
|--------------------------------------|
| 1) 1-դ, 2-ը, 3-բ, 4-գ, 5-զ, 6-է, 7-ե |
| 2) 1-գ, 2-բ, 3-ե, 4-դ, 5-ա, 6-զ, 7-է |
| 3) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ, 5-զ, 6-է, 7-ե |
| 4) 1-դ, 2-ը, 3-գ, 4-ա, 5-ե, 6-է, 7-զ |

**4. Տերմինները համապատասխանեցնել իրենց նշանակությանը.**

- |                     |                   |
|---------------------|-------------------|
| 1) մարդպետություն   | 4) ասպետություն   |
| 2) հազարապետություն | 5) մարզպանություն |
| 3) ոստանիկ այրուձի  |                   |

ա. վարչաքաղաքական միավոր

բ. արքունիքին կից հատուկ հեծյալ ջոկատներից կազմված զորամաս

գ. հեծելազորի հրամանատարություն

դ. արքունի կալվածքների և գանձարանի համար պատասխանատու գործակալություն

ե. պալատական արարողությունների և դեսպանների ընդունելության համար պատասխանատու գործակալություն

զ. երկրի տնտեսական-հարկային վարչություն, որը տնօրինում էր նաև պետական պարհակների կատարումը

- |                            |                            |
|----------------------------|----------------------------|
| 1) 1-գ, 2-դ, 3-զ, 4-ե, 5-ա | 3) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ե, 5-ա |
| 2) 1-դ, 2-ա, 3-զ, 4-բ, 5-ե | 4) 1-ա, 2-գ, 3-ե, 4-դ, 5-բ |

**5. Հասկացությունները համապատասխանեցնել իրենց նշանակությանը.**

- |                               |          |
|-------------------------------|----------|
| 1) աշար                       | 6) ոստան |
| 2) «պտղի և տասանորդների կարգ» | 7) ռոճիկ |
| 3) ավագների խորհուրդ          | 8) շահապ |
| 4) մուխթասիբ                  | 9) մելիք |
| 5) ոստանիկ այրուձի            |          |

- ա. արքունիքին կից՝ հատուկ հեծյալ ջոկատներից կազմված զորամաս
- բ. որոշ գավառներում իշխանությունն ու կառավարումը վերականգնած հայ իշխանական տների ներկայացուցիչ
- գ. դրամական և բնամթերք նպաստ
- դ. բերքի 1/10 մասը կազմող հարկ
- ե. քաղաքներում հարկահանությանը, շուկաներին, առևտրին, արհեստներին հետևող հատուկ պաշտոնյա
- զ. բերքից եկեղեցուն վճարվող տուրք
- է. քաղաքի կառավարիչ Բագրատունյաց Հայաստանում
- ը. հայոց թագավորներին պատկանող տարածք Արշակունյաց Հայաստանում
- թ. հանրային բարոյականությանը հետևող հատուկ պաշտոնյա Բագրատունյաց Հայաստանում
- ժ. խոշոր քաղաքները կառավարող մարմին Բագրատունյաց Հայաստանում

- 1) 1-դ, 2-գ, 3-ժ, 4-թ, 5-ը, 6-ա, 7-զ, 8-է, 9-բ
- 2) 1-զ, 2-ժ, 3-ե, 4-թ, 5-ա, 6-բ, 7-է, 8-զ, 9-ը
- 3) 1-դ, 2-զ, 3-ժ, 4-ե, 5-ա, 6-ը, 7-զ, 8-է, 9-բ
- 4) 1-զ, 2-ժ, 3-ե, 4-թ, 5-ա, 6-բ, 7-զ, 8-է, 9-ը

**6. Թվարկված գործառույթներից առանձնացնել երեքը, որոնք Արշակունյաց Հայաստանում տնօրինում էր հազարապետը.**

- ա. արքունի կալվածքների հսկողություն
- բ. պետական պարիսպների տնօրինում
- գ. պալատական արարողությունների կազմակերպում
- դ. քաղաքների ամրությունների կառուցում, անտառատնկումների իրականացում
- ե. արքունի գանձարանի հսկողություն
- զ. ճանապարհների և կամուրջների կառուցում, ջրանցքների անցկացում
- է. Արշակունյաց սեպուհների դաստիարակություն

- 1) գ, ե, է
- 2) ա, դ, զ
- 3) բ, դ, զ
- 4) բ, ե, զ

**7. Արշակունյաց շառավիղներից ձևավորված առանձին խավը կոչվում էր՝**

- 1) բդեշխներ
- 2) ասպետներ
- 3) թագադիրներ
- 4) ոստանիկներ

**8. Կիլիկիայում սպասալարին վերապահված գործառույթն էր՝**

- 1) արքունական հեծելազորի հրամանատարությունը
- 2) արքունի եկամուտների և ծախսերի տնօրինումը
- 3) բանակին սպառազինությամբ և պարենով ապահովելը
- 4) բանակի ընդհանուր հրամանատարությունը

**9. Օսմանյան կայսրության հայերի հոգևոր կյանքը տնօրինող նվիրապետական աթոռը կոչվում էր՝**

- 1) Աղթամարի կաթողիկոսություն
- 2) Երուսաղեմի հայոց պատրիարքություն
- 3) Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն
- 4) Աղվանից կաթողիկոսություն

**10. Միջնադարում ինչ անունով էր հայտնի փիլիսոփայությունը.**

- 1) բնագիտություն
- 2) աստվածաբանություն
- 3) ճարտասանություն
- 4) իմաստասիրություն

**11. Մեծ Հայքի Արցախ և Ոսիք աշխարհները հայտնի էին նաև հետևյալ անունով.**

- 1) Հայոց Արևելից կողմանք
- 2) Արևելյան Այսրկովկաս
- 3) բուն Աղվանք
- 4) Խամսայի մելիքություն

**12. Միջնադարում պարզակալանք էին կոչվում՝**

- 1) տարբեր ծառայությունների համար թագավորի կողմից ցմահ տրվող հողերը
- 2) հորից որդուն ժառանգաբար անցնող հողերը
- 3) հավատարմությամբ ծառայած նախարարներին տրված հողերը
- 4) տարբեր ծառայությունների համար ավագ նախարարների կողմից զինվորականներին ժառանգաբար տրվող հողերը

**13. Միջնադարում գանձագին էին կոչվում՝**

- 1) թագավորի կողմից վաճառքի հանված հողերը
- 2) առուվաճառքի ենթակա մասնավոր հողերը
- 3) հավատարմությամբ ծառայած նախարարներին թագավորի շնորհած հողերը
- 4) առուվաճառքի ենթակա պետական հողերը

**14. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- 1) Պարսից արքայի և հոռմեական կայսեր միջև 363 թ. կնքված պայմանագիրն անվանել են «ամոթալի»:
- 2) Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Տայք նահանգը հայտնի էր «Ներքին Հայք» անունով:
- 3) Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Տուրուբերան նահանգը հայտնի էր «Մեծ Հայք» անունով:
- 4) Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Տուրուբերան նահանգը հայտնի էր «Մեծ Հայք» անունով:
- 5) Նախարարական տների կրտսեր իշխանները կոչվում էին ոստանիկներ:
- 6) Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Այրարատ նահանգի մեծ մասից կազմված վարչական միավորը կոչվեց «Ներքսագոյն Հայք»:
- 7) Հերթ ոստիկանի «աշխարհագրով» մտցված՝ ըստ գերդաստանների՝ երդերի, ոչ մահմեդականներից գանձվող հարկը ծխահարկն էր:

**15. Ինչ գործառույթներ էին վերապահված հազարապետին.**

- 1) պետական պարիակների տնօրինությունը
- 2) բանակի սպառազինումը և պարենի մատակարարումը
- 3) արքունի կալվածքների ու գանձերի հսկողությունը
- 4) քաղաքների ամրությունների, ճանապարհների, կամուրջների կառուցումը
- 5) միջազգային առևտրական ուղիների հսկողությունը
- 6) ջրանցքների անցկացումը, անտառների տնկումը
- 7) ընդունված դատավճիռների կատարման հսկողությունը

**16. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- ա. Վաղ քրիստոնեական պաշտամունքային շինությունները հայտնի են բազիլիկ տաճարներ անունով:
- բ. Պատվանդանի վրա կանգնեցված սալաձև կոթող-խաչարձանը կոչվում է խաչքար:
- գ. Եկեղեցիների պատերի վրայի խճանկարները կոչվում են որմնանկարներ:
- դ. Շարականներ էին կոչվում գուսանների երգած երգերը:
- ե. Արդեն XI դարում վանական և աշխարհիկ դպրոցների հիման վրա ձևավորված նոր տիպի դպրոցները կոչվեցին վարդապետարաններ:
- 1) գ, ե                      2) բ, գ                      3) ա, բ                      4) ա, դ

**17. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- 1) Փոքր գործերի դատավարությունն իրականացնող գործակալը կոչվում էր մարդ-պետ:
- 2) Քաղաքների միջև կառուցված պաշտպանական բերդերը կոչվում էին միջնաբերդեր:
- 3) Շահաստանից դուրս տարածվող քաղաքային թաղամասերը կոչվում էին արվարձաններ:
- 4) Քաղաքի կառավարող մարմինը կոչվում էր մուխթասիբ:
- 5) Քաղաքի արվարձաններում բնակվողներին անվանում էին ընչազուրկներ:
- 6) Հայոց կաթողիկոսի վարած գործակալական պաշտոնը կոչվում էր մեծ դատավոր:
- 7) Քաղաքի կառավարիչը կոչվում էր շահապ:

**18. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Բագրատունյաց Հայաստանում գործակալությունների մեջ կարևոր էին ինքնակալ միապետի, իշխանաց իշխանի և սպարապետի պաշտոնները:
- 2) Միջնաբերդի շուրջը տարածվող բուն քաղաքը կոչվում էր շահաստան:
- 3) Բագրատունիների օրոք բանակը բաղկացած էր արքունական և նախարարական գնդերից:
- 4) Ազդեցիկ իշխանավորների և բարձր հոգևորականների պալատները կառուցված էին շահաստան կոչվող թաղամասում, որտեղ կենտրոնացված էին նաև հարուստ վաճառականների շենքերը, շուկաները, հյուրանոցները և այլն:
- 5) Թագավորական տիրույթներից հավաքագրված ռազմիկներից կազմված գունդը կոչվում էր արքունական:

- 6) Տաշիր-Ձորագետի թագավորության հիմնադիր Գուրգենը փախավ Երկրից՝ գրկվելով իր հողային տարածքներից, որի համար էլ ստացավ «Անհողին» մականունը:
- 7) Դվին, ապա Պարտավ կենտրոնով արաբների ստեղծած վարչաքաղաքական միավորը կոչվեց Արմինիա ամիրայություն:
- 8) Իշխան Դավիթ Սահառունուն Հերակլ կայսեր շնորհած աստիճանը կոչվում էր պատրիկ-կյուրապաղատ:

#### **19. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Բարձր Հայք նահանգը հայտնի էր «Մասն Մեծ Հայոց» անունով:
- 2) Հերթ ոստիկանի «աշխարհագրով» մտցված՝ ըստ գերդաստանների՝ երդերի, ոչ մահմեդականներից գանձվող հարկը կոչվում էր ծխահարկ:
- 3) Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Այրարատ նահանգի մեծ մասից կազմված վարչական միավորը կոչվեց «Ներքսագոյն Հայք»:
- 4) Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Տուրուբերան նահանգը հայտնի էր «Մեծ Հայք» անունով:
- 5) Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Տայք նահանգը հայտնի էր «Ներքին Հայք» անունով:
- 6) Պարսից արքայի և բյուզանդական կայսեր միջև 363 թ. կնքված պայմանագիրը անվանել են «ամոթալի»:
- 7) Նախարարական տների կրտսեր իշխանները կոչվում էին ոստանիկներ:

#### **20. Կիլիկիայում ունիթորներին բնորոշ էր.**

- 1) Քրիստոսի երկաթնակության դավանանքի ընդունումը
- 2) Քրիստոսի «մի անձ, երկու բնություն», այն է՝ միաբնակության մասին դրույթից չհրաժարվելը
- 3) Հայ եկեղեցին քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ միավորելու ձգտումը
- 4) բողոքական եկեղեցիների ծեսերի ու արարողությունների ընդունումը
- 5) միարարությունից հրաժարումը
- 6) Հայոց եկեղեցու ծեսերի ու արարողությունների վերափոխումը և հարմարեցումը հունական և կաթոլիկ եկեղեցիների դավանանքներին
- 7) նեստորականների գաղափարների ընդունումը

#### **21. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- 1) Հայաստանում ձիավարությունից, նետաձգությունից և այլ գիտելիքներից ու հմտություններից քննություն հանձնելով ստացած զինվորական աստիճանը կոչվում էր մարաջախտ:
- 2) Վրաստանում թագաժառանգի խնամակալության պաշտոնը կոչվում էր պայլություն:
- 3) Կիլիկիայում ձիավարությունից, նետաձգությունից և այլ գիտելիքներից ու հմտություններից քննություն հանձնելով ստացած զինվորական աստիճանը կոչվում էր ասպետ:
- 4) Բարձրագույն դատական ատյանը մաս էր կազմում Կիլիկիայի հայոց պետության կառավարման գլխավոր մարմնի, որը կոչվում էր արքունիք:

- 5) Պատմական Ուտիք աշխարհում XI դ. ձևավորված մահմեդական իշխանությունը հայտնի է Գանձակի աթաբեկություն անունով:
- 6) Վրաց արքունիքում սպարապետին կոչում էին գունդստաբլ:
- 7) Կիլիկյան Հայաստանում սպարապետի անմիջական տեղակալը կոչվում էր մարաջախտ:

## **22. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Կիլիկյան Հայաստանի բանակում հատուկ տեղ զբաղեցնող հոգևոր-ասպետական կազմակերպություններից մեկը հայտնի էր «Հիվանդախնամների միաբանություն» անունով:
- 2) Հայաստանի հարավում՝ Խլաթ կենտրոնով ստեղծված մահմեդական իշխանությունը կոչվում էր Շահ-Արմենների աթաբեկություն:
- 3) Պատերազմների ժամանակ գյուղացիներից, քաղաքացիներից և ազնվականներից հավաքագրվող զինուժը կոչվում էր աշխարհագոր:
- 4) Քաղաքներում հարկահանությանը, առևտրին ու արհեստներին, շուկաներին հետևող պաշտոնյան կոչվում էր շահապ:
- 5) Կիլիկյան Հայաստանի արքունի քարտուղարության գործակալության գլխավոր պաշտոնյային կոչում էին կանցլեր:
- 6) Սեփական կալվածքները կամովին եկեղեցուն հանձնած և հոգևոր կոչում ընդունած հայ կալվածատերերին անվանել են միարարներ:
- 7) Արևմտյան Հայաստանում ստեղծված կիսանկախ իշխանությունները կոչվում էին մելիքություններ:
- 8) Քաղաքներում առևտրին, արհեստներին, շուկաներին ու հարկահանությանը հետևող պաշտոնյան կոչվում էր մուխթախիբ:

## **23. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- 1) Միայն պաշտամունքային, եկեղեցական շինություններից բաղկացած համալիրները կոչվում էին վանական:
- 2) Գեղարդավանքն ահռելի ժայռի մեջ փորված լինելու համար հայտնի է նաև «Այրիվանք» անունով:
- 3) Կիլիկյան Հայաստանի արքունիքի մեջ մտնող մարմիններից մեկը կոչվում էր երկրախորհուրդ:
- 4) Զորահրամանատարներ նշանակված մելիքական տոհմի կրտսեր ներկայացուցիչները կոչվում էին հազարապետ, հարյուրապետ, բեկ:
- 5) Ամբողջ միջնադարի ընթացքում միայն Վասպուրականի հայ բնակչության հոգևոր կյանքը կարգավորող նվիրապետական աթոռը կոչվում էր Աղթամարի կաթողիկոսություն:
- 6) Սուլթանի անձնական գվարդիայում ծառայող գնված ստրուկներին կոչում էին մամլուքներ:
- 7) Միջնադարում բարձրագույն տիպի դպրոցների մի մասը կոչվել է նաև վարդապետարան:

**24. Գտնել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- ա. Շահաստանից դուրս տարածվող քաղաքային թաղամասերը կոչվում էին արվարձաններ:
- բ. Քաղաքի կառավարող մարմինը կոչվում էր մուխթասիբ:
- գ. Քաղաքի արվարձաններում բնակվողներին անվանում էին ընչազուրկներ:
- դ. Իշխան Դավիթ Սահառունուն Հերակլ կայսեր շնորհած աստիճանը կոչվում էր պատրիկ-կյուրապաղատ:
- ե. Հայոց կաթողիկոսի զբաղեցրած գործակալական պաշտոնը կոչվում էր Գերագույն դատավոր:

- 1) ա, գ                      2) գ, դ                      3) դ, ե                      4) բ, ե

**25. Գտնել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- ա. Ազդեցիկ իշխանավորների և բարձր հոգևորականների պալատները կառուցվում էին քաղաքի այն թաղամասում, որը կոչվում էր շահաստան:
- բ. Թագավորական տիրույթներից հավաքագրված ռազմիկներից կազմված գունդը կոչվում էր արքունական:
- գ. Տաշիր-Ձորագետի թագավորության հիմնադիր Գուրգենը փախավ երկրից՝ զրկվելով իր հողային տարածքներից, որի համար էլ ստացավ «Անհողին» մականունը:
- դ. Քաղաքների միջև կառուցված պաշտպանական բերդերը կոչվում էին միջնաբերդեր:
- ե. Միջնաբերդի շուրջը տարածվող բուն քաղաքը կոչվում էր շահաստան:
- զ. Բագրատունիների օրոք բանակը կազմող գնդերը կոչվում էին արքունական և նախարարական:
- է. Դվին, ապա Պարտավ կենտրոնով արաբների ստեղծած վարչաքաղաքական միավորը կոչվում էր Արմինիա փոխարքայություն:

- 1) ա, գ, է                      2) ա, ե, գ                      3) բ, ե, է                      4) բ, դ, գ

**26. Գտնել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- ա. Պարսից արքայի և հռոմեական կայսեր միջև 363 թ. կնքված պայմանագիրն անվանել են «ամոթալի»:
- բ. Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Այրարատ նահանգի մեծ մասից կազմված վարչական միավորը կոչվեց «Խորագոյն Հայք»:
- գ. Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Տայք նահանգը հայտնի էր «Ներքին Հայք» անունով:
- դ. Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Տուրուբերան նահանգը հայտնի էր «Մեծ Հայք» անունով:
- ե. Նախարարական տների կրտսեր իշխանները կոչվում էին սեպուհներ:
- զ. Հերթ ոստիկանի «աշխարհագրով» մտցված՝ ըստ գերդաստանների՝ երդերի, ոչ մահմեդականներից գանձվող հարկը կոչվում էր ծխահարկ:

է. Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Բարձր Հայք նահանգը հայտնի էր նաև «Մասն Մեծ Հայոց» անունով:

1) ա, դ, ե

2) բ, գ, ե

3) ա, դ, է

4) բ, գ, գ

**27. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Հայաստանում ձիավարությունից, նետաձգությունից և այլ գիտելիքներից ու հմտություններից քննություն հանձնելով ստացած զինվորական աստիճանը կոչվում էր մարաջախտ:

2) Վրաստանում թագաժառանգի խնամակալության պաշտոնը կոչվում էր պայլություն:

3) Կիլիկիայում ձիավարությունից, նետաձգությունից և այլ գիտելիքներից ու հմտություններից քննություն հանձնելով ստացած զինվորական աստիճանը կոչվում էր ասպետ:

4) Կիլիկիայի հայոց պետության կառավարման գլխավոր մարմինը կոչվում էր արքունիք:

5) Պատմական Ուտիք աշխարհում XI դ. ձևավորված մահմեդական իշխանությունը հայտնի է Գանձակի աթաբեկություն անունով:

6) Վրաց արքունիքում սպարապետին կոչում էին գունդստաբլ:

7) Կիլիկյան Հայաստանում սպարապետի անմիջական տեղակալը կոչվում էր սպասալար:

**28. Գտնել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

ա. Կիլիկյան Հայաստանի բանակում հատուկ տեղ զբաղեցնող հոգևոր-ասպետական կազմակերպություններից մեկը հայտնի էր «Հիվանդախնամների միաբանություն» անունով:

բ. Հայաստանի հարավում՝ Խլաթ կենտրոնով ստեղծված մահմեդական իշխանությունը կոչվում էր Շահ-Արմենների աթաբեկություն:

գ. Պատերազմների ժամանակ գյուղացիներից և քաղաքացիներից հավաքագրվող զինուժը կոչվում էր աշխարհագոր:

դ. Քաղաքներում հարկահանությանը, առևտրին ու արհեստներին, շուկաներին հետևող պաշտոնյան կոչվում էր սպասալար:

ե. Կիլիկյան Հայաստանի արքունի քարտուղարության գործակալության գլխավոր պաշտոնյային կոչում էին կանցլեր:

զ. Սեփական կալվածքները կամովին եկեղեցուն հանձնած և հոգևոր կոչում ընդունած հայ կալվածատերերին անվանել են պարոնտեր:

է. Արևմտյան Հայաստանում ստեղծված կիսանկախ իշխանությունները կոչվում էին մելիքություններ:

ը. Քաղաքի կառավարիչը կոչվում էր շահապ:

1) ա, դ, ե

2) բ, դ, է

3) ա, գ, ը

4) բ, գ, ե

**29. Գտնել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- ա. Ամբողջ միջնադարի ընթացքում միայն Վասպուրականի հայ բնակչության հոգևոր կյանքը կարգավորող նվիրապետական աթոռը կոչվում էր Աղթամարի կաթողիկոսություն:
- բ. Գեղարդավանքը ահռելի ժայռի մեջ փորված լինելու համար հայտնի է նաև Այրիվանք անունով:
- գ. Կիլիկյան Հայաստանի արքունիքի մեջ մտնող մարմիններից մեկը կոչվում էր երկրախորհուրդ:
- դ. Ջորահրամանատարներ նշանակված մելիքական տան կրտսեր ներկայացուցիչները կոչվում էին բեյ, սարդար:
- ե. Միջնադարյան վարդապետարանները բարձրագույն տիպի դպրոցներ էին:
- զ. Սուլթանի անձնական գվարդիայում ծառայող գնված ստրուկներին կոչում էին մամլուքներ:
- է. Միայն պաշտամունքային, եկեղեցական շինություններից բաղկացած համալիրները կոչվում էին վանական:

1) ա, բ, է

2) գ, դ, զ

3) բ, է, զ

4) ա, դ, է

## 5. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

### 1. Բագրատունիների օրոք Դվինն ինչո՞ւ մայրաքաղաք չդարձավ.

- ա) Այն գտնվում էր Շիրակում և, ընկած լինելով թագավորության ծայրամասային գավառում, համահայկական մայրաքաղաքի գործառույթներ չէր իրականացնում:
- բ) Դվինը շարունակում էր մնալ արաբների ձեռքին:
- գ) Դվինը Բագրատունիների հիմնական տիրույթներից՝ Շիրակից, դուրս էր գտնվում:
- դ) Դվինը չորս կողմից ողողում էին Արաքսի ջրերը, և նպատակահարմար չէր մայրաքաղաք դարձնել:
- ե) Դվինը երկրաշարժից ավերվել էր և անմարդաբնակ դարձել:

- 1) ա, դ                      2) բ, գ                      3) բ, ե                      4) ա, գ

### 2. Թվարկվածներից որո՞նք Հայաստանի անկախության վերականգնման ներքին նախադրյալներ չեն.

- ա. Հայ ժողովրդի բոլոր խավերը միասնական էին և երազում էին անկախության մասին:
- բ. Արաբական խալիֆայությունում ընթացող գահակալական կռիվները խարխլել էին կենտրոնական իշխանության դիրքերը:
- գ. Զարգանում էր երկրի տնտեսական կյանքը՝ գյուղատնտեսությունը, արհեստագործությունը:
- դ. Տնտեսապես և ռազմականորեն զորեղացող հայ նախարարները անկախության էին ձգտում:
- ե. Հայաստանի անկախացումը խրախուսվում էր Բյուզանդիայի կողմից:
- զ. Կազմալուծվող խալիֆայությունը պատրաստ էր դաշինք հաստատել Բագրատունիների հետ:
- է. Հայ ժողովրդի մեջ կենսունակ էր պետականության վերականգնման գաղափարը:

- 1) ա, գ, ե                      2) բ, ե, գ                      3) բ, գ, է                      4) դ, գ, է

### 3. Ընտրել այն արտաքին նախադրյալները, որոնք հիմք դարձան Բագրատունիների գլխավորությամբ Հայաստանի անկախ պետականությունը վերականգնելու համար.

- ա. Հայաստանի համար բարենպաստ էր Մերձավոր Արևելքում սկսված տնտեսական վերելքը:
- բ. Արաբական խալիֆայությունում լայն ծավալ էին ձեռք բերել ժողովրդական ընդվզումները, որոնք գահակալական կռիվների հետ միասին խարխլում էին կենտրոնական իշխանության դիրքերը:
- գ. Արաբական խալիֆայության վարձկաններից բաղկացած բանակը միշտ չէ, որ ենթարկվում էր խալիֆներին:

դ. Բյուզանդիայի հետ դավանաբանական միությունը թույլ էր տալիս ռազմական օգնություն ստանալ կայսրությունից:

ե. Առանձին երկրների ամիրաները ձգտում էին անջատվելու խալիֆայությունից, ուստի Հայաստանում ևս ուժեղանում էր արաբական լուծը թոթափելու համար պայքարը:

զ. Հայաստանում ավելի էր ուժեղացել անկախության հասնելու ձգտումը:

է. Վճռական դեր կատարեց արևմտաեվրոպական քրիստոնեական երկրների օգնությունը:

- 1) բ, գ, ե                      2) բ, գ, զ                      3) ա, դ, է                      4) դ, ե, զ

**4. Ընտրել երեք պատճառ, որոնք նպաստեցին Հուստինիանոս I կայսեր օրոք Արևմտյան Հայաստանում հայ նախարարների իշխանության թուլացմանը.**

ա. հայերի հակաբյուզանդական հաճախակի ելույթները

բ. ժառանգության իրավունքի մասին հատուկ օրենքի ընդունումը

գ. հայ նախարարների միջև փոխադարձ թշնամանքը

դ. իշխանության հանձնումը բյուզանդական զինվորականությանը

ե. նոր վարչական բաժանումները

զ. հաճախ կրկնվող պարսկա-բյուզանդական պատերազմները

է. Հուստինիանոսի կողմից նոր աշխարհագիր անցկացնելը

- 1) բ, դ, ե                      2) ա, գ, է                      3) բ, ե, է                      4) ա, գ, է

**5. Ընտրել Բագրատունյաց թագավորության թուլացման պատճառները.**

1) երկրի խոշոր իշխանների կենտրոնախույս ձգտումները

2) մոնղոլական արշավանքները Հայաստան

3) Արաբական խալիֆայության հզորացումը

4) Անիի թագավորության բաժանումը երկու մասի

5) Հայաստանի նկատմամբ Բյուզանդական կայսրության վարած քաղաքականությունը

6) երկրի տնտեսական կյանքի անկայուն վիճակը

7) քաղաքային կյանքի անկումը Բագրատունյաց Հայաստանում

**6. Թվարկվածներից որոնք են Կիլիկիայի հայերի և մոնղոլների միջև ձեռնտու դաշինքի կնքման պատճառ հանդիսացել.**

ա) Մոնղոլները ծրագրել էին գրավել Ասորիքը և Պաղեստինը, ուստի վստահելի դաշնակցի կարիք ունեին, որպիսին կարող էր լինել Կիլիկյան Հայաստանը:

բ) Հայերը ցանկանում էին հայ-մոնղոլական դաշինքը հակադրել խաչակրաց-մամլուքյան դաշինքին:

գ) Հեթանոս մոնղոլները ձգտում էին շահելու քրիստոնյա հայերի համակրանքը, որովհետև թշնամաբար էին տրամադրված մահմեդականների նկատմամբ:

դ) Մոնղոլները խոստանում էին պահպանել Կիլիկյան Հայաստանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը:

ե) Հայերը խոստանում էին մոնղոլներին հանձնել Այաս նավահանգստից ստացվող եկամուտների կեսը:

զ) Մոնղոլները խոստացան հայերին վերադարձնել մահմեդականների խլած տարածքները և օգնություն ցույց տալ Իկոնիայի սելջուկների հարձակումների ժամանակ:

1) ա, դ, ե

2) բ, գ, զ

3) դ, ե, զ

4) ա, դ, զ

**7. Ընտրել այն արտաքին պատճառները, որոնք պայմանավորեցին Բագրատունիների նորանկախ պետականության ստեղծումը.**

1) Հայաստանի համար բարենպաստ էին սելջուկ-թուրքական պետության թուլացումն ու անկումը:

2) Արաբական խալիֆայությունում լայն ծավալ էին ձեռք բերել ժողովրդական ընդվզումները, որոնք գահակալական կռիվների հետ միասին խարխուլում էին արաբական կենտրոնական իշխանության դիրքերը:

3) Արաբական խալիֆայությունը սկսել էր թուլանալ և բռնել էր անկման ուղին, քանի որ վարձկաններից բաղկացած բանակը միշտ չէ, որ ենթարկվում էր խալիֆներին:

4) Բյուզանդիայի հետ դավանաբանական միությունը թույլ էր տալիս ռազմական օգնություն ստանալ կայսրությունից:

5) Հայաստանում տնտեսական ու քաղաքական հզորության էին հասել հայ իշխանական տները, եկեղեցին ցանկանում էր ազատվել կրոնական հալածանքներից, իսկ աշխատավոր բնակչությունը՝ օտարերկրյա լծից:

6) Բյուզանդիան վարում էր Արաբական խալիֆայության կենտրոնախույս ուժերին հովանավորելու քաղաքականություն:

7) Սեֆյան Իրանը վարում էր Արաբական խալիֆայության կենտրոնախույս ուժերին հովանավորելու քաղաքականություն:

**8. Ինչո՞ւ Խոսրով Կոտակը Դվինում կառուցեց արքունի ապարանք և այն դարձրեց նստավայր.**

1) որովհետև Արտաշատը ավերվել էր երկրաշարժից:

2) քանի որ Երասխի վտակ Ախուրյանը հունը փոխել էր, և Արտաշատի մոտակայքում ճահիճներ էին առաջացել:

3) քանի որ «Արքունական պողոտան» պետք է անցներ Դվինով:

4) քանի որ Երասխի վտակ Մեծամորի հունը փոխվել էր, և Արտաշատի մոտակայքում ճահիճներ էին առաջացել:

**9. Բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնք հանդիսացել են Բագրատունիների պետության անկման պատճառներ.**

ա) հայ-բյուզանդական առևտրական ու բարեկամական պայմանագրի կնքումը

բ) Հայաստանի քաղաքական մասնատվածությունը

գ) հայոց պետության նկատմամբ Բյուզանդիայի նվաճողական քաղաքականությունը

դ) թյուրք-սելջուկների արշավանքները

- ե) Հայաստանի ներքին գործերին Սաջյան ամիրայության միջամտությունները
- զ) Անիի Բագրատունիների թագավորության ներսում սկսված գահակալական պայքարը

- 1) բ, ե, դ
- 2) բ, գ, զ
- 3) ա, գ, դ
- 4) դ, ե, գ

**10. Ո՞րն էր մոնղոլների՝ Կիլիկիայի հետ դաշինք կնքելու շարժառիթը.**

- 1) ծրագրել էին գրավել Ասորիքն ու Պաղեստինը, որն իրականացնելու գործում ձգտում էին հայերի աջակցությունն ունենալ
- 2) փորձում էին պայմաններ ստեղծել հայերի արտագաղթի համար
- 3) շահագրգռված էին Այաս նավահանգստի եկամուտներով
- 4) ծրագրել էին Միջերկրական ծովի առևտրի մենաշնորհը վերցնել իրենց ձեռքը

**11. Հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին հայ նախարարների միջև երկպառակությունները վերացնելու և իր ազդեցությունը նրանց վրա ամրապնդելու նպատակով՝**

- 1) խնամիական կապեր հաստատեց Սյունիքի և Վասպուրականի գահերեց իշխանների հետ
- 2) հայ ազդեցիկ նախարարների տիրույթները կրճատեց
- 3) խնամիական կապեր հաստատեց Վիրքի ու Աղվանքի ազդեցիկ գործիչների հետ
- 4) առևտրական և բարեկամական դաշինք կնքեց Բյուզանդիայի հետ

**12. Ի՞նչ հետևանք ունեցավ Ջհանշահի կառավարումը Արևելյան Հայաստանում.**

- 1) Գեղամա երկրի, Վայոց ձորի, Արցախի, Սյունիքի, Գուգարքի և մի շարք այլ գավառների հայ իշխանական տների ներկայացուցիչները վերականգնեցին իրենց իշխանությունն ու վարչական կառավարումը և կոչվեցին մելիքներ:
- 2) Կալվածքները եկեղեցուն հանձնած և հոգևոր կոչում ստացած ֆեոդալները վերականգնեցին իրենց իշխանությունն ու վարչական կառավարումը և կոչվեցին մելիքներ:
- 3) Արագացավ հայկական պետականության վերականգնման գործընթացը:
- 4) Զեյթունի, Շատախի, Սասունի, Մոկսի և մի շարք այլ գավառների հայ իշխանական տների ներկայացուցիչները վերականգնեցին իրենց իշխանությունն ու վարչական կառավարումը և կոչվեցին մելիքներ:

**13. Ո՞րն էր Աբգար դպիր Թոխաթեցու գլխավորած պատվիրակության նպատակը.**

- 1) համոզել եվրոպական պետություններին, որ օգնեն հայերին՝ ազատագրվելու արաբական տիրապետությունից
- 2) համոզել եվրոպական պետություններին, որ օգնեն հայերին՝ ազատագրվելու օսմանյան տիրապետությունից
- 3) համոզել եվրոպական պետություններին, որ օգնեն հայերին՝ կազմակերպելու հակապարսկական ապստամբություն
- 4) համոզել եվրոպական պետություններին՝ ճնշում գործադրել Թուրքիայի վրա՝ հայկական մարզերում բարենորոգումներ կատարելու համար:

**14. Դվինի 506 և 554 թթ. ժողովների որոշումների արդյունքում՝**

- 1) դատապարտվեցին նեստորականների գործողությունները
- 2) պաշտպանվեց Հայոց եկեղեցու դավանաբանությունը ասորի եկեղեցու ոտնձգություններից
- 3) Աշտիշատի ժողովի դավանաբանության վրա հաստատված գրություն կազմվեց
- 4) պաշտպանվեց Հայոց եկեղեցու դավանաբանությունը Բյուզանդական եկեղեցու ոտնձգություններից
- 5) Նիկեայի ժողովի դավանաբանության վրա հաստատված գրություն կազմվեց
- 6) պաշտպանվեց Հայոց եկեղեցու դավանաբանությունը Վրաց եկեղեցու ոտնձգություններից
- 7) Աղուենի ժողովի դավանաբանության վրա հաստատված գրություն կազմվեց

**15. Թվարկվածներից որո՞նք են պատմական դեպքերի ու իրադարձությունների իրական արդյունքներ.**

- ա) Արճեշի ճակատամարտի արդյունքում հայերից զոհվել են չորս իշխաններ և 1500 ռամիկներ:
- բ) Մլեհի և Հալեպի ամիրայի դաշինքի արդյունքում վերջնականապես վերացվեցին բյուզանդական տիրապետության վերջին հենակետերը Կիլիկիայում:
- գ) Արճեշի ճակատամարտի արդյունքում զոհվեցին Բագրատունյաց, Մամիկոնյան, Գնունյաց և բազում այլ տոհմերից նախարարներ, ինչպես նաև ռամիկներ՝ մոտ երեք հազար հոգի:
- դ) Հայոց հզորագույն ապստամբության (850–855 թթ.) արդյունքում սասանվեց արաբական տիրապետությունը Հայաստանում:
- ե) Հայ–վրացական համագործակցության արդյունքում սելջուկներից ազատագրվեցին Հայաստանի հյուսիսային, կենտրոնական և հարավային հատվածները:
- զ) 1254 թ. հայ–մոնղոլական դաշինքի արդյունքում հայոց եկեղեցիներն ու վանքերն ազատվեցին հարկերից:
- է) Հեթումի և Ալիսի ամուսնության արդյունքում լուծվեց գահակալության խնդիրը, և հիմք դրվեց Հեթումյանների արքայատոհմին:

- 1) ա, գ, ե                      2) ե, գ, է                      3) ա, դ, զ                      4) բ, գ, ե

**16. Թվարկվածներից որո՞նք պատմական իրադարձությունների իրական պատճառ չեն.**

- ա) Բյուզանդիայի հետ 893 թ. կնքված պայմանագիրը պատճառ դարձնելով՝ Սաջան ամիրայի զորքերը ներխուժեցին Հայաստան:
- բ) Արմինիայի առաջին արաբ ոստիկանի դաժան հարկահանությունն ու կրոնական հալածանքները 748–750 թթ. ապստամբության պատճառ հանդիսացան:
- գ) 539 թ. հակաբյուզանդական ապստամբության պատճառը Հովհաննես Արշակունու սպանությունն էր:
- դ) 1259 թ. հակամոնղոլական ապստամբության պատճառը հարկերի բարձրացումն ու հայ–վրացական ջոկատներին Եգիպտոս՝ մամլուքների դեմ պատերազմ ուղարկելն էր:

ե) Թորոս I-ի կողմից Մանդալեի որդիներին մահապատժի ենթարկելու պատճառը հայոց Գագիկ II թագավորի սպանությունն էր:

զ) Մլեի Ռուբինյանի սպանության պատճառը իսլամական երկրների հետ գործակցելու իր քաղաքականությունն էր:

է) Սյունյաց և Արծրունյաց նախարարական տների միջև ծագած վեճի պատճառը Նախճավան քաղաքն էր:

1) ա, ե, է

2) ա, բ, գ

3) գ, դ, զ

4) բ, ե, զ

**17. Թվարկվածներից որոնք են պատմական իրադարձությունների իրական պատճառահետևանքային կապեր.**

ա) Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների հետևանքով սկսվել է հելլենիստական դարաշրջանը:

բ) Աքեմենյան բանակի ձախ թևի դիմադրության հետևանքով Ալեքսանդր Մակեդոնացին դադարեցրեց Դարեհի հետապնդումը և օգնության հասավ յուրայիներին:

գ) Թորոս II-ի կողմից Մանդալեի որդիներին մահապատժի ենթարկելու պատճառը հայոց Գագիկ II թագավորի սպանությունն էր:

դ) Մառիի ճակատամարտի արդյունքում հայկական զորքերը անհավասար մարտում պարտություն կրեցին, Հեթում I-ի որդի Լևոնը զոհվեց, իսկ Թորոսը գերի ընկավ:

ե) Մոնղոլների տիրապետության շրջանում երբեմնի վաճառաշահ Անի, Դվին, Արճեշ և այլ քաղաքներ վերածվեցին ավանների:

զ) Հայ-մոնղոլական պայմանագրի արդյունքում Կիլիկյան Հայաստանի եկեղեցիներն ու վանքերը ազատվեցին հարկերից:

է) Հովհաննես-Սմբատի կողմից Անին Բյուզանդիային կտակելու հետևանքով Բագրատունյաց թագավորությունն ավելի թուլացավ և կորցրեց գոյատևման հեռանկարը:

1) բ, ե, է

2) ա, ե, է

3) գ, դ, զ

4) ա, դ, զ

**18. Թվարկվածներից որոնք են պատմական իրադարձությունների իրական պատճառահետևանքային կապեր.**

1) Թեոդորոս Ռշտունուն ազատ արձակելու պատճառը Հայաստանը Բյուզանդական կայսրության ոլորտում պահելն էր:

2) Նախարարների հետ Տիրանի ունեցած բարդ հարաբերությունների հետևանքով կորուստներ կրեցին Արծրունյաց և Բզնունյաց նախարարական տոհմերը:

3) Ժառանգական նախարարական խոշոր հողատիրության աճի հետևանքով թագավորական հողատիրությունը կրճատվում և ամփոփվում էր Միջնաշխարհում գտնվող ոստանում:

4) Ավատատիրության խորացմամբ ծառայող ազնվականության հողատարածքները մասնատվում էին, ինչի հետևանքով մեծանում էին թագավորական, պետական հողերը:

- 5) Սելջուկների տիրապետության հաստատման հետևանքով Հայաստանի տարածքում ստեղծվեցին Երզնկայի, Տևրիկի, Կեսարիայի և Ադանայի սելջուկյան իշխանությունները:
- 6) Հայ-վրացական զինակցության արդյունքում սելջուկների լծից ազատվեցին Հայաստանի կենտրոնական ու հարավային շրջանները:
- 7) Զաբեյի և Հեթումի ամուսնությամբ վերջապես լուծվեց Կիլիկյան Հայաստանի գահակալության խնդիրը, և հիմք դրվեց Հեթումյանների արքայատոհմին:

**19. Թվարկվածներից որո՞նք պատմական իրադարձությունների իրական արդյունքներ չեն.**

- ա) Տիրանի հետ ունեցած բարդ հարաբերությունների արդյունքում հայոց զորքերի հրամանատարներ Արտավազդ և Վասակ Մամիկոնյանները հեռացան իրենց տոհմական աշխարհը՝ Տայք:
- բ) Սելևկյանների դեմ համառ ու երկարատև կռիվների արդյունքում Արտաշեսը Մեծ Հայքին միացրեց Տմորիք երկրամասը:
- գ) 591 թ. պարսկա-բյուզանդական բաժանման արդյունքում Հայաստանի մեծ մասն անցավ Պարսկաստանին:
- դ) 748-750 թթ. ապստամբության արդյունքում Արաբական խալիֆայությունը ստիպված էր Հովնանին նշանակել «Լեռան» կառավարիչ:
- ե) Հայերի 850-855 թթ. ապստամբության արդյունքում խալիֆայությունը ստիպված էր Սասուն գավառը դուրս բերել «Ջազիրա» նահանգից և միացնել Արմինիային:

- 1) բ, գ                                      2) բ, դ                                      3) գ, ե                                      4) ա, դ

**20. Թվարկվածներից որո՞նք պատմական իրադարձությունների իրական պատճառներ կամ հետևանքներ չեն.**

- 1) Հայ ժողովրդի դիմադրության համընդհանուր դառնալու պատճառը Պետոսի կողմից Արտաշատ մայրաքաղաքի ավերումն ու հռոմեացիների վայրագություններն էին:
- 2) Մլեհի դեմ կազմակերպված դավադրության պատճառը իսլամական երկրների հետ նրա գործակցելն էր:
- 3) Մոնղոլա-մամլուքյան երկարամյա հակամարտության արդյունքը մոնղոլների պարտությունն էր:
- 4) 1337 թ. հայ-եգիպտական հաշտության արդյունքում մամլուքները պարտավորվեցին վերաշինել Կիլիկիայի՝ իրենց կողմից ավերված քաղաքները՝ բացի Այաս նավահանգստի ծովային ամրություններից:
- 5) Ք. ա. 66 թ. Արտաշատի պայմանագրի արդյունքում Հայաստանը պահպանեց իր տարածքային ամբողջականությունն ու պետական անկախությունը:
- 6) Ունիթորների և հակաունիթորների պայքարի արդյունքում խախտվեց Կիլիկյան Հայաստանի հասարակության միասնությունը, թուլացավ երկիրը:
- 7) Թյուրք-սելջուկների քաղաքականության արդյունքում նոր վերելք ապրեցին հայկական քաղաքները:

**21. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են սխալ.**

- 1) Մծբինի հաշտության հետևանքը Հյուսիսային Միջագետքում Սասանյանների դիրքերի թուլացումն էր:
- 2) Խաղխաղի ճակատամարտի հետևանքը պարսից զորավար Միհրանի քանհազարանոց զորքի պարտությունն էր:
- 3) Գյուտ կաթողիկոսի՝ Տիգրան մեկնելու պատճառը Խոսրով Երկրորդի գումարած ժողովին մասնակցելն էր:
- 4) VII դարի կեսերի արաբական արշավանքների հետևանքը Սասանյան տերության կործանումն էր:
- 5) IX դարի վերջին Սաջյան ամիրայի՝ Հայաստան ներխուժելու պատճառը հայբյուզանդական 893 թ. կնքված պայմանագիրն էր:
- 6) Դենշապուհի աշխարհագրի հետևանքը Հայաստանում հարկերի անօրինակ ծանրացումն էր:
- 7) Անիի Բագրատունիներին ենթակա թագավորությունների առաջացման պատճառը զարգացած ավատատիրության շրջանում գոյություն ունեցող ավատատիրական մասնատվածությունն ու իշխանների կենտրոնախույս ձգտումներն էին:
- 8) Հայաստանում Չարմաղանի հաջողությունների պատճառը Զաքարյանների իշխանապետությունում ներիշխանական երկպառակություններն էին:

**22. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ:**

- 1) 1323 թ. հայ-եգիպտական պայմանագրի կնքման պատճառը մամլուքների կողմից Տարսոն և Մսիս քաղաքների գրավումն էր:
- 2) 1243 թ. Սիսի եկեղեցական ժողովի հետևանքը Քաղկեդոնի երկաթնակության դավանանքի ընդունումն էր:
- 3) 1441 թ. հրավիրված Էջմիածնի ժողովի հետևանքը Հայոց կաթողիկոսական նստավայրի տեղափոխումն էր Այրարատյան նահանգ:
- 4) 1216 թ. Արքունի խորհուրդը հրավիրելու պատճառը Անտիոքի դուքսի որդի Ֆիլիպին հայոց թագավոր հռչակելն էր:
- 5) 1137 թ. Հովհաննես Կոմնենոս կայսեր՝ Կիլիկիա արշավանքի պատճառը Թորոս I-ին միջերկրածովյան շրջանից դուրս մղելն էր:
- 6) Հայ իշխանների միջև առաջացած տարածայնություններին Սաջյան ամիրաների միջամտության առիթը Նախնական քաղաքի համար վեճն էր:
- 7) Վահանանց պատերազմի պատճառը Վախթանգ Գորգասալի կողմից Վազգեն բղեջիսի սպանությունն էր:
- 8) Վարդանանց պատերազմի արդյունքը հայոց երկրի ներքին ինքնուրույնության պահպանումն էր:

**23. Դվինի 506 և 554 թթ. ժողովների որոշումների արդյունքում՝**

- ա) պաշտպանվեց Հայոց եկեղեցու դավանաբանությունը բյուզանդական եկեղեցու ոտնձգություններից
  - բ) Նիկեայի ժողովի դավանաբանության վրա հաստատված գրություն կազմվեց
  - գ) Շահապիվանի ժողովի դավանաբանության վրա հաստատված գրություն կազմվեց
  - դ) պաշտպանվեց Հայոց եկեղեցու դավանաբանությունը հռոմեական եկեղեցու ոտնձգություններից
  - ե) Քաղկեդոնի ժողովի դավանաբանության վրա հաստատված գրություն կազմվեց
  - զ) դատապարտվեցին նեստորականների գործողությունները
  - է) պաշտպանվեց Հայոց եկեղեցու դավանաբանությունը Վրաց եկեղեցու ոտնձգություններից
- 1) ա, գ, է                      2) գ, ե, զ                      3) բ, դ, ե                      4) ա, բ, գ

**24. Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառներ կամ հետևանքներ.**

- ա) Ք. ա. 66 թ. Արտաշատի պայմանագրի արդյունքում Հայաստանը պահպանեց իր տարածքային ամբողջականությունն ու պետական անկախությունը:
  - բ) Հայ ժողովրդի դիմադրության համընդհանուր դառնալու պատճառը Պետոսի կողմից Արտաշատ մայրաքաղաքի ավերումն ու հռոմեացիների վայրագություններն էին:
  - գ) Մլեհի դեմ կազմակերպված դավադրության պատճառը իսլամական երկրների հետ նրա գործակցելն էր:
  - դ) Թյուրք-սելջուկների քաղաքականության արդյունքում նոր վերելք ապրեցին հայկական քաղաքները:
  - ե) Մոնղոլա-մամլուքյան երկարամյա հակամարտությունն ավարտվեց մամլուքների պարտությամբ:
  - զ) 1337 թ. հայ-եգիպտական հաշտության արդյունքում մամլուքները պարտավորվեցին վերաշինել Կիլիկիայի՝ իրենց կողմից ավերված քաղաքները՝ բացի Այաս նավահանգստի ծովային ամրություններից:
  - է) Ունիթորների և հակաունիթորների պայքարի արդյունքում խախտվեց Կիլիկյան Հայաստանի հասարակության միասնությունը, թուլացավ երկիրը:
- 1) ա, բ, գ                      2) ա, գ, է                      3) բ, դ, ե                      4) դ, գ, է

**25. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

- ա) Մծբինի հաշտության հետևանքը Հյուսիսային Միջագետքում հռոմեացիների դիրքերի թուլացումն էր:
- բ) Դենշապուհի աշխարհագրի հետևանքը Հայաստանում հարկերի անօրինակ ծանրացումն էր:

- գ) Խաղխաղի ճակատամարտի հետևանքը պարսից զորավար Միհրանի քսանհազարանոց զորքի պարտությունն էր:
  - դ) Գյուտ կաթողիկոսի՝ Տիգրան մեկնելու պատճառը Խոսրով II-ի գումարած ժողովին մասնակցելն էր:
  - ե) VII դարի կեսերի արաբական արշավանքների հետևանքը Սասանյան տերության կործանումն էր:
  - զ) IX դարի վերջին Սաջյան ամիրայի՝ Հայաստան ներխուժելու պատճառը հայբյուզանդական 893 թ. կնքված պայմանագիրն էր:
  - է) Անիի Բագրատունիներին ենթակա թագավորությունների առաջացման պատճառը ուշ միջնադարին բնորոշ ավատատիրական մասնատվածությունը և հայ իշխանների կենտրոնաձիգ քաղաքականությունն էին:
  - ը) Հայաստանում Չարմաղանի հաջողությունների պատճառը Չաքարյանների իշխանապետությունում ներիշխանական երկպառակություններն էին:
- 1) ա, դ, ը                    2) գ, զ, է                    3) բ, ե, ը                    4) ա, բ, է

**26. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են սխալ:**

- ա) Վարդանանց պատերազմի արդյունքը հայոց երկրի ներքին ինքնուրույնության պահպանումն էր:
  - բ) Վահանանց պատերազմի պատճառը Վախթանգ Գորգասալի կողմից Վազգեն բղեշխի սպանությունն էր:
  - գ) Հայ իշխանների միջև առաջացած տարաձայնություններին Սաջյան ամիրաների միջամտության առիթը Նախնավան քաղաքի համար վեճն էր:
  - դ) 1137 թ. Հովհաննես Կոմնենոս կայսեր՝ Կիլիկիա արշավանքի պատճառը Թորոս I-ին միջերկրածովյան շրջանից դուրս մղելն էր:
  - ե) Անտիոքի դուքսի որդի Ֆիլիպին հայոց գահից զրկեցին նրա ոչ հայամետ քաղաքականության պատճառով:
  - զ) 1243 թ. Սիսի եկեղեցական ժողովի հետևանքը Քաղկեդոնի երկաթնակության դավանանքի ընդունումն էր:
  - է) 1441 թ. հրավիրված Էջմիածնի ժողովի հետևանքը Հայոց կաթողիկոսական նստավայրի տեղափոխումն էր Այրարատյան նահանգ:
- 1) բ, դ, զ                    2) ա, գ, է                    3) բ, ե, է                    4) ա, գ, զ

## 6. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### 6-1. Ընտրովի և կարճ (ժամանակագրական դասավորության խախտմամբ) պատասխանով առաջադրանքներ

#### 1. Դեպքերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Վաչե Մամիկոնյանի զորքի հաղթանակը մագքութների նկատմամբ Օշականի մոտ
- բ. Գրիգորիսի՝ եպիսկոպոս ձեռնադրվելը
- գ. Տրդատ II-ի հեռանալը Հռոմեական կայսրության սահմաններ
- դ. Վաղարշապատ մայրաքաղաքի հիմնումը
- ե. Վրթանես կաթողիկոսի վախճանվելը
- զ. Հուլիանոս Ուրացոյ կայսեր մահը
- է. Սոհեմոս-Տիգրանի վերադարձը հայոց գահին
- ը. «Ամոթալի» պայմանագրի կնքումը
- թ. Արշակավանի հիմնումը
- ժ. Տիրանի բնակություն հաստատելը Կուաշում

- 1) է, դ, բ, գ, ե, ա, ժ, թ, ը, զ
- 2) է, դ, բ, գ, ե, ա, թ, ժ, ը, զ
- 3) դ, է, գ, բ, ա, ե, ժ, թ, գ, ը
- 4) դ, է, գ, բ, ա, ե, թ, ժ, գ, ը

#### 2. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Թավրիզի գրավումը Սելիմ Ահեդի կողմից
- բ. Կոստանդնուպոլսի գրավումը օսմանների կողմից
- գ. Սեֆյանների պետության հիմնադրումը
- դ. Ամասիայի հաշտության պայմանագրի կնքումը
- ե. Չալդրանի ճակատամարտը

- 1) բ, գ, ե, ա, դ
- 2) գ, բ, ա, դ, ե
- 3) գ, ե, բ, ա, դ
- 4) բ, գ, ե, դ, ա

#### 3. Վահանանց պատերազմի շրջանի իրադարձություններից դրն է տեղի ունեցել յոթերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. Նվարսակի պայմանագրի կնքումը
- բ. Ակոռիի ճակատամարտը
- գ. Հազարավուխտի գլխավորած պարսից զորքերի ներխուժումը Արտաշատի շրջակա տարածքը
- դ. պարսիկ պաշտոնյա Նիխորի ուղարկվելը Հայաստան
- ե. Սահակ Բագրատունու և Վասակ Մամիկոնյանի զոհվելը

- գ. պարսից թագավոր Վաղարշ Սասանյանի գահակալության սկիզբը
- է. Վարդ Մամիկոնյանի փախուստը պարսից պատանդությունից
- ը. պարսից գնդի ջախջախումը Կարնո գավառի Արծաթի գյուղի մոտ

- 1) գ
- 2) զ
- 3) դ
- 4) ա

**4. Իրադարձություններից որո՞նք են խախտում ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- ա. Տրդատ II-ի հաստատվելը հայոց գահին
- բ. Միլանի հրովարտակի ընդունումը
- գ. Հռիփսիմեի նահատակությունը
- դ. Գրիգոր Լուսավորչի եպիսկոպոս ձեռնադրվելը Մաժակում (Կեսարիայում)
- ե. Արիստակես կաթողիկոսի սպանությունը
- զ. Արշակավանի կառուցումը
- է. Խոսրով IV-ի ձերբակալությունը և գերեվարությունը Պարսկաստան
- ը. Դվին քաղաքի կառուցումը
- ժ. Արտաշես Արշակունու գահակալությունը

- 1) դ, է
- 2) գ, զ
- 3) բ, ը
- 4) բ, գ

**5. VI դարում Հայաստանում կատարված անցուդարձերը դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության.**

- ա. Վարդան Կրտսերի գլխավորությամբ հայերի ապստամբության սկիզբը
- բ. Վասակ Մամիկոնյանի որդի Մանվելի սպանությունը
- գ. Բաբգեն Ա-ի կողմից եկեղեցական ժողովի հրավիրումը Դվինում
- դ. Վահրամ Չուբինի կողմից հայոց թագավորությունը վերականգնելու առաջարկով նամակ հղելը Մուշեղ Մամիկոնյանին
- ե. Արտավան Արշակունու մասնակցությունը Հուստինիանոս I-ի դեմ կազմակերպված խռովությանը
- զ. Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումը
- է. Խոսրով I Անուշիրվանի գահակալության ավարտը

- 1) գ, ե, բ, ա, է, դ, զ
- 2) գ, բ, դ, ե, ա, զ, է
- 3) բ, գ, է, դ, ա, ե, զ
- 4) գ, ե, ա, բ, դ, զ, է

**6. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. Բռնեմունդ IV-ի որդի Ֆիլիպի հռչակվելը հայոց թագավոր
- բ. մոնղոլների և դաշնակիցների պարտություն կրելը մամլուքներից Ասորիքի համար պայքարում
- գ. Անտիոքի գրավումը և իշխանության հանձնումը Ռայմոնդ-Ռուբենին Լևոն Մեծագործի կողմից
- դ. Հեթումյան արքայատոհմի հաստատումը Կիլիկյան Հայաստանում
- ե. Մեհի և Հալեպի ամիրայի միջև դաշինքի կնքումը
- զ. մոնղոլների ներխուժումը Այսրկովկաս՝ Կոտմանի ճակատամարտը

է. իշխան Լևոն I-ի կողմից Մսիս, Ադանա և Տարսոն քաղաքների գրավումը  
ը. Կոստանդին թագավորահոր մեկնումը մոնղոլական զորահրամանատար Բաչուի մոտ  
թ. Թորոս II-ի փախուստը և վերադարձը Կիլիկիա  
ժ. Իկոնիայի սուլթանության զորքի պարտությունը Չմանկատուկի ճակատա-  
մարտում

- 1) թ, ժ, է, բ, ը, դ, ե, գ, ա, գ
- 2) է, թ, ե, գ, զ, ա, դ, ժ, ը, բ
- 3) է, գ, զ, ժ, թ, դ, ե, ա, բ, ը
- 4) թ, է, գ, ե, գ, ա, ժ, դ, ը, բ

**7. Մեջբերումները դասավորել ըստ դրանց համապատասխան իրադարձությունների ժամանակագրական հաջորդականության.**

- ա. «Հայոց տան տերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ տալիս հայոց երկիրը»:  
բ. «Եվ տիրապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների՝ ավելի, քան իր եղբայրը, և չկար մեկը, որ սարսափ պատճառեր Հայաստանին»:  
գ. «Մենք ամենքս պատրաստ ենք մեռնելու, բայց չենք մեռնի, մինչև չոչնչացնենք մեր թշնամիներին»:  
դ. «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար»:

- 1) դ, բ, գ, ա                      2) դ, ա, բ, գ                      3) գ, դ, ա, բ                      4) բ, դ, ա, գ

**8. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) հայոց Աբգար թագավորի գահակալումը
- 2) «Ամոթալի» պայմանագրի կնքումը
- 3) Խոսրով IV-ի նենգորեն ձերբակալվելը պարսիկների կողմից
- 4) Վարազդատի գահակալման սկիզբը Հայաստանում
- 5) Բատ Սահառունու մահապատիժը
- 6) Խաղամախայի ճակատամարտը
- 7) Սահակ Բագրատունի ասպետին հայոց մարզպան նշանակելը
- 8) Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև «հավիտենական» հաշտության կնքումը

**9. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Շահապիվանի եկեղեցական ժողովը
- 2) Պերոզի գահակալության սկիզբը
- 3) Վաչագան Բարեպաշտի գահ բարձրանալը Հայոց Արևելից կողմում
- 4) դեպի Գանձակ Մուշեղ սպարապետի զորքով շարժվելը
- 5) Հովսեփի Վայոցձորցի կաթողիկոսի նահատակվելը
- 6) Վախթանգ Գորգասալ թագավորի գահակալության ավարտը
- 7) Դվինի առաջին եկեղեցական ժողովի գումարումը
- 8) Վարազտիրոց իշխանի գերությունից հայրենիք վերադառնալը
- 9) Զվարթնոցի տաճարի կառուցման ավարտը

**10. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Սևանի ճակատամարտը
- 2) Անիի հռչակվելը մայրաքաղաք
- 3) Աշոտ Ողորմածի գահակալման ավարտը
- 4) Բագրատունիների նստավայրի տեղափոխումը Բագարան
- 5) Գագիկ Աբասյանի հաստատվելը Կարսի թագավորության գահին
- 6) Ապլլարիպ Արծրունու նշանակվելը Կիլիկիայի ստրատեգոս
- 7) Սյունիքի թագավորության հիմնումը
- 8) Երուսաղեմի թագավորության հիմնումը

**6-II. Կարճ (վանդակավոր) պատասխանով առաջադրանքներ**

**1. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Դվին քաղաքի բարեկարգումը և արքունի ապարանքի կառուցումը
- 2) Մայր տաճար Ս. Էջմիածնի կառուցումը
- 3) Շապուհ II Երկարակյացի գահ բարձրանալը
- 4) Գրիգոր Լուսավորչին եպիսկոպոսապետ կարգելը
- 5) հայոց Աբգար թագավորի գահակալումը
- 6) Հռիփսիմյան քույրերի փախուստը Հայաստան

**2. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) «Ամրթալի» պայմանագրի կնքումը
- 2) հայրենիքի համար իրենց կյանքը զոհաբերողներին սուրբ նահատակների շարքին դասելու մասին օրենքի սահմանումը Վրթանես կաթողիկոսի կողմից
- 3) հայոց թագավորների ոսկորների վերաթաղումը Աղձք գյուղում
- 4) Օտա Ամատունուն հայոց հազարապետ նշանակելը
- 5) Օշականի Յլու գլուխ լեռան մոտ տեղի ունեցած ճակատամարտը
- 6) Արշակ III-ի գահակալումը

**3. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Վարազդատի գահակալումը Հայաստանում
- 2) Մեծ Հայքի արևմտյան մասի կառավարման հանձնումը կուսակալներին (կոմեսներին)
- 3) Շահապիվանի եկեղեցական ժողովը
- 4) պարսից արքայի համաձայնությամբ Կամսարականների և Ամատունիների նորից տեղ դառնալը իրենց տոհմական տիրույթներին
- 5) պարսից Շապուհի բազմելը հայոց գահին
- 6) Արշակ թագավորի մեկնելը Պարսկաստան Վասակ սպարապետի ուղեկցությամբ

**4. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Հովսեփ Վայոցձորցի կաթողիկոսի նահատակվելը
- 2) Սահակ Պարթևի վախճանվելը

- 3) Խոսքով IV-ի մահը
- 4) Հովհաննես Ա Մանդակունի կաթողիկոսի նշանակվելը մեծ դատավոր
- 5) «Հավատո հանգանակ»-ի սահմանումը առաջին տիեզերական ժողովի կողմից
- 6) Գյուտ կաթողիկոսի բարձրանալը Հայոց կաթողիկոսական աթոռին

**5. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) հայոց իշխանության անցումը Վարդ Պատրիկին
- 2) Սահակ Բագրատունի ասպետին հայոց մարզպան նշանակելը
- 3) Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև «հավիտենական» հաշտության կնքումը
- 4) Նվարսակի պայմանագրի կնքումը
- 5) Քաղկեդոնի IV ժողովը
- 6) Հայոց տանուտեր Սահակ Բագրատունու և Վասակ Մամիկոնյանի զոհվելը

**6. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Արտաշատի եկեղեցական ժողովը
- 2) Արշակունյաց Հայաստանի վերջին թագավորի գահ բարձրանալը
- 3) «Պտղի և տասանորդների կարգի» վերացումը հայոց արքայի կողմից
- 4) Գյուտ կաթողիկոսի մեկնելը Տիզբոն
- 5) Դենշապուհի կողմից Արևելյան Հայաստանում աշխարհագիր անցկացնելը
- 6) Խոսքով IV-ի մահը

**7. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) բյուզանդական կայսեր կողմից Ներսեհ Կամսարականին հայոց իշխան ճանաչելը
- 2) Խոսքով II-ի գումարած ժողովը Տիզբոնում
- 3) Արշակ Արշակունու կազմակերպած խռովությունը բյուզանդական կայսեր դեմ
- 4) Արմինիա փոխարքայության ստեղծումը
- 5) Վարդանի (Վարդան Կրտսերի) գլխավորած ապստամբությունը
- 6) Պարսկաստանի արևելյան շրջանների զորքերի հրամանատար Վահրամ Չուբինի ապստամբությունը

**8. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Կոստանդին II-ի բանակի ներխուժումը Հայաստան
- 2) «Արյան լճի» մոտ տեղի ունեցած ճակատամարտը
- 3) Մավրիկիոսի կայսր հռչակվելը Բյուզանդիայում
- 4) Արծնիի ճակատամարտը
- 5) Վրաց եկեղեցու անջատվելը Հայ եկեղեցուց
- 6) Սահակ Ձորոփորցի կաթողիկոսի կողմից նամակով դիմելը արաբ հրամանատարին՝ հայոց հավատը ճանաչելու համար

**9. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Գրիգոր և Դավիթ Մամիկոնյան եղբայրների գլխավորած ապստամբությունը
- 2) հայ ապստամբների դիմումը պարսից Խոսքով Անուշիրվան արքային և նրա կողմից Բյուզանդիային պատերազմ հայտարարելը

- 3) Վարազտիրոց իշխանի՝ գերությունից հայրենիք վերադառնալը
- 4) Թեոդորոս Ռշտունուն ազատ արձակելը Կոստաս կայսեր կողմից
- 5) Արճեշի ճակատամարտը
- 6) Բագրատունիների նստավայրի տեղափոխումը Բագարան

**10. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Հայոց կաթողիկոսության տեղափոխումը Արգինայի վանք
- 2) Դվինի ամիրայության միացումը Բագրատունյաց թագավորությանը
- 3) Շիրակավանի եկեղեցական ժողովը
- 4) Սմբատ II-ի գահակալման սկիզբը
- 5) Տարոնի իշխանության միացումը Բյուզանդական կայսրությանը
- 6) Քթիշ ամրոցի մոտ մեկամյա պաշտպանությունը

**11. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) մեզ հասած ամբողջական մանրանկարներով զարդարված առաջին ձեռագրի ստեղծումը
- 2) Աշոտ III-ին թագադրելու հանդիսությունները
- 3) Սմբատի փոխարեն Գագիկ Արծրունուն խալիֆի կողմից Հայաստանի թագավոր ճանաչելը
- 4) Գուրգենի կողմից Կյուրիկյան հարստության հիմնումը
- 5) Անիի Սմբատաշեն պարիսպների կառուցումը
- 6) Բջնիի նշանավոր ամրոցի կառուցումը

**12. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Ապլարիպ Արծրունու նշանակվելը Կիլիկիայի ստրատեգոս
- 2) Եդեսիայի կոմսության հիմնումը
- 3) Աշոտ IV-ի մահը
- 4) Մարմաշենի կառուցումը
- 5) Փոքր Ասիայում սելջուկյան պետության իշխանության հաստատումը
- 6) Աշոտ Երկաթի կողմից հակաարաբական դաշինքի կնքումը Կոստանդնուպոլսում

**13. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Անիի հանձնումը Շադդադյաններին
- 2) Հովհաննես-Սմբատի մահը
- 3) Ծամնդավ բերդաքաղաքի հանձնումը Գագիկ Կարսեցուն
- 4) Սեբաստիայի գրավումը մոնղոլների կողմից
- 5) Գող Վասիլի իշխանության անկումը
- 6) Տաշիր-Ձորագետի թագավորության վերացումը

**14. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) բանակցությունները Տրապիզոնում Բյուզանդիայի և Վրաստանի միջև
- 2) Մառիի ճակատամարտը
- 3) Չարմաղանի զորքերի ներխուժումը Հայաստան

- 4) վրաց թագավորի մասնակցությամբ հայ և վրաց իշխանների նախապատրաստվելը մոնղոլների դեմ ապստամբության
- 5) հայ իշխան Ռուբենի ամրանալը Կոռոմոզոլ բերդում
- 6) մոնղոլների ձեռնամուխ լինելը Ասորիքի նվաճմանը

**15. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Գրիգոր Զ Ապիրատի բազմելը հայոց կաթողիկոսական աթոռին
- 2) Բերդուսի ճակատամարտը
- 3) հայոց կաթողիկոս Կոստանդին Լամբրոնացու մեկնումը Կահիրե՝ հաշտության պայմանագրի կնքելու համար
- 4) Խաչենի տիրակալ Հասան-Ջալալին և Ջաքարե Ջաքարյանին մահապատժի ենթարկելը
- 5) Գանձասարի վանքի դառնալը Աղվանից եկեղեցու կաթողիկոսանիստ կենտրոն
- 6) Սարգիս Ջաքարյանի՝ ամիրսպասալարի պաշտոն ստանալը

**16. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Մեսրոպ Արտազեսի կաթողիկոսի՝ Ստում հրավիրած եկեղեցական ժողովը
- 2) Հայոց կաթողիկոսության փոխադրումը Սիս
- 3) Իկոնիայի սուլթանության տարածքում տեղակայված մոնղոլական զորքերի և թուրքմենների ներխուժումը Կիլիկիա
- 4) Կ. Պոլսի գրավումը Օսմանյան պետության կողմից
- 5) Պաղտին մարաջախտի որդի Կոստանդինին թագավոր ընտրելը
- 6) Կիլիկիայի հայոց թագավոր Հեթում II-ի սպանությունը

**17. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Ստեփանոս Սալմաստեցու գլխավորած պատվիրակության վերադարձը Էջմիածին
- 2) Իսքանդար Կարա-կոյունլուի գահակալումը որպես «Շահ-ի Արման»
- 3) Չալդրանի ճակատամարտը
- 4) Գանձասարի վանքի դառնալը Աղվանից եկեղեցու կաթողիկոսանիստ կենտրոն
- 5) Սմբատ Արծրունու օժվելը հայոց թագավոր
- 6) Ստում հրավիրված եկեղեցական ժողովը, որը չեղյալ հայտարարեց Սսի և Ադանայի նախորդ ժողովների որոշումները

**18. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Հայկական տպարանի հիմնումը Նոր Ջուղայում
- 2) Հին Ջուղայի 10 000 խաչքարերի ոչնչացումը
- 3) Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսի հրավիրած գաղտնի խորհրդակցությունը
- 4) Կասրե-Շիրինի պայմանագրի կնքումը
- 5) Օսմանյան պետության հիմնադրումը
- 6) Լենկ Թեմուրի արշավանքները

**19. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Աբգար դպիրի կողմից «Տոնացոյց»-ի հրատարակումը Կ. Պոլսում
- 2) Սմբատ Արծրունու օժվելը հայոց թագավոր

- 3) հայկական տպարանի հիմնումը Նոր Զուղայում
- 4) Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության հիմնումը
- 5) Կիրակոս Վիրապեցու ընտրվելը Հայոց կաթողիկոս
- 6) Կասրե-Շիրինի պայմանագրի կնքումը

**20. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) «Թուրթ ընդհանրականի» գրվելը, ուր արձանագրված են ամուսնաընտանեկան որոշ նորմեր
- 2) Թալինի նշանավոր եկեղեցու կառուցումը
- 3) Ս. Գայանե եկեղեցու կառուցումը
- 4) Ավանի եկեղեցու կառուցումը
- 5) Արուճ ավանում Ս. Գրիգոր եկեղեցու շինարարության ձեռնարկումը
- 6) Մրենի եկեղեցու կառուցումը

**21. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Համազասպ Մամիկոնյանի ճանաչվելը հայոց իշխան
- 2) պարսիկ Սուրենին Հայաստանում մարզպան նշանակելը
- 3) «Հայոց մեծ թվականի» սահմանվելը
- 4) Կոմիտաս Մամիկոնյանի օծվելը հայոց կաթողիկոս
- 5) Բաբգեն Ա-ի հրավիրած եկեղեցական ժողովը Դվինում
- 6) Պարսկաստանի արևելյան շրջանների զորքերի հրամանատար Վահրամ Չուբինի գլխավորած ապստամբությունը

**22. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Դողսի ճակատամարտը
- 2) Սանահինի և Հաղպատի նշանավոր վանքերի հիմնումը
- 3) Մակեդոնական կամ Հայկական հարստության հիմնումը Բյուզանդիայում
- 4) Գանձակի աթաբեկության ձևավորումը պատմական Ուտիքում
- 5) Աշոտ Բագրատունուն հայոց իշխանաց իշխան ճանաչելը
- 6) հայ-վրացական ուժերի տարած հաղթանակը Ապահունիքի Ծումբ գյուղի մոտ

**23. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Միրիոկեֆալոնի ճակատամարտը
- 2) Սսի դառնալը Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք
- 3) Կոստանի դաշտում տեղի ունեցած ճակատամարտը
- 4) խաչակրաց երրորդ արշավանքի սկիզբը
- 5) Անտիոքի իշխանության ստեղծումը
- 6) խաչակիրների առաջին մուտքը Կիլիկիա և Դաշտային Կիլիկիայի քաղաքների նվաճմանը ձեռնամուխ լինելը

**24. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Լևոն II-ի կողմից Անտիոքի իշխանության հանձնումը Ռայմոնդ-Ռուբենին
- 2) Վասպուրականի թագավորության անկումը
- 3) Հենրիխ VI-ի կողմից թագ ուղարկելը Լևոն II-ին

- 4) հայ խաղաղ բնակչության կոտորածը Մանանադիի Սմբատաբերդ լեռան մոտ
- 5) Գրիգոր Զ Ապիրատի բազմելը հայոց կաթողիկոսական աթոռին
- 6) Գագիկ II-ի գահակալման սկիզբը

**25. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Օշինի գահ բարձրանալը
- 2) խաչակրաց երրորդ արշավանքի սկիզբը
- 3) Հեթում II-ի գահակալման ավարտը
- 4) հայ-վրացական ուժերի կողմից Շահ-Արմենների նստավայր Էսլաթի պաշարումը
- 5) Լևոն Մեծագործի մահը
- 6) Չմանկատուկի ճակատամարտը

**26. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Սեֆյանների պետության հիմնումը
- 2) Գառնի գյուղի բնակիչների ընդդիմանալը գաղթի հրամանին
- 3) Լենկ Թեմուրի արշավանքները
- 4) Ամասիայում թուրք-պարսկական հաշտության պայմանագրի կնքումը
- 5) Չալդիրանի ճակատամարտը
- 6) Լվովում հայկական տպարանի հիմնումը

**27. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Ամբերդի ազատագրումը հայ-վրացական ուժերի կողմից
- 2) Այուբյան սուլթանի կողմից Երուսաղեմի գրավումը
- 3) հայ-մոնղոլական դաշինքի կնքումը
- 4) Անիի վերջնական ազատագրումը հայ-վրացական ուժերի կողմից
- 5) Փիլարտոս Վարաժնունու իշխանության հիմնումը
- 6) Դիոգենես կայսեր գերեվարումը

**28. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Շահապիվանի եկեղեցական ժողովի գումարումը
- 2) հայոց թագավորների ոսկորների վերաթաղումը Աղծք գյուղում
- 3) Օշականի Յլու գլուխ լեռան մոտ տեղի ունեցած ճակատամարտը
- 4) հայոց կաթողիկոս Բաբգեն Ա-ի գլխավորությամբ Դվինում եկեղեցական ժողովի գումարումը
- 5) Վրթանես Ա Պարթևի բազմելը հայոց կաթողիկոսական գահին
- 6) Խոսրով III-ի գահակալման սկիզբը

**29. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Խոսրով IV-ի երկրորդ անգամ բազմելը հայոց գահին
- 2) Կոզովիտ գավառում Արշակավան քաղաքի կառուցումը
- 3) Մուշեղի հրամանատարությամբ հայոց զորքի հաղթանակը պարսկական ուժերի նկատմամբ Գանձակի մոտ

- 4) Վաչագան Բարեպաշտի գահ բարձրանալը
- 5) Մուշեղի հրամանով կանանոցի վերադարձնելը Շապուհին
- 6) Ձիրավի ճակատամարտը

**30. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Ներսեհ Կամսարականի ճանաչվելը հայոց իշխան բյուզանդական կայսեր կողմից
- 2) Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև «հավիտենական» կոչված հաշտության կնքումը
- 3) Կոմիտաս Մամիկոնյան և Մաթեոս Ամատունի եպիսկոպոսների ու Սմբատ Բագրատունու մասնակցությունը Տիզբոնի ժողովին
- 4) «Հայոց մեծ թվականի» սահմանվելը
- 5) Խաչափայտի ազատագրումը և վերադարձը Երուսաղեմ
- 6) Արշակ Արշակունու մասնակցությունը բյուզանդական կայսեր դեմ կազմակերպված խռովությանը

**31. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Ապլլարիպ Արծրունի իշխանի տեղափոխվելը Կիլիկիա
- 2) Տաշիր-Ձորագետի թագավորության վերացումը
- 3) Ապահունիքի Ծումբ գյուղի մոտ հայ-վրացական ուժերի հաղթանակը Մամլան ամիրայի նկատմամբ
- 4) Տայքի միացումը Բյուզանդական կայսրությանը
- 5) Տարոնի իշխանության միացումը Բյուզանդական կայսրությանը
- 6) Խաչակրաց առաջին պետության հիմնումը Արևելքում

**32. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Բերդուսի ճակատամարտը
- 2) Մրենի եկեղեցու կառուցումը
- 3) Ղևոնդ Վարդապետի «Պատմութիւն» երկի ստեղծումը
- 4) Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի ստեղծումը
- 5) Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» կազմումը
- 6) Ծամնդավ բերդաքաղաքի հանձնումը Գագիկ Կարսեցուն

## 7. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ

### 7-1. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Պատմական իրադարձությունը համապատասխանեցնել տարեթվին և գործիչ անվանը.

N	Իրադարձությունը	N	Տարեթիվը	N	Գործիչը
1	Մոնղոլների հաղթանակը Խորեզմի շահի որդու նկատմամբ	1	1048	1	Դիոգենես
2	Լոռվա թագավորության մտնելը վրացական պետության կազմի մեջ	2	1071	2	Գագիկ II
3	Բյուզանդացիների պարտությունը Մանազկերտի ճակատամարտում	3	1113	3	Ջալալեդդին
4	Սելջուկյան երկրորդ արշավանքը	4	1231	4	Դավիթ Շինարար
		5	1074	5	Գթլմուշ

1	4	3
2	3	4
3	2	1
4	1	5

1)

1	4	3
2	3	4
3	1	1
4	2	5

2)

1	1	2
2	5	1
3	2	3
4	3	4

3)

1	4	2
2	3	4
3	2	1
4	1	5

4)

2. Համապատասխանեցնել իշխանական տները և նրանց պատկանած տիրույթները.

1) Օրբելյաններ

2) Վաչուտյաններ

ա. Արցախ (Խաչեն)

բ. Սյունիք

1) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա

2) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

3) Պոռոջաններ

4) Հասան-Ջալալյաններ

գ. Վայոց ձոր

դ. Արագածոտն

ե. Ջավախք

3) 1-դ, 2-ե, 3-գ, 4-ա

4) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ

### 3. Կատարել համապատասխանեցում.

- 1) Վանի թագավորության զինված ուժերի ընդհանուր թիվը Սարգուրի II-ի օրոք
- 2) Հայկազուն-Երվանդականների օրոք ռազմադաշտ դուրս բերվող հայոց բանակի թիվը
- 3) Արշակունիների օրոք հայոց կանոնավոր բանակի թիվը
- 4) Բագրատունիների օրոք պատերազմների ժամանակ հայոց զորքի թիվը
- 5) Կիլիկյան հայոց պետությունում պատերազմների ժամանակ հայոց զորքի թիվը

ա. 48 հազար

դ. 100-120 հազար

բ. 80-100 հազար

ե. 300 հազար

գ. 90-100 հազար

զ. 350 հազար

1) 1-գ, 2-ա, 3-դ, 4-գ, 5-բ

2) 1-ե, 2-ա, 3-գ, 4-դ, 5-բ

3) 1-ե, 2-գ, 3-դ, 4-բ, 5-ա

4) 1-գ, 2-գ, 3-բ, 4-դ, 5-ա

### 4. Տարբերել համապատասխանեցնել իրադարձություններին.

- 1) Աշտիշատի եկեղեցական ժողովի գումարումը
- 2) Ձիրավի ճակատամարտը
- 3) «Ամոթալի» պայմանագրի կնքումը
- 4) Վաղարշապատի Ս. Էջմիածին տաճարի կառուցումը
- 5) Հայաստանում քրիստոնեության հռչակումը պետական կրոն

ա. 371 թ.

դ. 363 թ.

բ. 301 թ.

ե. 303 թ.

գ. 370 թ.

զ. 354 թ.

1) 1-գ, 2-գ, 3-դ, 4-բ, 5-ե    3) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ, 5-ե

2) 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե, 5-բ    4) 1-գ, 2-ա, 3-դ, 4-ե, 5-բ

### 5. Հայոց սպարապետների անունները համապատասխանեցնել պատմական իրադարձություններին.

- 1) Ձիրավի ճակատամարտը
- 2) Պարսկական զորքի ջախջախումը, հայոց թագավորների ոսկորների ազատումը և վերաթաղումը Աղձք գյուղում
- 3) Օշականի Յլու գլուխ լեռան ճակատամարտը
- 4) Խաղխաղի ճակատամարտը

ա. Արտավազդ Մամիկոնյան

դ. Վասակ Մամիկոնյան

բ. Վաչե Մամիկոնյան

ե. Մուշեղ Մամիկոնյան

գ. Վարդան Մամիկոնյան

1) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ

3) 1-գ, 2-դ, 3-ե, 4-բ

2) 1-ե, 2-դ, 3-բ, 4-գ

4) 1-ե, 2-դ, 3-բ, 4-ա

**6. Նախարարական տոհմերի անունները համապատասխանեցնել իրենց կողմից ղեկավարվող գործակալությունների անվանումներին.**

- |                       |                       |
|-----------------------|-----------------------|
| 1) մաղխազություն      | 3) սպարապետություն    |
| 2) հազարապետություն   | 4) ասպետություն       |
| ա. Արծրունիներ        | դ. Մամիկոնյաններ      |
| բ. Խորխոռունիներ      | ե. Ամատունիներ        |
| գ. Բագրատունիներ      |                       |
| 1) 1-ա, 2-ե, 3-դ, 4-բ | 3) 1-բ, 2-դ, 3-ե, 4-գ |
| 2) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ե | 4) 1-բ, 2-ե, 3-դ, 4-գ |

**7. Պատմիչների անունները համապատասխանեցնել Արշակունիների արքայատոհմի գահակալության ժամանակաշրջանի իրադարձությունների և գործիչների վերաբերյալ իրենց խոսքերին.**

- 1) «...եթե կարողանաս հաղթել նրանց և պարտադրես ծառայելու, ես նրանց թիկունքը չեմ պաշտպանի»:
- 2) «Հայոց նախարարներին անցավ թագավորությունը, որովհետև թեպետև հարկը պարսից արքունիքն էր գնում, սակայն հայոց այրուձին ամբողջապես նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ»:
- 3) «Հայոց թագավորը վերադարձավ մեծ հաղթությամբ, շատ ավարով ու ցնձալից ուրախությամբ. նա վերադարձավ Հայաստան՝ Այրարատ գավառը՝ Վաղարշապատ քաղաքը. եկավ մեծ ուրախությամբ, բարի անունով ու շատ ավարով»:
- 4) «Նա հավատարիմ պահպան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները՝ հույների և հռոմայեցիների մեջ»:

- |                       |                       |
|-----------------------|-----------------------|
| ա. Ղազար Փարպեցի      | դ. Արիանոս            |
| բ. Փավստոս Բուզանդ    | ե. Եղիշե              |
| գ. Մովսես Խորենացի    |                       |
| 1) 1-ա, 2-բ, 3-դ, 4-ե | 3) 1-ա, 2-ե, 3-դ, 4-գ |
| 2) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ե | 4) 1-բ, 2-ե, 3-գ, 4-դ |

**8. Արշակունիների արքայատոհմի արքաների անունները համապատասխանեցնել գահակալության տարիներին.**

- |                |                     |
|----------------|---------------------|
| 1) 370-374 թթ. | 6) 374-378 թթ.      |
| 2) 385-388 թթ. | 7) 350-368 թթ.      |
| 3) 330-338 թթ. | 8) 378-387 թթ.      |
| 4) 388-414 թթ. | 9) 422-428 թթ.      |
| 5) 338-350 թթ. |                     |
| ա. Արտաշես     | գ. Արշակ II         |
| բ. Պապ         | է. Խոսրով III Կոտակ |
| գ. Տիրան       | ը. Արշակ III        |

դ. Վարազդատ  
ե. Խոսրով IV

թ. Վռամշապուհ  
ժ. Տրդատ III

- 1) 1-ա, 2-բ, 3-թ, 4-է, 5-ժ, 6-դ, 7-ը, 8-զ, 9-գ
- 2) 1-բ, 2-զ, 3-գ, 4-թ, 5-ե, 6-դ, 7-է, 8-ա, 9-ը
- 3) 1-դ, 2-ե, 3-զ, 4-թ, 5-բ, 6-ը, 7-գ, 8-ժ, 9-ա
- 4) 1-բ, 2-ե, 3-է, 4-թ, 5-զ, 6-դ, 7-գ, 8-ը, 9-ա

**9. Վ դարի ազատագրական պայքարի հետ կապված մեջբերումները համապատասխանեցնել փաստերին.**

- 1) «Առնում էին ոչ թե ինչպես վայել է արքունի արժանապատվությանը, այլ ավագակաբար հափշտակելով, այն աստիճան, որ իրենք էլ մեծապես զարմանում էին, թե մի տեղից, որ այսքան գանձ է դուրս գալիս, էլ ինչպես է շեն մնում այդ աշխարհը»:
- 2) «Լավ ենք համարում մի անգամ մեռնել, քան թե ամեն օր եկեղեցու և քրիստոնեության արհամարհանքը և քակտումը տեսնել»:
- 3) «Դուք բնավ ոչինչ համարեցիք այս աշխարհը, քաջաբար մեռան նրանք, որ մեռան, և առավել քաջաբար ապրում եք դուք»:
- 4) «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»:

ա. նախարարների հավաքը Շիրակում և ապստամբություն սկսելու վճիռը

բ. Նվարսակի հաշտության պայմանագրի կապակցությամբ Վաղարշ կայսեր խոսքերը

գ. Ճարմանայի ճակատամարտի վերաբերյալ Պերոզ արքայի խոսքերը

դ. Դենշապուհի կողմից աշխարհագրի անցկացումը և հարկերի ծանրացումը

ե. Եղիշեի խոսքերը Ավարայրի ճակատամարտում Վարդանանց սխրանքի մասին

- |                       |                       |
|-----------------------|-----------------------|
| 1) 1-դ, 2-ա, 3-բ, 4-ե | 3) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ե |
| 2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ե | 4) 1-ե, 2-ա, 3-գ, 4-դ |

**10. Ճակատամարտերը համապատասխանեցնել տարեթվերին.**

- |           |           |
|-----------|-----------|
| 1) 481 թ. | 6) 450 թ. |
| 2) 775 թ. | 7) 703 թ. |
| 3) 370 թ. | 8) 482 թ. |
| 4) 852 թ. | 9) 637 թ. |
| 5) 371 թ. |           |

ա. Ատրպատականում տեղի ունեցած ճակատամարտը

բ. Վարդանակերտի ճակատամարտը

գ. «Արյան լճի» ճակատամարտը

դ. Ակոռիի ճակատամարտը

ե. Ճարմանայի ճակատամարտը

զ. Օշականի Յլու գլուխ լեռան ճակատամարտը

է. Ձիրավի ճակատամարտը

- ը. Խաղխաղի ճակատամարտը
- թ. Արձնիի ճակատամարտը
- ժ. Քաղիսիայի ճակատամարտը

- 1) 1-ա, 2-ժ, 3-է, 4-գ, 5-բ, 6-ը, 7-թ, 8-ե, 9-դ
- 2) 1-բ, 2-թ, 3-ժ, 4-ե, 5-գ, 6-ը, 7-դ, 8-գ, 9-է
- 3) 1-գ, 2-դ, 3-ա, 4-է, 5-գ, 6-ժ, 7-բ, 8-թ, 9-ը
- 4) 1-դ, 2-թ, 3-ա, 4-գ, 5-է, 6-ը, 7-բ, 8-ե, 9-ժ

**11. Կատարել համապատասխանեցում.**

N	Ճակատամարտը	N	Տարեթիվը	N	Գործիչը
1	Վարդանակերտի	1	481 թ.	1	Մուշեղ Մամիկոնյան
2	Ակոռիի	2	852 թ.	2	Բագարատ Բագրատունի
3	Արձնիի	3	451 թ.	3	Վահան Մամիկոնյան
4	«Արյան լճի»	4	775 թ.	4	Սմբատ Բագրատունի
		5	703 թ.	5	Գուրգեն Արծրունի

1	5	2
2	3	5
3	1	1
4	4	3

1)

1	3	4
2	5	3
3	4	1
4	2	2

2)

1	2	3
2	1	5
3	4	2
4	5	4

3)

1	5	4
2	1	3
3	4	1
4	2	5

4)

**12. Արքաների անունները համապատասխանեցնել ենթակա թագավորությունների անվանումներին.**

- 1) Վասպուրականի թագավորություն
- 2) Տաշիր-Ձորագետի (Լոռի) թագավորություն
- 3) Վանանդի կամ Կարսի թագավորություն
- 4) Սյունիքի թագավորություն

- ա. Սմբատ
- բ. Սենեքերիմ Արծրունի
- գ. Գագիկ Աբասյան

- 1) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
- 2) 1-բ, 2-ե, 3-գ, 4-ա

- դ. Տիգրան Բագրատունի
- ե. Դավիթ Անհողին

- 3) 1-ա, 2-բ, 3-գ, 4-ե
- 4) 1-դ, 2-ե, 3-բ, 4-ա

**13. Կատարել համապատասխանեցում.**

N	Թագավորությունը	N	Հիմնադրման տարեթիվը	N	Հիմնադիրը
1	Վասպուրականի	1	963 թ.	1	Գուրգեն Բագրատունի
2	Վանանդի կամ Կարսի	2	908 թ.	2	Գագիկ Բագրատունի
3	Տաշիր-Ձորագետի (Լոռի)	3	987 թ.	3	Մուշեղ Բագրատունի
4	Սյունիքի	4	966 թ.	4	Գագիկ Արծրունի
		5	978 թ.	5	Սմբատ իշխան

1	4	5
2	5	1
3	1	3
4	3	2

1)

1	2	4
2	1	3
3	5	1
4	3	5

2)

1	2	2
2	3	5
3	1	3
4	5	4

3)

1	3	2
2	5	3
3	2	4
4	4	5

4)

**14. Կատարել համապատասխանեցում.**

N	Իրադարձությունը	N	Տարեթիվը	N	Վայրը
1	Սմբատ Արծրունու օծվելը հայոց թագավոր	1	1547 թ.	1	Սեբաստիա
2	Ստեփանոս Սալմաստեցու գլխավորությամբ գաղտնի խորհրդաժողովի գումարումը	2	1361 թ.	2	Ադանա
3	Միքայել Սեբաստացու գլխավորությամբ գաղտնի խորհրդաժողովի գումարումը	3	1451 թ.	3	Էջմիածին
4	Մեսրոպ Արտագեցու գլխավորությամբ եկեղեցական ժողովի գումարումը	4	1562 թ.	4	Աղթամար կղզի
		5	1465 թ.	5	Սիս

1	5	2
2	3	5
3	1	1
4	4	3

1)

1	3	4
2	1	3
3	4	1
4	2	2

2)

1	2	3
2	1	5
3	4	2
4	5	4

3)

1	5	4
2	1	3
3	4	1
4	2	5

4)

**15. Կատարել համապատասխանեցում.**

N	Արքայատոհմը	N	Արքայի անունը	N	Գահակալման տարեթիվը
1	Արտաշեսյաններ	1	Հևոն III	1	914–928 թթ.
2	Հեթումյաններ	2	Արտավազդ I	2	1226–1270 թթ.
3	Բագրատունիներ	3	Պապ	3	1270–1289 թթ.
4	Արշակունիներ	4	Հևոն II	4	Ք. ա. 160–115 թթ.
		5	Աշոտ II Երկաթ	5	370–374 թթ.

1	4	5
2	5	1
3	1	3
4	3	2

1)

1	2	4
2	1	3
3	5	1
4	3	5

2)

1	2	2
2	3	5
3	1	3
4	5	4

3)

1	3	2
2	5	3
3	2	4
4	4	5

4)

**16. Կատարել համապատասխանեցում.**

- 1) Աղթամարի կաթողիկոսություն
- 2) Երուսաղեմի հայոց պատրիարքություն
- 3) Գանձասարի կաթողիկոսություն
- 4) Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն

ա. Օսմանյան պետության հայ համայնքի հոգևոր կյանքի տնօրինում

բ. Մերձավոր Արևելքում հայ ժողովրդի կրոնական և աշխարհիկ կյանքի կարգավորում

գ. Վասպուրականի հայ բնակչության հոգևոր կյանքի տնօրինում

դ. Կիլիկիայի և շրջակա տարածքների հայ բնակչության հոգևոր կյանքի տնօրինում

ե. Այսրկովկասի արևելյան հատվածի ու հայկական Արցախ և Ուտիք նահանգների քրիստոնյա հայ բնակչության հոգևոր կյանքի տնօրինում

1) 1–գ, 2–ա, 3–բ, 4–դ

3) 1–բ, 2–դ, 3–ե, 4–ա

2) 1–ա, 2–բ, 3–գ, 4–դ

4) 1–գ, 2–բ, 3–ե, 4–ա

**17. Կատարել համապատասխանեցում.**

N	Հեղինակը	N	Բնագավառը	N	Աշխատությունը
1	Դավիթ Անհաղթ	1	պատմագրություն	1	«Թուղթ ընդհանրական»
2	Սեբեոս	2	աշխարհագրություն	2	«Աշխարհացոյց»
3	Ներսես Շնորհալի	3	մանրանկարչություն	3	«Ջերմանց մխիթարութիւն»
4	Անանիա Շիրակացի	4	իրավունք	4	«Սահմանք իմաստասիրութեան»
		5	փիլիսոփայություն	5	«Պատմութիւն»

1	5	2
2	3	1
3	1	4
4	2	2

1)

1	3	4
2	2	2
3	1	1
4	4	3

2)

1	3	3
2	1	5
3	4	4
4	2	1

3)

1	5	4
2	1	5
3	4	1
4	2	2

4)

**18. Կատարել համապատասխանեցում.**

N	Գործիչը	N	Տարեթիվը	N	Իրադարձությունը	N	Վայրը
1	Թորոս II	1	1254 թ.	1	Հայ-եգիպտական հաշտության պայմանագրի կնքումը	1	Տարսոն
2	Լևոն II	2	1323 թ.	2	Հալեպի ամիրայի հետ դաշինքի կնքումը	2	Հռոմկլա
3	Հեթում I	3	1151 թ.	3	Հայ-մոնղոլական պայմանագրի կնքումը	3	Սիս
4	Կոստանդին Լամբրոնացի	4	1173 թ.	4	Անտիոքի իշխան Բոհեմունդի հետ հաշտության պայմանագրի կնքումը	4	Կարակորում
		5	1194 թ.	5	Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը	5	Կահիրե

1	3	2	2
2	4	4	5
3	5	3	1
4	1	5	4

1)

1	4	5	3
2	5	4	2
3	1	3	1
4	3	1	4

2)

1	4	4	2
2	1	2	3
3	3	1	4
4	2	3	1

3)

1	3	5	2
2	5	4	3
3	1	3	4
4	2	1	5

4)

**19. Գործիչների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.**

- 1) Մաշտոցի ստեղծած նշանագրերի գեղագրությունը
- 2) Արևմտյան Հայաստանում հայոց դպրոցներ բացելու թույլտվությունը
- 3) Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» աշխատության մեկնասությունը
- 4) «Անշարժ տոմար» կազմելու փորձը

ա. Անանիա Շիրակացի  
բ. Թեոդոսիոս II  
գ. Հռոփանոս

դ. Սմբատ Բագրատունի  
ե. Սահակ Բագրատունի

- 1) 1-ա, 2-բ, 3-ե, 4-գ
- 2) 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ

- 3) 1-գ, 2-ե, 3-դ, 4-ա
- 4) 1-գ, 2-բ, 3-ե, 4-ա

**7-II. Կարճ (վանդակավոր) պատասխանով առաջադրանքներ**

**1. Հայոց արքաների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.**

- ա. Դվին մայրաքաղաքի կառուցումը  
բ. Ձիրավի ճակատամարտը  
գ. հայոց այբուբենի ստեղծումը  
դ. Աշտիշատի ժողովի գումարումը  
ե. Հուսիկ հայրապետի նահատակությունը  
զ. քրիստոնեության հռչակումը պետական կրոն

- 1) Վռամշապուհ
- 2) Արշակ II
- 3) Տիրան
- 4) Խոսրով III Կոտակ
- 5) Պապ
- 6) Տրդատ II
- 7) Տրդատ Մեծ

**2. Կատարել համապատասխանեցում.**

- ա. մագրությունների Սանենան թագավորի զորքերի ներխուժումը Հայաստան  
բ. Մեծ Հայքի թագավորության բաժանումը Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև  
գ. Միլանի հրովարտակի ընդունումը  
դ. Պապի հաստատումը հայոց գահին  
ե. հայոց այբուբենի ստեղծումը  
զ. Արշակ II արքայի մեկնումը Տիգրան

- 1) 370 թ.
- 2) 405 թ.
- 3) 387 թ.
- 4) 368 թ.
- 5) 325 թ.
- 6) 313 թ.
- 7) 335 թ.

### 3. Կատարել համապատասխանեցում.

- ա. Մանվել Մամիկոնյանի պահանջով Հայաստանից հեռացած հայոց արքան
- բ. Վաղես կայսեր հրամանով դավադրաբար սպանված հայոց արքան
- գ. Ձիրավի ճակատամարտում հայոց սպարապետը
- դ. Աշտիշատ գյուղում եկեղեցու առաջին ժողովը հրավիրած կաթողիկոսը
- ե. Շապուհ II արքայի հրամանով սպանված հայոց սպարապետը
- զ. հայոց այբուբենի ստեղծման գործում մեծ դերակատարում ունեցած կաթողիկոսը

- |                      |                     |
|----------------------|---------------------|
| 1) Մուշեղ Մամիկոնյան | 5) Արտավազդ II      |
| 2) Պապ               | 6) Սահակ Պարթև      |
| 3) Ներսես Մեծ        | 7) Վասակ Մամիկոնյան |
| 4) Վարազդատ          |                     |

### 4. Հայոց արքաների անունները համապատասխանեցնել նրանց գահակալման տարիներին տեղի ունեցած իրադարձություններին.

- ա. Աղծնիքի Բակուր բղեջխի և Դատաբեն Բզնունու մահապատիժը
- բ. Հուսիկ-Շահակ կաթողիկոսի ձեռնադրումը Հայաստանում
- գ. Օտա Ամատունու նշանակումը հայոց հազարապետ
- դ. «Ամոթալի» պայմանագրի կնքումը
- ե. Հուսիկ կաթողիկոսի ձեռնադրումը
- զ. Սահակ Պարթևի նշանակումը հայոց կաթողիկոս

- |              |                     |
|--------------|---------------------|
| 1) Խոսրով IV | 4) Վարազդատ         |
| 2) Արշակ II  | 5) Պապ              |
| 3) Տիրան     | 6) Խոսրով III Կոտակ |
| 7) Տրդատ III |                     |

### 5. Վայրերը համապատասխանեցնել Գրիգոր Լուսավորչի գործունեության հետ կապված իրադարձություններին.

- ա. Գրիգորի բանտարկությունը
- բ. Գրիգորի ձեռնադրությունը եպիսկոպոս Ղևոնդիոսի կողմից
- գ. արքայական ընտանիքի և հայոց զորքի կողմից Գրիգորին դիմավորելը
- դ. Իննականյան Ս. Կարապետ եկեղեցու հիմնադրումը
- ե. Ս. Երրորդություն եկեղեցու հիմնադրումը
- զ. աշխարհիկ կյանքից առանձնացումը և անցումը ճգնավորական կյանքին

- 1) Դարանաղի գավառ՝ Սեպուհ լեռան Մանյա այրք
- 2) Բագավան՝ Նպատ լեռան ստորոտ
- 3) Աշտիշատ
- 4) Տարոն՝ Քարքե լեռան լանջ
- 5) Խոր Վիրապ
- 6) Վաղարշապատ
- 7) Կեսարիա (Մաժակ)

**6. Դեպքերը համապատասխանեցնել դրանց վերաբերյալ աղբյուրներից մեջբերված վկայություններին.**

- ա. «Հեռու ինձանից, չարագործ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ և քո որդոց իմ նախնիների վրեժը...»:
- բ. «Քավ լիցի՜ իմ մոլորված ոչխարը մատնեմ գայլերին»:
- գ. «Քեզ պսակում եմ, ..., որովհետև դու ձգտում էիր հայոց վրա թագավորելու, և իմ՝ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրերի իշխանության կարգով»:
- դ. «...հնում Կեսարիայի ուրիշ տասը քաղաք մերն են եղել, էտ տուր, Ուռհա (Եղեփա) քաղաքն էլ մեր նախնիքն են շինել, ուստի, եթե չես ուզում, որ խռովություն ծագի մեր մեջ, էտ տուր»:
- ե. «Այժմ, երբ տեսնում ես ինձ կարճահասակ, մեծությամս չափը չես հասկանում, որովհետև մինչ այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվես...»:
- զ. «...եթե կարողանաս հաղթել նրանց և պարտադրես ծառայելու, ես նրանց թիկունքը չեմ պաշտպանի»:

- 1) Սահակ Պարթևի խոսքը Արտաշեսի գահընկեցությանը դեմ լինելու առիթով
- 2) Պապի ներկայացրած պահանջը Վաղես կայսրին
- 3) Հովհաննոս կայսեր խոսքերը պարսից արքային
- 4) Արշակ II-ի ըմբոստացումը պարսից արքայի դեմ
- 5) սպարապետ Վասակ Մամիկոնյանի պատասխանը պարսից արքային
- 6) Մուշեղ Մամիկոնյանի պատասխանը պարսից արքային
- 7) դավաճան Մերուժան Արծրունու մահապատժի իրականացումը

**7. Հայոց արքաների անունները համապատասխանեցնել նրանց գահակալության տարիներին.**

- |                |                |
|----------------|----------------|
| ա. 370–374 թթ. | դ. 378–387 թթ. |
| բ. 388–414 թթ. | ե. 338–350 թթ. |
| գ. 330–338 թթ. | զ. 374–378 թթ. |

- |              |                     |
|--------------|---------------------|
| 1) Արշակ III | 5) Վռամշապուհ       |
| 2) Պապ       | 6) Արշակ II         |
| 3) Տիրան     | 7) Խոսրով III Կոտակ |
| 4) Վարազդատ  |                     |

**8. Մ դարի ազատագրական պայքարի հետ կապված տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

- ա. Հովսեփ Ա Վայոցձորցու գլխավորությամբ եկեղեցական ժողովի հրավիրումը Արտաշատում
- բ. Հայաստանում աշխարհագրի անցկացումը Դենշապուհի կողմից
- գ. Ավարայրի ճակատամարտը
- դ. Ճարմանայի ճակատամարտը
- ե. Հազկերտի պահանջով հայոց նախարարների ժամանումը Տիգրան
- զ. հայ նախարարների հավաքը Շիրակում և ապստամբություն սկսելու որոշումը

- |           |           |
|-----------|-----------|
| 1) 449 թ. | 5) 482 թ. |
| 2) 484 թ. | 6) 450 թ. |
| 3) 447 թ. | 7) 481 թ. |
| 4) 451 թ. |           |

**9. Հայոց կաթողիկոսների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.**

- ա. Ս. Հռիփսիմե տաճարի կառուցումը
- բ. Ավարայրի ճակատամարտը
- գ. Ներսեհապատի ճակատամարտը
- դ. Արշակունյաց արքայատոհմի անկումը
- ե. Դվինի 554 թ. եկեղեցական ժողովի գումարումը
- զ. Զվարթնոցի տաճարի կառուցումը

- |                           |                        |
|---------------------------|------------------------|
| 1) Ներսես Բ Բագրևանդացի   | 5) Ներսես Գ Տայեցի     |
| 2) Հովհաննես Բ Գաբելենացի | 6) Հովսեփ Ա Վայոցձորցի |
| 3) Սահակ Պարթև            | 7) Կոմիտաս Մամիկոնյան  |
| 4) Հովհաննես Ա Մանդակունի |                        |

**10. Տարեթվերը համապատասխանեցնել ճակատամարտերին.**

- ա. Խաղխաղի
- բ. Վարդանակերտի
- գ. Ակոռիի
- դ. Արձնիի
- ե. Ճարմանայի
- զ. «Արյան լճի»

- |           |           |
|-----------|-----------|
| 1) 481 թ. | 5) 451 թ. |
| 2) 775 թ. | 6) 450 թ. |
| 3) 482 թ. | 7) 703 թ. |
| 4) 852 թ. |           |

**11. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

- ա. Հայաստանի բաժանումը Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև
- բ. Հովսեփ Ա Վայոցձորցու գլխավորությամբ եկեղեցական ժողովի գումարումը Շահապիվանում
- գ. Հայաստանի վերամիավորումը Թեոդորոս Ռշտունու կողմից
- դ. Բաբգեն Ա կաթողիկոսի գլխավորությամբ եկեղեցական ժողովի գումարումը Դվինում
- ե. Հովսեփ Ա Վայոցձորցու գլխավորությամբ եկեղեցական ժողովի գումարումը Արտաշատում

- զ. հայերի հակաարաբական առաջին ապստամբությունը
- |           |           |
|-----------|-----------|
| 1) 449 թ. | 5) 591 թ. |
| 2) 506 թ. | 6) 443 թ. |

3) 703 թ.

7) 639 թ.

4) 652 թ.

**12. Ապստամբությունների տարեթվերը համապատասխանեցնել դրանց ղեկավարների անուններին.**

ա. Վահան Մամիկոնյան

բ. Բագարատ Բագրատունի, Աշոտ և Գուրգեն Արծրունիներ

գ. Գրիգոր և Դավիթ Մամիկոնյաններ

դ. Արտավազդ Մամիկոնյան, Մուշեղ Մամիկոնյան, Սմբատ Բագրատունի

ե. Հովհաննես և Արտավան Արշակունիներ

զ. Վարդան Մամիկոնյան (Վարդան Կրտսեր)

1) 571–572 թթ.

5) 481–484 թթ.

2) 748–750 թթ.

6) 450–451 թթ.

3) 774–775 թթ.

7) 539 թ.

4) 850–855 թթ.

**13. Իրադարձությունները համապատասխանեցնել դրանց հետ կապված պատմական գործիչների անուններին.**

ա. Թեոդորոս Ռշտունի

դ. Արշակ Արշակունի

բ. Գրիգոր Մամիկոնյան

ե. Վահան Մամիկոնյան

գ. Մուշեղ Մամիկոնյան

զ. Արտավազդ Մամիկոնյան

1) Հուստինիանոս I–ի դեմ խռովությունը

2) Նվարսակի պայմանագրի կնքումը

3) Շիրակում արաբ գլխավոր հարկահանի վրա հարձակումը և ամբողջ հավաքած հարկի խլումը

4) հայ–արաբական պայմանագրի կնքումը

5) Ս. Գրիգոր եկեղեցու և իշխանական պալատի կառուցումը Արուճում

6) Վարդանակերտի ճակատամարտը

7) Տարոն ներխուժած արաբական ջոկատի ջախջախումը հայ ապստամբների կողմից և նրանց ամրանալը Արտագերս ամրոցում

**14. Եկեղեցական ժողովները համապատասխանեցնել դրանց գումարման տարեթվերին.**

ա. 451 թ.

դ. 869 թ.

բ. 554 թ.

ե. 354 թ.

գ. 506 թ.

զ. 443 թ.

1) Շիրակավանի ժողովը

5) Նիկեայի ժողովը

2) Քաղկեդոնի ժողովը

6) Դվինի I ժողովը

3) Շահապիվանի ժողովը

7) Աշտիշատի ժողովը

4) Դվինի II ժողովը

**15. Կատարել համապատասխանեցում.**

- |                  |                                 |
|------------------|---------------------------------|
| ա. Վասիլ I       | 1) Խաչենի տիրակալ               |
| բ. Յուսուֆ       | 2) Վրաստանի թագավոր             |
| գ. Հասան-Ջալալ   | 3) Ատրպատականի ամիրա            |
| դ. Մանգու        | 4) Վասպուրականի թագավոր         |
| ե. Դավիթ Շինարար | 5) Սելջուկյան պետության սուլթան |
| զ. Ալի Արսլան    | 6) Բյուզանդիայի կայսր           |
|                  | 7) Մոնղոլական տերության մեծ խան |

**16. Բագրատունյաց արքաների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.**

- ա. Անիի պարիսպների երկրորդ գծի կառուցումը  
բ. Բագրատունիների արքայատոհմի անկումը  
գ. Դողս գյուղի ճակատամարտը  
դ. Սևանա կղզու ճակատամարտը  
ե. կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Արգինայի վանք  
զ. Անիի Կաթողիկե եկեղեցու կառուցումը
- |             |               |
|-------------|---------------|
| 1) Սմբատ I  | 5) Գագիկ II   |
| 2) Սմբատ II | 6) Աշոտ Երկաթ |
| 3) Գագիկ I  | 7) Աբաս       |
| 4) Աշոտ III |               |

**17. Արքաների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.**

- ա. Անիի հռչակումը մայրաքաղաք  
բ. հաշտություն կնքելու նպատակով արքայի հրավիրումը Կոստանդնուպոլիս և կալանավորումը  
գ. հակաարաբական դաշինքի կնքումը Կոստանդնուպոլսում  
դ. Կարսի հռչակումը Հայաստանի մայրաքաղաք  
ե. Վայոց ձորի իշխանության վերացումը և Արցախի մեծ մասի միավորումը Բագրատունյաց թագավորությանը  
զ. Ատրպատականի Յուսուֆ ամիրայի հարձակումը Հայաստանի վրա
- |             |               |
|-------------|---------------|
| 1) Սմբատ I  | 5) Գագիկ II   |
| 2) Աշոտ I   | 6) Աշոտ Երկաթ |
| 3) Գագիկ I  | 7) Աբաս       |
| 4) Աշոտ III |               |

**18. Կատարել համապատասխանեցում.**

- ա. Կարսի մատույցներում սելջուկների առաջնորդ Տուղրիլի մերձավորին վիրավորած հայ հերոսը  
բ. Անիի Կաթողիկե եկեղեցու ճարտարապետը  
գ. Գառնիում փոքր զորաջոկատով Բեշիրի զորքերին պարտության մատնած իշխանը

դ. Սասուն–Խուրթ գավառում VIII դ. կեսի ապստամբության ղեկավարը  
ե. Բագրատունիների արքունիքը Կարս տեղափոխած արքան  
զ. անհնազանդության պատճառով իր հողերից զրկված և «Անհողին» մականունը ստացած Տաշիր–Ձորագետի արքան

- |           |          |
|-----------|----------|
| 1) Գևորգ  | 5) Գագիկ |
| 2) Տրդատ  | 6) Դավիթ |
| 3) Հովհան | 7) Աբաս  |
| 4) Թաթուլ |          |

**19. Թաթար–մոնղոլների հետ կապված պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

- |            |            |
|------------|------------|
| ա. 1236 թ. | դ. 1254 թ. |
| բ. 1220 թ. | ե. 1244 թ. |
| գ. 1219 թ. | զ. 1259 թ. |

- 1) հայ–մոնղոլական պայմանագրի կնքումը
- 2) Տարոնի, Վասպուրականի, Աղձնիքի նվաճումը մոնղոլների կողմից
- 3) Չարմաղանի գլխավորությամբ մոնղոլական 30 000–անոց բանակի ներխուժումը Հայաստան
- 4) հայ–վրացական միացյալ ապստամբությունը մոնղոլների դեմ
- 5) Չինգիզ խանի աշխարհակալ նվաճումների սկիզբը, Խորեզմի շահի պարտությունը
- 6) Իկոնիայի սուլթանության պարտությունը և Երզնկայի, Տերիկի, Կեսարիայի և Սեբաստիայի նվաճումը մոնղոլների կողմից
- 7) Մոնղոլների ներխուժումը Այսրկովկաս, Կոստանի ճակատամարտը

**20. Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

- |            |            |
|------------|------------|
| ա. 1113 թ. | դ. 1209 թ. |
| բ. 1196 թ. | ե. 1206 թ. |
| գ. 1203 թ. | զ. 1199 թ. |

- 1) Դվինի ազատագրումը
- 2) Անիի վերջնական ազատագրումը
- 3) Լոռու մաքրումը թշնամուց
- 4) Կարսի ազատագրումը
- 5) Ամբերդի ազատագրումը
- 6) Բերդուսի ճակատամարտը
- 7) Շահ–Արմենների նստավայր Խլաթի պաշարումը

**21. Հայոց կաթողիկոսների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.**

- ա. Աղթամար կղզուց կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Արգինա  
բ. Բագարան քաղաքում Աշոտ Բագրատունուն հայոց թագավոր օծելը  
գ. Ամենայն հայոց կաթողիկոսության վերահաստատումը Էջմիածնում

- դ. գաղտնի խորհրդաժողովի հրավիրումը Էջմիածնում և նրա գլխավորությամբ պատվիրակության մեկնումը Եվրոպա
- ե. Սսի և Ադանայի XIV դ. սկզբների ժողովների որոշումների չեղյալ հայտարարելը
- զ. Տարսոն քաղաքում Լևոն իշխանի օժումը հայոց թագավոր

- |                            |                    |
|----------------------------|--------------------|
| 1) Հովհաննես Բ Գաբրելենացի | 5) Գրիգոր Զ Ապիրատ |
| 2) Մեսրոպ Արտազեցի         | 6) Գևորգ Գառնեցի   |
| 3) Ստեփանոս Սալմաստեցի     | 7) Անանիա Մոկացի   |
| 4) Կիրակոս Վիրապեցի        |                    |

**22. Պաշտոնը համապատասխանեցնել գործառույթին.**

- ա. արքունի պալատի կառավարիչ, արքունի եկամուտների և ծախսերի տնօրինում
- բ. արքունի քարտուղար, օտար երկրների ներկայացուցիչների հետ բանակցությունների ղեկավարում
- գ. արքունական հեծելազորի հրամանատար
- դ. սպարապետ, բանակի ընդհանուր հրամանատարության իրականացում
- ե. սպարապետի տեղակալ, բանակի սպառազինության և պարենի մատակարարման ղեկավարում
- զ. թագավորի առաջին խորհրդական, անչափահասության դեպքում արքայի և ամբողջ երկրի խնամակալության իրականացում

- |             |               |
|-------------|---------------|
| 1) մարդպետ  | 5) կանցլեր    |
| 2) պայլ     | 6) գունդստաբլ |
| 3) սենեսկալ | 7) մարաջախտ   |
| 4) սպասալար |               |

**23. Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

- |            |            |
|------------|------------|
| ա. 1555 թ. | դ. 1639 թ. |
| բ. 1299 թ. | ե. 1604 թ. |
| գ. 1453 թ. | զ. 1638 թ. |

- 1) Կասրե-Շիրիհի պայմանագրի կնքումը
- 2) Ամասիայի հաշտության պայմանագրի կնքումը
- 3) Թավրիզի գրավումը շահ Աբասի կողմից
- 4) Օսմանյան պետության հիմնադրումը
- 5) Բաղդադի գրավումը օսմանյան բանակների կողմից
- 6) Կոստանդնուպոլսի գրավումը օսմանյան բանակի կողմից
- 7) հայ բնակչության բռնագաղթեցումը շահ Աբասի կողմից

**24. Կատարել համապատասխանեցում.**

- ա. Մոսկվայում հաստատված նորջուլայեցի նշանավոր արվեստագետը
- բ. հայկական տպագրության հիմնադիրը
- գ. Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու ճարտարապետը
- դ. Նորավանքի նշանավոր խաչքարագործ վարպետը

ե. Հռոմկլայում ստեղծագործած նշանավոր մանրանկարիչը  
զ. Սկևռայում ստեղծագործած նշանավոր մանրանկարիչը

- |                   |                    |
|-------------------|--------------------|
| 1) Մանուել        | 5) Թորոս Ռուլին    |
| 2) Մոմիկ          | 6) Պողոս           |
| 3) Գրիգոր Միհնեցի | 7) Բոգդան Սալթանով |
| 4) Հակոբ Մեղապարտ |                    |

## 25. Փաստերը համապատասխանեցնել աղբյուրներից մեջբերված խոսքերին.

- ա. «Հայոց նախարարներին անցավ թագավորությունը, որովհետև թեպետև հարկը պարսից արքունիքն էր գնում, սակայն հայոց այրուծին ամբողջապես նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ»:
- բ. «Մենք ամենքս պատրաստ ենք մեռնելու, բայց չենք մեռնի, մինչև չոչնչացնենք մեր թշնամիներին»:
- գ. «Լավ ենք համարում մի անգամ մեռնել, քան թե ամեն օր եկեղեցու և քրիստոնեության արհամարհանքը և քակտումը տեսնել»:
- դ. «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար»:
- ե. «Հայոց տան տերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ տալիս հայոց երկիրը, որովհետև դու ինձ խաբեությամբ ես բերել Կոստանդնուպոլիս»:
- զ. «Քավ լիցի՝ իմ մոլորված ոչխարը մատնեմ գայլերին»:

- 1) Սահակ Պարթևի խոսքերը Արտաշեսի գահընկեցությանը դեմ լինելու առիթով
- 2) Արծնիի ճակատամարտը
- 3) Արշակունյաց թագավորության անկումը
- 4) 481 թ. Շիրակում հավաքված հայ նախարարների վճիռը
- 5) Գագիկ II-ի պատասխանը Մոնոմախ կայսրին
- 6) Վահրամ Պահլավունուն ուղղված անեցիների դիմումը
- 7) Վարդանակերտի ճակատամարտը

## 26. Պատմիչների անունները համապատասխանեցնել աղբյուրներից մեջբերված իրենց խոսքերին.

- ա. «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար»:
- բ. «... եղավ աստվածագիտության լույսի դուռ և բազմազան բարիքների երջանիկ օրինակ»:
- գ. «Եվ այսպես նա բազում նեղություններ կրեց՝ իր ազգին մի բարի օգնություն գտնելու համար: Ամեն բան շնորհող Աստծուց իսկապես պարգևվեց նրան այդ բախտը. նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ՝ հայերենի նշանագրեր»:
- դ. «Եվ տիրապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների Վայոց ձորի, Խաչենի և Փառիսոսի սահմաններում՝ ավելի, քան իր եղբայրը, և չկար մեկը, որ սարսափ պատճառեր Հայաստանին»:
- ե. «Ո՛ր հասանէ գիտութիւն, ուր ոչ հասանէ բնութիւն»:

գ. «...հնուց հայերեն գիր է եղել», ինչը «վկայվեց Լևոն արքայի ժամանակ, քանզի դրամ գտավ Կիլիկիայում՝ դրոշմված հայերեն գրով... Հայկազուն թագավորների» անուններով:

- |                        |                 |
|------------------------|-----------------|
| 1) Եզնիկ Կողբացի       | 5) Դավիթ Անհաղթ |
| 2) Ասողիկ              | 6) Ղևոնդ        |
| 3) Վարդան Արևելցի      | 7) Կորյուն      |
| 4) Մովսես Կաղանկատվացի |                 |

**27. Հայոց արքաներին տրված պատվանունները համապատասխանեցնել նրանց անուններին.**

- |                |                  |
|----------------|------------------|
| ա. Արտաշես I   | 1) Աստվածային    |
| բ. Աշոտ III    | 2) Տիեզերքի արքա |
| գ. Արտավազդ II | 3) Կոտակ         |
| դ. Խոսրով III  | 4) Երկաթ         |
| ե. Տրդատ I     | 5) Ողորմած       |
| զ. Աշոտ II     | 6) Բարեպաշտ      |
|                | 7) Արտաշես       |

## 8. ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԻ, ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ

### 8-1. Պատմական փաստարկների, պնդումների համադրում և խմբավորում

#### 1. VIII դարի հակաարաբական ապստամբություններին վերաբերող ստորև բերված պնդումներից որոնք են սխալ.

- ա. Սասուն գավառը, որ արաբների կողմից սկզբում մտցվել էր «Ջազիրա» (Հյուսիսային Միջագետք) նահանգի կազմի մեջ, միացվեց Արմինիային՝ անցնելով հայոց իշխանի իրավասության ներքո:
- բ. Գնալով Դվին՝ Արտավազը Մամիկոնյանը խորամանկությամբ արաբ ոստիկանից զենք էր ստացել խալիֆայության թշնամիների դեմ կռվելու պատրվակով:
- գ. Տայքում զինելով իր ռազմիկներին՝ Արտավազը Մամիկոնյանը հարձակվեց արաբ զլխավոր հարկահանի վրա, խլեց հավաքված ամբողջ հարկը, ապա իր ընտանիքով ու զինակիցներով հեռացավ Մեծ Հայքի հյուսիսարևմտյան սահմանային գոտի, այդտեղից էլ՝ Կիլիկիա:
- դ. Ջախջախելով Տարոն ներխուժած արաբական ջոկատը՝ Մուշեղ Մամիկոնյանն ամրացավ Արտագերս ամրոցում:
- ե. Կարինը զավթած արաբական կայսրոցից 6000 հեծյալ եկավ Բագավան գյուղ, այստեղ Մուշեղ Մամիկոնյանի ջոկատը ջախջախեց թշնամուն և փախուստի մատնեց արաբական զորքի մնացորդներին:
- զ. Հայրենիքի ազատության համար Արձնիի ճակատամարտում զոհվեցին Բագրատունյաց, Մամիկոնյան, Գնունյաց և այլ տոհմերի նախարարներ, ինչպես նաև ռազմիկներ՝ մոտ 3000 հոգի:

- 1) գ, ե                      2) դ, զ                      3) ա, գ                      4) բ, զ

#### 2. Գտնել սխալ պնդումները:

*Արշակունյաց Հայաստանում հազարապետն իրականացնում էր հետևյալ գործառույթները.*

- 1) Արշակունյաց սեպուհների դաստիարակություն
- 2) ճանապարհների, կամուրջների և քաղաքների ամրությունների կառուցում
- 3) պետական պարիսպների տնօրինում
- 4) արքունի կալվածքների ու գանձարանի հսկողություն
- 5) ջրանցքների անցկացում

#### 3. Վտանջապուհ արքայի գործունեությանը վերաբերող պնդումներից որոնք են սխալ.

- 1) Նրան հաջողվեց օգտվել ստեղծված բարենպաստ իրավիճակից և դիվանագիտորեն միավորել Մեծ Հայքի երկու մասերը:
- 2) Նա առանց Սասանյանների հետ համաձայնեցնելու հայոց կաթողիկոս նշանակեց Սահակ Պարթևին:

- 3) Նրա և Սահակ Պարթև կաթողիկոսի հովանավորությամբ Մեսրոպ Մաշտոցն ստեղծեց հայերենի այբուբենը:
- 4) Նրա հետ խորհրդակցելով՝ Սահակ Պարթևը մեկնեց պարսից արքունիք ու ստացավ Վռամ IV-ի համաձայնությունը իր փեսա Համազասպ Մամիկոնյանին հայոց սպարապետ նշանակելու մասին:
- 5) Հայ նախարարների խնդրանքով պարսից թագավոր Հազկերտ I-ը Վռամշապուհից հետո հայոց թագավոր է հաստատել նրա որդի Արտաշեսին:

**4. Թվարկված պահանջներից որո՞նք է Վահան Մամիկոնյանը ներկայացրել Վաղարշ արքային.**

- 1) Հայաստանի մարզպան նշանակել միայն հայ Արշակունիներից
- 2) վերադարձնել Հայաստանի վանքերից ու եկեղեցիներից բռնագրավված հողերը և նյութական գանձերը
- 3) վերականգնել հողեր ժառանգելու՝ իշխանների որդիների և դուստրերի իրավունքը
- 4) հարգել հայ նախարարների ժառանգական իրավունքները
- 5) դադարեցնել կրոնափոխության քաղաքականությունը, կրկին թույլատրել քրիստոնեական կրոնի դավանումը
- 6) մահապատժի ենթարկել հայ ուրացյալ նախարարների պարագլուխ Գաղիշո բդեշխին
- 7) չմիջամտել հայ նախարարների ներքին գործերին և պաշտոններ չտալ հավատուրացներին

**5. Թվարկված պայմաններից որո՞նք են ճիշտ արտահայտում Դամասկոսում կնքված հայ-արաբական դաշնագրի բովանդակությունը.**

- ա. Հայաստանի ամրոցներում արաբները տեղակայելու էին իրենց կայազորները:
- բ. Բյուզանդացիների ներխուժման դեպքում խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան կամենային հայերը:
- գ. Հայաստանում գանձվող հարկի հաշվին հայերը պահելու էին 25-հազարանոց այրուձի:
- դ. Խալիֆայությունն առնվազն տասը տարի Հայաստանից հարկ չէր գանձելու:
- ե. Հայաստանում գանձվող հարկի հաշվին պահվող հայոց այրուձին պետք է պատրաստ լիներ գործելու այլ տեղերում:
- զ. Պարսիկների ներխուժման դեպքում նույնպես խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան պահանջեին հայերը:
- է. Արաբական խալիֆայությունն առնվազն երեք տարի Հայաստանից հարկ չէր գանձելու, իսկ դրանից հետո հայերը վճարելու էին այնքան, որչափ կամենային:

- 1) ա, գ, է                      2) բ, դ, զ                      3) բ, ե, է                      4) ա, ե, գ

## 6. Տրված պնդումներից որոնք են սխալ.

- ա) Հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն արաբները հանձնեցին երկրի հարկահանությունը, փոխվեց բռնություններով ու կամայականություններով ուղեկցվող հարկահանության կարգը:
  - բ) Արցախի և Սյունիքի գահերեց իշխանների միջև երկպառակությունները վերացնելու և իր ազդեցությունը նրանց վրա ամրապնդելու նպատակով Աշոտ I Բագրատունին խնամիական կապեր հաստատեց նրանց հետ:
  - գ) Հայոց եկեղեցին մեծապես շահագրգռված էր Հայաստանի անկախության վերականգնման հարցով և լիակատար աջակցում էր Բագրատունիներին:
  - դ) Շիրակավանում 869 թ. հրավիրված եկեղեցական ժողովը մերժեց բյուզանդական եկեղեցու՝ դավանական միավորման առաջարկը:
  - ե) Աշոտ I-ը վերակազմեց բանակը՝ զինվորների թիվը հասցնելով 140 հազարի:
- 1) ա, դ                      2) բ, գ                      3) բ, ե                      4) գ, դ

## 7. Տրված պնդումներից որոնք են ճիշտ.

- 1) Աշոտ II-ի մահվանից հետո գահ բարձրացավ նրա որդին՝ Կարսի կառավարիչ և հայոց սպարապետ Աբասը:
- 2) Աշոտ III թագավորը 961 թ. Անին դարձրեց թագավորության մայրաքաղաք:
- 3) Գագիկ I-ը վերացրեց Վայոց ձորի Պռոշյանների իշխանությունը և նրա տարածքը նվիրեց Պահլավունիներին:
- 4) Հայաստանում առաջացած մանր թագավորությունները ենթարկվում էին «Շահնշահ հայոց» տիտղոսը կրող Անիի Բագրատունիներին:
- 5) Ենթակա թագավորները չէին կարող գահակալել առանց Բագրատունի շահնշահի հավանության, սակայն իրավասու էին ինքնուրույն հարաբերությունների մեջ մտնելու հարևան պետությունների հետ:
- 6) Դավիթ Անհողինը Գագիկ II-ից պարտություն կրեց և փախավ երկրից, սակայն հետագայում ներում խնդրեց և հետ ստացավ իր տիրույթները:

## 8. Թվարկվածներից որոնք են Շահապիվանի ժողովի ընդունած որոշումներից.

- 1) դատապարտեց նեստորականների գործողությունները
- 2) խիստ պատիժներ սահմանեց իրենց տերերին դավաճանած, տերերից փախած, անհնազանդ ու ըմբոստ ծառաների նկատմամբ
- 3) պատիժներ սահմանեց եկեղեցական կանոնադրությունն ու պաշտամունքն ավելորդ համարող և տարատեսակ անկարգություններ ու անօրինություններ գործող մծղնեականների դեմ
- 4) խիստ պատիժներ սահմանեց եկեղեցու և ընտանիքի կարգերը խախտողների դեմ
- 5) կանոնակարգեց և ամրագրեց Հայ առաքելական եկեղեցու դավանաբանական ինքնուրույնությունը

## **8–II. Պնդումների փունջ**

### **1. Բագրատունյաց Հայաստանի պետական կարգի բնութագրական կողմերի վերաբերյալ ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայոց զորքի հիմքը հեծելազորն էր, որը քանակով կրկնակի մեծ էր հետևակից:
- 2) Բանակը կազմված էր արքունական և մարզպանական գնդերից:
- 3) Պատերազմների ժամանակ բանակի թիվը հասնում էր 150 հազարի:
- 4) Իշխանաց իշխանի պաշտոնը սովորաբար տրվում էր արքայի եղբայրներին կամ գահաժառանգներին:
- 5) Պատերազմների ժամանակ մանր թագավորությունների զորքերը ենթարկվում էին հայոց սպարապետին:
- 6) Բագրատունի թագավորների համար եկեղեցու դերը ավելի մեծացավ X դարի երկրորդ կեսից սկսած:

### **2. Բագրատունյաց Հայաստանի պետական կարգի բնութագրական կողմերի վերաբերյալ ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Թագավորը ինքնակալ միապետ չէր. նրա իրավունքները սահմանափակված էին աշխարհաժողովի կողմից:
- 2) Արքայական գահը ժառանգում էր ավագ որդին. թագավորի եղբայրները գահը զբաղեցնելու իրավունք չունեին:
- 3) Իշխանաց իշխանին ենթարկվում էին արքայական կալվածքները տնօրինողները, պետական գանձարանը, երկրի մեծ ու փոքր պաշտոնյաները:
- 4) Հայոց կաթողիկոսը ճանաչում էր Բագրատունի թագավորի գերիշխանությունը:
- 5) Բագրատունի թագավորը կարող էր խորհրդակցել իշխանաց իշխանի, պայլի և կանցլերի հետ:
- 6) Արքունի գունդն անմիջականորեն ենթարկվում էր հայոց սպարապետին:

### **3. Բագրատունյաց Հայաստանի պետական կարգի բնութագրական կողմերի վերաբերյալ ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Թագավորն ինքնակալ միապետ էր և անձամբ էր լուծում պետության գործերը:
- 2) Թագավորը կարող էր խորհրդակցել սպարապետի, կաթողիկոսի, իշխանաց իշխանի կամ այլ մեծամեծ պաշտոնյաների հետ:
- 3) Բագրատունյաց Հայաստանում երկրի ներքին բոլոր հիմնական հարցերը վճռում էր իշխանաց իշխանը:
- 4) Բագրատունյաց Հայաստանում փոքր գործերի դատավարությունը կատարվում էր եկեղեցական ժողովների մշակած կանոններով ու սովորությամբ իրավունքով:
- 5) Բագրատունյաց բանակը կազմված էր արքունական և մարզպանական գնդերից:
- 6) Բագրատունի թագավորների գահը ժառանգում էր միայն ավագ որդին:

#### **4. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Լեռնային Կիլիկիայում գտնվող Ռուբինյան նորաստեղծ պետության հետագա գոյատևման համար կարևոր էր Դաշտային Կիլիկիայի նվաճումը:
- 2) Թորոս I-ի օրոք Կիլիկյան Հայաստանի սահմաններն ընդարձակվեցին դեպի հյուսիս:
- 3) Թորոս I-ը լուծեց Գագիկ II թագավորի սպանության վրեժը՝ մահապատժի ենթարկելով հույն Մանդալեի երեք որդիներին:
- 4) Անավարզան Կիլիկիայի հայկական պետության մայրաքաղաք է դարձել Լևոն I-ի ժամանակ:
- 5) Գող Վասիլի և Լևոն I-ի միացյալ զորքերը Բերդուսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ծանր պարտության մատնեցին Իկոնիայի սելջուկյան զորքերին և դուրս քշեցին երկրից:
- 6) Օգտվելով իր կիսագատ վիճակից՝ Լևոն I-ի որդի Թորոսը փախավ Կոստանդնուպոլիսից, վերադարձավ Կիլիկիա և գլխավորեց հայ ժողովրդի ազատագրական պայքարը:

#### **5. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Լևոն I իշխանի օրոք Կիլիկյան Հայաստանի սահմանները հարավում հասան մինչև Միջերկրական ծով:
- 2) Թորոս II-ի ջանքերով կաթողիկոսական աթոռը տեղափոխվեց Հռոմկլա, ուր մնաց մինչև 1285 թվականը:
- 3) Լևոն II-ը իր իշխանությանը միացրեց նաև Անտիոքի իշխանությունը և Եդեսիայի կոմսությունը:
- 4) Կոտմանի դաշտում տեղի ունեցած ճակատամարտում վրաց թագավոր Գեորգի Լաշայի զորքերը պարտություն կրեցին և նահանջեցին, այնուհետև մոնղոլներն անցան Հյուսիսային Կովկաս և Ռուսիա:
- 5) Կիլիկիայի ծովափնյա բոլոր շրջանները հույներից և խաչակիրներից ազատագրելու նպատակով Ալեհը դաշնակցել էր Հալեպի ամիրայի հետ:
- 6) 1236–1240 թթ. ընթացքում մոնղոլներն իրենց ենթարկեցին ամբողջ Հայաստանը:

#### **6. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Գագիկ Արծրունին, խիստ դժգոհ մնալով Աշոտ I թագավորից, բանակցություններ է սկսել Ատրպատականի ամիրա Յուսուֆի հետ:
- 2) Բագրատունիների թագավորությանը վերջ տալու նպատակով Յուսուֆ ամիրան Գագիկ Արծրունու հետ հարձակվել է Հայաստանի վրա:
- 3) Սմբատ I-ը պարտության է մատնել արաբներին Ապահունիք գավառի Դողս գյուղի մոտ:
- 4) Սմբատ I-ի մահից հետո արաբների դեմ պայքարը գլխավորել է նրա կրտսեր որդին՝ Աշոտ II-ը:
- 5) Աշոտ II-ը հակաարաբական դաշինք է կնքել Բյուզանդիայի հետ:
- 6) Բաղդադի խալիֆը 923 թ. Աշոտ II-ին ճանաչել է Հայաստանի շահնշահ:

## **7. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Բյուզանդական տիրապետության վերջին հենակետերը Կիլիկիայում վերացրել է Լևոն Մեծագործը:
- 2) Կիլիկիայի հայկական պետության և Անտիոքի իշխանության միջև խնդիրներ ծագեցին Դաշտային Կիլիկիայի արևմտյան շրջանների պատճառով:
- 3) Լևոն II իշխանի և Բոհեմունդ II-ի միջև հաշտության պայմանագիր կնքվեց Սիս քաղաքում:
- 4) Պայմանագրի համաձայն՝ Բոհեմունդը հսկայական փրկագին պետք է վճարեր իր ազատության համար:
- 5) Բոհեմունդի ժառանգորդ Ֆիլիպի և Ստեփանեի որդի Ռուբենի դուստր Ալիսի արու զավակը պետք է ժառանգեր Անտիոքը և Կիլիկյան Հայաստանը:
- 6) Անտիոքի և Կիլիկիայի միավորմամբ Լևոնը փորձում էր ստեղծել հայ-խաչակրաց միացյալ պետություն:

## **8. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Աշոտ II-ը Սևանի ճակատամարտում ջախջախեց Յուսուֆի գլխավորած արաբական զորքը:
- 2) Աշոտ II-ը 921 թ. մեկնեց Կոստանդնուպոլիս, որտեղ հակաարաբական դաշինք կնքեց:
- 3) Անիից հյուսիս գտնվող Արգինայի վանքը 938 թ. դարձավ հայոց կաթողիկոսների նստավայր:
- 4) Առաջին Բագրատունի թագավորները հաստատվել էին Բագարանում և Երազգավորսում (Շիրակավան):
- 5) Ուժեղ երկրաշարժից ավերված Կարսը Բագրատունյաց թագավորության մայրաքաղաքի դերը զիջեց Անիին:
- 6) Բագրատունիները նպատակահարմար գտան Մամիկոնյաններից իրենց անցած Շիրակի Անի ամրոցը դարձնել Հայոց թագավորության մայրաքաղաք:

## **9. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայ-մոնղոլական դաշնակցային պայմանագրի համաձայն՝ կողմերը պատերազմների ժամանակ պետք է օգնեին միմյանց:
- 2) Մառիի ճակատամարտում զոհվել էր արքայորդի Լևոնը, իսկ Թորոսը գերի էր ընկել:
- 3) Անտիոքում իշխանության եկած մամլուքները երկարատև պայքար սկսեցին Կիլիկյան Հայաստանի դեմ:
- 4) Մառիի ճակատամարտում պարտությունը և Անտիոքի անկումը վերջ դրեցին Հեթում I-ի՝ քրիստոնեա-մոնղոլական դաշինք ստեղծելու ծրագրին:
- 5) Մամլուքները 1285 թ. գրավեցին և թալանեցին Հռոմկլա բերդաքաղաքը:
- 6) Հեթում II-ը հայոց կաթողիկոսությունը Հռոմկլայից տեղափոխեց Սիս:

**10. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Անտիոքի իշխանության վրա մի քանի արշավանքներ կազմակերպելուց հետո արաբները որոշեցին հարձակվել նաև Կիլիկյան Հայաստանի վրա:
- 2) Ըստ հայ-մոնղոլական դաշինքի՝ հայոց եկեղեցիներն ու վանքերն ազատվում էին հարկերից:
- 3) Մամլուքները, որոնք ծառայում էին սուլթանի անձնական գվարդիայում, զավթեցին իշխանությունը Եգիպտոսում:
- 4) Մամլուքներին անհանգստացնում էր մոնղոլա-հայ-բյուզանդական ռազմաքաղաքական դաշինքը:
- 5) Հայ-եգիպտական զորքերի միջև վճռական ճակատամարտ է տեղի ունեցել Սև լեռների մոտ՝ Մառի կոչված վայրում:
- 6) Մառիի ճակատամարտում պարտությունը և Անտիոքի անկումը վերջ դրեցին Լևոն II-ի՝ քրիստոնեա-մոնղոլական դաշինք ստեղծելու ծրագրին:

**11. Մլեհի գործունեության վերաբերյալ ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Նա դաշնակցել է Դամասկոսի ամիրայի հետ:
- 2) Նրա իշխանության տարիներին Դաշտային Կիլիկիան կրկին խաչակիրների տիրապետության տակ էր. միայն նրա արևելյան մի քանի շրջաններ պատկանում էին Բյուզանդիային:
- 3) Խաչակիրներից ազատագրել է Ադանա, Մսիս և Տարսոն քաղաքները:
- 4) Բարեկարգելով Սիս քաղաքը՝ այն դարձրել է Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք:
- 5) Նրա վարած քաղաքականությունը և իրագործած բարեփոխումները նպաստեցին Կիլիկիայի հայոց պետության ամրապնդմանը և հզորացմանը:
- 6) Հարևան մահմեդական երկրների և Բյուզանդիայի հետ գործակցելու քայլերից դժգոհ հայ բարձրաստիճան հոգևորականները և իշխանները դավադրություն կազմակերպեցին և սպանեցին նրան:

**12. Թվարկված իրադարձությունները տեղի են ունեցել 1048 թվականին.**

- 1) կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Արգինա
- 2) Ապլլարիպ Արծրունու նշանակվելը Կիլիկիայի ստրատեգոս
- 3) թյուրք-սելջուկների երկրորդ արշավանքը
- 4) Աշոտ IV-ի մահը
- 5) Տաշիր-Ձորագետի թագավոր Դավիթ Անհողինի մահը
- 6) Արծն քաղաքի գրավումը թյուրք-սելջուկների կողմից

**13. Թվարկված իրադարձությունները տեղի են ունեցել 1187 թվականին.**

- 1) Մլեհի եղբորորդի իշխան Ռուբենի կառավարման ավարտը
- 2) խաչակրաց երրորդ արշավանքի սկիզբը
- 3) Սարգիս Զաքարյանի նշանակվելը ամիրսպասալար

- 4) Երուսաղեմի գրավումը Եգիպտոսի սուլթան Սալահ ադ Դինի կողմից
- 5) Լևոն II իշխանի գահակալության սկիզբը
- 6) Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» կազմումը

**14. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Լևոն VI-ը Գվիդոն Լուսինյանի եղբորորդին էր, որը մեծ դժվարությամբ Կիպրոսից հասավ Սիս և օծվեց հայոց թագավոր:
- 2) Մամլուքները և մոնղոլական կարամանների ցեղը 1375 թ. կրկին պաշարեցին մայրաքաղաք Սիսը:
- 3) Ռազմամթերքի և սննդամթերքի պակասը ստիպեց հայերին 1376 թ. ապրիլի 16-ին հանձնել Սսի միջնաբերդը:
- 4) Սսի գերյալների թվում էին Լևոն VI Լուսինյանը և նրա ընտանիքը, Պողոս Սսեցի կաթողիկոսը, որոնց հատուկ հսկողությամբ տարան Կահիրե:
- 5) Եգիպտոսի սուլթանը Պողոս Սսեցի կաթողիկոսին չթույլատրեց վերադառնալ Կիլիկիա:
- 6) Լևոն VI թագավորը մնաց Կահիրեում, իսկ հետագայում գերությունից ազատվեց և տեղափոխվեց Լոնդոն, ուր և մահացավ:

**15. Թվարկված իրադարձությունները տեղի են ունեցել 1001 թվականին.**

- 1) Ծումբի ճակատամարտը
- 2) Հաղպատի և Սանահինի վանքերի հիմնումը
- 3) Անիի Կաթողիկե եկեղեցու կառուցման ավարտը
- 4) Տայքի միացումը Բյուզանդիային
- 5) Տարոնի միացումը Բյուզանդիային
- 6) Տաշիր-Ձորագետի թագավոր Դավիթի ապստամբությունը

**16. Հայ-մոնղոլական դաշնակցային պայմանագրի վերաբերյալ ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Իկոնիայի սելջուկների հարձակումներից պաշտպանվելու նպատակով Կիլիկիայի սահմանամերձ բերդերում պետք է տեղակայվեին մոնղոլական կայազորներ, որոնց ծախսերը հոգալու էին հայերը:
- 2) Մոնղոլները խոստացան վերադարձնել այն տարածքները, որոնք մահմեդականները խլել էին Կիլիկյան Հայաստանից, և հայոց եկեղեցիներն ու վանքերն ազատել հարկերից:
- 3) Մոնղոլները համաձայնեցին, որ Կիլիկյան Հայաստանը միավորվի Չաքարյանների իշխանապետության հետ:
- 4) Մոնղոլները պարտավորվեցին օգնել հայերին Ասորիքը գրավելու գործում:
- 5) Մոնղոլական տերությունը և Կիլիկյան Հայաստանը պարտավորվում էին չեզոքություն պահպանել Եգիպտոսի սուլթանության դեմ իրենցից որևէ մեկի պատերազմի դեպքում:
- 6) Մոնղոլները համաձայնեցին պահպանել Կիլիկիայի հայոց թագավորության անկախությունը և տարածքային ամբողջականությունը:

**17. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Կիլիկյան հայոց թագավորության անկումից հետո Սսի կաթողիկոսական աթոռը, կտրված լինելով բուն Հայաստանից, չէր կարող լիարժեքորեն իրականացնել իր համահայկական դերակատարումը:
- 2) Հայ հոգևորականության ներկայացուցիչները մի քանի անգամ դիմեցին Մեսրոպ Արտազեսի կաթողիկոսին՝ առաջարկելով իր նստավայրը Սսից փոխադրել Էջմիածին, սակայն մերժում ստացան:
- 3) Էջմիածնում Մայր Աթոռի վերահաստատումից հետո Կիլիկիայի կաթողիկոսությունը դադարեցրեց իր գոյությունը:
- 4) Աղվանից կաթողիկոսությունն անվանվել է նաև Գանձասարի կաթողիկոսություն:
- 5) Աղվանից եկեղեցին միավորում էր Այսրկովկասի արևելյան հատվածի ու հայկական Արցախ և Սյունիք նահանգների քրիստոնյա հայ բնակչությանը:
- 6) Կ. Պոլսի հայոց պատրիարքը հաստատվում էր օսմանյան սուլթանի հրովարտակով՝ Իրանի շահի համաձայնությամբ:

**18. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Դեպի Հայաստան թյուրք-սելջուկների առաջին արշավանքը գլխավորում էին զորավարներ Իբրահիմն ու Գթլմուշը:
- 2) Թյուրք-սելջուկների երրորդ արշավանքը դեպի Հայաստան անձամբ ղեկավարում էր նրանց առաջնորդ Տուղրիլը:
- 3) Սելջուկներին համառ դիմադրություն ցույց տվեցին Անիի պաշտպանները, որոնցից Թաթուլ անունով մի հայ զորական մահացու վերք պատճառեց Տուղրիլ բեկի երիտասարդ ազգականներից մեկին:
- 4) Սելջուկների առաջին չորս արշավանքները հետախուզական բնույթ էին կրում:
- 5) Սելջուկյան պետության գլուխ կանգնած Ալի Արսլանը որոշեց վերջնականապես գրավել Հայաստանը:
- 6) Անիի գրավումից հետո Սյունիքի, Կարսի և Վասպուրականի թագավորները ձևականորեն իրենց հպատակությունը հայտնեցին սելջուկներին:

**19. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) XI դ. երկրորդ կեսին սկսվեց հայ բնակչության զանգվածային արտագաղթ դեպի Հյուսիսային Միջագետք, Կիլիկիա, Ասորիք, Կապադովկիա, որը հիմնականում պայմանավորված էր Բյուզանդիայի վարած քաղաքականությամբ և մոնղոլների արշավանքներով:
- 2) Բյուզանդիան Հայաստանից իր կայսրության այլ տարածքներ էր տեղափոխում հիմնականում արքայական և իշխանական ընտանիքների, այդ թվում՝ Բագրատունիների և Արծրունիների մի մասին:
- 3) Կիլիկիայի հայկական պետության ժամանակաշրջանում հայկական աղբյուրներն այս երկիրն անվանել են «Հայոց աշխարհ», «Կիլիկյան Հայաստան»:
- 4) Հյուսիսում Կիլիկիայի սահմանները հասնում էին մինչև Տավրոսի լեռները, իսկ արևմուտքում անցնում էին Ամանոսի (Սև) լեռներով:

- 5) Կիլիկիայի հարավարևելյան շրջանները հայտնի են Դաշտային Կիլիկիա անունով:
- 6) Անիի Բագրատունյաց վերջին թագավոր Գագիկ II-ը հաստատվել էր Կիլիկիայի սահմանագլխին գտնվող Պիզու քաղաքում:

**20. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Արևելյան Կիլիկիայում և Հյուսիսային Միջագետքում ձևավորվել էր Փիլարտոս Վարաժնունու իշխանությունը՝ Քեսուն կենտրոնով:
- 2) Կարսի թագավոր Գագիկ Աբասյանն իր թագավորության դիմաց բյուզանդական կայսրից ստացել էր Կիլիկյան Տավրոսում գտնվող Ծամնդավ բերդաքաղաքը:
- 3) Ռուբեն իշխանը, հենվելով Լեոնային Կիլիկիայում հաստատված խաչակիրների օժանդակության վրա, ապստամբություն բարձրացրեց բյուզանդացիների դեմ և ամրացավ Կոռոմոզուլ բերդում:
- 4) Ապլլարիպ Արծրունին Սեբաստիա էր տեղափոխվել Վասպուրականի թագավոր Սենեքերիմ Արծրունու հետ:
- 5) Բյուզանդացիներն Ապլլարիպ Արծրունուն էին հանձնել Ադանա, Տարսոն, Սիս քաղաքները և Լամբրոն ու Պիր բերդերը:
- 6) Օգտվելով Մանազկերտի ճակատամարտից հետո ստեղծված նպաստավոր իրավիճակից՝ բյուզանդական բանակում ծառայող Գոդ Վասիլը հիմնադրեց ընդարձակ հայկական իշխանություն՝ Մարաշ կենտրոնով:

**21. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Կիլիկիայի հայկական պետության ժամանակաշրջանում խաչակիր մատենագիրներն այս երկիրն անվանել են «Կիլիկյան Հայաստան», «Հայոց աշխարհ»:
- 2) Հյուսիսում Կիլիկիայի սահմանները հասնում էին մինչև Տավրոսի լեռները, իսկ արևելքում՝ անցնում էին Ամանոսի (Սև) լեռներով:
- 3) Կիլիկիայի արևմտյան շրջանները հայտնի են Դաշտային Կիլիկիա անունով:
- 4) Անիի Բագրատունյաց վերջին թագավոր Գագիկ II-ը հաստատվել էր Կիլիկիայի սահմանագլխին գտնվող Պիր քաղաքում:
- 5) XI դ. կեսերից սկսվել էր հայ բնակչության զանգվածային արտագաղթ դեպի Հյուսիսային Միջագետք, Կիլիկիա, Ասորիք, Կապադովկիա, որը հիմնականում պայմանավորված էր Բյուզանդիայի վարած քաղաքականությամբ և թյուրք-սելջուկների արշավանքներով:
- 6) Բյուզանդիան Հայաստանից իր կայսրության այլ տարածքներ էր տեղափոխում հիմնականում արքայական և իշխանական ընտանիքների, այդ թվում՝ Բագրատունիների և Զաքարյանների մի մասին:

**22. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայաստանում ավատատիրական աստիճանակարգի գլուխ կանգնած էր թագավորը, ապա հաջորդ աստիճանին ոստանիկներն էին և հոգևորականները:
- 2) Ուշ միջնադարում հայոց անկախ պետականությունը պահպանվել է նախարարական համակարգի միջոցով:

- 3) Հայոց իշխանական համակարգում գործել է «Իմ վասալի վասալը իմ վասալը չէ» ենթակայության ավատատիրական սկզբունքը:
- 4) Ավատատիրության զարգացումը հանգեցրեց պետական (թագավորական) հողատիրության խոշորացմանը:
- 5) Միջնադարում օտար տերությունների նվաճողական քաղաքականությունը խախտեց հայ հասարակության բնականոն զարգացման ընթացքը:
- 6) Միջնադարյան Հայաստանում առավել տարածված էին համայնքային և եկեղեցական հողատիրության ձևերը:

**23. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Վաղ միջնադարյան Հայաստանում հողատիրության ձևերից էր գանձագին կոչվածը. այդ կարգի հողերը մասնավոր էին և ենթակա առուվաճառքի:
- 2) Բագրատունիների հայոց թագավորության անկումից հետո պահպանված հայ նախարարական համակարգը ուշ միջնադարում դարձավ հայոց անկախ պետականության կրողն ու պահապանը:
- 3) Հորից որդուն ժառանգաբար անցնող խոշոր մասնավոր հողերը կոչվում էին հայրենիք:
- 4) Մեծ Հայքի գերագույն տերը Արշակունյաց շրջանում աշխարհաժողովն էր:
- 5) Բագրատունիների օրոք պահպանվեց Արշակունյաց ժամանակաշրջանին այնքան բնորոշ հակասությունը թագավորի և եկեղեցու միջև:
- 6) Սյունի, Կաղմես, Գուգարաց, Բագրատունի նախարարները կոչվում էին բյուրավորներ:

**24. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) XVI դարի սկզբին թուրքմենական ցեղախմբերի տիրապետությանը Հայաստանում փոխարինելու եկան Օսմանյան և Սեֆյան հակամարտող պետությունների ծանր ու ավերիչ ժամանակները:
- 2) Կարա-կոյունլուներին պարտության մատնելուց և նրանց մայրաքաղաք Թավրիզը գրավելուց հետո Սեֆյանները հիմնադրեցին իրենց պետությունը:
- 3) Շահ Աբասն առևտրական ու դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Ռուսաստանի հետ, իսկ ավստրիական սպաների ու վարպետների օգնությամբ վերակազմեց ու վերազինեց պարսկական բանակը:
- 4) Շահ Աբասը 1604 թ. սկսեց օսմաններին զիջած տարածքների վերագրավումը:
- 5) 1605 թ. վճռական ճակատամարտում պարտություն կրելով՝ օսմանյան կողմը հաշտության պայմանագիր ստորագրեց, որով վերահաստատվում էր Ամասիայի պայմանագրով նախատեսված սահմանագիծը:
- 6) Կասրե-Շիրինի պայմանագրով Հայաստանը կրկին վերաբաժանվեց Սեֆյան Իրանի և Օսմանյան կայսրության միջև. այդ սահմանագիծը քիչ փոփոխություններով պահպանվել է մինչև XIX դարի սկիզբը:

**25. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Օսմանյան թուրքերի կողմից Կ.Պոլիսը գրավելուց ութ տարի անց այդտեղ հիմնադրվել է հայոց պատրիարքությունը:
- 2) Միքայել Սեբաստացի կաթողիկոսի կողմից Վենետիկ ուղարկված մահտեսի Շահմուրատի գլխավորած պատվիրակության նպատակն էր ստանալ եվրոպական տերությունների օգնությունը՝ թուրքական տիրապետությունից ազատագրվելու նպատակով:
- 3) Զհանշահի կառավարման շրջանում Արցախի, Սյունիքի, Գուգարքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի և այլ վայրերի հայ իշխանական տների ներկայացուցիչները վերականգնեցին իրենց իշխանությունն ու վարչական կառավարումը և սկսեցին կոչվել մելիքներ:
- 4) Մելիքությունները ժառանգական էին. մահացած մելիքին փոխարինում էր ավագ որդին, որին հաստատում էր շահը:
- 5) Միայն XVI դ. առաջին կեսին են գեյթունցիները պարտավորվել օսմանյան իշխանություններին վճարել տարեկան որոշակի հարկ՝ պահպանելով իրենց ներքին ինքնուրույնությունը:
- 6) Բռնագաղթի միջոցով հայ վաճառականներին բնակեցնելով Պարսկաստանի արևելյան նահանգներում՝ շահ Աբասը խթանեց իր երկրի տնտեսության զարգացումը:

**26. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայաստանում առաջին բարձրագույն դպրոցը՝ վարդապետարանը, հիմնադրվել է Վաղարշապատում V դ. սկզբներին:
- 2) Ամարասի դպրոցը հիմնադրվել է XIII դարում Ներսես Գ-ի կողմից:
- 3) Դավիթ Անհաղթը կատարել է գիտությունների դասակարգում ըստ բնագիտության, թվաբանության և աստվածաբանության:
- 4) Նշանավոր ճարտասան և մանկավարժ Պարոյր Հայկազնը զբաղվել է նաև իմաստասիրությամբ:
- 5) Հայ եկեղեցաշինության մեջ առաջացած նոր երևույթ էր կենտրոնազմբեթ կառույցների ի հայտ գալը, որոնք ավելի դիմացկուն էին երկրաշարժերի ժամանակ:
- 6) Պահպանված և մեզ հասած հայկական առաջին մանրանկարները, որոնք վերաբերում են VI-VII դարերին, չորսն են:

**27. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Դավիթ Ալավկատորդին հայ իրականության մեջ առաջին անգամ փորձ արեց իրավական մեկ համակարգի մեջ ներառելու եկեղեցական և աշխարհիկ իրավունքը և ստեղծելու միասնական օրենսդրություն:
- 2) Ներսես Շնորհալի կաթողիկոսի հեղինակած «Թուղթ դատաստանի»-ն անդրադառնում է ամուսնա-ընտանեկան իրավունքի որոշ նորմերի:
- 3) Միջնադարի հայ իրավական մտքի գլուխգործոցը Մխիթար Գոշի «Դատաստանագիրքն» է, որը կազմվել է 1184 թվականին:

- 4) Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» շուրջ 700 տարի ծառայեց հասարակական կյանքի բոլոր բնագավառները կարգավորելուն:
- 5) Սմբատ Գունդատարի «Դատաստանագրքի» հիմքում, որ կազմվել է 1265 թվականին, դրված են հայկական սովորությալին իրավունքը, «Հայոց կանոնագիրքը» և Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»:
- 6) Սսի 1243 թ. եկեղեցական ժողովն ընդունել է հասարակության ամուսնա-ընտանեկան և բարոյական կյանքը կարգավորող երկու տասնյակից ավելի կանոններ:

## **28. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) X–XI դարերը համարվում են հայ բարձրագույն դպրոցի կազմակերպման ժամանակաշրջան, իսկ XII դարից սկսվում է այդ դպրոցների վերելքի ժամանակաշրջանը:
- 2) Հայկական մշակույթի զարգացման գործում նշանակալից դեր է խաղացել Նոր Գետիկի (Գոշավանքի) վարդապետարանը, որն իր ծաղկումն ապրել է Հովհաննես Իմաստասերի օրոք:
- 3) 1280–ական թվականներին նշանավոր մատենագիր Եսայի Նչեցին հիմնադրում է Աղբերց վանքի դպրոցը, որը Ներսես Մշեցու թաբունապետության տարիներին հայտնի է դառնում Գլաձորի համալսարան անունով:
- 4) Գլաձորի համալսարանում է կրթություն ստացել նշանավոր պատմագիր Կիրակոս Գանձակեցին:
- 5) Սսի համալսարանը մեծ հռչակ է վայելել, այդտեղ կրթություն են ստացել Կիլիկյան Հայաստանի պետական գործիչները և գիտության նվիրյալները:
- 6) Ներսես Լամբրոնացին հիմնադրել էր Սկևռայի դպրոցը, որը գոյատևել է 200 տարի:

## **29. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Վանի համահայկական տերությունը հելլենիստական տիպի բացարձակ միապետություն էր:
- 2) Հորից որդուն ժառանգաբար անցնող խոշոր մասնավոր հողերը կոչվում էին պարզակականք:
- 3) Բագրատունիների օրոք պահպանվեց Արշակունյաց ժամանակաշրջանին այնքան բնորոշ հակասությունը թագավորի և եկեղեցու միջև, սակայն հայոց կաթողիկոսը ճանաչում էր թագավորի գերիշխանությունը:
- 4) Կիլիկյան Հայաստանի թագավորության անկումից հետո պահպանված հայ նախարարական համակարգը ուշ միջնադարում դարձավ հայոց անկախ պետականության կրողը:
- 5) Ըստ «Աշխարհացույց»-ի՝ Մեծ Հայքի տարածքը բաժանված էր 191 աշխարհների:
- 6) Վաղ միջնադարյան Հայաստանում հողատիրության ձևերից էր գանձագին կոչվածը. այդ կարգի հողերը պետական էին և տրվում էին ծառայության դիմաց:

**30. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Միջնադարում հայոց պետականությունը պահպանվել է նախարարական համակարգի միջոցով:
- 2) Հայոց իշխանական համակարգում գործել է «Իմ վասալի վասալը իմ վասալը չէ» ենթակայության ավատատիրական սկզբունքը:
- 3) Ավատատիրության խորացումը հանգեցրեց պետական (թագավորական) հողատիրության մասնատմանը:
- 4) Միջնադարում օտար տերությունների նվաճողական քաղաքականությունը փոխել է հայ հասարակության բնականոն զարգացման ընթացքը:
- 5) Միջնադարյան Հայաստանում առավել մեծ տեսակարար կշիռ ունեին պետական և ավատական խոշոր հողային տիրույթները:
- 6) Հայաստանում ավատատիրական աստիճանակարգի գլուխ կանգնած էր թագավորը, ապա հաջորդ աստիճանին բղեշխներն էին ու գործակալները:

**31. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Կիլիկյան Հայաստանում մարաջախտը զբաղվում էր բանակի սպառազինությամբ և պարենի մատակարարմամբ. նա գունդստաբլի անմիջական տեղակալն էր:
- 2) Կիլիկյան Հայաստանում արքունական հեծելազորի հրամանատարը կոչվում էր սպասալար:
- 3) Հիվանդախնամների միաբանությունը պարտավոր էր Կիլիկյան Հայաստանի բանակին յուրաքանչյուր տարի տրամադրել 400 հեծյալ ռազմիկ:
- 4) Կիլիկյան Հայաստանում սպարապետությունը Հեթումյանների հարստության ժառանգական պաշտոնն էր:
- 5) Հայկազուն-Երվանդականների թագավորությունում արքայից հետո երկրի կարևորագույն դեմքը քրմապետն էր:
- 6) Հայր մարդպետն իրականացնում էր արքունի կալվածքների ու գանձարանի հսկողությունը և Արշակունյաց սեպուհների դաստիարակությունը:

1. ՏԱՐԵԹՎԵՐ

---

1. Երբ է գոհվել Քեռին.

- 1) 1916 թ. հունվարի 13–ին
- 2) 1916 թ. փետրվարի 2–ին
- 3) 1916 թ. մարտի 11–ին
- 4) 1916 թ. մայիսի 15–ին

2. Մինչև երբ է գոյատևել Գ. Արծրունու խմբակը Թիֆլիսում.

- 1) 1882 թ.
- 2) 1886 թ.
- 3) 1883 թ.
- 4) 1885 թ.

3. Ո՞ր թվականին է տեղի ունեցել Գյալիսորի կոիվը.

- 1) 1895 թ.
- 2) 1897 թ.
- 3) 1894 թ.
- 4) 1893 թ.

4. Երբ է հրապարակվել ՀՅԴ հռչակագիրը.

- 1) 1890 թ. սեպտեմբերին
- 2) 1891 թ. սեպտեմբերին
- 3) 1894 թ. հունիսին
- 4) 1892 թ. հուլիսին

5. Երբ է սկսվել Շապին Կարահիսարի ինքնապաշտպանությունը.

- 1) 1915 թ. սեպտեմբերի 29–ին
- 2) 1915 թ. հունիսի 28–ին
- 3) 1915 թ. հունիսի 3–ին
- 4) 1915 թ. մայիսի 7–ին

6. Երբ է Գևորգ Ե–ն Եվրոպայում կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ նշանակել Պողոս Նուբար փաշային.

- 1) 1912 թ. հոկտեմբերին
- 2) 1913 թ. հոկտեմբերին
- 3) 1912 թ. նոյեմբերին
- 4) 1913 թ. նոյեմբերին

7. Երբ են սկսվել Սուետիայի հայության ինքնապաշտպանական կոիվները.

- 1) 1915 թ. օգոստոսի սկզբին
- 2) 1915 թ. սեպտեմբերի սկզբին
- 3) 1915 թ. նոյեմբերի կեսին
- 4) 1915 թ. հուլիսի սկզբին

8. Երբ է Բարձր դուռը հրապարակել բարեփոխումների նոր հրովարտակ.

- 1) 1839 թ.
- 2) 1844 թ.
- 3) 1856 թ.
- 4) 1857 թ.

9. Երբ Կ. Պոլսի ուսումնական խորհրդի անդամները մշակեցին արևմտահայ համայնքի ներքին կյանքին վերաբերող կանոնադրություն և ներկայացրին համայնքի ընդհանուր ժողովի հաստատմանը.

- 1) 1857 թ.
- 2) 1859 թ.
- 3) 1860 թ.
- 4) 1863 թ.

10. Երբ են բացահայտվել և դադարել գործելուց «Բարենպատակ ընկերություն» և «Հայրենիքի սիրո գրասենյակ» խմբակները.

- 1) 1869 թ.
- 2) 1872 թ.
- 3) 1874 թ.
- 4) 1875 թ.



**21. Երբ են Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և Նազըմը հեռակա դատապարտվել մահվան.**

- |                         |                         |
|-------------------------|-------------------------|
| 1) 1921 թ. մարտի 15-ին  | 3) 1922 թ. ապրիլի 17-ին |
| 2) 1919 թ. հուլիսի 5-ին | 4) 1919 թ. հունվարին    |

**22. Երբ է իրականացվել Թալեաթի մահապատիժը հայ վրիժառուի կողմից.**

- |                            |                          |
|----------------------------|--------------------------|
| 1) 1921 թ. մարտի 15-ին     | 3) 1922 թ. ապրիլի 17-ին  |
| 2) 1921 թ. դեկտեմբերի 6-ին | 4) 1922 թ. հուլիսի 25-ին |

**23. Երբ է իրականացվել Օսմանյան կայսրության նախկին վարչապետ Սայիդ Հալիմի սպանությունը.**

- |                            |                          |
|----------------------------|--------------------------|
| 1) 1919 թ. հուլիսի 5-ին    | 3) 1922 թ. հուլիսի 25-ին |
| 2) 1921 թ. դեկտեմբերի 6-ին | 4) 1922 թ. ապրիլի 17-ին  |

**24. Երբ է իրականացվել Բեհադդին Շաքիրի և Ջեմալ Ազմիի մահապատիժը.**

- |                          |                            |
|--------------------------|----------------------------|
| 1) 1921 թ. մարտի 15-ին   | 3) 1922 թ. ապրիլի 17-ին    |
| 2) 1922 թ. հուլիսի 25-ին | 4) 1921 թ. դեկտեմբերի 6-ին |

**25. Երբ է իրականացվել Ջեմալի մահապատիժը.**

- |                            |                          |
|----------------------------|--------------------------|
| 1) 1921 թ. մարտի 15-ին     | 3) 1926 թ.               |
| 2) 1921 թ. դեկտեմբերի 6-ին | 4) 1922 թ. հուլիսի 25-ին |

**26. Երբ է սպանվել Էնվերը.**

- |                    |                    |
|--------------------|--------------------|
| 1) 1922 թ. մարտ    | 3) 1926 թ. օգոստոս |
| 2) 1922 թ. օգոստոս | 4) 1922 թ. հուլիս  |

**27. Երբ է կախաղան բարձրացվել Նազըմը.**

- |            |            |            |            |
|------------|------------|------------|------------|
| 1) 1925 թ. | 2) 1922 թ. | 3) 1926 թ. | 4) 1923 թ. |
|------------|------------|------------|------------|

## 2. ՓԱՍՏԵՐ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

1. Ըստ Իսրայել Օրու կազմած Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ազատագրության ծրագրի՝ որքան էր լինելու Հյուսիսային Կովկասից Վրաստան մտնող զորքերի թիվը.  
1) 25000                      2) 20000                      3) 10000                      4) 15000
2. Որտեղ է ձևավորվել «Զինակիր» գաղտնի կազմակերպությունը.  
1) Վանաձորում                      3) Վանում  
2) Մոսկվայում                      4) Կարինում
3. Որքան էր Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում ռուսական զորքերի թիվը 1914 թ. աշնանը.  
1) 100 000                      2) 200 000                      3) 182 000                      4) 282 000
4. Ո՞վ էր Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման ծրագրի հեղինակը.  
1) Մ. Նակաշիձեն                      3) Ի. Վորոնցով-Դաշկովը  
2) Գ. Գոլիցինը                      4) Պ. Ավերյանովը
5. Որտեղ է մարտնչել Փարամազի խումբը հայ-թաթարական ընդհարումների ժամանակ.  
1) Թիֆլիսում                      3) Երևանում  
2) Զանգեզուրում                      4) Բաքվում
6. Ո՞ր կառույցն է գլխավորել հայ կամավորական շարժման կազմակերպչական աշխատանքները.  
1) Արևմտահայերի ազգային խորհուրդը  
2) Արևելահայերի ազգային խորհուրդը  
3) Հայոց ազգային բյուրոն  
4) Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտեն
7. Ո՞վ է ժամանակավոր կառավարության կողմից նշանակվել Արևմտյան Հայաստանի և Թուրքիայից գրավված մյուս տարածքների գլխավոր կոմիսար.  
1) Վ. Խառլամովը                      3) Պրժևալսկին  
2) Ավերյանովը                      4) Հ. Զավրյանը
8. Ո՞վ է ժամանակավոր կառավարության կողմից նշանակվել Արևմտյան Հայաստանի և Թուրքիայից գրավված մյուս տարածքների գլխավոր կոմիսարի քաղաքացիական գծով տեղակալ.  
1) Վ. Փափազյանը                      3) Մ. Պապաջանյանը  
2) Հ. Զավրյանը                      4) Հ. Արղությանը

**9. Արևմտահայերի առաջին համագումարը տեղի է ունեցել՝**

- |              |                     |
|--------------|---------------------|
| 1) Թիֆլիսում | 3) Կ. Պոլսում       |
| 2) Երևանում  | 4) Ալեքսանդրապոլում |

**10. Ո՞վ է ընտրվել Արևմտահայերի ազգային խորհրդի նախագահ 1917 թվականին.**

- |                    |                      |
|--------------------|----------------------|
| 1) Վահան Փափագյանը | 3) Հակոբ Զավրյանը    |
| 2) Անդրանիկը       | 4) Ավետիս Ահարոնյանը |

**11. Ո՞վ է ընտրվել Արևմտահայերի ազգային խորհրդի պատվավոր նախագահ 1917 թվականին.**

- |                    |                      |
|--------------------|----------------------|
| 1) Հակոբ Զավրյանը  | 3) Անդրանիկը         |
| 2) Վահան Փափագյանը | 4) Ավետիս Ահարոնյանը |

**12. Որքան հայ բնակչություն կար հայկական մարզերում 1917 թ. աշնան վերջերին.**

- |            |            |
|------------|------------|
| 1) 150 000 | 3) 200 000 |
| 2) 300 000 | 4) 250 000 |

**13. Ո՞վ է ընտրվել Արևելահայերի ազգային խորհրդի նախագահ.**

- |                  |                  |
|------------------|------------------|
| 1) Ն. Աղբալյանը  | 3) Լ. Շանթը      |
| 2) Ա. Մանուկյանը | 4) Ա. Ահարոնյանը |

**14. Ո՞վ է նշանակվել արևմտահայ զորաբաժնի հրամանատար 1917 թ. դեկտեմբերին.**

- |                |              |
|----------------|--------------|
| 1) Անդրանիկը   | 3) Գ. Նժդեհը |
| 2) Մ. Արեշյանը | 4) Դրոն      |

**15. Ո՞վ է ղեկավարել Շապին Կարահիսար քաղաքի 1915 թ. ինքնապաշտպանությունը.**

- |                       |                          |
|-----------------------|--------------------------|
| 1) Հակոբ Կոստյանը     | 3) Մկրտիչ Յոթնեղբայրյանը |
| 2) Ղուկաս Տեովլեթյանը | 4) Տիգրան Անդրեասյանը    |

**16. Ո՞վ է ղեկավարել Վանի Քաղաքամեջ թաղամասի ինքնապաշտպանությունը.**

- |                       |                          |
|-----------------------|--------------------------|
| 1) Արամ Մանուկյանը    | 3) Մկրտիչ Յոթնեղբայրյանը |
| 2) Ղուկաս Տեովլեթյանը | 4) Հայկակ Կոստյանը       |

**17. Սասունի 1904 թ. ինքնապաշտպանության ժամանակ ո՞վ է ղեկավարել հյուսիսային կողմի պաշտպանությունը.**

- |              |                      |
|--------------|----------------------|
| 1) Անդրանիկը | 3) Գևորգ Զավուշը     |
| 2) Հրայրը    | 4) Սեբաստացի Մուրադը |

**18. Որքան էր հայ կամավորականների թիվը 1915 թ. վերջին – 1916 թ. սկզբին.**

- |             |             |
|-------------|-------------|
| 1) 5 հազար  | 3) 20 հազար |
| 2) 15 հազար | 4) 10 հազար |

19. Ո՞վ էր Տրապիզոնի բանակցություններում Անդրկովկասի Սեյմի պատվիրակության նախագահը.

- 1) Ն. Չխեիձեն
- 2) Ա. Չխենկելին
- 3) Գեգեչկորին
- 4) Մդիվանին

20. Ո՞վ է գլխավորել հայ կամավորական շարժման կազմակերպչական աշխատանքներն իրականացնող Ազգային բյուրոյի գործադիր մարմինը.

- 1) Ռոստոմը
- 2) Արմեն Գարոն
- 3) Հովսեփ Արղությանը
- 4) Սիմոն Վրացյանը

21. Ի՞նչ պաշտոն էր զբաղեցնում Մելիքջան Մելիք-Շահնազարյանը.

- 1) Երևանի և Նախիջևանի զորահրամանատար
- 2) Արարատյան երկրի քալանթար
- 3) Երևանի խանության գլխավոր հարկահավաք
- 4) Նախիջևանի խանության կառավարիչ

22. Արևմտյան Հայաստանից որքան մարդ 1830 թ. վերաբնակեցվեց ռուսական տերությանն անցած տարածքներում.

- 1) 50 000
- 2) 75 000
- 3) 30 000
- 4) 45 000

23. Քանի՞ գյուղ էր գրումահայերը վերաշինեցին կամ հիմնադրեցին Ախալքալաքի գավառում.

- 1) 30
- 2) 50
- 3) 12
- 4) 75

24. Ո՞ր քաղաքում է ստեղծվել Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը.

- 1) Ալեքսանդրիա
- 2) Վան
- 3) Կ. Պոլիս
- 4) Ժնև

25. Որտե՞ղ էր գլխավորապես գործում Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը.

- 1) Կ. Պոլսում
- 2) Ալեքսանդրիայում
- 3) Վան-Վասպուրականում
- 4) Սասունում

26. Երիտթուրքական հեղաշրջումից հետո որտե՞ղ վերադարձան Հնչակյան կուսակցության ղեկավարները.

- 1) Տարոն
- 2) Վան-Վասպուրական
- 3) Կ. Պոլիս
- 4) Էրզրում

27. Ո՞ր միջազգային կառույցն է ընդունել «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիան.

- 1) Ազգերի լիգա
- 2) Եվրամիություն
- 3) Եվրախորհուրդ
- 4) ՄԱԿ

28. Ո՞ւմ առաջարկած բանաձևն է ընկած «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի հիմքում.

- 1) Դեյվիդ Լյոյդ Ջորջ
- 2) Առնոլդ Թոյնբի
- 3) Ջեյմս Բրայս
- 4) Ռաֆայել Լեմկին

29. Նշված ոճրագործներից ո՞վ 1919 թ. հուլիսի 5-ի թուրքական դատարանի դատավճռով չի դատապարտվել մահվան.

- 1) Էնվերը                      2) Ջեմալը                      3) Նազըմը                      4) Սայիդ Հալիմը

30. Ո՞ր ծրագրի շրջանակներում էին հայ վրիժառուները իրականացնում մահվան դատավճիռներ երիտթուրք պարագլուխների նկատմամբ.

- 1) «Նյուրնբերգ»            2) «Վահագն»                3) «Նեմեսիս»                4) «Արամազդ»

31. Որտեղ է սպանվել Թալեաթ փաշան.

- 1) Հռոմում                      2) Բեռլինում                      3) Կ. Պոլսում                      4) Թիֆլիսում

32. Որտեղ է սպանվել Օսմանյան կայսրության նախկին վարչապետ Սայիդ Հալիմը.

- 1) Թիֆլիսում                      2) Կ. Պոլսում                      3) Բեռլինում                      4) Հռոմում

33. Որտեղ է սպանվել Ջեմալ փաշան.

- 1) Հռոմում                      2) Բեռլին                              3) Կ. Պոլսում                      4) Թիֆլիսում

34. Որտեղ է սպանվել Էնվեր փաշան.

- 1) Հեռավոր Արևելքում            2) Միջին Ասիայում            3) Կ. Պոլսում                      4) Բեռլինում

35. Որտեղ է իրականացվել Բեհաէդդին Շաքիրի և Ջեմալ Ազմիի մահապատիժը.

- 1) Հռոմում                      2) Բեռլինում                      3) Կ. Պոլսում                      4) Թիֆլիսում

36. Ո՞վ է իրականացրել Թալեաթի մահապատիժը.

- 1) Սողոմոն Թեհլիրյանը            3) Արշավիր Շիրակյանը  
2) Արտաշես Գևորգյանը            4) Հակոբ Մելքումովը

37. Ո՞ւմ գնդակից սպանվեց Օսմանյան կայսրության նախկին վարչապետ Սայիդ Հալիմը.

- 1) Ստեփան Ծաղիկյանի            3) Արշավիր Շիրակյանի  
2) Հակոբ Մելքումովի                4) Արտաշես Գևորգյանի

38. Ովքե՞ր իրականացրեցին Բեհաէդդին Շաքիրի և Ջեմալ Ազմիի մահապատիժը.

- 1) Արամ Երկանյանը և Արշավիր Շիրակյանը  
2) Պետրոս Տեր-Պողոսյանը, Արտաշես Գևորգյանը և Ստեփան Ծաղիկյանը  
3) Սողոմոն Թեհլիրյանը և Հակոբ Մելքումովը  
4) Արշավիր Շիրակյանը, Արտաշես Գևորգյանը և Ստեփան Ծաղիկյանը

39. Ովքե՞ր իրականացրեցին Ջեմալի մահապատիժը.

- 1) Արամ Երկանյանը և Արշավիր Շիրակյանը  
2) Պետրոս Տեր-Պողոսյանը, Արտաշես Գևորգյանը և Ստեփան Ծաղիկյանը  
3) Սողոմոն Թեհլիրյանը և Հակոբ Մելքումովը  
4) Արշավիր Շիրակյանը և Արտաշես Գևորգյանը

### 3. ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ

---

#### 1. Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.

*«Մենք այնպես մաքրագարդեցինք այդ շրջանը, որ ապագայում այնտեղ (հուզումներ).... այլևս տեղի ունենալ չեն կարող»:*

- |               |                |
|---------------|----------------|
| 1) Ազիզ փաշան | 3) Ջեմալ փաշան |
| 2) Աշիր փաշան | 4) Ջեքի փաշան  |

#### 2. Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.

*«Մի տեսակ արտահողային պետություն էր ստեղծվում՝ կենտրոնական ու տեղական իշխանություններով: Ապագայում, երբ Թուրքահայաստանը դառնար ազատ, կառավարման մեքենան արդեն պատրաստ էր»:*

- |                   |                     |
|-------------------|---------------------|
| 1) Սիմոն Վրացյան  | 3) Ավետիս Ահարոնյան |
| 2) Արամ Մանուկյան | 4) Վահան Փափազյան   |

#### 3. Ովքեր են ստորագրել հետևյալ հրամանը.

*.....ով «կընդդիմանա այս սրբազան և հայրենասիրական գործին և չի կատարի իր վրա դրված պարտականությունները կամ որևէ եղանակով կփորձի պաշտպանել կամ թաքցնել այս կամ այն հային, կճանաչվի հայրենիքի ու կրոնի թշնամի և դրան համապատասխան կպատժվի»:*

- 1) Թալեաթը, Էնվերը, Նազըմը
- 2) Թալեաթը, Նազըմը, Մ. Շյուքրին
- 3) Թալեաթը, Էնվերը, Բ. Շաքիրը
- 4) Թալեաթը, Ջեմալը, Նազըմը

#### 4. Ո՞ր իրադարձության կապակցությամբ են ասվել հետևյալ խոսքերը.

*«Հայերը կռվում և մեռնում էին որպես հերոսներ, նրանց ղեկավարները, որ միշտ առջևի գծում էին, գրեթե բոլորն էլ վիրավոր էին»:*

- 1) Բայազետի 1877 թ. պաշտպանության
- 2) Շուշիի 1826 թ. պաշտպանության
- 3) Բայազետի 1829 թ. պաշտպանության
- 4) Հալիճորի 1727 թ. պաշարման

#### 5. Ո՞ր թվականին են ասվել հետևյալ խոսքերը.

*«Մի տեսակ արտահողային պետություն էր ստեղծվում՝ կենտրոնական և տեղական իշխանություններով: Ապագայում, երբ Թուրքահայաստանը դառնար ազատ, կառավարական մեքենան արդեն պատրաստ էր»:*

- |            |            |            |            |
|------------|------------|------------|------------|
| 1) 1917 թ. | 2) 1918 թ. | 3) 1916 թ. | 4) 1915 թ. |
|------------|------------|------------|------------|

**6. Ուլքեր են 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրությունից Արևմտյան Հայաստանում գրավված տարածքները անվանել.**

*«Խիստ հետամնաց, ճանապարհագուրկ և զարգացման համար մեծ միջոցներ պահանջող»:*

- |                           |                           |
|---------------------------|---------------------------|
| 1) ռուսական դիվանագետները | 3) անգլիացի դիվանագետները |
| 2) հայազգի գեներալները    | 4) թուրք զինվորականները   |

**7. Ո՞ր պատերազմին է վերաբերում ռուսական աղբյուրում պահպանված ստորև բերվող վկայությունը.**

*«... հայերը չափազանց քաջ կովողներ էին ... Հայերը բացահայտորեն իրենց նպաստն էին բերում Ռուսաստանին»:*

- |                                 |                                 |
|---------------------------------|---------------------------------|
| 1) 1804–1813 թթ. ռուս–պարսկական | 3) 1826–1828 թթ. ռուս–պարսկական |
| 2) 1806–1812 թթ. ռուս–թուրքական | 4) 1828–1829 թթ. ռուս–թուրքական |

**8. Ո՞ր քաղաքի հայերին է վերաբերում մեջբերված խոսքը.**

*«... հայերը չափազանց քաջ կովողներ էին ... Հայերը բացահայտորեն իրենց նպաստն էին բերում Ռուսաստանին»:*

- |             |              |
|-------------|--------------|
| 1) Բայազետի | 3) Էրզրումի  |
| 2) Կարսի    | 4) Ախալցխայի |

**9. Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.**

*«Ձեր բարեկամաց և ազգականաց իբրև պարզև մէկ–մէկ զէնք փարեք, զէնք առեք և դարձեալ զէնք: Ժողովուրդ, ամենէն առաջ քո ազապութեան յոյսը քո վրայ դիր, քո խելքին և բազկին ոյժ փուր»:*

- |                    |                         |
|--------------------|-------------------------|
| 1) Մկրտիչ Խրիմյանը | 3) Մկրտիչ Պեշկոթաշլյանը |
| 2) Մինաս Չերազը    | 4) Սմբատ Շահազիզը       |

**10. Ո՞վ է ստորև մեջբերված խոսքերի հեղինակը.**

*«Միսալ են բոլոր էն մարդիկ, որոնք կարծում են, թե էս ամենը կարող էր անցնել առանց ծայրահեղ դժգոհության բռնկումի, առանց հեղափոխության: Այլև սիսալ են նրանք, որոնք կարծում են, թե հեղափոխությունը դրսեցիները՝ ռուսահայերն են սկսել Տաճկաստանում»:*

- |                        |                   |
|------------------------|-------------------|
| 1) Անդրանիկ Օզանյան    | 3) Մկրտիչ Խրիմյան |
| 2) Հովհաննես Թումանյան | 4) Հրայր Դժոխք    |

**11. Երբ է արվել հետևյալ հայտարարությունը.**

*«Հաշվի առնելով մարդկության ու քաղաքակրթության դեմ Թուրքիայի կողմից կատարված այս նոր հանցագործությունները՝ ... դաշնակից կառավարությունները սույնով հրապարակավ հայտնում են Բարձր դռանը, որ իրենք այդ հանցագործությունների համար անձնապես պատասխանատու են համարելու թուրքական կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև կառավարության տեղական այն ներկայացուցիչներին, ովքեր մասնակից են եղել կոտորածներին»:*

1) 1915 թ. ապրիլի 11-ին

3) 1919 թ. հուլիսի 5-ին

2) 1915 թ. մայիսի 11-ին

4) 1915 թ. ապրիլի 15-ին

**12. Ո՞ր երկրների կառավարություններն են ընդունել նշված հայտարարությունը.**

*«Հաշվի առնելով մարդկության ու քաղաքակրթության դեմ Թուրքիայի կողմից կատարված այս նոր հանցագործությունները՝ ... դաշնակից կառավարությունները սույնով հրապարակավ հայտնում են Բարձր դռանը, որ իրենք այդ հանցագործությունների համար անձնապես պատասխանատու են համարելու թուրքական կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև կառավարության տեղական այն ներկայացուցիչներին, ովքեր մասնակից են եղել կոտորածներին»:*

1) Մեծ Բրիտանիա, Ռուսաստան և Գերմանիա

2) Ֆրանսիա, Ավստրո-Հունգարիա, Մեծ Բրիտանիա

3) Մեծ Բրիտանիա, Ռուսաստան և Ֆրանսիա

4) Մեծ Բրիտանիա, Ռուսաստան և ԱՄՆ

## 4. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արցախի 1720–ական թթ. ազատագրական պայքարին օժանդակելու նպատակով Շիրվանի հայկական բնակավայրից ժամանած ռազմական գործի կազմակերպիչների զինվորական աստիճանն էր՝

- |                |              |
|----------------|--------------|
| 1) հիսնապետ    | 3) տասնապետ  |
| 2) հարյուրապետ | 4) հազարապետ |

2. Տրված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- 1) Ժողկոմխորհ
- 2) Պետական դումա
- 3) Անդրկովկասյան կոմիսարիատ
- 4) Անդրկովկասյան հատուկ կոմիտե
- 5) Անդրկովկասյան Ժողովրդավարական Դաշնային Հանրապետություն
- 6) Թուրքահայաստան

ա. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում ստեղծված կառավարություն

բ. Անդրկովկասում 1918 թ. գարնանը ստեղծված պետական կազմավորում

գ. Ռուսաստանում բոլշևիկների ստեղծած կառավարություն

դ. օրենսդրախորհրդակցական պետական մարմին Ռուսաստանյան կայսրությունում

ե. Անդրկովկասում ցարիզմի տապալումից հետո ստեղծված իշխանության մարմին

զ. Արևմտյան Հայաստանի գրավված տարածքում ստեղծված վարչական միավոր

է. հեղափոխական արտակարգ պատժիչ մարմին

- |                                 |                                 |
|---------------------------------|---------------------------------|
| 1) 1–գ, 2–դ, 3–ա, 4–ե, 5–բ, 6–զ | 3) 1–ա, 2–բ, 3–դ, 4–ե, 5–գ, 6–զ |
| 2) 1–ե, 2–ա, 3–դ, 4–բ, 5–գ, 6–է | 4) 1–գ, 2–դ, 3–զ, 4–բ, 5–ե, 6–է |

3. Տերմինները համապատասխանեցնել բացատրությանը.

- |              |         |             |           |
|--------------|---------|-------------|-----------|
| 1) պոլոժենիե | 2) աշար | 3) թանգիմաթ | 4) սարդար |
|--------------|---------|-------------|-----------|

ա. Օսմանյան կայսրությունում գյուղացիներից գանձվող գլխավոր հարկը

բ. Հայոց եկեղեցու և ցարական կառավարության փոխհարաբերությունները սահմանող կանոնադրություն

գ. սուլթանական կառավարության կողմից հրապարակված բարենորոգումների հրովարտակ

դ. զորահրամանատար

ե. հոգևոր պաշտոնյա

- |                       |                       |
|-----------------------|-----------------------|
| 1) 1–բ, 2–ա, 3–գ, 4–ե | 3) 1–գ, 2–դ, 3–ա, 4–ե |
| 2) 1–բ, 2–գ, 3–ե, 4–դ | 4) 1–բ, 2–ա, 3–գ, 4–դ |

**4. Իսրայել Օրու կազմած և կայսրընտիր իշխանին ներկայացրած Հայաստանի ազատագրության ծրագիրը կոչվում էր՝**

- 1) Պֆալցյան ծրագիր
- 2) Փարիզյան ծրագիր
- 3) Հարավային ծրագիր
- 4) Հյուսիսային ծրագիր

**5. Ինչ է նշանակում սղնախ.**

- 1) ռազմական խորհուրդ
- 2) պաշտպանական հենակետային ամրոց
- 3) կայազոր
- 4) զինանոց

**6. Ըստ «Որոգայթ փառաց» գրքի՝ Հայոց ապագա պետության բարձրագույն օրենսդիր մարմինը կոչվում էր՝**

- 1) Հայոց տուն
- 2) Ազգային մեծ ժողով
- 3) Գերագույն խորհուրդ
- 4) Բարձրագույն ատյան

**7. Ինչ է նշանակում «խամսա».**

- 1) երեք
- 2) չորս
- 3) հինգ
- 4) վեց

**8. Ընտրել խամսայի մեջ մտնող մեկիքությունների ամբողջական շարքը.**

- 1) Դիզակ, Ջրաբերդ, Վարանդա, Խաչեն, Գանձասար
- 2) Գանձակ, Վարանդա, Դիզակ, Ջրաբերդ, Խաչեն
- 3) Գյուլիստան, Ջրաբերդ, Խաչեն, Սյունիք, Դիզակ
- 4) Դիզակ, Վարանդա, Խաչեն, Ջրաբերդ, Գյուլիստան

**9. 1827 թ. տարբեր վայրերում կազմակերպված հայկական կամավորական ջոկատներն ինչ անունով էին հայտնի.**

- 1) խմբեր
- 2) գնդեր
- 3) դրուժինաներ
- 4) ջոկատներ

**10. Ինչ տեղանուն կամ բառակապակցություն էր գործածվել Սան Ստեֆանոյի պայմանագրում, որ դիվանագիտական մակարդակով առաջին անգամ էր ընդունում սուլթանական կառավարությունը.**

- 1) հայկական նահանգներ
- 2) Հայաստան
- 3) հայաբնակ մարզեր
- 4) հայաշատ վայրեր

**11. Ինչ անունով էր հայտնի 1918 թ. մայիսին Դանիել Բեկ-Փիրումյանի գլխավորությամբ ստեղծված զորաջոկատը.**

- 1) Սարդարապատի ջոկատ
- 2) Հայկական լեգեոն
- 3) Մահապարտների գունդ
- 4) Երևանյան ջոկատ

**12. Առանձին հայկական կորպուս էր կոչվում այն զորամիավորումը, որը՝**

- 1) ստեղծվել էր Կովկասյան ճակատում ռուսական բանակի գերագույն սպայակույտի 1917 թ. նոյեմբերի 16-ի հրամանով
- 2) ստեղծվել էր 1917 թ. դեկտեմբերին Արևմտահայ խորհրդի որոշմամբ
- 3) ձևավորվել էր 1918 թ. մարտի 1-ին Թ. Նազարբեկյանի հրամանատարությամբ
- 4) ձևավորվել էր 1918 թ. մարտին Անդրանիկ Օզանյանի հրամանատարությամբ

**13. Հայկական կորպուս էր կոչվում այն զորամիավորումը, որը՝**

- 1) ձևավորվել էր 1918 թ. մարտին Անդրանիկ Օզանյանի հրամանատարությամբ
- 2) ձևավորվել էր 1918 թ. մարտի 1-ին Թ. Նազարբեկյանի հրամանատարությամբ
- 3) Սարգսրապատի ճակատամարտում գլխավորում էր Պողոս Բեկ-Փիրումյանը
- 4) ստեղծվել էր Կովկասյան ճակատում ռուսական բանակի գերագույն սպայակույտի 1917 թ. նոյեմբերի 16-ի հրամանով

**14. Հայկական առանձին հարվածային զորամաս էր կոչվում այն զորամիավորումը, որը՝**

- 1) Մ. Սիլիկյանի գլխավորությամբ մարտնչում էր Սարգսրապատի ճակատում
- 2) 1918 թ. ձևավորել էր Անդրանիկ Օզանյանը
- 3) ստեղծվել էր Կովկասյան ճակատում ռուսական բանակի գերագույն սպայակույտի 1917 թ. նոյեմբերի 16-ի հրամանով
- 4) ձևավորվել էր 1918 թ. մարտի 1-ին Թ. Նազարբեկյանի հրամանատարությամբ

**15. Ինչ անունով էր հայտնի Աղբյուր Սերոբի գլխավորությամբ հայդուկների մղած հաղթական մարտը.**

- 1) Ս. Առաքելոց վանքի կռիվ
- 2) Բաբշենի կռիվ
- 3) Սուլուխի կռիվ
- 4) Գյալխտրի ձորի կռիվ

**16. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

ա. 1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմի օրերին մի խումբ հայ մտավորականների մշակած ազատագրական նախագծի համաձայն՝ ռուսական կայսր Նիկոլայ I-ը կրելու էր նաև «Հայոց թագավոր» տիտղոսը:

բ. Արևելյան Հայաստանի տարածքում ռուսական իշխանությունների ստեղծած և 12 տարի գոյություն ունեցած վարչական միավորը կոչվում էր Երևանի նահանգ:

գ. Վերին Բասենի վարչական կենտրոն Հասան կալան ռուս մեծ գրող Ա. Պուշկինն անվանել է «Արզրումի (Էրզրում) բանալի»:

դ. Սյունիքում կազմավորված կիսանկախ իշխանությունները կոչվել են սղնախներ:

ե. Ռուսաստանի կազմում Շամքոր կենտրոնով 1840 թ. ստեղծված վարչական միավորը կոչվում էր Կասպիական մարզ:

- 1) ա, ե
- 2) բ, դ
- 3) գ, ե
- 4) ա, գ

**17. Ընտրել «Որոգայթ փառաց» գրքում տեղ գտած տերմինների և հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Հայոց ապագա պետության բարձրագույն օրենսդիր մարմինը կոչվելու էր «Հայոց տուն»:

2) «Հայոց տունը» պետք է կազմվեր ժողովրդի կողմից նշանակված փոխանորդներից:

3) Փոխանորդներից ընտրված տասներեք հոգուց մեկը վիճակահանությամբ դառնալու էր նախարար (նախագահ):

4) Նախարարը (նախագահ) նշանակում էր իր տեղապահին՝ փոխարքային:

- 5) «Հայոց տունը» պարտավոր էր ստեղծել հայոց ապագա պետության բարձրագույն օրենսդիր մարմինը:
- 6) Փոխանորդներից ընտրված տասներեք հոգուց տասներկուսը դառնալու էին նախարարի խորհրդակիցներ:
- 7) Հայոց թագավորը պետք է նշանակվեր իշխանության ընտրովի բարձրագույն մարմնի կողմից:

**18. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Արևելյան Հայաստանում 1844 թ. ստեղծված վարչական միավորը կոչվում էր Կովկասի փոխարքայություն:
- 2) Արևմտահայության կյանքը կազմակերպող օրենսդիր մարմինը կոչվում էր նաև Երեսփոխանական ժողով:
- 3) Օսմանյան կայսրությունում գտնվող Երուսաղեմի սուրբ վայրերին տիրելու համար տարբեր եկեղեցիների միջև ծագած վեճը հայտնի է «Արևելյան հարց» անունով:
- 4) Հայկական հարցը հայտնվել է միջազգային հարաբերությունների կիզակետում և հանդես եկել «Արևելյան հարց» անունով:
- 5) 1844 թ. Կ. Պոլսում ստեղծված և հայ համայնքի գործերի կազմակերպմանը որոշ չափով մասնակցություն ունեցող մարմինը կոչվում էր Ազգային ժողով:
- 6) 1846 թ. ստեղծված և Երևան, Նոր Բայազետ, Նախիջևան, Ալեքսանդրապոլ ու Օրդուբադ գավառներն ընդգրկող վարչական միավորը Երևանի նահանգն էր:
- 7) Կովկասյան ճակատում հայազգի գեներալ Միխայիլ Լոռիս-Մելիքովի գլխավորությամբ թուրքերի դեմ կռվող ռուսական 52-հազարանոց զորամիավորումը կոչվում էր Կովկասյան կորպուս:

**19. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- 1) Կարսի մարզի մեջ մտած գավառները կոչվում էին նաև օկրուգներ:
- 2) Արևմտահայերի Ազգային սահմանադրությունը Օսմանյան կայսրության հիմնական օրենքն էր՝ սահմանադրությունը:
- 3) Պատգամավորական Կենտրոնական ժողովը Հայաստանում ապրող հայերի ներկայացուցչական համագումարն էր:
- 4) Ռուսաստանի հետադիմական վարչակարգի հակահայ քաղաքականության դեմ պայքարելու համար Թիֆլիսում ստեղծված մարմինը կոչվում էր «Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե»:
- 5) Արևմտահայերի Ազգային սահմանադրության համաձայն՝ ստեղծվող Ազգային ժողովը հայտնի էր նաև «Երեսփոխանական ժողով» անունով:
- 6) Անդրկովկասում Գ. Գոլիցինի փոխարեն նշանակված Ի. Վորոնցով-Դաշկովի պաշտոնը կոչվում էր Կովկասի կառավարչապետ:
- 7) Սասունում սուլթան Համիդ II-ի կազմակերպած հայկական կոտորածներից հետո մեծ տերությունների կազմած բարենորոգումների նախագիծը ստացավ «Մայիսյան բարենորոգումների ծրագիր» անունը:

## **20. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Զեյթունի 1895–1896 թթ. ապստամբության ժամանակ ձորում ծուղակի մեջ հայտնված թուրքական զորքերը սվեցին 750 զոհ, ուստի զեյթունցիները ձորն անվանեցին Կոտորածի ձոր:
- 2) Հայդուկ բուլղարերեն նշանակում է «հետևակ»:
- 3) Ֆիդայիները հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից նոր բռնությունների առիթ չտալու նպատակով հաճախ ներկայացել են որպես «չելլոներ» կոչվող քրդական կառավարական ջոկատներ:
- 4) Առաջին հայ քաղաքական լրագիրը կրում էր «Ազատության ավետաբեր» անվանումը:
- 5) «Հայրենիքի սիրո գրասենյակ» խմբակի ստեղծողներն էին «արիական հայազգի զավակները»:
- 6) Ալեքսանդրապոլում ստեղծված ազատագրական խմբակը կոչվում էր «Բարենպաստ ընկերություն»:
- 7) Ֆիդայի՝ արաբերեն նշանակում է զոհ, այսինքն՝ ինքնազոհ:
- 8) Հայ իրականության մեջ առաջին հրապարակախոսական ձեռագիր աշխատությունը հայտնի է «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» անունով:

## **21. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- 1) Հայկական հարցի «լուծմանը» թուրքերին մասնակից դարձնելու համար սուլթանը 1891 թ. անհնազանդ ջոկատներից ստեղծեց մոտ 30 հեծելազանդեր, որոնք իր անունով կոչվեցին համիդիե:
- 2) Գնդապետ Դ. Բեկ–Փիրումյանի գլխավորած զորամիավորումը կոչվում էր Սարդարապատի ջոկատ:
- 3) Մեկ ազգի կամ կրոնական համայնքի միայն լիովին բնաջնջմանը նպատակաուղղված գործողությունն է կոչվում ցեղասպանություն:
- 4) Արամ Մանուկյանին Թիֆլիսից Երևան գործուղած և արտակարգ լիազորություններով օժտած մարմինն էր Հայոց ազգային խորհուրդը:
- 5) 1918 թ. գարնանը Արևելյան Հայաստանը և այլ տարածքներ նվաճելու համար ստեղծված 50–հազարանոց թուրքական զորամիավորումը կոչվում էր «Կարս»:
- 6) Թիֆլիսում 1917 թ. մարտին ստեղծված երկրամասի գործադիր իշխանության նոր մարմինը կոչվում էր Անդրկովկասյան հատուկ կոմիտե:
- 7) Ռուսական բանակի գերագույն սպայակույտի 1917 թ. նոյեմբերի 16–ի հրամանով Հայկական ճակատում կազմավորվող զորամիավորը Կովկասյան կորպուսն էր:

## **22. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- 1) Քրդական կառավարական ջոկատները հայտնի են «չելլոներ» անունով:
- 2) Հայկական II–V կամավորական ջոկատներից ստեղծված միացյալ զորախումբն անվանվել է «Արարատյան գունդ»:
- 3) Հայկական հարցի լուծմանը նպաստելու համար 1912 թ. Թիֆլիսում ստեղծված մարմինը կոչվել է Հայոց ազգային կենտրոնական բյուրո:
- 4) Ռուսաստանում ինքնակալության տապալումից քիչ հետո Անդրկովկասում ստեղծված իշխանության մարմինը կոչվում էր Անդրկովկասյան կոմիսարիատ:

- 5) Ֆիդա կամ ֆեդա հունգարերեն նշանակում է ինքնագոհ:
- 6) Սիրիա-պաղեստինյան ճակատում 1918 թ. թուրքերի դեմ կռված հայկական զորամիավորը կոչվում էր Արևելյան (Հայկական) լեգեոն:
- 7) Արևմտահայ զորաբաժնի ստեղծման նպատակով կյանքի կոչված գործադիր նոր մարմինը կոչվում էր Հայաստանի ապահովության խորհուրդ:

### **23. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- 1) Անդրանիկի գլխավորությամբ 1903 թ. Սասունին օգնության հասած ծիավոր խումբը կոչվում էր «Մրրիկ»:
- 2) Արևմտահայերի ազգային խորհրդի կայացրած որոշումով ստեղծված կազմավորումը կոչվեց արևմտահայ զորաբաժին (դիվիզիա):
- 3) Հակահամիդյան շարժման մեջ ազդեցիկ դիրք ուներ երիտթուրքերի «Միություն և փրկություն» կոչվող կազմակերպությունը:
- 4) Հովսեփ Արղությանը գլխավորեց Հայոց ազգային բյուրոյի՝ գործադիր կամ կարգադրիչ կոչվող մարմինը:
- 5) 1890-ական թթ. սուլթան Համիդ II-ի և Առաջին աշխարհամարտի տարիներին երիտթուրքերի կողմից կազմակերպված Հայոց ցեղասպանությունը համայն մարդկությանը հայտնի է «Մեծ եղեռն» անունով:
- 6) Գեղեգուզան գյուղում Անդրանիկի գլխավորությամբ ստեղծվել էր ինքնապաշտպանության ղեկավար մարմին:
- 7) Բրեստ-Լիտովսկի բանակցությունների երկրորդ փուլում բոլշևիկների առաջ քաշած սկզբունքը կոչվում էր «հաշտություն առանց բռնակցումների և ռազմատուգանքների»:

### **24. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Լոնդոնում դիվանագետներ Մ. Սայքսի ու Ժ. Պիկոյի միջև կնքված համաձայնագրով հիմնականում հայերից ստեղծված զորամիավորը կոչվում էր «Արևելյան լեգեոն» (Հայկական լեգեոն):
- 2) Հայկական կորպուսի և արևմտահայ զինուժի միավորմամբ ստեղծված զորամիավորումը կոչվում էր Հայկական առանձին հարվածային զորամաս:
- 3) Բոլշևիկների Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Այսրկովկասում ստեղծված իշխանության նոր մարմինը կոչվում էր Ժողկոմխորհ:
- 4) Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության կողմից Արևմտյան Հայաստանի գլխավոր կոմիսար Ավերյանովին հասցեագրված գաղտնի փաստաթուղթը կոչվում էր «Ղեկավար հրահանգներ»:
- 5) 1906 թ. օգոստոսին Էջմիածնում հայ հասարակական շրջանակների հրավիրած ժողովը հայտնի է պատգամավորական Կենտրոնական ժողով անունով:
- 6) Առաջին աշխարհամարտի տարիներին ստեղծված հայկական կամավորական վեց ջոկատներից վերակազմակերպված չորս զորամիավորները կոչվում էին հայկական հրաձգային գնդեր:

**25. Գտնել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- ա. Արևմտահայության կյանքը կազմակերպող օրենսդիր մարմինը, ըստ Ազգային սահմանադրության, կոչվում էր Ազգային ժողով:
  - բ. Օսմանյան կայսրությունում գտնվող Երուսաղեմի սուրբ վայրերին տիրելու համար տարբեր եկեղեցիների միջև ծագած վեճը հայտնի է «Արևելյան հարց» անունով:
  - գ. Ռուսաստանում 1844 թ. ստեղծված վարչական մեծ միավորը կոչվում էր Կովկասի փոխարքայություն:
  - դ. 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի արդյունքում միջազգային հարաբերությունների կիզակետում հայտնված հիմնախնդիրը հայտնի է Հայկական հարց անունով:
  - ե. Հովսեփ Արղությանի ղեկավարած մարմինը կոչվում էր Կ. Պոլսի Ազգային բյուրոյի գործադիր կոմիտե:
  - զ. Կովկասյան ճակատում գեներալ Միխայիլ Լոռիս–Մելիքովի գլխավորությամբ կռիվող ռուսական զորամիավորումը կոչվում էր Կովկասյան կորպուս:
  - է. 1846 թ. ստեղծված և Երևան, Նոր Բայազետ, Նախիջևան, Ալեքսանդրապոլ ու Օրդուբադ գավառներն ընդգրկող վարչական միավորը Երևանի նահանգն էր:
- 1) ա, դ, է                      2) գ, դ, զ                      3) ա, գ, ե                      4) բ, ե, է

**26. Գտնել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- ա. Արևմտահայերի Ազգային սահմանադրությունը Օսմանյան կայսրության հիմնական օրենքն էր՝ սահմանադրությունը:
- բ. Ռուսաստանի հետադիմական վարչակարգի հակահայ քաղաքականության դեմ պայքարելու համար Թիֆլիսում ստեղծված մարմինը կոչվում էր «Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե»:
- գ. Արևմտահայերի Ազգային սահմանադրության համաձայն՝ ստեղծվող Ազգային ժողովը հայտնի էր նաև «Երեցների ժողով» անունով:
- դ. Անդրկովկասում Գ. Գոլիցինի փոխարեն նշանակված Ի. Վորոնցով–Դաշկովի պաշտոնն էր Կովկասի փոխարքա:
- ե. Պատգամավորական Կենտրոնական ժողովը Հայաստանում ապրող հայերի ներկայացուցչական համագումարն էր:
- զ. Սասունում սուլթան Համիդ II–ի կազմակերպած հայկական կոտորածներից հետո մեծ տերությունների կազմած բարենորոգումների նախագիծը ստացավ «Մայիսյան բարենորոգումների ծրագիր» անունը:

- 1) բ, դ, զ                      2) ա, գ, ե                      3) գ, դ, զ                      4) բ, գ, ե

**27. Գտնել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- ա. Հայ իրականության մեջ առաջին հրապարակախոսական ձեռագիր աշխատությունը հայտնի է «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» անունով:
- բ. Ալեքսանդրապոլում ստեղծված ազատագրական խմբակը կոչվում էր «Բարենպաստ ընկերություն»:
- գ. Հայդուկ բուլղարերեն նշանակում է «հետևակ»:

դ. Ֆիդայիները հաճախ ներկայացել են որպես «չեչլուներ» կոչվող քրդական հակակառավարական ջոկատներ:

ե. Առաջին հայ քաղաքական լրագիրը կրում էր «Ազատության ավետաբեր» անվանումը:

զ. «Հայրենիքի սիրո գրասենյակ» խմբակի ստեղծողներն էին «արիական հայազգի գավակները»:

է. Հունգարները հայրուկներին անվանում էին ֆիդայի:

ը. Չեյթունի 1895–1896 թթ. ապստամբության ժամանակ ձորում ծուղակի մեջ հայտնված թուրքական զորքերը տվեցին 750 զոհ, ուստի զեյթունցիները ձորն անվանեցին Կոտորածի ձոր:

1) ա, դ, ե

2) բ, գ, է

3) գ, գ, ը

4) դ, ե, գ

## 28. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.

ա. Հայկական II–V կամավորական ջոկատներից ստեղծված միացյալ զորախումբն անվանվել է «Արարատյան զորաբաժին»:

բ. Հայկական հարցի լուծմանը նպաստելու համար 1912 թ. Թիֆլիսում ստեղծված մարմինը կոչվել է Հայոց ազգային կենտրոնական բյուրո:

գ. Անդրանիկի գլխավորությամբ 1903 թ. Սասունին օգնության հասած ձիավոր խումբը կոչվում էր «Մրրիկ»:

դ. Քրդական կառավարական ջոկատները հայտնի էին «չեչլուներ» անունով:

ե. Հակահամիդյան շարժման մեջ ազդեցիկ դիրք ուներ երիտթուրքերի «Միություն և փրկություն» կոչվող կազմակերպությունը:

զ. Բրեստ–Լիտովսկի բանակցությունների երկրորդ փուլում բոլշևիկների առաջ քաշած սկզբունքը կոչվում էր «հաշտություն առանց բռնակցումների և ուղղափառ գանձների»:

է. Հովսեփ Արղությանը գլխավորեց Հայոց ազգային բյուրոյի՝ գործադիր կամ կարգադրիչ կոչվող մարմինը:

ը. Սիրիա–պաղեստինյան ճակատում 1918 թ. թուրքերի դեմ կռված հայկական զորամիավորը կոչվում էր Արևելյան (Հայկական) լեգեոն:

1) ա, բ, գ, զ

2) բ, գ, է, ը

3) գ, դ, գ, ե

4) ա, գ, դ, ե

## 29. Գտնել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.

ա. 1917 թ. մարտի 9–ին ժամանակավոր կառավարության կողմից Անդրկովկասում ստեղծած գործադիր իշխանության նոր մարմինը կոչվում էր Անդրկովկասյան սեյմ:

բ. Բոլշևիկների Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Այսրկովկասում ստեղծված իշխանության նոր մարմինը կոչվում էր Անդրկովկասի արիատ:

գ. Լոնդոնում դիվանագետներ Մ. Սաքսի ու Ժ. Պիկոյի միջև կնքված համաձայնագրով հիմնականում հայերից ստեղծված զորամիավորը կոչվում էր «Արևելյան լեգեոն» (Հայկական լեգեոն):

դ. Ռուսաստանի ժամանակավոր կառավարության կողմից Արևմտյան Հայաստանի գլխավոր կոմիսար Ավերյանովին հասցեագրված գաղտնի փաստաթուղթը կոչվում էր «Ղեկավար հրահանգներ»:

ե. 1906 թ. օգոստոսին Էջմիածնում հայ հասարակական շրջանակների հրավիրած ժողովը հայտնի է պատգամավորական Կենտրոնական ժողով անունով:

զ. 1916 թ. մարտ-օգոստոս ամիսներին հայկական կամավորական ութ ջոկատներից վերակազմակերպված վեց կազմավորումները կոչվում էին հայկական հրաձգային գնդեր:

1) ա, դ, զ

2) ա, գ, զ

3) բ, գ, ե

4) բ, դ, ե

**30. Գտնել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

Ըստ «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի» երկրորդ հոդվածի՝ *«ցեղասպանություն են համարվում որևէ ազգային, ռասայական, էթնիկական կամ կրոնական խմբի լիակատար կամ մասնակի ոչնչացման նպատակով իրականացվող հետևյալ գործողությունները.*

1) խմբի անդամների սպանությունը

2) խմբի ներսում ծննդաբերության կանխմանն ուղղված միջոցառումները

3) երեխաների կամավոր հանձնումը մարդկային մի խմբից մյուսին

4) խմբի անդամներին բարոյական վնաս հասցնելը

5) խմբի համար ոչ կանխամտածված այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որի նպատակն է նրա ոչնչացումը

**31. Ո՞ր ծրագիրն էր կոչվում «Նեմեսիս».**

1) հայերին ցեղասպանելու

2) Հայոց ցեղասպանության կազմակերպիչ երիտթուրք պարագլուխներին վերացնելու

3) արևմտահայերին տեղահանելու

4) մեծ տերությունների՝ Թուրքիայից զիջումներ ստանալու

## 5. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

### 1. Ինչո՞ւ էր հայոց պատվիրակությունը Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի գլխավորությամբ մեկնել Եվրոպա.

- 1) հույների հետ միասին Օսմանյան կայսրության դեմ ապստամբություն կազմակերպելու
- 2) գումար հայթայթելու
- 3) ազատագրական շարժման մեջ գաղութահայ կենտրոններն աշխուժացնելու
- 4) Հայաստանի ազատագրության համար օգնություն խնդրելու

### 2. XVII դ. երկրորդ կեսին Ֆրանսիայի օգնությամբ Հայաստանի ազատագրության հայ ազատագրական գործիչների ծրագրերի ձախողման պատճառն էր՝

- 1) Իսպանական ժառանգության համար սկսված անգլո-ֆրանսիական պայքարը
- 2) յոթնամյա պատերազմում Ֆրանսիայի կրած պարտությունը
- 3) Ֆրանսիայի կողմից Թուրքիային հովանավորելու քաղաքականությունը
- 4) Ֆրանսիայի շահերին հայ ազատագրական պայքարի ծառայեցումը

### 3. Ո՞րն էր Պետրոս I-ի կողմից Պարսկաստան ուղարկված դեսպանության նպատակը.

- 1) Թուրքիայի դեմ դաշինք կնքելու առաջարկի քննարկումը
- 2) Պարսկաստանի հպատակ քրիստոնյաների նկատմամբ առավել հանդուրժողական քաղաքականություն վարելու Հռոմի պապի հորդորը
- 3) Պարսկաստանում տիրող իրավիճակին ծանոթանալը
- 4) մերձկասպյան տարածքների շուրջ բանակցություններ վարելը

### 4. Սյունիքի և Արցախի հայ ազատագրական ուժերի մի մասի՝ թուրքերի հետ բանակցելու գաղափարին հանգելու պատճառներն էին՝

- 1) հայ-զինական ուժերի կազմալուծումը
- 2) թուրք-պարսկական համագործակցությունը
- 3) 1726 թ. Շուշիի պաշտպանության ձախողումը
- 4) 1724 թ. ռուս-թուրքական պայմանագրի կնքումը
- 5) մահմեդականություն ընդունած մեծ թվով մելիքների առկայությունը

### 5. Որո՞նք են Արցախում և Սյունիքում հայ ժողովրդի զինված պայքարի արդյունքները.

- 1) հայ ժողովրդի ինքնագիտակցության և ազատասիրական ոգու բարձրացումը
- 2) արևելահայ բնակչության նկատմամբ պարսիկների կողմից բռնությունների և հարկերի վերացումը
- 3) սեփական ուժերի նկատմամբ հավատի ամրապնդումը

- 4) հայկական մելիքությունների հետ թուրքական պետության հաշվի նստելը և նրանց իրավունքների և ինքնիշխանության ճանաչումը
- 5) թուրք-պարսկական լծից եվրոպական երկրների օգնությամբ ազատագրվելու գիտակցության ամրապնդումը

**6. Ո՞րն է հայ ժողովրդի նկատմամբ Նադիրի բարյացակամ վերաբերմունքի պատճառը.**

- 1) հայերի անկախական ծագումներին աջակցելը
- 2) ռուսների դեմ պայքարում հայերին աջակից ունենալը
- 3) հակաթուրքական պայքարում հայերի օգնության կարիքը
- 4) արաբների դեմ պայքարում հայերի աջակցությունը ստանալը

**7. Ի՞նչն առիթ դարձրեց Հերակլ II-ը Հովսեփ Էմինին Վրաստանից հեռացնելու համար.**

- 1) Թուրքիայի՝ Վրաստանին պատերազմ հայտարարելու փաստը
- 2) հայոց կաթողիկոսի՝ իրեն ուղղած կշտամբանքը
- 3) Հովսեփ Էմինի՝ չեչենների և լեզգիների հետ ունեցած հարաբերությունները
- 4) Գանձասարի կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանի՝ իրեն ուղղած կշտամբանքը

**8. 1826 թ. Ռուսաստանի դեմ նոր պատերազմ սկսելով՝ պարսկական արքունիքը նպատակ ուներ.**

- 1) նվաճելու Արևմտյան Հայաստանը
- 2) հայ բնակչությանը բռնագաղթեցնելու Պարսկաստան
- 3) վերադարձնելու Բուխարեստի պայմանագրով կորցրած տարածքները
- 4) վերադարձնելու Գյուլիստանի պայմանագրով կորցրած տարածքները

**9. Ո՞րն էր XIX դ. 30-40-ական թթ. Անդրկովկասում Ռուսաստանի կատարած վարչական փոփոխությունների նպատակը.**

- 1) Անդրկովկասում Ռուսաստանի իշխանության ամրապնդումը
- 2) թուրքական տիրապետության հետևանքների վերացումը
- 3) ազգային-գաղութային ճնշման վերացումը
- 4) Անդրկովկասի ժողովուրդների տարածքային ինքնավարության հաստատումը

**10. Ո՞րն էր Թուրքիայի՝ 1862 թ. Ջեյթունի ապստամբության ժամանակ զեյթունցիների հետ փոխզիջման գնալու պատճառը.**

- 1) Թուրքիայում սկսված հակակառավարական բողոքները
- 2) Թուրքիայի գործերին եվրոպական միջամտության կանխումը
- 3) Ջեյթունի ռազմական մեծ ուժը
- 4) Ռուսաստանի կողմից Թուրքիային պատերազմ հայտարարելու սպառնալիքը

**11. Թվարկվածներից որո՞նք են ճիշտ բնորոշում Ռուսաստանում տեղի ունեցած Փետրվարյան հեղափոխության անմիջական հետևանքները.**

- ա) միապետությունից անցում կատարվեց ժողովրդավարության
- բ) տապալվեց ժողկոմխորհի իշխանությունը
- գ) երկրում ձևավորվեց ժամանակավոր կառավարություն
- դ) իշխանությունը հանձնվեց բոլշևիկներին
- ե) իշխանությունը հանձնվեց Համառուսաստանյան սահմանադիր ժողովին

- 1) ա, ե                      2) ա, գ                      3) բ, դ                      4) գ, ե

**12. Թվարկվածներից որո՞նք արևմտահայերի առաջին համագումարի արդյունք չեն.**

- 1) Ընտրվեց կենտրոնական ղեկավար մարմին՝ 15–հոգանոց Արևմտահայ ազգային խորհուրդ:
- 2) Խորհրդի անդամներ դարձան Անդրանիկը, Վ. Փափագյանը և ուրիշներ:
- 3) Ընտրվեց 15–հոգանոց գործադիր մարմին՝ Հայոց ազգային խորհուրդ:
- 4) Արևմտահայ ազգային խորհրդի նախագահ ընտրվեց Վահան Փափագյանը (Կոմս):
- 5) Արևմտահայ ազգային խորհրդի նախագահ ընտրվեց Ավետիս Ահարոնյանը, քարտուղար՝ Նիկոլ Աղբալյանը:
- 6) Արևմտահայ ազգային խորհրդի պատվավոր նախագահ ընտրվեց Անդրանիկը:
- 7) Վանի, Բիթլիսի և Էրզրումի մարզերում սկսեցին գործել Արևմտահայ ազգային խորհրդի տեղական կազմակերպությունները:

**13. 1918 թ. մարտի 3–ին Բրեստ–Լիտովսկում ստորագրված պայմանագրի հետևանքով.**

- 1) Օսմանյան Թուրքիային անցան Արևմտյան Հայաստանի ազատագրված մարզերը:
- 2) Ռուսաստանը իր զորքերը շուտափոյթ դուրս հանեց Կարսի և Բաթումի մարզերից:
- 3) Ռուսաստանը պարտավորվեց ճանաչել Արևմտյան Հայաստանը որպես արևմտահայության հայրենիք:
- 4) Ռուսաստանը դադարեցրեց իր մասնակցությունը Առաջին աշխարհամարտին:
- 5) Զորացրվեց Մ. Սիլիկյանի Երևանյան զորախումբը:
- 6) Կովկասում մնաց ընդամենը ռուսական երկու կորպուս:
- 7) Բոլշևիկները կորցրեցին իրենց իշխանությունը:

**14. Թվարկվածներից որո՞նք Հայոց մեծ եղեռնի պատճառ չեն.**

- 1) հայերի հայրենագրկման և ոչնչացման ծրագիրը
- 2) Միացյալ և անկախ Հայաստան ստեղծելու ռուսների ծրագիրը
- 3) Հայկական հարցին մեկընդմիշտ վերջ տալու երիտթուրքերի ձգտումը
- 4) հայ քաղաքական կուսակցությունների՝ Հայաստանի միավորման ծրագրի ձախողումը
- 5) հայ արդյունաբերողների և դրամատերերի մրցակցությունից ազատվելը
- 6) Անտանտին Անդրկովկասում հավատարիմ դաշնակցից զրկելը
- 7) հայության ֆինանսական և նյութական ունեցվածքին տիրանալը

**15. Որո՞նք էին 1904 թ. Սասունի ապստամբության պարտության պատճառները.**

- ա) մասնակի ընդհարումներով հնարավոր չէր լուծել արևմտահայության ազատագրման խնդիրը
- բ) ապստամբական ղեկավարության մեջ կային լուրջ ռազմավարական տարածայնություններ
- գ) զենք-զինամթերքի բռնագրավումը գերմանացիների կողմից
- դ) զենքի և զինամթերքի բավարար չլինելը
- ե) ապստամբության ղեկավար Գևորգ Չավուշի վաղաժամ մահը

- 1) ա, ե                      2) ա, դ                      3) բ, գ                      4) բ, դ

**16. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների հետևանքներից որո՞նք են սխալ.**

- 1) Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանը ձեռք բերեց Սև ծովի շրջանները՝ ներառյալ Փոթին:
- 2) Թուրքմենչայի պայմանագրով Ռուսաստանը ձեռք բերեց Երևանի և Նախիջևանի խանությունները:
- 3) 1736 թ. Էրզրումի պայմանագրով Պարսկաստանը կրկին վերականգնեց իր դիրքերը Արևելյան Հայաստանում և Արևելյան Վրաստանում:
- 4) 1724 թ. ռուս-թուրքական պայմանագրի արդյունքում Թուրքիան գործողությունների ազատություն ստացավ Շամախիից արևելք ընկած տարածքներում:
- 5) Բուխարեստի պայմանագրով Ռուսաստանը ձեռք բերեց Փոթին և Անապան:
- 6) Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Ռուսաստանն ի թիվս այլ տարածքների հրաժարվեց Կարսի և Բաթումի մարզերից:
- 7) Բեռլինի պայմանագրով Օսմանյան կայսրությունը հետ ստացավ Բայազետը:

**17. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից որո՞նք են սխալ.**

- 1) Հայ ժողովրդի նկատմամբ Նադիր շահի ցուցաբերած դրական վերաբերմունքի պատճառներից էր հակաթուրքական պայքարում հայ բնակչության օժանդակությունը ստանալը:
- 2) 1862 թ. Զեյթունի ապստամբության ժամանակ զեյթունցիների հետ օսմանյան կառավարության փոխզիջման գնալու պատճառը Ռուսաստանի կողմից Թուրքիային պատերազմ հայտարարելու սպառնալիքն էր:
- 3) Արցախից Հովսեփ Էմինի հեռանալու պատճառը Ղարաբաղի Փանահ խանի կողմից նրան ձերբակալելու մտադրությունն էր:
- 4) 1914 թ. կնքված ռուս-թուրքական համաձայնագրի չիրագործվելու պատճառներից էր Առաջին աշխարհամարտի սկսվելը:
- 5) Թուրքիայի Առաջին աշխարհամարտի մեջ ներքաշվելու գլխավոր պատճառը թուրք-ռուսական դարավոր հակամարտությունն էր:
- 6) Առաջին աշխարհամարտի ժամանակ ցարիզմի կողմից հայ կամավորական ջուկատների ցրման գլխավոր պատճառը հայերի անկախական ձգտումներն էին:

7) Անգլիայի և Ֆրանսիայի կողմից 1915 թ. Դարդանելի գործողությունը ձեռնարկելու պատճառը Կիլիկիայի և արաբական տարածքների գերմանական զորքերի ռազմակալման կասեցումն էր:

**18. Ստորև տրված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Ռուսաստանին միացման հետևանքով Արևելյան Հայաստանը ձեռք բերեց պետական ինքնավարություն:
- 2) Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման հետևանքով արևելահայերը ազատվեցին գաղութային ճնշումներից:
- 3) Պետրոս I-ի՝ Անդրկովկաս արշավելու հետևանքով ռուսական զորքերը հաստատվեցին Սև ծովի արևմտյան և հարավային ափերին:
- 4) Պետրոս I-ի՝ Անդրկովկաս արշավելու հետևանքով ռուսական զորքերը գրավեցին Շամախիից արևմուտք ընկած տարածքները:
- 5) Աբդուլ Համիդ II-ի կողմից քրդական հեծելազորեր ստեղծելու պատճառներից էր քրդերին հակակառավարական գործողություններից հեռու պահելը:
- 6) Արևմտահայերի սահմանադրական շարժման հետևանքներից էր արևմտահայության հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի զարգացմանը նպաստելը:
- 7) Համիդյան ցեղասպանական քաղաքականության արդյունքում 1890-ական թթ. 300 հազար հայ ոչնչացվեց և նույնքան էլ արտագաղթեց տարբեր երկրներ:

**19. Ստորև տրված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Փետրվարյան հեղափոխության հետևանքով Ռուսաստանում իշխանության եկան բոլշևիկները:
- 2) Փետրվարյան հեղափոխության շնորհիվ Ռուսաստանում միապետությունից անցում կատարվեց ժողովրդավարության:
- 3) Հոկտեմբերյան հեղաշրջման արդյունքում Ռուսաստանում ձևավորվեց իշխանության գործադիր նոր մարմին՝ Ժողովմխորհը:
- 4) Փետրվարյան հեղափոխության հետևանքով Անդրկովկասում ստեղծվեց իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասի կոմիսարիատը:
- 5) Հոկտեմբերյան հեղաշրջման արդյունքում ամբողջովին փոխվեց Ռուսաստանի արտաքին և ներքին քաղաքականությունը:
- 6) Հոկտեմբերյան հեղաշրջման արդյունքում Ռուսաստանը միացավ Անտանտին:
- 7) Հոկտեմբերյան հեղաշրջման արդյունքում ռուսական զորքերը մնացին Արևմտյան Հայաստանում:

**20. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

- 1) 1826-1828 թթ. պատերազմի արդյունքում ձևավորվեց Կարսի մարզը:
- 2) 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում ձևավորվեց Հայկական մարզը:

- 3) Սան Ստեֆանոյի պայմանագրի համաձայն՝ Ռուսաստանը ձեռք բերեց Կարսը, Կաղզվանը, Օլթին, Արդահանը:
- 4) Բրեստ-Լիտովսկի պայմանագրի արդյունքում Ռուսաստանը կորցրեց նաև Կարսի և Բաթումի մարզերը:
- 5) Ադրիանուպոլսի պայմանագրի արդյունքում Ռուսաստանը ձեռք բերեց Բեսարաբիան:
- 6) Թուրքմենչայի պայմանագրի համաձայն՝ հազարավոր հայեր վերաբնակվեցին Արևելյան Հայաստանում:
- 7) 1724 թ. Էրզրումի պայմանագրով Ռուսաստանը տեր դարձավ մերձսևծովյան տարածքներին:
- 8) Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանը ձեռք բերեց Անապան, Փոթին և Ղարաբաղը:

**21. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից որո՞նք են ճիշտ.**

- ա) Արցախից Ռուսաստան Հոլսեփի Էմինի հեռանալու պատճառը Սիմեոն Երևանցու և տեղի ուժերի կողմից նրան չօժանդակելն էր:
- բ) Չեյթոնի 1862 թ. ապստամբության ժամանակ զեյթունցիների հետ օսմանյան կառավարության փոխգիջման գնալու պատճառը Ռուսաստանի կողմից Թուրքիային պատերազմ հայտարարելու սպառնալիքն էր:
- գ) Թուրքիայի՝ Առաջին աշխարհամարտի մեջ ներքաշվելու գլխավոր պատճառը թուրք-ռուսական դարավոր հակամարտությունն էր:
- դ) 1914 թ. կնքված ռուս-թուրքական համաձայնագրի չիրագործվելու պատճառներից էր Բալկանյան առաջին պատերազմը:
- ե) Անգլիայի և Ֆրանսիայի կողմից 1915 թ. Դարդանեղի գործողությունը ձեռնարկելու պատճառը Կիլիկիայի և արաբական տարածքների գերմանական զորքերի ռազմակալման կասեցումն էր:
- զ) Առաջին աշխարհամարտի ժամանակ ցարիզմի կողմից հայ կամավորական ջոկատների ցրման գլխավոր պատճառը հայերի անկախական ձգտումներն էին:
- է) Հայ ժողովրդի նկատմամբ Նադիր շահի ցուցաբերած դրական վերաբերմունքի պատճառներից էր հակառուսական պայքարում հայ բնակչության օժանդակությունը ստանալը:

- 1) բ, գ, է                      2) ա, դ, գ                      3) բ, դ, ե                      4) ա, գ, գ

**22. Ստորև թվարկված պատմական իրադարձությունների հետևանքներից որո՞նք են սխալ.**

- ա) 1826–1828 թթ. պատերազմի արդյունքում ձևավորվեց Հայկական մարզը:
- բ) Ադրիանուպոլսի պայմանագրի արդյունքում Ռուսաստանը ձեռք բերեց Բեսարաբիան:
- գ) Սան Ստեֆանոյի պայմանագրի համաձայն՝ Ռուսաստանը ձեռք բերեց Կարսը, Կաղզվանը, Օլթին, Արդահանը:
- դ) 1724 թ. Կոստանդնուպոլսի պայմանագրով Ռուսաստանը տեր դարձավ մերձկասպյան տարածքներին:

- ե) 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի արդյունքում ձևավորվեց Էրզրումի մարզը:
- զ) Թուրքմենչայի պայմանագրի համաձայն՝ հազարավոր հայեր վերաբնակվեցին Արևելյան Հայաստանում:
- է) Բրեստ–Լիտովսկի պայմանագրի արդյունքում Ռուսաստանը կորցրեց նաև Կարսը և Բաթումը:
- ը) Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանը ձեռք բերեց Անապան, Փոթին և Ղարաբաղը:

- 1) ա, դ, է                      2) բ, ե, ը                      3) ա, դ, գ                      4) բ, գ, ը

**23. Ստորև տրված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որոնք են սխալ.**

- ա) Փետրվարյան հեղափոխության շնորհիվ Ռուսաստանում միապետությունից անցում կատարվեց ժողովրդավարության:
- բ) Փետրվարյան հեղափոխության հետևանքով Անդրկովկասում ստեղծվեց իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասյան հատուկ կոմիտեն:
- գ) Փետրվարյան հեղափոխության հետևանքով Ռուսաստանում իշխանության եկան բոլշևիկները:
- դ) Հոկտեմբերյան հեղաշրջման արդյունքում Ռուսաստանում ձևավորվեց իշխանության գործադիր նոր մարմին՝ Ժամանակավոր կառավարությունը:
- ե) Հոկտեմբերյան հեղաշրջման արդյունքում ամբողջովին փոխվեց Ռուսաստանի արտաքին և ներքին քաղաքականությունը:
- զ) Հոկտեմբերյան հեղաշրջման արդյունքում Ռուսաստանը դուրս եկավ Առաջին աշխարհամարտից:
- է) Հոկտեմբերյան հեղաշրջման արդյունքում ռուսական զորքերը մնացին Արևմտյան Հայաստանում:

- 1) ա, ե, է                      2) բ, գ, գ                      3) գ, դ, է                      4) բ, դ, գ

**24. 1830 թ. զանգվածային վերաբնակեցման հետևանքներ են.**

- 1) կարսեցիների հաստատվելը Գյումրիում, Շիրակի դաշտում և Ապարանում
- 2) 45 000 հայերի տեղափոխվելը Արևելյան Հայաստան
- 3) բայազետցիների և ալաշկերտցիների հաստատվելը Սևանա լճի ավազանում
- 4) էրզրումցիների հաստատվելը Սուրմալուում, Դարաչիչակում, Ապարանում և Փամբակում
- 5) Ախալքալաքում և Ախալցխայում հայ բնակչության տեսակարար կշռի շեշտակի աճը, նախորդ ժամանակներին բնորոշ ժողովրդագրական իրավիճակի վերականգնումը,
- 6) Մուշ և Վան քաղաքների զրկվելը մեծ թվով հայ առևտրականներից ու արհեստավորներից, որոնք կարևոր տեղ ունեին Օսմանյան կայսրության տնտեսության մեջ
- 7) 75 000 արևմտահայերի վերաբնակվելը ռուսական տերությանն անցած տարածքներում

**25. Ինչո՞ւ հայ ազգային-քաղաքական ուժերը երիտթուրքական հեղաշրջումից որոշ ժամանակ անց փոխեցին իրենց դիրքորոշումը և վերսկսեցին պայքարը Հայկական հարցի լուծման համար.**

- 1) Սկսվել էր Բալկանյան առաջին պատերազմը:
- 2) Օսմանյան կայսրությունը հռչակվեց բացարձակ միապետություն:
- 3) Ստեղծվել էր Մեծ Թուրան պետությունը:
- 4) Համոզվեցին, որ երիտթուրքերը շարունակում են հայերին բնաջնջելու արդու-համիդյան քաղաքականությունը:

**26. Երիտթուրքական հեղաշրջումից հետո հնչակյան կուսակցության ղեկավարները առժամանակ հրաժարվեցին Հայաստանը կայսրությունից անջատելու պահանջից, որովհետև՝**

- 1) նպատակ ունեին խարխուլել ՀՅԴ-ի և երիտթուրքերի դաշինքը:
- 2) Օսմանյան կայսրությունում տեղի էր ունեցել հեղաշրջում և տապալվել էր բռնապետական վարչակարգը:
- 3) ցանկանում էին Հայաստանը տեսնել նորաստեղծ Մեծ Թուրան կայսրության կազմում:
- 4) երիտթուրքերը ինքնավարություն էին խոստացել կայսրության ազգային փոքրամասնություններին:

**27. «Նեմեսիս» ծրագիրը հայերի կողմից իրականացվեց, որովհետև՝**

- 1) թուրքական դատարանը արդարացրեց երիտթուրք պարագլուխներին:
- 2) երիտթուրք հանցագործների Թուրքիայից դուրս գտնվելու պատճառով հնարավոր չեղավ իրականացնել նրանց վերաբերյալ թուրքական դատարանի կայացրած վճիռները:
- 3) դաշնակից տերությունները չէին ճանաչում երիտթուրք կառավարության ղեկավարների մեղավորությունը ցեղասպանության մեջ:
- 4) 1919 թ. հունվարին հիմնված ռազմական ատյանները չէին ցանկանում ապացույցներ հավաքել:

**28. Եվրոպական տերություններն ինչո՞ւ էին 1894–1896 թթ. հայերին օգնելու ջանքեր գործադրում.**

- 1) Ֆրանսիան ձգտում էր ամրապնդել իր ազդեցությունը Եգիպտոսում:
- 2) Ռուսաստանը ջանք չէր խնայում Արևմտյան Հայաստանում, սևծովյան նեղուցներում ու Բալկաններում Անգլիայի ուժեղացումը կանխելու համար:
- 3) Գերմանիայի ծրագրերում ուրվագծվում էր Բեռլին–Բաղդադ երկաթգծի շինարարության հեռանկարը:
- 4) Բեռլին–Բաղդադ երկաթգծի շինարարության համար Գերմանիան պատրաստ էր զոհաբերելու այդ ծրագրի ճանապարհին կանգնած արևելահայության կենսական շահերը:
- 5) Անգլիայի նպատակն էր չվնասել Թուրքիայում կատարած իր ֆինանսական ներդրումները:



**4. 1916 թ. իրադարձությունները դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության.**

- ա. Քեռու զոհվելը Ռևանդուզի մոտ
- բ. Էրզրումի գրավումը ռուսական զորքերի կողմից
- գ. Խիզանի գրավումը
- դ. Խնուսի գրավումը
- ե. Մուշի գրավումը
- զ. Բիթլիսի գրավումը
- է. Սայքս-Պիկոյի համաձայնագրի կնքումը

- 1) ե, դ, գ, բ, ա, գ, է
- 2) դ, ե, բ, գ, գ, ա, է
- 3) դ, բ, ե, գ, գ, է, ա
- 4) բ, ե, դ, գ, գ, ա, է

**5. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Երուսաղեմի սուրբ վայրերին տիրելու համար տարբեր եկեղեցիների միջև ընթացող վեճը Նապոլեոն III-ի կողմից միջազգային քննարկման հարց դարձնելը
- 2) Արևելյան պատերազմի սկիզբը
- 3) ռուսական զորքերի կողմից Շիպկայի լեռնանցքի գրավումը
- 4) «Վերակազմյալ հնչակյաններ» կուսակցության առաջացումը
- 5) Պապիկ Նորաշխարհյանի՝ Ջեյթունի քաղաքագլուխ ճանաչվելը
- 6) Կարինի ու Տրապիզոնի հնչակյան մասնաճյուղերի ստեղծումը
- 7) Բեռլինի վեհաժողովի սկիզբը
- 8) Արաբոյի անդամակցելը «Դաշնակցություն» կուսակցությանը

**6. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Բալկանյան երկրորդ պատերազմի սկիզբը
- 2) կամավորական առաջին ջոկատի կազմավորումը Անդրանիկի գլխավորությամբ
- 3) Արամ Մանուկյանի նշանակվելը Վանի նահանգապետ
- 4) հայկական բարենորոգումների վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրումը
- 5) Զ. Բրայսի կողմից հայերի կոտորածների մասին փաստաթղթերի և նյութերի ժողովածու հրատարակելը
- 6) Արևմտահայաստանի գեներալ-կոմիսարին՝ գաղտնի «Ղեկավար հրահանգներ» տալը
- 7) Հայոց ազգային համախորհրդակցության գումարումը Թիֆլիսում
- 8) Արևմտահայերի առաջին համագումարը

**7. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) սոցիալիստական (ընկերվարական) գաղափարախոսության ընդգծմամբ դաշնակցության նոր ծրագրի ընդունումը
- 2) Օսմանյան կայսրությունում 1876 թ. սահմանադրության վերականգնումը

- 3) նշանավոր հայդուկ Քեռու զոհվելը
- 4) Հայոց ազգային խորհրդի ստեղծումը
- 5) Նազարեթ Չավուշի սպանությունը
- 6) Կովկասյան ճակատում Առանձին հայկական կորպուսի ստեղծումը
- 7) Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծումը
- 8) թուրքական զորքի կողմից Երզնկայի զինադադարի խախտումը և պատերազմի վերսկսումը Կովկասյան ճակատում

**8. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. Կովկասի փոխարքայության հիմնումը
- բ. Եկեղեցական կանոնադրության հրապարակումը
- գ. արևմտահայության՝ ռուսական տերությանն անցած տարածքներում զանգվածային վերաբնակեցման սկիզբը
- դ. պարսկահպատակ հայերի՝ Արևելյան Հայաստանում վերաբնակեցման սկիզբը
- ե. Երևանի թեմական դպրոցի հիմնումը

- 1) դ, բ, ա, գ, ե
- 2) գ, դ, բ, ե, ա
- 3) դ, գ, բ, ե, ա
- 4) դ, գ, ե, բ, ա

**9. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության ստեղծումը
- բ. Ադանայի նահանգում 30 000 հայերի կոտորածը
- գ. Անդրեյ Մանդելշտամի կողմից հայկական բարենորոգումների նախագծի կազմումը
- դ. Բալկանյան առաջին պատերազմի սկիզբը
- ե. ՀՅԴ-ի կողմից երիտթուրքերի հետ հարաբերությունների խզումը
- զ. Երիտթուրքերի հեղաշրջումը

- 1) գ, ա, բ, ե, դ, գ
- 2) գ, ա, դ, բ, ե, գ
- 3) գ, բ, ա, ե, դ, գ
- 4) ա, գ, բ, ե, դ, գ

**10. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. Թալեաթի սպանությունը
- բ. Թուրքական դատարանի վճիռը Թալեաթին, Նազըմին, Ջեմալին և Էնվերին մահվան դատապարտելու վերաբերյալ
- գ. Էնվերի սպանությունը
- դ. Ջեմալի մահապատիժը
- ե. Նազըմի կախաղան բարձրացվելը
- զ. Սայիդ Հալիմի սպանությունը
- է. Բեհաեդդին Շաքիրի սպանությունը

- 1) բ, գ, ա, է, դ, գ, ե
- 2) բ, ա, գ, դ, է, գ, ե
- 3) գ, ե, դ, բ, ա, գ, է
- 4) բ, ա, գ, է, դ, գ, ե



**3. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) մելիք Մանուչարի մասնակցությունը Նադիրի՝ Հնդկաստան կատարած արշավանքին
- 2) Ստեփանոս Շահումյանի՝ Սյունիքից Վրաստան մեկնելը
- 3) Իսրայել Օրու վերադարձը Սպահանից
- 4) Արցախի անջատումը Գանձակի խանությունից
- 5) հայազգի Իվան Կարապետի ժամանումը Արցախ
- 6) Եղվարդի թուրք-պարսկական ճակատամարտը

**4. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Եսայի Հասան-Ջալալյանի մահը
- 2) անգլիական «Արևելահնդկական ընկերության» և հայ վաճառականների միջև պայմանագրի կնքումը
- 3) «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գրքի լույսընծայումը Մադրասի տպարանում
- 4) Աբրահամ սպարապետի գլխավորությամբ Գյուլիստանի սղնախի պայքարի շարունակումը թուրքերի դեմ
- 5) Հալիձորի ճակատամարտը
- 6) Հովսեփ Արղությանի և Հովհաննես Լազարյանի բանակցությունները ռուսական պետական գործիչների հետ՝ արշավանք կազմակերպելու և Հայաստանը ազատագրելու մասին

**5. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Գեորգիևսկի պայմանագրի կնքումը
- 2) Մադրասում հայկական տպարանի հիմնումը
- 3) Արևելյան Վրաստանի բռնակցումը Ռուսաստանին
- 4) Մովսես Սարաֆյանի կողմից Հայաստանի ազատագրության ծրագրի կազմումը
- 5) Ախուրյանի ափին՝ Փոքր Ղարաքիլիսա գյուղի մոտ տեղի ունեցած ռուս-թուրքական ճակատամարտը
- 6) XIX դարի առաջին ռուս-պարսկական պատերազմի սկիզբը

**6. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) գեներալ Ա. Ճավճավաձեի հրամանատարությամբ Բայազետի բերդի գրավումը
- 2) Ի. Պասկևիչի գլխավորությամբ Հասան կալայի գրավումը
- 3) Վ. Բեիբութովի նշանակվելը Հայկական մարզի կառավարիչ
- 4) Շամքորի ճակատամարտը
- 5) Ղարաբաղի անցնելը Ռուսաստանին
- 6) Հայկական մարզի վերացումը

**7. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Թանգիմաթի հրապարակումը Օսմանյան կայսրությունում
- 2) Թուրքմենչայի պայմանագրի կնքումը
- 3) Երևանի բերդի գրավումը ռուսների կողմից
- 4) Կ. Պոլսում արևմտահայերի Ազգային ժողովի ստեղծումը

- 5) Երուսաղեմի սուրբ վայրերին տիրելու համար տարբեր եկեղեցիների միջև ընթացող վեճը միջազգային քննարկման հարց դարձնելը
- 6) Ադրիանուպոլսի պայմանագրի կնքումը

**8. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Պապիկ Նորաշխարհյանի ղեկավարությամբ զեյթունցիների պայքարը թուրքերի դեմ
- 2) Նապոլեոն III կայսեր անունից Ֆրանսիայի դեսպանի պահանջը Ջեյթունի պաշարումը դադարեցնելու վերաբերյալ
- 3) Կովկասի փոխարքայության ստեղծումը
- 4) Գրիգոր Արծրունու գլխավորած գաղտնի խմբակի գործունեության դադարեցումը
- 5) Մկրտիչ Խրիմյանի՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք դառնալը
- 6) Սահմանադրական հանձնաժողովի կողմից արևմտահայերի Ազգային սահմանադրության բարեփոխված տարբերակ ներկայացնելը

**9. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Աղբյուր Սերոբի անցնելը Ռումինիա
- 2) Կարինի և Տրապիզոնի հնչակյան մասնաճյուղերի ստեղծումը
- 3) Պապիկ իշխանին Ջեյթունի քաղաքագլուխ ճանաչելը
- 4) Արաբոյի անդամակցելը «Դաշնակցություն» կուսակցությանը
- 5) Բարձր դրան հատուկ հրամանով «Հայաստան» անվան գործածության արգելումը
- 6) «Հայասեր–ազգասեր» խմբակի անդամներից շատերին արքտրելը

**10. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) հնչակյան Գարուն Աղասու և մշեցի հայդուկ Մխո Շահենի տեղափոխվելը Ջեյթուն
- 2) Շենիկի գյուղապետ Գրգոյի զոհվելը
- 3) Գյալիսորի կռիվը
- 4) Գում Գափուի ցույցը
- 5) «Վերակազմյալ հնչակյաններ» կուսակցության առաջացումը
- 6) ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովի գումարումը

**11. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման մասին օրենքի ընդունումը ցարի կողմից
- 2) Թիֆլիսում Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի բանակցելը մուսուլմանների հոգևոր առաջնորդների հետ՝ ազգամիջյան բախումները դադարեցնելու նպատակով
- 3) Օսմանյան կայսրությունում 1876 թ. սահմանադրության վերականգնումը
- 4) Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովի փակումը
- 5) դաշնակցության սոցիալիստական (ընկերվարական) գաղափարախոսության ընդգծմամբ նոր ծրագրի ընդունումը
- 6) երիտթուրքական հեղաշրջման սկիզբը

**12. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Սայքս–Պիկոյի համաձայնագրի նախնական տարբերակի հանձնումը Ռուսաստանի արտգործնախարար Սազոնովին
- 2) Հայոց ազգային բյուրոյի ստեղծումը
- 3) Արամի նշանակվելը Վանի նահանգապետ
- 4) Վուսթյանի և Իշխանի դավադիր սպանությունը
- 5) Լ. Վեստենենկի և Ն. Հոֆի՝ երկու վարչական միավորների տեսուչներ ընտրվելը
- 6) Համազասպի ջոկատի կողմից Խիզանի գրավումը

**13. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) IV գնդի հրամանատար Քեռու զոհվելը
- 2) Դրոյի ջոկատի կողմից Մուշի գրավումը
- 3) հայկական կամավորական առաջին չորս ջոկատների ձևավորման ավարտը
- 4) Նիկոլայ II–ի կողմից պաշտոնապես Օսմանյան կայսրությանը պատերազմ հայտարարելը
- 5) Սայքս–Պիկոյի համաձայնագրի կնքումը
- 6) Դիլմանի ճակատամարտը

**14. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) հայ կամավորների մուտքը Վան
- 2) Նազարեթ Չավուշի սպանությունը
- 3) կամավորական 2–րդ ջոկատի կողմից Խնուսի գրավումը
- 4) Օսմանյան կայսրության հատուկ օրենքի ընդունումը՝ կայսրությունից պետության քաղաքացիների ելքն ու մուտքն արգելելու վերաբերյալ
- 5) Արամ Մանուկյանի՝ Վանի նահանգապետ նշանակվելը
- 6) կամավորական ութ ջոկատների վերակազմակերպումը վեց գումարտակների

**15. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) հայերի ոչնչացման ծրագրի խստորեն գործադրման մասին հրամանի ստորագրումը Թալեաթի, Էնվերի և Նազըմի կողմից
- 2) հայկական ջարդերի կապակցությամբ Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի հանդես գալը բողոքի հայտարարությամբ
- 3) Վարդանի գլխավորությամբ Արարատյան գնդի կազմավորումը
- 4) Մ. Գիրսի և Հ. Վանգենհայմի՝ Արևմտյան Հայաստանի համար 6 կետից բաղկացած բարենորոգումների ծրագրի կազմումը
- 5) Մ. Յոթնեղբայրյանի գլխավորած Ուրֆայի հերոսամարտի սկիզբը
- 6) հայերի նկատմամբ իրականացվող բռնությունների դեմ ԱՄՆ–ի կառավարության բողոք հայտնելը

**16. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) անգլիացի պատմաբան լորդ Զ. Բրայսի կողմից Հայոց մեծ եղեռնի մասին փաստաթղթերի և նյութերի ժողովածու հրատարակելը
- 2) Վանի գրավումը ռուսական զորքի և հայ կամավորների կողմից

- 3) Արևմտահայերի առաջին համագումարը
- 4) Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (ԱՀԿ) ստեղծումը
- 5) Հայոց ազգային համախորհրդակցության հրավիրումը Թիֆլիսում
- 6) Արևմտահայաստանի գեներալ-կոմիսարին գաղտնի «Ղեկավար հրահանգներ»-ի տրվելը

**17. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Արևմտահայերի ազգային խորհրդի ստեղծումը
- 2) Անդրկովկասյան կոմիսարիատի կազմավորումը
- 3) Բրեստ-Լիտովսկի բանակցությունների երկրորդ փուլի սկիզբը
- 4) Վ. Լենինի գլխավորությամբ Ժողովրդական կոմիսարների խորհրդի ստեղծումը
- 5) Կովկասյան ճակատում Հայկական կորպուսի կազմավորման սկիզբը
- 6) Անդրանիկի ժամանումը Էրզրում՝ որպես տեղի պաշտպանական շրջանի ղեկավար

**18. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Երզնկայի զինադադարի կնքումը Կովկասյան ճակատում
- 2) Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության ստեղծումը
- 3) Անդրկովկասի Սեյմի կողմից երկրամասը ռազմական դրության մեջ հայտարարելը
- 4) Բաթումի հաշտության պայմանագրի կնքումը
- 5) Առանձին հայկական կորպուսի ստեղծումը
- 6) Անդրկովկասյան կառավարության կողմից Կարսն առանց կռվի թուրքերին հանձնելը

**19. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Տարոնի 500 կամավորների ուժերով Ներքին Թալինի բերդի գրավումը
- 2) Ղարաքիլիսայի հերոսամարտի սկիզբը
- 3) Արամ Մանուկյանի հաստատվելը որպես Երևանի նահանգի դիկտատոր
- 4) Սոգյուբլուի (Սառնաղբյուրի) հաղթական կռիվների սկիզբը
- 5) Բաշ Ապարանի հերոսամարտի սկիզբը
- 6) Ալեքսանդրապոլում հայ ազգային-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը

**20. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) «Բազմավեպի» տպագրման սկիզբը
- 2) Շուշիի թեմական դպրոցի բացումը
- 3) հայոց առաջին պարբերականի լույսընծայումը
- 4) Միքայել Չամչյանի «Պատմութիւն Հայոց» եռահատոր աշխատության առաջին տպագրությունը
- 5) «Տարեգրություն» պարբերականի հրատարակումը
- 6) Աղաբաբյան դպրոցի հիմնումը

**21. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Ախալցխայի Կարապետյան դպրոցի ստեղծումը
- 2) Առաջին գիտական հայ պարբերականի հրատարակումը
- 3) Համբարձում Լիմոնճյանի կողմից հայկական նոր ձայնագրության ստեղծումը
- 4) Երևանի բերդում «Խելքից պատուհաս» պիեսի բեմադրումը հեղինակի ներկայությամբ
- 5) Պետերբուրգում Մ. Խորենացու «Հայոց պատմության» հրատարակումը ռուսերենով
- 6) Թիֆլիսում Ներսիսյան դպրոցի հիմնումը

**22. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Ախալքալաքի Մեսրոպյան դպրոցի ստեղծումը
- 2) Ս. Ղազար կղզու հայկական աստղադիտարանում առաջինը Յուպիտերի վեցերորդ արբանյակը հայտնաբերելը
- 3) Մարգար Առուստամովի պայքարը Աստրախանում բռնկված խոլերայի համաճարակի դեմ
- 4) «Արշակ Բ» օպերայի ստեղծումը
- 5) Կ. Պոլսում հայկական առաջին մշտական թատերական խմբի կազմումը
- 6) «Բազմավեպի» տպագրման սկիզբը

**23. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Թիֆլիսում հայկական արհեստավարժ առաջին թատրոնի բացվելը
- 2) «Բազմավեպի» տպագրման սկիզբը
- 3) Հովհաննես Աղամյանի՝ Բեռլինում հեռավորության վրա գունապատկեր հաղորդելու առաջին փորձի իրագործումը
- 4) առաջին գիտական հայ պարբերականի հրատարակումը
- 5) Հ. Վարդոպյանի երկվեզու թատրոնի ստեղծումը
- 6) Գալուստ Շերմազանյանի ջանքերով Թիֆլիսում հայ և օտար դրամատուրգների պիեսների բեմադրումը

**24. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Ադրիանուպոլսի պայմանագրի կնքումը
- 2) Կ. Պոլսում առաջին մշտական թատերական խմբի կազմումը
- 3) Հայկական մարզի վերացումը
- 4) Արևմտահայության՝ ռուսական տերությանն անցած տարածքներում զանգվածային վերաբնակեցման սկիզբը
- 5) Պարսկահպատակ հայերի՝ Արևելյան Հայաստանում վերաբնակեցման սկիզբը
- 6) Թուրքմենչայի պայմանագրի կնքումը

**25. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) «Միություն և առաջադիմություն» կազմակերպության ստեղծումը
- 2) Անդրեյ Մանդելշտամի կողմից հայկական բարենորոգումների նախագծի կազմումը
- 3) ՀՅԴ–ի կողմից երիտթուրքերի հետ հարաբերությունների խզումը
- 4) Երիտթուրքերի հեղաշրջումը
- 5) Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության ստեղծումը
- 6) Ադանայի նահանգում 30 000 հայերի կոտորածը

**26. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Զեմալի մահապատիժը
- 2) Թուրքական դատարանի վճիռը Թալեաթին, Էնվերին, Զեմալին, Նազըմին հեռակա մահվան դատապարտելու վերաբերյալ
- 3) Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության ստեղծումը
- 4) Սայիդ Հալիմի սպանությունը
- 5) Զեմալ Ազմիի մահապատիժը
- 6) Թալեաթի մահապատիժը

## 7. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ

### 7-1. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

#### 1. Կատարել համապատասխանեցում.

N	Իրադարձությունը	N	Տարեթիվը	N	Գործիչը
1	Հալիձորի ճակատամարտը	1	1828 թ.	1	Նադիր շահ
2	Իսամայի մելիքությունների ստեղծումը	2	1829 թ.	2	Մանուկ բեյ
3	Հայկական մարզի կազմավորումը	3	1844 թ.	3	Մխիթար սպարապետ
4	Հասան կալայի գրավումը	4	1736 թ.	4	Նիկոլայ I
		5	1727 թ.	5	Ի. Պասկևիչ

1	4	4
2	2	1
3	1	2
4	5	5

1)

1	5	3
2	4	1
3	3	4
4	2	2

2)

1	5	3
2	4	1
3	1	4
4	2	5

3)

1	3	3
2	4	2
3	5	4
4	2	1

4)

#### 2. Կատարել համապատասխանեցում.

N	Իրադարձությունը	N	Տարեթիվը	N	Գործիչը
1	Վանի հերոսամարտը	1	1900 թ.	1	Անդրանիկ
2	Ս. Առաքելոց վանքի կռիվը	2	1898 թ.	2	Աղբյուր Սերոբ
3	Սասունի ապստամբությունը	3	1896 թ.	3	Սարգիս Կուկունյան
4	Բաբշենի կռիվը	4	1901 թ.	4	Մեծն Մուրադ
		5	1894 թ.	5	Մկրտիչ Ավետիսյան

1	4	3
2	2	1
3	1	4
4	5	5

1)

1	3	5
2	4	1
3	5	4
4	2	2

2)

1	5	3
2	4	1
3	1	4
4	2	5

3)

1	3	5
2	4	2
3	5	3
4	2	1

4)

**3. Պատմական գործիչների անունները համապատասխանեցնել պաշտոններին.**

- |                   |                   |
|-------------------|-------------------|
| 1) Չորի Չորյան    | 4) Վահան Փափազյան |
| 2) Արամ Մանուկյան | 5) Գեգեչկորի      |
| 3) Հակոբ Զավրյան  | 6) Նիկոլ Աղբալյան |

ա. Արևմտահայերի ազգային խորհրդի նախագահ

բ. Հայոց ազգային խորհրդի քարտուղար

գ. Ախալցխայի Հայոց ազգային խորհրդի նախագահ

դ. Արևմտյան Հայաստանի գլխավոր կոմիսարի քաղաքացիական գծով տեղակալ

ե. Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ

զ. Երևանի նահանգի դիկտատոր

է. Հայոց ազգային խորհրդի նախագահ

- |                                 |                                 |
|---------------------------------|---------------------------------|
| 1) 1-ա, 2-բ, 3-ե, 4-գ, 5-դ, 6-է | 3) 1-գ, 2-ա, 3-է, 4-դ, 5-բ, 6-զ |
| 2) 1-է, 2-գ, 3-ե, 4-դ, 5-ա, 6-բ | 4) 1-գ, 2-զ, 3-դ, 4-ա, 5-ե, 6-բ |

**4. Ստեղծագործությունները համապատասխանեցնել հեղինակների անվանը.**

- 1) «Նավերի բեռնումը»
- 2) «Համառօտ պատմություն Աղուանից»
- 3) «Տիեզերական պատմություն»
- 4) «Քննական պատմություն հայոց»
- 5) «Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում»
- 6) «Ազգապատում»
- 7) «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում»
- 8) «Ս. Հռիփսիմե»

ա. Հովսեփ Գաթրըճյան

բ. Եղիշե Թադևոսյան

գ. Առաքել Դավրիժեցի

դ. Եսայի Հասան-Ջալալյան

ե. Անտոն Գարագաշյան

զ. Նիկողայոս Ադոնց

է. Մաղաքիա Օրմանյան

ը. Ալեքսանդր Երիցյան

թ. Հովհաննես Այվազովսկի

- 1) 1-բ, 2-գ, 3-ե, 4-ա, 5-ը, 6-զ, 7-է, 8-թ
- 2) 1-թ, 2-դ, 3-ա, 4-ե, 5-ը, 6-է, 7-զ, 8-բ
- 3) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ե, 5-ա, 6-է, 7-զ, 8-թ
- 4) 1-թ, 2-գ, 3-ե, 4-զ, 5-դ, 6-է, 7-ը, 8-բ

**5. Ազատագրական խմբակի կամ կազմակերպության անունը համապատասխանեցնել դրա հետ առնչվող գործչին.**

- |                               |                             |
|-------------------------------|-----------------------------|
| 1) «Հայրենասերների միություն» | 3) «Պաշտպան հայրենյաց»      |
| 2) «Բարենպատակ ընկերություն»  | 4) «Միություն ի փրկություն» |

ա. Կարապետ Նշկյան

բ. Հակոբ Կալոյան

գ. Արսեն Կրիտյան

դ. Կոստանդին Կամսարական

ե. Ներսես Աբելյան

- 1) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
- 2) 1-ե, 2-ա, 3-դ, 4-բ

- 3) 1-դ, 2-բ, 3-ա, 4-ե
- 4) 1-ե, 2-գ, 3-ա, 4-բ

**6. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

- 1) Խաչատուր Գաղատացի կաթողիկոսի նամակ գրելը Ֆրանսիայի Լյուդովիկոս XIV թագավորին
- 2) Հովհաննես Թութունջի վարդապետի մասնակցությամբ հայկական պատվիրակության ժամանումը Փարիզ
- 3) Իսրայել Օրու անակնկալ մահը
- 4) Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի գլխավորած պատվիրակության ժամանումը Կ. Պոլիս
- 5) Անգեղակոթի գաղտնի ժողովը

- ա. 1678 թ.
- բ. 1663 թ.
- գ. 1673 թ.

- դ. 1683 թ.
- ե. 1711 թ.
- զ. 1699 թ.

- 1) 1-բ, 2-դ, 3-ե, 4-ա, 5-գ
- 2) 1-բ, 2-գ, 3-ե, 4-գ, 5-ա

- 3) 1-ա, 2-գ, 3-ե, 4-գ, 5-դ
- 4) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ, 5-ե

**7. Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

- 1) 1722 թ.
- 2) 1724 թ. հունիս
- 3) 1723 թ. հունիս

- 4) 1725 թ. մարտ
- 5) 1724 թ. սեպտեմբեր

- ա. ռուս-թուրքական պայմանագրի կնքումը Կ. Պոլսում
- բ. աֆղանների կողմից Սպահանի գրավումը
- գ. Երևանի գրավումը թուրքերի կողմից
- դ. թուրքական երեք զորամասերի ներխուժումը Արցախի Վարանդա գավառ
- ե. թուրքական բանակների կողմից Թիֆլիս քաղաքի գրավումը
- զ. թուրքական զորքերի՝ Շուշին գրավելու անհաջող փորձերը

- 1) 1-ա, 2-բ, 3-ե, 4-գ, 5-դ
- 2) 1-բ, 2-ա, 3-ե, 4-դ, 5-գ

- 3) 1-բ, 2-ա, 3-գ, 4-գ, 5-դ
- 4) 1-ա, 2-բ, 3-ե, 4-գ, 5-գ

**8. Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

- 1) 1722 թ.
- 2) 1725 թ.
- 3) 1727 թ.

- 4) 1728 թ.
- 5) 1730 թ.

- ա. Հալիձորի պաշարումը թուրքերի կողմից
- բ. Դավիթ բեկի գլխավորությամբ հայ զորավարների ժամանումը Սյունիք
- գ. Եսայի Հասան-Ջալալյանի մահը
- դ. Մխիթար սպարապետի սպանությունը

ե. Արցախի ազատագրական ուժերի և Գանձակի մահմեդականների միջև պայմանագրի կնքումը

զ. թուրքական երեք զորամասերի ներխուժումը Արցախի Վարանդա գավառ

1) 1-ե, 2-բ, 3-ա, 4-գ, 5-դ

3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-գ, 5-դ

2) 1-բ, 2-գ, 3-ե, 4-դ, 5-գ

4) 1-ե, 2-բ, 3-ա, 4-գ, 5-գ

**9. Տարեթվերը համապատասխանեցնել 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի հետ կապված իրադարձություններին.**

1) Թուրքմենչայի պայմանագրի կնքումը

2) Օշականի ճակատամարտը

3) Երևանի բերդի գրավումը ռուսական զորքերի կողմից

4) Գանձակի ճակատամարտը

5) Սարդարապատի գրավումը ռուսական զորքերի կողմից

ա. 1826 թ. սեպտեմբերի 13

դ. 1827 թ. սեպտեմբեր

բ. 1827 թ. մայիսի 10

ե. 1827 թ. հոկտեմբերի 1

գ. 1827 թ. օգոստոսի 17

զ. 1828 թ. փետրվարի 10

1) 1-գ, 2-գ, 3-ե, 4-ա, 5-դ

3) 1-ե, 2-գ, 3-բ, 4-գ, 5-դ

2) 1-գ, 2-գ, 3-ե, 4-բ, 5-ա

4) 1-ե, 2-բ, 3-գ, 4-դ, 5-գ

**10. Իրադարձությունները համապատասխանեցնել 1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետ կապված տարեթվերին.**

1) 1828 թ. ապրիլ

2) 1828 թ. հունիսի 23

3) 1828 թ. օգոստոսի 15

4) 1828 թ. օգոստոսի 28

ա. Ախալցխայի գրավումը ռուսական զորքերի կողմից

բ. ռուսական զորքերի մուտքը Էրզրում

գ. Կարսի գրավումը ռուսական զորքերի կողմից

դ. Բայազետի բերդի հանձնվելը ռուսներին

ե. ռուսական զորքերի պատերազմական գործողությունների սկիզբը թուրքերի դեմ

1) 1-բ, 2-դ, 3-ե, 4-ա

3) 1-ե, 2-գ, 3-բ, 4-ա

2) 1-բ, 2-գ, 3-ե, 4-դ

4) 1-ե, 2-գ, 3-ա, 4-դ

**11. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

1) 1828 թ.

3) 1844 թ.

2) 1849 թ.

4) 1829 թ.

ա. Կովկասի փոխարքայության ստեղծումը

բ. Երևանի նահանգի հիմնադրումը

գ. Ադրիանուպոլսի պայմանագրի կնքումը



**14. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

- 1) Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովի հրավիրումը Էջմիածնում
- 2) Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման վերաբերյալ հակահայ օրենքի չեղյալ հայտարարումը
- 3) բանվորների խաղաղ ցույցի գնդակոծումը Պետերբուրգում
- 4) Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման վերաբերյալ օրենքի հաստատումը Նիկոլայ II-ի կողմից
- 5) Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման վերաբերյալ օրենքի կիրառման դեմ ուղղված առաջին ցույցը Ալեքսանդրապոլում
- 6) ազգամիջյան կռիվների սկիզբը Բաքվում

- ա. 1906 թ. օգոստոսի 17  
բ. 1905 թ. հունվարի 19  
գ. 1903 թ. հունիսի 12

- դ. 1903 թ. հուլիսի 29  
ե. 1905 թ. հունվարի 9  
զ. 1905 թ. փետրվարի 6  
է. 1905 թ. օգոստոսի 1

- 1) 1-ա, 2-է, 3-ե, 4-գ, 5-դ, 6-զ  
2) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ, 5-գ, 6-է

- 3) 1-բ, 2-դ, 3-ե, 4-գ, 5-է, 6-ա  
4) 1-բ, 2-է, 3-ե, 4-գ, 5-դ, 6-զ

**15. Գործիչների անունները համապատասխանեցնել քաղաքական կազմակերպությունների անվանումներին.**

- 1) «Միություն ի փրկություն»
- 2) «Հայրենասերների միություն»

- 3) «Բարենպատակ ընկերություն»
- 4) «Պաշտպան հայրենյաց»

- ա. Կարապետ Թուր-Սարգսյան  
բ. Արսեն Կրիտյան  
գ. Խաչատուր Կերեքցյան

- դ. Ներսես Աբելյան  
ե. Հակոբ Կալոյան

- 1) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ  
2) 1-ե, 2-դ, 3-բ, 4-գ

- 3) 1-գ, 2-ա, 3-ե, 4-բ  
4) 1-ե, 2-դ, 3-բ, 4-ա

**16. Կատարել համապատասխանեցում.**

- 1) «Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցության հիմնադրումը
- 2) Հնչակյան կուսակցության հիմնադրումը
- 3) Արմենական կուսակցության հիմնադրումը
- 4) «Հայրենասերների միություն» կազմակերպության հիմնադրումը
- 5) «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության հիմնադրումը

- ա. 1874 թ.  
բ. 1882 թ.  
գ. 1890 թ.

- դ. 1881 թ.  
ե. 1887 թ.  
զ. 1885 թ.

- 1) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ, 5-զ  
2) 1-գ, 2-ե, 3-գ, 4-բ, 5-դ

- 3) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ, 5-զ  
4) 1-ա, 2-ե, 3-գ, 4-գ, 5-դ

**17. Կատարել համապատասխանեցում.**

N	Քաղաքական կազմակերպությունը	N	Հիմնադրման վայրը	N	Գործիչը
1	«Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցություն	1	Վան	1	Հակոբ Կալոյան
2	Հնչակյան կուսակցություն	2	Մոսկվա	2	Խաչատուր Կերեքցյան
3	«Հայրենասերների միություն» կազմակերպություն	3	Թիֆլիս	3	Ներսես Աբեղյան
4	«Միություն ի փրկություն» կազմակերպություն	4	Ալեքսանդրապոլ	4	Ավետիս Նազարբեկյան
		5	Ժնև	5	Քրիստափոր Միքայելյան

1	5	2
2	3	5
3	1	4
4	4	1

1)

1	3	1
2	2	4
3	4	3
4	1	5

2)

1	2	5
2	4	3
3	3	1
4	5	4

3)

1	3	5
2	5	4
3	2	3
4	1	1

4)

**18. Կատարել համապատասխանեցում.**

N	Հայրուկապետը	N	Ծննդյան տարեթիվը	N	Ծննդավայրը
1	Աղբյուր Սերոբ	1	1863 թ.	1	Սասունի Կոռթեր գյուղ
2	Գևորգ Չավուշ	2	1865 թ.	2	Սասունի Ահարոնք գյուղ
3	Անդրանիկ Օզանյան	3	1864 թ.	3	Շապին Կարահիսար քաղաք
4	Արարո	4	1874 թ.	4	Սասունի Մկղենք գյուղ
		5	1870 թ.	5	Խլաթի Սոխորո գյուղ

1	1	2
2	4	1
3	3	3
4	5	4

1)

1	3	2
2	5	1
3	4	3
4	1	5

2)

1	3	5
2	4	2
3	2	1
4	5	4

3)

1	3	5
2	5	4
3	2	3
4	1	1

4)

**19. Կատարել համապատասխանեցում.**

N	Գործիչը	N	Իրադարձությունը	N	Տարեթիվը
1	Աղբյուր Սերոբ	1	Բշարե Խալիլի սպանությունը	1	1890 թ.
2	Անդրանիկ Օզանյան	2	Գյալիսորի ձորի կռիվները թուրքերի և քրդերի դեմ	2	1896 թ.
3	Սարգիս Կուկունյան	3	Օսմանյան բռնատիրությունից ազատագրվելու նպատակով հայ-քրդական դաշինքի ստեղծումը	3	1893 թ.
4	Արարո	4	Կարսի մարզից հայդուկ-կամավորների անցումը Արևմտյան Հայաստան	4	1898 թ.
		5	Բաբշենի կռվում հայերի տարած հաղթանակը	5	1900 թ.

1	5	4
2	4	2
3	1	5
4	2	3

1)

1	3	4
2	2	2
3	1	1
4	4	3

2)

1	3	3
2	1	5
3	4	4
4	2	1

3)

1	5	4
2	1	5
3	4	1
4	2	3

4)

**20. Կատարել համապատասխանեցում.**

N	Իրադարձությունը	N	Տարեթիվը	N	Գործիչը
1	Զեյթունի ապստամբությունը	1	1894 թ.	1	Մկրտիչ Ավետիսյան
2	Սասունի հերոսամարտը	2	1862 թ.	2	Նիկոլ Դուման
3	Վանի հերոսամարտը	3	1901 թ.	3	Մեծն Մուրադ
4	Ս. Առաքելոց վանքի կռիվը	4	1895 թ.	4	Մկրտիչ Յաղուբյան
		5	1896 թ.	5	Անդրանիկ Օզանյան

1	4	5
2	5	1
3	1	3
4	3	2

1)

1	2	4
2	1	3
3	5	1
4	3	5

2)

1	2	2
2	3	5
3	1	3
4	5	4

3)

1	3	2
2	5	3
3	2	4
4	4	5

4)

**21. Ղեկավարների անունները համապատասխանեցնել 1915 թ. տեղի ունեցած ինքնապաշտպանական մարտերին.**

- |                                 |                                 |
|---------------------------------|---------------------------------|
| 1) Վանի Քաղաքամեջ թաղամասի      | 4) Մուշի                        |
| 2) Մուսա լեռան                  | 5) Շապին Կարահիսարի             |
| 3) Շատախ գավառի                 | 6) Ուրֆայի                      |
| ա. Ղուկաս Տեովլեթյան            | ե. Մկրտիչ Յոթնեղբայրյան         |
| բ. Արմենակ Եկարյան              | զ. Բաղդիկ Սիմոնյան              |
| գ. Հայկակ Կոստյան               | է. Տիգրան Անդրեասյան            |
| դ. Հակոբ Կոստյան                |                                 |
| 1) 1-գ, 2-է, 3-զ, 4-դ, 5-ա, 6-ե | 3) 1-բ, 2-զ, 3-զ, 4-դ, 5-ա, 6-ե |
| 2) 1-գ, 2-է, 3-ա, 4-ե, 5-դ, 6-բ | 4) 1-գ, 2-զ, 3-է, 4-ա, 5-բ, 6-ե |

**22. Կատարել համապատասխանեցում.**

N	1915 թ. ինքնապաշտպանական մարտերը	N	Ղեկավար գործիչը	N	Ժամանակահատվածը
1	Ուրֆայի	1	Բաղդիկ Սիմոնյան	1	ապրիլի 1 – մայիսի 14
2	Շապին Կարահիսարի	2	Տիգրան Անդրեասյան	2	ապրիլի 7 – մայիսի 5
3	Մուսա լեռան	3	Մկրտիչ Յոթնեղբայրյան	3	օգոստոսի սկիզբ – սեպտեմբերի 10
4	Շատախի կենտրոն Թաղի	4	Հայկակ Կոստյան	4	հունիսի 3 – հունիսի 29
		5	Ղուկաս Տեովլեթյան	5	սեպտեմբերի 29 – նոյեմբերի կեսեր

1	5	2
2	3	5
3	1	4
4	4	1

1)

1	3	1
2	2	4
3	4	3
4	1	5

2)

1	2	5
2	4	3
3	3	1
4	5	4

3)

1	3	5
2	5	4
3	2	3
4	1	1

4)

**23. Կատարել համապատասխանեցում.**

- |  |                     |
|--|---------------------|
| 1) Կեսարիայի շրջանում գործող «Մեծ չեկոյի» առաջնորդը  | դ. Աղբյուր Սերոբ    |
| 2) Գյալիսորի կռվում հայդուկների առաջնորդը            | ե. Մկրտիչ Յաղուբյան |
| 3) Բաբշենի կռվում հայդուկների առաջնորդը              | զ. Թորոս Ծառուկյան  |
| 4) 1862 թ. Ջեյթունի ապստամբության ընդհանուր ղեկավարը |                     |
| 5) «Մարտական հրահանգներ» կանոնագրքի հեղինակը         |                     |
| ա. Արաբո   |                     |
| բ. Անդրանիկ Օզանյան                                  |                     |
| գ. Գևորգ Չավուշ                                      |                     |

- 1) 1-ե, 2-ա, 3-բ, 4-գ, 5-դ
- 2) 1-գ, 2-գ, 3-դ, 4-բ, 5-ե

- 3) 1-ա, 2-ե, 3-գ, 4-դ, 5-բ
- 4) 1-գ, 2-ա, 3-դ, 4-ե, 5-բ

**24. Կատարել համապատասխանեցում.**

- 1) Անդրկովկասյան հատուկ կոմիտեի ղեկավարը
- 2) Արևմտահայերի ազգային խորհրդի նախագահը
- 3) Արևմտահայերի ազգային խորհրդի պատվավոր նախագահը
- 4) Արևելահայերի Հայոց ազգային խորհրդի նախագահը
- 5) Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ

- ա. Վահան Փափազյան
- բ. Գեգեչկորի
- գ. Մկրտիչ Թերլեմեզյան

- դ. Անդրանիկ Օզանյան
- ե. Ա. Ահարոնյան
- զ. Վ. Խառլամով

- 1) 1-գ, 2-ա, 3-գ, 4-ե, 5-դ
- 2) 1-գ, 2-գ, 3-դ, 4-բ, 5-ե

- 3) 1-ե, 2-դ, 3-ա, 4-գ, 5-բ
- 4) 1-գ, 2-ա, 3-դ, 4-ե, 5-բ

**25. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

- 1) Խանասորի արշավանքը
- 2) Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման մասին ցարական օրենքի ընդունումը
- 3) Բաքվում հայ-թաթարական ընդհարումների սկիզբը
- 4) Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման վերաբերյալ օրենքի չեղյալ հայտարարվելը
- 5) Մշո Ս. Առաքելոց վանքի կոիվների սկսվելը
- 6) Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման վերաբերյալ օրենքի կիրառման դեմ ուղղված առաջին ցույցը Ալեքսանդրապոլում
- 7) հնչակյանների կազմակերպած 4-հազարանոց խաղաղ ցույցը Կ. Պոլսում

- ա. 1901 թ. նոյեմբերի 6
- բ. 1903 թ. հուլիսի 29
- գ. 1895 թ. սեպտեմբերի 18
- դ. 1903 թ. հունիսի 12

- ե. 1897 թ. հուլիսի 25
- զ. 1896 թ. օգոստոսի 14
- է. 1905 թ. փետրվարի 6
- ը. 1905 թ. օգոստոսի 1

- 1) 1-գ, 2-բ, 3-է, 4-գ, 5-դ, 6-ե, 7-ա
- 2) 1-բ, 2-գ, 3-ե, 4-ը, 5-ա, 6-է, 7-գ
- 3) 1-գ, 2-բ, 3-ը, 4-ա, 5-է, 6-ե, 7-դ
- 4) 1-ե, 2-դ, 3-է, 4-ը, 5-ա, 6-բ, 7-գ

**26. Կատարել համապատասխանեցում.**

- 1) Գյուլիստանի սղնախի հրամանատարը 1729–1731 թթ.
- 2) Սյունիքի ազատագրական պայքարի ղեկավարը 1728–1730 թթ.
- 3) Խամսայի մելիքությունների առաջին կառավարիչը
- 4) Արարատյան երկրի քալանթարը Նադիր շահի իշխանության տարիներին
- 5) Սյունիքում ստեղծված հայկական իշխանության ղեկավարը

- ա. Ավան հարյուրապետ
- բ. Մելիքջան Մելիք-Շահնազարյանց
- գ. Աբրահամ սպարապետ

- 1) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ, 5-գ
- 2) 1-գ, 2-ե, 3-զ, 4-բ, 5-դ

- դ. Դավիթ բեկ
- ե. Մխիթար սպարապետ
- զ. մելիք Եզան

- 3) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ, 5-գ
- 4) 1-ա, 2-ե, 3-զ, 4-գ, 5-դ

**27. Առաջին աշխարհամարտի տարիներին ձևավորված հայ կամավորական ջոկատների հիմնադրման վայրերը համապատասխանեցնել ջոկատներին.**

- 1) I ջոկատ
- 2) II ջոկատ

- ա. Կաղզվան
- բ. Սարիղամիշ
- գ. Վան

- 1) 1-ե, 2-բ, 3-ա, 4-գ
- 2) 1-ա, 2-ե, 3-դ, 4-բ

- 3) III ջոկատ
- 4) IV ջոկատ

- դ. Իգդիր
- ե. Սալմաստ

- 3) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
- 4) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ

**28. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

- 1) Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության ստեղծումը
- 2) Բալկանյան երկրների ռազմական դաշինքի ստեղծումը ընդդեմ Թուրքիայի
- 3) ՀՅԴ-ի կողմից երիտթուրքերի հետ հարաբերությունների խզումը
- 4) Երիտթուրքերի հեղաշրջումը

- ա. 1908 թ. հուլիս
- բ. 1908 թ. հոկտեմբեր
- գ. 1912 թ. ամառ

- 1) 1-բ, 2-գ, 3-ե, 4-ա
- 2) 1-գ, 2-դ, 3-ե, 4-ա

- դ. 1907 թ. դեկտեմբեր
- ե. 1912 թ. մայիս

- 3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-ե
- 4) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ

**29. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

**Իրադարձությունը**

- 1) Էնվերի սպանությունը
- 2) Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության ստեղծումը
- 3) Սայիդ Հալիմի սպանությունը
- 4) Թալեաթի սպանությունը
- 5) Զեմալի մահապատիժը

- 1) 1-բ, 2-գ, 3-ե, 4-ա, 5-դ
- 2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա, 5-գ

**Վայրը**

- ա. Բեռլին
- բ. Հռոմ
- գ. Թիֆլիս
- դ. Ալեքսանդրիա
- ե. Բաքու
- զ. Միջին Ասիա

- 3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-ե, 5-գ
- 4) 1-գ, 2-դ, 3-բ, 4-գ, 5-ա

### 30. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.

#### Իրադարձությունը

- 1) Էնվերի սպանությունը
- 2) Կարսի պայմանագրի ստորագրումը
- 3) Սայիդ Հալիմի սպանությունը
- 4) Թալեաթի սպանությունը
- 5) Ջեմալի մահապատիժը
- 6) Ջեմալ Ազմիի մահապատիժը

#### Տարեթիվը

- ա. 1922 թ. օգոստոս
- բ. 1921 թ. մարտի 15
- գ. 1921 թ. հոկտեմբերի 13
- դ. 1922 թ. հուլիսի 25
- ե. 1922 թ. ապրիլի 17
- զ. 1919 թ. հուլիսի 5
- է. 1921 թ. դեկտեմբերի 6

- 1) 1-գ, 2-զ, 3-է, 4-բ, 5-դ, 6-ե
- 2) 1-ա, 2-զ, 3-է, 4-բ, 5-դ, 6-ե

- 3) 1-ա, 2-զ, 3-բ, 4-է, 5-դ, 6-ե
- 4) 1-ա, 2-զ, 3-ե, 4-բ, 5-դ, 6-է

### 7-Ու. Կարճ (վանդակավոր) պատասխանով առաջադրանքներ

#### 1. Կատարել համապատասխանեցում.

- ա. թուրքական զորքերի ներխուժումը Արցախի Վարանդա գավառ
- բ. Շուշին գրավելու օսմանյան բանակի անհաջող փորձերը
- գ. Մխիթար սպարապետի դավադիր սպանությունը
- դ. Հալիճորի հաղթական ճակատամարտը
- ե. Սյունիքի ազատագրական ուժերի հաղթանակը ջևանշիր կոչվող քոչվոր ցեղի դեմ
- զ. Եսայի Հասան-Ջալալյանի մահը

- 1) 1722 թ.
- 2) 1724 թ.
- 3) 1725 թ.
- 4) 1726 թ.
- 5) 1727 թ.
- 6) 1728 թ.
- 7) 1730 թ.

#### 2. Կատարել համապատասխանեցում.

- ա. Գյուլիստանի հաշտության պայմանագրի կնքումը
- բ. ռուս-թուրքական պատերազմի սկիզբը
- գ. Շամքորի ճակատամարտը
- դ. Երևանի բերդի գրավումը
- ե. Շուշիի բերդի պաշարումը Աբաս-Միրզայի 60-հազարանոց բանակի կողմից
- զ. Օշականի ճակատամարտը

- 1) 1827 թ. օգոստոս
- 2) 1826 թ. սեպտեմբեր
- 3) 1826 թ. հուլիս
- 4) 1806 թ. դեկտեմբեր
- 5) 1827 թ. հոկտեմբեր
- 6) 1809 թ. օգոստոս
- 7) 1813 թ. հոկտեմբեր

### 3. Կատարել համապատասխանեցում.

ա. 1826 թ. հուլիս

դ. 1828 թ. փետրվարի 10

բ. 1826 թ. սեպտեմբերի 3

ե. 1827 թ. սեպտեմբեր

գ. 1827 թ. օգոստոսի 17

զ. 1826 թ. սեպտեմբերի 13

- 1) ռուսական զորամասերի մուտքը Թավրիզ
- 2) Օշականի ճակատամարտը
- 3) Գանձակի (Ելիզավետպոլի) ճակատամարտը
- 4) Աբաս-Միրզայի 60-հազարանոց բանակի ներխուժումը Ղարաբաղ
- 5) Սարդարապատի գրավումը ռուսական զորքերի կողմից
- 6) գեներալ Վալերիան Մադաթովի զորագնդի հաղթանակը Շամքոր գետի ափին
- 7) Թուրքմենչայի պայմանագրի կնքումը

### 4. Կատարել համապատասխանեցում.

ա. 1828 թ. օգոստոսի 28

դ. 1829 թ. հունիսի 24

բ. 1826 թ. սեպտեմբերի 13

ե. 1829 թ. հունիսի 27

գ. 1828 թ. օգոստոսի 15

զ. 1829 թ. սեպտեմբերի 2

- 1) Հասան կալայի բերդի գրավումը Պասկևիչի զորքերի կողմից
- 2) Բայազետի բերդի հանձնվելը ռուսներին
- 3) ռուս-թուրքական պայմանագրի կնքումը Ադրիանուպոլսում
- 4) ռուսական զորքերի մուտքը Էրզրում
- 5) ռուսական զորքերի մուտքը Կարս
- 6) Ախալցխայի գրավումը Պասկևիչի զորքերի կողմից
- 7) Գանձակի ճակատամարտը

### 5. Քաղաքական կազմակերպությունների հիմնադիրների անունները համապատասխանեցնել կազմակերպությունների անվանումներին.

ա. «Բարենպատակ ընկերություն»

բ. «Միություն ի փրկություն»

գ. «Պաշտպան հայրենյաց»

դ. Արմենական կուսակցություն

ե. Հնչակյան կուսակցություն

զ. «Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցություն

1) Խաչատուր Կերեքցյան

5) Քրիստափոր Միքայելյան

2) Մկրտիչ Ավետիսյան

6) Հակոբ Կալոյան

3) Արսեն Կրիստյան

7) Ավետիս Նազարբեկյան

4) Գրիգոր Արծրունի

### 6. Տարբերել համապատասխանեցնել իրադարձություններին.

ա. «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գրքի առաջին տպագրությունը

բ. եկեղեցական կանոնադրության (պոլոժենիե) իրապարակումը ցարական իշխանությունների կողմից

- գ. Հայկական մարզի ստեղծումը
- դ. Բեռլինի վեհաժողովը
- ե. Մովսես Սարաֆյանի կողմից Հայաստանի ազատագրության ծրագրի ներկայացումը Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային
- զ. Ազգային սահմանադրության հաստատումը Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովի կողմից

- |            |            |
|------------|------------|
| 1) 1769 թ. | 5) 1863 թ. |
| 2) 1772 թ. | 6) 1878 թ. |
| 3) 1828 թ. | 7) 1860 թ. |
| 4) 1836 թ. |            |

**7. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

- ա. «Հայրենասերների միություն» կազմակերպության հիմնումը Մոսկվայում
- բ. ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովը
- գ. Ազգային սահմանադրության վավերացումը սուլթանի կողմից
- դ. ռուս-թուրքական սահմանի անցումը Ս. Կուկունյանի ջոկատի կողմից
- ե. Ջեյթունի շրջապատումը Ազիզ փաշայի զորքերի կողմից
- զ. «Հնչակ» թերթի հիմնադրումը

- |            |            |
|------------|------------|
| 1) 1863 թ. | 5) 1890 թ. |
| 2) 1862 թ. | 6) 1892 թ. |
| 3) 1882 թ. | 7) 1860 թ. |
| 4) 1887 թ. |            |

**8. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

- ա. Կ. Պոլսի Գում Գափու թաղամասում կազմակերպված խաղաղ ցույցը
- բ. Մայիսյան բարենորոգումների ծրագրի կազմումը և ներկայացումը սուլթանին
- գ. Լոնդոնի առաջին համագումարում Հնչակյան կուսակցության պատակտումը
- դ. երիտթուրքերի հեղաշրջումը
- ե. համիդիե հեծելազնդերի ստեղծումը
- զ. ՀՅԴ ծրագրի տպագրումը «Դրոշակ» թերթում

- |            |            |
|------------|------------|
| 1) 1890 թ. | 5) 1891 թ. |
| 2) 1896 թ. | 6) 1895 թ. |
| 3) 1894 թ. | 7) 1908 թ. |
| 4) 1897 թ. |            |

**9. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

- ա. զեյթունցիների և թուրքական կառավարության միջև հաշտության կնքումը Հալեպում
- բ. ազգամիջյան կռիվների սկիզբը Բաքվում
- գ. հնչակյանների կազմակերպած 4-հազարանոց խաղաղ ցույցը Բաբը Ալիի մոտ
- դ. Մ. Խրիմյանի նախաձեռնությամբ Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովի հրավիրումը

ե. Կ. Պոլսի Գում Գափու թաղամասում կազմակերպված խաղաղ ցույցը  
զ. Խանասորի արշավանքը

- |                          |                       |
|--------------------------|-----------------------|
| 1) 1890 թ. հուլիս        | 5) 1906 թ. օգոստոս    |
| 2) 1905 թ. փետրվարի 6    | 6) 1890 թ. սեպտեմբեր  |
| 3) 1895 թ. սեպտեմբերի 18 | 7) 1897 թ. հուլիսի 25 |
| 4) 1896 թ. հունվարի 30   |                       |

**10. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

ա. Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրումը  
բ. Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի երկրորդ համաժողովը Փարիզում  
գ. Ս. Առաքելոց վանքի կռիվները  
դ. Հայկական հարցի վերաբերյալ վեց տերությունների դեսպանների մասնակցությամբ խորհրդաժողովի բացումը Կ.Պոլսում  
ե. Սասունի ապստամբությունը  
զ. երիտթուրքերի հեղաշրջումը

- |                        |                    |
|------------------------|--------------------|
| 1) 1901 թ. նոյեմբեր    | 5) 1908 թ. հուլիս  |
| 2) 1904 թ. ապրիլ-մայիս | 6) 1913 թ. հունիս  |
| 3) 1906 թ. մայիս       | 7) 1914 թ. հունվար |
| 4) 1907 թ. դեկտեմբեր   |                    |

**11. Կատարել համապատասխանեցում.**

**Մականուն**

ա. Մեծն Մուրադ	դ. Ռոստոմ
բ. Փարամազ	ե. Կոմս
գ. Իշխան	զ. Գարուն Աղասի

**Անուն**

1) Մատթեոս Սարգսյան	5) Համբարձում Պոյաճյան
2) Կարապետ Թուր-Սարգսյան	6) Վահան Փափազյան
3) Ստեփան Զորյան	7) Հովսեփ Արղության
4) Ավետիս Նազարբեկյան	

**12. Առաջին աշխարհամարտի տարիներին ձևավորված հայկական կամավորական ջոկատների հրամանատարների անունները համապատասխանեցնել ջոկատներին.**

ա. I ջոկատ	գ. III ջոկատ	ե. V ջոկատ
բ. II ջոկատ	դ. IV ջոկատ	զ. VIII ջոկատ

  

1) Համազասպ	5) Դրո
2) Նիկոլ Աղբալյան	6) Քեռի
3) Վարդան	7) Հովսեփ Արղության
4) Անդրանիկ	

**13. Տարեթվերը համապատասխանեցնել Առաջին համաշխարհային պատերազմի հետ կապված իրադարձություններին.**

- ա. Էրզրումի գրավումը ռուսական զորքերի կողմից
  - բ. Սայքս–Պիկոյի համաձայնագրի նախնական տարբերակի հանձնումը Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովին
  - գ. Վանի ռուսական զորախմբի անսպասելի նահանջը դեպի ռուսական պետության սահմանները
  - դ. Սարիղամիշի ճակատամարտի սկիզբը
  - ե. Օսմանյան կայսրությանը պաշտոնապես պատերազմ հայտարարելը Ռուսաստանի կողմից
  - զ. «Գիշեն» հաճանավի հայտնվելը Մուսա լեռան շրջանում
- |                          |                       |
|--------------------------|-----------------------|
| 1) 1915 թ. մայիսի 7      | 5) 1915 թ. հուլիսի 9  |
| 2) 1914 թ. հոկտեմբերի 21 | 6) 1916 թ. փետրվարի 3 |
| 3) 1914 թ. դեկտեմբերի 9  | 7) 1916 թ. մարտի 9    |
| 4) 1915 թ. սեպտեմբերի 5  |                       |

**14. Քաղաքական գործիչների անունները համապատասխանեցնել զբաղեցրած պաշտոններին.**

- |                |                   |
|----------------|-------------------|
| ա. Գեգեչկորի   | դ. Վ. Խառլամով    |
| բ. Ավերյանով   | ե. Վ. Լենին       |
| գ. Գեորգի Լվով | զ. Վահան Փափազյան |
- 1) Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (ԱՀԿ) նախագահ
  - 2) Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության նախագահ
  - 3) երեք հայկական մարզերի (Էրզրում, Խնուս, Վան) գլխավոր կոմիսար
  - 4) Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ
  - 5) Ռուսաստանի խորհրդային կառավարության ղեկավար
  - 6) Ռուսաստանի արտգործնախարար
  - 7) Արևմտահայերի ազգային խորհրդի նախագահ

**15. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

- ա. Հայաստանի նվաճված մարզերի հայ բնակչությունից չորս գնդերի կազմավորման վերաբերյալ Պրժևալսկու գաղտնի հրամանը
  - բ. զինադադարի համաձայնագրի ստորագրումը Երզնկայում
  - գ. Խորհրդային Ռուսաստանի և Քառյակ միության երկրների միջև հաշտության պայմանագրի ստորագրումը Բրեստ–Լիտովսկում
  - դ. Կովկասյան ճակատում հայկական կորպուսի կազմավորումը
  - ե. թուրքական զորքերի կողմից Սարիղամիշի գրավումը
  - զ. Անդրկովկասյան կոմիսարիատի կազմավորումը
- |                         |                         |
|-------------------------|-------------------------|
| 1) 1917 թ. դեկտեմբերի 5 | 5) 1918 թ. ապրիլի 10    |
| 2) 1917 թ. նոյեմբերի 15 | 6) 1917 թ. նոյեմբերի 16 |
| 3) 1918 թ. մարտի 2      | 7) 1918 թ. մարտի 3      |
| 4) 1917 թ. դեկտեմբերի 7 |                         |

**16. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

- ա. Հայկական կորպուսի կազմավորման մասին ռուսական բանակի գերագույն սպայակոյտի հրամանը
  - բ. Թուրքական զորքերի հարձակումը հայկական ուժերի վրա՝ զինադադարի խախտումը Կովկասյան ճակատում
  - գ. Թ. Նազարբեկյանի հրամանատարությամբ Առանձին հայկական կորպուսի ստեղծումը
  - դ. Անդրկովկասի ժողովրդավարական Դաշնային Հանրապետության հռչակումը
  - ե. Էրզրումի գրավումը թուրքերի կողմից
  - զ. Երզնկայի զինադադարի համաձայնագրի ստորագրումը
- |                         |                     |
|-------------------------|---------------------|
| 1) 1917 թ. նոյեմբերի 16 | 5) 1918 թ. մարտի 1  |
| 2) 1917 թ. դեկտեմբերի 5 | 6) 1918 թ. ապրիլի 1 |
| 3) 1918 թ. հունվարի 28  | 7) 1918 թ. ապրիլի 9 |
| 4) 1918 թ. փետրվարի 27  |                     |

**17. Մասնագիտությունները համապատասխանեցնել գործիչների անուններին.**

- |                            |                    |
|----------------------------|--------------------|
| ա. Անդրեաս Արծրունի        | դ. Միհրան Ղասաբյան |
| բ. Մարի Բրոսե              | ե. Խորեն Սինանյան  |
| գ. Զակունո (Հակոբ) Չամչյան | զ. Լևոն Օրբելի     |
- |                      |                              |
|----------------------|------------------------------|
| 1) ռենտգենաբան       | 5) երկրաբան, բյուրեղաքիմիկոս |
| 2) քիմիկոս           | 6) աստղագետ                  |
| 3) ֆիզիոլոգ          | 7) արևելագետ                 |
| 4) պատմաբան, բանասեր |                              |

**18. Ստեղծագործությունների անվանումները համապատասխանեցնել հեղինակների անուններին.**

- |                     |                         |
|---------------------|-------------------------|
| ա. Անտոն Գարագաշյան | դ. Առաքել Դավրիժեցի     |
| բ. Աբրահամ Երևանցի  | ե. Նիկողայոս Ադոնց      |
| գ. Մաղաքիա Օրմանյան | զ. Եսայի Հասան-Ջալալյան |
- |   |
|---|
| 1) «Պատմութիւն պատերազմաց»                |
| 2) «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» |
| 3) «Հայոց պատմություն»                    |
| 4) «Ազգապատում»                           |
| 5) «Քննական պատմություն հայոց»            |
| 6) «Համառօտ պատմութիւն Աղուանից»          |
| 7) «Գիրք պատմութեանց»                     |

**19. Մասնագիտությունները համապատասխանեցնել գործիչների անուններին.**

- |                          |                       |
|--------------------------|-----------------------|
| ա. Գալուստ Շերմազանյան   | դ. Զաքարիա Քանաքեռցի  |
| բ. Երվանդ Ոսկան          | ե. Հովհաննես Աբելյան  |
| գ. Քրիստափոր Կարա-Մուրզա | զ. Նազարեթ Տաղավարյան |

- 1) բժիշկ, գյուղատնտես
- 2) պատմիչ
- 3) դրամատուրգ
- 4) գեղանկարիչ

- 5) դերասան
- 6) երգահան
- 7) քանդակագործ

**20. Մասնագիտությունները համապատասխանեցնել գործիչների անուններին.**

- ա. Արմեն Տիգրանյան
- բ. Գևորգ Բաշինջաղյան
- գ. Սիրանույշ

- դ. Մանուկ Աբեղյան
- ե. Լեո (Առաքել Բաբախանյան)
- զ. Հրաչյա Աճառյան

- 1) երգահան
- 2) գրականագետ
- 3) պատմաբան
- 4) բնանկարիչ

- 5) բժիշկ
- 6) լեզվաբան
- 7) դերասան

**21. Կրթական հաստատությունները համապատասխանեցնել հիմնադրման վայրերին.**

- ա. Կ. Պոլիս
- բ. Թիֆլիս
- գ. Ախալքալաք

- դ. Ախալցխա
- ե. Աստրախան
- զ. Մոսկվա

- 1) Ներսիսյան դպրոց
- 2) Լազարյան ճեմարան
- 3) Մարդասիրաց ճեմարան
- 4) Կարապետյան դպրոց

- 5) Սկյուտարի դպրոց
- 6) Մեսրոպյան դպրոց
- 7) Աղաբաբյան դպրոց

**22. Կատարել համապատասխանեցում.**

**Իրադարձություն**

- ա. Ընտրվել է 1915 թ. Շատախի կենտրոն Թաղում ստեղծված զինվորական մարմնի ղեկավար:
- բ. Ղեկավարել է 1896 թ. Վանի ինքնապաշտպանական ուժերի միասնական ճակատը:
- գ. Ղեկավարել է Շապին Կարահիսարի ինքնապաշտպանության զինվորական խորհուրդը:
- դ. Նշանակվել է հայ կամավորական VII ջոկատի հրամանատար:
- ե. Ղեկավարել է 1915 թ. Վանի Քաղաքամեջ թաղամասի ինքնապաշտպանության զինվորական մարմինը:
- զ. Ստանձնել է Սասունի 1894 թ. պաշտպանության ընդհանուր ղեկավարությունը:

**Գործիչ**

- |                      |                   |
|----------------------|-------------------|
| 1) Ղուկաս Տեովլեթյան | 5) Հայկակ Կոստյան |
| 2) Հովսեփ Արղության  | 6) Ղազար Շովրոյան |
| 3) Բաղդիկ Սիմոնյան   | 7) Մեծն Մուրադ    |
| 4) Մկրտիչ Ավետիսյան  |                   |

**23. Կատարել համապատասխանեցում.**

**Տարեթիվ**

- ա. 1828 թ.
- բ. 1891 թ.
- գ. 1844 թ.

- դ. 1840 թ.
- ե. 1830 թ.
- զ. 1849 թ.

**Իրադարձություն**

- 1) Վրացա-իմերեթական նահանգի և Կասպիական մարզի ստեղծումը
- 2) Կովկասի փոխարքայության հիմնումը
- 3) Վ. Բեհբուդիի՝ Հայկական մարզի վարչության պետ նշանակվելը
- 4) Երևանի նահանգի հիմնումը
- 5) Անդրկովկասի բաժանումը չորս նահանգի
- 6) Հայկական մարզի ստեղծումը
- 7) «Խարիսխ» զինագործական արհեստանոցի հիմնադրումը Թավրիզում

**24. Կատարել համապատասխանեցում.**

**Տարեթիվ**

- ա. 1729 թ.
- բ. 1724 թ.
- գ. 1728 թ.

- դ. 1812 թ.
- ե. 1736 թ.
- զ. 1828 թ.

**Իրադարձություն**

- 1) Եսայի Հասան-Ջալալյանի մահը
- 2) Ավան և Թարխան հարյուրապետների պատվիրակության մեկնումը ռուսական բանակ
- 3) Նադիրի հռչակվելը պարսից շահ
- 4) Ռուսաստանի և Թուրքիայի միջև Կ. Պոլսի պայմանագրի կնքումը
- 5) Գյուլիստանի հաշտության պայմանագրի կնքումը
- 6) Հայկական մարզի ստեղծումը
- 7) Բուխարեստի հաշտության պայմանագրի կնքումը

**25. Ստեղծագործությունը համապատասխանեցնել հեղինակի անվանը.**

- ա. Անտոն Գարագաշյան
- բ. Ստեփանոս Օրբելյան
- գ. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան

- դ. Սերգեյ Գլինկա
- ե. Նիկողայոս Ադոնց
- զ. Ալեքսանդր Երիցյան

- 1) «Ազգապատում»
- 2) «Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում»
- 3) «Հայ ժողովրդի պատմության տեսություն»
- 4) «Պատմութիւն Հայոց»
- 5) «Քննական պատմություն հայոց»
- 6) «Պատմութիւն նահանգին Սիսական»
- 7) «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում»

**26. Կատարել համապատասխանեցում.**

**Իրադարձություն**

- ա. Սան Ստեֆանոյի պայմանագրի կնքումը
- բ. Խանասորի արշավանքը
- գ. Մուսա լեռան հերոսամարտը
- դ. Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման մասին ցարական օրենքի ընդունումը
- ե. Սայքս–Պիկոյի համաձայնագրի կնքումը
- զ. Արևմտահայերի առաջին համագումարը

**Տարեթիվ**

- 1) 1915 թ. օգոստոսի սկիզբ — սեպտեմբերի 10
- 2) 1895 թ. սեպտեմբերի 18
- 3) 1916 թ. մայիսի 16
- 4) 1917 թ. մայիսի 2–11
- 5) 1897 թ. հուլիսի 25
- 6) 1903 թ. հունիսի 12
- 7) 1878 թ. փետրվարի 19

**27. Կատարել համապատասխանեցում.**

- ա. Սարգիս Պիճակ
- բ. Հարություն Ալամդարյան
- գ. Ղևոնդ Ալիշան
- դ. Հովհան Որոտնեցի
- ե. Ստեփանոս Ներսիսյան
- զ. Երվանդ Ոսկան

- 1) փիլիսոփա
- 2) նկարիչ
- 3) քանդակագործ
- 4) գրող
- 5) դերասան
- 6) մանրանկարիչ
- 7) պատմաբան

**28. Ստեղծագործությունը համապատասխանեցնել հեղինակի անվանը.**

- ա. «Զանգեզուր»
- բ. «Գրիգոր Լուսավորչի տեսիլքը»
- գ. «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում»
- դ. «Թուրթ ընդհանրական»
- ե. «Սալոմե»
- զ. «Համառոտ լուծումն Առաքինութանցն Արիստոտելի»

- 1) Գրիգոր Տաթևացի
- 2) Գևորգ Բաշինջաղյան
- 3) Վարդգես Սուրենյանց
- 4) Գրիգոր Մագիստրոս
- 5) Եղիշե Թադևոսյան
- 6) Նիկողայոս Ադոնց
- 7) Ներսես Շնորհալի

**29. Կատարել համապատասխանեցում.**

**Տարեթիվ**

- ա. 1856 թ.
- բ. 1555 թ.
- գ. 1829 թ.
- դ. 1724 թ.
- ե. 1839 թ.
- զ. 1914 թ.

### **Իրադարձություն**

- 1) Փարիզի ռուս-թուրքական հաշտության պայմանագրի կնքումը
- 2) Ադրիանուպոլսի պայմանագրի կնքումը
- 3) Գյուլիստանի պայմանագրի կնքումը
- 4) Ամասիայի հաշտության պայմանագրի կնքումը
- 5) բարենորոգումների հրովարտակի՝ թանգիմաթի հրապարակումը
- 6) Կ. Պոլսի ռուս-թուրքական պայմանագրի կնքումը
- 7) Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրումը

### **30. Կատարել համապատասխանեցում.**

#### **Իրադարձություն**

- ա. Սարգիս Կուկունյանի գլխավորած հայդուկ-կամավորների արշավանքը
- բ. Սան Ստեֆանոյի պայմանագրի վերանայման վերաբերյալ ռուս-անգլիական համաձայնագրի ստորագրումը Լոնդոնում
- գ. հայերին պաշտպանելու խնդրանքով Գևորգ Ե Ամենայն հայոց կաթողիկոսի դիմումը ռուսական կայսրին
- դ. «Ազգային սահմանադրություն» կանոնադրության վավերացումը սուլթանի կողմից
- ե. Հայկական մարզի ստեղծումը
- զ. Բանվորների խաղաղ ցույցի գնդակոծումը Պետերբուրգում

#### **Տարեթիվ**

- |                         |                          |
|-------------------------|--------------------------|
| 1) 1863 թ. մարտի 17     | 5) 1878 թ. մայիսի 18     |
| 2) 1905 թ. հունվարի 9   | 6) 1890 թ. սեպտեմբերի 22 |
| 3) 1828 թ. մարտի 21     | 7) 1914 թ. հունվարի 26   |
| 4) 1912 թ. հոկտեմբերի 2 |                          |

### **31. Կատարել համապատասխանեցում.**

#### **Գործիչ**

- ա. Հակոբ Զուղայեցի
- բ. Խորեն Նարբեյ
- գ. Մկրտիչ Յաղոբյան
- դ. Սամսոն Տեր-Պողոսյան
- ե. Միքայել Սեբաստացի
- զ. Գրիգոր Մոսեյան

#### **Իրադարձություն**

- 1) Բայազետի հերոսական պաշտպանություն
- 2) Ս. Առաքելոց վանքի կռիվ
- 3) Բեռլինի վեհաժողով
- 4) Զեյթունի ապստամբություն

- 5) բանակցություններ Ռեչ Պոսպոլիտայի թագավոր Յան Սոբեսկու հետ
- 6) Սասունի հերոսամարտ
- 7) 1562 թ. գաղտնի ժողով

**32. Կատարել համապատասխանեցում.**

- |                                |                         |
|--------------------------------|-------------------------|
| ա. Թալեաթի սպանությունը        | 1) 1922 թ. հուլիսի 25   |
| բ. Ջեմալի մահապատիժը           | 2) 1922 թ. ապրիլի 17    |
| գ. Ջեմալ Ազմիի մահապատիժը      | 3) 1919 թ.              |
| դ. Էնվերի սպանությունը         | 4) 1922 թ. օգոստոս      |
| ե. «Նեմեսիս» ծրագրի ընդունումը | 5) 1921 թ. մարտի 15     |
| զ. Սայիդ Հալիմի սպանությունը   | 6) 1920 թ.              |
|                                | 7) 1921 թ. դեկտեմբերի 6 |

**33. Կատարել համապատասխանեցում.**

- |   |                      |
|---|----------------------|
| ա. Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության ստեղծումը                 | 1) 1909 թ. սկզբներ   |
| բ. Հայոց ազգային բյուրոյի ձևավորումը                                  | 2) 1907 թ. դեկտեմբեր |
| գ. Երիտթուրքական հեղաշրջումը  | 3) 1908 թ. հուլիս    |
| դ. Արտասահմանից 5000 հայերի վերադարձը Տարոն                           | 4) 1909 թ. ապրիլ     |
| ե. Ադանայում հայերի կոտորածը  | 5) 1912 թ. հոկտեմբեր |
| զ. Փարիզում Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի երկրորդ համաժողովը | 6) 1908 թ. հոկտեմբեր |
|   | 7) 1907 թ. մայիսի 2  |

## 8. ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԻ, ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ

### 8-1. Պատմական փաստարկների, պնդումների համադրում և խմբավորում

#### 1. 1683 թ. Փարիզ մեկնած հայկական պատվիրակության կազմում ընդգրկված էին.

- |                       |                         |
|-----------------------|-------------------------|
| 1) Ոսկան Երևանցին     | 4) Աբգար Թոխաթեցին      |
| 2) Հակոբ Զուղայեցին   | 5) Հովհաննես Թութունջին |
| 3) մահտեսի Շահնուրատը | 6) Խաչատուր Կեսարացին   |

#### 2. Ստորև բերված փաստարկներից որոնք են սխալ.

- 1) 1877 թ. ապրիլի 12-ին Ռուսաստանը պատերազմ սկսեց օսմանյան Թուրքիայի դեմ:
- 2) 1878 թ. սկզբին ռուսները մտան Սոֆիա, ապա՝ Պլովդիվ և հասան Բելգրադի մատույցները:
- 3) Կովկասյան ճակատում՝ Ալեքսանդրապոլ-Կարս ուղղությամբ, հիմնական հարվածող ուժը հայազգի զեներալ Միխայիլ Լոռիս-Մելիքովի (Լոռու-Մելիքյան) հրամանատարությամբ գործող 70-հազարանոց Կովկասյան կորպուսն էր:
- 4) Երևանյան ջրկատը 1877 թ. ապրիլի 30-ին գրավում է Բայազետը, ապա՝ նաև Դիադինն ու Ալաշկերտը:
- 5) 1890 թ. հունիսին Թիֆլիսում հույժ գաղտնի պայմաններում սկսվեց ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովը՝ համագումարը:
- 6) 1894 թ. «Դրոշակում» տպագրվեց ՀՅԴ ծրագիրը:
- 7) Արաբոն (Առաքել Մխիթարյանը) ծնվել է 1863 թ. Սասունի Կոռթեր գյուղում:

#### 3. Ստորև տրվածներից ընտրել ճիշտ պնդումները.

- ա. Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Թուրքիան տիրեց Արևմտյան Հայաստանին:
- բ. 1878 թ. Բեռլինի պայմանագրով Բայազետը և Ալաշկերտը վերադարձվեցին Օսմանյան կայսրությանը:
- գ. Բուխարեստի պայմանագրով Ռուսաստանին անցան Ախալքալաքը և Ախալցխան:
- դ. 1896 թ. Հալեպի համաձայնագրով Ջեթրոնում պետք է նշանակվեր ազգությամբ հայ կառավարիչ:
- ե. Մայիսյան բարենորոգումների ծրագրի համաձայն՝ հայկական նահանգներում նահանգապետները և գավառապետները նշանակվելու էին սուլթանի կողմից:
- զ. Ռուստոմի գլխավորությամբ Թիֆլիսում ստեղծված «Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտեի» նպատակը Անդրկովկաս արշաված թուրքական զորքին դիմակայելն էր:
- է. Նապոլեոն I կայսեր անունից Ֆրանսիայի հյուպատոսը Թուրքիայից պահանջեց դադարեցնել Ջեթրոնի պաշարումը:

- |            |            |            |            |
|------------|------------|------------|------------|
| 1) ա, բ, ե | 2) բ, գ, ե | 3) դ, գ, է | 4) ա, գ, է |
|------------|------------|------------|------------|

**4. Հայ-թաթարական (ադրբեջանական) ընդհարումների ժամանակ Երևանի նահանգում, Թիֆլիսում և Ղարաբաղում ինքնապաշտպանական կռիվները ղեկավարել են՝**

- 1) Համազասպը, Դրոն, Քեռին
- 2) Անդրանիկը, Գևորգ Չավուշը, Արմեն Գարոն
- 3) Թորգոմը, Սմբատը, Անդրանիկը
- 4) Նիկոլ Դումանը, Արմեն Գարոն, Վարդանը

**5. Տրված փաստարկներից որոնք են ճիշտ.**

- 1) Արցախի ազատագրական ուժերը 1722 թ. Գանձակի մահմեդականների հետ կնքել էին թուրքական բանակի դեմ համատեղ պայքարի պայմանագիր:
- 2) Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումից հետո ստեղծվել է Հայկական մարզը:
- 3) Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով Բարձր դուռը պարտավորվել է Արևմտյան Հայաստանում անհապաղ բարեփոխումներ անցկացնել և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից:
- 4) Բեռլինի վեհաժողովի նախօրյակին՝ մայիսի 25-ին կնքված համաձայնագրով Ֆրանսիան Թուրքիայից ստացել է Կիպրոս կղզին՝ փոխարենը խոստանալով պաշտպանել թուրքական պահանջները:
- 5) 1878 թ. հունիսի 1-ին Բեռլինում սկսված վեհաժողովն ընթացել է Մեծ Բրիտանիայի մշակած սցենարով:
- 6) Ըստ 1878 թ. Բեռլինի հաշտության պայմանագրի՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև կատարվել է գրավված տարածքների փոխանակում:
- 7) 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրով Արևմտյան Հայաստանում ստեղծվել է միացյալ ինքնավար հայկական տարածք:

**6. Ընտրել ճիշտ փաստարկները.**

- ա. 1826 թ. սեպտեմբերի 3-ին հայազգի գեներալ Վալերիան Մադաթովի 2000-անոց զորագունդը ջախջախեց պարսիկների 10 000-անոց բանակը:
- բ. 1828 թ. հունիսի 24-ին Ի. Պասկևիչի գլխավորած ռուսական հիմնական ուժերը գրավեցին Հասան կալան:
- գ. 1918 թ. մարտի 11-ից ապրիլի 11-ը Տրապիզոնում Անդրկովկասյան Սեյմի և Թուրքիայի միջև ընթացել են բանակցություններ:
- դ. 1918 թ. ապրիլի 6-8-ը Ալեքսանդրապոլում տեղի է ունեցել հայ ազգային-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցություն:
- ե. 1918 թ. մայիսի 11-ից հուլիսի 4-ը Անդրկովկասի իշխանությունները Բաթումում հաշտության բանակցություններ են վարել թուրքերի հետ:
- զ. 1918 թ. մայիսի 16-27-ը Բաշ Ապարանում հայկական ուժերը հաղթական կռիվներ են մղել թուրքերի դեմ:
- է. 1894 թ. «Դրոշակում» տպագրվել է ՀՅԴ ծրագիրը:
- ը. Գալուստ Շերմազանյանը թատերական շենքի վերածած իր երկհարկանի տանը 1827 թ. բեմադրել է հայ և օտար դրամատուրգների պիեսներ:

1) բ, դ, ը

2) բ, գ, է

3) ա, ե, գ

4) ա, դ, է

## **7. Ընտրել ճիշտ պնդումները.**

- 1) Սղնախների շնորհիվ Արցախում ստեղծվել էին կիսանկախ հայկական թագավորություններ:
- 2) 1724 թ. Կարբի գյուղի բնակիչները 4 ամիս դիմադրություն են ցույց տվել թուրքական բանակին:
- 3) 1724 թ. Երևանի պաշտպանությունը շարունակվել է ավելի քան երեք ամիս:
- 4) Գանձասարի հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցին խոչընդոտել է Սյունիքի հայերի պայքարը:
- 5) 1724 թ. Արցախի ազատագրական ուժերը թուրքական բանակի դեմ համատեղ պայքարի պայմանագիր են կնքել Գանձակի մահմեդականների հետ:
- 6) Դավիթ բեկի մահից հետո Կասպանի զինվորական հրամանատարությունը ամբողջությամբ անցել է տեր Ավետիսի ձեռքը:
- 7) Պարսկական շահը ճանաչել է Դավիթ բեկի իշխանությունը, իրավունք է վերապահել դրամ հատելու և նրա հետ դաշինք է կնքել:

## **8. Արևմտահայության զանգվածային վերաբնակեցմանը վերաբերող ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Ադրիանուպոլսի պայմանագրով թուրքերին վերադարձվող տարածքների հայությունը հայտնվեց մահմեդականների վրեժխնդրության վտանգի առջև:
- 2) 1830 թ. մայիսին սկսվեց զանգվածային վերաբնակեցումը:
- 3) Կարսեցիները հաստատվեցին Գյումրիում, Շիրակի դաշտում և Թալինի շրջակայքում, բայազետցիներն ու ալաշկերտցիները՝ Սևանա լճի ավազանում, մասամբ նաև Սուրմալուում, Դարաչիչակում, Ապարանում և Փամբակում:
- 4) Վերաբնակիչների թիվը մեծ էր՝ մոտ 45 000 մարդ:
- 5) Արևմտահայերի զանգվածային վերաբնակեցման հետևաքնները աղետալի էին. Վան և Բայազետ քաղաքները զրկվեցին մեծ թվով հայ առևտրականներից ու արհեստավորներից:
- 6) Ռուսաստանին անցած Ալեքսանդրապոլի և Ալաշկերտի կիսավեր դարձած գավառների համար վերաբնակեցումը ունեցավ կարևոր նշանակությունը. աճեց հայ բնակչության տեսակարար կշիռը:
- 7) Ախալցխայի գավառում էրզրումահայերը վերաշինում են շուրջ 50 գյուղ:

## **9. Տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

- 1) 1894–1896 թթ. մեծ տերությունները և այդ երկրների հայասեր հասարակական շրջանակները քայլեր կատարեցին հայկական ջարդերը կանխելու, բարենորոգումների ծրագիրը գործողության մեջ դնելու, հայ գաղթականությանը օգնելու ուղղությամբ:
- 2) Ռամկավարները գործում էին գլխավորապես Վան–Վասպուրականում, որտեղ գրեթե բոլոր հնչակյաններն անդամագրվեցին այդ կուսակցությանը:
- 3) 1908–1914 թթ. ՀՅԴ գործունեությունը կարելի է բաժանել երկու փուլի՝ 1908–1911 թթ. և 1912–1914 թթ.:

- 4) 1912–1914 թթ. ՀՅԴ–ն համագործակցեց երիտթուրքերի և թուրքական կառավարության հետ:
- 5) Երիտթուրքական հեղաշրջումից հետո Հնչակյան կուսակցության ղեկավարները վերադարձան Կ. Պոլիս:

#### **10. Տրված պնդումներից որոնք են սխալ.**

- 1) XX դ. սկզբներին, երբ իրականացվում էր հայերի վերացման թուրքական պետական ծրագիրը, միջազգային իրավունքի մեջ դեռևս ձևակերպված չէր «ցեղասպանություն» հասկացությունը:
- 2) «Ցեղասպանության հանցագործությունը հրահրելու և պատժելու մասին» կոնվենցիայի հիմքում ընկած է իտալացի իրավաբան Ռաֆայել Լեմկինի առաջարկած նախագիծը:
- 3) Ըստ ցեղասպանության կոնվենցիայի երկրորդ հոդվածի՝ ցեղասպանություն են համարվում որևէ ազգային, ռասայական, էթնիկական կամ կրոնական խմբի լիակատար կամ մասնակի ոչնչացմանն ուղղված հինգ գործողություններ:
- 4) Մեծ Բրիտանիայի նախագահ Դեյվիդ Լլոյդ Ջորջը ասում էր, որ հաշտության պայմանագրով հայկական հողերը պետք է վերջնականորեն ազատագրվեն թուրքերից:
- 5) 1919 թ. հուլիսի 5–ի դատավճռով Թալեաթը, Էնվերը, Ջեմալ Ազմին և Սայիդ Հալիմը հեռակա դատապարտվեցին մահվան:
- 6) Նազըմը կախաղան բարձրացվեց 1926 թ. հանրապետական Թուրքիայի նախագահ Ջեմալի դեմ կազմակերպված դավադրությանը մասնակցելու համար:
- 7) Երիտթուրքական հեղաշրջումից հետո հնչակյանները հայտարարեցին, որ հրաժարվում են կայսրությունից Հայաստանի անջատման պահանջից, քանի որ տապալվել է բռնապետական վարչակարգը և երկրում հաստատվել են սահմանադրական կարգեր:

#### **11. Տրված պնդումներից որոնք են սխալ.**

- 1) Առաջին աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո Անտանտի երկրները, հաշվի առնելով համաշխարհային առաջադեմ հանրության կարծիքը և հետամուտ լինելով 1915 թ. մայիսի 11–ի հայտարարությամբ նշված պատասխանատվության հարցում, երիտթուրքերին փոխարինած թուրքական նոր կառավարությունից պահանջեցին բացել դատական գործեր:
- 2) 1919 թ. ՀՅԴ կողմից խիստ գաղտնի պայմաններում կյանքի կոչվեց «Նեմեսիս» ծրագիրը:
- 3) 1922 թ. ապրիլի 17–ին Բեռլինում Արամ Երկանյանը և Արշավիր Շիրակյանը իրականացրեցին Բեհաէդդին Շաքիրի և Ջեմալ Ազմիի մահապատիժը:
- 4) 1919 թ. հուլիսին հիմնվեցին ռազմական ատյաններ, որոնք դատական հետաքննության ենթարկեցին երիտթուրքերի կառավարության ղեկավարներին, «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներին, հատուկ կազմակերպության ղեկավարներին:
- 5) «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի հիմքում Յոհաննես Լեփսիուսի առաջարկած նախագիծն էր:

## 8-II. Պնդումների փունջ

### 1. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Ռուսաստանի ժամանակավոր կառավարության առաջին նախագահ է նշանակվել Միլյուկովը:
- 2) Արևմտահայ ազգային խորհրդի նախագահ է ընտրվել Վ. Փափազյանը:
- 3) Անդրկովկասյան հատուկ կոմիտեի նախագահն էր Մ. Պապաջանյանը:
- 4) Հայոց ազգային խորհրդի նախագահն էր Ա. Ահարոնյանը:
- 5) Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ է ընտրվել Վ. Խառլամովը:
- 6) ԱԺԴՀ-ի կառավարության նախագահ է նշանակվել Գեգեչկորին:

### 2. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Արցախում կազմակերպված սղնախներից առավել հայտնի էին Ավետարանցի, Գյուլիստանի, Տաթևի, Շոշի և Քարազլխի սղնախները:
- 2) Նադիր շահի օրոք իրենց տիրապետությունը պահպանել են նաև Սյունիքի և Ղարաղաղի հայկական մելիքությունները:
- 3) Հայաստանի ազատագրության Հյուսիսային ծրագրով առաջարկվում էր Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքել առևտրական պայմանագիր և Սև ծովի ափին Հայաստանին տրամադրել նավահանգիստ:
- 4) Բուխարեստի հաշտության պայմանագիրը կնքվել է հայազգի մեծահարուստ Մանուկ բեյ Միրզայանի միջնորդությամբ:
- 5) Ներսես Աշտարակեցու և Խաչատուր Աբովյանի ջանքերով 1826 թ. ստեղծվեցին հայկական կամավորական ջոկատներ:
- 6) Ցարական արքունիքը Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո Հայ եկեղեցու միջոցով իր ազդեցությունն էր պահպանում նաև արևմտահայության և գաղութահայության վրա:

### 3. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) «Բարենպատակ ընկերություն» և «Հայրենիքի սիրո գրասենյակ» գաղտնի խմբակները ցարական իշխանությունների կողմից բացահայտվել են նույն թվականին:
- 2) «Սև խաչ» կազմակերպությանն աջակցում էր Վանի ռուսական փոխիյուպատոս, հայազգի Կոստանդին Կամսարականը:
- 3) Ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմի ժամանակ զեյթունցիները կրկին ապստամբել էին և օգնություն խնդրել գեներալ Հ. Լազարևից:
- 4) Իշխան Պապիկ Նորաշխարհյանի ղեկավարությամբ զեյթունցիները թուրքերի դեմ կռվեցին մինչև 1878 թ. վերջը, իսկ Մալաթիայի փաշան շուտով ստիպված էր Պապիկ իշխանին ճանաչել Ջեյթունի քաղաքագլուխ:
- 5) «Միություն ի փրկություն» գաղտնի խմբակը, որ նպատակ էր դրել ոչ միայն ազատագրելու Արևմտահայաստանը, այլև հասնելու ազգի երկու հատվածների միավորմանը, գործել է մոտ մեկ տարի:
- 6) Կարինում 1883 թ. ապրիլին տեղի է ունեցել «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության անդամների դատավարությունը, որն առաջին քաղաքական դատավարությունն էր Օսմանյան կայսրությունում:

#### **4. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայոց եկեղեցու սեփականության իրավունքները ցարական Ռուսաստանի կողմից հաստատվել էին դեռ 1836 թ., և այդ ունեցվածքից ստացվող եկամուտների հաշվին էլ պահվում էին հայկական դպրոցները:
- 2) Կովկասի փոխարքա Գ. Գոլիցինն էր կազմել Հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման ծրագիրը:
- 3) Գոլիցինի կազմած ծրագիրը հաստատվեց Նիկոլայ I ցարի կողմից և օրենքի ուժ ստացավ:
- 4) Այդ հակահայ օրենքի կիրառման դեմ ուղղված հայ ժողովրդի դիմադրությունը կազմակերպելու համար Թիֆլիսում ստեղծվեց «Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե»:
- 5) Ամենայն հայոց կաթողիկոս Մաղաքիա Օրմանյանը կազմակերպեց հայ հոգևորականության պայքարը ցարական այդ օրենքի գործադրման դեմ:
- 6) Հայության պայքարը պասկվեց հաջողությամբ, և ընդունումից 2 տարի անց Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման հակահայ օրենքը չեղյալ հայտարարվեց:

#### **5. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Ռուսաստանի առաջադիմական ուժերի գերնպատակը ժողովրդավարական առաջին հեղափոխության ժամանակ ժամանակավոր կառավարության տապալումն էր և սոցիալիզմի հաստատումը:
- 2) Առաջին հեղափոխության ուժերը մասնատելու նպատակով ցարական վարչակարգը ազգամիջյան բախումներ հրահրեց բազմազգ կայսրության տարածքում:
- 3) Հայ-թաթարական ընդհարումները սկիզբ են առել Երևանում:
- 4) Արյունալի հայ-թաթարական ընդհարումները շարունակվեցին մինչև 1906 թ. սեպտեմբեր:
- 5) Հայ բնակչության ինքնապաշտպանության ղեկավարումը հայ-թաթարական բախումների ժամանակ իր ձեռքը վերցրեց ՀՅԴ-ն:
- 6) Կովկասի առավել հայատյաց պաշտոնյաների նկատմամբ դաշնակցությունը մահապատժի վճիռ կայացրեց. Դրոն Բաքվում սպանեց Մ. Նակաշիձեին:

#### **6. Գտնել ճիշտ և սխալ պնդումները:**

*Մովսես Սարաֆյանի կազմած Հայաստանի ազատագրության ծրագրի համաձայն՝*

- 1) Թուրքիայի դեմ արշավանքը պետք է կատարվեր Երևան — Ախալցխա — Կարս և Թիֆլիս — Բայազետ — Վան ուղղություններով:
- 2) Ռուսաստանում բնակվող հայերից ու վրացիներից կազմված կամավորական ջոկատները, որոնց հրամանատարը պետք է լիներ հայագի և ենթարկվեր ռուսական բանակի հրամանատարությանը, ռուսական զորքերի հետ ուղարկվելու էին Վրաստան:
- 3) Հերակլ II-ը պետք է Վրաստանում կատարեր երկիրը հզորացնող բարեփոխումներ, որպեսզի օգնություն ցուցաբերեր հայ ժողովրդի ազատագրական պայքարին:
- 4) Հերակլ II-ը պետք է օժանդակեր ռուսական զորքին՝ գրավելու Երևանը՝ հայ, վրացի և ռուս զինվորներ ուղարկելով և գահընկեց անելով իրենից կախման մեջ գտնվող Երևանի խանին:

- 5) Հակաթուրքական պայքարի մեջ պետք է ընդգրկվեին նաև Ղարադաղի մելիքները՝ նրանց տրամադրելով զենք և ռազմական հանդերձանք:
- 6) Հայաստանն ազատագրելուց հետո ստեղծվելիք հայկական պետության թագավոր պետք է դառնար Սյունիքի մելիքներից մեկը:

#### **7. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Կովկասի փոխարքա Գ. Գուլիցինն էր կազմել Հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման ծրագիրը:
- 2) Հայոց եկեղեցու սեփականության իրավունքները ցարական Ռուսաստանի կողմից հաստատվել էին դեռ 1846 թ., և այդ ունեցվածքից ստացվող եկամուտների հաշվին էլ պահվում էին հայկական դպրոցները:
- 3) Հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման մասին օրենքը հաստատվել էր Նիկոլայ II ցարի կողմից:
- 4) Հայության պայքարը պսակվեց հաջողությամբ, և ընդունումից 3 տարի անց Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման հակահայ օրենքը չեղյալ հայտարարվեց:
- 5) Հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման դեմ ուղղված հայ ժողովրդի դիմադրությունը կազմակերպելու համար Նիկոլ Դումանի գլխավորությամբ Բաքվում ստեղծվեց «Ինքնապաշտանության կենտրոնական կոմիտե»:
- 6) Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանն էլ կազմակերպեց հայ հոգևորականության պայքարը Հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման օրենքի գործադրման դեմ:

#### **8. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Ֆլորենցիայում դուքսը Օրուն խոստացավ զորք տրամադրել՝ Հայաստանն ազատագրելու նպատակով:
- 2) Վիեննայի արքունիքը Օրուն համաձայնություն չտվեց օգնելու Հայաստանի ազատագրման գործում:
- 3) XVIII դարի սկզբին Ռուսաստանը պայքար էր մղում Բալթիկ, Սև և Միջերկրական ծովերի ափերին հաստատվելու համար:
- 4) Նադիր շահի օրոք իրենց տիրապետությունները պահպանել էին նաև Սյունիքի և Ղարադաղի հայկական մելիքությունները:
- 5) Խամսայի մելիքությունների կառավարիչ Դիզակի մելիք Եգանը ստացել էր նաև խանի տիտղոս:
- 6) Մելիքջան Մելիք-Շահնագարյանցը անկախ է ճանաչվել Երևանի խանից և նշանակվել Արարատյան երկրի քալանթար:

#### **9. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայ երիտասարդության համար XIX դ. երկրորդ կեսին առաջնային էր շարունակում մնալ կենսական համարվող սոցիալիստական (ընկերվարական) գաղափարախոսությունը, որի գլխավոր բովանդակությունը արդար և իրավահավասար հասարակության ստեղծումն էր:
- 2) Ն. Ռուսինյանի առաջարկությամբ արևմտահայ համայնքի կյանքին վերաբերող կանոնադրությունը կոչվեց Ազգային սահմանադրություն:

- 3) Ազգային սահմանադրության համաձայն՝ ստեղծվում էր հայության կյանքը կազմակերպող մարմին՝ «Հայոց տուն», որը պետք է կազմվեր ժողովրդի կողմից ընտրված փոխանորդներից:
- 4) Քանի որ մայրաքաղաք Կ. Պոլսի հայությանը հսկողության տակ պահելն ավելի հեշտ էր, օսմանյան իշխանությունները հոգ էին տարել, որ Ազգային ժողովի փոխանորդների մեջ մեծ թիվ կազմեն գավառահայերը:
- 5) ՀՅԴ-ն, հաշվի առնելով, որ հայ ժողովուրդն իր հայրենիքում գտնվում է տարբեր երկրների տիրապետության տակ, ինչպես նաև սփռված է աշխարհով մեկ, կուսակցության կազմակերպական ձև ընտրեց ապակենտրոն սկզբունքը:
- 6) ՀՅԴ ծրագրի «Նպատակ» բաժնում ասվում էր, որ ապստամբության ճանապարհով անհրաժեշտ է հասնել Արևմտյան Հայաստանի ազատությանը, որով այդ փուլում հասկացվում էր հայկական նահանգների անկախության հաստատումը:

#### **10. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Առաջին հայ պարբերականը «Ազդարարն» է, որ հրատարակվել է Կալկաթայում:
- 2) «Որոգայթ փառաց»-ը հայ առաջին հրապարակախոսական տպագիր աշխատությունն է, որը կոչ էր անում հայ երիտասարդությանը՝ ապստամբելու հանուն հայրենիքի ազատագրման:
- 3) Հայ առաջին քաղաքական լրագիրը «Ազատության ավետաբերն» է, որը տպագրվել է «Հայրենասերների միություն» խմբակի կողմից:
- 4) Հայ-թաթարական բախումներն առաջինը սկսվեցին Բաքվում՝ նահանգապետ Նակաշիձեի հրահրմամբ:
- 5) Առաջինը ստեղծվել է Արևելահայերի ազգային խորհուրդը, հետո՝ Արևմտահայերի ազգային խորհուրդը:
- 6) Հայ առաջին երգահան Տիգրան Չուխաճյանը ստեղծել է ազգային առաջին օպերան՝ «Անուշը»:

#### **11. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Աբդուլ Համիդ II-ը Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի պահանջները կատարելով էր փորձում լուծել Հայկական հարցը:
- 2) Ֆիդայական շարժման հանդես գալն Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի քաղաքական և տնտեսական ծանր ու օրհասական վիճակի հետևանք էր, այսինքն՝ ուներ իրական պատճառներ:
- 3) Առաջին հայդուկները հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից նոր բռնությունների առիթ չտալու նպատակով հաճախ ներկայացել են որպես քրդեր և հանդես եկել «չեյլոներ» կոչվող քրդական հակակառավարական ջոկատների կազմում:
- 4) Արաբոն սկզբում հանդես է եկել իբրև անհատ վրիժառու և 1880 թվականից, «որպես քուրդ», զինված հարձակումներ գործել թուրքական հարկահավաքների վրա:
- 5) Անդրանիկն է հեղինակել հայդուկային պայքարի իսկական դասագիրք հանդիսացող «Մարտական հրահանգներ» հայտնի կանոնագիրքը:
- 6) Հայդուկապետերի մեծ մասը 1890-ական թթ. վերջերին հնչակյան էր, իսկ միավորված ջոկատները գլխավորապես գործում էին Հնչակյան կուսակցության հովանու ներքո:

**12. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Գլխավոր պատճառը, որ երիտթուրքերին դրդեց մասնակցելու Առաջին համաշխարհային պատերազմին, Ռուսաստանի հետ դարավոր հակամարտությունն էր:
- 2) Մտնելով համաշխարհային կռվի հորձանուտը՝ Ռուսաստանը նպատակ ուներ տեր դառնալու սևծովյան նեղուցներին և Կ. Պոլսին, նվաճելու Արևմտյան Հայաստանը և Կիլիկիան, ազատորեն դուրս գալու Պարսից ծոց:
- 3) Ժամանակավոր կառավարությունը Հայկական հարցի լուծումը տեսնում էր անկախ Հայաստանի ստեղծման մեջ:
- 4) Վանի, Էրզրումի և Խնուսի մարզերում ձևավորվել էին Արևմտահայ ազգային խորհրդի տեղական կազմակերպություններ, որոնք մեծ գործ արեցին Հայրենիքի վերականգնման ուղղությամբ:
- 5) Քաղաքական-իրավական տեսանկյունից Հայոց ցեղասպանության ճանաչման և դրա համար պատժելու առաջին լուրջ քայլը կատարել է թուրքական կառավարությունը 1919 թվականին:
- 6) Անդրկովկասի գրեթե բոլոր քաղաքական ուժերը ողջունեցին բոլշևիկյան հեղաշրջումը և պատրաստակամություն հայտնեցին՝ համագործակցելու խորհրդային իշխանության հետ:

**13. Առաջին աշխարհամարտի տարիներին ծավալված հայ կամավորական շարժմանը վերաբերող ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Շարժման կազմակերպչական աշխատանքները գլխավորեց Հայոց ազգային բյուրոն, որը ստեղծեց գործադիր (կարգադրիչ) մարմին՝ Հ. Զավյանի գլխավորությամբ:
- 2) Հայոց ազգային բյուրոյի առաջադրած քաղաքական մերձավորագույն նպատակը հանգում էր Արևմտյան Հայաստանի ինքնավարության պահանջին:
- 3) Կովկասյան ճակատում պատերազմի առաջին վեց ամսվա ընթացքում ձևավորվել էր հայկական կամավորական վեց ջոկատ:
- 4) Երրորդ ջոկատի հրամանատարն էր Անդրանիկը:
- 5) Իգդիրում ձևավորված երկրորդ ջոկատի հրամանատարն էր Դրոն:
- 6) Կովկասյան ճակատում երկու տարի մարտնչած կամավորական ութ ջոկատները վերակազմակերպվեցին հայկական կանոնավոր վեց գումարտակների:

**14. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Երիտթուրքերը հայերի բնաջնջման ծրագիրն իրագործելիս նախ և առաջ որոշեցին վերացնել թուրքական բանակ զորակոչված հայերին:
- 2) Բիթլիսի նահանգում Մեծ եղեռնի շրջանում տեղի ունեցած ինքնապաշտպանական կռիվներն ավարտվեցին հայերի փայլուն հաղթանակով, ստեղծվել էր նաև ազգային տեղական իշխանություն:
- 3) Մեծ եղեռնի ժամանակ արևմտահայերի կեսից ավելին զոհվեց:
- 4) Անգլիական կողմի նախաձեռնությամբ Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը և ԱՄՆ-ն հայերի սկսված կոտորածների կապակցությամբ 1915 թ. գարնանը հանդես եկան բողոքի հայտարարությամբ:

- 5) Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում 1917 թ. գարնան դրությամբ կռվում էր ռուսական հինգ բանակային կորպուս:
- 6) Թիֆլիսում տեղի ունեցած Հայոց ազգային համախորհրդակցության որոշման համաձայն՝ ստեղծվեց 35 անդամներից կազմված Ազգային ժողով:

**15. Հայ ժողովրդի Մայիսյան հերոսամարտերին վերաբերող ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատի բովանդակությունը 1918 թ. մայիսից ռուս-թուրքականից փաստացի վերածել էր թուրք-անդրկովկասյան ռազմական բախման:
- 2) Մայիսյան երեք գլխավոր ճակատամարտերում՝ Սարդարապատ, Բաշ Ապարան, Ղարաքիլիսա, հայկական զորքերը փայլուն հաղթանակ տարան:
- 3) Այդ հերոսամարտերի օրերին և դրանց շնորհիվ ծնվեց Հայաստանի Հանրապետությունը, որը հետագայում իրավական ճանաչում ստացավ Անտանտի երկրների կողմից:
- 4) Նորահռչակ հայկական պետությունը դարձավ Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից:
- 5) Մայիսյան հերոսամարտերից հետո հայ ժողովուրդը հետ ստացավ թուրքերի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի տարածքները:
- 6) Հայ ժողովրդի մայիսյան հաղթանակները վիժեցրին հայերին իսպառ ոչնչացնելու՝ քեմալականների կառավարության քաղաքականությունը:

**16. Մեծ եղեռնին վերաբերող ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Արևմտահայերի ոչնչացման ծրագիրը պետականորեն մշակվել և նախապատրաստվել էր երիտթուրքերի կողմից՝ Առաջին աշխարհամարտի մեջ Թուրքիայի պաշտոնապես մտնելուց առաջ:
- 2) Թալեաթի անմիջական ղեկավարությամբ ստեղծվել էր «Թեշքիլաթը մահսուսե» կազմակերպությունը:
- 3) Կայսերական Գերմանիան և Ավստրո-Հունգարիան գործնական լուրջ քայլերի դիմեցին՝ կանխելու կամ արգելակելու իրենց դաշնակից օսմանյան Թուրքիայի կողմից իրագործվող Հայոց ցեղասպանությունը:
- 4) 1915 թ. ապրիլի 15-ին Թալեաթի, Էնվերի և Ջեմալի ստորագրությամբ հրաման ուղարկվեց կայսրության նահանգային իշխանություններին, որով հրահանգվում էր խստորեն գործադրել հայերի ոչնչացման ծրագիրը:
- 5) Մեծ եղեռնի ծանրագույն հետևանքը մեր հայրենիքի մեծագույն մասի՝ Արևմտյան Հայաստանի հայաթափումն էր, հայերի հայրենազրկումը:
- 6) Հայ ժողովրդի նյութական կորուստը կազմել է 15 միլիարդ ֆրանկ ոսկի:

**17. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայոց ազգային խորհրդի նստավայրը Թիֆլիսն էր:
- 2) Նորաստեղծ Անդրկովկասյան կոմիսարիատի 12 կոմիսարներից երեքը հայեր էին՝ Խ. Կարճիկյան, Հ. Քաջազնունի, Գ. Տեր-Ղազարյան:

- 3) Անդրկովկասյան կոմիսարիատի աշխատանքներին մասնակցել է նաև Հ. Օհանջանյանը:
- 4) Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Ա. Չխենկելու գաղտնի հրամանի համաձայն՝ 1917 թ. վերջին սկսվել էր գրավված մարզերի հայ բնակչությունից չորս գնդերի կազմավորումը:
- 5) Կովկասյան ճակատում գտնվող ռուսական զորքը 1918 թ. փետրվարի 10-ին վերսկսել է ռազմական գործողությունները թուրքական զորքերի դեմ:
- 6) Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի 4-րդ հոդվածի և ռուս-թուրքական լրացուցիչ պայմանագրի համաձայն՝ օսմանյան Թուրքիային են անցել Արևմտյան Հայաստանի ազատագրված մարզերը:

**18. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Փետրվարյան հեղափոխությունից հետո ռուսական նոր իշխանությունը չփոխեց վերաբերմունքն Արևմտյան Հայաստանի ու հայերի նկատմամբ և հայկական մարզերում շարունակեց ռուսական նախկին քաղաքականությունը:
- 2) Հայկական կորպուսի ձևավորումը Կովկասյան ճակատում սկսվել է Պետրոգրադում հաջողությամբ իրականացված բոլշևիկյան հեղաշրջումից հետո:
- 3) Երզնկայի զինադադարից հետո ռուսական զորքերի հետքաշումը ճակատային դիրքերից շատ արագ վերաճել է Կովկասյան ճակատի տարերային փլուզման և զորքերի անկազմակերպ նահանջի:
- 4) Տրոցկին հրաժարվեց հաշտության պայմանագիրը ստորագրելուց, որից օգտվելով՝ Գերմանիան հարձակման անցավ Մոսկվայի ուղղությամբ:
- 5) Առաջին աշխարհամարտի բովանդակությունը Կովկասյան ճակատում 1918 թ. հունվարին ռուս-թուրքականից վերաճել է թուրք-հայկական պատերազմի:
- 6) Կովկասյան ճակատում թուրքական բանակը 1918 թ. առաջին խոշոր պարտությունը կրել է Սարդարապատում:

**19. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Արևմտահայ ազգային խորհրդի պատվավոր նախագահ էր ընտրվել Վահան Փափագյանը՝ Կոմսը:
- 2) Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ էր ընտրվել Վ. Խառամովը:
- 3) «Թուրքահայաստան» առանձին վարչական միավորը դրվել էր Ժամանակավոր կառավարության անմիջական ենթակայության տակ:
- 4) «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի հիմքում ընկած էր գերմանացի արևելագետ Յոհաննես Լեփսիուսի նախագիծը:
- 5) Տրապիզոնի թուրք-անդրկովկասյան բանակցություններն ավարտվել են երկամսյա զինադադարի կնքմամբ:
- 6) Կովկասյան ճակատում ռուսական զորքին փոխարինած հայկական զորքի թիվը 1918 թ. մայիսի սկզբներին կազմում էր 42-43 հազար մարդ:

**20. Թվարկված իրադարձությունները տեղի են ունեցել 1915 թվականին:**

- 1) հայ կամավորական IV ջոկատի ստեղծումը
- 2) Արամ Մանուկյանի նշանակվելը Վանի նահանգապետ

- 3) Ինուսի գրավումը Դրոյի ջոկատի կողմից
- 4) Ռևանդուզի ճակատամարտը
- 5) Հ. Արղությանի գլխավորությամբ VII կամավորական ջոկատի ստեղծումը
- 6) Դիլմանի ճակատամարտը

**21. Թվարկված իրադարձությունները տեղի են ունեցել 1916 թվականին:**

- 1) Դարդանելի գործողության սկիզբը
- 2) Բաբերդի գրավումը ռուսական զորքի կողմից
- 3) հայ կամավորական VIII ջոկատի ստեղծումը
- 4) հայկական վեց գումարտակների ստեղծումը
- 5) Բիթլիսի գրավումը Անդրանիկի կողմից
- 6) Սայքս-Պիկոյի համաձայնագրի նախնական տարբերակի հանձնումը Ռուսաստանի արտաքին գործերի նախարարին

**22. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայտնի նկարիչ Ստեփանոս Ներսիսյանը Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում սովորել է Ադաթոն Հովնաթանյանի հետ:
- 2) Մաղաքիա Օրմանյանը գալիք սերունդներին ավանդել է զգուշանալ եվրոպական տերությունների քաղաքականությունից, որովհետև նրանց համար գլխավորը «շահն ու օգուտն է»:
- 3) XIX դ. վերջին հայ գեղանկարչության մեջ մինչ այդ բացառիկ նշանակություն ունեցող բնանկարի ժանրն իր տեղը զիջել է դիմանկարին:
- 4) Հմուտ հայագետներ Հ. Հյուբշմանը և Ա. Մեյեն ճշտել են հայերենի տեղը հնդեվրոպական լեզվաընտանիքում՝ որպես նրա առանձին ճյուղ:
- 5) Ժամանակի քննությանն են դիմացել ականավոր պատմաբան Ալեքսանդր Երիցյանի այն մտքերը, թե մեծ տերությունների համար Հայկական հարցը սոսկ միջոց էր Օսմանյան կայսրության գլխին մտրակ ճոճելու:
- 6) Ղևոնդ Ալիշանը հետևել է ժամանակին մեծ համարում ստացած այն հայեցակետին, ըստ որի՝ մարդկային հասարակության զարգացման հիմնական գործոնը աշխարհագրական դիրքն է:

**23. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայտնի հոգևորական և ազգային գործիչ Ներսես Աշտարակեցին Երևանում հիմնել է հայկական ուսումնարան, որն այնուհետև հռչակվել է Ներսիսյան դպրոց անունով:
- 2) Շուշիի թեմական դպրոցը բացվել է ցարիզմի կողմից Հայ եկեղեցու կանոնադրության հաստատումից երկու տարի անց:
- 3) Հայ իրականության համար դարակազմիկ նշանակություն է ունեցել Միքայել Չամչյանի երկհատոր «Պատմութիւն Հայոց» աշխատության տպագրությունը:
- 4) Մադրասում Հարություն Շմալոնյանի նախաձեռնությամբ և հենց իր տպարանում է լույս ընծայվել հայ առաջին պարբերականը՝ «Ազդարարը»:
- 5) «Խելքից պատուհաս» պիեսը հեղինակի ներկայությամբ բեմադրվել է Երևանի բերդում:

6) Ղևոնդ Ալիշանը Հայաստանի ապագա հասարակական-քաղաքական կառուցվածքը բնորոշել է որպես խորհրդարանական հանրապետություն:

**24. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայ մամուլի ամենաերկարակյաց պարբերականը «Բազմավեպ» հանդեսն է, որը սկսել է հրատարակվել Վենետիկում:
- 2) Լազարյան ճեմարանը ժամանակին եղել է Ռուսաստանյան կայսրության միակ արևելագիտական բարձրագույն ուսումնական հաստատությունը:
- 3) Հայտնի նկարիչ Ստեփանոս Ներսիսյանին մեծ ճանաչում են բերել Մ. Մաշտոցի, Ս. Պարթևի, Ա. Տեր-Ղուկասյանի, Վ. Բեհբույթովի դիմանկարները, «Խնջույք Քուռ գետի ափին» գեղանկարը:
- 4) Ղևոնդ Ալիշանը հետևել է ժամանակին մեծ համարում ստացած այն հայեցակետին, ըստ որի՝ մարդկային հասարակության զարգացման հիմնական գործոնը աշխարհագրական դիրքն է:
- 5) Արևելահայ երգահանային դպրոցի հիմնադիրը Քրիստափոր Կարա-Մուրզան է:
- 6) Հայկական երկրորդ արհեստավարժ թատրոնը բացվել է Թիֆլիսում 1863 թվականին:

**25. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Բյուզանդիայի պատմության, հայոց միջնադարի և Հայկական հարցի ուսումնասիրության ասպարեզում զգալի ներդրում է ունեցել Անտոն Գարազաշյանը:
- 2) Լեոն պատմագրության պահպանողական ուղղության ներկայացուցիչ է:
- 3) Հայկական արհեստավարժ առաջին թատերական խմբի ղեկավարն էր Պետրոս Մաղաքյանը:
- 4) Հ. Գաթրոճյանի՝ Վիեննայում լույս տեսած «Տիեզերական պատմություն» երկհատորյակը համաշխարհային պատմության հայերեն առաջին ձեռնարկն է:
- 5) Անդրեաս Տեր-Մարտիրոսյանի կերտած՝ Խաչատուր Աբովյանի հուշարձանը նորագույն շրջանի հայ կերպարվեստի առաջին կոթողային քանդակն է:
- 6) Արմեն Տիգրանյանը հայ առաջին երգահանն է և հայ օպերային արվեստի հիմնադիրը:

**26. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) XIX դ. առաջին կեսին հայկական տարրական, հոգևոր-ծխական դպրոցների կողքին ստեղծվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ:
- 2) Բժիշկ և գյուղատնտես Լևոն Տիգրանյանը հրատարակել է առաջին գիտական հայ պարբերականը՝ «Գիտական շարժում» խորագրով:
- 3) Իր բնանկարներում անվանի նկարիչ Եղիշե Թադևոսյանը հարել է իմպրեսիոնիզմին:
- 4) Կ. Պոլսում է ստեղծվել հայ առաջին արհեստավարժ թատրոնը՝ Հակոբ Վարդուկյանի ղեկավարությամբ:
- 5) Հայ գուսանական ազգային դպրոցը ձևավորվել է Սերովբե Լևոնյանի՝ Ջիվանու գլխավորությամբ:
- 6) Ճանաչված քիմիկոս Հակոբ Չամչյանը համարվում է ժամանակակից օրգանական լուսաքիմիայի հայրը:

**27. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայրենիքից դուրս առաջինը ստեղծվել է «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը:
- 2) Ֆիդայական ջոկատների մեծ մասը 1890–ական թթ. կեսերից արդեն գործում էր ՀՅԴ հովանու ներքո:
- 3) Ազգային գործիչ Եր. Օտյանի առաջարկությամբ Բեռլինի վեհաժողովին մասնակցելու նպատակով Եվրոպա մեկնող հայկական պատվիրակությունը գլխավորել է Մկրտիչ Խրիմյանը:
- 4) Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով–Դաշկովն էր հեղինակել Հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման ծրագիրը:
- 5) Հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման մասին ցարական օրենքը չեղյալ է համարվել ռուսաստանյան առաջին հեղափոխության երկրորդ տարվա ընթացքում:
- 6) Սասունի 1904 թ. ինքնապաշտպանության ղեկավար մարմինը գլխավորում էր Գևորգ Չավուշը:

**28. Առաջին աշխարհամարտի տարիներին ծավալված հայ կամավորական շարժանը վերաբերող ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայոց ազգային բյուրոյի առաջադրած քաղաքական մերձավորագույն նպատակը հանգում էր Արևմտյան Հայաստանի անկախության պահանջին:
- 2) Շարժման կազմակերպչական աշխատանքները գլխավորեց Հայոց ազգային բյուրոն, որը ստեղծեց գործադիր (կարգադրիչ) մարմին՝ Արմեն Գարոյի գլխավորությամբ:
- 3) Վեցերորդ ջոկատի հրամանատարն էր Ն. Աղբալյանը:
- 4) Իգդիրում ձևավորված երկրորդ ջոկատի հրամանատարն էր Հ. Չավույանը:
- 5) Կովկասյան ճակատում պատերազմի սկսվելու պահին ձևավորվել էր հայկական կամավորական վեց ջոկատ:
- 6) Կովկասյան ճակատում երկու տարի մարտնչած կամավորական ութ ջոկատները վերակազմակերպվեցին հայկական կանոնավոր ութ գումարտակների:

**29. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայ առաջին քաղաքական լրագիրը «Ազատության ավետաբերն» է, որը տպագրվել է «Հայրենասերների միություն» խմբակի կողմից:
- 2) Առաջին հայ պարբերականը «Ազդարարն» է, որ հրատարակվել է Մադրասում:
- 3) «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»-ը հայ առաջին հրապարակախոսական տպագիր աշխատությունն է, որը կոչ էր անում հայ երիտասարդությանը զենքի ուժով հասնելու ազատության:
- 4) Տիգրան Չուխաճյանը ստեղծել է ազգային առաջին օպերան՝ «Արշակ Բ»:
- 5) Հայ-թաթարական բախումներն առաջինը սկսվեցին Շուշիում՝ նահանգապետ Նակաշիձեի հրահրմամբ:
- 6) Առաջինը ստեղծվել է Արևմտահայերի ազգային խորհուրդը, հետո՝ Արևելահայերի ազգային խորհուրդը:

**30. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) XVIII դարի սկզբին Ռուսաստանը պայքար էր մղում Բալթիկ, Սև և Միջերկրական ծովերի ափերին հաստատվելու համար:

- 2) Ֆլորենցիայում դուքսը հրաժարվեց Օրուն զորք տրամադրել՝ Հայաստանն ազատագրելու նպատակով:
- 3) Վիեննայի արքունիքը Օրուն համաձայնություն սովեց՝ մասնակցելու Հայաստանի ազատագրման գործին:
- 4) Նադիր շահի օրոք իրենց տիրապետությունը պահպանել էին նաև Սյունիքի և Ղարադաղի հայկական մելիքությունները:
- 5) Մելիքջան Մելիք-Շահնազարյանցը Նադիրի իշխանության տարիներին անկախ է ճանաչվել Ղարաբաղի խանից և նշանակվել Արարատյան երկրի քալանթար:
- 6) Խամսայի մելիքությունների կառավարիչ Դիզակի մելիք Եսային ստացել էր նաև խանի տիտղոս:

### **31. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Թուրքմենչայի պայմանագրի 16-րդ հոդվածով պարսկահպատակ հայերին հնարավորություն էր ընձեռնվում տեղափոխվելու Ռուսաստանյան կայսրության նորահաստատ տարածքներ:
- 2) Արևմտահայության 1830 թ. զանգվածային վերաբնակեցման արդյունքում 45 000 մարդ տեղափոխվեց Արևելյան Հայաստան:
- 3) Արևմտահայության 1830 թ. զանգվածային վերաբնակեցման արդյունքում էրզրումցիները հաստատվեցին Ախալցխայի և Ախալքալաքի գավառներում:
- 4) Ռուսաստանին անցած Ախալքալաքի ու Ախալցխայի գավառներում վերաբնակեցման արդյունքում շեշտակի աճեց հայ բնակչության տեսակարար կշիռը, վերականգնվեց նախորդ ժամանակներին բնորոշ ժողովրդագրական իրավիճակը:
- 5) Արևմտահայության զանգվածային վերաբնակեցման արդյունքում կարսեցիները վերաշինում կամ հիմնադրում են շուրջ 50 գյուղ:
- 6) Պարսկահպատակ հայերի վերաբնակեցման արդյունքում 8 հազարից ավելի հայ ընտանիք անցան Արաքսի ձախ ափը:

### **32. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Թուրքական դատարանի 1919 թ. հուլիսի 5-ի դատավճռով Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Նազըմը հեռակա դատապարտվեցին մահվան:
- 2) 1922 թ. հուլիսի 25-ին Բեռլինում Արամ Երկանյանը և Արշավիր Շիրակյանը իրականացրեցին Բեհաէդդին Շաքիրի և Ջեմալ Ազմիի մահապատիժը:
- 3) 1922 թ. օգոստոսին Միջին Ասիայում Հակոբ Մելքունովի գլխավորած զորամասերի դեմ մղած մարտերում սպանվեց Էնվերը:
- 4) Թուրքական դատարանի 1919 թ. հունիսի 5-ի դատավճռով մահվան դատապարտվեցին Բեհաէդդին Շաքիրը, Ջեմալ Ազմին և Նայիմ բեյը, իսկ շատերն էլ դատապարտվեցին տարբեր ժամկետներով ազատագրկման:
- 5) 1921 թ. դեկտեմբերի 6-ին Հռոմում Արշավիր Շիրակյանի գնդակից սպանվեց Օսմանյան կայսրության նախկին վարչապետ Սայիդ Հալիմը:
- 6) 1949 թ. դեկտեմբերի 8-ին ՄԱԿ-ը ընդունեց «Յեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիան, որի հիմքում ընկած էր լեհական հրեա իրավաբան Ռաֆայել Լեմկինի առաջարկած նախագիծը:

**1. ՏԱՐԵԹՎԵՐ**

---

1. Երբ է հիմնադրվել ՀՕԿ-ը.

- 1) 1910 թ.                      2) 1920 թ.                      3) 1921 թ.                      4) 1922 թ.

2. Երբ է ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեն դադարեցրել իր գործունեությունը.

- 1) 1948 թ. սեպտեմբերին                      3) 1949 թ. օգոստոսին  
2) 1948 թ. դեկտեմբերին                      4) 1949 թ. նոյեմբերին

3. Երբ են հայ քաղաքական երեք կուսակցությունները կազմել համազգային կենտրոնական մարմին.

- 1) 1947 թ.                      2) 1965 թ.                      3) 1967 թ.                      4) 1974 թ.

4. Երբ է ընդունվել ՌԿ(Բ)Կ կենտկոմի քաղբյուրոյի որոշումը՝ Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու համար վճռական գործողությունների դիմելու մասին.

- 1) 1920 թ. հոկտեմբերի 14-ին                      3) 1920 թ. հոկտեմբերի 28-ին  
2) 1920 թ. հոկտեմբերի 20-ին                      4) 1920 թ. հոկտեմբերի 4-ին

5. Ո՞ր թվականին էին շուրջ 40 հազար գյուղացիներ ՀՍԽՀ-ում շարունակում մնալ հողագուրկ.

- 1) 1930 թ.                      2) 1927 թ.                      3) 1929 թ.                      4) 1926 թ.

6. Երբ սկսվեցին Հայաստանի արդյունաբերության կարևորագույն ճյուղերից մեկի՝ պղնձարդյունաբերության վերականգնման աշխատանքները.

- 1) 1926-1927 թթ.                      3) 1923-1924 թթ.  
2) 1924-1925 թթ.                      4) 1928-1929 թթ.

7. Հայաստանի տնտեսությունը երբ հասավ նախապատերազմյան՝ 1913 թ. մակարդակին.

- 1) 1930 թ.                      2) 1929 թ.                      3) 1926 թ.                      4) 1928 թ.

8. Երբ շահագործման հանձնվեց Երևանի արհեստական կաուչուկի գործարանը.

- 1) 1937 թ.                      2) 1940 թ.                      3) 1933 թ.                      4) 1935 թ.

9. Ստալինը երբ հրատարակեց «Մեծ բեկման տարին» հոդվածը.

- 1) 1929 թ.                      2) 1930 թ.                      3) 1932 թ.                      4) 1933 թ.

**10. Երբ է տեղի ունեցել ՀՅԴ, այսպես կոչված, ինքնավերացման համագումարը.**

- |                        |                        |
|------------------------|------------------------|
| 1) 1923 թ. հոկտեմբերին | 3) 1924 թ. հոկտեմբերին |
| 2) 1923 թ. նոյեմբերին  | 4) 1924 թ. նոյեմբերին  |

**11. Երբ ձերբակալվեց մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն Ներսիկ Ստեփանյանը.**

- |                    |                    |
|--------------------|--------------------|
| 1) 1936 թ. մարտին  | 3) 1937 թ. մայիսին |
| 2) 1937 թ. ապրիլին | 4) 1936 թ. մայիսին |

**12. Երբ է ՀԿ(բ)Կ կենտկոմը որոշում ընդունել Էջմիածնի վանքը փակելու, կաթողիկոսությունը վերացնելու մասին.**

- |                            |                            |
|----------------------------|----------------------------|
| 1) 1938 թ. օգոստոսի 4-ին   | 3) 1938 թ. ապրիլին 4-ին    |
| 2) 1937 թ. սեպտեմբերի 8-ին | 4) 1936 թ. սեպտեմբերի 6-ին |

**13. Երբ է սկսվել Հայրենական մեծ պատերազմը.**

- |                          |                            |
|--------------------------|----------------------------|
| 1) 1941 թ. հուլիսի 22-ին | 3) 1939 թ. սեպտեմբերի 1-ին |
| 2) 1941 թ. հունիսի 22-ին | 4) 1941 թ. սեպտեմբերի 1-ին |

**14. Երբ է ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև կնքվել չհարձակման պայմանագիրը.**

- |                            |                           |
|----------------------------|---------------------------|
| 1) 1940 թ. հունիսի 22-ին   | 3) 1939 թ. օգոստոսի 23-ին |
| 2) 1939 թ. սեպտեմբերի 1-ին | 4) 1941 թ. հունիսի 22-ին  |

**15. Երբ կազմացրվեց Հայկական 89-րդ հրաձգային Թամանյան դիվիզիան.**

- |            |            |
|------------|------------|
| 1) 1956 թ. | 3) 1948 թ. |
| 2) 1946 թ. | 4) 1954 թ. |

**16. Հայրենիքի դավաճանության անհիմն մեղադրանքով երբ ձերբակալվեց ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովը.**

- |                   |                   |
|-------------------|-------------------|
| 1) 1949 թ. սկզբին | 3) 1947 թ. վերջին |
| 2) 1945 թ. վերջին | 4) 1948 թ. սկզբին |

**17. ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար Գրիգոր Հարությունյանի ընտրողների հետ հանդիպումը, որտեղ նա խոսեց «Թուրքիայի կողմից զավթված հայկական մարզերի» մասին, տեղի է ունեցել՝**

- |                          |                         |
|--------------------------|-------------------------|
| 1) 1947 թ. մարտի 12-ին   | 3) 1948 թ. ապրիլի 4-ին  |
| 2) 1946 թ. փետրվարի 1-ին | 4) 1949 թ. հուլիսի 2-ին |

**18. Խորհրդային կառավարությունը երբ պաշտոնապես հայտարարեց, որ ԽՍՀՄ-ը Թուրքիայից ոչ մի տարածքային պահանջ չունի.**

- |                          |                          |
|--------------------------|--------------------------|
| 1) 1953 թ. հուլիսի 30-ին | 3) 1953 թ. մայիսի 30-ին  |
| 2) 1954 թ. ապրիլի 18-ին  | 4) 1956 թ. հունվարի 4-ին |

**19. Երբ է ձերբակալվել ԽՍՀՄ ներքին գործերի նախարար Լ. Բերիան.**

- |                          |                            |
|--------------------------|----------------------------|
| 1) 1953 թ. հունիսի 26-ին | 3) 1954 թ. հոկտեմբերի 3-ին |
| 2) 1954 թ. հունիսի 26-ին | 4) 1954 թ. սեպտեմբերի 5-ին |

**20. Երբ է Յակով Ջարոբյանն ընտրվել ՀԿԿ կենտկոմի քարտուղար.**

- |                        |                        |
|------------------------|------------------------|
| 1) 1961 թ. մարտին      | 3) 1960 թ. մայիսին     |
| 2) 1961 թ. հոկտեմբերին | 4) 1960 թ. դեկտեմբերին |

**21. Երբ է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության կողմից ԼՂԻՄ-ում ստեղծվել հատուկ կառավարման կոմիտեն.**

- |                             |                          |
|-----------------------------|--------------------------|
| 1) 1988 թ. դեկտեմբերի 12-ին | 3) 1989 թ. մարտի 16-ին   |
| 2) 1989 թ. հունվարի 11-ին   | 4) 1990 թ. հունվարի 4-ին |

**22. Երբ է Բաքվում տեղի ունեցել հայ բնակչության կոտորածը և տեղահանությունը.**

- |                             |                             |
|-----------------------------|-----------------------------|
| 1) 1990 թ. հունվարի 13-20-ը | 3) 1991 թ. հունվարի 13-20-ը |
| 2) 1990 թ. փետրվարի 27-29-ը | 4) 1990 թ. ապրիլի 5-12-ը    |

**23. Երբ է հայտարարվել ԽՍՀՄ փլուզման և Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծման մասին.**

- |                            |                            |
|----------------------------|----------------------------|
| 1) 1991 թ. մարտի 18-ին     | 3) 1990 թ. դեկտեմբերի 8-ին |
| 2) 1991 թ. դեկտեմբերի 8-ին | 4) 1991 թ. օգոստոսի 19-ին  |

**24. Երբ է ԼՂՀ Գերագույն խորհուրդը հաստատել պետական դրոշը.**

- |                          |                            |
|--------------------------|----------------------------|
| 1) 1993 թ. հունվարի 2-ին | 3) 1992 թ. հունիսի 2-ին    |
| 2) 1993 թ. հունիսի 2-ին  | 4) 1992 թ. սեպտեմբերի 2-ին |

**25. Երբ է Հայաստանի առաջին հանրապետությունում ընդունվել «Դպրոցի կառավարման մասին» օրենքը.**

- |                        |                        |
|------------------------|------------------------|
| 1) 1919 թ. հուլիսին    | 3) 1918 թ. սեպտեմբերին |
| 2) 1919 թ. սեպտեմբերին | 4) 1919 թ. մայիսին     |

**26. Երբ է Հայաստանի առաջին հանրապետությունում ընդունվել համալսարան հիմնելու մասին որոշումը.**

- |                           |                             |
|---------------------------|-----------------------------|
| 1) 1920 թ. հունվարի 31-ին | 3) 1919 թ. հուլիսի 4-ին     |
| 2) 1919 թ. մայիսի 16-ին   | 4) 1920 թ. դեկտեմբերի 28-ին |

**27. Երբ է Հայաստանի առաջին հանրապետությունում հանդիսավորապես բացվել համալսարանը.**

- |                          |                           |
|--------------------------|---------------------------|
| 1) 1919 թ. մայիսի 16-ին  | 3) 1921 թ. հունվարի 16-ին |
| 2) 1920 թ. հունիսի 31-ին | 4) 1920 թ. հունվարի 31-ին |

**28. Երբ է ընդունվել պետական հանրային մատենադարան (գրադարան) հիմնելու մասին օրենքը.**

- |                         |                         |
|-------------------------|-------------------------|
| 1) 1920 թ. հուլիսի 7-ին | 3) 1919 թ. հուլիսի 4-ին |
| 2) 1920 թ. հունիսի 4-ին | 4) 1919 թ. մայիսի 16-ին |

**29. ԵՐԲ Է Հայաստանի առաջին հանրապետությունում բացվել ուսուցչական սեմինարիա.**

- 1) 1919 թ. սեպտեմբերին
- 2) 1919 թ. մայիսին

- 3) 1919 թ. հուլիսին
- 4) 1919 թ. հունիսին

**30. ԵՐԲ Է Հայաստանի առաջին հանրապետությունում ստեղծվել Հնությունների պաշտպանության կոմիտեն.**

- 1) 1920 թ. հուլիսին
- 2) 1919 թ. հունիսին

- 3) 1920 թ. մայիսին
- 4) 1919 թ. հուլիսին

**31. ԵՐԲ Է ԼՂՀ-ի խնդրով ՄԱԿ-ում ընդունվել երեք բանաձև.**

- 1) 1992 թ.
- 2) 1993 թ.

- 3) 1996 թ.
- 4) 1998 թ.

**32. ԵՐԲ Է ՀՀ-ն անդամակցել ԵԱՀԿ-ին.**

- 1) 1993 թ.
- 2) 1995 թ.

- 3) 1994 թ.
- 4) 1992 թ.

**33. ԵՐԲ Է Հայաստանը դարձել ՄԱԿ-ի լիիրավ անդամ.**

- 1) 1992 թ. ապրիլի 2-ին
- 2) 1993 թ. մարտի 2-ին

- 3) 1992 թ. մարտի 2-ին
- 4) 1992 թ. հունվարի 31-ին

**34. ԵՐԲ Է ՀՀ-ն լիիրավ անդամակցել Եվրոպայի խորհրդին (ԵԽ).**

- 1) 1996 թ.
- 2) 2001 թ.

- 3) 2004 թ.
- 4) 2015 թ.

**35. ԵՐԲ Է Հայաստանը դարձել Եվրասիական տնտեսական միության լիիրավ անդամ.**

- 1) 2014 թ. մայիսին
- 2) 2014 թ. դեկտեմբերին

- 3) 2015 թ. հունիսին
- 4) 2015 թ. հունվարին

**36. ԵՐԲ Է Երևանում բացվել Նորարար փորձառական արվեստի կենտրոնը (ՆՓԱԿ).**

- 1) 1993 թ.
- 2) 1994 թ.

- 3) 1996 թ.
- 4) 1999 թ.

**37. ԵՐԲ Է Լորիս Ճգնավորյանը հիմնել Գյումրիի մշակութային կենտրոնը.**

- 1) 2000 թ.
- 2) 1995 թ.

- 3) 1993 թ.
- 4) 1991 թ.

**38. ԵՐԲ Է Գերմանիայի Բոխում քաղաքում բացվել «Հայաստան. հին մշակույթի վերագտնված երկիր» ցուցահանդեսը.**

- 1) 1995 թ.
- 2) 1992 թ.

- 3) 1993 թ.
- 4) 1996 թ.

## 2. ՓԱՍՏԵՐ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

- 1. Ո՞ւմ նախաձեռնությամբ է Փարիզում հրավիրվել Հայոց ազգային համագումարը.**
  - 1) Սեպուհի
  - 2) Պողոս Նուբարի
  - 3) Անդրանիկի
  - 4) Դրոյի
- 2. Ո՞րն էր Երկրորդ աշխարհամարտի ավարտական փուլում տարբեր երկրներում կազմակերպված ազգային խորհուրդների խնդիրը.**
  - 1) բոլոր միջոցներով օժանդակել հայրենադարձության կազմակերպմանը
  - 2) բոլոր միջոցներով օժանդակել ֆաշիզմի դեմ պայքարող երկրների հաղթանակին
  - 3) բոլոր միջոցներով հասնել ֆաշիստական ճամբարներից հայ ռազմագերիների ազատագրմանը
  - 4) բոլոր միջոցներով խոչընդոտել Սփյուռքի գաղթօջախներում ֆաշիստական վարչակարգի հաստատմանը
- 3. Ո՞վ էր Հայկական ազգային կոմիտեի ղեկավարը, որը հուշագիր ներկայացրեց ՄԱԿ-ի նիստին.**
  - 1) Ա. Ահարոնյանը
  - 2) Պողոս Նուբար փաշան
  - 3) Ս. Վրացյանը
  - 4) Հ. Օհանջանյանը
- 4. 1920-ական թթ. ո՞րն էր գիտական մտքի զարգացման հիմնական կենտրոնը Հայաստանում.**
  - 1) գիտությունների ազգային ակադեմիան
  - 2) մատենադարանը
  - 3) Երևանի պետական համալսարանը
  - 4) Գիտության և արվեստի ինստիտուտը
- 5. Ո՞ւմ ջանքերով վերականգնվեց Զվարթնոց տաճարի հատակագիծը.**
  - 1) Ալեքսանդր Թամանյանի
  - 2) Մարկ Գրիգորյանի
  - 3) Թորոս Թորամանյանի
  - 4) Կարո Հալաբյանի
- 6. 1933 թ. դրությամբ քանի՞ ինքնուրույն գիտահետազոտական հիմնարկներ էին գործում հանրապետությունում.**
  - 1) 20
  - 2) 30
  - 3) 40
  - 4) 50
- 7. Ո՞վ էր եռագույն հեռուստատեսության գյուտի հեղինակը.**
  - 1) Ստեփան Ղամբարյան
  - 2) Հովսեփ Տեր-Աստվածատրյան
  - 3) Հովհաննես Ադամյան
  - 4) Հովհաննես Կարապետյան
- 8. Ո՞վ էր 1919 թ. համալսարանի առաջին տեսուչը.**
  - 1) Հ. Մանանդյանը
  - 2) Յու. Ղամբարյանը
  - 3) Ն. Աղբալյանը
  - 4) Գ. Էդիսյանը



### 3. ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ

**1. Երբ է ՀՀ կառավարությունը ստորագրել և հոչակել այն փաստաթուղթը, որից մեջբերված է ստորև տրված հատվածը.**

*«Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իրրև անկախ պետական միություն».*

- 1) 1919 թ. ապրիլի 26-ին
- 2) 1919 թ. ապրիլի 28-ին
- 3) 1919 թ. մայիսի 28-ին
- 4) 1920 թ. մայիսի 28-ին

**2. Ո՞ր իրադարձության հետ կապված է արտահայտվել հետևյալ տեսակետը.**

*Նրանք հայ ժողովրդին կոչ էին անում «իրաժարվելու ոչ միայն Մեծ Հայաստանի ...այլև, հնարավոր է, նույնիսկ մշտապես հայկական անվանված հողափարածքների միավորման ավելի համեստ ցանկությունից: Հայաստանին... այլ ելք չի մնում, քան հաշտվել դրա հետ և համաշխարհային հեղափոխության շահերին զոհաբերել և՛ իր երբեմնի հողափարածքները, և՛ իր ժողովրդի այնպեղ մնացած հատվածները»:*

- 1) Լոնդոնի կոնֆերանսի
- 3) ԱԽԴՍՀ-ի ստեղծման
- 2) Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կնքման
- 4) ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսի

**3. Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը.**

*«Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»:*

- |                |               |
|----------------|---------------|
| 1) Անդրանիկը   | 3) Գ. Նժդեհը  |
| 2) Ա. Մռավյանը | 4) Ս. Կասյանը |

**4. Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը.**

*«Գալստյանի անունը մենք կմտցնենք հերոսների՝ Լենինգրադի պաշտպանների անջնջելի ցուցակում և կհիշենք նրան ընդմիշտ»:*

- |                   |                |
|-------------------|----------------|
| 1) Հ. Բաղդամյանը  | 3) Ն. Տիխոնովը |
| 2) Հ. Բաբաջանյանը | 4) Գ. Ժուկովը  |

**5. ԵՐբ է հռչակվել այս փաստաթուղթը, որից մեջբերված է ստորև տրված հատվածը.**

*«Ոգեկոչում է Հայոց ցեղասպանության մեկուկես միլիոն անմեղ զոհերի հիշատակը և երախտագիտությամբ խոնարհվում կյանքի ու մարդկային արժանապատվության համար պայքար մղած նահատակ և վերապրած հերոսների առջև»:*

- |                           |                           |
|---------------------------|---------------------------|
| 1) 1965 թ. ապրիլի 24–ին   | 3) 1995 թ. հուլիսի 5–ին   |
| 2) 1990 թ. օգոստոսի 23–ին | 4) 2015 թ. հունվարի 29–ին |

**6. Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը.**

*«Բոլոր հայ աշխատավորները պետք է գիտենան, որ ներգաղթի խնդրում մենք պետք է ղեկավարվենք դասակարգային սկզբունքով, այսինքն՝ պիտի ներգրավվենք միմիայն աշխատավոր փարրեր՝ բանվորներ և գյուղացիներ»:*

- |                       |                        |
|-----------------------|------------------------|
| 1) Ս. Տեր-Գաբրիելյանը | 3) Ֆ. Նանսենը          |
| 2) Ալ. Մյասնիկյանը    | 4) ՀՅԴ կուսակցությունը |

**7. Ո՞ր քաղաքի անունն է բաց թողնված մեջբերման մեջ.**

*«Գալստյանի անունը մենք կմտցնենք հերոսների՝ ..... պաշտպանների անջնջելի ցուցակում և կհիշենք նրան ընդմիշտ»:*

- |               |              |
|---------------|--------------|
| 1) Մոսկվա     | 3) Սևաստոպոլ |
| 2) Ստալինգրադ | 4) Լենինգրադ |

**8. Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը.**

*«Ժխտել՝ նշանակում է սպանել զոհերին երկրորդ անգամ»:*

- |                   |                   |
|-------------------|-------------------|
| 1) Էլի Վիգել      | 3) Ֆրիտյոֆ Նանսեն |
| 2) Անդրեյ Սախարով | 4) Առնոլդ Թոյնբի  |

## 4. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 1. Տրված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

- |                         |                         |
|-------------------------|-------------------------|
| 1) այլախոհություն       | 4) «Նոր եկեղեցի»        |
| 2) ազգային օջախ         | 5) Հայոց ազգային բյուրո |
| 3) «Հարսանիք լեռներում» |                         |

ա. 1992 թ. մայիսի 4-ի որոշմամբ ծավալված գործողություն Շուշիի ազատագրման համար

բ. պաշտոնական եկեղեցու դեմ խորհրդային իշխանությունների ստեղծած կազմակերպություն

գ. խորհրդային իրականությունը փոփոխելու պայքարի ուղին ընտրած գաղափարական ուղղություն

դ. հայկական պետության վերականգնման փոխարեն Թուրքիայի որևէ տարածքում հայերին հատկացվելիք բնակվելու շրջան

ե. Հայկական հարցի լուծման նպատակով 1912 թ. սեպտեմբերին Թիֆլիսում ստեղծված մարմին

զ. Արևմտահայերի առաջին համագումարում ստեղծված մարմին

- |                            |                            |
|----------------------------|----------------------------|
| 1) 1-գ, 2-դ, 3-ա, 4-ե, 5-զ | 3) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ, 5-ե |
| 2) 1-բ, 2-ա, 3-գ, 4-զ, 5-ե | 4) 1-գ, 2-ե, 3-ա, 4-դ, 5-բ |

### 2. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.

1) Հայ-ռուսական պայմանագրի նախագիծը 1920 թ. նոյեմբերի 4-ին Բաքվում քննարկած մարմիններն էին ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոն ու Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոն:

2) Այն մարմինը, որի անմիջական ցուցումով 1920 թ. դեկտեմբեր և 1921 թ. հունվար ամիսներին ավելի քան 1000 սպաներ ու զինծառայողներ հայկական բանակից հեռացվել և երկրից արքորվել են, կոչվում էր Ադրբեջանի Ռազմահեղափոխական խորհուրդ:

3) Մենշևիկներն ու էսեռները սոցիալ-դեմոկրատական ուղղության ներկայացուցիչներ էին:

4) Փետրվարյան ապստամբության հաղթանակից հետո Երևանում ստեղծված իշխանության մարմինը կոչվեց Հայաստանի փրկության կոմիտե (ՀՓԿ):

5) 1920 թ. դեկտեմբերի 6-ին հիմնված մարմինը, որը պետք է նպաստեր երկրում խորհրդային կարգեր «ներդնելուն», կոչվեց Արտակարգ հանձնաժողով (Չեկա):

6) Արտաքին օգնության կազմակերպման նպատակով 1921 թ. սեպտեմբերին Երևանում Հովհաննես Թումանյանի նախագահությամբ ստեղծված կազմակերպությունը կոչվեց Հայրենիքի օգնության կոմիտե (ՀՕԿ):

7) Տաթևում հրավիրված համազանգեզուրյան 2-րդ համագումարում Ինքնավար Սյունիքը հռչակվեց «Լեռնահայաստան»:

### **3. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- 1) Ուսուցչական կադրեր պատրաստելու նպատակով 1919 թ. սեպտեմբերին բացված հաստատությունը կոչվում էր ուսուցչական սեմինարիա:
- 2) Հայաստանի առաջին հանրապետությունում համայնքային ինքնավարությունները կոչվել են գեմյաներ:
- 3) Զանգեզուրի հայկական ազգային խորհուրդը 1919 թ. սկզբին վերակազմվեց և կոչվեց Զանգեզուր-Ղարաբաղի մարզային խորհուրդ:
- 4) Հայաստանի միավորված ազգային կուսակցությունների կենտրոնական ղեկավար մարմինը հայտնի դարձավ Արմենկոմ անունով:
- 5) Արցախահայության առաջին համագումարում երկրամասը կառավարելու համար կազմված մարմինը կոչվում էր Ղարաբաղի ժողովրդական կառավարություն:
- 6) Հայաստանի առաջին հանրապետությունում ընդունված օրենքով ստեղծված արդարադատության մարմին էր երդվյալ ատենակալների դատարանը:
- 7) Սոցիալիստ-հեղափոխականներին կարճ անվանում էին էսէներ:
- 8) 1920 թ. մայիսին ՀՀ տարածքը բաժանվեց վարչական 4 միավորների, որոնք կոչվում էին մարզեր:

### **4. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Մայիսյան ապստամբության ժամանակ բոլշևիկների ազդեցության տակ անցած գրահագնացքը կոչվում էր «Վարդան Մամիկոնյան»:
- 2) Ալեքսանդրապոլում բոլշևիկների ստեղծած ապստամբության ղեկավար մարմինը կոչվում էր Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտե (ՌՀԿ):
- 3) Համո Օհանջանյանի կառավարությանը փոխարինածը հայտնի է «բյուրո-կառավարություն» անունով:
- 4) Վրաց-հայկական կարճատև պատերազմից հետո Լոռին և Զավախքի հարավային մասը հայտարարվեցին «չեզոք գոտի»:
- 5) Սարգիս Կասյանի նախագահությամբ Բաքվում բոլշևիկների կազմավորած մարմինը, որը 1920 թ. նոյեմբերի 29-ին մտավ Հայաստան և երկիրը հռչակեց «խորհրդային սոցիալիստական հանրապետություն», կոչվում էր Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտե:
- 6) Թուրք-հայկական պատերազմի ժամանակ Լոռու չեզոք գոտում անգլիացի գեներալ-նահանգապետին հեռացնելուց հետո այդ երկրամասում հաստատված իշխանության մարմինը կոչվել է հայկական գեներալ-նահանգապետություն:
- 7) Բաքվում գտնվող հայկական զորամասերը լուծարելու մասին Բաթումի պայմանագրի կետերը չճանաչած և Ստեփան Շահումյանի գլխավորած ժողովրդական կոմիսարների իշխանության հետ ինքնապաշտպանություն կազմակերպած մարմինը Բաքվի Հայոց ազգային խորհուրդն էր:

### **5. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- 1) Այն կարգախոսը, որով Արևմտահայերի 2-րդ համագումարում ընտրված գործադիր մարմինը առաջնորդվեց, կոչվում էր «Մեկ երկիր, մեկ հայրենիք»:

- 2) Բրիտանական զինվորական ներկայացուցչության կողմից հայատյաց Խոսրով բեկ Սուլթանովին տրված պաշտոնն էր Ղարաբաղի և Զանգեզուրի ժամանակավոր գեներալ-նահանգապետ:
- 3) Անդրանիկ Օզանյանի կողմից Զանգեզուրը հռչակվել է որպես Ինքնավար Այունիք:
- 4) Արևմտահայերի 2-րդ համագումարում ընտրված մարմինը կոչվեց Արևմտահայ գործադիր մարմին:
- 5) Որպես Զանգեզուր-Ղարաբաղի մարզային խորհրդի ներկայացուցիչ Գորիս ժամանած կապիտան Արսեն Շահմազյանի ստանձնած պաշտոնն էր գեներալ-կոմիսար:
- 6) Անզլիացի գեներալ Թոմսոնի զբաղեցրած պաշտոնն էր Գանձակի գեներալ-նահանգապետ:
- 7) Բուլճիկներից Գորիսն ազատագրելուց հետո երկրամասը կառավարելու համար Գարեգին Նժդեհի անմիջական ղեկավարությամբ ստեղծված մարմինը կոչվեց Զանգեզուրի գյուղացիական ժամանակավոր խորհուրդ:

#### **6. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Փարիզում Պողոս Նուբարի նախաձեռնությամբ հրավիրված համահայկական համաժողովը հայտնի է Հայոց ազգային խորհուրդ անունով:
- 2) Փարիզի խաղաղության վեհաժողովին մեկնած և արևմտահայերի շահերը ներկայացնող պատվիրակությունը կրում էր Հայոց ազգային պատվիրակություն անվանումը:
- 3) Արևմտահայերի 2-րդ համագումարի ընտրած Արևմտահայ գործադիր մարմնի՝ Հայաստանի կառավարությանը հասցեագրած դիմումում Առաջին հանրապետությունն անվանված է «Արարատյան Հանրապետություն»:
- 4) Փարիզում Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ղեկավարների նիստը Հայաստանի կառավարությանը ճանաչեց փաստացի՝ այսինքն՝ դե յուրե:
- 5) Այն կարգախոսը, որով Արևմտահայերի 2-րդ համագումարում ընտրված գործադիր մարմինը առաջնորդվեց, կոչվում էր «Մեկ ազգ, մեկ հայրենիք»:
- 6) Մարաշում Սարգիս Ճեպեճյանի ղեկավարությամբ քեմալականների դեմ հայերի պաշտպանական մարտերը գլխավորող մարմինը կոչվում էր ինքնապաշտպանության բարձրագույն խորհուրդ:
- 7) Մոսկվայում կնքված խորհրդա-քեմալական հակահայկական փաստաթուղթը կրում էր «Ռուս-թուրքական անկեղծ բարեկամության և սրտագին եղբայրության պայմանագիր» անվանումը:

#### **7. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Փարիզում Պողոս Նուբարի նախաձեռնությամբ հրավիրված ժողովը հայտնի է «Հայոց ազգային համագումար» անունով:
- 2) Բեհաեդդին Շաքիրի անմիջական ղեկավարությամբ կազմավորված հատուկ մարմինը կոչվել է Երեքի գործադիր կոմիտե:

- 3) Հայաստանի առաջին հանրապետությունում ստեղծված գիտակրթական հաստատություններից էին սկաուտական կազմակերպությունները:
- 4) Անգլիացի գեներալ Թոմսոնի զբաղեցրած պաշտոնն էր Բաքվի գեներալ-նահանգապետ:
- 5) Հայաստանի կառավարության կողմից 1919 թ. մայիսի 28-ին ընդունված փաստաթուղթը կոչվում էր «Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտ»:
- 6) Երևան ժամանած Բորիս Լեգրանը Ռուսաստանի հյուպատոսն էր Հայաստանում:
- 7) Հայ-ռուսական երևանյան բանակցությունների ավարտին նախաստորագրված փաստաթուղթը կոչվում էր «Եզրափակիչ համաձայնագիր»:

### **8. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- 1) Քեմալական շարժման նպատակները պաշտոնական ձևակերպում ստացան «Թուրքիայի հանրապետության ազգային միություն» կոչվող փաստաթղթում:
- 2) Իտալիայի Սան Ռեմո քաղաքում Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագիծը մշակած մարմինը տերությունների Գերագույն խորհրդի խորհրդաժողովն էր:
- 3) Բեհաէդդին Շաքիրի անմիջական ղեկավարությամբ կազմավորված մարմինը կոչվել է «Հատուկ կազմակերպություն»:
- 4) Խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհի նախագահ Վ. Լենինին ուղղված Քեմալի նամակում Արևմուտքի տերություններն ու Հայաստանն անվանվում են «ժողովրդավարական երկրներ»:
- 5) Փարիզում Պողոս Նուբարի նախաձեռնությամբ հրավիրված ժողովը Հայոց ազգային համագումարն էր:
- 6) Կոմինտերնի գործադիր կոմիտեի նախաձեռնությամբ Բաքվում կայացած խորհրդաժողովը Արևելքի ժողովուրդների առաջին համագումարն էր:
- 7) Մարաշում Պետրոս Սարաճյանի նախագահությամբ քեմալականների դեմ հայերի պաշտպանական մարտերը գլխավորող մարմինը կոչվում էր ինքնապաշտպանության բարձրագույն խորհուրդ:

### **9. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Փարիզում Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ղեկավարների նիստը Հայաստանի կառավարությանը ճանաչեց դե ֆակտո՝ այսինքն՝ փաստացի:
- 2) Իտալիայի Սան Ռեմո քաղաքում տերությունների Գերագույն խորհրդի խորհրդաժողովում ընդունված փաստաթուղթը վերնագրված էր՝ «Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտ»:
- 3) Առաջին աշխարհամարտի ավարտից հետո դաշնակից երկրները (մեծ տերություններ) մտադրվել էին Կիլիկիայում հայերի համար ստեղծել «հայկական ազգային օջախ»:
- 4) «Թուրքական ազգային ուխտ» կոչվող փաստաթղթով Արևմտյան Հայաստանը, Կիլիկիան, Կարսը և Արդահանը հռչակվում էին «բուն հայկական տարածքներ»:

- 5) Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեի հետ 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստան մտած և 11-րդ կարմիր բանակի շարքերից առանձնացված զորամասը կոչվում էր «Հայկական գունդ»:
- 6) 1920 թ. ամռանը նախաստորագրված խորհրդա-քեմալական փաստաթուղթը կրում էր «Սրտագին և անկեղծ բարեկամության» պայմանագիր անվանումը:
- 7) Երևանում ստորագրված հայ-ռուսական համաձայնագրով Հայաստանը հայտարարվել է «խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն»:

#### **10. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Սիմոն Վրացյանի գլխավորած ՀՀ վերջին կառավարության անդամների մի մասը համարվում էին «բոլշևիկյան կողմնորոշման ջատագույններ»:
- 2) Արցախը Հայաստանի առաջին հանրապետության անբաժանելի մաս հռչակված մարմինը Արցախահայության 9-րդ համագումարն էր:
- 3) Օ. Սիլինի զբաղեցրած պաշտոնը կոչվում էր ՀՀ-ում ՌՄԴԽՀ հյուպատոս:
- 4) «Թուրքական ազգային ուխտ» կոչվող փաստաթղթով Արևմտյան Հայաստանը, Կիլիկիան, Կարսը և Արդահանը հռչակվում էին «բուն հայկական տարածքներ»:
- 5) Հայաստանի խորհրդայնացումից հետո երկրում ձևավորված գործադիր իշխանության նոր մարմինները կոչվում էին ժողովրդական կոմիսարիատներ:
- 6) Հայաստանի Ռազմհեղկոմի նախագահ Ս. Կասյանի 1920 թ. դեկտեմբերի 6-ի դեկրետով հիմնված մարմինը, որը պետք է նպաստեր երկրում խորհրդային կարգեր «ներդնելուն», կոչվեց Արտակարգ հանձնաժողով:
- 7) Հայ-ռուսական երևանյան բանակցությունների ավարտին ստորագրված փաստաթուղթը կոչվում էր «Եզրափակիչ արձանագրություն»:

#### **11. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- 1) Արտաքին օգնության կազմակերպման նպատակով 1921 թ. սեպտեմբերին Երևանում Հովհաննես Թումանյանի նախագահությամբ ստեղծված կազմակերպությունը կոչվեց Հայրենիքի օգնության կոմիտե (ՀՕԿ):
- 2) Մենշևիկներն ու բոլշևիկները սոցիալ-դեմոկրատական ուղղության ներկայացուցիչներ էին:
- 3) Փետրվարյան ապստամբության հաղթանակից հետո Երևանում ստեղծված իշխանության մարմինը կոչվեց Հայաստանի փրկության կոմիտե (ՀՓԿ):
- 4) 1920 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի Ռազմհեղկոմի նախագահ Ս. Կասյանի դեկրետով հիմնված մարմինը, որը պետք է նպաստեր երկրում խորհրդային կարգեր «ներդնելուն», կոչվեց Արտակարգ հանձնաժողով (Չեկա):
- 5) Այն մարմինը, որի անմիջական ցուցումով 1920 թ. դեկտեմբեր և 1921 թ. հունվար ամիսներին ավելի քան 1000 սպաներ ու զինծառայողներ հայկական բանակից հեռացվել և երկրից աքսորվել են, կոչվում էր Ադրբեջանի Ռազմահեղափոխական խորհուրդ:
- 6) Տաթևում հրավիրված համազանգեզուրյան 1-ին համագումարում Զանգեզուրը հռչակվեց «Ինքնավար Սյունիք»:

7) Հայ-ռուսական պայմանագրի նախագիծը 1920 թ. նոյեմբերի 4-ին Բաքվում քննարկած մարմիններն էին ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոն և Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոն:

## **12. Գտնել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Հայաստանի առաջին հանրապետությունում համայնքային ինքնավարությունները կոչվել են զեմլյաներ:
- 2) Շուշիում կայացած արցախահայության առաջին համագումարում երկրամասը կառավարելու համար կազմված մարմինը կոչվում էր Ղարաբաղի ժողովրդական կառավարություն:
- 3) Զանգեզուրի հայկական ազգային խորհուրդը 1919 թ. սկզբին վերակազմվեց և կոչվեց Զանգեզուր-Ղարաբաղի մարզային խորհուրդ:
- 4) Հայաստանի միավորված ազգային կուսակցությունների կենտրոնական ղեկավար մարմինը հայտնի դարձավ Ամերկում անունով:
- 5) ՌԿ(Բ)Կ ԿԿ քաղբյուրոյի կողմից ստեղծված մարմինը կոչվում էր «Քարոզչության և գործողության խորհուրդ»:
- 6) Խորհրդարանի 1918 թ. սեպտեմբերին ընդունած օրենքը կոչվում էր «Դպրոցի կատարելագործման մասին»:
- 7) Հայաստանի առաջին հանրապետությունում ընդունված օրենքով ստեղծված արդարադատության մարմին էր երդվյալ ատենակալների դատարանը:
- 8) Սոցիալ-դեմոկրատներին կարճ անվանում էին էսէռներ:

## **13. Գտնել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- 1) Բաքվում գտնվող հայկական զորամասերը լուծարելու մասին Բաթումի պայմանագրի կետերը չճանաչած և Ստեփան Շահումյանի գլխավորած ժողովրդական կոմիսարների իշխանության հետ ինքնապաշտպանություն կազմակերպած մարմինը Բաքվի Հայոց ազգային խորհուրդն էր:
- 2) Վրաց-հայկական կարճատև պատերազմից հետո Լոռին և Զավախքի հարավային մասը հայտարարվեցին «չեզոք գոտի»:
- 3) Ալեքսանդրապոլում բոլշևիկների ստեղծած ապստամբության ղեկավար մարմինը կոչվում էր Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտե (ՌՀԿ):
- 4) Ա. Խատիսյանի հրաժարականից հետո ստեղծված կառավարությունը հայտնի է «բյուրո-կառավարություն» անունով:
- 5) Թուրք-հայկական պատերազմի ժամանակ Լոռու չեզոք գոտում անգլիացի գեներալ-նահանգապետին հեռացնելուց հետո այդ երկրամասում հաստատված իշխանության մարմինը կոչվել է հայկական գեներալ-նահանգապետություն:
- 6) Մայիսյան ապստամբության ժամանակ բոլշևիկների ազդեցության տակ անցած գրահագնացքը կոչվում էր «Վարդան Մամիկոնյան»:
- 7) Սարգիս Կասյանի նախագահությամբ Բաքվում բոլշևիկների կազմավորած մարմինը, որը 1920 թ. նոյեմբերի 29-ին մտավ Հայաստան և երկիրը հռչակեց «խորհրդային սոցիալիստական հանրապետություն», կոչվում էր Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտե:

**14. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- ա. Փարիզի խաղաղության վեհաժողովին մասնակցելու մեկնած և արևմտահայերի շահերը ներկայացնող պատվիրակությունը կրում էր «Հայոց ազգային պատվիրակություն» անվանումը:
- բ. Արևմտահայերի 2-րդ համագումարի ընտրած Արևմտահայ գործադիր մարմնի՝ Հայաստանի կառավարությանը հասցեագրած դիմումում Առաջին հանրապետությունն անվանված է «Արարատյան Հանրապետություն»:
- գ. Փարիզում Պողոս Նուբարի նախաձեռնությամբ հրավիրված համահայկական համաժողովը հայտնի է «Հայոց ազգային խորհուրդ» անունով:
- դ. Մարաշում Սարգիս Ճեպեճյանի ղեկավարությամբ քեմալականների դեմ հայերի պաշտպանական մարտերը գլխավորող մարմինը կոչվում էր ինքնապաշտպանության բարձրագույն խորհուրդ:
- ե. Հայ-ռուսական երևանյան բանակցությունների ավարտին նախաստորագրված փաստաթուղթը կոչվում էր «Եզրափակիչ որոշման արձանագրություն»:
- զ. Մոսկվայում ստորագրված խորհրդա-քեմալական հակահայկական փաստաթուղթը կրում էր «Ռուս-թուրքական անկեղծ բարեկամության և սրտագին եղբայրության» պայմանագիր անվանումը:

- 1) ա, դ, զ                      2) գ, դ, զ                      3) բ, գ, ե                      4) ա, բ, ե

**15. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- ա. Կոմիտեերնի բարձրագույն խորհրդի նախաձեռնությամբ Մոսկվայում կայացած խորհրդաժողովը Արևելքի ժողովուրդների առաջին համագումարն էր:
- բ. Թուրքիայում ծավալվող քեմալական շարժման նպատակները պաշտոնական ձևակերպումներ ստացան «Թուրքիայի հանրապետության ազգային միություն» կոչվող փաստաթղթում:
- գ. Իտալիայի Սան Ռեմո քաղաքում Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագիծը մշակած մարմինը տերությունների Գերագույն խորհրդի խորհրդաժողովն էր:
- դ. Բեհաէդդին Շաքիրի անմիջական ղեկավարությամբ կազմավորված մարմինը կոչվել է «Հատուկ կազմակերպություն»:
- ե. Փարիզում Պողոս Նուբարի նախաձեռնությամբ հրավիրված ժողովը Հայոց ազգային համագումարն էր:
- զ. Հաճընում Պետրոս Սարաճյանի նախագահությամբ քեմալականների դեմ հայերի պաշտպանական մարտերը գլխավորող մարմինը կոչվում էր ինքնապաշտպանության բարձրագույն խորհուրդ:
- է. Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի նախագահ Վ. Լենինին ուղղված Քեմալի նամակում Արևմուտքի տերություններն ու Հայաստանն անվանվում են «ժողովրդավարական երկրներ»:

- 1) գ, դ, ե, զ                      2) ա, գ, ե, է                      3) դ, գ, է                      4) ա, բ, դ

**16. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- ա. «Թուրքական ազգային ուխտ» կոչվող փաստաթղթով Արևմտյան Հայաստանը և Կիլիկիան, Կարսը, Արդահանը և Բաթումը հռչակվում էին «բուն թուրքական տարածքներ»:
- բ. Արցախը Հայաստանի առաջին հանրապետության անբաժանելի մաս հռչակած մարմինը Արցախահայության 9-րդ համագումարն էր:
- գ. Հայ-ռուսական երևանյան բանակցությունների ավարտին նախաստորագրված փաստաթուղթը կոչվում էր «Եզրափակիչ որոշման արձանագրություն»:
- դ. Օ. Սիլինի զբաղեցրած պաշտոնը կոչվում էր ՀՀ-ում ՌՄԴԽՀ դեսպան:
- ե. Հայաստանի խորհրդայնացումից հետո երկրում ստեղծված գործադիր իշխանության նոր մարմինները կոչվում էին խորհուրդներ:
- զ. Հայաստանի Ռազմեղկոմի նախագահ Ս. Կասյանի 1920 թ. դեկտեմբերի 16-ի դեկրետով հիմնված մարմինը, որը պետք է նպաստեր երկրում խորհրդային կարգեր «ներդնելուն», կոչվեց ներքին գործերի ժողկոմատ:
- է. Սիմոն Վրացյանի գլխավորած ՀՀ վերջին կառավարության անդամների մի մասը համարվում էր «ռուսական կողմնորոշման ջատագով»:

- 1) բ, գ, է                      2) ա, բ, է                      3) դ, գ, է                      4) դ, ե, գ

**17. Ընտրել այն տերմիններն ու հասկացությունները, որոնք բնորոշ չեն եղել Նոր տնտեսական քաղաքականությանը.**

- 1) պարենմասնատրում
- 2) հացահատիկի և այլ մթերքների բռնագրավումներ
- 3) պարենհարկ
- 4) վարձու աշխատանք
- 5) շուկայական հարաբերություններ
- 6) ազատ առևտուր
- 7) գյուղատնտեսության կոլեկտիվացում

**18. Գտնել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- 1) Միակուսակցական համակարգի հաստատումը և եկեղեցու նկատմամբ անհանդուրժողական քաղաքականությունը խորհրդային ամբողջատիրական համակարգին բնորոշ գծերից են:
- 2) 1921 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով Հայաստանը հայտարարվում է «խորհրդային սոցիալիստական հանրապետություն»:
- 3) ԽՍՀՄ կառավարության կողմից 1936 թ. Հայաստան ուղարկված ստուգող հանձնաժողովը Հայաստանի ղեկավարության մոտեցումները գնահատեց որպես ազգայնամոլական:
- 4) Այն կազմակերպությունը, որին խորհրդային իշխանություններն օգտագործում էին պաշտոնական եկեղեցու դեմ պայքարում, կոչվում էր «Ազատ եղբայրության եկեղեցի» կամ «Նորացված եկեղեցի»:

- 5) Ի. Ստալինի մշակած «ՌՄԴԽՀ և անկախ հանրապետությունների փոխհարաբերությունների մասին բանաձևի նախագիծը» ստացավ «ինքնավարացման ծրագիր» անվանումը:
- 6) ՀՍԽՀ-ում ամենազանգվածային կազմակերպություններն էին Հայաստանի կոմունիստական երիտասարդական միությունը, արհեստակցական միությունները և պիոներական կոմունիստական կազմակերպությունը:
- 7) 1921 թ. փետրվարին Երևանում ստեղծված իշխանության նոր մարմինը կոչվում էր Հայաստանի փրկության կոմիտե:
- 8) Զանգվածային ձերբակալությունների և հանիրավի բռնությունների ենթարկված քաղաքացիներին անվանում էին «ժողովրդի թշնամիներ»:

### **19. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- 1) Յակով Զարոբյանի նախաձեռնությամբ ԽՄԿԿ կենտկոմ՝ ՀԿԿ կենտկոմի ուղարկած ծավալուն նամակը վերնագրված էր «1915 թ. հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյակի հետ կապված միջոցառումների մասին»:
- 2) Խորհրդային իրականությունն առանց ուժային միջոցների, գաղափարական ճանապարհով փոփոխելու պայքարի ուղին ընտրած մարդկանց կոչում էին իրավապաշտպաններ:
- 3) Խորհրդային Հայաստանում ձևավորված գաղտնի կազմակերպություններից «Հայկական երիտասարդական միություն»-ը հայտնի էր «Յոթ հայրենասերներ» անունով:
- 4) Օրենսդիր բարձրագույն մարմինը, որը 1988 թ. հունիսի 15-ին քննարկեց ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշումը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն էր:
- 5) 1989 թ. օգոստոսի 16-ին Ստեփանակերտի պետական թատրոնի շենքում տեղի ունեցած Լեոնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարում 80 հոգուց ընտրված մարմինը կոչվում էր Ազգային խորհուրդ:
- 6) 1956 թ. փետրվարի 14-ին Մոսկվայում բացված ԽՄԿԿ XX համագումարում Ն. Խրուշչովի զեկուցումը վերնագրված էր «Անհատի պաշտամունքի և նրա հետևանքների մասին»:
- 7) Հայաստանի Գերագույն խորհրդի 1990 թ. օգոստոսին ընդունած փաստաթուղթը կոչվում էր «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին»:
- 8) Հայաստանում 1966 թ. ապրիլի 24-ին ստեղծված նոր գաղտնի կազմակերպությունը կոչվում էր «Անկախ միացյալ կուսակցություն»:

### **20. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

- 1) Այն մարդիկ, ովքեր խորհրդային իշխանությունից պահանջում էին պահպանել օրենքները և ԽՍՀՄ Սահմանադրությունը և պայքարում էին մարդու իրավունքների պաշտպանության համար, կոչվում էին այլախոհներ:
- 2) 1989 թ. հունվարի 11-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության կողմից ԼՂԻՄ-ում ստեղծված կառավարման մարմինը կոչվում էր Հատուկ կառավարման կոմիտե:

- 3) 1989 թ. օգոստոսի 16-ին Ստեփանակերտի պետական թատրոնի շենքում տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարում 80 հոգուց ընտրված մարմինը կոչվում էր Ազգային ժողով:
- 4) Նոր Սահմանադրության նախագծի մշակման նպատակով 1990 թ. նոյեմբերի 15-ին ստեղծված մարմինը ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովն էր:
- 5) «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթղթով Հայաստանի բարձրագույն օրենսդիր մարմինը՝ Գերագույն խորհուրդը, վերանվանվում էր Ազգային խորհուրդ:
- 6) 1989 թ. նոյեմբերի 4-ին բացված համագումարում ընդունվեց ՀՀՇ՝ Հայ հեղափոխական շարժում կազմակերպության ծրագիրն ու կանոնադրությունը:
- 7) 1991 թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի պատգամավորների մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանում ընդունված որոշումը վերնագրված էր «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին»:
- 8) Մ. Գորբաչովի առաջարկությամբ 1991 թ. դեկտեմբերի 8-ին Բելոռուսիայի Բելովեժյան անտառում ԽՍՀՄ վերացումից հետո ստեղծվելիք նոր միությունը պետք է կոչվեր ԱՊՀ՝ Անկախ Պետությունների Համագործակցություն:

## **21. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- 1) 1945 թ. ապրիլին Սան Ֆրանցիսկոյում գումարվող Միավորված ազգերի կազմակերպության անդրանիկ կոնֆերանսին Հայկական հարցի լուծման խնդրանքով հուշագրեր ներկայացրած կազմակերպություններն էին Հայկական ազգային կոմիտեն և Ամերիկայի Հայկական ազգային խորհուրդը:
- 2) Երկրորդ աշխարհամարտից հետո սփյուռքահայության ներգաղթը Հայաստան կազմակերպելու համար հանրապետության կառավարությանն առընթեր կազմակերպված մարմինը կոչվում էր Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման կոմիտե:
- 3) Քարվաճառի ազատագրման գործողությունը ստացավ «Հարսանիք լեռներում» անվանումը:
- 4) ԱՄՆ-ում դաշնակցության ստեղծած Հայկական ազգային կոմիտեն նաև կոչվում է Հայ դատի հանձնախումբ:
- 5) Հայիեղկոմի 1921 թ. դեկտեմբերի 8-ի հրամանը հայտնի է «Պարենային մթերքների և այլ նյութերի հայտնաբերման մասին» անունով:
- 6) ՀԲԸՄ նշանակում է Հայկական բարեկամական ընկերակցությունների միություն:
- 7) Հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու նպատակով ՀՀ նախագահի նախաձեռնությունը միջազգային հանրության կողմից անվանվեց «ֆուտբոլային դիվանագիտություն»:

## **22. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- ա. Հայ ազգաբնակչության շահերը պաշտպանելու և ազգային հիմնախնդիրներին հետամուտ լինելու նպատակով ԱՄՆ-ում Հայ հեղափոխական դաշնակցության

կողմից ստեղծված կազմակերպությունը կոչվում է Հայկական ազգային կոմիտե կամ Հայ դատի հանձնախումբ:

- բ. «Այլախո» հասկացությունը խորհրդային երկրում ի հայտ եկավ 1960-ական թթ. և բնութագրում էր մարդկանց, ովքեր գաղափարական պայքար էին մղում խորհրդային իշխանության և մարքս-լենինյան գաղափարախոսության դեմ:
- գ. Խորհրդային երկրում կիրառված քաղաքական կուրսը, որի շնորհիվ երկրի համախառն արտադրանքի մեջ արդյունաբերական արտադրանքի ծավալը պետք է գերազանցեր գյուղատնտեսական արտադրանքի ծավալը, հայտնի է «ազատականացում» անունով:
- դ. Այն կազմակերպությունը, որին խորհրդային իշխանություններն օգտագործում էին պաշտոնական եկեղեցու դեմ պայքարում, կոչվում էր «Ազատ եղբայրության եկեղեցի»:
- ե. Շուշիում կայացած արցախահայության առաջին համագումարում երկրամասը կառավարելու համար կազմված մարմինը կոչվում էր Ղարաբաղի ժողովրդական կառավարություն:
- զ. Չանգվածային ձեռքակալությունների և հանիրավի բռնությունների ենթարկված քաղաքացիներին անվանում էին «ժողովրդի թշնամիներ»:
- է. Ի. Ստալինի մշակած «ՌՄԴԽՀ և անկախ հանրապետությունների փոխհարաբերությունների մասին բանաձևի նախագիծը» ստացավ «Ինքնավարացման ծրագիր» անվանումը:
- ը. Հայաստանում 1966 թ. ապրիլի 24-ին ստեղծված նոր գաղտնի կազմակերպությունը կոչվում էր «Անկախ միացյալ կուսակցություն»:

- 1) գ, դ, ը                      2) ե, գ, է                      3) բ, գ, ը                      4) ա, բ, ե

**23. Թվարկվածներից որո՞նք չեն բնորոշում նեպոլ.**

- ա. դրամական աշխատավարձի կիրառումը
- բ. ազատ առևտրի վերականգնումը
- գ. քաղաքի և գյուղի միջև ապրանքադրամական հարաբերությունների աշխուժացումը
- դ. պարենհարկի փոխարեն պարենմասնատրման կիրառումը
- ե. հարկի չափի որոշվելը մինչև ցանքսը և տարվա ընթացքում այն երկու անգամ փոփոխելը
- զ. գյուղատնտեսական մթերքների բռնագրավումների դադարեցումը
- է. մանր և միջին բոլոր ձեռնարկությունների պետականացումը

- 1) դ, ե, է                      2) բ, գ, ե                      3) ա, բ, գ                      4) դ, գ, է

**24. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- ա. Խորհրդային Հայաստանին և նրա սովյալ բնակչությանը արտաքին օգնության կազմակերպման գործում նշանակալից դեր կատարած, 1921 թ. սեպտեմբերին երևանում հիմնված մարմինը կոչվում էր Հայ օգնության ֆոնդ:
- բ. ԽՍՀՄ-ն արդյունաբերացնել նշանակում էր ստեղծել արդյունաբերական ճյուղեր, կառուցել գործարաններ, ֆաբրիկաներ, երկաթուղիներ, հասնել նրան, որ ԽՍՀՄ-ի տնտեսության մեջ իշխող դառնար արդյունաբերությունը:

- գ. 1919 թ. սեպտեմբերին ստեղծված Հայաստանի միավորված բուլշևիկյան կազմակերպությունների կենտրոնական ղեկավար մարմինը հայտնի էր «Հայաստանի կոմիտե» անունով:
- զ. Մենշևիկներն ու բուլշևիկները սոցիալ-դեմոկրատական ուղղության ներկայացուցիչներ էին:
- ը. Հայաստանի առաջին հանրապետությունում համայնքային ինքնավարությունները կոչվել են զեմստվոներ:
- ե. 2014 թ. մայիսին ՌԴ-ի, Բելոռուսի և Ղազախստանի կողմից հիմնած կառույցը կոչվում էր Եվրասիական տնտեսական միություն (ԵՏՄ):
- զ. «Հոչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթղթով Հայաստանի բարձրագույն օրենսդիր մարմինը՝ Գերագույն խորհուրդը, վերանվանվում էր Ազգային ժողով:
- է. Երկրորդ աշխարհամարտից հետո սփյուռքահայության ներգաղթը Հայաստան կազմակերպելու համար հանրապետության կառավարությանն առընթեր կազմակերպված մարմինը կոչվում էր Արտասահմանից ներգաղթող հայերին նպաստող հանձնաժողով:

- 1) ա, գ, ե                      2) գ, ե, զ                      3) բ, դ, ե                      4) ա, գ, է

**25. Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- ա. Ադանայում Կիլիկիայի ինքնավարության հռչակման նախօրյակին Միհրան Տամատյանը Հայ ազգային պատվիրակության Կիլիկիայի լիազոր ներկայացուցիչն էր:
- բ. 1945 թ. ապրիլին Սան Ֆրանցիսկոյում գումարվող Միավորված ազգերի կազմակերպության անդրանիկ կոնֆերանսին Հայկական հարցի լուծման խնդրանքով հուշագրեր ներկայացրած կազմակերպություններն էին Հայկական ազգային կոմիտեն և Ամերիկայի Հայկական ազգային խորհուրդը:
- գ. Հայ-ռուսական պայմանագրի նախագիծը 1920 թ. նոյեմբերի 4-ին Բաքվում քննարկված մարմինը Ադրբեջանի Ռազմահեղափոխական կոմիտեն էր:
- դ. Երևանում ստորագրված իշխանափոխության հայ-ռուսական համաձայնագրով Հայաստանը հայտարարվել է «Սոցիալիստական հտորհրդային անկախ Հանրապետություն»:
- ե. 1920 թ. դեկտեմբերի 8-ին Հայիեղկոմի հրապարակած հրամանը, որով երկրում ներդրվում էր նոր տնտեսական քաղաքականությունը, վերնագրված էր «Պարենային մթերքների և այլ նյութերի հայտնաբերման մասին»:
- զ. Սարգիս Կասյանի նախագահությամբ Բաքվում բուլշևիկների կազմավորած մարմինը, որը 1920 թ. նոյեմբերի 29-ին մտավ Հայաստան և երկիրը հռչակեց «խորհրդային սոցիալիստական հանրապետություն», կոչվում էր Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտե:
- է. Մ. Գորբաչովի առաջարկությամբ 1991 թ. դեկտեմբերի 8-ին Բելոռուսիայի Բելվեժյան անտառում ԽՍՀՄ վերացումից հետո ստեղծվելիք նոր միությունը պետք է կոչվեր ԱՊՀ՝ Անկախ Պետությունների Համագործակցություն:

ը. Միակուսակցական համակարգի հաստատումը և եկեղեցու նկատմամբ անհանդուրժողական քաղաքականությունը խորհրդային ամբողջատիրական համակարգին բնորոշ գծերից են:

- 1) ա, դ, զ                      2) գ, ե, է                      3) բ, դ, ե                      4) ա, բ, ը

**26. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

ա. ԽՍՀՄ-ում առաջնահերթ կարգով թեթև արդյունաբերական և սննդի ձեռնարկությունների ստեղծման քաղաքականությունը կոչվեց արդյունաբերացում:

բ. 1920-ական թթ. երկրորդ կեսից ԽՍՀՄ բարձրագույն դեկավարության գլխավոր խնդիրն էր սոցիալիզմի նյութատեխնիկական հիմքի ստեղծումը:

գ. Գյուղի կոլեկտիվացման ընթացքում իրենց աշխատանքի շնորհիվ կայուն տնտեսություն ստեղծած խավը հայտնի էր կուլակ անվանումով:

դ. 1920-ական թթ. ստեղծված գյուղացիական միացյալ տնտեսությունների ձևերից էին սովխոզները, արտելները, կոմունաները:

ե. Գյուղացիության մեծամասնությունը կազմող միջակ գյուղացուն ունեզրկման, ընտանիքով գյուղից վտարման քաղաքականությունը կոչվեց կուլակաթափություն:

զ. Ալեքսանդրապոլում 1920 թ. բոլշևիկների ստեղծած ապստամբության դեկավար մարմինը կոչվում էր Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտե (ՌՀԿ):

է. 1923 թ. նոյեմբերին Երևանում գումարված այն համաժողովը, որտեղ հնչակյանները հանդես եկան իրենց լուծարման մասին հայտարարությամբ, կոչվեց ինքնավերացման համագումար:

- 1) ա, գ, զ                      2) բ, ե, է                      3) բ, դ, զ                      4) ա, գ, է

**27. Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

ա. Հ. Քաջազնունու հրաժարականից հետո ստեղծված կառավարությունը հայտնի է «բյուրո-կառավարություն» անունով:

բ. Այն կազմակերպությունը, որին պաշտոնական եկեղեցու դեմ պայքարում օգտագործում էին խորհրդային իշխանությունները, կոչվում էր «Ազատ եկեղեցական եղբայրություն» կամ «Նոր եկեղեցի»:

գ. Հայ տրոցկիստների առաջին ելույթը հրապարակվել է «Երեքի դեկրետ» անունով:

դ. Հայ-ռուսական երևանյան բանակցությունների ավարտին նախաստորագրված փաստաթուղթը կոչվում էր «Եզրափակիչ որոշման արձանագրություն»:

ե. ՀՀ Սահմանադրության նախագծի մշակման նպատակով 1990 թ. նոյեմբերի 15-ին ստեղծված մարմինը կոչվում էր ՀՀ Ազգային ժողովի սահմանադրական հանձնաժողով:

զ. 2010 թ. ապրիլին տեղի ունեցած արցախադրբեջանական զինված ընդհարումը հայտնի է Քառորյա պատերազմ անունով:

է. Միջազգային պայմանագրերի չեղյալ հայտարարելը կոչվում է դենոնսացիա:

- 1) ա, գ, ե                      2) գ, ե, զ                      3) բ, դ, ե                      4) բ, դ, է

## 5. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

### 1. Որո՞նք են 1940–ական թթ. սփյուռքահայերի հայրենադարձության դադարեցման պատճառները.

- 1) խորհրդա–թուրքական հարաբերությունների բարելավումը
- 2) սառը պատերազմը
- 3) տնտեսական դժվարությունները
- 4) քաղաքացիություն ստանալու հետ կապված բարդությունները
- 5) ԽՍՀՄ ամբողջատիրական համակարգի նոր բացասական դրսևորումները
- 6) Խորհրդային Հայաստանի ժողովրդագրական վիճակի վատթարացումը
- 7) արաբա–հարայելական պատերազմը

### 2. Թվարկվածներից որո՞նք են 1918–1920 թթ. կրթական գործի կազմակերպման իրական հետևանքներ.

- 1) Հայաստանի խորհրդում դպրոցական հանձնաժողովի ստեղծումը
- 2) Դպրոցների կառավարման հանրային սկզբունքի կիրառումը
- 3) Դպրոցահասակ բոլոր երեխաների ընդգրկվելը դպրոցում
- 4) Հանրապետության տարածքում գործող նախկին պետական, եկեղեցական–ծխական և այլ տիպի դպրոցների ազատ գործելու հնարավորություն ստանալը
- 5) Մանկավարժական կադրեր պատրաստելու նպատակով մանկավարժական համալսարանի հիմնումը
- 6) Արտերկրից մեծ թվով ուսուցչական կադրեր հրավիրելը
- 7) Դպրոցական դասագրքերով ուսումնական հաստատությունների ապահովված լինելը

### 3. Թվարկվածներից որո՞նք գյուղատնտեսության կոլեկտիվացման հետևանք չեն.

- ա. 1930–ական թթ. վերջին Հայաստանում գոյություն ուներ 1000 կոլտնտեսություն:
- բ. Մենատնտես գյուղացիությունը վերափոխվեց կոլտնտեսային գյուղացիության:
- գ. ԽՍՀՄ–ը դարձավ հզոր արդյունաբերական երկիր:
- դ. Գյուղացիության մի մասը համալրեց քաղաքային բնակչության, բանվոր դասակարգի շարքերը:
- ե. Ծավալվեց նեպոլ, և զարգացան ապրանքադրամական, շուկայական հարաբերությունները:
- զ. Ձևավորվեց գյուղական մտավորականության խավ:
- է. Նյութական շահագրգռվածության սկզբունքի վրա հիմնված սոցիալիստական տնտեսաձևի առկայության պայմաններում բոլոր կոլտնտեսություններն արձանագրեցին տնտեսական բարձր ցուցանիշներ:

- 1) ա, բ, գ                      2) դ, ե, գ                      3) գ, ե, է                      4) բ, գ, է

**4. Թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտահայտում պատմական իրադարձությունների հետևանքները.**

- 1) Ռուսաստանի բոլշևիկյան վարչակարգի կողմից Ռուսաստանի նախկին կայսրության տարածքները սեփական ազդեցության ոլորտ վերադարձնելու նախաձեռնության իրականացման հետևանքը Անդրկովկասի խորհրդայնացումն էր:
- 2) Հայ-ռուսական հարաբերությունների կտրուկ սրման հետևանքը 1920 թ. օգոստոսի սկզբին Թիֆլիսում բանակցությունների վերսկսումն էր ՌՍԴԽՀ կառավարության և ՀՀ ներկայացուցիչների միջև:
- 3) Մայիսյան ապստամբության հետևանքը երկրի ներքին դրության կայունացումն էր:
- 4) Քենավա-խորհրդային մերձեցման հետևանքը Հայաստանի առաջին հանրապետության անկումն էր:
- 5) Մայիսյան ապստամբությունը հետևանք էր «Քարոզչության և գործողության խորհրդի» ծավալած գործունեության:
- 6) Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կենտգործկոմների ներկայացուցիչների լիազոր կոնֆերանսի հաստատած միութենական պայմանագրի հետևանքը Անդրկովկասի հանրապետությունների ինքնիշխանության ընդլայնումն էր:
- 7) Հայիեդկոմի «Պարենային մթերքների և այլ նյութերի հայտնաբերման մասին» հրամանի անմիջական հետևանքը Նոր տնտեսական քաղաքականության իրականացումն էր:
- 8) Փետրվարյան ապստամբության պարտության հետևանքը երկրում ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումն էր:

**5. Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական հետևանքներ.**

- ա. 1996 թ. սեպտեմբերի 22-ի նախագահական ընտրությունների հետևանքով ընդդիմադիր հիմնական ուժերը միավորվեցին ՀՀԾ-ի շուրջը:
- բ. Անկարայի պայմանագրի կնքման հետևանքով Ֆրանսիան Կիլիկիայի մանդատը հանձնեց Անգլիային:
- գ. ՀՀ ընդդիմադիր ուժերի միավորման հետևանքով 2008 թ. օգոստոսին ձևավորվեց ՀԱԿ-ը:
- դ. Սառը պատերազմի իրողության հետևանքը Երկրորդ աշխարհամարտից հետո սկսված զանգվածային հայրենադարձության ընդհատումն էր:
- ե. Նեպի կենսագործման հետևանքով իսպառ վերացավ ձեռնարկությունների տնտեսական ինքնուրույնությունը:
- զ. Գյուլատնտեսության կոլեկտիվացման հետևանքով Հայաստանում 1930-ական թթ. վերջին կար 1000 կոլտնտեսություն:
- է. Հայ-վրացական սահմանազատման համաձայնագրով Լոռին, բացառությամբ Հարավային Լոռու հայկական մի խումբ գյուղերի, միացվեց Խորհրդային Վրաստանին:

- 1) ա, դ, գ                      2) գ, դ, գ                      3) ա, բ, ե                      4) գ, ե, է

**6. Թվարկվածներից որո՞նք պատմական իրադարձությունների իրական հետևանքներ չեն.**

- ա. Նէպի սկզբնական շրջանում շուկայական հարաբերությունների աշխուժացման հետևանքով բնամթերային հարկաձևը փոխարինվեց դրամականով:
- բ. Մայիսյան ապստամբության հետևանքով Ջանգեզուրի երկրամասը մնաց ՀՍԽՀ կազմում:
- գ. Խորհրդային Հայաստանի արդյունաբերացման հետևանքով Ղափանը դարձավ տեքստիլ արդյունաբերության կենտրոն:
- դ. Փարիզի խաղաղության խորհրդաժողովում հայկական պատվիրակությունների ոչ միասնական գործողությունների հետևանքով չիրագործվեց Սևրի պայմանագիրը:
- ե. Գյուղատնտեսության կոլեկտիվացման հետևանքով մենատնտես գյուղացիությունը վերափոխվեց կոլտնտեսային գյուղացիության:
- զ. 1921 թ. Անկարայի պայմանագրի կնքման արդյունքում հայաթափված Կիլիկիան հանձնվեց Թուրքիային:
- է. 1920 թ. օգոստոսին Հայկական լեգեոնի լուծարման հետևանքով կիլիկիահայերը գրկվեցին թշնամուց պաշտպանվելու իրական հնարավորությունից:

- 1) ա, բ, ե                      2) գ, ե զ                      3) բ, գ, դ                      4) դ, գ, է

**7. Թվարկվածներից որո՞նք պատմական իրադարձությունների իրական պատճառներ չեն.**

- ա. 1920 թ. թուրք-հայկական պատերազմում Կարսի անկման պատճառը հայ զինվորների ու հրամանատարության բարոյահոգեբանական ու մարտական պատրաստվածության թուլությունն էր:
- բ. Բաթումի թուրք-անդրկովկասյան բանակցություններին գերմանական պատվիրակության մասնակցության պատճառը Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը չեղյալ հայտարարելն էր:
- գ. 1928–1940 թթ. բանվոր դասակարգի և ինժեներական անձնակազմի քանակական աճը բացատրվում էր պարենմասնատրման քաղաքականության կիրառմամբ:
- դ. Թուրքիային Սուրմալու գավառն անցնելու պատճառը Բաթումի հաշտության պայմանագրի կնքումն էր:
- ե. Արցախյան գոյամարտում Խոջալուի ազատագրման ժամանակ գլխավոր ճանապարհի կողմից միջանցք թողնելը բացատրվում էր հայ մարտիկների ցուցաբերած մարդասիրությամբ:
- զ. 1920 թ. աշնանը Լոռիում վրացական գեներալ-նահանգապետության ստեղծման պատճառը նոյեմբերի 13-ին ստորագրված հայ-վրացական համաձայնագիրն էր:
- է. Խորհրդային իշխանության տարիներին Հայ դատի ու պահանջատիրության հիմնախնդրով զբաղվում էր միայն Սփյուռքը, որովհետև Խորհրդային Հայաստանը գրկված էր ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունից:

- 1) բ, գ, ե, է                      2) ա, բ, դ, ե                      3) ա, գ, զ, է                      4) բ, գ, դ, զ

**8. Թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտահայտում պատմական իրադարձությունների հետևանքները.**

- 1) Խորհրդային Ադրբեջանի՝ հայկական տարածքները նվաճելու ծրագրին Խորհրդային Ռուսաստանի աջակցության հետևանքը, ի վերջո, Նախիջևանի անջատումն էր Հայաստանից:
- 2) «Ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության» պայմանագրի կնքման հետևանքը Վրաստանի խորհրդայնացումն էր:
- 3) 1919 թ. Լոռու չեզոք գոտի ստեղծելու անմիջական հետևանքը Շահալիում, Փամբակում վրացական զորքերի տեղակայումն էր:
- 4) Մայիսյան ապստամբության հետևանքը Հ. Օհանջանյանի բյուրո-կառավարության հրաժարականն էր:
- 5) 1918 թ. մայիսի 5-ին Տարոնի 500 կամավորների մարտական գործողությունների հետևանքը Արագածի լեռնազանգվածը քուրդ-թաթարներից մաքրելն էր:
- 6) 1918 թ. Հայաստանի՝ Վրաստանին ներկայացրած տարածքային պահանջների անմիջական հետևանքը հայ-վրացական պատերազմն էր:
- 7) Հայաստանում պարենմանատրման քաղաքականության կիրառման հետևանքը ժողովրդական լայն զանգվածների ելույթներն էին:

**9. Հայաստանում «Ռազմական կոմունիզմի» քաղաքականության կիրառման արդյունքում՝**

- 1) անցում կատարվեց կառավարման ժողովրդավարական եղանակին
- 2) բնամթերային հարկաձևը փոխարինվեց դրամական հարկաձևով
- 3) գործադրվեցին քաղաքական բռնություններ
- 4) երկրում աշխուժացան ապրանքադրամական հարաբերությունները
- 5) երկրից աքսորվեցին ավելի քան 1000 սպա և զինծառայող
- 6) պետությունը հրաժարվեց տնտեսական կյանքին միջամտելուց
- 7) իրականացվեցին բնակչության ունեցվածքի կամայական բռնագրավումներ
- 8) խորհրդային իշխանության և հասարակության միջև հաստատվեց համերաշխություն

**10. Թվարկվածներից որո՞նք ճիշտ չեն արտահայտում պատմական իրադարձությունների պատճառահետևանքային կապերը.**

- ա. 1965 թ. Մեծ եղեռնի տարելիցին նվիրված միջոցառումների անցկացումը հետևանք էր ազգային ինքնագիտակցության զարթոնքի:
- բ. Հայաստանում այլախոհական կազմակերպությունների հանդես գալը պայմանավորված էր ազգային զարթոնքով և կորցրած պատմական տարածքները վերադարձնելու գաղափարով:
- գ. Հայաստանում ազգային ինքնագիտակցության զարթոնքի պատճառը ԽՍՀՄ-ում ստալինիզմի վերացման գործընթացն էր:
- դ. Խորհրդային Հայաստանում բնակչության կենսամակարդակի աճի հետևանքը սփյուռքահայության մեծ հայրենադարձությունն էր:

ե. Խորհրդային Հայաստանում հայրենադարձության հետևանքը ՀԽՍՀ ժողովրդագրական իրավիճակի վատթարացումն էր:

զ. Նէպի սկզբնական շրջանում շուկայական հարաբերությունների աշխուժացման հետևանքը դրամական հարկաձևը բնամթերայինով փոխարինելն էր:

է. Ստալինի անձի պաշտամունքի ձևավորման հետևանքը ԽՍՀՄ-ի հաջողություններում և հաղթանակներում ժողովուրդների դերի գերազնահատումն էր:

1) ա, բ, գ, է

2) բ, գ, ե, զ

3) ա, դ, ե, է

4) դ, ե, գ, է

**11. Առանձնացնել Մեծ հայրենադարձությունից հետո հաջորդ տասնամյակներում սփյուռքահայերի ներգաղթի կրճատման պատճառները.**

1) վերադարձողների համար բնակության և նյութական-կենցաղային պայմանների անբավարարությունը

2) որոշ սփյուռքահայերի նկատմամբ կիրառված բռնաճնշումները

3) Խորհրդային Հայաստանի տնտեսության անմխիթար վիճակը

4) ԽՍՀՄ կառավարության՝ ներգաղթը արգելելու մասին որոշումը

5) ներգաղթողների նկատմամբ բնակչության խիստ բացասական վերաբերմունքը

6) Արևելքի երկրներում առկա կայուն քաղաքական իրադրությունը

7) հայրենադարձվել ցանկացողների փոքրաթվությունը

**12. Հայաստանի առաջին հանրապետության մշակութային-կրթական գործը զարգացնելու արդյունքում՝**

1) Ընդունվեց օրենք պետական հանրային մատենադարան (գրադարան) հիմնելու մասին:

2) Կառավարությունը հսկայական ֆինանսական միջոցներ տրամադրեց մշակութային-կրթական բոլոր հաստատություններին:

3) Հիմնվեցին մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններ:

4) Նոր Բայազետում և Դիլիջանում բացվեցին գյուղատնտեսական դպրոցներ, իսկ Ալեքսանդրապոլում՝ տեխնիկական միջնակարգ դպրոց:

5) Ստեղծվեց դպրոցական եռաստիճան համակարգ՝ տարրական, ութամյա և միջնակարգ:

6) 1919 թ. մայիսին Երևանում բացվեց հայ արվեստագետների ցուցահանդեսը:

7) 1920 թ. սեպտեմբերին կազմակերպվեց պետական թանգարան (ներկայիս Հայաստանի պատմության թանգարանը):

**13. Արցախյան հիմնախնդրի շուրջ տարվող աշխատանքների արդյունքում՝**

1) Արցախյան հիմնախնդիրը Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) քննարկման առարկա դարձավ 1992 թ. հունվարից, երբ ՀՀ-ն անդամակցեց ԵԱՀԿ-ին:

2) ԵԱՀԿ ձևաչափով ստեղծվել է արցախյան հիմնախնդրի լուծման հիմնական կառույցը՝ ԵԱՀԿ Մինսկի խումբը՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Գերմանիայի համանախագահությամբ:

- 3) 1995 թ. վերջին ԵԱՀԿ Լիսաբոնի գազաթաժնողովում փորձ արվեց Արցախյան հիմնախնդրի լուծումը կապել Ադրբեջանի տարածքային ամբողջականության հետ:
- 4) ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերով 1999 թ. սկսվեցին Հայաստանի և Ադրբեջանի նախագահների ուղղակի շփումները, որոնք շարունակվում են մինչև այժմ:
- 5) ՀՀ-ի համար խնդրի կարգավորման հիմքը շարունակում է մնալ պետությունների տարածքային ամբողջականության պահպանման իրավունքի ամրագրումը:
- 6) 1995 թ. մայիսի 12-ի զինադադարից հետո սկսվեց ԼՂՀ հակամարտության կարգավորման բանակցային փուլը:
- 7) 1993 թ. ընթացքում ԼՂՀ-ի խնդրով ՄԱԿ-ում ընդունվել է երեք բանաձև:

#### **14. Ինչ հետևանքներ ունեցան 1996 թ. նախագահական ընտրությունները.**

- 1) Ձայների բացարձակ մեծամասնությամբ նախագահ ընտրվեց «Հանրապետություն» միավորման առաջադրած թեկնածուն:
- 2) Ձայների մեծամասնությամբ նախագահ ընտրվեց «Միասնություն» դաշինքի առաջադրած թեկնածուն:
- 3) ՀՀ նախագահ ընտրվեց ԱԺՄ առաջադրած թեկնածուն:
- 4) Ընդդիմադիր ուժերի կողմից առաջ քաշվեց կրկնակի ընտրությունների պահանջը:
- 5) Երկրում խորացավ քաղաքական ճգնաժամը:
- 6) ՀՅԴ-ն դադարեցրեց ընդդիմադիր պայքարը և սատարեց ընտրված ՀՀ նախագահին:
- 7) Ընդդիմադիր ուժերի ղեկավարությամբ սկսվեցին հանրահավաքներ ու ցույցեր:

#### **15. Թվարկվածներից որոնք են արդի կրթամշակութային կյանքի իրական արդյունքներ.**

- 1) Սփյուռքահայ նկարչուհի Սոնիա Պալասանյանի նախաձեռնությամբ 1993 թ. Երևանում բացվեց Նորարար փորձառական արվեստի կենտրոնը (ՆՓԱԿ)՝ սեփական պատկերասրահով:
- 2) Հայաստանում իր գործունեությունը վերսկսեց աշխարհահռչակ դիրիժոր Օհան Դուրյանը:
- 3) Գևորգ Գևորգյանը ստեղծեց Գարեգին Նժդեհին նվիրված հուշահամալիրը Կապանում:
- 4) Լորիս Ճգնավորյանը 2001 թ. ստանձնեց Հայաստանի ֆիլիարմոնիկ նվագախմբի ղեկավարությունը:
- 5) Գեղարվեստական կյանքում որոշ աշխուժություն մտցրեց «Մկրտչյան» մասնավոր պատկերասրահը:
- 6) Երևանում կանգնեցվել է Արա Շիրազի «Նովիաննես Բաղրամյան» ձիարձանը:
- 7) 1990-ական թթ. ևս, ինչպես խորհրդային շրջանում, հայ կերպարվեստի առաջատար ճյուղը դարձավ դիմանկարը:

## 6. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### 6-1. Ընտրովի և կարճ (ժամանակագրական դասավորության խախտմամբ) պատասխանով առաջադրանքներ

#### 1. Դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Բ. Լեգրանի գլխավորած պատվիրակության ժամանումը Երևան
- բ. Ս. Վրացյանի ընտրվելը ՀՀ վարչապետ
- գ. ՀՀ խորհրդարանի կողմից Միացյալ Հայաստանի գաղափարին հավանություն տալը
- դ. Բաքվում հրավիրված Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը
- ե. թուրք-հայկական պատերազմի սկիզբը
- զ. Ալեքսանդրապոլի թուրք-հայկական հաշտության պայմանագրի կնքումը
- է. Սան Ռեմոյի կոնֆերանսի սկիզբը
- ը. հայ-ռուսական համաձայնագրի կնքումը Թիֆլիսում
- թ. Ս. Կասյանի գլխավորած ՀՌՀԿ-ի մուտքը Հայաստան
- ժ. իշխանափոխության մասին հայ-ռուսական համաձայնագրի ստորագրումը Երևանում

1) է, ը, դ, գ, թ, բ, ե, ա, գ, ժ

3) է, գ, ը, ե, դ, բ, ա, ժ, թ, գ

2) գ, է, ը, դ, ե, ա, բ, թ, ժ, գ

4) է, ը, գ, դ, ե, ա, բ, թ, գ, ժ

#### 2. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծումը
- բ. Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետության հռչակումը
- գ. նեպի քաղաքականության սկիզբը Հայաստանում
- դ. գյուղմիասնարկի կիրառումը
- ե. ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումը Հայաստանում
- զ. Անդրկովկասյան Սեյմի լուծարումը
- է. Հայրենիքի փրկության կոմիտեի ստեղծումը Ս. Վրացյանի գլխավորությամբ
- ը. Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության հռչակումը
- թ. Հայաստանի խորհրդայնացումը

1) գ, ա, ը, թ, գ, բ, դ, ե, է

3) բ, գ, ա, թ, դ, ը, ե, գ, է

2) ա, գ, ը, բ, թ, է, ե, գ, դ

4) ա, ը, գ, բ, թ, ե, է, գ, դ

#### 3. Դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Այնթապի ինքնապաշտպանության սկիզբը Ներսես Թավուզճյանի գլխավորությամբ
- բ. Հայաստանի Հանրապետության փաստացի ճանաչումը ԱՄՆ-ի կողմից
- գ. Ալեքսանդրապոլից համալսարանի փոխադրվելը Երևան



ե. թուրքական բանակի հեռանալը Լոռու, Ախալքալաքի և Ախալցխայի գավառներից  
զ. Հայաստանի խորհրդի անդրանիկ նիստի գումարումը  
է. արցախահայության առաջին համագումարի հրավիրումը

- 1) ա, գ, է, զ, դ, ե, բ  
2) գ, ա, է, դ, բ, զ, ե  
3) դ, է, ա, գ, բ, գ, ե  
4) գ, ա, դ, է, զ, ե, բ

**7. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից որն է տեղի ունեցել չորրորդը.**

ա) Հայիեդկոմի կողմից Հայաստանում պարենհարկ մտցնելը  
բ) Անդրդաշնության (ԱԽՍՀԴՄ) ստեղծումը  
գ) Վրաստանի խորհրդայնացումը  
դ) Լեռնային Ղարաբաղի՝ ինքնավար մարզի կարգավիճակ ստանալը  
ե) հայ-վրացական սահմանազատման մասին վերջնական համաձայնագրի ստորագրումը Թիֆլիսում  
զ) Կարսի պայմանագրի կնքումը

- 1) բ  
2) գ  
3) ե  
4) դ

**8. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից որն է տեղի ունեցել հինգերորդը.**

ա) Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեգյանի ընտրվելը կաթողիկոս  
բ) Ստալինի «Մեծ բեկման տարին» հոդվածի հրապարակումը  
գ) Հայաստանում գյուղացիության ճնշող մեծամասնության անդամագրվելը կոլտնտեսություններին  
դ) «Նոր եկեղեցի» կազմակերպության պառակտիչ գործունեության դատապարտումը Հայոց եկեղեցու Գերագույն հոգևոր խորհրդի կողմից  
ե) Դաշնակցության երիտասարդական միության «ինքնավերացման» համագումարը  
զ) ՀԿ(բ)Կ կենտկոմի որոշումը Ս. Էջմիածնի վանքը փակելու, կաթողիկոսությունը վերացնելու մասին

- 1) ա  
2) գ  
3) զ  
4) բ

**9. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից որն է տեղի ունեցել վեցերորդը.**

ա) մեծ տերությունների ղեկավարների Պոտսդամի կոնֆերանսը  
բ) Ամերիկայի Հայկական ազգային կոնգրեսի նախաձեռնությամբ Նյու Յորքում կայացած Հայկական համաշխարհային կոնգրեսը  
գ) հայկական Թամանյան դիվիզիայի կազմացրվելը  
դ) Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) անդրանիկ կոնֆերանսը  
ե) Հյուսիսատլանտյան դաշինքի ստեղծումը  
զ) խորհրդային կառավարության պաշտոնական հայտարարությունը «Թուրքիայից ոչ մի տարածքային պահանջ» չունենալու մասին

- 1) գ  
2) ե  
3) բ  
4) զ

**10. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից որն է տեղի ունեցել հինգերորդը.**

- ա) Էջմիածնում մշակութային-պատմական ինստիտուտի հիմնումը
  - բ) Հովհաննես Աղամյանի կողմից եռագույն հեռուստատեսության և լուսահեռագրության սարքի ստեղծումն ու ցուցադրումը
  - գ) Կիլիկիայի հայաթափման փաստացի ավարտը
  - դ) Հայաստանում ՀՕԿ-ի և ՀԲԸՄ-ի գործունեության արգելումը
  - ե) Լոզանի կոնֆերանսը
  - զ) Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կազմակերպումը
- 1) գ                      2) բ                      3) դ                      4) ե

**11. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից որն է տեղի ունեցել չորրորդը.**

- ա) Ասքանազ Մռավյանի գործուղվելը Ղարաբաղ որպես արտակարգ կոմիսար
  - բ) Անկարայի ֆրանս-թուրքական պայմանագրի կնքումը
  - գ) Հայիեղկոմի դեկրետը Փետրվարյան ապստամբության բոլոր մասնակիցներին, ներառյալ ղեկավարներին, համաներում շնորհելու մասին
  - դ) ԽՍՀՄ-ի կազմավորումը
  - ե) Համազանգեզուրյան 2-րդ համագումարը
  - զ) հայ-վրացական սահմանազատման մասին վերջնական համաձայնագրի ստորագրումը
- 1) ա                      2) ե                      3) գ                      4) բ

**12. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից որն է տեղի ունեցել երրորդը.**

- ա) պատանի հանդիսատեսի թատրոնի բացումը
  - բ) հայկական կինեմատոգրաֆիայի առաջնեկի՝ «Նամուսի» ցուցադրումը
  - գ) մշակութային-պատմական ինստիտուտի վերափոխվելը Գիտության և արվեստի ինստիտուտի
  - դ) Հայաստանի խորհրդային կերպարվեստագետների միության կազմակերպումը
  - ե) խորհրդային իշխանությունների հատուկ որոշումով Հայոց եղեռնի օրը՝ ապրիլի 24-ը, եկեղեցու կողմից նշելն արգելելը
  - զ) Ամո Խարազյանի ղեկավարությամբ պետական շրջիկ թատրոնի կազմակերպումը
- 1) ե                      2) բ                      3) գ                      4) ա

**13. Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից որն է տեղի ունեցել չորրորդը.**

- ա) ԽՍՀՄ-ի փլուզումը, ԱՊՀ-ի ստեղծումը
- բ) ՀՀ-ում նախագահական առաջին ընտրությունների անցկացումը
- գ) Հայաստանի անկախության ճանաչումը Թուրքիայի կողմից առանց դիվանագիտական հարաբերությունների հաստատման

- դ) ՀՀ խորհրդարանի ընդունած օրենքը հանրապետությունում բազմակուսակցական համակարգ ստեղծելու մասին
  - ե) Հայոց համազգային շարժման 1-ին համագումարը
  - զ) ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովի ստեղծումը
- 1) դ                                      2) բ                                      3) ա                                      4) գ

**14. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա) Նվեր Սաֆարյանի նշանակվելը Թամանյան դիվիզիայի հրամանատար
  - բ) ԽՄԿԿ XX համագումարը
  - գ) խորհրդա-գերմանական չհարձակման պայմանագրի ստորագրումը
  - դ) Ազգային միացյալ կուսակցության (ԱՄԿ) ստեղծումը
  - ե) Արկադի Վոլսկոյ նշանակվելը Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ
  - զ) Եվրախորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության դատապարտումը
  - է) ՀՀ սահմանադրական առաջին փոփոխությունների հաստատումը համաժողովրդական հանրաքվեի միջոցով
  - ը) Ամերիկայի Հայկական ազգային խորհրդի նախաձեռնությամբ Նյու Յորքում Հայկական համաշխարհային կոնգրեսի կայանալը
  - թ) Հայաստանում կուսակցությունների վերաբերյալ օրենքը խախտելու պատճառաբանությամբ դաշնակցության գործունեության կասեցումը
  - ժ) Հայկական հարցով ՀՀ նախկին վարչապետ Հ. Օհանջանյանի դիմումը Ստալինին, Թրումանին, Չերչիլին
- 1) ա, ժ, գ, ը, բ, գ, դ, ե, է, թ                                      3) գ, ա, ժ, ը, դ, բ, ե, գ, թ, է  
 2) գ, ա, ժ, ը, բ, դ, գ, ե, թ, է                                      4) գ, ժ, ա, դ, ը, բ, գ, ե, է, թ

**15. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա) Կարապետ Սիմոնյանին ԽՍՀՄ հերոսի կոչմանն արժանացնելը
  - բ) Նելսոն Ստեփանյանի զոհվելը
  - գ) Հայաստանի Ժողկոմխորհի նախկին նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանի ողբերգական մահը
  - դ) ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի հրամանով 390-րդ դիվիզիայի կազմացումը
  - ե) կաթողիկոս Խորեն Մուրադբեգյանին խեղդամահ անելը
  - զ) Լազր Չափչափյանին ԽՍՀՄ հերոսի կոչում շնորհելը
  - է) Խորեն Մուրադբեգյանի ընտրվելը կաթողիկոս
  - ը) մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն Ներսիկ Ստեփանյանի ձերբակալությունը
  - թ) Թիֆլիսում Աղասի Խանջյանի սպանությունը
  - ժ) Հայրենական մեծ պատերազմի սկիզբը
- 1) թ, է, գ, ը, ե, ժ, ա, գ, բ, դ                                      3) է, ը, թ, գ, ե, ա, ժ, դ, գ, բ  
 2) ը, է, թ, ե, գ, ա, ժ, գ, դ, բ                                      4) թ, ը, է, գ, ե, ժ, դ, ա, գ, բ









- 4) «Կուլցո» («Օղակ») ռազմական գործողության իրականացումը
- 5) ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից պետական դրոշի հաստատումը
- 6) ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովի ստեղծումը

**28. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Հայաստանի առաջին հանրապետության զինանշանի մասին օրենքի հաստատումը
- 2) Կապանում և Սիսիանում Պողոս Տեր-Դավթյանի գլխավորած հակախորհրդային նոր ապստամբությունները
- 3) Հաճընի պաշարման սկիզբը քեմալական զորքերի կողմից
- 4) Հայ-թուրքական սահմանագծի վերաբերյալ ԱՄՆ նախագահ Վիլսոնի իրավարար որոշման հայտնումը
- 5) Հայիեղկոմի՝ «Պարենային մթերքների և այլ նյութերի հայտնաբերման մասին» հրամանի հրապարակումը
- 6) Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) հիմնումը
- 7) Երևանում հայ-ռուսական համաձայնագրի ստորագրումը
- 8) Հայ ժողովրդի անունից Ա. Մյասնիկյանի շնորհակալական բաց նամակ ուղղելը ԱՄՆ նախագահ Ու. Հարդինգին
- 9) ԽՍՀՄ-ի կազմավորումը

**29. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) «Քարոզչության և գործողության խորհրդի» կողմից բանաձև-փաստաթղթի մշակումն ու ընդունումը
- 2) հայ-վրացական սահմանագատման մասին վերջնական համաձայնագրի ստորագրումը Թիֆլիսում
- 3) Հայաստանի առաջին հանրապետությունում Հայաստանի հնագիտական քարտեզ կազմելու նպատակով գիտական մեծ արշավախումբ կազմակերպելը
- 4) Լոզանի կոնֆերանսի սկիզբը
- 5) Լեռնային Ղարաբաղին ինքնավար մարզի կարգավիճակ տրամադրելը
- 6) դաշնակցության «ինքնավերացման» համագումարը
- 7) Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարի հրավիրումը Բաքվում

**30. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Հովհաննես Ադամյանի կողմից եռագույն հեռուստատեսության և լուսահեռագրության սարքի ստեղծումն ու ցուցադրումը
- 2) խորհրդային իշխանությունների հատուկ որոշումով Հայոց եղեռնի օրը՝ ապրիլի 24-ը, Հայ եկեղեցու կողմից նշելն արգելելը
- 3) մշակութային-պատմական ինստիտուտի հիմնումը Էջմիածնում
- 4) Ամո Խարազյանի ղեկավարությամբ պետական շրջիկ թատրոնի կազմակերպումը

- 5) նէպից հրաժարվելու հայտարարումը խորհրդային երկրում
- 6) Հայաստանի ճարտարապետների միության ստեղծումը
- 7) Հայաստանում լեռնահրաձգային 76–րդ դիվիզիայի կազմավորումը
- 8) Թիֆլիսում Աղասի Խանջյանի սպանությունը
- 9) 409–րդ հրաձգային դիվիզիայի կազմացումը

**31. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) խորհրդա–թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի դադարեցումը ԽՍՀՄ կառավարության կողմից
- 2) ՄԱԿ–ում Կիպրոսի արտգործնախարար Կիպրիանուի կոչ անելը՝ քննարկելու Հայկական հարցը
- 3) Ազգային միացյալ կուսակցության (ԱՄԿ) ստեղծումը
- 4) Երևանի Լենինի հրապարակի (Հանրապետության հրապարակի) ճարտարապետական համալիրի կառուցման ավարտը
- 5) գիտությունների ակադեմիայի նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի ստեղծումը
- 6) «Ղարաբաղ» կոմիտեի ստեղծումը
- 7) Հայաստանի անկախության ճանաչումը Թուրքիայի կողմից առանց դիվանագիտական հարաբերությունների հաստատման
- 8) ԱՊՀ–ի ստեղծումը

**32. Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Թամանյան դիվիզիայի կազմացումը
- 2) Ուրուզլայի խորհրդարանի հանձնարարական տալը իր կառավարությանը՝ Հայկական հարցը ՄԱԿ–ի քննարկմանը ներկայացնելու մասին
- 3) ավիացիայի մարշալ Սերգեյ Խուոյակովի գնդակահարությունը
- 4) «Հայկական ԽՍՀ–ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» համատեղ որոշման ընդունումը
- 5) ՀՀ–ում առաջին նախագահական ընտրությունների անցկացումը
- 6) Հայաստանի անկախության հռչակագրի ընդունումը
- 7) ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովի ստեղծումը
- 8) ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը

**33. Թվարկվածներից որոնք են խախտում պայմանագրերի տրված շարքի ստորագրման ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Գեորգիևսկի դաշնագրի կնքումը
- 2) Գյուլիստանի պայմանագրի կնքումը
- 3) Թուրքմենչայի պայմանագրի կնքումը
- 4) Ադրիանուպոլսի պայմանագրի կնքումը
- 5) Բուխարեստի պայմանագրի կնքումը
- 6) Բաթումի պայմանագրի կնքումը

- 7) Մոսկվայի պայմանագրի կնքումը
- 8) Կարսի պայմանագրի կնքումը
- 9) Սևրի պայմանագրի կնքումը

**34. Թվարկվածներից որոնք են խախտում ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Հայաստանի անդամակցելը ԵԱՀԿ-ին
- 2) ՀՀ ՄԱԿ-ի լիիրավ անդամ դառնալը
- 3) Քառօրյա պատերազմը
- 4) Լորիս Ճգնավորյանի կողմից Գյումրիի մշակութային կենտրոնի հիմնումը
- 5) Քարվաճառի (Քելբաջար) շրջանի ազատագրումը
- 6) Հորադիզի շրջանի ազատագրումը
- 7) Նորարարական փորձառական արվեստի կենտրոնի բացումը Երևանում
- 8) ՀՀ լիիրավ անդամակցությունը Եվրոպայի խորհրդին (ԵԽ)
- 9) ՀՀ լիիրավ անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը

**35. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի ընդունումը
- բ. խորհրդա-թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի դենոնսացիան
- գ. Հյուսիսատլանտյան դաշինքի ստեղծումը
- դ. «Տրանսիլվանիա» շոգենավով հայրենադարձների առաջին խմբի դուրս գալը Բեյրութի նավահանգստից
- ե. ԽՍՀՄ կառավարության որոշումը սփյուռքահայերի ներգաղթը դադարեցնելու մասին

- 1) բ, դ, ե, ա, գ      2) բ, դ, ա, ե, գ      3) բ, դ, գ, ե, ա      4) դ, բ, ե, ա, գ

**36. Տրված իրադարձություններից որն է տեղի ունեցել յոթերորդը ըստ ժամանակագրական հաջորդականության.**

- ա. Բեհաէդդին Շաքիրի և Ջեմալ Ազմի մահապատիժը
- բ. Էնվերի սպանությունը
- գ. Քեմալական զորքերի վերջնականապես հեռանալը Ալեքսանդրապոլից
- դ. Նազըմի մահապատիժը
- ե. ԽՍՀՄ-ի կազմավորումը
- զ. ԱԽՍՀՄ-ի ստեղծումը
- է. պարենհարկի մտցվելը Խորհրդային Հայաստանում
- ը. Սայիդ Հալիմի սպանությունը
- թ. Սևրի պայմանագրի կնքումը
- ժ. Անկարայի ֆրանս-թուրքական պայմանագրի կնքումը

- 1) ե      2) բ      3) գ      4) ա

**37. Տրված իրադարձություններից որն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Թալեաթի մահապատիժը
- 2) Ջեմալ Ազմիի մահապատիժը
- 3) Էնվերի սպանությունը
- 4) Անդրկովկասյան խորհուրդների առաջին համագումարը
- 5) Սայիդ Հալիմի սպանությունը
- 6) Նազըմի մահապատիժը

**6-II. Կարճ (վանդակավոր) պատասխանով առաջադրանքներ**

**1. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) պետական լեզվի մասին օրենքի ընդունումը Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի կողմից
- 2) ՀՀ տարածքի բաժանումը վարչական չորս նահանգների
- 3) Շարուր-Նախիջևանը ՀՀ-ին հանձնելու մասին անգլիացի գեներալ Դևիի և Դրոյի կողմից հրամանի ստորագրումը
- 4) Հայաստանի առաջին հանրապետության դիվանագիտական առաքելության հիմնումը Վրաստանի Հանրապետությունում
- 5) զինանշանի մասին օրենքի ընդունումը Հայաստանի առաջին հանրապետությունում
- 6) Թիֆլիսում Անտանտի ներկայացուցիչների մասնակցությամբ հայ-վրացական հաշտության կոնֆերանսի հրավիրումը

**2. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Սևանա լճի վրա «Աշոտ Երկաթ» ռազմանավի գործարկումը
- 2) ԱՄՆ-ից առաջին օգնության ստանալը Հայաստանի առաջին հանրապետությունում
- 3) Հայաստանի առաջին հանրապետության զինանշանի մասին օրենքի հաստատումը
- 4) Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների՝ Երևանում հրավիրված առաջին կոնֆերանսը
- 5) Առանձին հայկական կորպուսի վերակազմավորումը դիվիզիայի
- 6) ՀՅԴ-ի 9-րդ ընդհանուր ժողովի գումարումը

**3. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) էսէռների հետ ՀՅԴ-ի կռիվից իրեն կառավարություն կազմելը
- 2) Արևմտահայերի 2-րդ համագումարը Երևանում
- 3) Լոռուց, Ախալքալաքի և Ախալցխայի գավառներից թուրքական զորքերի հեռանալը
- 4) Ալեքսանդր Խատիսյանի գլխավորած կառավարության հրաժարականը

- 5) Հայկական ուժերի առաջնալը դեպի Հյուսիսային Լոռի և մինչև Բոլնիս-Խաչեն ու Շուլավեր հասնելը
- 6) Հայ ժողովրդական կուսակցության 2-րդ համագումարը

**4. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Երևանում հայ-ռուսական համաձայնագրի ստորագրումը
- 2) «Սպարտակ» երիտասարդական կազմակերպության ստեղծումը
- 3) Արցախահայության 1-ին համագումարը Շուշիում
- 4) «Լոռու չեզոք գոտի» ժամանակավորապես վրացական զորքեր մտցնելու մասին Թիֆլիսում հայ-վրացական համաձայնագրի ստորագրումը
- 5) Արարայի ճակատամարտը
- 6) ռազմական գործողությունները դադարեցնելու վերաբերյալ ՌՍԴԽՀ կառավարության և ՀՀ-ի միջև Թիֆլիսում համաձայնագրի ստորագրումը

**5. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Գ. Նժդեհի ուժերի հաղթանակը Նուրի փաշայի զորքերի նկատմամբ Որոտանի կիրճում
- 2) Կապանում և Սիսիանում Պողոս Տեր-Դավթյանի գլխավորությամբ հակախորհրդային նոր ապստամբությունները
- 3) «Ղարաբաղի ժողովրդական կառավարության» կազմումը
- 4) Ֆրանսիական իշխանությունների կողմից Հայկական լեգեոնի լուծարումը
- 5) հայ-վրացական կարճատև պատերազմի սկիզբը
- 6) թուրքական զորքերի՝ դեպի Բաքու ռազմարշավի սկսվելը

**6. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) թուրք-ադրբեջանցի հրոսակների կողմից Շուշի քաղաքի հայկական թաղամասերի հրկիզումը
- 2) Փարիզում դաշնակից տերությունների Խաղաղության խորհրդաժողովի սկիզբը
- 3) Գ. Նժդեհի ուժերի կողմից Գորիսի ազատագրումը բուլշևիկյան զորքերից
- 4) «Թուրքական ազգային ուխտի» ընդունումը քեմալական խորհրդարանի կողմից
- 5) Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի հրավիրումը Բաքվում
- 6) Հայաստանի կոմիտեի (Արմենկոմ) ստեղծումը

**7. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Սան Ռեմոյի կոնֆերանսի ավարտը
- 2) համալսարանի փոխադրվելը Ալեքսանդրապոլից Երևան
- 3) հայ-թուրքական սահմանագծի վերաբերյալ ԱՄՆ նախագահ Վիլսոնի իրավարար որոշման հայտնումը
- 4) Ա. Խատիսյանի կառավարության հրաժարականը
- 5) Արցախահայության 9-րդ համագումարը
- 6) Արսեն Շահնազյանի Գորիս ժամանելը և գեներալ-կոմիսարի պաշտոնն ստանձնելը

**8. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) «Քարոզչության և գործողության խորհրդի» կողմից հակահայ բանաձև-փաստաթղթի ընդունումը
- 2) Փարիզում հայկական պահանջների համատեղ հուշագրի ստորագրումը
- 3) Այնթափի պաշարման սկիզբը քեմալական զորքերի կողմից
- 4) համալսարանի հանդիսավոր բացումը Ալեքսանդրապոլում
- 5) ՀՍԽՀ Ռազմահեղափոխական կոմիտեի ժամանումը Երևան
- 6) խորհրդային զորքերի կողմից Ղարաբաղի, Ջանգեզուրի և Նախիջևանի զինագրավումը

**9. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Անկարայում ֆրանս-թուրքական զինադադարի ստորագրումը
- 2) ՀՅԴ բոլոր կոմիտեների և կազմակերպությունների ղեկավարներին, նախկին կառավարության անդամներին ձերբակալելու և մեկուսացնելու մասին Հայկոմկուսի պլենումի որոշման ընդունումը
- 3) Երևանում հայ-ռուսական համաձայնագրի ստորագրումը
- 4) Հայիեղկոմի՝ «Պարենային մթերքների և այլ նյութերի հայտնաբերման մասին» հրամանի հրապարակումը
- 5) Հայ-վրացական սահմանազատման մասին վերջնական համաձայնագրի ստորագրումը Թիֆլիսում
- 6) Բորիս Լեգրանի գլխավորած պատվիրակության ժամանումը Երևան

**10. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) քեմալականների անակնկալ ներխուժումը հայաբնակ Մարաշ
- 2) Կիլիկիայի ինքնավարության հռչակումը Ֆրանսիայի հովանավորության ներքո
- 3) Անկարայում ֆրանս-թուրքական պայմանագրի կնքումը
- 4) Կիլիկիայի վերջնական հայաթափումը
- 5) «Եզրափակիչ որոշման արձանագրության» նախաստորագրումը
- 6) Արտակարգ հանձնաժողովի (Չեկա) հիմնումը ՀՍԽՀ-ում

**11. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) «Լեռնահայաստանի» հռչակումը
- 2) Խորհրդային Հայաստանում պարենհարկ մտցնելը
- 3) հայ ժողովրդի անունից Ա. Մյասնիկյանի շնորհակալական բաց նամակ ուղղելը ԱՄՆ նախագահ Ու. Հարդինգին
- 4) Հայիեղկոմի վերակազմավորվելը ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի
- 5) Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարի հրավիրումը Բաքվում
- 6) Երևանում հայ-ռուսական համաձայնագրի ստորագրումը

**12. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Վրաստանի խորհրդայնացման ավարտը
- 2) Հայրենիքի փրկության կոմիտեի ստեղծումը Սիմոն Վրացյանի նախագահությամբ

- 3) նէպին անցման սկիզբը Հայաստանում
- 4) Անկարայում ֆրանս-թուրքական զինադադարի ստորագրումը
- 5) գյուղմիասնարկի շրջանառության մեջ մտնելը Հայաստանում
- 6) «Լոռու չեզոք գոտում» ապստամբության սկիզբը

**13. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Լենինի հանդես գալը Անդրկովկասի «կոմունիստ ընկերներին» ուղղված նամակ-հրահանգով
- 2) «Նոր եկեղեցի» կազմակերպության պառակտիչ գործունեության դատապարտումը Հայոց եկեղեցու Գերագույն հոգևոր խորհրդի կողմից
- 3) դաշնակցության երիտասարդական միության «ինքնավերացման» համագումարը
- 4) Լեոնային Ղարաբաղին ինքնավար մարզի կարգավիճակ տրամադրելը
- 5) հայ կինեմատոգրաֆիայի առաջնեկ կինոնկարի ցուցադրումը
- 6) Փետրվարյան ապստամբության բոլոր մասնակիցներին՝ ներառյալ ղեկավարներին, համաներում շնորհելու մասին Հայիեդկոմի դեկրետի ընդունումը

**14. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Ղարաբաղը Ադրբեջանին բռնակցելու որոշման դեմ ՀԿ(Բ)Կ կենտկոմի բողոքելը
- 2) ԽՍՀՄ-ի ստեղծումը
- 3) Համազանգեզուրյան առաջին համագումարը
- 4) ՀՅԴ «ինքնավերացման» համագումարը
- 5) Ղարաբաղում Թևանի (Ստեփանյան) գլխավորած ապստամբության ճնշումը
- 6) Ս. Էջմիածնի վանքը փակելու, կաթողիկոսությունը վերացնելու մասին ՀԿ(Բ)Կ կենտկոմի որոշման ընդունումը

**15. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Գևորգ Ե կաթողիկոսի մահը
- 2) Ստալինի «Մեծ բեկման տարին» հոդվածի հրապարակումը
- 3) ԽՍՀՄ տարածքում Հնչակյան կուսակցության գործունեության դադարեցումը
- 4) Երևանում արհեստական կաուչուկի գործարանի կառուցման սկիզբը
- 5) Հայաստանի կոմունիստական երիտասարդական միության (ՀԿԵՄ) ստեղծումը
- 6) ԱԽՍՀՄ-ի կազմավորումը

**16. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն Ներսիկ Ստեփանյանի ձերբակալությունը
- 2) Հնչակյանների գործունեության դադարեցումը Խորհրդային Միության տարածքում
- 3) Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեգյանի կաթողիկոս ընտրվելը
- 4) ՀՍԽՀ տնտեսության հասնելը նախապատերազմյան՝ 1913 թ. մակարդակին
- 5) Աղասի Խանջյանի ընտրվելը ՀԿ(Բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար
- 6) Լենինգրադի կուսմարզկոմի առաջին քարտուղար Ս. Կիրովի սպանությունը

**17. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) «Թուրքիայից ոչ մի տարածքային պահանջ» չունենալու մասին խորհրդային կառավարության կողմից պաշտոնապես հայտարարելը
- 2) Հյուսիսատլանտյան դաշինքի ստեղծումը
- 3) Նվեր Սաֆարյանի՝ Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար նշանակվելը
- 4) Թամանյան դիվիզիայի կազմացումը
- 5) Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) անդրանիկ կոնֆերանսը
- 6) 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայի կազմավորումը

**18. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) խորհրդա-գերմանական չհարձակման պայմանագրի ստորագրումը
- 2) Ազգային միացյալ կուսակցության (ԱՄԿ) ստեղծումը
- 3) Ամերիկայի Հայկական ազգային խորհրդի նախաձեռնությամբ Նյու Յորքում համաշխարհային կոնգրեսի կայանալը
- 4) Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կազմակերպումը
- 5) Մեծ տերությունների ղեկավարների Պոտսդամի կոնֆերանսը
- 6) Սուրեն Թովմասյանի ընտրվելը ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար

**19. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Հայաստանի անկախության ճանաչումը Թուրքիայի կողմից առանց դիվանագիտական հարաբերությունների հաստատման
- 2) Եվրախորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության դատապարտումը
- 3) Ազգային միացյալ կուսակցության (ԱՄԿ) ղեկավար մարմնի՝ խորհրդի ձևավորումը
- 4) Խորհրդային Հայաստանում ՀՕԿ-ի և ՀԲԸՄ-ի գործունեության արգելումը
- 5) Կ. Դեմիրճյանին Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղարի պաշտոնից ազատելը
- 6) «Ղարաբաղ» կոմիտեի վերանվանվելը «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե»-ի

**20. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը
- 2) հայ-թուրքական սահմանի փակումը
- 3) Յյուրիխում ՀՀ-ի և Թուրքիայի միջև «Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման մասին» արձանագրությունների ստորագրումը
- 4) ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարի բացումը
- 5) ՀՀ խորհրդարանական ընտրություններում «Միասնություն» դաշինքի հաղթանակը
- 6) նախագահական առաջին ընտրությունները ՀՀ-ում

**21. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) ՀՀ-ում վարչատարածքային նոր միավորների՝ 10 մարզերի ստեղծումը
- 2) «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» համատեղ որոշման ընդունումը
- 3) ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովի ստեղծումը
- 4) ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի վերացումը
- 5) «Կուլց» («Օղակ») ռազմական գործողության իրականացումը
- 6) բոլոր զինված ջոկատները ԼՂՀ ինքնապաշտպանական ուժեր կոչելու մասին ԼՂՀ Գերագույն խորհրդի հատուկ որոշման ընդունումը

**22. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) ՀՀ-ում եռաստիճան դատական համակարգի ներդրումը
- 2) ԵՏՄ-ի հիմնադրումը
- 3) ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանի զոհվելը
- 4) ՀՀ խորհրդարանի ընդունած օրենքը հանրապետությունում բազմակուսակցական համակարգ ստեղծելու մասին
- 5) Համաժողովրդական հանրաքվեի միջոցով ՀՀ սահմանադրական երկրորդ փոփոխությունների հաստատումը
- 6) ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից պետական դրոշի հաստատումը

**23. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Սփյուռքում հայ քաղաքական երեք կուսակցությունների կողմից համազգային կենտրոնական մարմնի կազմումը՝ գործողության միասնական ծրագիր մշակելու համար
- 2) «Հարսանիք լեռներում» գործողության իրագործումը
- 3) Մոնթե Մելքոնյանի զոհվելը
- 4) ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից երկրի զինանշանի և օրհներգի հաստատումը
- 5) Զանգեզուրի (Կովսական) շրջանի ազատագրումը հայկական ուժերի կողմից
- 6) Քարինտակի մատույցներում հայկական ուժերի հաղթանակը ադրբեջանցիների նկատմամբ

**24. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Ուրուգվայի խորհրդարանի հանձնարարական տալը իր կառավարությանը՝ Հայկական հարցը ՄԱԿ-ի քննարկմանը ներկայացնելու համար
- 2) խորհրդա-թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի դադարեցման մասին ԽՍՀՄ կառավարության որոշման ընդունումը
- 3) Խորհրդային Հայաստանում ՀՕԿ-ի և ՀԲԸՄ-ի գործունեության արգելումը
- 4) Խորհրդային Հայաստան սփյուռքահայության ներգաղթ իրականացնելու մասին ԽՍՀՄ կառավարության որոշման ընդունումը

- 5) Ամերիկայի Հայկական ազգային խորհրդի կողմից երեք տերությունների ղեկավարներին հեռագիր ուղարկելը՝ Հայկական հարցը Պոտսդամի կոնֆերանսի օրակարգում ընդգրկելու խնդրանքով
- 6) Երևանի Լենինի հրապարակի (Հանրապետության հրապարակի) ճարտարապետական համալիրի կառուցման ավարտը

**25. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Հովսեփ Օրբելու նշանակվելը Արմֆանի նախագահ
- 2) Գիտության և արվեստի ինստիտուտի գործունեության ավարտը
- 3) Իրաքից հայ գաղթականների առաջին խմբի տեղափոխվելը Հայաստան
- 4) Լենինականի (Գյումրի) պետական թատրոնի հիմնումը
- 5) Երևանի գինու-կոնյակի «Արարատ» գործարանի վերագործարկվելը
- 6) Հնչակյան կուսակցության գործունեության դադարեցումը ԽՍՀՄ տարածքում

**26. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Լենինականի հէկի գործարկումը
- 2) Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի կողմից «Նոր եկեղեցի» կազմակերպության պառակտիչ գործունեության դատապարտումը
- 3) Խորհրդային Հայաստանում ՀՕԿ-ի գործունեության արգելումը
- 4) Խորհրդային Հայաստանում Երևանի գինու-կոնյակի «Արարատ» գործարանի վերագործարկումը
- 5) ԽՍՀՄ տարածքում հնչակյան կուսակցության գործունեության դադարեցումը
- 6) Հանրապետության առաջին պետական դրամատիկական թատրոնի բացումը

**27. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Էջմիածնում մշակութային-պատմական ինստիտուտի հիմնումը
- 2) պատանի հանդիսատեսի թատրոնի բացումը
- 3) Լոզանի կոնֆերանսի ավարտը
- 4) խորհրդահայ ճարտարապետների միության ստեղծումը
- 5) Հովհաննես Աղամյանի կողմից Երևանում առաջին անգամ եռագույն հեռուստատեսության ցուցադրումը
- 6) Լեռնային Ղարաբաղին ինքնավար մարզի կարգավիճակ տրամադրելը

**28. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Կիլիկիայի ինքնավարության հռչակումը Ադանայում
- 2) Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարի հրավիրումը Բաքվում
- 3) Երևանում ութ կետից բաղկացած հայ-ռուսական համաձայնագրի ստորագրումը
- 4) նէպից հրաժարվելու և կուլակությունը որպես դասակարգ վերացնելու քաղաքականությանն անցնելու մասին հայտարարությունը
- 5) Խորհրդային Հայաստանում պարենհարկ մտցնելը
- 6) «Պարենային մթերքների և այլ նյութերի հայտնաբերման մասին» Հայիեղկոմի հրամանի հրապարակումը

**29. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Երևանում գեղարվեստի դպրոցի հիմնումը
- 2) Արևմտահայերի 2-րդ համագումարը
- 3) Բ. Լեզրանի գլխավորած պատվիրակության ժամանումը Երևան
- 4) Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի ընտրությունների անցկացումը
- 5) Ալեքսանդրապոլի անկումը և զինադադարի պայմանների ընդունումը Հայաստանի կառավարության կողմից
- 6) «Լեռնահայաստանի» հռչակումը

**30. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) ստեղծումը
- 2) ՀՀ-ում բազմակուսակցական համակարգ ստեղծելու մասին օրենքի ընդունումը
- 3) ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը
- 4) ԼՂՀ պետական դրոշի հաստատումը
- 5) ՀՀ Գերագույն խորհրդի վերանվանվելը Ազգային ժողովի
- 6) ՀՀ-ում առաջին նախագահական ընտրությունների անցկացումը

**31. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Հայաստանի անդամակցելը ԵԱՀԿ-ին
- 2) ՀՀ լիիրավ անդամակցությունը Եվրոպայի խորհրդին (ԵԽ)
- 3) ՀՀ ՄԱԿ-ի լիիրավ անդամ դառնալը
- 4) Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նշումը
- 5) ՀՀ-ի ճանաչումը ԱՄՆ-ի կողմից
- 6) ՀՀ լիիրավ անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը

**32. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Էնվերի սպանությունը
- 2) Քեմալական զորքերի վերջնականապես հեռանալը Ալեքսանդրապոլից
- 3) Թալեաթի մահապատժի իրագործումը
- 4) ԱԽՍՀՄ-ի ստեղծումը
- 5) Լոզանի կոնֆերանսի բացումը
- 6) Սայիդ Հալիմի սպանությունը

## 7. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ

### 7-1. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

#### 1. Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար նշանակվելու տարեթիվը համապատասխանեցնել անվանը.

- |                         |            |
|-------------------------|------------|
| 1) Յակով Զարոբյան       | ա) 1988 թ. |
| 2) Սուրեն Թովմասյան     | բ) 1953 թ. |
| 3) Աղասի Խանջյան        | գ) 1974 թ. |
| 4) Գրիգոր Հարությունյան | դ) 1960 թ. |
| 5) Սուրեն Հարությունյան | ե) 1930 թ. |
|                         | զ) 1937 թ. |

- |                            |                            |
|----------------------------|----------------------------|
| 1) 1-դ, 2-բ, 3-ե, 4-գ, 5-ա | 3) 1-դ, 2-ե, 3-գ, 4-ա, 5-գ |
| 2) 1-գ, 2-բ, 3-գ, 4-դ, 5-ե | 4) 1-գ, 2-դ, 3-գ, 4-ա, 5-ե |

#### 2. Կատարել համապատասխանեցում.

##### Տարեթիվ

- |                          |                        |
|--------------------------|------------------------|
| 1) 1920 թ. նոյեմբերի 30  | 5) 1921 թ. հուլիսի 13  |
| 2) 1921 թ. հունիսի 1     | 6) 1921 թ. հունիսի 12  |
| 3) 1921 թ. փետրվարի 25   | 7) 1921 թ. փետրվարի 26 |
| 4) 1920 թ. դեկտեմբերի 25 | 8) 1921 թ. հունիսի 30  |

##### Իրադարձություն

ա. Ադրբեջանի հեղկոմի հայտարարությունը՝ «Լեոնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանի մաս ճանաչելու մասին»

բ. Կարմիր բանակի զորամասերի մուտքը Թիֆլիս

գ. Կարմիր բանակի զորամասերի մուտքը Սիսիան

դ. Ինքնավար Սյունիքի հռչակումը

ե. Կարմիր բանակի զորամասերի մուտքը Մեղրի

զ. «Լեոնային Ղարաբաղի՝ Հայաստանին պատկանելության մասին» ՀՍԽՀ ԺԿԽ-ի հայտարարության հրապարակումը

է. Լեոնահայաստանի վերանվանումը Հայաստանի Հանրապետություն

ը. Մոսկվայի ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսի սկիզբը

թ. մեծ պետությունների Լոնդոնի կոնֆերանսի սկիզբը

- |   |
|---|
| 1) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա, 5-գ, 6-ը, 7-ե, 8-է |
| 2) 1-ա, 2-է, 3-բ, 4-դ, 5-գ, 6-գ, 7-թ, 8-ե |
| 3) 1-բ, 2-դ, 3-ե, 4-գ, 5-ը, 6-է, 7-թ, 8-գ |
| 4) 1-ա, 2-է, 3-բ, 4-դ, 5-ե, 6-գ, 7-ը, 8-գ |

### 3. Կատարել համապատասխանեցում.

#### Տարեթվեր

- |                          |                          |
|--------------------------|--------------------------|
| 1) 1920 թ. մայիսի 30     | 5) 1920 թ. օգոստոսի 10   |
| 2) 1921 թ. հոկտեմբերի 13 | 6) 1921 թ. հոկտեմբերի 20 |
| 3) 1920 թ. նոյեմբերի 13  | 7) 1920 թ. հոկտեմբերի 28 |
| 4) 1918 թ. հունիսի 4     | 8) 1921 թ. մարտի 16      |
|                          | 9) 1918 թ. մարտի 3       |

#### Ստորագրված միջազգային փաստաթղթեր

- ա. Կարսի պայմանագիր
- բ. Բաթումի հաշտության պայմանագիր
- գ. Անկարայի ֆրանս-թուրքական զինադադարի համաձայնագիր
- դ. Անկարայի ֆրանս-թուրքական պայմանագիր
- ե. հայ-վրացական համաձայնագիր՝ «Լոռու չեզոք գոտի» վրացական զորքեր մտցնելու մասին
- զ. Թիֆլիսի հայ-ռուսական համաձայնագիր
- է. Խորհրդա-քեմալական «Սրտագին և անկեղծ բարեկամության» պայմանագիր
- ը. հայ-ռուսական «Եզրափակիչ որոշման արձանագրություն»
- թ. Մոսկվայի «Ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության» պայմանագիր
- ժ. Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիր

- 1) 1-գ, 2-դ, 3-ե, 4-բ, 5-զ, 6-ա, 7-ը, 8-է, 9-թ
- 2) 1-գ, 2-ա, 3-ե, 4-բ, 5-զ, 6-դ, 7-ը, 8-թ, 9-ժ
- 3) 1-դ, 2-ա, 3-զ, 4-ե, 5-բ, 6-ը, 7-գ, 8-թ, 9-ժ
- 4) 1-դ, 2-ը, 3-զ, 4-ժ, 5-զ, 6-ե, 7-է, 8-թ, 9-բ

### 4. Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.

- 1) պետական լեզվի մասին ՀՀ օրենքի ընդունումը
- 2) Արարայի ճակատամարտը
- 3) Անկարայում ֆրանս-թուրքական պայմանագրի կնքումը
- 4) Հայաստանի կոմիտեի (Արմենկոմ) ստեղծումը
- 5) Սևրի պայմանագրի ստորագրումը
- 6) զինանշանի մասին ՀՀ օրենքի ընդունումը
- 7) Անդրկովկասյան սեյմի լուծարումը

- |                          |                          |
|--------------------------|--------------------------|
| ա. 1919 թ. մայիսի 28     | ե. 1921 թ. հոկտեմբերի 20 |
| բ. 1918 թ. մայիսի 26     | զ. 1918 թ. սեպտեմբերի 19 |
| գ. 1920 թ. օգոստոսի 10   | է. 1919 թ. սեպտեմբեր     |
| դ. 1919 թ. դեկտեմբերի 26 | ը. 1920 թ. հուլիսի 23    |

- 1) 1-դ, 2-ա, 3-ը, 4-է, 5-բ, 6-ե, 7-զ
- 2) 1-բ, 2-զ, 3-ե, 4-զ, 5-ա, 6-է, 7-դ
- 3) 1-ը, 2-բ, 3-զ, 4-ա, 5-է, 6-ե, 7-դ
- 4) 1-դ, 2-զ, 3-ե, 4-է, 5-զ, 6-ը, 7-բ

**5. Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

- |            |            |
|------------|------------|
| 1) 1974 թ. | 4) 1987 թ. |
| 2) 1945 թ. | 5) 1947 թ. |
| 3) 1965 թ. | 6) 1967 թ. |

- ա. Հայկական համաշխարհային կոնգրեսի առաջարկով կազմված պատվիրակության կողմից ԱՄՆ պետքարտուղարի տեղակալին հայկական հողային պահանջների մասին հուշագրի ներկայացումը
- բ. Կիլիկիային ինքնավարություն տրամադրելու վերաբերյալ հայկական պատվիրակությունների կողմից պահանջի ներկայացումը
- գ. հայ քաղաքական երեք կուսակցությունների կողմից Համազգային կենտրոնական մարմնի կազմումը
- դ. Հայոց ցեղասպանության դատապարտումը Եվրախորհրդարանի կողմից
- ե. Մոնտեվիդեոյում հրավիրված Լատինական Ամերիկայի միջխորհրդարանական համագումարի՝ ՄԱԿ-ում Հայոց հարցի քննարկմանը աջակցելու մասին որոշման ընդունումը
- զ. Կիպրոսի արտգործնախարար Կիպրիանոսի՝ ՄԱԿ-ի ամբիոնից Հայկական հարցը քննարկելու կոչը
- է. ՄԱԿ-ի անդրանիկ նիստի գումարումը

- |                                 |                                 |
|---------------------------------|---------------------------------|
| 1) 1-գ, 2-է, 3-զ, 4-դ, 5-ա, 6-ե | 3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ, 5-զ, 6-ե |
| 2) 1-զ, 2-է, 3-ա, 4-ե, 5-դ, 6-բ | 4) 1-զ, 2-գ, 3-է, 4-ա, 5-բ, 6-դ |

**6. Կատարել համապատասխանեցում.**

- 1) Պարենային օգնություն ստանալու նպատակով ԱՄՆ մեկնած ՀՀ պատվիրակության ղեկավարը
- 2) Բաթումի պայմանագիրը վերանայելու նպատակով Կ. Պոլիս մեկնած հայկական պատվիրակության ղեկավարը
- 3) «Վարդան զորավար» զրահագնացքի հրամանատարը
- 4) Փարիզի խորհրդաժողովում Ազգային պատվիրակության ղեկավարը
- 5) Կիլիկիայի հայկական ինքնավարության կառավարության ղեկավարը
- 6) Սյունիքի ինքնապաշտպանական ուժերի գլխավոր հրամանատարը
- 7) Անդրկովկասի հանրապետությունների ներքին սահմանները որոշելու համար ստեղծված հանձնաժողովում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչը

- |                        |                     |
|------------------------|---------------------|
| ա. Սարգիս Մուսայելյան  | ե. Լևոն Շանթ        |
| բ. Ալեքսանդր Բեկզադյան | զ. Ավետիս Ահարոնյան |
| գ. Միհրան Տամատյան     | է. Պողոս Նուբար     |
| դ. Հովհաննես Քաջազունի | ը. Գարեգին Նժդեհ    |

- 1) 1-դ, 2-ա, 3-զ, 4-է, 5-բ, 6-ը, 7-ե
- 2) 1-ե, 2-զ, 3-ը, 4-զ, 5-ա, 6-է, 7-բ
- 3) 1-ը, 2-բ, 3-զ, 4-ա, 5-է, 6-ե, 7-դ
- 4) 1-դ, 2-զ, 3-ա, 4-է, 5-զ, 6-ը, 7-բ

## 7. Կատարել համապատասխանեցում.

- 1) 1918 թ. սեպտեմբերին կազմավորված հայկական դիվիզիայի հրամանատարը
- 2) Մայիսյան ապստամբության ժամանակ կարմիր զորքերի հրամանատարը
- 3) 1918 թ. Վրաստանում հիմնված ՀՀ դիվանագիտական առաքելության ղեկավարը
- 4) Փարիզի խորհրդաժողովում ՀՀ պատվիրակության ղեկավարը
- 5) Հայաստանի օգնության կոմիտեի (<ՕԿ) առաջին նախագահը
- 6) Բաթումի պայմանագիրը վերանայելու նպատակով Բեռլին և Վիեննա մեկնած հայկական պատվիրակության ղեկավարը

ա. Սարգիս Մուսայելյան

բ. Ալեքսանդր Մյասնիկյան

գ. Հովհաննես Թումանյան

դ. Մովսես Սիլիկյան

ե. Ավետիս Ահարոնյան

զ. Արշակ Զամալյան

է. Համո Օհանջանյան

1) 1-ա, 2-գ, 3-դ, 4-է, 5-զ, 6-բ

2) 1-բ, 2-ա, 3-զ, 4-ե, 5-դ, 6-զ

3) 1-դ, 2-զ, 3-ե, 4-բ, 5-ա, 6-է

4) 1-դ, 2-ա, 3-զ, 4-ե, 5-զ, 6-է

## 7-II. Կարճ (վանդակավոր) պատասխանով առաջադրանքներ

### 1. Կատարել համապատասխանեցում.

ա. Հայոց ազգային համագումարի հրավիրումը Փարիզում

բ. Սան Ռեմոյի խորհրդաժողովը

գ. Ալեքսանդրապոլի թուրք-հայկական պայմանագրի կնքումը

դ. Բաթումի հաշտության պայմանագրի կնքումը

ե. Փարիզի խաղաղության խորհրդաժողովի բացումը

զ. Սևրի պայմանագրի կնքումը

1) 1920 թ. դեկտեմբերի 2

2) 1918 թ. հունիսի 4

3) 1920 թ. օգոստոսի 10

4) 1919 թ. փետրվարի 24 – ապրիլի 22

5) 1919 թ. հունվարի 18

6) 1920 թ. ապրիլի 19–26

7) 1919 թ. փետրվարի 12

### 2. Կատարել համապատասխանեցում.

ա. նէպից հրաժարվելու և կուլակությունը որպես դասակարգ վերացնելու քաղաքականության անցումը

բ. գյուղմիասնակի շրջանառության մեջ մտնելը Հայաստանում

գ. Դաշնակցության երիտասարդական միության «ինքնավերացման» համագումարը

դ. ՀԿԵՄ-ի ստեղծումը

ե. Հայոց եկեղեցու կողմից Մեծ եղեռնի օրվա՝ ապրիլի 24-ի նշումն արգելող խորհրդային իշխանության հատուկ որոշման ընդունումը

զ. Աղասի Խանջյանի սպանությունը

- |            |            |
|------------|------------|
| 1) 1923 թ. | 5) 1926 թ. |
| 2) 1924 թ. | 6) 1929 թ. |
| 3) 1936 թ. | 7) 1921 թ. |
| 4) 1930 թ. |            |

**3. Կատարել համապատասխանեցում.**

- ա. Ստալինի անձի պաշտամունքի բացահայտ դառնալը
- բ. Խորհրդային Հայաստանում որպես «կուլակ» 1100 տնտեսության ունեզրկումը
- գ. Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի՝ «Նոր եկեղեցի» կազմակերպության պառակտիչ գործունեությունը դատապարտելը
- դ. կաթողիկոս Խորեն Մուրադբեգյանի սպանությունը
- ե. ԽՍՀՄ տարածքում Հնչակյան կուսակցության գործունեության դադարեցումը
- զ. ՀԿԵՄ-ի ստեղծումը

- |            |            |
|------------|------------|
| 1) 1930 թ. | 5) 1924 թ. |
| 2) 1926 թ. | 6) 1929 թ. |
| 3) 1938 թ. | 7) 1921 թ. |
| 4) 1925 թ. |            |

**4. Կատարել համապատասխանեցում.**

- ա. Աղասի Խանջյանի ընտրվելը ՀԿ(Բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար
- բ. մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն Ներսիկ Ստեփանյանի ձերբակալությունը
- գ. Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեգյանի ընտրվելը հայոց կաթողիկոս
- դ. Դաշնակցության երիտասարդական միության «ինքնավերացման» համագումարը
- ե. Հայաստանի Ժողկոմխորհի նախկին նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանի ինքնասպանությունը
- զ. մարշալ Արմենակ Խանփերյանցի գնդակահարությունը

- |            |            |
|------------|------------|
| 1) 1932 թ. | 5) 1949 թ. |
| 2) 1937 թ. | 6) 1930 թ. |
| 3) 1951 թ. | 7) 1936 թ. |
| 4) 1924 թ. |            |

**5. Հայ զինվորականների անունները համապատասխանեցնել նրանց կոչումներին.**

- ա. Երկրորդ աշխարհամարտի առաջին հայ ԽՍՀՄ հերոսը
- բ. ավիացիայի մարշալ
- գ. նավատորմի ծովակալ, ԽՍՀՄ հերոս
- դ. ԽՍՀՄ մարշալ, կրկնակի հերոս
- ե. Հայրենական մեծ պատերազմի առաջին հայ ԽՍՀՄ հերոսը
- զ. լեգենդար հետախույզ, գեներալ-լեյտենանտ

- 1) Հովհաննես Բաղրամյան
- 2) Հայկ Հովակիմյան
- 3) Արմենակ Խանփերյանց (Սերգեյ Խուդյակով)
- 4) Կարապետ Սիմոնյան
- 5) Հունան Ավետիսյան
- 6) Լազր Չափչախյան
- 7) Իվան Իսակով

**6. Կատարել համապատասխանեցում.**

- |                  |                 |
|------------------|-----------------|
| ա. շուրջ 180 000 | դ. շուրջ 500    |
| բ. շուրջ 1100    | ե. շուրջ 40 000 |
| գ. շուրջ 6750    | զ. շուրջ 15 000 |

- 1) 1932 թ. առանց դատաքննության և դատարանի վճիռների տարբեր ժամկետներով Հայաստանում ազատազրկման ենթարկված մարդկանց թիվը
- 2) 1929 թ. դրությամբ հողազուրկ հայ գյուղացիների թիվը
- 3) 1930–ական թթ. Հայաստանում բռնությունների ենթարկվածների թիվը
- 4) 1930 թ. ապրիլի դրությամբ որպես կուլակ ունեզրկված տնտեսությունների թիվը
- 5) 1933 թ. ապրուստի միջոց հայթայթելու նպատակով Սևանա լճի ավազանի շրջանները լքած ընտանիքների թիվը
- 6) 1932 թ. սկզբին առանց դատաքննության և դատարանի վճիռների գնդակահարվածների թիվը
- 7) 1930–ական թթ. վերջի դրությամբ կոլտնտեսություններում ընդգրկված գյուղացիական տնտեսությունների թիվը

**7. Կատարել համապատասխանեցում.**

- |                       |                          |
|-----------------------|--------------------------|
| ա. 1946 թ. փետրվարի 1 | դ. 1945 թ. հուլիսի 22–23 |
| բ. 1949 թ. հունիսի 14 | ե. 1945 թ. մարտի 19      |
| գ. 1953 թ. հունիսի 26 | զ. 1953 թ. մայիսի 30     |

- 1) Հայկական տարածքների հարցի քննարկումը Պոտսդամի կոնֆերանսում
- 2) ՀԿ(բ) կենտկոմի քարտուղար Գրիգոր Հարությունյանի հանդիպումն ընտրողների հետ և հայկական տարածքային պահանջների մասին ելույթը
- 3) Թուրքիայից տարածքային պահանջներ չունենալու մասին խորհրդային կառավարության կողմից պաշտոնապես հայտարարելը
- 4) ԽՍՀՄ իշխանությունների որոշմամբ Անդրկովկասի հանրապետություններից հայ բնակչության (3620 ընտանիք) արտաքսումը
- 5) «Տրանսիլվանիա» շոգենավով հայրենադարձների առաջին խմբի դուրս գալը Բեյրութից
- 6) ԽՍՀՄ ներքին գործերի նախարար Լ. Բերիայի ձերբակալությունը
- 7) ԽՍՀՄ կառավարության կողմից 1925 թ. խորհրդա–թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագիրը չեղյալ հայտարարելը

**8. 1988 թ. տեղի ունեցած իրադարձությունները համապատասխանեցնել ամսաթվերին.**

- |                   |                |
|-------------------|----------------|
| ա. փետրվարի 21    | դ. փետրվարի 22 |
| բ. փետրվարի 23    | ե. հունիսի 15  |
| գ. փետրվարի 27-29 | զ. հուլիսի 18  |

- 1) «Ղարաբաղ» կոմիտեի ստեղծումը
- 2) Մոսկվայում՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում, «Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդների որոշումների մասին» հարցի քննարկումը
- 3) ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանի գումարումը, որը համաձայնություն տվեց ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ կազմի մեջ մտնելու
- 4) ԽՄԿԿ կենտկոմի որոշմամբ Արցախյան շարժման որակումը որպես «ծայրահեղական»
- 5) Հենրիխ Պոդոյանի ընտրվելը ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար
- 6) ՀԽՍՀ ԳԽ արտահերթ նստաշրջանի կողմից «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» համատեղ որոշման ընդունումը
- 7) Հայ բնակչության կոտորածները Սումգաիթ քաղաքում

**9. Կատարել համապատասխանեցում.**

- ա. սումգաիթյան ոճրագործությունը  
բ. Հայոց համազգային շարժման առաջին համագումարի բացումը  
գ. ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղարի պաշտոնում Հենրիխ Պոդոյանի ընտրվելը  
դ. Բաքվի հայ բնակչության կոտորածները  
ե. «Ղարաբաղ» կոմիտեի մի շարք անդամների կալանավորումը և տեղափոխումը Մոսկվա  
զ. Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու՝ արցախցիների ստորագրությամբ պահանջագրի ուղարկումը Մոսկվա

- |                           |                          |
|---------------------------|--------------------------|
| 1) 1990 թ. հունվարի 13-20 | 5) 1989 թ. հունվարի 9    |
| 2) 1988 թ. փետրվարի 27-29 | 6) 1988 թ. հուլիսի 18-21 |
| 3) 1989 թ. նոյեմբերի 4    | 7) 1988 թ. փետրվարի 23   |
| 4) 1987 թ. նոյեմբեր       |                          |

**10. Կատարել համապատասխանեցում.**

- |                         |                    |
|-------------------------|--------------------|
| ա. Թաթուլ Կրպեյան       | դ. Արթուր Մկրտչյան |
| բ. Սիմոն Աչիբգյոզյան    | ե. Մոնթե Մելքոնյան |
| գ. Արկարի Տեր-Թադևոսյան | զ. Հենրիխ Պոդոյան  |

- 1) ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ
- 2) ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար
- 3) գետաշենցիների հերոսական պայքարի ղեկավար
- 4) ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի հրամանատար

- 5) Մարտունաշենի պաշտպանության ղեկավար
- 6) «Կուցո» («Օղակ») օպերացիայի հրամանատար
- 7) Մարտունու ուղղությամբ մարտնչող հայկական զորամասերի ղեկավար

**11. Կատարել համապատասխանեցում.**

- ա. պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը ԼՂՀ-ում
- բ. Քելբաջարի շրջանի հյուսիսային մասի և Օմարի բարձրադիր լեռնանցքի ազատագրումը
- գ. Կրկժանի ազատագրումը
- դ. Շուշիի ազատագրումը
- ե. «Հոչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հոչակման մասին» որոշման ընդունումը
- զ. Ղարաբաղա-ադրբեջանական պատերազմում հրադադարի հաստատումը

- |                            |                           |
|----------------------------|---------------------------|
| 1) 1994 թ. մայիսի 12       | 5) 1992 թ. օգոստոսի 15    |
| 2) 1993 թ. հոկտեմբերի 7-11 | 6) 1992 թ. հունվարի 19-20 |
| 3) 1991 թ. սեպտեմբերի 2    | 7) 1992 թ. մայիսի 8-9     |
| 4) 1994 թ. փետրվարի 18     |                           |

**12. Կատարել համապատասխանեցում.**

- ա. Շուշիի ազատագրումը
- բ. զինված ահաբեկչության իրականացումը ՀՀ Ազգային ժողովում
- գ. ՀՀ-ում բազմակուսակցական համակարգի ստեղծման մասին օրենքի ընդունումը
- դ. ՀՀԿ, ԲՀԿ և ՀՅԴ կուսակցությունների կողմից կոալիցիոն կառավարության ձևավորումը
- ե. ՀՀ Սահմանադրության երկրորդ փոփոխությունների հաստատումը
- զ. Քառօրյա պատերազմը

- |                      |                      |
|----------------------|----------------------|
| 1) 1991 թ. փետրվար   | 5) 2015 թ. դեկտեմբեր |
| 2) 2007 թ. մայիս     | 6) 1992 թ. մայիս     |
| 3) 1999 թ. հոկտեմբեր | 7) 2016 թ. ապրիլ     |
| 4) 2005 թ. նոյեմբեր  |                      |

**13. Կատարել համապատասխանեցում.**

- |                        |                       |
|------------------------|-----------------------|
| ա. Արթուր Մկրտչյան     | դ. Րաֆֆի Հովհաննիսյան |
| բ. Գագիկ Հարությունյան | ե. Կարեն Դեմիրճյան    |
| գ. Անդրանիկ Մարգարյան  | զ. Հենրիխ Պողոսյան    |

- 1) Հայաստանի հանրապետական կուսակցության խորհրդի նախագահ
- 2) ՀՀ Ազգային ժողովի նախագահ
- 3) ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ
- 4) ԼՂՀ նախագահ
- 5) ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար
- 6) ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ
- 7) «Ժառանգություն» կուսակցության նախագահ

**14. Կատարել համապատասխանեցում.**

- ա. Եվրախորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության դատապարտումը
- բ. սփյուռքահայության ներգաղթի մասին ԽՍՀՄ կառավարության որոշման ընդունումը
- գ. «Տրանսիլվանիա» շոգենավով հայ առաջին հայրենադարձների խմբի ժամանումը Բաթում
- դ. խորհրդա-թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի դադարեցումը ԽՍՀՄ կառավարության կողմից
- ե. ՄԱԿ-ի ամբիոնից Կիպրոսի արտգործնախարարի՝ Հայկական հարցը քննարկելու մասին կոչ անելը
- զ. սփյուռքահայերի ներգաղթը դադարեցնելու մասին ԽՍՀՄ կառավարության որոշման ընդունումը

- |                       |                          |
|-----------------------|--------------------------|
| 1) 1987 թ. հունիսի 18 | 5) 1965 թ. հոկտեմբեր     |
| 2) 1945 թ. մարտի 19   | 6) 1948 թ. սեպտեմբերի 14 |
| 3) 1946 թ. հունիսի 23 | 7) 1945 թ. նոյեմբերի 21  |
| 4) 1946 թ. հունիսի 27 |                          |

**15. Հայ գիտնականների անունները համապատասխանեցնել իրենց գործունեության բնագավառին.**

- |                     |                    |
|---------------------|--------------------|
| ա. երկրաբանություն  | դ. քիմիա           |
| բ. պատմագիտություն  | ե. լեզվաբանություն |
| գ. ֆիզիկա           | զ. ֆիզիոլոգիա      |
| 1) Մկրտիչ Ներսիսյան | 5) Լևոն Ռոտինյան   |
| 2) Գևորգ Զահուկյան  | 6) Տիգրան Զրբաշյան |
| 3) Հովսեփ Օրբելի    | 7) Լևոն Օրբելի     |
| 4) Արտեմ Ալիխանյան  |                    |

**16. Կատարել համապատասխանեցում.**

- |                      |                          |
|----------------------|--------------------------|
| ա. Համո Բեկնազարյան  | դ. Երվանդ Քոչար          |
| բ. Հովհաննես Աբելյան | ե. Ալեքսանդր Սպենդիարյան |
| գ. Մարտիրոս Սարյան   | զ. Հայկանուշ Դանիելյան   |
| 1) երգիչ             | 5) դերասան               |
| 2) կինոռեժիսոր       | 6) քանդակագործ           |
| 3) գրող              | 7) նկարիչ                |
| 4) կոմպոզիտոր        |                          |

**17. Կատարել համապատասխանեցում.**

- ա. հայկական ժողովրդական երգի-պարի պետական անսամբլի ստեղծումը
- բ. Երևանի գլխավոր հատակագծի կազմումը
- գ. լուսահեռագրության սարքի ստեղծումը
- դ. հայկական ազգային սիմֆոնիկ երաժշտության հիմնադրումը

ե. գիտությունների ակադեմիայի նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի ստեղծումը

զ. հայկական առաջին հնչյունային կինոնկարի բեմադրումը

1) Հենրիկ Մալյան

5) Արմենակ Մնջոյան

2) Համո Բեկնազարյան

6) Ալեքսանդր Սպենդիարյան

3) Հովհաննես Ադամյան

7) Թաթուլ Ալթունյան

4) Ալեքսանդր Թամանյան

### 18. Կատարել համապատասխանեցում.

ա. 1922 թ.

դ. 1935 թ.

բ. 1923 թ.

ե. 1932 թ.

գ. 1929 թ.

զ. 1938 թ.

1) Հայաստանի կերպարվեստի թանգարանի (այժմ՝ Հայաստանի ազգային պատկերասրահ) բացումը

2) հանրապետության առաջին պետական դրամատիկական թատրոնի բացումը

3) Թաթուլ Ալթունյանի գլխավորությամբ հայկական ժողովրդական երգի-պարի պետական անսամբլի ստեղծումը

4) Լոզանի կոնֆերանսի ավարտը

5) Երևանի գեղարվեստական ինստիտուտի հիմնադրումը

6) պատանի հանդիսատեսի թատրոնի բացումը

7) Հայաստանի պետական ֆիլիարմոնիայի կազմակերպումը

### 19. Կատարել համապատասխանեցում.

ա. Համբարձում Քեչեկ

դ. Մանուկ Աբեղյան

բ. Հակոբ Մանանդյան

ե. Ռոմանոս Մելիքյան

գ. Հրաչյա Աճառյան

զ. Ստեփան Ղամբարյան

1) քիմիկոս

5) պատմաբան

2) բժիշկ

6) գրականագետ

3) ֆիզիկոս

7) լեզվաբան

4) կոմպոզիտոր

### 20. Կատարել համապատասխանեցում.

ա. Արամ Մանուկյան

դ. Հովհաննես Հախվերդյան

բ. Ավետիք Սահակյան

ե. Ավետիս Ահարոնյան

գ. Համո Օհանջանյան

զ. Սարգիս Կասյան

1) ՀՀ զինվորական նախարար

2) ՀՀ ներքին գործերի նախարար

3) Փարիզի խորհրդաժողովում ՀՀ պատվիրակության ղեկավար

4) ՀՀ վարչապետ

5) Ազգային պատվիրակության ղեկավար

6) Հայաստանի ՌՀԿ նախագահ

7) ՀՀ խորհրդի նախագահ

**21. Կատարել համապատասխանեցում.**

- ա. Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի բացումը
  - բ. գիտությունների ակադեմիայի նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի ստեղծումը
  - գ. Երևանի գեղարվեստի դպրոցի հիմնադրումը
  - դ. Երևանի գեղարվեստական ինստիտուտի հիմնադրումը
  - ե. Արմֆանի բացումը
  - զ. Հայաստանի ճարտարապետների միության ստեղծումը
- |            |            |
|------------|------------|
| 1) 1935 թ. | 5) 1963 թ. |
| 2) 1932 թ. | 6) 1956 թ. |
| 3) 1938 թ. | 7) 1945 թ. |
| 4) 1922 թ. |            |

**22. Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

- ա. հայ-վրացական սահմանազատման համաձայնագրի կնքումը
  - բ. Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի կնքումը
  - գ. Սևրի պայմանագրի կնքումը
  - դ. «Լոռու չեզոք գոտի» ժամանակավորապես վրացական զորք մտցնելու մասին համաձայնագրի ստորագրումը
  - ե. Մոսկվայի «Ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության» պայմանագրի կնքումը
  - զ. Կարսի պայմանագրի կնքումը
- |                         |                          |
|-------------------------|--------------------------|
| 1) 1920 թ. օգոստոսի 10  | 4) 1920 թ. մայիսի 30     |
| 2) 1920 թ. նոյեմբերի 13 | 5) 1921 թ. հոկտեմբերի 13 |
| 3) 1921 թ. նոյեմբերի 6  | 6) 1918 թ. մարտի 3       |
|                         | 7) 1921 թ. մարտի 16      |

**23. Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

- ա. պատանի հանդիսատեսի թատրոնի բացումը Երևանում
  - բ. Լենինականի պետական թատրոնի հիմնումը
  - գ. Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի բացումը
  - դ. գեղարվեստի դպրոցի հիմնումը Երևանում
  - ե. Գիտության և արվեստի ինստիտուտի ստեղծումը
  - զ. մշակութային-պատմական ինստիտուտի հիմնումը Էջմիածնում
- |            |            |
|------------|------------|
| 1) 1928 թ. | 5) 1932 թ. |
| 2) 1922 թ. | 6) 1921 թ. |
| 3) 1929 թ. | 7) 1925 թ. |
| 4) 1935 թ. |            |

**24. Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

- ա. ՀՀԾ-ի հիմնադիր համագումարի բացումը
- բ. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի՝ «Լեռնային Ղարաբաղի մարզում իրադրությունը կարգավորելու միջոցառումների մասին» որոշման ընդունումը
- գ. Ղարաբաղյան շարժման ղեկավարների՝ բանտից ազատ արձակվելը
- դ. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի համատեղ որոշման ընդունումը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման հռչակման մասին
- ե. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ ԼՂԻՄ-ում կառավարման հատուկ ձև սահմանելու մասին որոշման ընդունումը
- զ. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության կողմից Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին որոշման բեկանումը

- |                         |                         |
|-------------------------|-------------------------|
| 1) 1989 թ. մայիսի վերջ  | 4) 1989 թ. նոյեմբերի 28 |
| 2) 1989 թ. հունվարի 11  | 5) 1990 թ. հունվարի 10  |
| 3) 1989 թ. դեկտեմբերի 1 | 6) 1989 թ. նոյեմբերի 4  |
|                         | 7) 1989 թ. օգոստոսի 16  |

**25. Գործիչներին համապատասխանեցնել նրանց զբաղեցրած պաշտոնին.**

- |                         |                         |
|-------------------------|-------------------------|
| ա. Արշակ Զամալյան       | դ. Ներսիկ Ստեփանյան     |
| բ. Սարգիս Լուկաշին      | ե. Սահակ Տեր-Գաբրիելյան |
| գ. Գրիգոր Հարությունյան | զ. Վազգեն Մանուկյան     |
- 1) Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար
  - 2) Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ
  - 3) ՀՍԽՀ Ժողովրդական տնտեսության խորհրդի նախագահ
  - 4) ՀՀ պաշտպանության նախարար
  - 5) Վրաստանում հայկական դիվանագիտական առաքելության ղեկավար
  - 6) ՀՀ ներքին գործերի նախարար
  - 7) Խորհրդային Հայաստանի մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն

## 8. ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԻ, ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ

### 8-1. Պատմական փաստարկների, պնդումների համադրում և խմբավորում

#### 1. Ստորև բերված փաստարկներից որո՞նք են ճիշտ.

- ա. «Սպարտակ» երիտասարդական կազմակերպությունը գտնվում էր հայ բուլճղիկների ազդեցության տակ:
- բ. 1918 թ. հուլիսի 22–25–ին Շուշիում կայացած արցախահայության առաջին համագումարը երկրամասը հռչակեց անկախ վարչաքաղաքական միավոր՝ «Լեռնահայաստան» անունով:
- գ. Արցախահայության 1920 թ. ապրիլի 25–ին կայացած 9–րդ համագումարը երկրամասը հռչակեց Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասը:
- դ. 1918 թ. փետրվարի 6–13–ը Երևանում հրավիրվեց Արևմտահայերի երկրորդ համագումարը:
- ե. 1947 թ. ապրիլի 30–ից մայիսի 4–ը Նյու Յորքում կայացավ Հայկական համաշխարհային կոնգրեսը:
- զ. 1990 թ. մայիսի 20–ին տեղի ունեցան ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունները. ընտրողների ձայները համարյա հավասարապես բաժանվեցին Հայկոմկուսի և ՀՀԿ–ի թեկնածուների միջև:

- 1) բ, դ, զ                      2) ա, գ, ե                      3) ա, գ, զ                      4) բ, դ, ե

#### 2. Թվարկվածներից որո՞նք են խորհրդային Հայաստանի արդյունաբերացման արդյունքներ.

- ա. Առաջին երկու հնգամյակների ընթացքում շահագործման հանձնվեց 44 արդյունաբերական ձեռնարկություն:
- բ. Սևանում հայտնաբերեցին մոլիբդենի հանքավայրեր:
- գ. Ավավերդին դարձավ տեքստիլ արդյունաբերության կենտրոնը:
- դ. Արարատը դարձավ տուֆի արդյունահանման կենտրոն:
- ե. Աճեց բանվոր դասակարգի և ճարտարագիտատեխնիկական անձնակազմի թվաքանակը:
- զ. Երևանում կառուցվեց արհեստական կաուչուկի ԽՍՀՄ առաջին գործարանը:
- է. Ավելացավ ձեռնարկությունների տնտեսական ինքնուրույնությունը:

- 1) բ, դ, ե                      2) ա, ե, զ                      3) գ, դ, է                      4) ա, դ, զ

#### 3. Ստորև բերված փաստարկներից որո՞նք են սխալ.

- 1) 1988 թ. նոյեմբերի 24–ին խորհրդային զորքը մտավ ՀԽՍՀ մայրաքաղաք:
- 2) 1988 թ. փետրվարի 20–ին Ղարաբաղյան շարժումը ղեկավարելու համար ստեղծվեց «Ղարաբաղ» կոմիտե, որի կազմում էին Իգոր Մուրադյանը, Վաչե Սարուխանյանը և ուրիշներ:

- 3) 1989 թ. մայիսի 25-ին Մոսկվայում աշխատանքներն սկսեց ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարը:
- 4) 1989 թ. օգոստոսի 16-ին Ստեփանակերտի պետական թատրոնի շենքում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարը, որն ընտրեց 131 հոգուց բաղկացած Ազգային խորհուրդ:
- 5) «Ղարաբաղ» կոմիտեի մի շարք անդամներ 1989 թ. հունվարի 9-ին կալանավորվեցին և տեղափոխվեցին Մոսկվա:
- 6) 1975 թ. մարտին «հակախորհրդային գործունեության համար» երեք տարի ազատազրկման դատապարտվեց Անդրանիկ Մարգարյանը:

#### 4. Ստորև բերված փաստարկներից որո՞նք են ճիշտ.

- 1) 1933 թ. ընթացքում սկսվեցին Հայաստանի արդյունաբերության կարևորագույն ճյուղերից մեկի՝ պղնձարդյունաբերության վերականգնման աշխատանքները, ինչի շնորհիվ շուտով Կապանում վերսկսվեց պղնձի ձուլումը:
- 2) 1989 թ. հունվարի 11-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում կառավարման հատուկ ձև սահմանեց՝ վարիչների մարմին, որի վրա էր դրվում մարզի պետական մարմինների ղեկավարությունը:
- 3) Հայոց համազգային շարժման առաջին համագումարը տեղի է ունեցել 1989 թ. հոկտեմբերի 4-ին:
- 4) ՀՀ նախագահական հինգերորդ ընտրություններն անցկացվեցին 2008 թ. փետրվարի 19-ին:
- 5) Հայ ազգային կոնգրեսը (ՀԱԿ) ձևավորվեց 2008 թ. փետրվարին:
- 6) 1991 թ. փետրվարին խորհրդարանն ընդունեց օրենք, որով ՀՀ-ում ստեղծվում էր բազմակուսակցական համակարգ:

#### 5. Բերված փաստարկներից որո՞նք են ճիշտ.

- ա. 1992 թ. դեկտեմբերին Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունը, բայց նրա հետ դիվանագիտական հարաբերություններ չհաստատեց:
- բ. 1993 թ. մայիսի 18-ին հայ ազատամարտիկները մտան Լաչին:
- գ. 2007 թ. հունվարի 19-ին Ստամբուլում ահաբեկչության զոհ դարձավ «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքը:
- դ. 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև ստորագրվեցին «Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման մասին» արձանագրությունները:
- ե. 1992 թ. հունվարի 8-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց 33-ամյա պատմաբան Արթուր Մկրտչյանը:
- զ. 1920-ական թվականների սկզբին ամենամարդաշատ հայկական գաղթօջախը Շվեդիայում էր:
- է. 1949 թ. օգոստոսին ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեն դադարեցրեց իր գործունեությունը:
- ը. 2015 թ. հունվարից ՀՀ-ն Եվրոպայի խորհրդի (ԵԽ) լիիրավ անդամ է:

1) բ, գ, զ, է

2) գ, դ, ե, է

3) բ, դ, ե, ը

4) ա, բ, գ, ը

## 6. Պնդումներից որոնք են ճիշտ.

- ա. Հոգևոր գործիչ Խորեն Նարբեյին հանձնարարվել էր մեկնել Սանկտ Պետերբուրգ՝ ռուսական արքունիքի հետ հայերի պահանջները համաձայնեցնելու համար:
- բ. Հայ-թաթարական ազգամիջյան կռիվներից հետո հայ հասարակական-քաղաքական շրջանակներում սկսեցին արծարծել Անդրկովկասի հայկական բնակավայրերը միավորելու և Ռուսաստանից անկախ պետություն ստեղծելու գաղափարը:
- գ. Հայոց ցեղասպանության հետևանքներից են հայկական սփյուռքի ձևավորումը, հազարավոր եկեղեցիների և կրթական հաստատությունների ավերումը:
- դ. XX դ. սկզբին հայ լեզվաբանության բուռն վերելքը կապված է նոր սերնդի ներկայացուցիչներ Ստ. Մալխասյանի, Հ. Աճառյանի, Գ. Ղափանցյանի բեղուն գործունեության հետ:
- ե. Ստալինգրադի ճակատամարտում ցուցաբերած անձնվիրության համար ԽՍՀՄ հերոսի կոչմանն արժանացավ կործանիչ ավիատեսչարիլիայի հրամանատար Սիմոն Զաքյանը:
- զ. 1995 թ. հունիսի 12-ին ՀՀ-ում ներդրվեց եռաստիճան դատական համակարգ, սկսեց գործել երդվյալ ատենակալների ինստիտուտը, որը չէր եղել խորհրդային ժամանակաշրջանում:
- է. 1987 թ. հունիսի 18-ին ՄԱԿ-ը դատապարտեց հայերի ցեղասպանությունը՝ կոչ անելով Թուրքիայի կառավարությանը՝ ճանաչելու ցեղասպանության փաստը:
- ը. 1947 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ ընտրվեց ակադեմիկոս գիտնական, ակադեմիկոս Արմենակ Մնջոյանը:

- 1) բ, գ, ե                      2) ա, գ, դ                      3) բ, դ, ե, ը                      4) ա, գ, է, ը

## 7. Գտնել ճիշտ պնդումները.

- 1) Բաթումի պայմանագրով հայկական կողմը պետք է լուծարեր հայկական բոլոր զորամասերը:
- 2) Բաթումի պայմանագրի համաձայն՝ ՀՀ-ն կարող էր դիվանագիտական կապեր հաստատել Մեծ Բրիտանիայի հետ:
- 3) Թուրքական զորքերի հարձակումը դեպի Բաքու սկսվեց 1918 թ. մայիսին, սակայն մինչև հոկտեմբեր ամիսը նրանց չհաջողվեց գրավել քաղաքը:
- 4) Մուսավաթական Ադրբեջանը, ոգևորվելով Անդրկովկասում Թուրքիայի նվաճողական քաղաքականությունից, հավակնություններ դրսևորեց հայկական տարածքներ Շարուր-Դարալագյազի, Զանգեզուրի, Ղարաբաղի, Կարսի և Լոռու նկատմամբ:
- 5) Գերմանիան դրականորեն վերաբերվեց Բաթումի պայմանագիրը վերանայելու հարցին, որովհետև նա ցանկանում էր Անդրկովկասը պահել իր ազդեցության ոլորտում:
- 6) Հայ-վրացական հաշտության համաձայն՝ «Լոռու չեզոք գոտում» տեղակայվեցին անգլիական զորամասեր:

- 7) Սևրի պայմանագրի համաձայն՝ հայ-վրացական սահմանը որոշելու էր ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնը:
- 8) «Լոռու չեզոք գոտում» սահմանվեց հատուկ կառավարում, որն իրականացվելու էր Հայաստանի և Վրաստանի լիազոր ներկայացուցիչների համատեղ ղեկավարությամբ և անզլիացի գեներալ-նահանգապետի ընդհանուր վերահսկողությամբ:
- 9) Թուրք-հայկական պատերազմի ժամանակ Թիֆլիսում կնքված հայ-վրացական համաձայնագրով երեք ամսով «Լոռու չեզոք գոտի» մտցվեցին վրացական զորքեր:

### **8. Արևելքի ժողովուրդների առաջին համագումարին վերաբերող պնդումներից որոնք են ճիշտ.**

- 1) Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը տեղի ունեցավ Բաքվում և նպաստեց ռուս-իրանական բարեկամության ամրապնդմանը:
- 2) Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի ստեղծած «Քարոզչության և գործողության խորհուրդը» 1920 թ. սեպտեմբերի 18-ին ընդունեց մի բանաձև-փաստաթուղթ, որի հիմնական դրույթներն ամբողջությամբ ուղղված էին ՀՀ-ի և հայ ժողովրդի դեմ:
- 3) Այդ բանաձևով առաջարկվում էր հնարավոր բոլոր միջոցներով օգնել ռուսներին և Հայաստանի վրա նրանց ռազմարշավի միջոցով նպաստել վերջինիս խորհրդայնացմանը:
- 4) Այդ խորհրդի մշակած փաստաթղթի համաձայն՝ Անզլիան՝ որպես փրկարար և հաշտարար, պետք է մտներ Հայաստան:
- 5) Դավադիր այս փաստաթղթի ընդունումից մի քանի օր անց Թուրքիան առանց պատերազմ հայտարարելու ռազմական գործողություններ սկսեց Հայաստանի դեմ:
- 6) Համագումարը որոշեց ռազմական և նյութական օգնություն տրամադրել Վրաստանին:
- 7) Համագումարը նպաստեց քենալա-բոլշևիկյան մերձեցմանը:

### **9. Տրված պնդումներից որոնք են սխալ.**

- 1) Ադրբեջանի խորհրդայնացումից հետո Խորհրդային Ռուսաստանը Հայաստանից պահանջեց անհապաղ իր զորքերը դուրս բերել Զանգեզուրից և Ղարաբաղից:
- 2) Արցախահայության 9-րդ համագումարը երկրամասը հռչակեց Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասը:
- 3) Նժդեհը, որ իր փոքրաթիվ ուժերով հեռացել էր Խուստուփի լեռը, 1920 թ. հոկտեմբերի կեսերից գլխավորեց համաարցախյան ապստամբությունը:
- 4) Գեներալ Թոմսոնը 1918 թ. նոյեմբերին դարձել էր Բաքվի գեներալ-նահանգապետ:
- 5) Գեներալ Թոմսոնի պահանջով կասեցվեց Սեպուհի զորախմբի առաջխաղացումը դեպի Շուշի:

- 6) Թիֆլիսում ստորագրված հայ-ռուսական համաձայնագրով Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը հայտարարվեցին Հայաստանի անբաժան տարածքներ:
- 7) Նախիջևանի կորուստով ՀՀ-ն զրկվում էր Երևան-Ջուլֆա երկաթուղով հարևան Իրանի հետ կապից, խոցելի էին դառնում Ջանգեզուրի արևմտյան սահմանները:

#### **10. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Հայաստանում խորհրդային կարգեր «ներդնելու» նպատակով ներքին գործերի և արտաքին գործերի ժողովուրդները սկսեցին բռնություններ գործադրել բնակչության նկատմամբ:
- 2) Հայաստանում խորհրդային վարչակարգը հաստատելու և ամրապնդելու գործընթացը կազմակերպում և ուղղորդում էր Հայաստանի խորհուրդների համագումարը:
- 3) Հայաստանի խորհրդային իշխանությունը առաջին իսկ օրերից սկսեց կիրառել ռազմական կոմունիզմի քաղաքականություն:
- 4) Հայաստանի խորհրդային իշխանությունը, խախտելով Երևանի դեկտեմբերի 2-ի իշխանափոխության համաձայնագիրը, ձևավորեց միակուսակցական վարչակազմ:
- 5) Խորհրդային իշխանությունը Հայաստանում քաղաքական հետապնդումներ և բռնություններ գործադրեց միայն այլախոհների և հայկական բանակի սպայակազմի նկատմամբ:
- 6) Խորհրդային պետությունների միավորման Ստալինի մշակած նախագծի համաձայն՝ խորհրդային հանրապետությունները պետք է մտնեին ՌՍԴԽՀ-ի կազմը:
- 7) Անդրկովկասի Դաշնությունը ԽՍՀՄ-ի կազմում գոյատևեց մինչև 1991 թվականը:

#### **11. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Բաթումի պայմանագրով Թուրքիային անցան Սուրմալուն, Կարսը, Ախալցխան, Նախիջևանը, Ջանգեզուրը:
- 2) 1920 թ. կեսերին ՀՀ տարածքը կազմում էր շուրջ 160 հազար քառ. կմ՝ 3 մլն բնակչությամբ:
- 3) Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի ընտրություններին մասնակցելու իրավունք ունեին 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները՝ առանց սեռի, ազգության և կրոնական խտրականության, ընդհանուր, գաղտնի, հավասար և բազմաստիճան քվեարկությամբ:
- 4) Հայաստանի առաջին հանրապետության ընտրված խորհրդարանն ուներ 80 անդամ:
- 5) Հայաստանի առաջին հանրապետությունում հիմք դրվեց դպրոցների կառավարման հանրային սկզբունքը:
- 6) ՀՓԿ-ն 1921 թ. փետրվարին օգնության խնդրանքով դիմեց նաև քեմալականներին:
- 7) 1918–1920 թթ. դպրոց էր հաճախում համապատասխան տարիքի երեխաների երեք քառորդը:

## 12. Տրված պնդումներից որոնք են սխալ.

- 1) Նժդեհի գլխավորած հերոսական ինքնապաշտպանության շնորհիվ Ջանգեզուրը մնաց Խորհրդային Հայաստանի կազմում:
- 2) Մոսկվա մեկնած Ա. Բեկզադյանի գլխավորած հայկական պատվիրակությունը այն տեսակետին էր, որ ՀՍԽՀ սահմաններում պետք է լինեին 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրեի դրությամբ ՀՀ-ին պատկանող տարածքները:
- 3) 1922 թ. ապրիլի 22-ին թուրքերը վերջնականապես լքեցին Ալեքսանդրապոլը:
- 4) Քեմալա-բուշնիկյան գործարքով Հայաստանից խլվեցին և Թուրքիային ու Ադրբեջանին նվիրաբերվեցին հայկական տարածքների զգալի մասը:
- 5) ՌԿ(Բ)Կ կովկասյան բյուրոյի պլենումը 1921 թ. հուլիսի 5-ին ընդունեց արդարացի որոշում՝ Լեռնային Ղարաբաղը միացնելու Խորհրդային Հայաստանին:
- 6) Մոսկվայի ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսում թուրքական պատվիրակության նախագահն էր Քյազիմ Կարաբեքիր փաշան:
- 7) Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի համաձայն՝ Թուրքիային անցավ Սուրմալուի գավառը:

## 13. Թվարկվածներից որոնք են ՀՍԽՀ կառավարության՝ Կարսի կոնֆերանսի համար ձևակերպած առաջարկներից.

- 1) Թուրք-հայկական սահման որոշել Կուր և Արաքս գետերը՝ հայկական կողմում թողնելով Սուրմալուն:
- 2) Հայաստանին տրամադրել Օլթիի և Կաղզվանի հանքավայրերի, Սարիղամիշի անտառների, Կարսի խոտհարքերի, Կողբի աղի հանքերի շահագործման իրավունքը:
- 3) Ջավախքը՝ որպես ինքնավար տարածք, հանձնել Վրաստանի խնամակալությանը:
- 4) Ղարաբաղի խնամակալությունը թողնել Ադրբեջանին:
- 5) Կարսի մարզի խնամակալությունը հանձնել Հայաստանին:
- 6) Թուրքիայի և Հայաստանի միջև ազատ առևտրի իրավունք տալ:
- 7) Արևմտահայ գաղթականներին թույլ տալ վերադառնալ հայրենի օջախները և փոխհատուցել նրանց կրած վնասները:

## 14. Տրված պնդումներից որոնք են սխալ.

- 1) «Աջերի», տրոցկիստների ջախջախումից հետո ՀամԿ(Բ)Կ ստալինյան ղեկավարությունը հաստատեց իր բացարձակ իշխանությունը:
- 2) Հնչակյան կուսակցությունը, Կոմիտերնի ընդունած որոշման համաձայն, դադարեցրեց իր գործունեությունը արտասահմանում:
- 3) Խորհրդային երկրում սկսել էր ձևավորվել անձի պաշտամունքը, որը բացահայտ դարձավ 1929 թվականից՝ Ստալինի 50-ամյակի նշումից հետո:
- 4) Հարկադրաբար ստեղծված կոլտնտեսությունները լուծարելուց հետո խորհրդային պետությունը որպես ճնշման միջոց գյուղացիական տնտեսությունների նկատմամբ կիրառեց հարկերի ավելացման քաղաքականությունը:

- 5) Հակակոլտնտեսային շարժումն արտահայտվեց նաև գյուղացիների կողմից իրենց անասուններն անխնա մորթելու ձևով, որի հետևանքով Հայաստանում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կրճատվեց երկու անգամ, իսկ մանր եղջերավորներինը՝ 30 տոկոսով:
- 6) Խորհրդային Հայաստանում գյուղացիության ճնշող մեծամասնությունը կոլտնտեսություններին անդամագրվել է 1938–1940 թվականներին:
- 7) Գյուղացիների տեղաշարժերը կասեցնելու նպատակով խորհրդային իշխանությունը նրանցից խլեց անձնագրերը:

#### **15. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) «Այլախոհ» հասկացությունը ի հայտ եկավ 1970–ական թթ., որը բնութագրում էր այն մարդկանց, ովքեր պայքարում էին խորհրդային իրականությունը փոփոխելու համար:
- 2) Այլախոհները 1970–ական թթ. կեսերին Հայաստանում ստեղծեցին առաջին այլախոհական կազմակերպությունները:
- 3) 1973 թ. ձևավորված ԱՄԿ ղեկավար խորհուրդը որդեգրեց «Անկախություն՝ զինված պայքարի ճանապարհով» ռազմավարությունը:
- 4) Մեծ եղեռնի հիսնամյա տարելիցի օրը Երևանում տեղի ունեցան զանգվածային ցույցեր և հանրահավաքներ. Հայաստանում նման ելույթներ եղան նաև 1970–ական թվականներին:
- 5) Պարույր Հայրիկյանին, Աշոտ Նավասարդյանին և ուրիշներին 1970 թ. ազատազրկման դատապարտեցին այն մեղադրանքով, որ «ակտիվ ընդհատակյա գործունեություն են վարել՝ նպատակ ունենալով անջատելու Հայաստանը ԽՍՀՄ–ից և ստեղծելու անկախ հայկական պետություն»:
- 6) ԽՄԿԿ XX համագումարում «Անհատի պաշտամունքի և նրա հետևանքների մասին» զեկուցումով հանդես է եկել Միխայիլ Գորբաչովը:
- 7) Հայաստանում հակախորհրդային գործունեության մեղադրանքով դատապարտվածների պայքարի հիմնական նպատակն էր հայկական հողերի վերամիավորումը, լեզվի և մշակույթի պահպանումը, կոմունիստների մենիշխանության վերացումը և անկախ Հայաստանի ստեղծումը:
- 8) Վերակառուցման շրջանում Խորհրդային Միությունում հետզհետե սրվող ազգային հարցին գործնական լուծում տալու փոխարեն Մոսկվան վարում էր երկդիմի և խուսանավելու քաղաքականություն:

#### **16. Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ.**

- 1) 1991 թ. մայիսին Թուրքիայի կողմից հրահրվեց ղարաբաղա-ադրբեջանական պատերազմ:
- 2) 1992 թ. սկզբներին ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի ղեկավար է նշանակվել գնդապետ Արկարի Տեր-Թադևոսյանը:
- 3) ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեն ստեղծվել է 1993 թ. օգոստոսի 15–ին՝ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ:

- 4) ՀՀ Գերագույն խորհուրդը 1991 թ. սեպտեմբերի 23-ին Հայաստանը հռչակեց անկախ պետություն:
- 5) ՀՀ 1995 թ. խորհրդարանական ընտրություններում ընդդիմադիր հիմնական կուսակցությունները համախմբվեցին «Հանրապետություն» քաղաքական միավորման շուրջ:
- 6) 1990 թ. նոյեմբերի 15-ին ստեղծվել էր Հայաստանի Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովը, որը զբաղվում էր նոր Սահմանադրության նախագծի մշակմամբ:
- 7) Անկախության հռչակագրի ընդունումից երկու ամիս անց Հայաստանում առաջին անգամ անցկացվեցին նախագահական համաժողովրդական, ուղղակի, այլընտրանքային ընտրություններ:

### **17. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Սփյուռքում Հայ դատի լուծման գործում զգալի դեր էին խաղում հայ ազգային քաղաքական կուսակցությունները՝ ՀՅԴ-ն, Հնչակյան կուսակցությունը և Ազգային միացյալ կուսակցությունը:
- 2) Հայկական ազգային կոմիտեի կամ Հայ դատի հանձնախմբի նպատակն է Արևելյան և Արևմտյան Հայաստանի միավորումը և միասնական հայկական պետության կազմումը միայն Վիլսոնի նախանշած սահմաններում:
- 3) Սևրի պայմանագիրը ստորագրած երկրները Լոնդոնի կոնֆերանսում փաստորեն հրաժարվեցին իրենց ստորագրություններից և վերանայեցին իրենց մոտեցումները Հայկական հարցի լուծման վերաբերյալ:
- 4) 1950–1982 թթ. ավելի շատ հայ է հայրենադարձվել Խորհրդային Հայաստան, քան Մեծ հայրենադարձության տարիներին:
- 5) Հայկական հարցի համար դիվանագիտական պայքարը 1920–ական թթ. սկզբին շարունակում էին Ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբար փաշայի, ապա՝ Գ. Նորատունկյանի գլխավորությամբ, և իր գոյությունը շարունակող նախկին Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ Ա. Ահարոնյանի նախագահությամբ:
- 6) Խորհրդային իշխանության տարիներին Հայ դատի և պահանջատիրության խնդիրներով հիմնականում զբաղվում էր Սփյուռքը, որովհետև Խորհրդային Հայաստանը զրկված էր ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունից:
- 7) Խորհրդային իշխանությունը Փարիզի և Լոնդոնի պայմանագրերով, ըստ էության, հրաժարվեց Հայկական հարցից, և համազգային այդ խնդրի ամբողջ ծանրությունն իր վրա վերցրեց Սփյուռքը:

### **18. Տրված փաստարկներից որո՞նք են սխալ.**

- 1) 1920–ական թվականներին խոշոր գաղթօջախ ձևավորվեց նաև Ամերիկայում (ԱՄՆ և Կանադա)՝ շուրջ 130 հազար հայերով:
- 2) 1922 թ. հունվարի 10–ին Բաթում ժամանեց Միջազգետքում ապաստանած հայերի երկրորդ՝ ևս 3–հազարանոց խումբը:

- 3) 1921–1936 թթ. Խորհրդային Հայաստան է ներգաղթել ավելի քան 62 000 մարդ:
- 4) 1945 թ. մայիսի 28–ին ՀՀ նախկին վարչապետ Ա. Խատիսյանը դիմեց Ստալինին, Թրումանին և Չերչիլին՝ խնդրելով ջանքեր գործադրել Հայկական հարցի արդարացի լուծման ուղղությամբ:
- 5) Նյու Յորքում 1947 թ. գարնանը տեղի ունեցած Հայկական համաշխարհային կոնգրեսին մասնակցում էին 22 երկրների 715 պատգամավորներ:
- 6) 1992 թ. մարտի 2–ին ՀՀ–ն անդամագրվեց Եվրոպայի խորհրդին:
- 7) Հայոց ցեղասպանության 100–րդ տարելիցին մասնակցեցին ավելի քան 60 երկրների և միջազգային տասնյակ կառույցների պատվիրակություններ:

## **19. Բերված փաստարկներից որո՞նք են սխալ.**

- 1) Հայ երաժշտական արվեստի նշանավոր ներկայացուցիչներից էին Շարա Տալյանը, Հայկանուշ Դանիելյանը և ուրիշներ. ընդ որում՝ Հ. Դանիելյանին առաջինը շնորհվեց ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհու կոչում:
- 2) 1933 թ. հանրապետությունում գործում էին շուրջ 40 ինքնուրույն գիտահետազոտական հիմնարկներ:
- 3) 1934 թ. «Նամուս» կինոնկարով ամփոփվեց հայկինոյի համր շրջանը:
- 4) 1924 թ. Դրիմից Հայաստան տեղափոխված մեծանուն կոմպոզիտոր Ա. Սպենդիարյանը դրեց հայկական ազգային սիմֆոնիզմի հիմքը:
- 5) 1935 թ. ստեղծվել է Հայաստանի խորհրդային կերպարվեստագետների միությունը:
- 6) «Նամուս» ֆիլմում իր առաջին դերակատարումով հանդես եկավ Հրաչյա Ներսիսյանը:
- 7) 1941 թ. Արմֆանի կազմում գործում էին 112 գիտահետազոտական հիմնարկներ:

## **20. Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Շուշիում 1918 թ. հուլիսի 22–26–ին տեղի ունեցած արցախահայության առաջին համագումարը երկրամասը հռչակեց անկախ վարչաքաղաքական միավոր՝ «Լեռնահայաստան» անունով:
- 2) Թիֆլիսում 1919 թ. փետրվարի 6–13–ը տեղի է ունեցել Արևմտահայերի երկրորդ համագումարը:
- 3) 1920 թ. ամռան կեսերից Մոսկվայում ընթացած խորհրդա–քեմալական բանակցություններն ավարտվեցին օգոստոսի 24–ին կողմերի միջև նախաստորագրված «Սրտագին և անկեղծ բարեկամության» պայմանագրով:
- 4) Արցախահայության 1920 թ. ապրիլի 25–ին կայացած 9–րդ համագումարը երկրամասը հռչակեց Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասը:
- 5) 1920 թ. նոյեմբերի 7–ին՝ Կարսի անկման օրը, Հայաստանի կառավարությունը ստիպված ընդունեց թուրքական կառավարության կողմից ներկայացված զինադադարի պայմանները:
- 6) 1947 թ. ապրիլի 30–ից մայիսի 4–ը Նյու Յորքում կայացել է Հայկական համաշխարհային կոնգրեսը:

- 7) ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը 1989 թ. նոյեմբերի 28-ին բեկանեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ԼՂ Ազգային խորհրդի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» համատեղ որոշումը:
- 8) 1991 թ. մայիսի 20-ին տեղի ունեցած ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններում ընտրողների ձայները համարյա հավասարապես բաժանվեցին Հայկական և ՀՀ-ի թեկնածուների միջև:

## 21. Տրված պնդումներից որոնք են սխալ.

- 1) 1950-ական թթ. հայկական արվեստի վերելքը պայմանավորված էր նաև 1945 թ. Երևանի գեղարվեստական ինստիտուտի հիմնադրումով:
- 2) Սփյուռքահայ նկարչուհի Սոնիա Պալասանյանի նախածոնությամբ է Երևանում կազմակերպվել «Մկրտչյան» պատկերասրահը:
- 3) 1950-ական թթ. կեսերից Հայաստանում մեծ զարգացում ստացած մաթեմատիկայի ասպարեզում ձեռք բերված առաջին հաջողությունները կապված են Արտաշես Շահինյանի և Արտեմ Ալիխանյանի անունների հետ:
- 4) Հայաստանում 1960-ական թթ. գիտական մտքի զարգացման հիմնական կենտրոնը Երևանի պետական համալսարանն էր, որտեղ կենտրոնացված էր հանրապետության գիտական հիմնական ներուժը:
- 5) 1950-1970-ական թթ. հայկական գեղանկարչության ամենաբնորոշ գծերն էին ավանդական ժանրերի միաձուլումը, մարդկանց և բնապատկերի համադրումը:
- 6) 1960-1980-ական թթ. կառուցվել են պատմության նշանավոր դեպքերն ու դեմքերը հավերժացնող հուշարձաններ, որոնցից են Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրը Ծիծեռնակաբերդում, Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը և այլն:
- 7) Լորիս Ճգնավորյանը 1991 թ. հիմնել է Գյումրիի մշակութային կենտրոնը:

## 8-II. Պնդումների փունջ

### 1. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) ՀՀ տարածքը 1920 թ. գարնան վերջին հասել էր շուրջ 70 հազար քառ. կմ:
- 2) Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի ընտրություններին մասնակցելու իրավունք ունեին 20 տարին լրացած ՀՀ քաղաքացիները՝ առանց սեռի, ազգության և կրոնական խտրականության, ընդհանուր, գաղտնի, հավասար և բազմաստիճան քվեարկությամբ:
- 3) Հայաստանի առաջին հանրապետության ընտրովի խորհրդարանն ուներ 72 անդամ:
- 4) Հայաստանի առաջին հանրապետությունում դպրոցական համակարգը երկաստիճան էր՝ տարրական և միջնակարգ:
- 5) 1918 թ. սեպտեմբերին ընդունվեց «Դպրոցի բարեփոխման մասին» օրենքը:
- 6) Հայաստանի առաջին հանրապետության պետական դպրոցներում ուսումնական գործն ազգայնացված էր:

## **2. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Թիֆլիսում ստորագրված հայ-ռուսական համաձայնագրով Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը հայտարարվում էին Հայաստանի անբաժան տարածքներ:
- 2) «Լոռու չեզոք գոտում» սահմանված հատուկ կառավարումն իրականացվելու էր Հայաստանի և Վրաստանի լիազոր ներկայացուցիչների համատեղ ղեկավարությամբ և անգլիացի գեներալ-նահանգապետի ընդհանուր վերահսկողությամբ:
- 3) Թուրք-հայկական պատերազմի ժամանակ Թիֆլիսում կնքված հայ-վրացական համաձայնագրով երեք ամսով «Լոռու չեզոք գոտի» են մտցվել վրացական զորքեր:
- 4) Մուսավաթական Ադրբեջանը, ոգևորվելով Անդրկովկասում Թուրքիայի նվաճողական քաղաքականությունից, հավակնություններ է դրսևորել հայկական տարածքներ Ջանգեզուրի, Ղարաբաղի, Ջավախքի և Կարսի նկատմամբ:
- 5) Թուրքական զորքերի հարձակումը դեպի Բաքու սկսվել է 1918 թ. հունիսի կեսերին, սակայն մինչև սեպտեմբերի կեսը նրանց չի հաջողվել գրավել քաղաքը:
- 6) 1918 թ. սեպտեմբերին Բաքու ներխուժած թուրքական զորքերը և թուրք-թաթարական խաժամուժը կոտորեցին շուրջ 30 հազար հայերի:

## **3. Գտնել ճիշտ և սխալ պնդումները:**

*Հայկական երկու պարավորությունների՝ Տասի խորհրդին ներկայացված հուշագրում ներառված էին հետևյալ պահանջները.*

- 1) Ճանաչել Միացյալ հայկական անկախ պետությունը:
- 2) Առնվազն 30 տարով դաշնակից պետություններից մեկին հանձնել Հայաստանի մանդատը (հովանավորությունը):
- 3) Պատժի ենթարկել հայկական ջարդերի կազմակերպիչներին, պարտավորեցնել Թուրքիային փոխհատուցելու հայերի կրած վնասները:
- 4) Միացյալ Հայաստանի կազմում ներառել Արևմտյան Հայաստանի յոթ նահանգները, Կիլիկիայի չորս սանջակները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը՝ ընդլայնված սահմաններով:
- 5) Միացյալ Հայաստանի կազմում ներառել Արևմտյան Հայաստանի չորս նահանգները (Վան, Բիթլիս, Էրզրում և Տրապիզոն), ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը՝ ընդլայնված սահմաններով:
- 6) Առնվազն 20 տարով դաշնակից պետություններից մեկին հանձնել Հայաստանի մանդատը (հովանավորությունը):

## **4. Արևելքի ժողովուրդների առաջին համագումարին վերաբերող ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը տեղի է ունեցել Բաքվում և նպաստել է քեմալա-բոլշևիկյան մերձեցմանը:
- 2) Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի ստեղծած «Քարոզչության և գործողության խորհուրդը» ընդունել է բանաձև-փաստաթուղթ, որի հիմնական դրույթներն ամբողջությամբ ուղղված էին ՀՀ-ի դեմ:

- 3) Այդ բանաձևով առաջարկվում էր բոլոր միջոցներով օգնել մուսավաթականներին և Հայաստանի վրա նրանց ռազմարշավի միջոցով նպաստել վերջինիս խորհրդայնացմանը:
- 4) Այդ խորհրդի մշակած փաստաթղթի համաձայն՝ Ռուսաստանը՝ որպես փրկարար և հաշտարար, պետք է մտներ Հայաստան և այնտեղ հաստատեր խորհրդային վարչակարգ:
- 5) Արևելքի ժողովուրդներին կոչ է արվել սրբազան պատերազմ ծավալելու «միջագային միլիտարիզմի», այդ թվում՝ նրա «դաշնակից» Հայաստանի դեմ:
- 6) Դավադիր այդ փաստաթղթի ընդունումից երկու ամիս անց Թուրքիան առանց պատերազմ հայտարարելու ռազմական գործողություններ է սկսել Հայաստանի դեմ:

#### **5. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Վրաստանի հեղկոմի նախագահ Պ. Մդիվանին և նրա կողմնակիցները կարծում էին, որ Անդրկովկասի Դաշնություն ստեղծելու համար կան իրական նախադրյալներ և կողմ էին դրա ստեղծմանը:
- 2) Հայաստանի իշխանությունները դեմ էին Անդրդաշնության ստեղծմանը, որովհետև այն հնարավորություն չէր տալու երկիրը ու ժողովրդին արտաքին վտանգներից պաշտպանելու և հասարակական-տնտեսական ծանր վիճակից դուրս բերելու:
- 3) Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարն ընդունել է ԱԽԴԱՀ Սահմանադրությունը և որոշել մյուս խորհրդային հանրապետությունների հետ միավորվել ԽՍՀՄ-ի կազմում:
- 4) «Ստալինյան ինքնավարացման ծրագրին» հավանություն են տվել խորհրդային բոլոր հանրապետությունների կոմկուսները:
- 5) ԽՍՀՄ-ը իրականում ոչ թե դաշնային միություն էր, այլ միաձույլ կենտրոնացված պետություն:
- 6) ԱԽԴԱՀ-ն գոյություն է ունեցել ընդամենը տասը տարի:

#### **6. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայաստանում խորհրդային կարգեր «ներդնելու» նպատակով ներքին գործերի ժողկոմատը և Արտակարգ հանձնաժողովը սկսել են բռնություններ գործադրել բնակչության նկատմամբ:
- 2) Հայաստանի խորհրդային իշխանությունը, պահպանելով Երևանի դեկտեմբերի 2-ի իշխանափոխության համաձայնագրի սկզբունքները, երկրում ձևավորել է միակուսակցական վարչակարգ:
- 3) Վրաստանի կոմկուսի ղեկավարությունը հեղկոմի նախագահ Պ. Մդիվանու գլխավորությամբ համոզված էր, որ Անդրկովկասի Դաշնության կազմավորման համար կային իրական նախադրյալներ:
- 4) Հայաստանի խորհրդային իշխանությունը առաջին իսկ ամսում սկսել է կիրառել ռազմական կոմունիզմի քաղաքականությունը:
- 5) Խորհրդային իշխանությունը Հայաստանում քաղաքական հետապնդումներ և բռնություններ է գործադրել միայն հայկական բանակի սպայակազմի նկատմամբ:

6) Հայաստանում խորհրդային վարչակարգը հաստատելու և ամրապնդելու գործընթացը կազմակերպում և ուղղորդում էր Հայաստանի Ազգային ժողովը:

**7. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Խորհրդային Հայաստանին Առաջին հանրապետությունից փոխանցվել էր հարևան միայն երկու երկրների հետ տարածքային-սահմանային չլուծված խնդիրների «Ժառանգությունը»:
- 2) Հայ-ադրբեջանական տարածքային խնդիրները կապված էին Նախիջևանի, Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի հետ, որոնք, ի վերջո, բոլորը ՌԿ(Բ)Կ կովկասյան բյուրոյի ջանքերով տրվեցին Ադրբեջանին:
- 3) ՀՍԽՀ կառավարությունը 1921 թ. հունիսի 13-ին պայքարը դադարեցնելու և խորհրդայնացումն ընդունելու հերթական կոչն է ուղղել Արցախի կառավարությանը՝ նշելով, որ երկրամասը լինելու է Հայաստանի կազմում:
- 4) ՌԿ(Բ)Կ կովկասյան բյուրոյի պլենումը 1921 թ. հուլիսի 4-ի նիստում ընդունել էր արդարացի որոշում՝ Լեռնային Ղարաբաղը միացնելու Խորհրդային Հայաստանին:
- 5) Հայ-վրացական տարածքային խնդիր էր նաև Զավախքի հարցը, որը ՌԿ(Բ) Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի ջանքերով լուծվել է Վրաստանի օգտին:
- 6) Գարեգին Նժդեհի գլխավորած Զանգեզուրի ինքնապաշտպանության շնորհիվ է այդ երկրամասը մնացել Հայաստանի կազմում:

**8. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության կառավարությունը գլխավորել է Ա. Չխենկելին:
- 2) Խորհրդային Ռուսաստանի կառավարության ընդունած «Թուրքահայաստանի մասին» հրովարտակն իրական ազատություն է տվել Արևմտյան Հայաստանին:
- 3) Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան ղեկավարության քաղաքականության արդյունքում Արևելյան Հայաստանի տարածքների զգալի մասը դուրս է մնացել Խորհրդային Հայաստանի սահմաններից:
- 4) ԽՍՀՄ-ը Գերմանիայի դեմ պատերազմում մնացել էր միայնակ՝ առանց դաշնակիցների:
- 5) Հայրենական մեծ պատերազմի տարիներին եղել են վեց հայկական ազգային դիվիզիաներ:
- 6) ՀՀ նախկին վարչապետ Ա. Խատիսյանը Պոստսոստալի կոնֆերանսի նախօրեին դիմել էր Ստալինին, Թրոսմանին, Չերչիլին և խնդրել լուծել հայ ժողովրդին հուզող՝ հայկական տարածքների վերադարձի հարցը:

**9. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումը 1921 թ. հուլիսի 4-ին ընդունել է արդարացի որոշում՝ Լեռնային Ղարաբաղը միացնելու ՀՍԽՀ-ին:
- 2) Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի 15-րդ հոդվածով Ռուսաստանը պարտավորվում էր անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել, որպեսզի Անդրկովկասի խորհրդային հանրապետությունները «պարտադիր կերպով ճանաչեն սույն պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջականորեն վերաբերում են իրենց»:

- 3) Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի՝ հայ-թուրքական սահմանին վերաբերող դրույթներն առանց առարկության ընդունվել են Խորհրդային Հայաստանի կողմից:
- 4) ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոն «Կարսի կոնֆերանսի մասին» իր որոշմամբ հնարավորություն էր տալիս, որպեսզի Անդրկովկասի երեք խորհրդային հանրապետությունները որոշ փոփոխություններ կատարեն Մոսկվայի պայմանագրի՝ իրենց վերաբերող պայմաններում:
- 5) Ի տարբերություն Մոսկվայի պայմանագրի՝ որով Նախիջևանի մարզի խնամակալությունը Ադրբեջանը իրավունք չունեի զիջելու «մի երրորդ պետության», Կարսի պայմանագրից այդ պայմանը հանվել է:
- 6) Խորհրդային Հայաստանի իշխանություններն ընդունել են Կարսի պայմանագրի պահանջները և ոչ մի դժգոհություն չեն արտահայտել:

#### **10. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) ԽՍՀՄ կառավարության որոշմամբ 1947 թ. Խորհրդային Հայաստան պետք է ներգաղթեին ևս շուրջ 63 հազար սփյուռքահայեր:
- 2) Ամենամարդաշատ հայկական գաղթօջախները 1920-ական թթ. սկզբին Ֆրանսիայում և ԱՄՆ-ում էին, որոնց բարեկամական վերաբերմունքի շնորհիվ ապաստան էին գտել հարյուրհազարավոր հայեր:
- 3) Հայկական հարցը քննարկվել է Լոզանի կոնֆերանսում, որտեղ էլ փաստորեն մոռացության է տրվել Սևրի պայմանագիրը:
- 4) Հայկական հարցի արդարացի և վերջնական լուծման ամբողջ ծանրությունն իր վրա էր վերցրել խորհրդային պետությունը:
- 5) Նյու Յորքում կայացած Հայկական համաշխարհային կոնգրեսը, ներգաղթի կազմակերպման, Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման հարցերը քննարկելուց բացի, փաստաթուղթ էր պատրաստել հայկական հողային պահանջների վերաբերյալ և ներկայացրել ԱՄՆ-ի նախագահ Ռուզվելտին:
- 6) Մեծ հայրենադարձության տարիներին Խորհրդային Հայաստան հայրենադարձվել է ավելի շատ մարդ, քան 1921-1936 թթ. և 1950-1982 թթ. ընթացքում միասին վերգրած:

#### **11. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայաստանի իշխանությունների որոշ մասը դեմ էր Անդրդաշնության ստեղծմանը:
- 2) Խորհրդային Միությունում պետական կառավարումն իրականացվում էր կոմկուսի կազմակերպությունների կողմից:
- 3) Տեղերում կուսակցական մարմիններն ամրապնդելու համար Հայաստանի գավառային բաժանումը 1932 թ. վերացվել է, և ստեղծվել են 35 շրջաններ՝ իրենց կուսակցական կոմիտեներով:
- 4) Հայաստանի կոմկուսը զուրկ էր Ռուսաստանի կոմկուսից անկախ, ինքնուրույն քաղաքականություն վարելու հնարավորությունից:

- 5) Հնչակյան կուսակցությունը 1924 թ. դադարեցրել է իր գործունեությունը ԽՍՀՄ տարածքում, իսկ նրա առաջնորդներից Ավետիս Նազարբեկյանը դարձել է կոմկուսի անդամ:
- 6) Արագ արդյունաբերացման համար անհրաժեշտ միջոցները հնարավոր էր հայթայթել միայն երկրի ներսում:

**12. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) 2015 թ. հունվարից Հայաստանը դարձավ Եվրասիական տնտեսական միության լիիրավ անդամ և իր ակտիվ մասնակցությունը բերեց կազմակերպության կայացման գործընթացին:
- 2) Հայապահպանության և Հայ դատի գործում կարևոր դեր էին խաղում նաև հայ ազգային քաղաքական կուսակցությունները՝ ՀՅԴ-ն, Հնչակյան կուսակցությունը, Ռամկավար ազատական կուսակցությունը:
- 3) ԽՍՀՄ կառավարության որոշմամբ՝ 1947 թ. Խորհրդային Հայաստան պետք է ներգաղթեին շուրջ 63 հազար սփյուռքահայեր, սակայն մի շարք պատճառներով հանրապետությունը կարողացավ ընդունել միայն 25 հազար մարդու:
- 4) Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հիմնադիրը Գ. Նորատունկյանն էր:
- 5) Խորհրդային Հայաստան 1921–1936 թթ. և 1950–1982 թթ. ընթացքում միասին վերցրած ավելի շատ մարդ է հայրենադարձվել, քան Մեծ հայրենադարձության տարիներին:
- 6) Թուրքիայի կողմից 1974 թ. Կիպրոսի հյուսիսային մասի բռնազավթումն այնտեղ բնակվող հայության մի մասի արտագաղթի պատճառ է դարձել:

**13. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) «Աջերի», տրոցկիստների ջախջախումից հետո ՌԿ(բ)Կ ստալինյան ղեկավարությունը ԽՍՀՄ-ում հաստատել է իր բացարձակ իշխանությունը:
- 2) Խորհրդային երկրում սկսել էր ձևավորվել Ստալինի անձի պաշտամունքը, որը բացահայտ է դարձել նրա ծննդյան 50-ամյակի (1929 թ.) նշումից հետո:
- 3) Հնչակյան կուսակցությունը, Կոմինտերնի ընդունած որոշման համաձայն, դադարեցրել է իր գործունեությունը արտասահմանում:
- 4) Հարկադրաբար ստեղծված կոլտնտեսությունները լուծարելուց հետո խորհրդային պետությունը, որպես ճնշման միջոց գյուղացիական տնտեսությունների նկատմամբ, կիրառել է հարկերի ավելացման քաղաքականությունը:
- 5) Գյուղացիների տեղաշարժերը կասեցնելու նպատակով խորհրդային իշխանությունը նրանցից խլել էր տրանսպորտային միջոցները:
- 6) Խորհրդային Հայաստանում գյուղացիության ճնշող մեծամասնությունը կոլտնտեսություններին է անդամագրվել 1933–1935 թվականներին:

**14. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) ԽՍՀՄ-ում հնգամյակներով կենտրոնացված պլանավորումն իրականացվել է միայն Ստալինի և Խրուշչովի կառավարման շրջանում:
- 2) Արդյունաբերացման նպատակը ԽՍՀՄ-ը մեքենաներ և սարքավորումներ ներմուծող երկրից դրանք արտադրող երկրի վերածելն էր:
- 3) Ի տարբերություն Արևմուտքի զարգացած երկրների՝ Խորհրդային Միության արդյունաբերացումն սկսվել էր թեթև և սննդի արդյունաբերություններից:
- 4) ՀՅԴ ինքնավերացման համագումարից անմիջապես հետո Խորհրդային Հայաստանում լուծարվել են դաշնակցության ընդհատակյա կառույցները:
- 5) Հայ տրոցկիստների առաջին ելույթը «Երեքի դեկլարացիան» էր, որը տպագրվեց մամուլում 1937 թվականին:
- 6) Հայոց եկեղեցու դեմ պայքարն ավելի է սաստկացել համատարած կոլեկտիվացման տարիներին. հոգևորականությունը դիտվել է որպես հեղափոխական և խորհրդամետ տարր:

**15. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայրենական մեծ պատերազմի 64 հայ զեներալներից 6-ը հետագայում դարձել են մարշալներ:
- 2) 390-րդ հայկական դիվիզիան Կերչի մոտ մղված մարտերից հետո մասնակցել է նաև Հունգարիայի ազատագրման համար մղված մարտերին:
- 3) Խորհրդա-ֆիննական պատերազմում հայերից 4 հոգի արժանացել են ԽՍՀՄ հերոսի կոչման:
- 4) Հայրենական մեծ պատերազմի առաջին հայ հերոսը օդաչու Լազր Չափչափյանն էր:
- 5) Ստալինգրադի ճակատամարտում ցուցաբերած անձնվիրության համար ԽՍՀՄ հերոսի կոչմանն է արժանացել Սերգեյ Բուռնազյանը:
- 6) Հայ ժողովրդի ավելի քան 300 000 զավակներ Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են հայկական ազգային դիվիզիաների կազմում:

**16. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Ստալինի մահից հետո խորհրդային համակարգի ժողովրդավարական էությունը մնացել էր անփոփոխ:
- 2) «Իրավապաշտպան» հասկացությունը ի հայտ է եկել գորբաչովյան վերակառուցման շրջանում. դա բնութագրում էր այն մարդկանց, ովքեր պայքարում էին խորհրդային իրականությունը փոփոխելու համար:
- 3) Մեծ եղեռնի հիսնամյա տարելիցի օրը Երևանում տեղի են ունեցել զանգվածային ցույցեր և հանրահավաքներ. Հայաստանում նման ելույթներ եղել են նաև 1970-ական թվականներին:
- 4) Ազգային զարթոնքի և կորցրած պատմական տարածքները վերադարձնելու գաղափարի շուրջ համախմբված այլախոհները 1960-ական թթ. սկզբին Հայաստանում ստեղծել էին առաջին այլախոհական կազմակերպությունները:
- 5) Պարույր Հայրիկյանին, Աշոտ Նավասարդյանին և ուրիշներին 1975 թ. ազատագրվման էին դատապարտել այն մեղադրանքով, որ «ակտիվ ընդհատա-

կյա գործունեություն են վարել՝ նպատակ ունենալով անջատելու Հայաստանը ԽՍՀՄ-ից և ստեղծելու անկախ հայկական պետություն»:

6) Հայաստանում հակախորհրդային գործունեության մեղադրանքով դատապարտվածների պայքարի հիմնական նպատակն էր հայկական հողերի վերամիավորումը, լեզվի և մշակույթի պահպանումը, կոմունիստների մենիշխանության վերացումը և անկախ Հայաստանի ստեղծումը:

**17. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) ԱՄԿ ղեկավար մարմինը՝ խորհուրդը, որ ձևավորվել էր 1973 թ., որդեգրել էր «Անկախություն՝ հանրաքվեի ճանապարհով» ռազմավարությունը:
- 2) «Հոչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթղթի ընդունումն ազդարարեց հայոց անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը:
- 3) Ըստ Անկախության հոչակագրի՝ Հայաստանի բանակը պետք է ունենար իր խաղաղարար առաքելությունները բոլոր երկրներում:
- 4) ՀՀ Սահմանադրության փոփոխությունների առաջին տարբերակը հաստատվել է համաժողովրդական հանրաքվեի միջոցով՝ ՀՀ նախագահական չորրորդ ընտրություններից հետո:
- 5) ՀՀ սահմանադրական առաջին փոփոխություններով տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետը դարձել է չորս տարի:
- 6) Թուրքիայի հետ ՀՀ պետական սահմանը փակվել է ղարաբաղա-ադրբեջանական պատերազմի այն օրերին, երբ հայկական ուժերն ազատագրեցին Լաչինը:

**18. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Անկախության հոչակագրի ընդունումից երկու ամիս անց ՀՀ Գերագույն խորհուրդը Հայաստանը հոչակել է անկախ պետություն:
- 2) Հայաստանի Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովը, որ ստեղծվել էր 1992 թ. նոյեմբերի 15-ին, զբաղվում էր նոր Սահմանադրության նախագծի մշակմամբ:
- 3) Մինչև ՀՀ անկախության հռչակումը երկրում արդեն ներդրվել էր բազմակուսակցական համակարգ:
- 4) Հետխորհրդային շրջանի ՀՀ Գերագույն խորհրդում ամենամեծ խմբակցությունն ուներ ՀՀԿ-ն:
- 5) Իր կառավարման երկրորդ ժամկետի ավարտից շուտ հրաժարական տված Լ. Տեր-Պետրոսյանից հետո ՀՀ նախագահ է ընտրվել Ս. Սարգսյանը:
- 6) ՀՀԿ-ն, ՀՅԴ-ն ու ՕԵԿ-ը 2003 թ. մայիսի 25-ի ԱԺ ընտրություններից հետո ստորագրել են քաղաքական կոալիցիայի համաձայնագիր:

**19. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Խորհրդային իշխանության տարիներին Հայ դատի և պահանջատիրության խնդիրներով հիմնականում զբաղվում էր Սփյուռքը:
- 2) 1920-ական թթ. սկզբին Հայկական հարցի համար դիվանագիտական պայքարը շարունակում էին Ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբարի, ապա՝ Գ. Նորատունկյանի գլխավորությամբ, և իր գոյությունը շարունակող նախկին

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ Ա. Ահարոնյանի նախագահությամբ:

- 3) Սփյուռքում հայապահպանության գործում զգալի դեր են խաղացել հայ ազգային քաղաքական կուսակցությունները՝ ՀՅԴ-ն, Հնչակյան կուսակցությունը և Ազգային միացյալ կուսակցությունը:
- 4) Լոնդոնի կոնֆերանսում թուրքական միացյալ պատվիրակությունը պահանջել է Թուրքիային վերադարձնել Կիլիկիան և հրաժարվել Սևրի պայմանագրից:
- 5) Ֆրանսիան և Անգլիան Փարիզի և Լոնդոնի պայմանագրերով, ըստ էության, հրաժարվել են Հայկական հարցից, և այդ խնդրի ամբողջ ծանրությունն իր վրա է վերցրել ԱՄՆ-ն:
- 6) Հայկական ազգային կոմիտեի կամ Հայ դատի հանձնախմբի նպատակն է միասնական հայկական պետության կազմումը ոչ միայն Վիլսոնի նախանշած սահմաններում, այլև ժամանակին Խորհրդային Հայաստանից անջատված բոլոր տարածքներով հանդերձ:

## **20. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայ-վրացական պատերազմի արդյունքում Լոռիում ստեղծվել է «ազատ գոտի»:
- 2) Վրաստանի Հանրապետությունում ՀՀ դիվանագիտական առաքելությունը ղեկավարում էր Ա. Զամալյանը:
- 3) 1919 թ. հունվարի 9–17-ը Թիֆլիսում Անտանտի ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրվել է հայ-վրացական հաշտության կոնֆերանս:
- 4) Հայոց բանակի «Աշոտ Երկաթ» ռազմանավը Սևանա լճում գործարկվել է բոլշևիկների Մայիսյան ապստամբության օրերին:
- 5) Ղարաբաղ-Չանգեզուրի մարզային խորհրդի ներկայացուցիչ էր նշանակվել Ավետիս Ահարոնյանը:
- 6) Ղարաբաղին և Չանգեզուրին տիրելու մուսավաթական Ադրբեջանի քաղաքականությունը շարունակել է նաև Խորհրդային Ադրբեջանը:

## **21. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Արցախահայության 9-րդ համագումարը երկրամասը հռչակել է Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասը:
- 2) Տաթևում կայացած համազանգեզուրյան առաջին համագումարը Սյունիքը հռչակել է անկախ վարչաքաղաքական միավոր՝ «Լեռնահայաստան» անունով:
- 3) «Փարոս» թերթը գաղտնի կերպով հրատարակվել է Ազգային միացյալ կուսակցության կողմից:
- 4) ՀԽՍՀ-ն վերանվանվել է Հայաստանի Հանրապետություն՝ անկախության հանրաքվեով:
- 5) ՀԽՍՀ Գերագույն խորհրդի այլընտրանքային առաջին ընտրություններում ընտրողների ձայները համարյա հավասարապես էին բաժանվել Հայկոմկուսի և ՀՀԾ-ի թեկնածուների միջև:
- 6) Նյու Յորքում կայացած Հայկական համաշխարհային կոնգրեսը դիմել է Պոտսդամի կոնֆերանսի մասնակիցներին՝ Հայկական հարցը լուծելու նպատակով:

**22. Երևանում 1920 թ. աշնանը տեղի ունեցած հայ-ռուսական բանակցություններին առնչվող ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Օ. Սիլինի գլխավորած պատվիրակությունը Երևան էր ժամանել հոկտեմբերի 11-ին:
- 2) Սկզբնական փուլում ռուսական պատվիրակությունը Հայաստանի խորհրդայնացման պահանջ չէր ներկայացնում:
- 3) Հոկտեմբերի 20-ին նախաստորագրվեց «Եզրափակիչ որոշման արձանագրություն», իսկ կողմերը պարտավորվում էին ստորագրել այդ արձանագրությանը կից «Հաշտության պայմանագիր»:
- 4) Ռուսաստանի և Ադրբեջանի կառավարությունները պետք է ճանաչեին Հայաստանի իրավունքները Նախիջևանի և Զանգեզուրի նկատմամբ:
- 5) Եթե Ռուսաստանը Հայաստանին օժանդակեր հետ ստանալու Թուրքիայից Արևմտյան Հայաստանի բոլոր տարածքները, ապա Հայաստանը պետք է հրաժարվեր Ղարաբաղի նկատմամբ պահանջներից:
- 6) Ռուսաստանը պարտավորվում էր Հայաստանին տրամադրել 4,5 մլն ռուբլի (ոսկով) վարկ:

**23. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայաստանի առաջին հանրապետության երկրորդ գումարման խորհրդարանում կուսակցական խմբակցություններ են ունեցել ՀՅԴ-ն և էսէռները:
- 2) Բոլոր կուսակցությունները, այդ թվում՝ բուլշևիկները, ազգի և պետության համար ճակատագրական ու վճռական պահերին թիկունք էին կանգնում Հայաստանի առաջին հանրապետության կառավարությանը:
- 3) Հայ ժողովրդական կուսակցությունը որոշ վերապահությամբ կողմ էր միացյալ և անկախ Հայաստանի ստեղծմանը:
- 4) Հայաստանում ի սկզբանե բուլշևիկների իշխանության հաստատումը կապվում էր երկրում հասունացող սոցիալ-տնտեսական ճգնաժամի և աշխատավորների ծայրահեղ դժգոհությունների հետ:
- 5) Մայիսյան ապստամբության օրերին Երևանում ստեղծվել էր Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե, որը ՀՀ կառավարությունից պահանջել է հանձնել իշխանությունը:
- 6) Հայաստանի առաջին հանրապետությունում գործում էր արհեստակցական 13 միություն:

**24. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Լոզանի կոնֆերանսը, քննարկելով Հայկական հարցը, մոռացության է տվել Սևրի պայմանագիրը:
- 2) Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով ոտնահարվել են հայ ժողովրդի պատմական իրավունքները, և հայկական տարածքները նվիրաբերվել են Թուրքիային և Ադրբեջանին:
- 3) ՀՄԽՀ ժողովրդային առաջին նախագահ է նշանակվել Ալեքսանդր Մյասնիկյանը:

- 4) Նէպը Խորհրդային Հայաստանում գործադրվել է Փետրվարյան համաժողովրդական ապստամբության ավարտից հետո:
- 5) «Աջերի», տրոցկիստական ընդդիմության ջախջախումից հետո ՀամԿ(բ)Կ ստալինյան ղեկավարությունը Խորհրդային երկրում հաստատել էր իր բացարձակ իշխանությունը:
- 6) Խորհրդային երկրում սկսել էր ձևավորվել Ստալինի անձի պաշտամունքը, որը բացահայտ է դարձել նրա ծննդյան 50-ամյակի (1929 թ.) նշումից հետո:

**25. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայաստանի երրորդ հանրապետության արտաքին քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն է:
- 2) Թուրքիան դեռ չի բացել ՀՀ-ի հետ պետական սահմանը, որը փակել է 1993 թ. ապրիլին:
- 3) Հայոց ցեղասպանությունը ճանաչած և դատապարտած պետությունների թիվն անցել է չորս տասնյակը:
- 4) Դաշնակցությունը ԱՄՆ-ում ստեղծել է Հայկական ազգային կոմիտե կամ Հայ դատի հանձնախումբ, որն իր գործունեությունը ծավալել է նաև Եվրոպայում, Մերձավոր Արևելքում և Լատինական Ամերիկայում:
- 5) «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը» ընդունվել է 2015 թ. հունվարի 29-ին:
- 6) Եվրամիությունը Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցելու նախապայմանների մեջ ընդգրկել է Հայոց ցեղասպանության ճանաչումը:

**26. Թվարկված իրադարձությունները տեղի են ունեցել 1935 թվականին.**

- 1) գեղարվեստի դպրոցի հիմնումը Երևանում
- 2) պատանի հանդիսատեսի թատրոնի բացումը Երևանում
- 3) «Պեպո» հայկական կինոնկարի էկրան բարձրանալը
- 4) ռուսական դրամատիկական թատրոնի հիմնադրումը
- 5) Հայաստանի կերպարվեստի թանգարանի հիմնումը
- 6) Արմֆանի բացումը

**27. Թվարկված իրադարձությունները տեղի են ունեցել 1938 թվականին.**

- 1) ռուսական դրամատիկական թատրոնի հիմնադրումը
- 2) հայկական ժողովրդական երգի ու պարի պետական անսամբլի ստեղծումը
- 3) օպերայի և բալետի պետական թատրոնի բացումը
- 4) Հայաստանի կերպարվեստի թանգարանի հիմնումը
- 5) Հովսեփ Օրբելու՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի նախագահ նշանակվելը
- 6) պետական ֆիլիարմոնիայի կազմակերպումը

**28. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Խորհրդային Հայաստանում ստալինյան բռնությունների ալիքը գագաթնակետին է հասել 1936 թվականին:

- 2) Խորհրդային Հայաստանում ամենազանգվածային հասարակական կազմակերպություններից էին երիտասարդական միությունները, որոնց գործունեությունը կենտրոնացնելու համար ստեղծվել էր ՀԱՄԽ-ն:
- 3) Խորհրդային երկրում արդյունաբերացման գործընթացն սկսվել է այն ժամանակ, երբ ԽՍՀՄ ղեկավարությունը հայտարարեց նէպից հրաժարվելու մասին:
- 4) ԽՍՀՄ արագ արդյունաբերացման համար անհրաժեշտ միջոցները հայթայթվել են երկրի ներսում, մասնավորապես՝ չափազանց ծանր հարկեր էին դրվել մտավորականության վրա:
- 5) Ստալինի «Մեծ բեկման տարին» հողվածը հրապարակվել է համատարած կոլեկտիվացման գործընթացն սկսվելուց հետո:
- 6) Խորհրդային երկրի գյուղատնտեսության կոլեկտիվացումն ապահովել է տնտեսական վերելք և խթանել գյուղացու աշխատանքի արտադրողականության բարձրացումը:

**29. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Ի տարբերություն Արևմուտքի զարգացած երկրների՝ Խորհրդային Միության արդյունաբերացումն սկսվել է ծանր արդյունաբերությունից:
- 2) ԽՍՀՄ-ում հնգամյակներով կենտրոնացված պլանավորումը սկսել է կիրառվել 1920-ական թթ. վերջերից:
- 3) Արդյունաբերացման նպատակը ԽՍՀՄ-ը սնունդ և հումք արտադրող երկրից դրանք ներմուծող երկրի վերածելն էր:
- 4) Հայոց եկեղեցու դեմ պայքարն ավելի է սաստկացել նէպի տարիներին, երբ հոգևորականությունը դիտվեց որպես հակախորհրդային և հակահեղափոխական տարր:
- 5) Հայ տրոցկիստների առաջին ելույթը կուսակցական երեք գործիչների հրապարակած «Երեքի դեկլարացիան» էր, որը տպագրվեց մամուլում 1929 թվականին:
- 6) Ինքնավերացման համագումարից հետո Խորհրդային Հայաստանում մի որոշ ժամանակ պահպանվել են ՀՅԴ ընդհատակյա կառույցները:

**30. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հետպատերազմյան շրջանում ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան դարձել է երկրի գիտական առաջատար կենտրոններից մեկը:
- 2) Անկախության վերականգնումից հետո գեղարվեստական կյանքում որոշ աշխուժություն մտցրին մասնավոր պատկերասրահները:
- 3) 1950-1970-ական թթ. հայկական գեղանկարչության ամենաբնորոշ գծերն էին ավանդական ժանրերի միաձուլումը, մարդկանց և բնապատկերի համադրումը:
- 4) Հայկական արվեստի վերելքը 1950-ական թթ. պայմանավորված էր նաև 1945 թ. Երևանի գեղարվեստական ինստիտուտի հիմնադրումով:
- 5) Հայաստանում 1950-ական թթ. կեսերից մեծ զարգացում են ապրել մաթեմատիկայի գծով տարվող հետազոտական աշխատանքները. այդ ասպարեզում առաջին հաջողությունները կապված էին ակադեմիկոսներ Արտաշես Շահինյանի և Սերգեյ Մերգելյանի անունների հետ:
- 6) «Հովհաննես Բաղրամյան» ծիարձանի հեղինակը Նորայր Կարգանյանն է:

**31. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հայաստանի մշակույթը խորհրդային իշխանության առաջին երկու տասնամյակներին հասել է լուրջ հաջողությունների. դրանք ավելին կլինեին, եթե 1930–ական թթ. երկրում չմոլեգնեին լենինյան քաղաքական բռնաճնշումները:
- 2) ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտը գործում էր ակադեմիական սկզբունքներով, նրա մեջ մտնում էին երեք տարով ընտրված իսկական և թղթակից անդամներ:
- 3) Հետպատերազմյան տարիներին Խորհրդային Հայաստանում հնագիտության զարգացման գործում մեծ ներդրում է ունեցել Կ. Ղաֆադարյանը:
- 4) Հետպատերազմյան շրջանի հայ երաժշտարվեստում խոշոր ավանդ են ներդրել Արամ Խաչատրյանը, Առնո Բաբաջանյանը, Գրիգոր Եղիազարյանը, Ալեքսանդր Հարությունյանը և ուրիշներ:
- 5) Արմենակ Մնջոյանի գլխավորած նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը մեծ հաջողություններ է ունեցել դեղանյութերի ստեղծման, կենսաբանական ակտիվ միացությունների սինթեզման ասպարեզում:
- 6) 1950–ական թթ. կեսերից Հայաստանում մեծ զարգացում ապրած մաթեմատիկայի ասպարեզում առաջին հաջողությունները կապված են ակադեմիկոսներ Արտաշես Շահինյանի և Տիգրան Զրբաշյանի անունների հետ:

**32. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) ՀՀ նախկին վարչապետ Հ. Քաջազնունին Պոտսդամի կոնֆերանսի նախօրեին դիմել էր Ստալինին, Թրումանին, Չերչիլին և խնդրել լուծել հայ ժողովրդին հուզող՝ հայկական տարածքների վերադարձի հարցը:
- 2) Արսեն Շահմազյանի ղեկավարությամբ ստեղծվել էր Զանգեզուրի գյուղացիության ժամանակավոր խորհուրդ՝ երկրամասը կառավարելու նպատակով:
- 3) ԱՄՆ նախագահ Վիլսոնը հայ-ադրբեջանական և հայ-վրացական սահմանների վերաբերյալ իր իրավարար վճիռը հայտնել է 1920 թ. նոյեմբերի 22–ին:
- 4) Արևմտահայերի երկրորդ համագումարն ընտրել է «Մեկ ազգ, մեկ հայրենիք» կարգախոսով առաջնորդվող, օրենսդրական իրավասություններ ունեցող Արևմտահայ ազգային ժողով:
- 5) Տաթևում կայացած համազանգեզուրյան երկրորդ համագումարը Լեռնահայաստանը վերանվանել է Հայաստանի Հանրապետություն:
- 6) ԽՍՀՄ–ը Գերմանիայի դեմ պատերազմում մնացել էր միայնակ՝ առանց դաշնակիցների:

**33. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Խորհրդային Ռուսաստանի համար Արևմտյան Հայաստանի խնդրի լուծումը ածանցյալ էր սոցիալիստական հեղափոխության և Երկրորդ աշխարհամարտը արդարացի հաշտությամբ ավարտելու ուտոպիական ծրագրին:
- 2) Ռազմական կոմունիզմի քաղաքականության, քաղաքական բռնությունների և արքայի գործադրումը Խորհրդային Հայաստանում հանգեցրել են Մայիսյան ապստամբության:

- 3) Ռուսաստանի կողմից Օսմանյան կայսրությունից նվաճված տարածքի հայկական մասը առաջին անգամ «Թուրքահայաստան» է կոչվել ժամանակավոր կառավարության որոշմամբ:
- 4) Պ. Մոխլանին և իր համախոհները կողմ էին հանրապետությունների միջև երկկողմանի պայմանագրային հարաբերությունները զարգացնելուն:
- 5) ԱԽԴՍՀ-ն ստեղծվել է Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարում:
- 6) Ղարաքիլիսայի մայիսյան հերոսամարտի մասնակից Նիկոլայ Ղորղանյանը գնդակահարվել է բոլշևիկների կողմից Փետրվարյան ապստամբության ավարտից հետո:

#### **34. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Հետխորհրդային շրջանի ՀՀ Գերագույն խորհրդում ամենամեծ խմբակցությունն ուներ ՀՀՇ-ն:
- 2) Մինչև ՀՀ անկախության հռչակումը երկրում արդեն ներդրվել էր բազմակուսակցական համակարգ:
- 3) Հայաստանի Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովը, որ ստեղծվել էր 1991 թ. նոյեմբերի 15-ին, զբաղվում էր նոր Սահմանադրության նախագծի մշակմամբ:
- 4) Անկախության հանրաքվեի անցկացումից երկու օր անց ՀՀ Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակել է անկախ պետություն:
- 5) 2003 թ. մայիսի 25-ի ԱԺ ընտրություններից հետո ՀՀԿ-ն, ՀՅԴ-ն ու ՕԵԿ-ը ստորագրել են քաղաքական կոալիցիայի համաձայնագիր:
- 6) ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանն իր կառավարման երկրորդ ժամկետի ավարտից շուտ հրաժարական տվեց, որից հետո ՀՀ նախագահ է ընտրվել Ս. Սարգսյանը:

#### **35. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Դաշնակցությունը ԱՄՆ-ում ստեղծել է Հայոց ազգային բյուրո կամ Հայ դատի հանձնախումբ, որն իր գործունեությունը ծավալել է նաև Եվրոպայում, Մերձավոր Արևելքում և Լատինական Ամերիկայում:
- 2) Հայաստանի երրորդ հանրապետության արտաքին քաղաքականության գլխավոր ուղղություններից է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը:
- 3) Եվրամիությունը Թուրքիայի՝ ՄԱԿ-ին անդամակցելու նախապայմանների մեջ ընդգրկել է Հայոց ցեղասպանության ճանաչումը:
- 4) Հայոց ցեղասպանությունը ճանաչած և դատապարտած պետությունների թիվն անցել է երկու տասնյակը:
- 5) 2016 թ. հունվարի 29-ին ընդունվեց համազգային նշանակության մի փաստաթուղթ՝ «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը»:
- 6) Թուրքիան դեռ չի բացել ՀՀ-ի հետ պետական սահմանը, որը փակել է 1993 թ. ապրիլին:

# ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

## ՄԱՍ Ա

### ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1. ՏԱՐԵԹՎԵՐ											
Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	3	6	2	11	3	16	3	21	2		
2	1	7	3	12	4	17	2	22	3		
3	4	8	1	13	4	18	2	23	4		
4	2	9	3	14	4	19	3	24	3		
5	2	10	4	15	2	20	3	25	2		

2. ՓԱՍՏԵՐ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ											
Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	1	5	2	9	1	13	2	17	3	21	3
2	2	6	2	10	1	14	2	18	1	22	1
3	3	7	2	11	2	15	4	19	4	23	2
4	2	8	4	12	4	16	4	20	4		

3. ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿԶԲԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ											
Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	4	2	2								

4. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՐԻՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ											
Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	1, 2, 5	4	3, 5, 7	7	4	10	3, 6	13	3		
2	3, 4, 7	5	1, 4, 5	8	3	11	1, 6	14	2, 5		
3	1, 4, 7	6	1, 3, 5	9	2	12	4				

5. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ											
Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	1, 6, 7	5	2, 3, 6	9	1, 2, 3	13	3	17	3	21	3
2	1, 6, 7	6	1, 4, 5	10	4, 6, 7	14	4	18	4	22	4
3	1, 3, 6	7	1, 4, 5	11	1, 5, 7	15	1	19	1		
4	1, 3, 6	8	2	12	5, 6, 7	16	2	20	2		

**6. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**6-I. Ընտրովի և կարճ (ժամանակագրական դասավորության խախտմամբ)  
պատասխանով առաջադրանքներ**

Հարց	Պատ.										
1	1	6	3	11	3	16	4	21	2	26	4, 6
2	3	7	3	12	3	17	2	22	4	27	1
3	4	8	2	13	1	18	1	23	3	28	2
4	2	9	4	14	3	19	2	24	5, 7	29	4
5	1	10	1	15	2	20	5	25	5, 6	30	1

**6-II. Կարճ (վանդակավոր) պատասխանով առաջադրանքներ**

Հարց	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
ՂՊՎՈՒՄՆ	6	5	2	5	6	2	3	3	6	6	2	3	2	6
	5	2	5	2	1	3	2	2	3	5	6	5	3	3
	1	6	3	1	3	5	5	1	4	1	4	2	5	4
	3	3	6	3	5	1	1	6	5	3	3	4	6	5
	2	4	1	6	2	4	4	5	2	2	5	1	4	2
	4	1	4	4	4	4	6	6	4	1	4	1	6	1

Հարց	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27
ՂՊՎՈՒՄՆ	2	5	6	3	1	5	5	5	3	3	3	6	5
	4	3	3	1	5	1	2	2	4	1	4	5	2
	1	4	2	6	6	2	4	3	6	6	5	1	3
	6	6	4	5	3	4	1	6	2	4	1	4	4
	3	2	5	4	2	6	6	1	5	2	2	3	6
	5	1	1	2	4	3	3	4	1	5	6	2	1

**7. ՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆԵՑՈՒՄ**

**7-I. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

Հարց	Պատ.										
1	2	5	1	9	2	13	4	17	4		
2	2	6	4	10	4	14	4	18	4		
3	4	7	1	11	2	15	2	19	4		
4	4	8	1	12	1	16	4				

**7-II. Կարճ (վանդակավոր) պատասխանով առաջադրանքներ**

Հ/Պատ.	1	2	3	4	5	6	7	8	9	10
ա	7	6	7	4	5	4	6	3	7	7
բ	3	7	3	5	3	2	5	5	3	6
գ	5	4	6	7	7	1	4	6	5	1
դ	6	5	1	2	2	6	1	7	6	2
ե	2	1	2	1	4	5	7	1	2	4
զ	1	2	4	3	1	3	2	4	1	5

Հ/Պատ.	11	12	13	14	15	16	17	18	19	20
ա	7	6	6	2	5	5	4	6	4	4
բ	5	4	1	5	6	4	2	7	3	3
գ	1	2	2	7	2	6	1	4	7	7
դ	3	7	7	3	7	2	3	5	2	2
ե	4	1	5	6	3	3	7	1	5	5
զ	6	5	3	1	1	1	6	2	1	1

Հ/Պատ.	21	22	23	24	25	26	27	28
ա	3	2	2	5	4	1	6	4
բ	6	7	6	3	7	7	1	7
գ	5	5	1	1	6	4	4	3
դ	7	3	3	7	2	5	7	5
ե	1	6	4	2	3	2	5	1
զ	2	1	7	6	1	3	2	2

**8. ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՏԱՐԿՆԵՐԻ,  
ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ**

**8-I. Պատմական փաստարկների, պնդումների համադրում և խմբավորում**

Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	2	5	2, 3, 4	9	2, 5	13	2	17	3	21	2, 4, 6
2	3	6	1	10	1, 5, 8	14	1, 5, 7	18	2, 4	22	3
3	4	7	2, 4	11	3, 5	15	2, 3, 5	19	2, 6, 7	23	4
4	2	8	3, 7, 8	12	2, 5, 7	16	4	20	2		

**8-II. Պնդումների փունջ**

Հարց	1	2	3	4	5	6
1	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է
2	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է
3	Սխալ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է
4	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է
5	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է
6	Ճիշտ է	Սխալ է				
7	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է
8	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է
9	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է
10	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Սխալ է
11	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է
12	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է
13	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է

14	Ճիշտ է	Ճիշտ է	Մխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է
15	Մխալ է	Ճիշտ է	Մխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է
16	Մխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Մխալ է	Ճիշտ է	Ճիշտ է
17	Մխալ է	Մխալ է	Ճիշտ է	Մխալ է	Ճիշտ է	Ճիշտ է
18	Մխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Մխալ է	Ճիշտ է	Ճիշտ է
19	Ճիշտ է	Մխալ է	Մխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Մխալ է
20	Ճիշտ է	Մխալ է	Մխալ է	Ճիշտ է	Մխալ է	Մխալ է
21	Մխալ է	Ճիշտ է	Մխալ է	Մխալ է	Ճիշտ է	Մխալ է
22	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է	Մխալ է	Մխալ է	Ճիշտ է
23	Մխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Մխալ է	Մխալ է	Մխալ է
24	Ճիշտ է	Ճիշտ է	Մխալ է	Մխալ է	Մխալ է	Ճիշտ է
25	Մխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է	Մխալ է	Ճիշտ է
26	Ճիշտ է	Ճիշտ է	Մխալ է	Ճիշտ է	Մխալ է	Ճիշտ է
27	Մխալ է	Մխալ է	Ճիշտ է	Մխալ է	Ճիշտ է	Մխալ է
28	Ճիշտ է	Ճիշտ է	Մխալ է	Մխալ է	Ճիշտ է	Ճիշտ է
29	Ճիշտ է	Մխալ է	Մխալ է	Ճիշտ է	Մխալ է	Մխալ է
30	Մխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է	Մխալ է	Ճիշտ է
31	Ճիշտ է	Մխալ է	Ճիշտ է	Մխալ է	Մխալ է	Ճիշտ է
32	Մխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Մխալ է	Մխալ է	Ճիշտ է
33	Ճիշտ է	Մխալ է	Մխալ է	Մխալ է	Ճիշտ է	Մխալ է
34	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է	Մխալ է	Մխալ է	Ճիշտ է
35	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է	Մխալ է	Ճիշտ է	Ճիշտ է
36	Ճիշտ է					
37	Մխալ է	Մխալ է	Ճիշտ է	Մխալ է	Մխալ է	Մխալ է
38	Մխալ է					
39	Ճիշտ է	Մխալ է	Մխալ է	Մխալ է	Ճիշտ է	Մխալ է

# ՄԱՍ Բ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՏԱՐԵԹՎԵՐ											
Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	1	4	2	7	1	10	3	13	2	16	2
2	4	5	1	8	4	11	2	14	2	17	1
3	2	6	3	9	1	12	4	15	1	18	4

2. ՓԱՍՏԵՐ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ											
Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	2	10	4	19	3	28	3	37	2	46	2
2	2	11	1	20	2	29	2	38	2	47	3
3	2	12	2	21	3	30	3	39	2	48	2
4	3	13	1	22	3	31	2	40	2	49	3
5	2	14	4	23	1	32	3	41	2	50	3
6	1	15	2	24	3	33	1	42	2	51	4
7	3	16	1	25	2	34	2	43	2	52	3
8	1	17	4	26	2	35	4	44	4		
9	1	18	2	27	1	36	4	45	2		

3. ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ											
Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	4	2	4	3	1						

4. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ											
Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	4	6	3	11	1	16	3	21	1, 2, 6	26	4
2	3	7	4	12	1	17	1, 2, 4	22	1, 5, 8	27	3, 4, 5
3	3	8	1	13	2	18	2, 5, 8	23	1, 3, 5	28	2
4	3	9	3	14	2, 5, 7	19	1, 3, 4	24	4	29	3
5	3	10	4	15	1, 4, 6	20	1, 3, 6	25	3		

5. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ											
Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	2	6	4	11	1	15	3	19	3	23	4
2	2	7	2, 3, 6	12	1	16	2	20	1, 4, 7	24	2
3	1	8	4	13	2	17	2	21	2, 3, 5	25	3
4	1	9	2	14	1, 4, 5	18	1, 3, 7	22	3, 6, 8	26	1
5	1, 4, 5	10	1								

**6. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**6-I. Ընտրովի և կարճ (ժամանակագրական դասավորության խախտմամբ)  
պատասխանով առաջադրանքներ**

Հարց	Պատ.										
1	3	3	3	5	1	7	1	9	4, 5		
2	1	4	3	6	2	8	3, 6	10	4, 7		

**6-II. Կարճ (վանդակավոր) պատասխանով առաջադրանքներ**

Հարց	1	2	3	4	5	6	7	8	9
ԴՊՎՈՏՈՆ	5	4	6	5	5	3	3	3	2
	6	5	1	3	2	6	5	5	3
	4	2	2	2	6	2	6	1	4
	2	1	4	1	4	5	2	6	1
	3	3	5	6	1	1	1	4	5
	1	6	3	4	3	4	4	2	6

Հարց	10	11	12	13	14	15	16	17	18
ԴՊՎՈՏՈՆ	6	1	6	2	1	2	2	6	5
	3	3	4	1	5	6	6	4	6
	1	2	3	3	3	1	3	2	3
	5	4	1	6	4	4	5	5	1
	4	5	5	5	6	3	1	3	4
	2	6	2	4	2	5	4	1	2

Հարց	19	20	21	22	23	24	25	26	27
ԴՊՎՈՏՈՆ	5	4	5	5	6	2	2	3	6
	4	6	3	3	5	6	4	1	5
	2	3	2	1	2	4	5	5	2
	1	5	6	2	1	5	6	4	1
	3	2	4	6	4	3	3	2	4
	6	1	1	4	3	1	1	6	3

Հարց	28	29	30	31	32				
ԴՊՎՈՏՈՆ	6	2	2	5	2				
	5	5	6	3	4				
	3	6	4	4	3				
	2	3	3	1	6				
	1	1	5	6	1				
	4	4	1	2	5				

**7. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ**

**7-I. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

Հարց	Պատ.										
1	1	5	2	9	1	13	2	17	4		
2	1	6	4	10	4	14	4	18	4		
3	1	7	4	11	4	15	2	19	4		
4	4	8	4	12	2	16	4				

**7-II. Կարճ (վանդակավոր) պատասխանով առաջադրանքներ**

Հ/Պատ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ա	4	7	4	6	5	4	2	1	7	6	5
բ	5	3	2	5	7	1	5	3	6	7	6
գ	1	6	1	7	2	7	7	4	4	1	7
դ	2	1	3	2	4	2	1	5	3	2	2
ե	3	2	7	3	3	5	3	6	1	3	1
զ	7	4	6	1	1	3	4	7	5	4	3

Հ/Պատ	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
ա	5	4	2	6	2	4	4	3	3	7	3
բ	4	5	4	3	5	5	2	7	5	6	5
գ	2	7	6	1	1	6	1	5	1	4	4
դ	3	1	1	7	6	7	3	1	7	3	6
ե	7	2	7	2	7	3	7	2	4	2	7
զ	1	3	3	5	3	1	6	4	2	5	2

Հ/Պատ	23	24	25	26	27						
ա	2	7	3	6	6						
բ	4	4	6	4	5						
գ	6	1	4	7	1						
դ	1	2	2	2	3						
ե	7	5	5	5	7						
զ	5	3	1	3	4						

**8. ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՏՏԱՐԿՆԵՐԻ,  
ՊԵՐԻՄԵՏՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ**

**8-I. Պատմական փաստարկների, պնդումների համադրում և խմբավորում**

Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	1	3	2, 5	5	3	6	3	7	2,4	8	3,4
2	1, 4	4	4, 5, 7								

**8-Ու. Պնդումների փունջ**

Հարց	1	2	3	4	5	6
1	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	ճիշտ է	Ճիշտ է
2	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է
3	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է
4	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է
5	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է
6	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է
7	Սխալ է	Ճիշտ է				
8	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է
9	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է
10	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է
11	Սխալ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է
12	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է
13	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է
14	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է
15	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է
16	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է
17	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է
18	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է
19	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է
20	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է
21	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է
22	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է
23	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Սխալ է
24	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է
25	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է
26	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է
27	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է
28	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է
29	Սխալ է					
30	Ճիշտ է					
31	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է

## ՄԱՍ Գ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ

1. ՏԱՐԵԹՎԵՐ											
Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	4	6	3	11	2	16	2	21	2	26	2
2	2	7	1	12	2	17	1	22	1	27	3
3	4	8	3	13	1	18	2	23	2		
4	1	9	1	14	2	19	4	24	3		
5	3	10	4	15	1	20	4	25	4		

2. ՓԱՍՏԵՐ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ											
Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	3	8	2	15	2	22	2	29	4	36	1
2	3	9	2	16	4	23	2	30	3	37	3
3	3	10	1	17	2	24	1	31	2	38	1
4	2	11	3	18	4	25	3	32	4	39	2
5	2	12	2	19	2	26	3	33	4		
6	3	13	4	20	3	27	4	34	2		
7	2	14	1	21	2	28	4	35	2		

3. ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ											
Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	4	3	1	5	1	7	4	9	1	11	2
2	1	4	3	6	1	8	1	10	2	12	3

4. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ											
Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	2	7	3	13	4	19	2, 3, 6	25	4	31	2
2	1	8	4	14	2	20	4, 5, 7	26	1		
3	4	9	3	15	2	21	1, 3, 7	27	4		
4	1	10	2	16	4	22	1, 4, 5	28	4		
5	2	11	1	17	1, 3, 6	23	1, 3, 5	29	2		
6	1	12	3	18	2, 5, 7	24	4, 5	30	1, 2		

**5. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ**

Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	4	6	3	11	2	16	1, 4, 5	21	4	26	2
2	3	7	2	12	3, 5, 7	17	2, 3, 7	22	2	27	2
3	3	8	4	13	1, 2, 4	18	5, 6, 7	23	3	28	2, 3
4	1, 4	9	1	14	2, 4, 6	19	2, 3, 5	24	3, 5, 7		
5	1, 3	10	2	15	2	20	3, 4, 6	25	4		

**6. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**6-I. Ընտրովի և կարճ (ժամանակագրական դասավորության խախտմամբ) պատասխանով առաջադրանքներ**

Հարց	Պատ.										
1	3	3	4	5	4, 7	7	5, 6	9	1	11	2
2	2	4	2	6	4, 8	8	3	10	4	12	1

**6-II. Կարճ (վանդակավոր) պատասխանով առաջադրանքներ**

Հարց	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
ԴՊՎՈՒՄՆ	3	3	3	2	4	5	3	3	3	4	1	2	4
	1	6	2	5	2	4	2	6	5	6	2	5	3
	4	1	5	1	1	1	6	2	6	3	4	4	6
	5	2	6	4	3	2	1	5	2	2	5	3	2
	2	5	4	3	6	3	4	1	1	1	6	1	1
	6	4	1	6	5	6	5	4	4	4	5	3	6

Հարց	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26
ԴՊՎՈՒՄՆ	2	4	2	1	1	3	4	5	1	6	6	1	3
	4	3	1	4	5	6	3	3	6	2	5	4	2
	1	1	4	2	3	1	5	6	5	1	1	5	6
	5	2	3	5	2	4	6	4	4	5	4	6	4
	3	5	6	3	6	5	2	1	3	4	3	3	5
	6	6	5	6	4	2	1	2	2	3	2	2	1

<b>7. ՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆԵՑՈՒՄ</b>											
<b>7-I. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ</b>											
Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	3	6	1	11	1	16	2	21	1	26	2
2	2	7	2	12	4	17	4	22	4	27	4
3	4	8	3	13	3	18	4	23	4	28	1
4	2	9	1	14	1	19	4	24	4	29	2
5	4	10	4	15	2	20	2	25	4	30	2

<b>7-II. Կարճ (վանդակավոր) պատասխանով առաջադրանքներ</b>											
Հ/Պատ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ա	3	7	4	2	3	2	3	1	4	7	5
բ	4	4	6	7	6	4	6	6	2	4	1
գ	7	2	2	6	1	3	1	2	3	1	7
դ	5	5	7	1	2	6	5	7	5	6	3
ե	1	3	5	4	7	1	2	5	1	2	6
զ	6	1	3	3	5	7	4	3	7	5	2

Հ/Պատ	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
ա	4	6	4	4	1	5	5	3	1	5	3
բ	5	7	3	1	3	7	1	7	4	1	4
գ	1	5	2	7	5	2	4	6	7	6	1
դ	6	3	1	6	7	1	7	2	2	4	2
ե	3	2	5	5	4	6	2	5	3	7	5
զ	2	4	7	2	2	3	6	1	6	2	7

Հ/Պատ	23	24	25	26	27	28	29	30	31	32	33
ա	6	2	5	7	6	2	1	6	5	5	6
բ	7	4	6	5	4	5	4	5	3	1	5
գ	2	1	1	1	7	6	2	4	4	2	3
դ	1	7	3	6	1	7	6	1	1	4	1
ե	3	3	7	3	2	3	5	3	7	3	4
զ	4	6	2	4	3	1	7	2	6	7	2

<b>8. ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՏՏԱՐԿՆԵՐԻ, ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ</b>											
<b>8-I. Պատմական փաստարկների, պնդումների համադրում և խմբավորում</b>											
Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	3, 5	3	1	5	2, 3, 5	7	3, 5, 7	9	2, 4	11	4, 5
2	2, 3, 5	4	4	6	4	8	1, 2, 3	10	2, 5, 6		

**8-11. Պնդումների փունջ**

1	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է
2	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է
3	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է
4	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է
5	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է
6	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է
7	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է
8	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է
9	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է
10	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է
11	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է
12	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է
13	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է
14	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է
15	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է
16	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է
17	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է
18	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է
19	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է
20	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է
21	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է
22	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է
23	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է
24	Ճիշտ է					
25	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է
26	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է
27	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Սխալ է	Սխալ է
28	Սխալ է					
29	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է
30	Սխալ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է
31	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է
32	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է

## ՄԱՍ Դ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. ՏԱՐԵԹՎԵՐ											
Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	3	8	2	15	1	22	1	29	1	36	3
2	3	9	1	16	2	23	2	30	4	37	4
3	4	10	2	17	2	24	3	31	2	38	1
4	1	11	4	18	3	25	3	32	4		
5	3	12	1	19	1	26	2	33	3		
6	3	13	2	20	4	27	4	34	2		
7	4	14	3	21	2	28	3	35	4		

2. ՓԱՍՏԵՐ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ											
Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	2	4	3	7	3	10	1	13	2	16	1
2	2	5	3	8	2	11	3	14	2	17	4
3	3	6	3	9	4	12	2	15	3	18	3

3. ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ											
Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	3	3	2	5	4	7	4				
2	4	4	3	6	1	8	1				

4. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ											
Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	3	6	2, 3, 5	11	1, 3, 5	16	4	20	2, 4, 7	24	4
2	1, 5, 7	7	1, 4, 5	12	2, 3, 7	17	1, 2, 7	21	3, 5, 6	25	2
3	2, 4, 8	8	1, 4, 7	13	2, 5, 6	18	2, 4, 7	22	1	26	3
4	2, 5, 7	9	1, 3, 6	14	2	19	2, 4, 8	23	1	27	4
5	1, 3, 6	10	2, 5, 6	15	1						

5. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ											
Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	2, 3, 5	4	1, 2, 4	7	4	10	4	13	1, 4, 7		
2	1, 2, 4	5	2	8	1, 5, 7	11	1, 2, 3	14	4, 5, 7		
3	3	6	3	9	3, 5, 7	12	1, 4, 6	15	2, 3, 5		

**6. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**6-I. Ընտրովի և կարճ (ժամանակագրական դասավորության խախտմամբ)  
պատասխանով առաջադրանքներ**

Հարց	Պատ.										
1	2	8	2	15	3	22	4	29	3, 7	36	4
2	4	9	4	16	4	23	2	30	3, 7	37	5
3	2	10	2	17	1	24	4	31	4, 5		
4	3	11	4	18	2	25	3	32	3, 5		
5	4	12	1	19	2	26	4	33	5, 9		
6	4	13	2	20	1	27	6	34	3, 4		
7	3	14	2	21	3	28	3,7	35	1		

**6-II. Կարճ (վանդակավոր) պատասխանով առաջադրանքներ**

Հարց	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ԴՊՎՈՒՄՆ	4	5	3	3	6	2	6	2	1	1	6
	6	2	5	5	3	6	5	4	6	2	1
	3	6	2	2	5	4	1	3	3	5	4
	1	4	6	6	1	1	4	6	4	6	2
	2	3	4	4	4	5	2	1	2	3	3
	5	1	1	1	2	3	3	5	5	4	5

Հարց	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
ԴՊՎՈՒՄՆ	4	1	3	5	2	6	4	4	4	4	4
	6	6	5	6	4	3	1	3	6	2	6
	2	4	1	3	5	5	5	2	1	3	1
	1	3	2	2	3	2	3	6	2	5	3
	3	5	4	1	6	1	6	5	5	6	2
	5	2	6	4	1	4	2	1	3	1	5

Հարց	23	24	25	26	27	28	29	30	31	32
ԴՊՎՈՒՄՆ	1	3	3	6	1	1	2	2	5	3
	6	2	5	4	6	3	4	6	1	2
	2	5	6	5	3	6	3	1	3	6
	4	4	4	2	5	5	5	4	2	4
	3	6	2	1	2	2	6	3	6	1
	5	1	1	3	4	4	1	5	4	5

**7. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ**

**7-I. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

Հարց	Պատ.										
1	1	3	2	4	4	5	1	6	4	7	4
2	4										

**7-II. Կարճ (վանդակավոր) պատասխանով առաջադրանքներ**

Հ/Պատ	1	2	3	4	5	6	7	8	9
ա	4	6	6	6	4	7	2	4	2
բ	6	1	1	7	3	4	4	5	3
գ	1	2	2	1	7	5	6	7	7
դ	2	7	3	4	1	6	1	1	1
ե	5	5	5	2	6	2	7	3	5
զ	3	3	7	3	2	3	3	2	4

Հ/Պատ	10	11	12	13	14	15	16	17	18
ա	3	5	6	6	1	6	2	7	2
բ	5	4	3	3	7	1	5	4	4
գ	4	6	1	1	4	4	7	3	6
դ	1	7	2	7	2	5	6	6	1
ե	7	3	5	2	5	2	4	5	7
զ	2	1	7	5	6	7	1	2	3

Հ/Պատ	19	20	21	22	23	24	25
ա	2	2	3	3	3	6	5
բ	5	7	6	6	1	4	3
գ	7	4	4	1	4	1	1
դ	6	1	7	2	2	3	7
ե	4	3	1	7	7	2	2
զ	1	6	2	5	6	5	4

**8. ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՏՏԱՐԿՆԵՐԻ,  
ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ**

**8-I. Պատմական փաստարկների, պնդումների համադրում և խմբավորում**

Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.	Հարց	Պատ.
1	2	5	2	9	3, 5, 6	13	2, 6, 7	16	2, 4, 6	19	3, 5, 7
2	2	6	2	10	3, 4, 6	14	2, 5, 6	17	3, 5, 6	20	3, 4, 6
3	2, 4	7	5, 8, 9	11	4, 5, 6	15	5, 7, 8	18	3, 4, 6	21	2, 3, 4
4	4, 6	8	2, 5, 7	12	3, 5, 6						

**8-11. Պնդումների փունջ**

Հարց	1	2	3	4	5	6
1	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է
2	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է
3	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է
4	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է
5	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է
6	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է
7	Սխալ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է
8	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է
9	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է
10	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է
11	Սխալ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է
12	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է
13	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է
14	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Սխալ է	Սխալ է
15	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է
16	Սխալ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է
17	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է
18	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է
19	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է
20	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է
21	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է
22	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է
23	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է
24	Ճիշտ է					
25	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է
26	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է
27	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է
28	Սխալ է					
29	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է
30	Ճիշտ է					
31	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է
32	Սխալ է					
33	Սխալ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է
34	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Ճիշտ է	Սխալ է
35	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է	Սխալ է	Ճիշտ է

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2018 թ. պետական ավարտական և միասնական  
քննությունների թեստային առաջադրանքների շտեմարան

## ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

Հինգերորդ՝ լրամշակված հրատարակություն

Հրատարակչության տնօրեն՝	ԷՄԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ
Համակարգչային ձևավորումը՝	ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Վերստուգող սրբագրիչ՝	ԱԶՆԻՎ ՆԱՍԼՅԱՆ
Սրբագրիչ՝	ՍԵՐԺ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16:

Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 20 տպ. մամուլ:



**ՀԱՆԳԱԿ**  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28  
Էլ. փոստ՝ [info@zangak.am](mailto:info@zangak.am), էլ. կայքեր՝ [www.zangak.am](http://www.zangak.am), [www.book.am](http://www.book.am)  
Ֆեյսբուքյան կայքէջ՝ [www.facebook.com/zangak](https://www.facebook.com/zangak)